ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

## ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1867—ՌՅԺԷ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
# ՍՈՒՐԲ ԳՐՈՑ
## ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ԳՐԵԱՑ
ԵՂԻԱ Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ԵՍԱՅԵԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ
Տ. ՊՕՂՈՍԻ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄ
1867—ՌՅԺԶ

A I/10511

# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

[stamp]

Աստուածաշունչ Գրոց թէ՛ բազմեղանակ մասանց, թէ՛ առանձինն առեալ այլ եւ այլ մասերը եւ թէ անոր հնամեայ դպրութիւնները շատ անգամ աղաւաղուած ըլլալը՝ մեծ արգելք մը է թէ մեր բարեպաշտ ազգայինք միշտ ունեցած են Սուրբ Գիրք կարդալու. ուստի եւ այս մասին յորդորներ ընել աւելորդ համարելով, միայն ներկայ հրատարակութեան համար մէկ երկու խօսք կ'ընեմք։

Նախ՝ փափաքելի տարբերք որ ամէն եկեղեցութեան յիշատակութիւնը գտնուի. երկրորդ՝ կարելի եղածին չափ ժամանակագրական կարգաւ դասաւորուին. երրորդ՝ անեց անեց ծանօթութիւններ ու դիտողութիւններ դրուած ըլլան դարձնելու համար։ Եւ որպէս զի մասնաւորեան եւ զանազանութեան աւելի դիւրութիւն մը ըլլայ. ամէն գլուխներու սկիզբը թուանշանով նշանակուած են իւր մէջ պարունակուած նիւթերը. ձեռքէ ուրիշ բան չէ եղած մեր նպատակը՝ եթէ ոչ Սուրբ Գրոց դասաւորական մասը ճիշդ ցուցընել այն համառօտութեամբ մէջ։ Զատնելու ընելու համար բաց 'ի Սուրբ Գրքին մէջի առաջնորդ եղած ներ նաեւ ազգերնուս մէջ գտնուած ընտիր ձեռագրութիւններէն մէկ քանին, որոնք այս մասին կարեւոր օգնութիւններ կը պարունակէին։

Թէեւ եւ այսպիսի գործ մը մեր ակար եւ խեղճ գրչին կարողութենէն վեր եւ թերեւս յանդգնութիւն մը խիղ ըլլար է համարէին. եթէ զատ ըլլայիք թէ աստուածային ճշմարտութիւնք կարօտ չեն մարդկային ճարտարութեանց. հետեւաբար կը յուսամք որ մեր բարեսէր ազգայինք աչ ներողամտութեամբ դիտի ընդունին այս ձեռնարկութիւնս, ուրիշ թէ որ մէկ անձին մի աչ օգուտ քաղէ՝ եւ այն շատ է մեզ 'ի մխիթարութիւն։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
# ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### Ի ՍՏԵՂԾՄԱՆԷ ԱՇԽԱՐՀԻ
### ՄԻՆՉԵՒ ԻՍՐԱՅԵԼԱՑԻՈՑ ՅԵԳԻՊՏՈՍ ՄՏՆԵԼԸ

### ԳԼՈՒԽ Ա.

1. Տիեզերաց. 2. և մարդկային ստեղծումը. 3. Եդեմայ դրախտը և Աստուծոյ մարդկային ըրած մէկ պատուէրը. 4. Մարդկային անկումը. 5. Ի մահ դատապարտութիւնը. (Ծնունդ. Ա. Բ. Գ.)

1. Աստուած որ իւր ամենակարող զօրութեամբ թէեւ կրնար մէկ վայրկենի մէջ ալ ստեղծել բոլոր տիեզերքը, սակայն ուզելով ցուցնել թէ Ինքն ամեն բան կարգաւ և որոշմամբ կ'ընէ, ուստի սկիզբէն ստեղծեց երկինքն ու երկիրը նաեւ հրեշտակները՝ յիշէ. Սակայն երկիրը աներեւոյթ էր և անպատրաստ, և անդնդոց վերայ խաւար կար. և Հոգին Աստուծոյ ջրերուն վերայ կը շրջէր.

Եւ Աստուած ըսաւ. Լոյս ըլլայ. և եղաւ. և Աստուած լոյսն ու խաւարը իրարմէ

պատուէրով. լոյսին անունը Տիւ և խաւարին ա-
նունը Գիշեր դրաւ. և այս եղաւ աշխարհիս
ստեղծման առաջին օր. Երկրորդ օր Աստուած
հաստատութիւնը յօրինեց, և հաստատութեան
ներքեւ եղած ջուրերը՝ անոր վերայ եղած ջուրե-
րէն զատեց, և հաստատութիւնը Երկինք կո-
չեց. Երրորդ օր Աստուած ըսաւ որ հաստա-
տութեան ներքեւ եղած ջուրերը մէկ տեղ մի-
ժողվուին, որով ցամաքը երեւցաւ զոր Երկիր
անուանեց, և մէկտեղ ժողվուած ջուրերն ալ
Ծով կոչեց. և Աստուած ըսաւ նաեւ որ եր-
կիրը ամէն տեսակ խոտեր ու ծառեր բուսցնէ,
և անոնք իրենց տեսակը յառաջ բերելու սերմեր
ալ ունենան. և եղաւ այնպէս: Չորրորդ օր
ստեղծեց Աստուած՝ աստղերը, արեգակը և լու-
սինը, որ ցերեկ ու գիշեր երկինքը լուսաւորեն.
և անոնց շրջաններէն եւս սահմանեց որպէս զի
օրերը, ամիսները և տարիները որոշուին:
Հինգերորդ օր ըսաւ Աստուած՝ որ ջուրերուն
մէջ տեսակ տեսակ ձուկեր և օդին մէջ թռ-
չուններ ըլլան. և եղաւ այնպէս: Վեցերորդ
օր Աստուած ըսաւ որ երկիրը ցեղ ցեղ կեն-
դանիներ յառաջ բերէ. և եղաւ այնպէս: Եւ
Աստուած այս ամէնն օրհնեց ու սահմանեց որ ի-
րենց տեսակը յառաջ բերելով աճին ու շատնան:

2. Նոյն օրը Աստուած որոշեց ու երկրին հող
առնելով ստեղծեց առաջին մարդն Ադամը՝ [1]
ամէն կենդանիներէն գերազանց կերպիւ, տալով

1 Մարդ. կամ Հողածին.

անոր բանական հոգի որով և Պատկեր Աստու-ծոյ կոչեցաւ : Եւ Աստուած ամեն անասուն-ները ու թռչունները Ադամայ ներկայացուց որ ամեն մէկուն անուններ դնէ : Բայց Ադամայ իրեն յարմար օգնական մը չգտնուելով, Աստուած անոր վրայ թմրութիւն մը ձգեց որով անիկայ քնացաւ . և այն ատեն անոր կողին ոսկոր-ներէն մէկը առնելով՝ անկէ ստեղծեց կին մար-դը¹ Եւան¹ և զանիկայ բերեր և օգնական տուաւ Ադամայ, հաստատեց ամուսնական կարգը և օրհնեց զիրենք որ աճին ու բազմանան և բո-լոր երկրի տիրեն : Եւ Աստուած այս ամէնը կա-տարելէ յետոյ, եօթներորդ օրը հանգչեցաւ. այսինքն դադրեցաւ ստեղծագործութենէ, և անոր համար օրհնեց նոյն օրը :

3. Եւ Աստուած արեւելքի կողմը Եդեմի³ մէջ գեղեցիկ դրախտ (պարտէզ) մը պատրաստած ըլլալով՝ որ ամէն բարիքներով լեցուն էր և զայս գեղեցկութեամբ ալ կ'առաւելու էր, հոն անեղ դրաւ Ադամը Եւայի հետ մէկտեղ, պատուիրելով որ զանիկայ գործէ ու պահէ : Սակայն Աստուած փորձելէն այս ամէն բարութեանց զոր մարդոյս տուաւ, անոնց երախտագիտութեան և հնա-զանդութեան իբր յայտարար նշան՝ ամ պատու-իրեց մեղմ բան որ այն դրախտին մէջ Կենաց ծառին քովն եղած Բարւոյ և Չարի գիտութե-ծառին պտուղէն չուտեն երբեք՝ որ չմեռնին :

4. Բայց Ադամ ու Եւա այս շնորհացն երախտամոռան

1 [illegible] 2 Կեանք 3 Փափկութեան կամ Վայելչութեան :

վայելել իրենց երջանկութիւնը․ վասն զի սատա-նայն օձի կերպարանքով երեւելով Եւային ը-սաւ․ «Եթէ այն ծառին պտուղէն ուտէք ոչ թէ պիտի մեռնիք, հապա աստուածներու պէս պիտի ըլլաք՝ աչքերնիդ բացուելով և չարն ու բարին գիտնալով»․ Եւայ այս խօսքերուն հա-ւատաց, և պտղոյն գեղեցկութիւնն ալ տես-նելով խաբուեցաւ ու կերաւ․ և Ադամին ալ տուաւ որ ան ալ կերաւ։ Անյապէս երբ մեղան-չեցին, խղճին զգացին իրենց մերկութիւնը և թզենիի տերեւներով ծածկուեցան․ վասն զի առաջ թէեւ մերկ էին, այլ անմեղ ըլլալով՝ չէին զգար իրենց մերկութիւնը։

5․ Երիկուան դէմ էր երբ Ադամ և իւր կինը դրախտին մէջ Աստուծոյ պտըտելու ձայնը լսե-ցին ու գնացին ծառերու մէջ պահուըտեցան։ Այլ Աստուած կանչեց զիրենք հարցնելով թէ «ո՞ւր էք»․ որ թերեւս ապաշխարեն․ բայց ա-նոնք փոխանակ ապաշաւելու՝ իրենց մերկու-թեանը համար պահուըտած ըլլալնին յայտնեցին։ Եւ երբ Աստուած կրկին հարցուց թէ Արդեօք կերա՞ք այն պտուղէն յորմէ պատուիրած էի չուտել․ այն ատեն Ադամ յանցանքը Եւայի վրայ ձգեց, Եւայ ալ օձին վրայ։ Աստի Աստուած նախ օձը անիծեց, յետոյ Ադամն և անոր կինը Եւան դատապարտեց նեղութեանց, տառապանաց և ծանր աշխատութեանց և վեր-ջապէս մահուան․ և անոնց կաշիէ զգեստ հագ-ցնելով՝ դրախտէն դուրս վռնտեց։

# ԳԼՈՒԽ Բ.

1. Կայէն եւ Աբէլ։ 2. Կայէնի սերունդը։ 3. Սեթայ ծնունդը։ 4. Ադամայ մահը եւ Սեթայ սերունդը։ 5. Մարդոց անառակութիւնը եւ Ջրհեղեղի պատճառները։ 6. Տապանին շինութիւնը։ (Ծննդ. Դ. Ե. Զ.)

1. Ադամայ անդրանիկ զաւակն եղաւ Կայէն[1] եւ երկրորդը Աբէլ։ Կայէն երկրագործութեան հետեւեցաւ եւ Աբէլ հովուութեան։ Իսկ եղաւ որ օր մը անոնք երկուքն ալ պատարագ մատուցին Աստուծոյ. Կայէն երկրի պտուղներուն ամենէ անէրէն, իսկ Աբէլ ոչխարներուն անդրանիկներէն եւ աղէկներէն. այս պատճառաւ Աստուած ալ Աբէլի պատարագն ընդունեց եւ Կայէնինը չընդունեց, որուն համար տրտմեցաւ Կայէն։ Իսկ թէպէտ Աստուած յանդիմանեց եւ խրատեց զանիկայ, բայց նա փոխանակ զղջանալու, նախանձեցաւ Աբէլի վրայ եւ օր մը դաշտը տարաւ եւ հոն անոր սպաննեց զանիկայ։ Այնպէս Աստուած ուզելով որ Կայէն զղջայ մի գայ, չգիտցողի մը պէս հարցուց թէ «Ո՞ւր է քու եղբայրդ Աբէլը»․ իսկ Կայէն փոխանակ զղջալու՝ լրբութեամբ պատասխանեց ըսելով. «միթէ ես եղբօրս պահապա՞նն եմ»։ Ասոր համար Աստուած ալ զանիկայ անիծեց որ յուսահատելով թափառական կը շրջէր, եւ կ'ուզէր որ մէկն ալ զինքը սպաննէ. եւ թէպէտ Աստուած նշան դրաւ անոր վրայ որ ամենքը ճանչնան ու չսպաննեն, սակայն ժամանակէ մը յետոյ իր թոռը Ղամէք զայն կոր-

---

1 Ստացուած.

ծերով զանխնայ՝ սպանանքի զորդին սպաննեց :

2. Կայէն Աստուծոյ երեսէն փախստական եր-թալով՝ Եդեմայ գետոյ Նայիդ կոչեալ երկիր բնակեցաւ և քաղաք շինելով իւր որդւոյն ա-ւանբ Ենովք կոչեց : Իւր թոռնորդէն՝ Լամէքն եղաւ որ առաջին անգամ եղծեց մինչեւ այն ա-տեն եղած ամուսնական կանոնը՝ երկու կին մէկէն առնելով : Նոյն որդւոյն Յաբելը՝ վրանաբնակ հովուութեան սկիզբն դրաւ : Յուբալը՝ քնարն ու սրինգը հնարեց . և Թուբալկայէն ալ դար-բնութիւնը գտաւ , և ասոր քոյրը՝ Նոեմա՝ ոս-տայնանկութիւն հնարեց : Թէպէտ և Կայէնի սերունդը ճարտարութեանց մէջ այսպէս յառա-ջադէմ եղան , սակայն օր քան օրէ աստուած-պաշտութենէ առ երկրով՝ սկսան անառակութեան մէջ իյնալ , որուն համար Որդիք մարդկան կոչուեցան :

3. Իսկ Ադամ՝ շատ ցաւած ըլլալով Աբէլի սպաննման և չարաչար մահուանը վերայ , Աս-տուած ալ անոր ուրիշ բարի զաւակ մը տալով զայն մխիթարեց , և անունը Սէթ[1] կոչեց , որ խնամ սիրելի եղաւ Աստուծոյ , և որուն սերունդն ալ իրենց աստուածպաշտութեանը համար Որ-դիք Աստուծոյ կոչուեցան :

4. Ադամ ու իր զաւակները եւս ունենալով ինն հարիւր երեսուն տարի ապրեցաւ ու մեռաւ : Սէթ ապրեցաւ ինն հարիւր տասն երկու տարի : Ասոր որդին Ենովս որ աստուածային հրապա-րակական պաշտօն հաստատեց , ապրեցաւ ինն

1 Դրուած ( Հաբէլի տեղը ) :

հարիւր հինգ ամի ։ Նորա որդին Կայնան՝ ապրեցաւ ինն հարիւր տասն ամի ։ Նորա որդին Մաղաղիէլ՝ ապրեցաւ ութն հարիւր իննսուն ու հինգ ամի ։ Նորա որդին Յարեդ՝ ապրեցաւ ինն հարիւր վաթսուն երկու ամի ։ Նորա որդին Ենովք . իւր կենաց երեք հարիւր վաթսուն ու հինգերորդ տարին յերկինս փոխադրեցաւ մարմնով՝ իւր աստուածահաճոյ վարուցը համար ։ Նորա որդին Մաթուսաղայ՝ ապրեցաւ ինն հարիւր վաթսուն ու ինը տարի ։ Նորա որդին Ղամէք ապրեցաւ եօթն հարիւր եօթանասուն ու եօթը տարի ։ Նորա որդին էր Նոյ[1] ։

5 . Ու եղաւ որ երբ մարդիկ սկսան բազմանալ և Սեթեանց ցեղն ու Կայէնեանց ցեղին հետ խառնուեցան և անոնց չարութեանցը գեղծուեցան , այն ատեն սկսաւ բարուց ընդհանուր ապականութիւն մը , և մարդիկ բոլորովին անաստուածութեան հետեւեցան . Աստուծոյ իրենց տուած անձնիշխանութիւնը , երկրպագութիւնը և արարածոց վերայ ունեցած իրաւունքին չարաչար գործածեցին ։ Ասոր Աստուած ալ որոշեց որ պատժէ զիրենք , ջրհեղեղի միջոցաւ ջնջելով ՚ի մարդոց միջէն զանոնք ։ Այս ընդհանուր անօրէնութենէն զերծ գտնուեցան մի միայն Նոյ և իւր ընտանիքը ։

6 . Բայց այս ջրհեղեղէն շատ տարի առաջ , Նոյ նահապետը Աստուծոյ հրամանաւ սկսաւ տապան ( նաւ ) մը շինել , որուն երկայնութիւնն էր

1 Հանգստութիւն ։

հարիւր կանգուն, լայնութիւնը յիսուն և բարձրութիւնը երեսուն. ու մէջը խորշերու բաժնեց և ներսէն ու դրսէն ձիւթով ծեփեց։ Նոյ այս տապանը շինելովը յայտնապէս կ'իմացնէր պատուհասին գալիքը, բայց ոչ ոք փոյթ կ'ընէր։ Ատեն երբ որոշեալ ժամանակին եկաւ, ինքն Նոյ իւր կինը Նոյեմզարան և երեք որդիքը, Սեմ, Քամ և Յաբեթ և անոնց հարսները տապանին մէջ առնելէ զատ, ամէն սուրբ կենդանիներէն եօթնական զոյգ և միւսներէն ալ մէկ մէկ զոյգ իրենց ուտելիքներովը մէկտեղ տապանին մէջ առաւ, ինչպէս որ Աստուած պատուիրած էր. և զանոնք խորշերուն մէջ զետեղեց։

## ԳԼՈՒԽ Գ.

1. Ջրհեղեղ։ 2. Աստուծոյ օրհնութիւնն ու խոստումը առ Նոյ և որդիս նորա։ 3. Նոյի գինի հանելը. անէծք։ 4. Մարդոց աճումը։ աշտարակաշինութիւնը և լեզուաց խառնակումը։ 5. Ազգաց բաժանումը։ (Ծննդ. Է—ԺԱ.)

1. Նոյի կենաց վեց հարիւրերորդ տարին (1556) նոյեմբեր ամսոյ 27 երորդ օրը սկսաւ ջրհեղեղը. անդնդոց աղբիւրները պատռեցան և երկնից սահանքը բացուեցան, և քառասուն օր ու քառասուն գիշեր այնպէս տարափ անձրև տեղաց որ ջուրը բոլոր երկիրս ծածկելով բարձր լեռներէն ալ տասնըհինգ կանգուն վեր բարձրացաւ. ու երկրիս վրայ գտնուած բոլոր կենդանիք խղդուեցան. և ջուրը երկրիս վրայ մնաց հինգ ամիս։ Բայց Աստուած յիշելով տապանին մէջ եղողները, հով մը հանեց որով սկը-

տու․ ջուրը ցամքիլ ։ Մայիս ամսոյ 17 ին էր երբ տապանը որ ջրերուն վերայ կը շրջէր՝ Արարատին կողմերը գտնուելով Արարատեան լերանց վերայ նստաւ ․ և օգոստոսի 1 ին լերանց գլուխները երևեցան ։ Նոյ ուզելով իմանալ ջրերուն աստիճանը , ագռաւ մը արձակեց որ ետ չդարձաւ ․ քիչ մը յետոյ աղաւնի մը արձակեց որ կենալու տեղ չգտնելով ետ դարձաւ ․ եօթն օրէն ետքը դարձեալ արձակեց աղաւնին որ քիչ մը ուշանալէ յետոյ ձիթենւոյ ճիւղ մը առած ետ դարձաւ ։ Նոյեմբերի 27 ին բոլորովին ցամքած ըլլալով ջուրերը ․ Նոյ և իրեն հետ եղողները որ լման տարի մը տապանին մէջ մնացեր էին , Աստուծոյ հրամանաւ դուրս ելան ։

2 ․ Նոյ՝ ՚ի շնորհակալութիւն իրենց փրկութեանը , անմիջապէս սեղան մը շինեց և ողջակէզ մատոյց Աստուծոյ սուրբ կենդանիներէն , որուն հաճեցաւ Աստուած և օրհնեց զինքը և որդիքը որ աճին ու բազմանան երկրի վերայ ։ Նաև հրաման ըրաւ իրենց որ բաց ՚ի բուսեղէններէ՝ անասնոց միսն ալ ուտեն բայց առանց արեան ։ Նաև զատ ուխտ դրաւ Աստուած իրենց հետ որ ուրիշ անգամ երկրիս վերայ ջրհեղեղ չղրկէ և այնպէս ՚ի սպառ չպատժէ զմարդիկ ․ և այս ուխտին նշան եցոյց ծիածանը ․

3 ․ Նոյ երկրագործ ըլլալով սկսաւ այգի տընկել ․ և գինի շինեց ․ բայց քանզի անոր զօրութիւնը չէր գիտեր , երբ խմեց՝ գինովցաւ , ումերկացած ընկաւ պառկեցաւ վրանին մէջ ․ Իր

որդին Քամ տեսնելով հօրը մերկակը՝ ծիծաղե-ցաւ անոր վերայ և եղբայրն ալ պատմեց. Ա-նոնք ալ որպէս զի իրենց հօրը ծածկեն առանց տեսնելու անոր մերկութիւնը, հանդերձ առին կռնակնին ու այնպէս ետ ետ երթալով ծածկե-ցին զանիկայ. Երբ սթափեցաւ՝ Նոյ և եղած-ները իմացաւ, Քամը անիծեց և Սէմ ու Յա-բեթը օրհնեց.

Նոյ՝ ջրհեղեղէն յետոյ երեք հարիւր յիսուն տարի ևս ապրեցաւ, ու մեռաւ ինն հարիւր յիսուն տարեկան. (2006).

4. Մարդիկ երբ վերստին բազմացան, ամբոխ-ուեցան ուրիշ տեղեր երթալ բնակելու. ու-տի աշտարակ մը կանգնեն մեծ բարձրութեամբ դէպ ի Սենաարայ դաշտը պտտելու ատենները տե-նելով այն ընդարձակ դաշտավայրը. Հպարտու-թեան խորհուրդ մը ըրին [illegible], և իրենց կարողութիւնը ցուցնելու և յաւիտենական անուն մը թողելու համար և կամ ինչպէս կ'ը-սեն, եթէ վերստին ջրհեղեղ մը ըլլայ՝ անոր մէջ ապաստանելու համար. Նեբրովթ անուն զօրա-ւոր մէկուն հրամանատարութեանը սկսան շի-նել մեծ աշտարակ մը, որուն գլուխը մինչև յերկինք բարձրացնել կ'ուզէին. Այս շէնքին համար կը գործածէին քարի տեղ աղիւս և շա-ղախի տեղ կուպր. Բայց Աստուած անհաճոյ երևելով այն յիմար ամբարտաւանութեան գործը, խառնակեց ու բաժանեց անոնց լեզուն որ մինչև այն ատեն մէկ էր. որով և իրարու խօսք չհաս-

կենդանւոյն՝ խառնակութիւն ընկաւ մէջերնին և ստիպուեցան գործը անկատար թողուլ։ Նոր համար այն աշտարակին անունը Բաբելոն (խառնակութիւն) կոչուեցաւ (1770)։

5. Նոյէ որդւոց ամենքն ալ ցրուեցան երկրիս այլ և այլ կողմերը, և զանազան ազգեր ու ցեղեր ձևացան։ Սեմեան ցեղերը բնակեցան Ասիոյ արևելեան և արևմտեան հարաւային կողմերը։ Քամեան ցեղերը բնակեցան Աֆրիկէ և մասամբ մը Ասիոյ հարաւային կողմերը։ Յաբեթեան ցեղերը բնակեցան ի հիւսիսային արևմտեան Ասիոյ, Եւրոպայ և ասոնց կղզիները։

## ԳԼՈՒԽ Դ.

1. Աբրահամու կոչումը. և Քանանացւոց երկիրն երթալը։ 2. Սովի պատճառաւ Եգիպտոս կ'երթայ ու կը դառնայ։ 3. Ղովտ կը բաժնուի։ 4. Աբրահամու յաղթութիւնը և Մելքիսեդեկ։ 5. Աստուած Աբրահամու զաւակ կը խոստանայ։ 6. Իսմայելի ծնունդը։ 7. Թլփատութեան օրէնքը։ (Ծնն. ԺԲ—ԺԷ.)

1. Աստուած տեսնելով զանազան ազգերուն բաժնուելէ յետոյ երբ ամէն կռապաշտութեան մէջ ինկան, այն ատեն Աստուած ընտրելով Աբրահամու հաւատարմութիւնը և հաստատուն հաւատքը, (որ Սեմայ ցեղէն Եբերի[1] թոռան թոռն Թարայի որդին էր և իր հօրն ու եղբօրորդւոյն Ղովտայ հետ Քաղդէացւոց երկրէն ելլելով Միջագետաց Խառանու քաղաքը կը բնակէր), ուզեց որ անոր սերունդը առանձին բնակող ազգ մը ըլլայ. ուստի անոր հօրը Թարայի մահ-

1 Եբերի անունով Եբրայեցիք ևս կոչուեցան Իսրայելացիք։

ուանէն յետոյ երբ ինքն Աբրահամ եօթանասուն հինգ տարեկան էր՝ Աստուած իրեն ըսաւ. «Ել քու երկրէդ, քու ազգէդ ու ցեղիդ մէջէն և եկուր բնակէ այն տեղը զոր քեզի պիտի ցուցընեմ. և զքեզ մեծ ազգ պիտի ընեմ և օրհնեմ, ու քեզմով պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը»։ Աբրահամ հնազանդեցաւ այն աստուածային կոչման, և իւր կինը Սարրան և իւր եղբօր որդին Ղովտը և իրենց բոլոր ստացուածքները առնելով գնաց Քանանացւոց երկիրը[1] (1920). և եկաւ մինչեւ Սիւքէմ բառւած տեղը Մօրէի[2] կաղնիներին քով։ Հոն տեղ Աստուած վերստին երեւելով իրեն ի տեսլեան, խոստացաւ որ այն երկիրները իրեն սերունդին պիտի տայ։ Իսկ Աբրահամ հոնկէ չուելով գնաց ի հարաւ՝ Բեթելի արեւմտեան կողմը լեռը եկաւ. և վրանաբնակ կը շրջէր իւր հօտերովը Քանանու երկրին մէջ։

2. Այս միջոցներուն Քանանու երկրին մէջ սով ըլլալով Աբրահամ և Ղովտ Եգիպտոս գացին իրենց ընտանեօքը. տեղւոյն թագաւորը Փարաւոն ուզեց որ Սարրան իրեն կին առնէ, վասն զի Աբրահամ զանիկայ իւր քոյրը կոչած էր, սակայն այս բանին համար պատժուելով Աստուածոյ, ետ կեցաւ իւր դիտաւորութենէն և Աբրահամու ալ ընծաներ տալով ղրկեց ի Քանան։

3. Այդ Աբրահամու և Ղովտայ անասունները շատնալով երբ տեղերնին չէր բաւեր, Ղովտ զատուեցաւ և Յորդանանու միւս կողմը Սոդոմ

1 Պաղեստին. 2 Բարձր.

քաղաքին մէջ բնակեցաւ ։ Ասկէ յետոյ Աստուած դարձեալ երեւելով Աբրահամու՝ իր խոստումը կրկնեց ։ Իսկ Աբրահամ բնակեցաւ ՚ի Քեբրոն Մամբրէի կաղնիներուն մէջ, ուր Տէրոջը անուան սեղան մը ալ շինեց, ինչպէս որ Մօրէի կաղնիին քով և Բեթէլի կողմերն ալ շիներ էր ։

4. Այս միջոցներուս մէջ էր որ Եղամայ[1] Քոդողոգոմոր թագաւորն ուրիշ երեք թագաւորներու հետ միաբանելով պատերազմի ելան Սոդոմայեցւոց ու Գոմորայեցւոց և անոնց սահմանակից թագաւորներուն վրայ, որոնք ատեն մը Քոդողոգոմորի հնազանդելէ ետքը ապստամբեր էին ։ Անոնք Աղի ծովուն[2] մօտերը պատերազմելով Քոդողոգոմոր և անոր դաշնակիցները յաղթեցին, և շատ մարդ ջարդելէ զատ նաև Սոդոմայ քաղաքն ալ յափշտակեցին ու գերի տարին, որոց մէջ էր նաև Ղովտ ։ Աբրահամ երբ լսեց այս եղածը, շուտ մը ժողվեց իր կտրիճ ծառաներն ու դաշնակիցները, և գիշերանց անոնց վրայ յարձակեցաւ և բոլոր առած աւարներն՝ Ղովտն ալ մէկտեղ ազատեց ու դարձուց ։

Աբրահամ այսպէս յաղթանակով դառնալու ատեն Սաղիմայ թագաւորը Մելքիսեդեկ որ քահանայ ալ էր Աստուծոյ, հաց և գինի մատոյց Աբրահամու և օրհնեց զանիկայ. և Աբրահամ իր յաղթութեան աւարներէն եղող բաներէն տասանորդ տուաւ անոր ։ Սոդոմայեցւոց թագաւորն ալ խնդրելով զԱբրահամ, ուզեց

1 Եղիմայեցւոց (՚ի Պարսս) ։ 2 Մեռեալ ծով ։

որ բոլոր ազատած աւարն իրեն տայ . բայց Աբրահամ՝ որ քաջ և միանգամայն մեծահոգի էր, բան մի չընդունեց, և միայն իւր դաշնաւորներուն համար բաժին հանել տուաւ :

5. Անկէ յետոյ Աստուած դարձեալ երեւեցաւ Աբրահամու և քաջալերեց որ ամենեւին բանէ մի չվախնայ, խոստանալով որ ամեն կերպիւ պիտի պաշտպանէ զինքը : Բայց Աբրահամ զաւակ չունենալուն վերայ իւր ցաւը յայտնելով. Աստուած ալ խոստացաւ թէ իրեն զաւակ պիտի տայ և իւր սերունդը պիտի բազմացնէ. Աբրահամ հաւատաց Աստուծոյ խոստմանը. որ իրեն արդարութիւն համարուեցաւ : Աստուած իւր խոստումն աւելի հաստատելու համար Աբրահամու բաւ որ զոհ մի ընէ, և այն ատեն յատուկ տեսիլքով մի ցուցուց թէ իրեն սերունդը ատեն մը Եգիպտոս պիտի մտնայ և հոն անել չարչարուի. բայց յետոյ ետքն Աստուած պիտի ազատէ զանոնք և Քանանացւոց երկիրին անոնց պիտի տայ :

6. Սակայն Սարրա ամուլ ըլլալով՝ նոյն ժամանակի սովորութեան համեմատ իւր Հագար անուն աղախինը Աբրահամու տուաւ որ անկէ զաւակ ունենայ. Հագար երբ յղացաւ՝ սկսաւ հպարտանալ իւր տիկնոջը դէմ, որ այն ալ Աբրահամէն հրաման առնելով վռնտեց զանիկայ : Իսկ Հագար սրտնած երթալու ատեն Տէրոջը հրեշտակին երեւեցաւ իրեն և յորդորեց որ Սարրայի քով դառնայ և հնազանդի անոր : Անով

դարձաւ Հագար Սարրայի քով, և ժամանակին որ եկաւ՝ որդի մը ծնաւ զոր Իսմայէլ[1] կոչեց ինչպէս որ պատուիրած էր իրեն հրեշտակը ։

7. Աբրահամ իննսունևինը տարու էր երբ վերստին երեւեցաւ անոր Աստուած, և նորոգելով իր խոստումը՝ ու ուխտ ու դաշինք դրաւ հետը. և թէ՛ այս ուխտին և թէ՛ միւս կռապաշտ ազգերէն որոշուելու նշան մը ըլլալու համար հրամայեց անոր որ որդի յորդւոց իր ցեղին ամէն արու զաւակները թլփատուին. Իսկ անոր անունը որ առաջ Աբրամ (հայր բարձր) էր՝ փոխեց և Աբրահամ (հայր բազմութեան) կոչեց. և անոր կնոջն անունը որ առաջ Սարա էր՝ Սարրա (իշխանուհի) կոչեց. Աստուած թէպէտ և խոստացաւ անոր թէ Սարրայի ծնած զաւակը ժառանգ պիտի ըլլայ բայց խոստացաւ թէ Իսմայէլն ալ պիտի օրհնեմ աճեցընեմ ու մեծ ազգ մը պիտի ընեմ։ Այս Աբրահամ թէ՛ ինք և թէ՛ իր տանը մէջ եղող մարդիկը թլփատուեցան ։

## ԳԼՈՒԽ Ե.

1. Աբրահամու հիւրընկալութիւնը. 2. Աստուծոյ ոչ համար միջնորդելը. 3. Սոդոմայ և Գոմորայ կործանումը. 4. Ղովտայ կինն ու որդիները. 5. Աբիմելէք և Աբրահամ. 6. Իսահակայ ծնունդը. 7. Հագար և Իսմայէլ կը ճամբուին.

(Ծննդ. ԺԸ—ԻԱ.)

1. Եւ եղաւ որ օր մը Աբրահամ իր վրանին դուռը նստած էր, և ահա մարդկային կերպարանքով երեք հրեշտակներ եկան դէպ ի այն կողմը։

1 Աստուած լսող ըսէ .

Աբրահամ երբ զանոնք տեսաւ՝ առաջ եկաւ և մեծ պատուով զանոնք ընդունելով հանգչեցընելէ յետոյ ալ ճաշի հրաւիրեց. Երբ կերակուրը լմըն-ցաւ, անոնցմէ մէկն ըսաւ Աբրահամու թէ «Հե-տեւեալ տարի այս ատեն Սառայ որդի մը պիտի ունենայ»։ Սառա որ դուրսէն մտիկ կ'ընէր, ան-հնարին բան մը համարելով այս խօսքը ծիծաղե-ցաւ ինքնիրեն. բայց Աստուած խրատելով անոր ծիծա-ղը՝ յանդիմանեց անոր թերահաւատութիւնը և հաստատեց եղած խոստման ճշմարտութիւնը։

2. Ասոնք հեռանալ ատենը ճամբայ ելնելով դէպ ի Սոդոմ, Աբրահամ ալ բաւական տեղ իրենց ուղեկից եղաւ. այն ատեն Տէրը յայտնեց անոր թէ նոյն քաղաքները պիտի կործանէ, անոնց չա-րութեան չափը լցուած ըլլալուն համար։ Աբրա-համ երբ զայս լսեց շատ ցաւեցաւ և սկսաւ ա-ղաչել որ եթէ հնար է թողութիւն տայ անոնց և չկործանէ. վերջապէս խօսքը հոն հասաւ որ Տէրը ըսաւ թէ պիտի ազատէ այն քաղաքները թէ որ մէջերնին տասն արդար մարդ գտնուէր։ Բայց վերջոյ Աբրահամ լռեց և դարձաւ իր տեղը։

3. Սակայն Աբրահամ դեռ Տէրոջը հետ կը խօսէր երբ երկու հրեշտակներն իրիկուան դէմ Սոդոմ քաղաքն եկան։ Ղովտ որ քաղաքին դու-ռը նստեր էր՝ մեծարեց զիրենք և իր տունը հրաւիրեց ու ընթրիք պատրաստեց։ Սոդոմացիք խմբուելով ամէնքը դալը, եկան Ղովտայ տունը պաշարեցին և կ'ուզէին որ զանոնք իրենց յանձնէ. թէև Ղովտ շատ դէմ կեցաւ և խոստանալ

A I/10511



ալ ըլլալ. բայց չհամոզուեցան և քիչ մնաց որ տունը պիտի քանդէին, եթէ Հրեշտակաց պաշտպանութիւնը չհասնէր ։ Սոդոմացւոց հանդէպ հետամուտէն ետքը, Հրեշտակները յայտնեցին Ղովտայ թէ իրենք այն քաղաքները կործանելու ղրկուած են. ուստի ըսին որ ինքը ինչ ընտանիք և ազգական որ ունի առնէ և շուտով քաղաքէն դուրս ելլէ ։ Ղովտ թէև ուզեց իր փեսաներն ալ միասին առնել. այլ անոնք չհաւատացին իրեն. ուստի իր կինը և երկու աղջիկը առնելով արտորանօք ճամբայ ելաւ դէպ ՚ի Սեգովր՝ քաղաքը որ մօտ էր այն տեղին ։ Նոքա դեռ հոն չհասած՝ և ահա Աստուած սկսաւ ծծումբ և կրակէ անձրև տեղալ Սոդոմ ու Գոմոր քաղաքներուն վերայ որ այրեց կործանեց զանոնք բոլոր շրջակայներովը և մէջի եղածներովը (2110)։

4. Իսկ Հրեշտակներն յառաջագոյն պատուիրած էին Ղովտայ որ չըլլայ թէ փախչելու ատեններին ճանապարհին յապաղին ու հետաքրքրութեամբ ետևնին նային. բայց Ղովտայ կինը այս պատուիրանութեան դէմ ընելով՝ ետևը նայեցաւ կամ թերևս ետ դարձաւ. ուստի աղի արձան կարծ-ցաւ ։ Ղովտայ որդւոցմէն Մովաբէն՝ սերեցան Մովաբացիք և Բենամմիէն (Ամոն) Ամոնացիք ։

5. Աբրահամ Քանանու երկրէն դէպ ՚ի հարաւային կողմերը յառաջանալով մինչև Փղշտացւոց երկիրը Գերարացւոց քաղաքը հասաւ ։ Հոն անդ ալ Աբրահամ Աբիմելիքի [illegible] Փիքող է

Փղշ ․

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

կ՚ըսէր հարցընողներուն. այս պատճառաւ անդ-
ւոյն Թագաւորն Աբիմելէք ալ զանիկայ իրեն
կին առնել ուզեց. բայց տեսիլքի մէջ Աստուծ-
մէ յանդիմանուելով՝ ետ կեցաւ, և մեծ պա-
տիւ ալ ըրաւ Աբրահամու, և անոր ընդարձակ
երկիրներ տուաւ բնակելու:

Աբրահամ այս տեղ շատ օրեր պանդխտեցաւ
և Աստուծոյ օրհնութեամբը այնքան զօրացաւ
և անունը հռչակուեցաւ որ Աբիմելէք սկսաւ
ակնածել իրմէ, ուստի մշտնջենաւոր բարեկա-
մութեան ուխտ և դաշինք դրաւ հետը. և ասոր
համար իրարու երդում ալ ըրին ջրհորի մը քով,
որուն անունը Սաբէէ (երդումն) կոչեցաւ, և այն
տեղին անունն ալ Բերսաբէէ (ջրհոր երդման):

6. Ու եղաւ որ երբ Աբրահամ հարիւր,
և Սառրա իննսուն տարեկան էին, Աստուծոյ
խոստումը կատարեցաւ. Սառրա յղացաւ և որ-
դի մը ծնաւ (2111): Աբրահամ ութերորդ օրը
զանիկայ թլփատեց և անունը Իսահակ[1] կոչեց,
ինչպէս պատուիրած էր Աստուած: Ու Իսահակ
մեծցաւ ու կաթէն կտրուած օրը մեծ խնճոյք
ըրաւ Աբրահամ:

7. Իսահակ սկսաւ օր օրի զարգանալ. Սառ-
րա տեսնալով որ Իսմայէլ կը նախանձէր անոր և
կը զրկէր զանիկայ, ուստի Աբրահամու աղաչա-
կեց որ Իսմայէլը ճամբէ Հագարի հետ: Աբրահամ
թէև ՚ի սկզբան դէմ կեցաւ, բայց յետոյ Աս-
տուծոյ թելադրութեամբը կատարեց Սառրայի

1 Խնդութիւն:

խնդիրքը. և Հագարին տիկ մը ջուր և կերակուր տալով անէն դուրս ճամբեց Իսմայէլի հետ մէկտեղ։ Հագար թէպէտ և ճանապարհին նեղութիւններ կրեց, այլ Աստուծոյ պաշտպանութեամբը մինչեւ Փառան անապատը գնաց և հոն տեղ բնակեցաւ իր որդւոյն Իսմայէլին հետ, և անոր Եգիպտացի կին մը առաւ, որոյ սերունդը Հագարացիք կամ Իսմայէլացիք ըսուեցան։

## ԳԼՈՒԽ Դ.

1. Աբրահամու փորձութիւնը. 2. Սարրայի մահը. 3. Իսահակայ ամուսնանալը. 4. Աբրահամու մահը. (Ծնն. ԻԲ—ԻԵ.)

1. Եւ եղաւ որ երբ Իսահակ մեծցաւ ու չափահաս եղաւ, Աստուած ուզելով փորձել Աբրահամու հաւատքին հաստատութիւնը, ըսաւ անոր. «Ով Աբրահամ, հիմա քու սիրելի որդիդ Իսահակը առ ու Մորիայի երկիրը գնա, և հոն զանիկայ ողջակէզ ըրէ ինծի՝ լեռներէն Մէկուն վրայ զոր քեզի պիտի ցուցնեմ»։ Աբրահամ թէպէտ և կը գթար իր սիրելի որդւոյն վրայ, բայց իր հաստատուն հաւատքը և առ Աստուած ունեցած հնազանդութիւնը հայրական գթոյն յաղթելով՝ առանց դանդաղելու հետեւեալ առտու պէտք եղածը պատրաստեց, և Իսահակն ալ առնելով ճամբայ ելաւ։ Երրորդ օրը երբ որոշեալ տեղւոյն մօտեցան, Աբրահամ իր ծառաները հոն տեղ թողուց, և ողջակէզին փայտերը Իսահակայ ուսը տալով՝ յառաջ գացին։ Իսահակ ճանապարհին սկսաւ հարցընել թէ «Հայր իմ, ահա կրակը ու փայտը,

բայց ողջակէզ ընծայու ոչխարը ո՞ւր է »: Եւ Աբրահամ պատասխանեց. « որդեակ իմ, Աստուած ինքնի պատրաստէ իւրն ողջակէզ ընծայու ոչխարը »: Եւ այսպէս հայր ու որդի Աստուծոյ ցուցած տեղը հասան։ Աբրահամ հոն տեղ սեղան շինեց, փայտերը շարեց և զԻսահակը կապելով՝ փայտերուն վերայ դրաւ [1]. Եւ երբ ձեռքը երկնցուց և դանակն առաւ որ զանիկայ զենէ, և ահա Տէրոջը հրեշտակը երկնքէն անոր կանչեց. « Աբրահամ, Աբրահամ, տղուդ ձեռք մի դպցըներ, և անոր բան մը մի ըներ. քանզի հիմա գիտցայ որ Աստուծմէ կը վախնաս. որովհետև քու սիրելի որդիդ ինծմէ չխնայեցիր »:

Եւ Աբրահամ իւր աչքերը վերցուց և տեսաւ որ ատրեկայ [2] ծառին վերայ եղջիւրներէն կախուած խոյ մը կայ. ուստի գնաց զանիկայ առաւ ու ողջակէզ ըրաւ փոխանակ Իսահակայ։ Եւ Աբրահամ այն տեղին անունը Եհովայիրէ (Տէրը պիտի տեսնէ) կոչեց։ Եւ Տէրոջը հրեշտակը երկրորդ անգամ երկնքէն կանչեց զԱբրահամը և ըսաւ. « Իմ անձիս վերայ երդում ըրի կ'ըսէ Տէրը, որովհետև այս բանը ըրիր, և ինծի համար քու սիրելի որդւոյդ չխնայեցիր. ուստի քեզ օրհնելով պիտի օրհնեմ, և քու սերունդդ երկնից աստղերուն ու ծովեզրի աւազին պէս պիտի շատցընեմ ու զօրացընեմ. և երկրի ամէն ազգերը քու սերունդովդ պիտի օրհնուին »:

1 Ո՛րչափ գովելի է նաև Իսահակայ առ Աստուած և առ իւր հայրն ունեցած հլութիւնը։

2 Թուփ, տատասկ։

Եւ Աբրահամ դարձաւ իր տեղը . (2140) .

2 . Անկէ տասներկու տարի ետքը Սառա մեռաւ Քեբրոնի մէջ հարիւր քսան ու եօթը տարեկան , որուն վրայ Աբրահամ մեծ սուգ ըրելով , թաղեց զանիկա Մաքփելայի[1] այրին մէջ , զոր տեղացիներէն ստակով ծախու առաւ իրենց գերեզմանի ըլլալու համար :

Սառայի մեռնելէն ետքը Աբրահամ ուրիշ կին մի ալ առնելով անկէ ալ զաւակներ ունեցաւ . բայց անոնց ամէն մէկուն պարգեւներ տալով դէպ 'ի արեւելք ճամբեց , եւ իր բոլոր ժառանգութիւնը Իսահակին տուաւ՝ ինչպէս որ Աստուած ալ յայտներ էր իրեն :

3 . Նոյնպէս երբ Աբրահամ ամէն բանի մէջ Տէրոջը օրհնութիւնը առած եւ բարի ծերութեան մը հասած էր , որոշեց որ քանի ինք ողջ է՝ ամուսնացընէ իր որդին Իսահակը որ քառսուն տարեկան էր : Ասոր համար իր տանը վերակացուն Եղիազարը եւ երդում ըրել տալով անոր՝ որ չըլլայ թէ Քանանացի աղջիկ առնէ Իսահակին . « հապա գնա , ըսաւ , Միջագետք , եւ հոն տեղ իմ ազգականներէս աղջիկ մը առ անոր » :

Ասոր Եղիազար շատ մը բարիքներ ուղտերու բեռցընելով՝ ճամբայ ելաւ դէպ 'ի Միջագետաց Խառան քաղաքը , ուր կը բնակէր Աբրահամու եղբայրը Նաքովր . եւ քաղաքին մօտենալով՝ ջրհորի մը քով հանգչեցաւ : Եղիազար հոն տեղ կ'աղօթէր Աստուծոյ որ իրեն յա-

1 Կրկնութիւն

ջողէ. և ջուր առնելու եկող աղջկանց մէջէն մարդասէր և բարեսիրտ աղջիկ մը հանդիպի. և ահա Աստուծոյ տնօրինելովը՝ Աբրահամու եղբօրորդւոյն Բաթուէլի աղջիկը Ռեբեկան եկաւ որ ջուր առնի. Եղիազար ջուր ուզեց անկէ. և աղջիկը անոր ջուր տալէ զատ նաև ուղտերուն ալ տուաւ. Այն ատեն Եղիազար իմանալով անոր ով ըլլալը՝ շատ ուրախացաւ և ընծաներ տուաւ. Իսկ աղջիկը գնաց իր տունը և պատմեց եղածը՝ որոնք եկան և Եղիազարը իրենց տունը տանելով հանգչեցընելէ վերջ, կերակուրի հրաւիրեցին. Այն ատեն Եղիազար իմացուց իր նպատակը, և Ռեբեկան ուզեց Իսահակի հարսնութեան համար. Անոնք ալ այն գործին Աստուծոյ մէկ յաջողութիւնն ըլլալը ճանչելով և աղջկան մանաւանդ հաճութիւնն ալ առնելով՝ հաւանութիւն տուին. Եղիազար դարձեալ մեծագին ընծաներ տուաւ Ռեբեկային և անոր մօրն ու եղբօրը. և այնպէս նոյն գիշերը ուրախութեամբ անցուցին. Առաւօտուն թէ և իրենք ուզեցին որ Եղիազար գոնէ տասն օր հոն մնայ և հարսանեաց ուրախութիւն ընեն, բայց անիկայ շուտով երթալ ուզելուն համար, իրենք ալ Ռեբեկան իր ամեն բաներով և նաժիշտներովը ճամբայ դրին Եղիազարու հետ՝ ջերմ բարեմաղթութիւններ ընելով.

Երեկոյեան մը դէմ էր և Իսահակ դաշտը ելեր կը պտըտէր, երբ ասոնք հասան հոն անդ. Եղիազար պատմեց Իսահակին՝ ամեն եղածները.

և Իսահակ շատ սիրով ընդունեց զՌեբեկան ։

4 . Իսահակայ ամուսնութենէն յետոյ Աբրահամ երեսուն ու հինգ տարի եւս ապրելով՝ հարիւր եօթանասուն ու հինգ տարեկան մեռաւ . և իւր որդիքը Իսահակ և Իսմայէլ մեծ պատուով թաղեցին զանիկայ Սառայի գերեզմանին քով (2183) ։ Մեծ էր Աբրահամու հիւրասիրութիւնն ու մեծանձնութիւնը , այլ եւս առաւել մեծ էր անոր առ Աստուած ունեցած վստահութիւնը և հաստատուն հաւատքը , որով Ա—յ հ——ոյ կոչուիլ արժանացաւ ։ Անոր համար և Աստուած զանիկայ ամեն առատութեամբ օրհնեց և նշանաւոր ազգերու հայր ընելէ զատ , մանաւորապէս անոր ցեղէն ընտրեց իրեն սեպհական ժողովուրդ , մինչեւ որ անոր Զաւակով օրհնուեցան երկրի ամեն ազգերը ։

## ԳԼՈՒԽ Է .

1 . Եսաւ և Յակոբ ։ 2 . Եսաւ իւր անդրանկութիւնը Յակոբայ կը թողու ։ 3 . Աստուած Իսահակը կ'օրհնէ ։ 4 . Յակոբ իւր եղբօրը օրհնութիւնը իրը կ'առնէ ։ ( Ծննդ . ԻԵ — ԻԷ . )

1 . Իսահակ իւր ամուսնութենէն յետոյ մինչեւ քսան տարի զաւակ չունեցաւ , վասն զի իւր կինը Ռեբեկա ամուլ էր . և ասոր համար Աստուծոյ աղաչելով՝ Աստուած ալ լսեց իրեն ։ Ու Ռեբեկա յղացաւ ու երկուորեակ ծնաւ . առաջինը կարմիր մորթով ու մազոտ էր , զոր Եսաւ [1] կոչեցին . իսկ երկրորդը որ լերկ էր և ձեռքովը եղբօրը գարշապարէն բռներ էր , Յակոբ [2]

1 Մազոտ ։ 2 Գարշապար բռնող . եւ խաբող ։

թեւածքը թէ՛ անտիկայ եւ թէ՛ նորը ամէն վայելք է զերծ մնալէ ետեւ. շատ յաջողութիւն գըտաւ եւ հարստացաւ ու զօրացաւ, որով Փղշտացւոց Թագաւորը Աբիմելէք[1] ալ իրմէ ակնածելով՝ միջնորդներով բարեկամութեան ուխտ ուզեց հաստատել հետը, եւ երդումով իրեն իրաւունք Եղեմոն ջրհորին տուաւ, որ արդէն Աբրահամու ատենէն ալ այսպէս երդում մը եղած էր։

4. Եւ եղաւ որ երբ Իսահակ ծերացաւ եւ աչքերն ալ տկարացած էին, իր մեծ որդին Եսաւը կանչեց ու ըսաւ. «Որդեակ, ահա ես ծերացեր եմ եւ մեռնելուս օրը թերեւս մօտ է, ուստի գնա՛ դաշտէն որս մը բեր եւ ինծի սիրելի եղած կերակուր մը պատրաստէ, որպէս զի հոգիս քեզ օրհնէ»[2]։ Սակայն Ռեբեկա մայր բանը իմանալով ուզեց որ այս օրհնութիւնն Յակոբ առնէ, ուստի երբ Եսաւ դաշտը գնաց, Ռեբեկա ուլ մը առաւ եւ Իսահակին ուզածին նման կերակուր մը պատրաստեց, եւ Եսաւի զգեստը Յակոբին հագցնելով, վզին ու թեւերուն վըրայ ալ ուլին մորթն անցուց որպէս զի Եսաւին նմանի, ու պատրաստուած կերակուրը անոր ձեռքով ղրկեց Իսահակին։

Իսահակ թէեւ Յակոբայ ձայնէն քիչ մը կասկածեցաւ, սակայն ամէնայնիւ այս հնարքով խաբ-

---

պատահմամբ երբ փառաց մը կը ծածկէին, կը [illegible] կոչէ իրենց կիները։

1 Այս անունը ամէն Փղշտացի թագաւորաց կը տրուէր։

2 Կ՚երեւի որ Եսաւ անդրանկութիւնը Յակոբայ տալը Իսահակ չէր գիտեր կամ՝ չէր հաւատար։

ուեցաւ . Թերեւս Աստուծոյ այնպէս տնօրինելովը , և պէտք եղած օրհնութիւնը տալով , իրեն ժառանգ և եղբօրը վերայ տէր կարգեց զանիկայ ըստ առաջնութեան ժամանակին : Յետոյ Եսաւ երբ եկաւ ու եղածը իմացաւ՝ շատ ցաւեցաւ և ինքն ալ օրհնութիւն խնդրեց հօրմէն . Իսահակ թէեւ իմացաւ եղած սխալը , այլ Յակոբայ տուած օրհնութիւնը ետ չառնելով , ուրիշ քանի մը օրհնութիւն ալ անոր տուաւ : Այս պատճառաւ Եսաւ սկսաւ ատել Յակոբայ և կ'ուզէր զանիկայ մեռցընել . Ռեբեկա իմանալով Եսաւի միտքը և ուզելով որ Յակոբ առնէն մը եղբօրմէն հեռու մնայ , ուստի Իսահակայ հաճութեամբ որոշեց որ Յակոբ մօրեղբօրը Լաբանու տունը երթայ 'ի Միջագետս , և իրենց ազգատոհմէն կին առնէ . վասն զի ձանձրացած էին Եսաւի առած Քանանացի կիներէն : Իսկ Եսաւ տեսնելով թէ իր Քանանացի կիները ծնողացը հաճելի չէին , գնաց իր հօրեղբօր Իսմայէլի աղջիկն ալ իրեն կին առաւ :

## ԳԼՈՒԽ Ը.

1. Յակոբ մօրեղբօրը քով կ'երթայ և ճամբան տեսիլք մը կը տեսնէ . 2. Կ'ամուսնանայ . կը հարստանայ ու կը դառնայ . 3. Ճամբան հրեշտակին հետ մաքառելը և Եսաւի հետ հաշտուիլը . 4. Իւր որդւոցը մէկ վրէժխնդրութիւնը . 5. Ռաքէլի և Իսահակայ մահը . 6. Եսաւի սերունդը . (Ծնն. ԻԸ—ԼԶ.)

1. Յակոբ վերստին իւր հօրը օրհնութիւնը առնելով ճամբայ ելաւ դէպ 'ի Միջագետք Խառան քաղաքը . Ճանապարհին գիշեր մը գը-

խուն ներքեւ քար մը դրած կը՚ննջէր . եւ ահա տեսիլքի մէջ տեսաւ սանդուխ մը ուրկէ հրեշ-տակներ կ՚ելլէին ու կ՚իջնէին . եւ վերի ծայրն ալ Աստուած կեցեր էր , որ կրկնելով իր առ Աբ-րահամ ըրած խոստումները , յայտնեց Յակոբայ թէ ամեն դէպքի մէջ զինքը պիտի պաշտպանէ ։ Յակոբ երբ արթնցաւ , սիրտը լցուած էր եր-կիւղածութեամբ . ուստի նոյն գլխուն տակի քարը առաւ ու եղով օծեց եւ զանիկայ հոն տեղ արձան կանգնեց ՚ի յիշատակ այն տեսլեան . եւ ուխտեց որ եթէ գործը յաջողի եւ խաղաղու-թեամբ դառնայ , այն տեղը Տուն Աստուծոյ ընէ իրեն . եւ իր ամեն ունեցածէն տասանորդ տայ Աստուծոյ ։ Այս նոյն տեղին անունը որ Լուզ կ՚ըսուէր , Բեթէլ ( Տուն Աստուծոյ ) կոչեց ։ Յակոբ հոն տեղէն ճամբայ ելլելով Խառան քա-ղաքին մօտեցաւ , ու ջրհորի մը քով եղող հովիւ-ներէն տեղեկութիւն ուզեց իր մօրեղբօրը Լա-բանի վրայ , որոնք ճանչցուցին իրեն անոր աղ-ջիկը Ռաքէլը՝ որ իր ոչխարներուն ջուր խմց-նելու համար դէպ ՚ի հոն կու գար ։ Յակոբ միւս հովիւները վանելով՝ նախ Ռաքէլի ոչխար-ներուն համար ջուր հանելէ յետոյ՝ ծանօթու-թիւն տուաւ անոր , որ շատ ուրախացաւ եւ գնաց իր հօրը Լաբանու իմացուց Յակոբայ գալուստը . եւ Լաբան եկաւ ու մեծ ընդունե-լութեամբ իր տունը տարաւ զանիկայ ։ Յա-կոբ հոն տեղ քանի մը օր հանգստանալէ ետքը՝ սկսաւ Լաբանու գործերուն մէջ աշխատիլ ։

Չ. Լաբան խնդրեց որ Յակոբ երկար ատեն իր քով պահուի մնայ, ուզեց վարձք մը որոշել անոր. Յակոբ ալ վարձքի տեղ անոր աղջիկը Ռաքէլն ուզեց. ուստի անոր համար եօթն տարի ծառայելու պայմանին յանձն առաւ Յակոբ. Սակայն երբ պայմանաժամը լրացաւ, Լաբան խաբեց զանիկայ եւ Ռաքէլի տեղ անոր մեծ քոյրը Լիան տուաւ, պատճառ բերելով՝ թէ հոս տեղ օրէնք չէ մեծէն առաջ պզտիկը հարսնացնել. Իսկ Յակոբ որ զՌաքէլը կը սիրէր, յանձն առաւ եօթն տարի եւս աշխատիլ, որով եւ Ռաքէլն ալ առաւ. Ըսել է յետոյ Յակոբ երբ կ'ուզէր երթալ՝ Լաբան չթողուց, եւ անոր աշխատութեան վարձք ալ խոստացաւ իր հօտին մէջ ծնած ամէն խատուտիկ ոչխարները. Սակայն Լաբան այն պայմանին մէջ խարդախութիւն ընելուն համար, Յակոբ ալ Աստուծմէ խրատուած՝ սկսաւ այն հնարքն 'ի գործ դնել. ծառի դալար ճիւղեր առաւ, որոց վերայի կեղեւները տեղ տեղ կեղեւելով՝ գոյնզգոյն կ'երեւէին, եւ այս ճիւղերը ոչխարներուն ջուր խմելու ատեն աւազանին մէջ կը դնէր, զոր տեսնելով ոչխարները՝ կը խրտնէին ու խատուտիկ կը ծնանէին. Ու այսպէս այնչափ շատցաւ Յակոբայ բաժինը եւ քիչ ատենի մէջ հարստացաւ ամէն բանով, որ Լաբանու որդիքը սկսան նախանձիլ անոր. Ուստի Յակոբ Աստուծոյ ազդեցութեամբ Լաբանէն գաղտուկ իր ընտանիքը եւ ամէն ունեցածները առնելով՝ ճամբայ ելաւ. Իսկ Լաբան երբ իմա-

ցու Յակոբայ փախչելը՝ և մանաւանդ տեսնե-
լով իւր կուռքերուն ալ գողցուիլը զոր Ռաքէլ
իւր հետ առեր էր, շատ նեղացաւ, ու ասոր փու-
թով Յակոբայ ետևէն հասաւ. սակայն Աստու-
ծոյ մէկ ազդարարութեամբը՝ Յակոբայ վնասե-
լէ ետ կենալով, միայն յանդիմանեց զանիկայ
այնպէս գաղտնի ձմերայ ելլելուն համար. և
սկսաւ կուռքերն ալ փնտռել, բայց չգտաւ. ին-
չու որ Ռաքէլ իւր հեծած ուղտին կռնակը պա-
հեր էր զանոնք[1]: Այն ատեն Յակոբ ալ իւր
այնպէս գաղտնի ձմերայ ելլելուն պատճառները
ցուցնելով՝ վերջապէս հաշտուեցան. և մէկզմէ-
կնին ուխտ ու դաշինք դրին. և նոյն ուխտին նշան՝
քարակոյտ մը ալ շինեցին հոն տեղ և անոր վրայ
հաց կերան. ուստի այն տեղին անունն ալ Գա-
ղաադ (վկայութեան տեղ) կոչուեցաւ. ևս և
Մասփա (դիտանոց), այսինքն Տէր իմ տեսնէ.
Ետ Յակոբ շարունակեց իւր ճամբան.

3. Յակոբ Լաբանու ձեռքէն ազատուելէն
յետոյ՝ Եսաւի վրէժխնդրութենէն կը վախնար.
ուստի մարդ ղրկեց անոր որ երթան իւր կող-
մէն քաղցրութեամբ ողջունեն զանիկայ. սակայն
երբ իմացաւ թէ անիկայ շատ մարդով զինքը
զինուորելու կու գայ, խիստ վախցաւ. և անոր
առջև համար շատ մը ընծաներ պատրաստե-
լով՝ սկսաւ Աստուծոյ աղաչաւորութիւնն ալ
հայցել. Եւ Աստուած հրեշտակ մը ղրկեց որ
եկաւ ու գիշեր մը մինչև առաւօտ Յակո-

1 Լաբանու ընտանիքը թէև Աստուածապաշտ էին, այլ կուռապաշ-
տական սովորութիւններ ալ կը գործածէին որ Յակոբ չէր ընդունէր.

բայց հետը բաւականանալէ յետոյ՝ իբր թէ յաղթուելով զուգուեց. որով խնայուեց թէ ամեն դժուարութիւնց ազատ յայտնէ Աստուծով. և Յակոբայ անունն այլ փոխեց և Իսրայէլ (մարտնչող ընդ Աստուծոյ) կոչեց. Յակոբ այլ այն տեղը այն անունով Փանուէլ (երես Աստուծոյ) անուանեց. Անկէ յետոյ Եսաւ իւր մարդիկներովը եկաւ. և Յակոբ խոնարհութեամբ ողջունելով զանիկայ, քաղցր խօսքերով անոր սիրտը կակղեցուց. որով հաշտուեցաւ Եսաւ, և Յակոբայ իրեն տուած ընծայներն սիրով ընդունեց և դարձաւ իւր տեղը.

4. Անկէ հետոյ Յակոբ Սիւքեմացւոց երկիրը Սաղէմ քաղաքը եկաւ, և հոն տեղ կացած մի ատեններ Տէրոջը անուանը սեղան մը շինեց. Յակոբայ հոն տեղ բնակած ժամանակը Սիւքեմացւոց իշխանին որդին՝ անոր Դինա[1] անուն աղջիկը սիրելով՝ բռնաբարեց և յետոյ ուզեց զանիկայ առնել. Իսկ Յակոբայ որդիքը առ երեսս հաճութիւն տալով, պատուհասութիւն մը ձեռք բերին, ու Սիւքեմացիները ջարդեցին և քաղաքը կողոպտեցին, և այսպէս իրենց քրոջ եղած նախատանաց վրէժ մը լուծեցին. Բայց Յակոբ զայրացաւ այն չարաչար վրէժխնդրութեան վերայ, և վախնալով որ շրջակայ ժողովուրդները միաբանուելով վնաս մը հասցընեն իրեն, ելաւ անկէ Աստուծոյ հրամանաւ գնաց ՚ի Բեթէլ, և հոն տեղ շինեց այն սեղանը զոր երթալու ատենն ու խոստած

1 Դատաստան.

էր շինել 'ի շնորհակալութիւն Աստուծոյ ։ Աստուած ալ վերստին երեւեցաւ իրեն և օրհնեց զինքը, և նոյն երկիրներն իրենց սերունդին տալու խոստումը նորոգեց ։

5. Յակոբ հոն տեղէն ալ ելլելով՝ Քեբրոն երթալու ատեն, ճանապարհին Ռաքէլ երկրորդ որդի մը ծնաւ, զոր Բենիամին կոչեցին. բայց ինքը ազատուելէն մեռաւ, ու թաղեցաւ Բեթղեհէմի քովերը Եփրաթայի ճամբան, ուր գերեզմանին վերայ քարէ արձան մը կանգնեց Յակոբ ։ Այս հետեւ Յակոբ հասաւ 'ի Քեբրոն՝ իր հօրը Իսահակի քով ։ Յակոբայ դառնալէն յետոյ քսան ու ութը տարի եւս ապրեցաւ Իսահակ, ու մեռաւ հարիւր ութսուն տարեկան, և իր որդիքը Եսաւ ու Յակոբ թաղեցին զինքը իր ծնողաց գերեզմաններուն քով (2290) ։

6. Յակոբ իր հօրը Իսահակի տեղը բնակեցաւ. իսկ Եսաւ որ արդէն որսորդ ու պատերազմող մէկն էր՝ Սէիր լեռը բնակեցաւ. իր մէկ անունն ալ Եդոմ[1] ըլլալով՝ իր սերունդը Եդոմայեցիք կոչուեցան ։

## ԳԼՈՒԽ Թ.

1. Յակոբայ որդիքը ։ 2. Յովսէփայ երազը ։ 3. Յովսէփ կը ծախուի ։ 4. Եգիպտոս կը տարուի ։ 5. Զրպարտութեամբ կը բանտարկուի ։ 6. Բանտին մէջ երազներ կը մեկնէ ։ 7. Փարաւոնի երազը կը մեկնէ ։ 8. Եգիպտոսի իշխան կ'ըլլայ ։ (Ծնն. ԼԷ—ԽԱ.)

1. Յակոբ տասն երկու մանչ զաւակ ունէր որոց անուններն են Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդայ, Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասէր, Իսա-

[1] Կարմիր ։

քոյր, Զաբուղոն, Յովսէփ և Բենիամին[1] : Նոցա մէջ ամենէն աւելի կը սիրէր Յակոբ՝ Ռաքէլի առջինեկին Յովսէփը, որուն ծաղկանկար պատմուճան մը ալ շիներ էր : Այս պատճառաւ միւս եղբայրքը կը նախանձէին անոր վրայ և սուտ ամբաստանութիւններ կ'ընէին անոր վրայօք իրենց հօրը, բայց անիկայ մտիկ չէր ըներ իրենց :

2. Օր մը Յովսէփ երազ մը տեսաւ. իբր թէ իւր եղբայրներուն հետ որայ կը կապէր և անոնց կապածները իրենին կը խոնարհէին : Ուրիշ երազ մը ևս տեսաւ որ իբր թէ արեւը, լուսինն ու տասն ու մէկ աստղ երկրպագութիւն կ'ընէին իրեն : Յովսէփ այս երազները իւր եղբայրներուն ալ պատմեց միամտութեամբ, որք այնուհետեւ մեկնեցին թէ ուրեմն ինքը պիտի թագաւորէ իրենց վրայ, և ծնողքն ու իրենք երկրպագութիւն պիտի ընեն անոր. այս պատճառաւ հայրն անգամ՝ սաստեց զանիկայ : Իսկ եղբայրները սկսան աւելի նախանձիլ, և անոր վնասելու առիթ մը կը փնտռէին :

3. Եւ եղաւ որ օր մը իրենք հեռու դաշտ մը գացած էին. Յակոբ ալ իրենց վրայ տեղեկութիւն առնելու համար Յովսէփը հոն ղրկեց : Եղբայրները երբ դաշտին մէջ մինակ տեսան զանիկայ, սկսան խորհուրդ ընել որ սպաննեն. բայց Ռուբէն չթողուց և ըսաւ որ պարապ հորի մը մէջ ձգեն զանիկայ որ հոն անօթի մեռնի. սակայն

1 Սոյն անուանց նշանակութիւնն է հետեւեալ : Ահա որդի, Լսելի, Միաւորութիւն, Գոհութիւն, Դատաւոր, Ըմբշամարտութիւն, Բաղդ, Երանելի, Վարձք, Բնակութիւն, Յաւելում, Որդի աջոյ :

կ՚ուզէր որ սպաննէ զՅովսէփ ։ Այս խորհուրդը հաճելի թուեցաւ անոնց ․ Յովսէփայ վերայի ծաղկանկար պատմուճանը հանեցին եւ զինքը ցամաք հորի մը մէջ ձգեցին ։

Այն միջոցին եւ ահա Իսմայէլացի վաճառականներ կու գային դէպ 'ի այն կողմը ․ եւ Յուդա ըսաւ ․ « Ի՞նչ շահ կ՚ըլլայ մեզ եթէ եղբայրնիս մեռցնենք ․ աւելի աղէկ է որ այս վաճառականաց ծախենք զանիկայ » ։ Այս խօսքին ամէնն ալ հաւանեցան ․ եւ Յովսէփը հորէն հանելով ծախեցին Իսմայէլացւոց՝ քսան դահեկանի ․ Իսկ անոր պատմուճանը այծի արեամբ թաթախելով՝ խաբեցին հայրերնին ըսելով թէ Որդւոյդ ծանիր զանոնք ։ Ասոր Յակոբ կարծեց թէ չար գազան մը զիշատեր է զՅովսէփ ․ եւ սկսաւ մեծ սուգ ընել անոր վերայ եւ երբէք չէր կրնար մխիթարուիլ (2280) ։

4 ․ Յովսէփ տասնեւութը տարեկան էր երբ ծախուեցաւ ։ Վաճառականները Եգիպտոս տարին զանիկայ , եւ հոն՝ Պետափրէս անուն իշխանի մը ծախեցին , որ Փարաւոն թագաւորին դահճապետն էր ։ Եւ Աստուծոյ շնորհքը Յովսէփայ վերայ ըլլալով՝ այնչափ սիրելի եղաւ իր տիրոջը , որ իր տանն ամէն կառավարութիւնը անոր յանձնեց ։ Բայց Յովսէփ ուրիշ փորձութիւն մի եւս ունէր կրելիք ։

5 ․ Երբ գեղեցիկ երիտասարդ մը ըլլալով՝ իր տիկինը աչք ձգեց վրան եւ սկսաւ հրապուրել զանիկայ իր կամքը լեցնելու ։ Յովսէփ

որ առաքինի ու հաստատամիտ էր . մինչեւ կը մերժէր իւր տիկնոջ հրապոյրը . Անկարծ օր մը կարեւոր գործի մը համար տանը մէջ միայնակ մը-նացած ըլլալով՝ տիկինը սկսաւ բռնադատել զանիկայ որ գիջանի . և երբ պնդէր անոր զգեստը բռնած կը քաշէր . Յովսէփայ ճարը հատնելով շուտ մը զգեստը հանեց անոր ձեռքը թողուց ու տունէն դուրս փախաւ . Ասոր վե-րայ տիկինը կատաղեցաւ ու սկսաւ ամբաստանել և օգնութիւն կանչել . իբր թէ Յովսէփ զինքը բռնադատել կ'ուզէ . Երեկոյին երբ իւր այրը եկաւ . զրպարտութիւն ըրաւ Յովսէփայ վերայ թէ՝ զիս կ'ուզէր բռնել և երբ օգնութիւն կան-չեցի՝ փախաւ և ահա հագուստն ալ հոս ձգեց . Այս Պետափրէս հաւատաց իւր կնոջը խօսքին , ու Յովսէփը մահապարտաց բանտը դնել տուաւ .

6 . Բայց Յովսէփ հոն ալ իւր առաքինու-թեամբը սիրելի եղաւ բանտապետին , որ բան-տին վերակացութիւնը յանձնեց իրեն . Նոյն միջոցին Փարաւոն թագաւորը իւր տակառա-պետին ու մատակարարին վերայ բարկանալով՝ Յովսէփայ կեցած բանտը դնել տուաւ . Քանի մը օրէն յետոյ ասոնք երազներ տեսան . և առտու համար երբ շփոթեր էին . Յովսէփ հարցուց պատճառը , որոնք երազնին պատմեցին անոր . Յովսէփ մեկնելով անոնց նշանակութիւնը , մա-տակարարին ըսաւ թէ՝ երեք օրէն մահուան պի-տի դատապարտուի . և տակառապետին ալ ըսաւ թէ՝ երեք օրէն իւր առաջին պաշտօնին պիտի

հանդի․ այլ և խնդրեց որ եթէ երազին մեկնու-
թիւնը կատարուի ու պաշտօնին հանդի, յիշէ
զինքը և միջնորդ ըլլայ առ Փարաւոն ու զինքը
բանտէն ազատէ՝ ուր առանց անմեղութեան բանտար-
կուած էր։ Երեք օրէն յետոյ Յովսէփայ ըսածին
պէս եղաւ․ մատակարարը մահուան դատապար-
տուեցաւ և մատռուակապետը իր պաշտօնին կոչ-
ուեցաւ բայց Յովսէփայ ըրած խնդիրքը մոռցաւ։

7․ Այս դէպքէն ՚ի վեր երկու տարի անցեր էր, երբ գիշեր մը Փարաւոն թագաւորը երազ մը տեսաւ, իբր թէ Նեղոս գետին մէջէն եօթն պարարտ կովեր ելան․ յետոյ եօթն ալ նիհար կովեր ելլելով՝ առաջին եօթն պարարտ կովերը կերան։ Նոյն գիշերը երազ մ՚ալ տեսաւ՝ որ ցորենի մը բունէն եօթն հատ ցորենի լեցուն հասկեր բուսան․ յետոյ ասոնց քովէն եօթն ալ ցամաք հասկեր բուսնելով՝ առաջին լեցուն հասկերը կերան։ Առաւօտուն Փարաւոն շփոթած էր․ ուստի անմիջապէս կանչեց Եգիպտոսի բոլոր գիտունները, բայց մէկը չգտնուեցաւ որ անոր երազը մեկնէ։ Այն ատեն մատռուակապետին միտքը ինկաւ Յովսէփը․ Ու պատմեց Փարաւոնի թէ ինչպէս անիկայ բանտին մէջ ճիշդ մեկներ էր իրենց երազները։ Ուստի Փարաւոն հրամայեց որ Յովսէփը բանտէն հանեցին և իրեն ներկայացուցին։ Յովսէփ Փարաւոնի երազները լսելով սկսաւ մեկնել, և ըսաւ․ «Երազոյին մէջ ինչ որ տեսնի ըլլայ նէ Աստուած քեզի յայտներ է այդ երազներով․ որոց երկուքն ալ մի և նոյն

նշանակութիւնն ունին . Եօթն պարարտ կովերը և լեցուն հասկերը՝ առատութեան եօթն տարիներ են . Իսկ եօթն նիհար կովերը և ցամաք հասկերը սովի եօթն տարիներ են , որք առատութեան տարիներուն ետևէն պիտի գան . ուստի պէտք է խոհական մարդ մը երկրին վերակացու ընտրես , որ առատութեան տարիներու բերքը ժողվէ և սովի տարիներուն համար պահէ ։

8 . Շատ հաւանեցաւ Փարաւոն Յովսէփայ տուած մեկնութեանը , և ըսաւ . «Աստուած որ քեզի յայտնեց այդ ամէնը . ուստի քեզմէ խոհական մարդ չկայ . գնա՛ եղիր կ՚ըսեմ՝ վերակացու իմ՝ տանս ու երկրիս , և բոլոր ժողովուրդը քեզի թող հնազանդին ։ Այսպէս Փարաւոն իշխանական զգեստ հագցուց Յովսէփայ , և իր երկրորդ կառքը նստեցնելով՝ հրամայեց որ բոլոր քաղաքին մէջ շրջեցնեն , ու քարոզ կարդալ տուաւ որ ամենքն ալ ճանչնան անոր իշխանութիւնն ու փոխարքայութիւնը (2291) . Նաև ի անունէ՝ Յովսէփայ անունն ալ փոխեց ու Փսոմփթոմփանէ (երկրին փրկիչ) կոչեց , և Օնի քաղաքի Պետափրեայ քրմին աղջիկն Ասանէթը անոր կնութեան տուաւ , որմէ երկու որդի ունեցաւ Մանասէ[1] ու Եփրեմ[2] . Իսկ Յովսէփ բոլոր Եգիպտոսը պտըտեցաւ , և այն առատութեան տարիներուն այնչափ շատ ցորեն ժողվեց , որ եկող սովի տարիներուն բաւեց ոչ միայն Եգիպտոսի այլ և շրջակայ երկիրներուն .

1 Մոռցընող (վիշտը) . 2 Աճեցում .

## ԳԼՈՒԽ Ժ.

1. Յակոբ իր որդիքը Եգիպտոս կը ղրկէ ցորեն գնելու. 2. Յովսէփ զանոնք կը ճանչնայ զանոնք և կ'ուզէ որ Բենիամինը բերեն. 3. Շմաւոնը պատանդ առնելով միւսները կ'արձակէ. 4. Յակոբ կ'առարկէ ղրկել Բենիամինը. (Ծնն. ԽԲ. ԽԴ.)

1. Այս եղաւ որ առատութեան եօթն տարիներն անցնելով՝ սովի տարիներն եկան. և այս սովը մինչեւ Քանանացւոց երկիրն ալ բռնելով՝ Յակոբ ալ սկսաւ հացի նեղութիւն կրել։ Լսելով թէ Եգիպտոսի մէջ ցորեն կը ծախուի՝ իր տասն որդիները Եգիպտոս ղրկեց ցորեն բերելու, և միայն Յովսէփայ հարազատ եղբայրը Բենիամինը քովը պահեց, վախնալով որ գուցէ ճամբան անոր ալ փորձանք մը պատահի։

2. Անոնք Եգիպտոս հասնելով Յովսէփայ ներկայացան ցորեն ուզելու համար, և երկրպագութիւն ըրին անոր. թէև իրենք զՅովսէփ չճանչցան, այլ անիկա ճանչցաւ զիրենք, և երազները միտքն բերաւ։ Այս անգամ առանց աչքն մը տալու՝ սկսաւ խստութեամբ խօսիլ անոնց հետ, ըսելով թէ «դուք լրտես ըլլալու էք»։ Խեղճ անոնք պատասխանեցին. «Տէ՛ր, քաւ լիցի որ մենք լրտես եղած ըլլանք. մենք ամենքնիս տասն երկու եղբայր ենք. և մէկ եղբայրնիս կորսուած ու պզտիկ եղբայրնիս ալ հօրերնուս քովն է»։ Այն ատեն Յովսէփ ըսաւ. «Ահա այդ խօսքով կը յայտնէք լրտես ըլլալնիդ. ուստի երդում կ'ընեմ Փարաւոնի կենացը վրայ, որ զձեզ չպիտի թողում մինչեւ որ պզտիկ եղբայրնիդ ալ հոս չգայ, որպէս զի իմանամ ձեր խօսքին ճշմարտութիւնը»։

և այսպէս զամենքն բանտարկել տուաւ ։

3 · Իսկ երեք օրէն յետոյ բանտէն հանել տալով զանոնք՝ հրամայեց որ իրենցմէ մէկը պատանդ մնայ հոն, և միւսները ցորենները տանին երկիրնին. և յայտնեց որ եթէ մէկ մի ալ գան առանց պզտիկ եղբայրնին ալ մէկտեղ բերելու, պիտի պատժուին. Այն ատեն անոնք սկսան իրարու ըսել թէ «այս կրածնիս Յովսէփայ դէմ մեր ըրած անիրաւութեան պատիժն է»։ և չէին գիտեր թէ Յովսէփ կը հասկընայ իրենց խօսքը, ինչու որ անոնց ինքզինքը չյայտնելու համար թարգմանով կը խօսէր իրենց հետ. Յովսէփայ սիրտը փղձկելով իր եղբայրց խօսքին վերայ, քիչ մը առանձնացաւ. և յետոյ հրաման ըրաւ որ Շմաւոնը արգիլուի հոն՝ մինչև որ իրենց պզտիկ եղբայրն ալ բերեն. և անոնց ամանները ցորենով լեցնել տալէ զատ, ապսպրեց իր ծառայից որ անոնց ամեն մէկուն բերած արծաթն ալ ամաններուն մէջ դնեն գաղտնի կերպիւ, ու անանկ կապեն անոնց բեռները. տալէ զատ ճամբու համար ալ կերակուր տան անոնց. անոնք ալ միամտութեամբ մեկնեցան հոնտեղէն. Ասկայն երբ ճամբուն իրենցմէ մէկը իր խուրջը բացաւ և տեսաւ որ ստակը դրած է՝ զարմացան, և զարմանալով կ՚ըսէին թէ «Աստուծոյ բանն է այս»։

4 · Երբ անոնք իրենց տեղը հասան՝ եղածները պատմեցին հօրերնուն. Բենիամինի մասին ալ քիչ մը խօսք բանալով անոր. և բեռները

պարպելու ատեններնին երբ տեսան որ ամէն մէկու-նուն տուած արծաթը հոն էր՝ սաստիկ վախի մէջ ինկան պարոննին. Ծերունին Յակոբ երբ այս եղածները տեսաւ ու լսեց, սկսաւ հառաչել ու լալ. «Ո՛հ, զիս զաւակներէս զրկեցիք. Յովսէփ չկայ, Շմաւոն չկայ, ու հիմայ Բենիամինն ալ կ'ուզէք առնել»։ Ռուբէն թէև ուզեց երաշխաւ-որ ըլլալ որ Բենիամինը անփորձ առնի ու բերէ, բայց Յակոբ բնաւ հաւանութիւն չտուաւ ըսե-լով թէ «Ասոր եղբայրը մեռած է, թէ որ աս ալ փորձանքի մէջ հանդիպի, այն ատեն իմ ծերու-թիւնս տրտմութեամբ գերեզման կը դնէք»։

Բայց սովը երթալով կը սաստկանար և բերած ցորեննին հատնելու մօտ էր. Ուստի Յակոբայ ճարը հատնելով ըսաւ իր որդւոցը որ վերստին Եգիպտոսէն ցորեն բերեն. Նոյն ատեն Յուդայ բացարձակ յայտնեց իրեն թէ եղբօրն իշխանին հետ պայման դրած են, և մինչև Բենիամինը չտանին՝ չեն կրնար ներկայանալ անոր. Յակոբ չատ նեղացաւ իրենց թէ ինչու Բենիամինի խօս-քը ըրեր են, և չէր գիտեր թէ եղբօրն իշխանը (Յովսէփ) ի՛նչպէս ստիպած էր զիրենք մանրա-մասն և ասոր խօսելու. Վերջապէս Յուդայ ե-րաշխաւոր եղաւ և հայրը հաւանեցաւ Յո-կոբ Բենիամինը զրկելու, ամենայն բան որ երկրին բերքերէն ընծաներ տանին իշխանին, և առաջին անգամուան ցորենի գինն ալ որ ետ դարձած էր՝ հատուցանեն. և ջերմեռանդ բարեմաղթու-թիւններով ճամբայ դրաւ զիրենք։

## ԳԼՈՒԽ ԺԸ.

1. Յակոբայ որդիքը Բենիամինն ալ առած Եգիպտոս երթալնին և հոն ունեցած պատահմունքները. 2. Յովսէփին իր արծաթէ գաւաթը Բենիամինին ամանին մէջ դնել տալ, և ասոր համար զանոնք ետ կանչել. 3. Յովսէփին ինքզինքը եղբարցը յայտնել. և իր հայրը Եգիպտոս կը հրաւիրէ. 4. Յակոբ Եգիպտոս կ'երթայ ու Գեսեմ երկրին մէջ կը բնակի իր որդւովը. 5. Յակոբայ մահը. 6. Յովսէփայ մահը (Ծնն. ԽԳ—Ծ.)

1. Յակոբայ որդիքը երբ այս անգամ Բենիամինն ալ միասին առած Եգիպտոս հասան, Յովսէփ իր տանը վերակացուին պատուիրեց որ զանոնք իր տունը տանի ու ճաշ ալ պատրաստէ. Բայց անոնք կարծելով թէ առաջին անգամի ստակին համար զիրենք իր տունը կը կոչէ, սկսան պատմել վերակացուին թէ ինչպէս առանց իրենց գիտնալուն այն ստակները անօթներնուն մէջ գտնուեցան. և յայտնեցին որ այն ստակն ալ ետ բերած են. Վերակացուն խրախուսելով իրենց թէ այն ցորենին գինը առած է ինք, տարաւ հանդարտեցուց զիրենք և Շմաւոնն ալ բանտէն բերաւ. Իսկ երբ Յովսէփ եկաւ տուն, մատուցին անոր իրենց ընծաները և մեծարանքը. Յովսէփ իրենց հօրերնուն ողջութիւնը և ողջութիւնը հարցունելէ զկնի Բենիամինին նայելով հարցուց թէ Այս է ձեր պզտիկ եղբայրը. և ըսաւ անոր. «Աստուած ողորմի քեզի որդեակ». Այս միջոցին Յովսէփայ աղիքը գալարեցան, ու ներսի սենեակը մտնելով լացաւ. յետոյ լուաց երեսը ու դուրս ելաւ և հրամայեց որ սեղան դնեն, ուր ամեն մանաւանդ որ պատիւ ցուցուց Բենիամինին.

2. Վերադարձին յետոյ Յովսէփ իւր վերակացուին պատուիրեց, որ անոնց ամանները ցորենով լեցնէ, և անոնց տուած դրամներն ալ ամաններուն մէջ դնէ. իսկ իրեն արծաթէ գաւաթը Բենիամինի ամանին մէջ պահէ, և այնպէս անոնց բեռները կապէ. Այս կերպով առաւօտուն ճամբայ հանեց, և երբ դեռ քաղաքէն չէին հեռացած, Յովսէփ իւր վերակացուն ղրկեց որ երթայ զիրենք բռնէ ըսելով թէ «Ինչո՞ւ իմ տիրոջս գաւաթը գողցեր էք». Այս որ լսեցին սաստիկ շփոթեցան. և իրենցմէ երբէք կասկած մը չունենալով՝ վստահութեամբ ըսին թէ «Այս գողութիւնը իրենցմէ որուն քովն որ ելլէ թող մեռնի և իրենք ալ իշխանին ծառայ ըլլան», և սկսան աճապարանօք բեռներնին իջեցնել. վերակացուն սկսաւ կարգաւ բանալ՝ և ահա գաւաթը Բենիամինի բեռին մէջ գտնուեցաւ. Այն ատեն իրենց հանդերձները պատռեցին և սաստիկ յուսահատութեան մէջ ինկած կոր 'ի գլուխ քաղաքը դարձան և Յովսէփայ ներկայացան, որ սկսաւ խստիւ յանդիմանել զիրենք. Այս անակնկալ դէպքին վերայ ամենքն ալ սաստիկ խռոված ըլլալով, Յուդայ միայն պատասխանեց. «Տէր, ի՞նչ խօսինք և ի՞նչպէս արդարացնենք ինքզինքնիս. ահա Աստուած մեր յանցանքը բռնեց. ուստի մենք ամենքս ալ քու ծառաներդ ենք». «Քաւ լիցի, ըսաւ Յովսէփ, որ այդպէս անիրաւութիւն ընեմ. Հապա որուն քով որ գաւաթը գտնուեցաւ՝ այն միայն ըլլայ ինծի

ծառայ և դուք խաղաղութեամբ ձեր հօրը քով գացէք »: Այն ատեն Յուդայ դարձեալ սկսաւ մի ըստ միոջէ պատմել թէ ինչպէս Բենիամինը իրենց հօրը սիրելի որդին էր, մանաւանդ իր համամայր եղբօր կորսուելուն համար, և թէ ինչպէս ինքը երաշխաւոր եղած էր զանիկայ անվնաս ետ դարձնելու, և թէ՝ անիկայ որ հոն մնայ հայրերնին պիտի մեռնի սրտին ցաւէն.

3. Յուդայի ըրած այս սրտաշարժ նկարագրութեան վերայ Յովսէփ ալ ևս չկրնալով համբերել, ամեն հոն եղողները դուրս հանել տուաւ, ու եղբարցը հետ առանձին մնալով՝ մեկէն լալով գոչեց. «Ես եմ Յովսէփ ձեր եղբայրը. տակաւին ողջ է հայրս . . . . ». Այս որ լսեցին եղբայրքը՝ այնպէս ափ ՚ի բերան մնացին որ բնաւ չէին կրնար խօսել: Այն ատեն Յովսէփ կրկնեց. «Ես եմ Յովսէփ ձեր եղբայրը որ դուք զիս վաճառեցիք. բայց մի վախնաք. ինչու որ Աստուած այնպէս անօրինեց որ ես այս առթիւ իշխան ըլլամ Եգիպտոսի ու ձեզ կերակրեմ, վասն զի հինգ տարի ևս պիտի տևէ սովը. ուստի շուտով գացէք և հօրս պատմեցէք իմ վիճակս և ըսէք որ անպատճառ հոս գայ, որպէս զի հանդիստ ապրեցնեմ զինքը բոլոր տունը: Այս խօսքերն ըսելով՝ իր Բենիամին եղբօրը պարանոցին վերայ ինկաւ ու լացաւ, և իր բոլոր եղբայրներն ալ համբուրեց. և ամէնքն սկսան ուրախութեան արտասուք թափել. և այս ամենէն ետքը համարձակեցան խօսիլ անոր հետ.

Յովսէփայ եղբարց յայտնի էր լսելով Փարաւոն Թագաւորը եւ անոր իշխանները՝ ուրախացան . եւ Փարաւոն յատկապէս ապսպրեց Յովսէփայ , որ իր հայրը բերել տայ , հրաման ընելով նաեւ որ ճամբու համար պէտք եղած բաները յառատութեամբ տրուին . Եւ Յովսէփ իրենց ամեն մէկուն հագուստ եւ ստակ , եւ հօրը համար եւս ընծաներ տալով ճամբայ հանեց զիրենք .

4 . Եւ Յակոբայ որդիքը ուրախութեամբ եկան իրենց հօրը քով , եւ երբ պատմեցին իրեն թէ Յովսէփը ողջ է . եւ ինքն է Եգիպտոսի իշխանը . Յակոբայ սիրտը մարեցաւ ուրախութենէն . Նախ ամենեւին չէր ուզեր հաւատալ անոնց խօսքերուն . մինչեւ որ մի առ մի պատմեցին եղածները , եւ ցուցին ճամբու համար պէտք եղած բաները զորս Յովսէփ ղրկած էր զինքը բերել տալ Եգիպտոս տանելու համար . Նոյն ատեն արծարծեցաւ Յակոբայ սիրտը . եւ ըսաւ . « Բաւական է որ իմ Յովսէփ որդիս տակաւին ողջ է . երթամ ու մեռնելէս առաջ տեսնեմ զինքը » : Ուստի ամեն բան պատրաստեց ու ճամբայ ելաւ բոլոր ստացուածքներովը ու ընտանեօքը՝ ընդ ամենը եօթանասուն ու հինգ արու :

Եւ Յակոբ Բերսաբէէ ըսուած տեղը հասնելով՝ զոհեր մատոյց իր հօրը Իսահակայ Աստուծոյն : Եւ որովհետեւ ծանր կը թուէր իրեն թողուլ այն երկիրը զոր Աստուած խոս-

տարած էր իրենց տուն. ուստի Աստուած անմիջապէս մէջ երեւելով իրեն՝ ըսաւ. «Յակոբ, Յակոբ, ես եմ Աստուած՝ քու հօրդ Աստուածը. Եգիպտոս իջնելու մի վախնար. ինչու որ հոն մեծ ազգ պիտի ընեմ զքեզ. ես քեզի հետ Եգիպտոս պիտի իջնեմ, նաեւ քեզ (քու ցեղդ) անշուշտ պիտի հանեմ հոն անկէ. եւ Յովսէփ իր ձեռքը քու աչքերուդ վրայ պիտի դնէ[1]»: Ասկէ սիրտ առնելով Յակոբ՝ ճամբան շարունակեց. եւ Եգիպտոսի Գեսեմ նահանգը եկան (2300): Ու Յովսէփ հոն ելաւ դիմաւորելու իր հայրը. եւ երբ զանիկայ տեսաւ, փարեցաւ անոր պարանոցին վրայ, ու խել մը ատեն լացաւ. այն ատեն Յակոբ ըսաւ. «Ալ թող մեռնիմ որդեակ, վասն զի զքեզ ողջ տեսայ»: Յետոյ Յովսէփ իրենց ըսաւ որ եթէ Փարաւոն հարցնէ իրենց գործը. ըսեն թէ հովիւ ենք. որպէս զի Գեսեմ երկիրը բնակին, որ բարերեր ու արօտներ երկիր մի էր. քանզի Եգիպտացիք կը գարշէին հովիւներէն:

Յովսէփ իր հօրը ընտանիքը Գեսեմի մէջ թողելով, միայն հայրը եւ քանի մը եղբայրները Փարաւոնի ներկայացուց որ շատ ուրախացաւ. եւ Յակոբայ հետ սիրով տեսնուելէ զկնի երբ իմացաւ թէ հովիւ են. Յովսէփայ ուզածին պէս Գեսեմի երկիրը տուաւ որ հոն բնակին. եւ Յակոբ օրհնեց զՓարաւոնը, ու այնպէս դուրս

---

1 Ծնն. խԶ. զանիկայ ողջ պիտի տեսնես. եւ մեռնելուդ ատեն քու աչքդ պիտի գոցէ:

նրան ։ Նաև Փարաւոն առաջարկեց Յովսէփայ՝ որ եթէ յարմար տեսնէ , թագաւորական ու-ղեկներուն ալ վերադառնալու ըսէ անոնցմէ ։ Իս-Յովսէփ Փարաւոնի բանին այս ըսաւ . և Գե-սեմի երկրին մէջ անոնց մեծ կալուածներ տալէ ետքը , իր հօրը բոլոր տունը ինքը կը սնուցանէր ։

5. Յակոբ տասն ու եօթը տարի ևս ապրե-ցաւ՝ երբ խիստ ծերացաւ , կանչեց Յովսէփը և երդմնցուց զանիկայ որ զինքը իր հայրենա-կան գերեզմանը թաղէ՝ Քանանացւոց երկրին մէջ ։ Իսկ երբ Յակոբայ մեռնելու օրերը մօտե-ցած էր , Յովսէփ իր երկու որդիքը Մանասէն ու Եփրեմը անոր քով բերաւ որ օրհնէ զանոնք ։ Իսկ Յակոբ սիրեց և օրհնեց զանոնք . և իր որդւոցը հետ իրեն ժառանգ կարգեց [1] . յե-տոյ իր ամէն որդիքը և մանաւանդ Յով-սէփը կարգաւ օրհնեց՝ մարգարէական նշանա-ւոր խօսքերով . և այնպէս բարի ծերութեամբ վախճանեցաւ հարիւր քառասուն ու եօթը տա-րեկան (2317) ։ Յովսէփ իր հօրը երեսին վրայ ինկաւ լացաւ ու համբուրեց զանիկայ . այնու-հետև զմռսել տուաւ անոր մարմինը ։ Իսկ բո-լոր Եգիպտոս Յակոբայ մահուանը համար եօթ-անասուն օր սուգ պահեց զինքը . Փարաւոնին հրա-մանաւ Յովսէփ և բոլոր եղբայրները և Եգիպ-տոսի իշխանները ալ ՚ի միասին , հանդիսաւոր

1 Եւ այսպէս Յովսէփայ ցեղը անոր որդւոցը անուամբը կո-չուեցաւ և երկու ցեղ համարուեցաւ ։ Ուստի և տասն երկու ցեղ եղան Իսրայէլի որդիքը . բայց Ղևտացւոց ցեղը քահա-նայութեան պաշտօնով . այն հողերէն դուրս մնացեցաւ ։

յուղարկաւորութեամբ Քանանացւոց երկիրը տարին Յակոբայ մարմինը. և իւր հարցը գերեզմանին մէջ թաղեցին զանիկայ, ուր թաղուած էր և անոր կինը Լիա։

6. Իսկ Յովսէփայ եղբայրքը վախնալով թէ հօրերնուն մահուանէն յետոյ գուցէ Յովսէփ վրէժխնդիր ըլլայ իրենց, ու առի եկան անյիշաչարութիւն խնդրեցին։ Բայց Յովսէփ զիրենք ապահովցուց, և խոստացաւ դարձեալ շարունակել իւր խնամքը իրենց վրայ, և այսպէս մեկնեցան իրենց տեղը։

Ու եղաւ որ Յովսէփ հարիւր տասը տարի ապրելով՝ երբ վախճանելու օրն եկաւ, կանչեց իւր եղբայրքը և կտակ ըրաւ, որ երբ Աստուած իրենց այցելութիւն ընէ և զիրենք Եգիպտոսէն հանէ, իւր ոսկորներն ալ մէկտեղ տանին Աստուծոյ իրենց խոստացեալ երկիրը։ Ինչ հաստատուն հաւատք առ խոստումն Աստուծոյ զոր ունեցան այս անհամեմատ նահապետք։ Ու Յովսէփ մեռաւ, և անոր մարմինը զմռսեցին ու մեծ պատուով թաղեցին զանիկայ շիրմի մը մէջ Եգիպտոս (2370)։

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ԻՍՐԱՅԵԼԱՑԻՈՑ ԵԳԻՊՏՈՍԷ ԵԼԱՆԵԼԷՆ ՄԻՆՉԵՒ ՄՈՎՍԷՍԻ ՄԱՀԸ

### ԳԼՈՒԽ Ա.

*1. Իսրայելացւոց վիճակը Եգիպտոսի մէջ. 2. Փարաւոնի անգթութիւնները. 3. Մովսէսի ծնունդը. գետը ձգուիլը և Փարաւոնի աղջկան որդեգիր ըլլալը. 4. Մովսէսի մեծ նախանձախնդրութիւնը և ՚ի Մադիամ փախչիլը. և հոն ամուսնանալը. 5. Աստուած փառաւոր տեսիլքին մէջէն Մովսէսը կը կոչէ և զանիկայ Փարաւոնի կը ղրկէ Իսրայելացիներ ազատելու. 6. Մովսէս և Ահարոն Փարաւոնի կը ներկայանան որ Իսրայելացիները թողու. բայց անիկայ չհնազանդիր. 7. Մովսէսի գաւազանին օձ դառնալը. (Ելք. Ա—Է.).*

1. Յովսէփայ կենաց բոլոր օրերը և անոր մահուընէն ետքն ալ բաւական տարիներ շատ հանգիստ ապրեցան Իսրայելացիք. և իրենց բնակած երկիրն ալ արգաւանդ ըլլալով՝ օր քան օրէ զօրացան ու աճեցան. միանգամայն հաւատութեան պարագլխուն արտօնութեան չունենալով Եգիպտացւոց հետ խառնուիլ, որոնց ատելի էր թափառական հովուութիւնը, այս առթիւ թէ իրենց ազգային յատկութիւնները պահեցին և թէ կռապաշտութենէ զերծ մնացին.

2. Սակայն երբ Եգիպտոսի թագաւորական

ցեղը փոխուեցաւ և ուրիշ ցեղէ Փարաւոն մը[1] նստաւ որ Յովսէփայ երախտիքը չէր ճանչնար. և տեսնելով որ Իսրայէլի ժողովուրդը օրէ օր կը զօրանայ, վախցաւ թէ գուցէ օր մը ապստամբ-րին իրմէ. ուստի սկսաւ սաստիկ աշխատու-թեանց մատնել զանոնք. քաղաքներ և ուրիշ մեծ շէնքեր շինել տալով անոնց. բայց անոնք ես ատուել կը շատնային ու կը զօրանային. Ուստի և Փարաւոն ուրիշ չարագոյն միջոցի մը դիմեց Իսրայէլացիները ընկճելու համար. գաղտ-նի հրաման տուաւ Իսրայէլացւոց դայեակներուն որ անոնց ծնած ամեն մանչ տղաքները խեղդեն. Դայեակները Աստուծմէ վախնալով՝ այն հրա-մանը չգործադրեցին. և երբ Փարաւոն հար-ցուց, պատասխանեցին թէ Իսրայէլացւոց կա-նայքը՝ դայեակ չհասած կը ծնանին իրենց զա-ւակը. Փարաւոն տեսնելով որ իր այս հնարքն ալ ի դերեւ ելաւ, ուստի յայտնի հրաման հա-նեց որ Եբրայեցւոց ծնած ամեն մանչ զաւակ-ները գետը ձգուին.

3. Այս միջոցներուս Իսրայէլացւոց Ղեւ-եայ ցեղէն Ամրամ անուն մէկուն կինը Յոք-աբեդ՝ մանչ զաւակ մը ծնաւ (2435), որ ա-ռոյգ ու գեղեցիկ տղեկ մի էր. Ասոր ծնողքը չհանդուրժելով զանիկայ գետը ձգել, երեք ամիս գաղտնի պահեցին. Բայց տեսնելով որ որ վերջապէս պիտի իմացուի, ուստի մայրը

1 Այս անունը այն ատեններ Եգիպտոսի ամեն թագաւորաց յատուկ էր.

կպրաձիւթով ծեփուած պզտիկ տապանակի մը մէջ դնելով տղան, գետեզերքը եղած շամբին մէջ ձգեց զանիկայ. և տղուն քոյրը Մարիամ հեռուէն կը դիտէր, որ տեսնէ թէ ինչ պիտի պատահի անոր։ Եւ ահա այն միջոցին փարաւոնի աղջիկը որ ըստ իւր սովորութեան՝ այն կողմերը լուացուելու եկած էր, տեսաւ նոյն տապանակը զոր ջրերը դէպ 'ի հոն բերած էին, և զանիկայ դուրս հանել տուաւ։ Եւ երբ բացին՝ տեսաւ որ տղան կու լար, խղճաց անոր վրայ և ճանչցաւ թէ Եբրայեցւոց տղաքներէն է. իսկ Մարիամ որ մինչեւ հոն եկած էր, առաջարկեց անոր թէ արդեօք կ'ուզէ՞ այն տղուն համար ստնտու մը բերել տալ. և երբ անիկայ հաւնեցաւ, գնաց ու տղուն մայրը կանչեց։ Եւ փարաւոնի աղջիկը անոր յանձնեց տղայն որ իր ծախքովը սնուցանէ. և անիկայ առաւ իր որդին և սնոյց. և մեծնալէն յետոյ տարաւ փարաւոնի աղջկանը յանձնեց զանիկայ, որ իրեն որդեգիր բրաւ և անունը Մովսէս (ջուրէ հանուած) կոչեց. և զանիկայ Եգիպտացւոց ամէն իմաստութեամբը կրթել տուաւ։

4. Մովսէս երբ մեծցաւ ու քառասուն տարեկան մը եղաւ, սկսաւ իր եղբայրքը քով յաճախել, և անոնց ցաւոցը կարեկից ըլլալ։ Եւ օր մը տեսնելով որ Եգիպտացիին մէկը զԵբրայեցի մը բռնէր կը ծեծէր, չհանդուրժեց Մովսէս, և չորս կողմը նայելով երբ տեսաւ որ ուրիշ մարդ չկայ, զարկաւ սպաննեց զԵգիպտա-

ցին, ու աւազին մէջ թաղեց։ Իսկ հետևեալ օրը երբ երկու Իսրայէլացիք իրարու կը կռուէին, և Մովսէս մէջ մտաւ որ զիրենք հաշտեցնէ և ահա անոնցմէ այն՝ որ իւր ընկերը կը զրկէր ըսաւ Մովսէսի. «Ո՞վ դրաւ գլուխ մեր վրայ իշխան ու դատաւոր. միթէ զիս ալ մեռցնել կ՚ուզես, ինչպէս երէկ մեռցուցիր Եգիպտացին»։ Ասոր վրայ Մովսէս վախցաւ, վասն զի գործը յայտնուեր էր, ուստի փախաւ Կարմիր ծովուն միւս կողմը Սինա լեռան մօտ՝ Մադիանացւոց երկիրը։ Հոն ալ ծանօթացաւ անոնց քուրմին Յոթորայ կամ Ռագուէլի հետ, որ իւր աղջիկը Սեպփորան Մովսէսի տուաւ, ուրկէ Մովսէս երկու որդի ունեցաւ, Գերսամ[1] ու Եղիազար[2]։ Եւ Մովսէս քառասուն տարի մնաց հոն, ու աներոջը ոչխարները կ՚արածէր։

Այս միջոցներուս ալ սաստկացած ըլլալով Եգիպտոսի մէջ Իսրայէլացւոց չարչարանքը, սկսան աղաչել Աստուծոյ որ յիշէ իրենց հարց ըրած խոստումը, և ազատէ զիրենք նոյն դառն գերութենէն։ Եւ ահա Աստուծոյ սահմանած ժամանակն ալ հասած ըլլալով, հաճեցաւ ազատել զիրենք Եգիպտոսի ծառայութենէն Մովսէսի ձեռօք սկսաւ։

5. Օր մը Մովսէս ոչխարներն արածելու ատեն մինչև Քորեբ լեռը գացեր էր. և ահա մեծ զարմանքով տեսաւ որ մորենիի մը ծառ բռնկած կը վառէր բայց չէր այրեր ու հատներ։

1 Պանդխտացած (յօտար երկիր)։ 2 Աստուած օգնական իմ։

Աստի Մովսէս քիչ մը յառաջ գնաց որ այս մեծ տեսիլքը դիտէ, երբ յանկարծ մորենիին մէջէն Տէրը ձայն տուաւ՝ ըսելով. «Մովսէս, Մովսէս, մի մօտենար հոս. և կօշիկներդ հանէ, ինչու որ կեցած տեղդ սուրբ երկիր է»: Իսկ Մովսէս զարհուրելով իր երեսը գոցեց. Եւ Աստուած դարձեալ ձայնեց ըսելով. «Ես եմ քու հայրերուդ Աստուածը. Աստուած Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ. Եգիպտոսի մէջ եղող ժողովուրդիս կրած չարչարանքը և հարստահարութիւնը տեսայ և ինչպէս որ զիրենք փրկեմ, և տանիմ այն բարի ու արդաւանդ երկիրը զոր իրենց հայրերուն տալ երդմամբ խոստացեր եմ: Աստի եկուր, գնա՛ Փարաւոն թագաւորին ղրկեմ որ իմ ժողովուրդս Եգիպտոսէն հանես»: Իսկ Մովսէս պատասխանեց. «Ես ո՞վ եմ, Տէր, որ Փարաւոնի երթամ ու Իսրայէլի որդիքը Եգիպտոսէն հանեմ»: Նա ալ Աստուած պատասխանեց թէ «Ես քու հետդ պիտի ըլլամ և օգնեմ քեզի»:

Մովսէս դարձեալ ըսաւ Աստուծոյ թէ «Եթէ ժողովուրդը անունդ հարցնէ ի՞նչ ըսեմ». և Աստուած ըսաւ. «Ես եմ ՈՐ ԷՆ, այս է իմ յաւիտենական անունս և իմ յիշատակս՝ ազգէ յազգ. Նաև ըսէ Իսրայէլի որդւոցը. ՈՐ ԷՆ զիս ղրկեց, որ զձեզ Եգիպտոսի գերութենէն հանեմ»: Նաև պատուիրեց Աստուած Մովսէսի որ Իսրայէլացիներէն մարդիկ առնելով հետը՝ Փարաւոնի ներկայանան, և ըսեն որ զիրենք

թողու անապատը երթալ և զոհ մատուցանե-լու . բայց Աստուած ըսաւ նաև թէ «Գիտեմ որ Փարաւոն չպիտի ուզէ թողուլ մինչև որ իմ հզօր ձեռքովս և բարձր բազկաւս հանեմ իմ ժողովուրդս » : Նաև 'ի ասկէ՝ Աստուած Մովսէ-սի կարողութիւն տուաւ հրաշքներ ալ գործե-լու , որպէս զի պէտք եղած ատեն անոնցմով հաստատէ իր խօսքերուն ճշմարտութիւնը . ուստի ըսաւ «Գաւազանդ գետինը ձգէ» որ երբ ձգեց՝ օձ դարձաւ , ու Մովսէս փախաւ . յետոյ Աստուծոյ հրամանաւը օձին պոչէն բռնեց , որ վերստին գաւազան եղաւ . և Աստուած դար-ձեալ ըսաւ Մովսէսի թէ «ձեռքդ ծոցդ դիր» . և երբ անանկ ըրաւ ու դուրս հանեց , տեսաւ որ ձեռքը բորոտած էր . և Աստուած ըսաւ . «Նորէն ծոցդ դիր» և երբ դրաւ՝ առողջացաւ . «Եւ թէ որ ասոնց չհաւատան ըսաւ Աստուած , գետէն ջուր առ և գետինը լից . որ արիւն պի-տի դառնայ » . Թէպէտ և Մովսէս դարձեալ ուզեց հրաժարիլ այս մեծ պաշտօնէն՝ իր խօ-սելու անկարողութիւնը պատճառ բերելով , բայց Աստուած՝ անոր մեծ եղբայրը Ահարոնն ալ անոր ընկեր տուաւ : Այսպէս Մովսէս գաւա-զանը ձեռքն առած՝ լեռնէն վար իջաւ , և ամ-բողջ հրամայական ողջոյնը առնելով . իր կնոջ ու որդիքը առաւ ու ճամբայ ելաւ դէպ Եգիպտոս :

6 . Մովսէս դեռ Եգիպտոս չհասած Փարա-ւոն թագաւորը մեռեր և ուրիշ Փարաւոն մը յաջորդեր էր անոր , որ իր նախորդէն աւելի

կը՛նեղէր զԻսրայէլացիքը ։ Ահարոն Աստուծմէ հրաման առած ըլլալով Մովսէսը դիմաւորեց և երբ պատահեցաւ անոր , մէկզմէկ համբուրեցին և Մովսէս պատմեց իրեն Տէրոջը բոլոր խօսքերը ։ Յետոյ Մովսէս և Ահարոն գնացին ու Իսրայէլի ծերերը ժողվելով խօսեցան անոնց Աստուծոյ խօսքերը և նշաններով ալ հաստատեցին , որուն ժողովուրդը հաւատացին ու երկրպագութիւն ըրին Աստուծոյ ։ Յետոյ Մովսէս և Ահարոն Փարաւոնի ներկայացան և ըսին . « Իսրայէլի Եհովայ Աստուածը այսպէս կ՚ըսէ . իմ ժողովուրդս թող տուր որ երթան ինծի տօն կատարեն անապատին մէջ » ։ Փարաւոն պատասխանեց . « Եհովան ո՞վ է որուն խօսքովը Իսրայէլը թող տամ . զանիկայ չեմ ճանչնար և Իսրայէլն ալ չեմ թողուր » ։ Եւ սրդողելով անոնց վերայ իբր թէ ժողովուրդը գլխէ կը հանեն , դուրս հանեց զանոնք իր քովէն , և հրամայեց որ աւելի ծանրացնեն Իսրայէլացւոց աշխատութիւնը ըսելով որ պարապ մնալով փուճ խօսքերու մտիկ չընեն ։

7 . Իսրայէլի որդիքը երբ տեսան որ իրենց չարչարանքը աւելի սաստկացաւ՝ սկսան տրտնջել Մովսէսի և Ահարոնի դէմ . Մովսէս ալ Աստուծոյ գանգատ ընելով , Աստուած վերստին հրամայեց իրեն , որ երթայ ժողովուրդը հանէ և Ահարոնի հետ դարձեալ Փարաւոնի ներկայանայ և ըսէ որ ժողովուրդը թողու , եթէ ոչ պիտի պատժուի ։ Ուստի Մովսէս և Ահարոն Փարաւոնի ներկայացան և Աստուծոյ հրամանը կրկ-

ներէ ինձ ։ Ահարոն Մովսէսի գաւազանը գետինը ձգեց որ օձ դարձաւ ։ Փարաւոն կախարդութիւն կարծելով ամէնը իւր կախարդները կանչեց որ անոնք ալ իրենց գաւազանը գետինը ձգելով օձ դարձուցին ։ Նոր միայն Փարաւոնի սիրտը կարծրացաւ ու Աստուծոյ խօսքին մտիկ չըրաւ ։ Թէպէտ և տեսաւ որ Մովսէսի օձ դարձած գաւազանը միւսները կլլեց ։ Ուստի Աստուած ալ ինչպէս ըսած էր, անոնց չարաչար հարուածներով պատժել Փարաւոնի և Եգիպտացւոց խստասրտութիւնը, մինչեւ որ վերջի պատիժէն ստիպուած թող տուին զԻսրայէլացիքը ։

## ԳԼՈՒԽ Ի ։

### 1 ։ Աստուծոյ Եգիպտոսի վերայ զրկած հարուածները ։ (Ելք Է—Ժ ։) ։

1 ։ Առաջին հարուածը այս եղաւ որ Աստուած հրամանը բերաւ Մովսէսի և Ահարոնի որ գաւազանով գետի ջուրին զարկին որով բոլոր Եգիպտոսի ջրերը արիւն դարձան ու հոտեցան, և անոնց մէջի ձկները մեռան, անանկ որ խմելու ջուր չէր գտնուէր ։ և այս պատիժս եօթն օր տեւեց ։ բայց Փարաւոն տեսնելով որ իւր կախարդներն ալ ջուրը բերել տալով նոյնպէս ըրին, սիրտը խստացաւ ու չթողուց Իսրայէլացիքը ։

2 ։ Ետքը Աստուած հրամայեց Մովսէսի և Ահարոնի որ իրենց գաւազանը երկնցուցին Եգիպտոսի ջրերուն վերայ, որոյմէ այնչափ գորտեր ելան որ բոլոր Եգիպտոսի երկիրը ծածկեցին.

թէպէտ և կախարդներն ալ գործեր հանեցին . բայց այս պատիժը չվերցաւ մինչև որ Փարաւոն Մովսէսի աղաչեց որ այս պատիժը վերցնէ խոստանալով արձակել զժողովուրդը ։ Բայց որպէս զի Փարաւոն այս բանը կախարդութեան մի չը կարծէ . Մովսէս իրեն կամքին ձգեց որոշել պատժոյն վերնալու ժամանակը , և այնպէս նոյն որոշեալ ատենին ատամկեցան գորտերը ։ Բայց Փարաւոն երբ հանգստութիւն գտաւ իր խոստումը չկատարեց ։

3. Ետքը Աստուած Մովսէսի հրամայեց որ Ահարոն գաւազանը հողին զարնէ . և երբ այնպէս ըրաւ և ահա բոլոր Եգիպտոսի երկիրը մարդ և անասուն մլունով ծածկուեցան . կախարդներն ալ այս բանը փորձեցին բայց չկրցան . ուստի ըսին թէ «Աստուծոյ մատը կայ այդ գործին մէջ» ։ Այսպէս Փարաւոնի սիրտը չփափկացաւ և անոնց մտիկ չըրաւ Տէրոջը ըսածին պէս ։

4. Ետքը Աստուած բոլոր Եգիպտոսի վրայ շանաճանճ ղրկեց որ կծելով շատ մարդ և անասուն մեռցուցին . բայց Իսրայէլացւոց կեցած տեղը այս ամէն հարուածներէն ազատ մնաց ։ Ասոր վրայ Փարաւոն Մովսէսի և Ահարոնի ըսաւ թէ «գացէք այս երկրին մէջ մատուցէք ձեր զոհը» . և երբ անոնք չընդունեցին՝ խոստացաւ որ արձակէ զիրենք միայն թէ շատ հեռու չերթան , և խնդրեց որ աղօթք ընեն ու շանաճանճը վերնայ . բայց երբ շանաճանճը վերցաւ Մովսէսի աղօթիւքը , Փարաւոն իր սիրտը խստացուց ու_

ժողովուրդը չարձակեց ։

5. Նաև Աստուած ալ Եգիպտոսի վրայ ուրիշ հարուած մը զրկեց, որով անոնց անհամար կեն-դանիները ջարդուեցան ։ Փարաւոն իմանալով որ Իսրայելացւոց վնաս մը չէ եղած, սիրտը խըս-տացաւ և չթողուց զանոնք ։

6. Յետոյ Աստուած հրամայեց որ Մով-սէս և Ահարոն Փարաւոնի ներկայանան և ափ մը մոխիր դէպ ի երկինք ցանեցին, և ասոր մար-դոց և անասնոց վրայ խոցեր ու պալար ու-ռեցքներ եղան. Փարաւոնի կախարդներն ալ չազատեցան այս հարուածէն ։ Սակայն Փարաւոն տակաւին չուզեց թողուլ Իսրայելի որդիքը ։

7. Նաև Մովսէս Աստուծոյ հրամանաւ գնաց Փարաւոնի ըսաւ, որ ամեն մարդ իր կենդանի-ները ներս ժողվէ, որ չըլլայ սաստիկ կարկուտէն չմեռնին ։ Եւ հետևեալ օրը Տէրոջը բանին պէս՝ երբ Մովսէս ձեռքը դէպ ի երկինք վեր-ցուց՝ սկսաւ որոտմունք և կայծակներով հանդերձ խոշոր ու սաստիկ կարկուտ մը տեղալ, որուն նմանը տեսնուած չէր Եգիպտոսի մէջ. այս կար-կուտէն զարնուեցան դաշտերու մէջ եղած ամեն բան ։ Այս պատուհասին վրայ Փարաւոն Մով-սէսն ու Ահարոն կանչեց և զղջալով խնդրեց որ աղօթք ընեն իրեն համար, խոստանալով որ ան-պատճառ պիտի արձակէ Իսրայելացիքը. բայց երբ պատիժը անցաւ իր խոստումը չկատարեց ։

8. Ասոր Մովսէս և Ահարոն Փարաւոնի ներկայացան ու խօսքին վրայ չկենալուն համար

ւելի մեծ սքանչելիներ գործելը յայտնեցին ու-
զօրս եղան․ Իսկ Փարաւոնի ծառաները սկսան
համոզել զանիկայ որ թող տայ Իսրայէլացիները,
վասն զի անոնց սպառնացած երկիրը աւերակ
եղաւ բոլոր․ Փարաւոն ալ Մովսէսն ու Ահարոնը
կանչեց և հարցուց թէ որո՞նք պիտի ըլլան գա-
ցողները․ և երբ պատասխանեցին թէ ամենքնին
ալ իրենց տաւարուածքներովը պիտի երթան․ չը
համձեցաւ ու վռնտեց զանոնք․ Այն ատեն Մով-
սէս Աստուծոյ հրամանաւ ձեռքը դէպ 'ի երկինք
վերցուց և ահա արեւելեան հով մը եկաւ որ օր
մը ու գիշեր մը փչելով այնչափ մարախ բերաւ
որ բոլոր Եգիպտոսի երկիրը ծածկեց․ և ինչ որ
կարկուտէն մնացած էր կերան փճացուցին ։

Ասոր Փարաւոն շուտով կանչեց Մովսէսը
և Ահարոնը և ըսաւ «Ձեր Տէր Աստուծոյն ու
ձեզի դէմ մեղանչեցի․ հիմայ շնորհք ըրէք 'նե-
րեցէք, և աղաչեցէք ձեր Տէր Աստուծոյն որ այս
պատուհասը վերցընէ »։ Մովսէս ալ Տէրոջը ա-
ղաչեց և Տէրը արեւմտեան սաստիկ հով մը դար-
ձուց որ բոլոր մարախը Կարմիր ծովը քշեց․ Այս
ամենայնիւ Փարաւոն Իսրայէլացիները չթողուց ։

9․ Ու Տէրը ըսաւ Մովսէսին, որ ձեռքը դէպ
'ի երկինք երկնցուց, և ահա թանձր ու շօշափե-
լի մէգ ու խաւար մը եղաւ բոլոր Եգիպտոսի վե-
րայ երեք օր․ այնպէս որ ընաւ մէկզմէկ չէին
կրնար տեսնել և ամեն մարդ եղած տեղէն դուրս
չէր կրնար ելնել ։ Այս հարուածին վերայ Փա-
րաւոն կանչել տուաւ Մովսէսը և հրաման տը-

ւու, որ երթան ամենքն ալ, միայն թէ իրենց հօտերն ու ստացուածքները հոն թողուն. Իսկ երբ անկից յայտնեց թէ իրենց ամեն ստացուածքներովը պիտի երթան, վասն զի «Մենք դեռ չենք գիտեր բանն թէ անոնցմէ ինչ զոհ պիտի մատուցանենք մեր Տէր Աստուծոյն», այս խօսքին վրայ Փարաւոն բարկացաւ ու անոր սիրտը խստացաւ և մահ սպառնացաւ Մովսէսի եթէ մէկ մի ալ իրեն ներկայանայ. Մովսէս ալ «Շատ աղէկ մէկ մի ալ քու երեսդ պիտի չտեսնեմ» ըսելով դուրս ելաւ. Եւ Աստուած ըսաւ Մովսէսի թէ մէկ հարուած մի ալ պիտի տամ և այն ատեն Փարաւոն անշուշտ պիտի թողու զձեզ։

## ԳԼՈՒԽ Գ.

1. Զատկի տօնը. 2. Եգիպտացւոց անդրանիկներուն կոտորածը. 3. Իսրայէլացւոց Եգիպտոսէ ելնելը. 4. Կարմիր ծովէն անցնիլը և Փարաւոնին ու զօրացը խեղդուիլը. (Ելից ԺԲ.—ԺԵ.)

1. Աստուած դեռ տասներորդ և մեծ հարուածը Եգիպտացւոց վրայ չղրկած, Մովսէսի ձեռքով ապսպրեց Իսրայէլացւոց որ իրենց ծանօթ ու դրացի Եգիպտացիներէն ոսկեղէն, արծաթեղէն և ուրիշ մեծագին բաներ փոխ ուզեն, որպէս զի գացած ատեննին իրենց հետ տանին զանոնք, իբր փոխարինութիւն մի իրենց կրած չարչարանաց և ձրի աշխատութեանց։ Նաեւ հրամայեց Աստուած Մովսէսի ձեռօք որ Իսրայէլի որդիքը տուն գլուխ մէկ մէկ գառ և տարեւոր ոչխար առնեն, և զանիկայ Նիսան ամսոյ տասնուչորսերորդ երեկոյին մորթեն և առանց

ջարդելու ամբողջ խորովին , և ծամծռելի պէս կօշիկներին հագած , գաւազաններին ձեռքերնին , բաղարջ հացով ու եղեգով (լեղուաշ աղցանով) արտորանօք ուտեն . միանգամայն այն նիսան ամիսը իրենց առաջին ամիս համարեն . Նաև 'ի սակէ հրամայեց Աստուած նաև որ այն մարթած ոչխարին արիւնէն իրենց տուներուն վերի սեմին վերայ քսեն , որպէս զի Եգիպտացւոց անդրանիկները ջարդող հրեշտակը այն նշանը տեսնելով՝ իրենց չմտնէ . Այս տօնիս օրէնք բայ իրենց որ ամեն տարի նոյն օրը տօն կատարեն 'ի յիշատակ իրենց յԵգիպտոսէ ազատութեանը . և այս տօնին եօթն օրը բաղարջ հաց ուտեն . (այս է Պասեքի այսինքն Բաղարջակերաց տօնը . որ Հայերէն Զատիկ կը նշանակէ) . Նաև հրամայեց Աստուած՝ որ Իսրայէլացիք 'ի շնորհակալութիւն իրենց անդրանկաց ազատութեանը , իրենց ամեն արու անդրանիկները , նոյնպէս և կենդանեաց անդրանիկներին ալ իրեն նուէր ընեն , անասուն կենդանեաց փոխարէն ալ սուրբ կենդանիներէն տալով .[1]

Գ . Իսրայէլացիք Աստուծոյ հրամանին համեմատ զատիկը պատրաստած ուտելու ատեններին , կէս գիշերուն յանկարծ տասներորդ հարուածը ըրեց Աստուած Եգիպտացւոց վերայ . որով բոլոր Եգիպտոսի անդրանիկները , Փարաւոնին անդրանիկէն սկսեալ մինչև յետին աղքատին անդ-

[1] Յետոյ երբ Աստուած Ղևեայ ցեղը քահանայութեան ընտրեց , մարդոց անդրանիկներուն փոխարէն փրկանք տալու սահմանեց .

բանիկը նաեւ ամեն անասնոց անդրանիկները բոլորը ջարդուեցան . այնպէս որ տուն մը չմնաց որուն մէջ մեռնող չգտնուէր ։ Նոյն առաւօտե-ըն Հարուածին վերջը գիշեր ատեն բոլոր Եգիպ-տոսի մէջ այնպիսի աղաղակ և երբեք նմանը չը տեսնուած սուգ ու խռովութիւն մը եղաւ , որ Փարաւոն թագաւորը գիշեր ատեն կանչել տալով Մովսէսն ու Ահարոնը՝ ըսաւ որ շուտով ելլեն երթան իրենց բանակին ալ . խնդրելով որ զինքն ալ օրհնեն որ այն հարուածը դադարի ։ Այնպէս և ամեն Եգիպտացիք իրենց կողմէն կ'աղաղակէին զանոնք որ շուտով ճամբայ ելլեն , վասն զի կը վախնային թէ իրենք ալ կը մեռնին ։

3 · Աստի և Իսրայէլացիք դեռ կերակուրը բերաննին այնպէս պատրաստեր ճամբայ ելան որ ատանց կարենալու ուրիշ պաշար առնել , թթուած խմորերնին չխմորուած մէկտեղ առին , ինչպէս և Ե-գիպտացւոցմէ փոխ առած բաներնին ալ ։ Իրենք ըլլալ ամէնքը վեց հարիւր հազար հոգի էին բաց ՚ի իրենց կիներէն և տղաքներէն , և իրենց հետ եղող ուրիշ խառնիճաղանճ ժողովուրդէն ։ Մովսէս իր հետ առաւ նաեւ Յովսէփայ ոսկորները ։

Աստուած որ կ'առաջնորդէր իրենց՝ ցերեկ-ները ամպեղէն սիւնով և գիշերները հրեղէն սիւնով մը , չտարաւ զիրենք Փղշտացւոց երկրէն թէեւ այն ճամբան աւելի մօտ էր , որպէս զի պատերազմի բռնուելով չվախնան . հապա ա-ռաջնորդեց դէպ ՚ի Կարմիր ծովուն եզերքը ։

4 · Երբոր Իսրայէլացիք ծովուն քովը բանակ-

նին գրած էին , և այս փարաւոն զղջացաւ զանոնք թող տալուն վերայ . ուստի փութով զօրք ժողվեց և մեծ պատրաստութեամբ անոնց ետևէն ընկաւ ։ Իսրայէլացիք տեսնելով հեռուէն փարաւոնի բանակը՝ շատ վախցան , և սկսան տրտնջել Մովսէսի դէմ ։ Իսկ Մովսէս զիրենք քաջալերելով յայտնեց թէ Տէրը պիտի պատերազմի իրենց համար և պիտի ազատէ զիրենք մեծ պատիժներէն ։ Իսկ այս ամպեղէն սիւնը որ անոնց բանակին առջևէն կ'երթար՝ վերցաւ ու ետևւի կողմն անցաւ , ու Եգիպտացւոց բանակը մութի մէջ մնալով չկրցաւ մօտենալ անոնց ։ Այն ատեն Աստուծոյ հրամանաւ Մովսէս գաւազանը առաւ ու ձեռքը ծովուն վերայ երկնցուց , և այս Աստուած արևելեան սաստիկ հովով մը ծովը դարձուց որ ցամաք եղաւ , և ջրերը ճեղքուելով՝ պարսպի պէս երկու կողմերը դիզուեցան , ուրկէ Իսրայէլի որդիքը անցան բոլոր գիշերը ։ Իսկ Եգիպտացիք ալ որք անոնց ետևէն ծովուն մէջի նոյն ճանբան մտած էին առաւօտեան պահուն , Աստուած զանոնք խռովեց որ դժուարաւ յառաջ կ'երթային ու ասոր և վախնալով ետ դառնալ կ'ուզէին , երբ Մովսէս Աստուծոյ հրամանաւ կրկին երկնցուց ձեռքը ծովին վերայ . որ բաժնուած ջուրերը միանալով Եգիպտացւոց բոլոր բանակը ծածկեց ու ամէնքը խեղդուեցան առանց մէկը ազատելու ։ Իսկ Իսրայէլի որդիքը տեսնելով այն մեծ գործը որ Տէրը ըրաւ Եգիպտացւոց վերայ , սկսան վախնալ , և

հաւատաց Տէրոջ և ծառային նորա Մովսէսի. Այն ատեն այր և կին գաս գաս երգած՝ Մովսէսի և անոր քրոջ Մարիամու առաջնորդութեամբ սկսան քնարներով և պարելով երգել Աստուծոյ այն օրհնութիւնը որ կը սկսի Օրհնեսցուք զՏէր զի փառօք է փառաւորեալ. (Ելից. ԺԵ). (2515)[1]

## ԳԼՈՒԽ Դ.

1. Աստուած լեղի ջուրը կը քաղցրացընէ. 2. Լորամարգի և մանանայ կը տեղացընէ. 3. Աստուած ժայռէն ջուր կը հանէ. 4. Ամաղեկացւոց պարտութիւնը Իսրայելացւոց ձեռօք. 5. Յոթոր Մովսէսի տեսութեան կու գայ. (Ելից. ԺԵ—ԺԸ.)

1. Իսրայելացիք Կարմիր ծովէն անցնելէ յետոյ ճամբայ ելան ու եկան Սուրի անապատը. և երեք աւուր ճամբայ երթալով ջուր չգտան, մինչև որ եկան ի Մեռա[2], ուր տեղւոյ գտնըւած ջուրը այնչափ լեղի էր որ չէր խմուեր. Ուստի ժողովուրդը սկսաւ տրտնջել. և Մովսէս Տէրոջը աղաղակեց որ իրեն փայտ մը ցուցուց. և զանիկայ ջուրին մէջ դրաւ որով ջուրը քաղցրացաւ. Նաև իմացուց Աստուած Իսրայելացւոց, որ եթէ իր պատուիրանքները պահեն՝ զիրենք ախտի պահպանէ և հոգայ. Անկէ ելան Եղիմ ըսուած տեղը եկան, ուր տասն երկու անուշ ջրի աղբիւր և եօթանասուն արմաւենիներ կային. Քիչ մը ատեն ալ հոն կենալէ ետքը ճամբայ ելան ու եկան Սին անապատը.

---

1 Իսրայելացւոց չորս հարիւր երեսուն տարի պանդխտութեան մէջը՝ Աբրահամու եղած խոստումէն մինչև Սինայի օրէնսդրութեան ատենը կը հաշուուի. (Գաղ. Գ. 17.)

2 Դառնութիւն.

2. Սակայն հոն անց ժողովուրդին ուտելիքը հասնելով սկսան տրտնջել Մովսէսի և Ահարոնի դէմ. «Լաւ էր կ'ըսէին որ Եգիպտոսի հարուածներովը մեռնէինք երբ կուշտ մեր հացը կ'ուտէինք, քան թէ այս անապատին մէջ ուր սովէն կը ջարդուինք»։ Մովսէս յորդորելով ժողովուրդը՝ Աստուծոյ կողմանէ խոստացաւ որ նոյն երեկոյի միս և հետեւեալ օրն ալ հաց պիտի գտնեն. և Աստուած Մովսէսի բերանով իր ըսածը հաստատելու համար իր փառքը ցուցուց ամպին մէջէն. և ահա իրիկուան դէմ անհամար լորամարգի եկաւ ու իրենց բանակին վերայ իջաւ։ Հետեւեալ առաւօտուն ալ տեսան որ բանակին շուրջը գետնին երեսը եղեամի պէս մանր գինձի նման բան մը իջեր էր, և Իսրայէլացիք զարմանալով սկսան իրարու ըսել. Ման հու [1] (ինչ է այս)։ Իսկ Մովսէս ըսաւ իրենց որ այս է Աստուծոյ ձեզի տուած հացը։ Իսկ պատուիրեց որ ամէն առաւօտ օրուան մը պէտք եղածին չափ բան ժողվեն, միայն ուրբաթ օրերը երկու աւուր համար ժողվեն, քանզի շաբաթ օրերը չէր իջնար. ուրբաթ աւուր ժողուածը հետեւեալ շաբաթ օրը բան մը չէր ըլլար, բայց ուրիշ աւուր աւելցածը միւս օրը կ'որդնոտէր։ Այս մանանայն ալիւրի նման ըլլալով կը շաղէին ու հաց կ'ընէին, որ անուշ ու համով բան մը կ'ըլլար. և ասով կերակրեցան Իսրայէլացիք քառասուն տարի անապատին մէջ [2]։ Մովսէս Աստուծոյ կողմանէ

1 Ասկից կ'ելլէ Մանանայ բառը.

2 Հիմա ալ տեղ տեղ մը մանանայ կայ բայց առջի յատկութիւնները չունի։

ապագայից նաեւ, որ այս մանանայէն ամանով մը պահ պահեն, որ ապագայ յաջորդ մնացորդներուն յիշատակ ըլլայ Աստուծոյ բարերարութեանը։

3. Իսրայէլացիք Սին անապատէն ելլելով Ռափիդին՝ որ եկան, հոն տեղ ալ ջուր չգտնելով ծարաւէն սկսան տրտնջել եւ մէջ ըսել Մովսէսի դէմ։ Մովսէս ալ այս բանին համար Աստուծոյ գանգատեցաւ. եւ Աստուած հրամայեց որ ծերերէն քանի մը հոգի առնէ, ու Քորեբ լեռը երթայ, եւ հոն գաւազանով տապատած քարին զարնէ որ ջուր ելլէ։ Մովսէս ալ անանկ ըրաւ եւ ջուրը բղխեցաւ. բայց ժողովուրդը ասով զԱստուած փորձելուն համար այն տեղւոյն անուն Մասսա ու Մերիպա դրաւ, այսինքն փորձութիւն եւ Վիճաբանութիւն։

4. Այս կողմերը կը բնակէր Ամաղէկացւոց ազգը, որ առաջին անգամ Իսրայէլացւոց դէմ պատերազմի ելաւ։ Մովսէս՝ Եփրեմի ցեղէն Յեսուն որ իրեն պաշտօնեայն էր զօրավար ընտրեց ու կարիճ մարդիկներ տալով անոր Ամաղէկացւոց դէմ պատերազմի ղրկեց. Ինքն ալ գաւազանը ձեռքը Ահարոնի եւ Ովրի հետ (որ իրեն քեռայրն էր) բլուրի մը վերայ ելաւ, եւ սկսաւ աղօթք ընել պատերազմին յաջողութեանը համար։ Երբ Մովսէս ձեռքերը վեր կը վերցնէր Իսրայէլացիք կը զօրանային, եւ երբ հոգնելով վար կ'առնէր՝ կը տկարանային։ Ասոր Ահարոն եւ Ովր ստիպուեցան Մովսէսի ձեռքերը վեր բռնել որ մինչեւ իրիկուն աղօթէ. եւ Յեսու բոլորովին

յաղթեց Ամաղէկացւոց․ Ետքը Աստուած պատ-ուիրեց Մովսէսի որ այս յաղթութեան յիշա-տակարանը գրելով Յեսուայ տայ և ըսէ անոր թէ իրեն Աստուած պիտի վերցընէ երկրէս Ա-մաղէկացւոց յիշատակը․ Մովսէս ի շնորհակա-լութիւն այս յաղթութեան, սեղան մը շինեց Աստուծոյ․ և անունը դրաւ Եհովանիսի (Տէր դրօշակ իմ)։

5․ Այն ատեններն Մովսէսի աներն Յոթոր լսելով Իսրայէլացւոց ազատութիւնը, անոնց բանակը եկաւ ուրախակից ըլլալու․ և Մովսէսի հետ տեսնուելու համար, իրեն հետ բերելով անոր կինը և որդիքը զորս վերստին իրեն քով ղրկած էր Մովսէս Եգիպտոսէն․ Մովսէս մեծ յարգանօք դիմաւորեց զաներն և իր խորանը տարաւ, և սկսաւ մի առ մի պատմել անոր Աստուծոյ սքանչելիքները եղած իրենց ազատու-թիւնը․ Այս բաները լսելով Յոթոր՝ սքանչա-ցաւ, ու փառք տալով Աստուծոյ ողջակէզ ու զոհ մատոյց․ և Ահարոն ու Իսրայէլի բոլոր ծե-րերը անոնց հետ սեղանի նստան։

Հետեւեալ օրը Յոթոր տեսնելով որ բոլոր ժողովուրդը Մովսէսի վերայ ժողվուեր են և ա-նիկայ միայնակ կը տանջուի անոնց ամեն մէկուն գործերը և վէճերը հոգալու մասին, ուստի խրատ տուաւ անոր որ ժողովրդեան մէջէն ար-ժանաւոր մարդիկ ընտրելով տասնապետ, յիս-նապետ ու հարիւրապետ վերակացուներ դնէ, որոնք ժողովրդեան մանր գործերը հոգան․ և

մեծ գործերը միայն իրեն ներկայացընէին։ Մովսէս սիրով լսեց իւր աներոջ խրատը, և ըստ այնմ ընելով քիչ մը հանգստացաւ. և Յոթոր դարձաւ իւր տեղը։ Ասկէ յետոյ Իսրայէլացիք Ռափիդիմէն ճամբայ ելլելով Եգիպտոսէ ելլէնուն երրորդ ամիսը Սինայի անապատը գնացին և Սինա լեռան ստորոտը բանակնին դրին, ուր տեղ արմաւներ և աղբիւրներ ալ կային. և տարիի մը չափ հոն տեղ կեցան.

## ԳԼՈՒԽ Ե.

1. Աստուած փառքը կ'իջնայ 'ի Սինա։ 2. Հասարակաց օրէնքը կու տայ։ 3. Ժողովուրդը կ'ուխտէ հնազանդիլ Աստուծոյ։ 4. Մովսէս Սինա կ'ելլէ և օրինաց տախտակները և ուրիշ հրահանգներ կ'առնէ Աստուծմէ։ 5. Իսրայէլացիք հորթ կը պաշտեն։ 6. Մովսէս զայրանալով օրինաց տախտակները կը ջարդէ։ 7. Ժողովուրդը կը պատժուի։ (Ել. ԺԹ—ԼԲ.)

1. Իսրայէլացիք Սինայի անապատը եկած ատենները, Աստուած կանչեց զՄովսէս Սինայի լեռը, և հոն տեղ պատուիրեց անոր որ երթայ Իսրայէլացւոց ըսէ թէ Աստուած իւր սեպհական ժողովուրդը պիտի ընէ զիրենք, միայն թէ անոր ուխտը պահեն և հնազանդին։ Եւ Մովսէս եկաւ ու յայտնեց անոնց Աստուծոյ կամքը, որոնք խոստացան թէ Աստուած ինչ որ հրամայէ պիտի հնազանդին. ասոր Մովսէս Աստուծոյ ներկայացուց ժողովրդեան խօսքը։ Այն ատեն Աստուած ըսաւ. «Ահա ես քեզի պիտի խօսիմ ամպի սիւնին մէջէն որ ժողովուրդը լսէ ու յաւիտեան հաւատայ քեզի»։ Նաև 'ի ասկէ պատուիրեց Աստուած որ մինչև երեք օր մաքրուին ժող-

վուրդը․ այլ և լեռանը չորս կողմը սահման դնել-տալ․ որ քանի Մովսէս հոն է՝ անկէ անդին չանցնին ոչ մարդ և ոչ անասուն, որպէս զի չպատժը-ւին մեռնելով․ և միայն Մովսէսն ու Ահարոնը լեռը կանչեց ։ Ու ահա երրորդ օրը առաւօտուն ժողովուրդը տեսաւ որ Սինա լեռան վերայ մի-գախառն ամպով մը ծածկուած էր և որոտում-ներ ու կայծակներ կ'ըլլային և խիստ սաստիկ փողի ձայն մը կը հնչէր, և բոլոր լեռը կը ծխէր ու սաստիկ կը դողար․ քանզի Աստուած կրակով իջած էր Սինայի վերայ ։ Ժողովուրդը այս բա-ները տեսնելով՝ խիստ զարհուրեցան ։

Զ․ Ու Աստուած ահաւոր ձայնով մը այն ամ-պերուն մէջէն խօսեցաւ այն օրէնքները ։

Ա․ Ես եմ Եհովայ քու Աստուածդ՝ որ զքեզ Եգիպտոսի ծառայութենէն ազատեցի, ինձմէ զատ աստուածներ չունենաս ։

Բ․ Ինչ և իցէ կերպարանքով կուռք չշինես և անոնց երկրպագութիւն չընես, ինչու որ ես . . . կը հատուցանեմ զիս ատողներուն անօ-րէնութիւնը մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը․ և զիս սիրողներուն ու իմ օրէնքներս պա-հողներուն կ'ողորմիմ մինչև ի հազար ազգ ։

Գ․ Քու Տէր Աստուծոյդ անունը պարապ տեղը բերանդ չառնես․ Վասն զի անմեղ չպիտի սեպուի այն մարդը որ Տէրոջը անունը պարապ տեղը բերան կ'առնէ ։

Դ․ Յիշէ որ սուրբ պահես շաբաթ օրը․ վեց օր ամեն գործդ ըրէ․ իսկ եօթներորդ օրը քու-

Տէր Աստուծոյդ հանգստութեան օրն է . . . . ուստի նոյն օրը բնաւ պիտի չգործես , ոչ դուն , ոչ ընտանիքդ , ոչ քու ծառայդ , ոչ քու անասուններդ և ոչ ալ տանդ մէջ եղող օտարականը ։

Ե. Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ , որ քեզի աղէկ ըլլայ և շատ ապրիս այն երկրին վրայ որ քու Տէր Աստուածդ քեզի կու տայ ։

Զ. Մի՛ սպաններ ։

Է. Մի՛ շնար ։

Ը. Մի՛ գողնար ։

Թ. Մի՛ սուտ վկայեր ։

Ժ. Մի՛ ցանկանար քու դրացիիդ ունեցած ինչ և իցէ բանին . . . ։

3. Ժողովուրդը այս սահմանէ առջևը սպասելով և ձայները լսելով զարհուրեցան ու ետ քաշուեցան , և աղաչեցին Մովսէսի որ ինքը միայն երթայ Աստուծոյ մօտ , և յետոյ գայ Անոր կամքը իրենց հասկցընէ . և Մովսէս զիրենք քաջալերեց և մխիթարեց ըսելով թէ «Աստուած իւր երկիւղը ձեզի տալու համար այսպէս ըրաւ» ։ Յետոյ նորէն Աստուած զինքը կանչեց Սինայ լեռը , ուր տեղ ուրիշ ընկերական և կրօնական օրէնք ալ տուաւ իրեն , զորս Մովսէս գրի առաւ և ժողովրդեան կարդաց , որոնք հաւանութիւն տուին թէ ամէն կերպիւ պիտի հնազանդին ։ Այս հնազանդութեան վկայութիւն և ուխտ ըլլալու համար , Մովսէս տասն երկու քար կանգնելով սեղան շինեց . և զոհ մատուցանել տուաւ , սրսկելով հոն տեղ այն ուխտին արիւնը ։

4. Ասկէ ետքը Աստուծոյ հրամանաւ Ահարոն, Նադաբ և Աբիուդ և Իսրայէլի ծերերէն եօթանասուն հոգի Մովսէսի հետ Սինայի վերայ ելան մինչև որոշեալ տեղ մը, և հոն տեղ կրցան տեսնել Աստուծոյ կեցած տեղը, որուն գետինը աղիւսով յստակածի պէս երկնագոյն շափիւղայ քարի նման կ'երևէր։ Յետոյ Մովսէս Յեսուայ հետ ուրիշ ևս յառաջ երթալով՝ պատուիրեց ծերերուն որ իրենց սպասեն մինչև դառնան, և այն միջոցին Ահարոն և Ովր ժողովրդեան գործերը հոգան։ Իսկ Մովսէս ամպին մէջ մտաւ և քառասուն օր ու քառասուն գիշեր հոն կեցաւ. ուր տեղ Աստուած քարէ տախտակի վերայ տասնաբանեայ օրէնքները տալէ զատ, նաև տապանակին, վկայութեան խորանին և աստուածական պաշտամանց կերպերուն վերայօք պէտք եղած պատուէրները տուաւ։

5. Իսկ անհամբեր ժողովուրդը տեսնելով որ Մովսէս ուշացաւ, կարծեցին թէ մեռած է. ուստի ժողովուեցան Ահարոնի վերայ և ըսին. «Մեզի աստուածներ շինէ, որ մեզի առաջնորդեն. ինչու որ չենք գիտեր թէ Մովսէս ինչ եղաւ»։ Ահարոն տեսնելով ապաշնորհ ժողովրդեան այս առաջարկութիւնը և ապառնալից շարժումը, տագնապեցաւ անոնց կամացը զիջանիլ[1]։ Ուստի առաջարկեց որ իրենց ընտանեաց ականջէն զարդերը իրեն բերեն. և այս առաջարկութեամբ կը յուսար որ թերևս ետ կենան իրենց խոր-

[1] Հաւանական է կարծելը թէ Ովր սպաննուած ըլլայ յուզեալ ամբոխէն՝ անոնց դէմ կենալուն համար. քանզի ալ չյիշուիր ասկէ ետքը։

հաւրդէն. սակայն ժողովուրդը [illegible] ինչ որ ուզեց Ահարոնէ։ Եւ Ահարոն զանոնք առաւ ու ձուլեց հորթ մը շինեց[2]։ Ժողովուրդը զը-[illegible] [illegible] ըսին. — Այս է մեր աստուածը որ զմեզ Եգիպտոսէն հանեց —։ Ահարոն անոր առջեւ սեղան մը ալ շինեց, և հետեւեալ օրուան համար տօն հրատարակեց. և բոլոր ժողովուրդը ժողվուեցան ու ողջակէզներ և զոհեր մատուցին, և նստան կերան ու խմեցին և ելան խաղալու ու պարելու։

6. Այս ամբարշտութիւնը Աստուած Մովսէսի իմացուց Սինայի վերայ, և սաստիկ բարկանալով յայտնեց թէ բոլորովին պիտի ջնջէ Իսրայէլացիները, և անոնց փոխարէն զինքը պահէ ու մեծ ազգ մը ընէ։ Բայց Մովսէս շատ աղաչելով հազիւ ուրեմն զիջոյց Աստուծոյ բարկութիւնը։ Յետոյ Մովսէս դարձաւ Սինայէն Յեսուայ հետ, ձեռքը ունենալով օրինաց երկու տախտակները, և երբ բանակին մօտեցաւ ու տեսաւ հորթը և ժողովուրդը որ մեծ աղմուկով մը անոր առջեւ կը պարէին, այնչափ զայրացաւ որ չկրնալով իւր նախանձայուզութիւնը զսպել,

2 Իսրայէլացիք թէև Եգիպտոսի մէջ կռապաշտութենէ զերծ մնացին, այլ անոնց սովորութիւններն ու [illegible] զանոնք [illegible] [illegible] ըրած էին իրենց վերայ. և Ահարոնի շինած հորթը Եգիպտացւոց [illegible] պաշտած երինջին (Ապիս) մէկ նմանութիւնն էր, որ [illegible] մը պիտի ըլլար իրենց պաշտած ճշմարիտ Աստուծոյ. և [illegible] [illegible] բանէր։ Սակայն ինչ որ ալ ըլլար՝ ամբարշտութիւն մը էր մեծ[illegible], երբ Աստուած նոր հրամայած էր [illegible] նմանութեամբ մը իրեն պատկերներ չշինել. [illegible] ժողովուրդ [illegible] երբ պատկեր [illegible] կը հանդիպին էր։

ձեռքը եղած օրինաց երկու քարեղէն տախտակ-ները գետինը զարկաւ խորտակեց. և ժողովուր-դեան չար կամացը զիջանելուն համար Ահարոնի սաստիկ յանդիմանութիւն մը ընելէ զկնի, նոյն ոսկի հորթը առաւ, այրեց ու մանրեց փոշի ըրաւ և ջուրի մէջ ցանելով ժողովրդեան խմցուց:

7. Յետոյ Մովսէս բանակին դուռը կենա-լով «Աստուծոյ կողմի եղողը իմ քովս թող գայ» ըսաւ, որուն վրայ Ղեւեայ ցեղին բոլոր մարդիկը իր քով ժողովուեցան: Ասոնք անոնց ըսաւ որ սուրերնին առնեն և բանակին մէջ մտնելով սպաննեն այն ամբարշտութիւնն ընողները. չը խնայելով ազգականի ու բարեկամի. ասանկով երեք հազար մարդ ջարդուեցան: Ղեւտացիք իրենց այս աստուածային նախանձաւորութեանը համար մասնաւորապէս օրհնելի եղան Աստուծոյ և անոր օրհնութիւնն առին. և Իսրայէլացւոց քահանայութիւնն ալ իրենց ցեղին տրուեցաւ:

## ԳԼՈՒԽ Զ.

1. Վկայութեան խորան: 2. Մովսէս 'ի Սինա կ'ելլէ և կրկին կ'առնէ օրէնքները: 3. Խորանին, տապանակին և քահանայից զգեստներուն և այլոց շինուելը: 4. Ղեւտացիք քահանայութեան կ'որոշուին: 5. Երկնքէն ելած հուրը: 6. Ահարոնի երկու որդւոց պատժուիլը: (Ելից. Ղեւտ. Թուոց այլ և այլ գլուխը.)

1. Այնուհետեւ Մովսէս Աստուծոյ հրամա-նաւը առանձին խորան (վրան) մը կանգնեց բա-նակէն դուրս որ ըսուեցաւ խորան վկայութեան, և հոն կը դիմէին Տէրոջմէն խնդիր մը ունե-ցողները. և Մովսէս հոն կը մտնէր Տէրոջը հետ

խօսելու․ ուրանց ամպի սիւնին մէջէն Աստուած կը ձայնէր Մովսէսի․ և ժողովուրդն ալ իրենց տեղէն տեսնելով երկրպագութիւն կ՚ընէին․ Նայ Վկայութեան խորանին մէջ ոչ որ կրնար մտնել բայց միայն Մովսէս և անոր պաշտօնեայն Յեսու և միւսները նաև քահանայապետը․ Իսկ Մովսէս այնպէսի սիրելի եղաւ Աստուծոյ որ յատուկ խնդրանօք մը արժանացաւ մասամբ իւր տեսանել բարձրեալ և անմահ Աստուծոյ փառքը՝ որչափ որ հնար էր տեսանել մահկանացու մարմնոյ աչքը․

2․ Նաև յետոյ Մովսէս Աստուծոյ հրամանաւ երկու քարեղէն տախտակ շինեց միւսանին, և Սինա լեռը ելաւ․ հոն տեղ Աստուած դարձեալ այն տասնաբանեայ օրէնքները տուաւ զանոնք ուրիշ շատ օրէնքներ ալ տուաւ․ Իսկ Մովսէս քառասուն օր ու քառասուն գիշեր առանց բան մը ուտելու և խմելու լեռան վերայ կենալէ յետոյ երբ վար իջաւ, երեսները այնպէս լուսափայլեալ էին որ ժողովուրդը վախցաւ անոր մօտենալ․ ասոր Մովսէս երեսը քօղով մը ծածկեց․ և այնուհետեւ միշտ երեսին քօղ կը ձգէր երբ Աստուծոյ կողմէն ժողովուրդին հետ կը խօսէր․

3․ Նոյն բաներէն ետքը Մովսէս յորդորեց զժողովուրդը որ Աստուծոյ հրամանին համեմատ աստուածային պաշտամանց վերաբերեալ բաները շինելու ձեռնարկեն․ Ժողովուրդը սիրով ընդունեց այս բանը, ոսկի և սկսան տալ, արծաթ, ազնիւ քարեր, կերպասներ և ուրիշ բա-

ներ նուէր բերել․ ամէնայն ոք լաւ կարեւոյ ։ Եւ Մովսէս այս ամէնը Բեսելիէլ եւ Եղիաբ ունուն մարդոց յանձնեց որք Աստուծմէ լուսաւորուած ու ճարտար մարդիկ էին․ Նաեւ ժողովրդեան մէջէն ուրիշ այլ եւ կին ճարտար մարդոց ալ գործակցութեամբ․ Աստուծոյ կամքանէ Մովսէսի պատուիրածին պէս շինեցին նախ՝ նոր Վկայութեան խորան մը տասն փարագոյրներով՝ ծածուած բարակ քթանէ , կապուտակէ․ ծիրանեգոյնէ եւ կրկնակի կարմիրէ , եւ ամէն մէկուն երկայնութիւնը քսան ու ութն եւ լայնութիւնը չորս կանգուն էր , շուրջանակի անփուտ (Սատիմի) փայտէ սիւներով․ Ներքին կողմը վերան քերովբէներ բանուած ճարտարարուեստ փարագուրով մը երկու մասի կը բաժնուէր․ եւ այլ ուրիշ ամէն կազմածները ճարտարարուեստ կերպիւ էր․ Նոր վերայ ծածկոյ ըլլալու համար այծու մազէ մեծ վրան մի ալ շինեցին․

Յետոյ շինեցին նաեւ Տապանակ ուխտին անփուտ փայտէ , երկայնութիւնը երկուքուկէս եւ լայնութիւնը մէկ ու կէս կանգուն․ Ներսն ու դուրսը ոսկեպատ , եւ վերայի խուփը միակտուր ոսկիէ , որ Ք----Ի-Ն կ՚ըսուէր․ որուն վերայ ալ շինուեցան դէմ առ դէմ երկու հատ ոսկեքանդակ քերովբէներ՝ թեւերնին Քաւութեան վերայ տարածեալ․ այս տապանակին չորս անկիւնները ոսկիէ օղակներ եւ երկու ոսկեպատ ձողեր ալ շինուեցաւ որով անկից կը վերցուէր ։ Նոր մէջ անփոփուեցան օրէնաց տախտակները

և ոսկի սափորով մը մանանայ . յետոյ նաև Ահա-րոնի գաւազանը որ ծաղկեցաւ . և Մովսէսի հնգամատեանը . Շինուեցան և երկու ոսկե-պատ սեղան . մէկը Սեղան առաջաւորութեան , որուն վրայ տասն երկու հատ նուիրական բաղարջ հաց կը դրուէր Իսրայէլի ցեղերուն թուովը . և միւսը Սեղան Խնկոց , որուն վրայ անուշահոտ խունկ կը ծխուէր Աստուծոյ : Նաև ս շինուե-ցաւ ոսկիէ մեծ աշտանակ մը՝ վերի կողմը եօթն ճիւղ բաժնուած , որոց վրայ դրուեցան եօթն ոսկի կանթեղ մշտավառ . և ասոնց ամենուն վե-րաբերեալ սպասները ամենն ալ ոսկիէ շինուե-ցան : Խորանին առաջքին գաւիթին մէջ զոհի սեղան մը ևս շինուեցաւ իր ամեն գործիքնե-րովը . և այս շինութեանց գործածուած ամեն փայտերը անփուտ փայտ էին .

Բայց 'ի ասոնցմէ շինեցին և քահանայական զգեստներ պաշտամանց ամեն հագնելու համար՝ որոնք շատ փառաւոր էին , ինչպէս եփուտ՝ որուն ուսերուն վրայ ոսկի խորշերու մէջ եղնգնաքարեր զետեղուած ու անոնց վրայ Իս-րայէլի ցեղերուն անունները փորագրուած , և անոր պաստառաճակին քղանցքին վրայ թելէ շինուած նուռեր ու ոսկի զանգակներ կար : Լանջապանակը՝ որուն վրայ Իսրայէլի ցեղե-րուն թուովը և անոնց անուններն վերանին փո-րագրուած տասն երկու ազնիւ քարեր ու-գաւցուած էին , և ասոր ներքին խորշին վրայ էր Ուրիմը և Թումիմը[1] , որ ոսկի շղթայով մը վզը

1 Լոյս և Ճշմարտութիւն .

կը կախէր քահանայապետութեան։ Կան ոսկի թիթեղէ ուրբ պսակը՝ վրան ՍՐԲՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ փորագրուած, որ կապուտակ ժապաւէնով մը խոյրին վրայ կ՚անցնէր. այլ և խոյրը, գօտին, շապիկները, ագարօշները և այլն, որոնք ամէնը բեհեզեայն, կապուտակէ, ծիրանեգոյնէ, կրկնակի կարմիրէ, բարակ մանուած բեհեզէ, ոսկեթելով խառն ու նկարէն, և կամ առանձինն ու պարզ գործուած էին։

4. Իսկ երբ այս ամէնը լմնցաւ, տապանակը, աշտանակը և սեղանները ամէն իրենց վերաբերեալ բաներովը Վկայութեան խորանին մէջ իրենց տեղերը դրուեցան. և ամպեղէն սիւնը Վկայութեան խորանը ծածկեց, և Տեառն փառքը լցուց հոն տեղը։ Այս ամպի սիւնը միշտ խորանին վրայ կը կենար. միայն երբ ճամբայ ելնել պէտք ըլլար՝ կը վերնար, ու բանակին առջեւէն կ՚առաջնորդէր իրենց։ Մովսէս նաև ամէն տեսակ զոհերու և զանոնք մատուցանելու կերպերուն վրայ պէտք եղած անդեկութիւնները Տեառնէ կ՚առնէ ծանուցանելով՝ Անոր հրամանաւ քահանայութեան կարգեց Ղեւեայ ցեղը, և յատկապէս Ահարոնն ու որդիքը, ասոնք եղով օծելով թէ զանոնք և թէ խորանին նուիրական սպասները. և յատուկ ողջակէզ ու զոհ մատուցանելով՝ անոր որդիներ օրհնեց Ահարոնի և անոր որդւոցը բոլորովին։

5. Ահարոն առաջին անգամ վասն մեղաց պատարագ՝ ողջակէզ ու զոհ մատուցանելու ա-

տեն , և ահա 'ի նշանակ հաճութեանն Աստուծոյ՝ երկինքէն բոց մը իջնելով այրեց ողջակէզները : Նոյն Աստուած Մովսէսի բերանով պատուիրեց որ այն կրակը միշտ վառ պահեն և անկէ գործածեն քահանայք ամեն պաշտամանց մէջ ,

6 · Օր մը Ահարոնի որդիքը Նադաբ և Աբիուդ՝ անզգուշութեամբ ուրիշ կրակ դնելով բուրվառնուն մէջ խունկ կը ծխէին . երբ յանկարծ սեղանէն կրակ մը ելնելով այրեց ու մեռցուց զիրենք , ուրիշ ամենքը զարհուրեցան : Այնուհետև յատուկ օրէնք տրուեցաւ , որ քահանայք իրենց պաշտամանց ատեն ամեն կերպիւ զգուշութիւն ընեն և գինի ալ չխմեն ,

## ԳԼՈՒԽ Է .

1 · Իսրայելացւոց բանակին թիւը և անոր կարգը : 2 · Ժողովրդեան տրտունջը և պատժուիլը : 3 · Լորամարգի անձրևը և ժողովրդեան անհնազանդութիւնը : 4 · Մարիամի բորոտիլը : (Թուոց · Ա–ԺԲ)

1 · Իսրայելացւոց Եգիպտոսէ ելլելուն երկրորդ տարւոյն սկիզբը Մովսէս Աստուծոյ հրամանաւ ամեն ցեղերը գունդերու բաժնելով համրեց , որոնք ընդ ամենը վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն չափահաս այր մարդիկ էին բաց 'ի Ղևտացիներէն որոնք քսան երկու հազար հոգի էին , զորս երեք կարգի բաժնելով ամեն մէկուն առանձին գործ որոշեց աստուածային պաշտամանց մէջ : Իրենց բանակին կարգն այս էր . առջևէն Յուդայի և Իսաքարի և Զաբուղոնի ցեղերը , անոնց ետևէն Ռուբէնի և Շմաւոնի և Գադայ ցեղերը , ապա Ղևեայ

ցեղը և Սրբութիւնքն (խորանն և տապանակն). ասոնց ետևէն Եփրեմի, Մանասէի և Բենիա-մինի ցեղերը. և ամենէն ետքը Դանայ, Ասերի և Նեփթաղիմի ցեղերը. Երբ բանակը ճամբայ առ-նուր, մէջտեղը Վկայութեան խորանը կը կենար շրջապատեալ Ղևտացւովք. և չորս կողմը, արևելքի կողմէն Յուդայի բանակին գունդը, հարաւէն Ռուբէնի, արևմուտքէն Եփրեմի, և հիւսիսէն Դանայ բանակներուն գունդերը կը կենային կարգաւ շարուած վրաններու մէջ. Բոլոր բանակը մէկ աւուր ճանապարհ տարա-ծութիւն և մտնելու ելլելու որոշեալ տեղեր և պաշտպանութեան պէտք եղած միջոցներն ունէր. իսկ չուել կամ կենալ և կամ հաւաքուել պէտք եղած ատեն փողի ձայնով իմաց կը տրուէր.

2. Իսրայէլացիք Սինայի անապատին մէջ գա-կի տարի կատարելէ զկնի. Եգիպտոսէ ելլելնուն երկրորդ տարւոյն երկրորդ ամիսը ճամբայ ելան դէպ ի հիւսիս՝ Փառանու անապատը. Մովսէս Հայցեց և խնդրեց հետը առաւ նաև իր աները. Այս ճանապարհորդութեան միջոցին ժողովուր-դը սկսան տրտնջել և միս ուզել, ասոր Աստ-ուած ալ զանոնք պատուհասեց բանակին մէկ մասը հրով այրելով, որ Մովսէսի աղօթիւքը հա-զիւ մարեցաւ, և այն տեղին անունը Տաբերայ (Հրկիզութիւն) դրուեցաւ. Այսու ամենայնիւ ժողովուրդը միս ու ձկներու փափաքէն ետ չկենա-լով՝ տրտունջը բոլորովին դադրած չէր. կը յի-շէին այն ձուկերը պտուղներն ու կանաչեղէննե-

որ զօրս Եգիպտոսի մէջ կ'ուտէին ։ Մովսէս ասոր վերայ ցասելով՝ յայտնեց Աստուծոյ խօսելով թէ Ես անկարող եմ այսչափ ժողովուրդը առանձին կառավարելու ։ Այն ատեն Աստուած Խորայէլացոց մէջէն եօթանասուն անձինք ընտրել տալ և Մովսէսի շնորհքէն անոնց ալ տալով՝ անոր օգնական ըրաւ ։ Միւսգամայն խոստացաւ Աստուած թէ հետեւեալ օրը ժողովրդեան այնչափ շատ միս պիտի տայ որ ուտելէ ձանձրանան ։ որուն վերայ Մովսէս անգամ զարմացաւ թէ այսչափ ժողովրդեան որչափ միս պէտք է որ բաւէ ։

3. Այն ատեն Աստուած ծովու կողմէն հով մը հանելով այնչափ լորամարգի բերաւ որ երկու կանգուն բարձրութեամբ թռչելով՝ բանակին շուրջը օրուայ մը ճամբայ տարածութեամբ դիզուեցան, անանկ որ երկու օր ու մէկ գիշեր ժողվեցին և ամենէն քիչ ժողվողը չորս հարիւր օխայի չափ բան ժողվեց, զոր արեւուն մէջ դնելով ցամքեցին. բայց իրենց որկրամոլութեան փոխարէն պատժուեցան ալ, վասն զի ուտելու ատեննին շատերը ախտանալով մեռան, ինչպէս որ կը ցանկային երբեմն. ուստի և այն տեղն ալ կոչուեցաւ Կիբրօթ Հաթթաւա (գերեզմանք ցանկութեան)։

4. Անկէ ալ չուելով Իսրայելացիք Ասերովթ եկան ։ Հոն ալ Ահարոն և քոյրը Մարիամ Մովսէսի կնոջը հետ վիճելով՝ սկսան բամբասել զանիկայ իրեն կնոջը համար ։ Թէ եւ Մովսէս բան մը չըսաւ իրենց, բայց Աստուած բարկա-

նալով՝ Վկայութեան խորանին առջեւը կան-չեց ու յանդիմանեց զիրենք, և երբ կ'երթային անկէ, նախ Մարիամ պատժուեցաւ բորոտու-թեամբ. զոր որ տեսաւ Ահարոն, անմիջապէս գնաց Մովսէսէն թողութիւն խնդրեց. անիկայ ալ թէ և Աստուծոյ աղօթեց բայց Աստուած որոշեց որ Մարիամ եօթն օր բանտուած մնայ բա-նակէն դուրս, և յետոյ բժշկուի ու դառնայ. և բանակը եօթն օր սպասեց հոն տեղ Մարիամին համար.

## ԳԼՈՒԽ Ը.

1. Քանանու երկիրը ղրկուած լրտեսները և ժողովրդին գան-գատութիւնը. 2. Իսրայէլացիք ետ դառնալու կը դատապար-տուին. 3. Աստուած կ'որոշէ որ Եգիպտոսէ ձանձրացողներէն մէկը չմտնայ Աւետեաց երկիրը. 4. Կորխայ ապստամբութիւնը. 5. Ահարոնի գաւազանին ծաղկիլը. (Թուոց. ԺԳ—ԺԷ.)

1. Իսրայէլի բանակը Սինայլեռէն չուելով Փառանու անապատը հասաւ ու հոն տեղ բա-նակեցաւ. Հոն Մովսէս Աստուծոյ հրամանաւ ա-մէն ցեղերէն մէկ մէկ մարդ ղրկեց որ երթան Քանանացւոց (Աւետեաց) երկիրը լրտեսեն ու-քննեն և հոն տեղի վայրօք տեղեկութիւն բե-րեն. ասոնց մէջ էին նաև Քաղէբ և Յեսու Նաւեան, որուն անունը Օսէս (փրկիչ) ըլլա-լով՝ Մովսէս փոխեց և Յեսու (Տէր փրկիչ) ան-ուանեց. Այս լրտեսները գացին և նոյն երկրին ամէն կողմը պտըտելէ ու քննելէ ետքը, քա-ռասուն օրէն յետոյ դարձան, և ուրիշ պտուղ-ներէ զատ՝ Էշքողի ձոր ըսուած տեղէն հետերնին

բերին նաեւ որթի ուռ մը խաղողի ողկոյզով. որ չափազանց մեծ ըլլալով՝ ձողի մը վերայ անցուցած և երկու հոգի կը բերէին ։ Անոնք սկսան գովել երկրին բարեբերութիւնը . բայց մէջի բնակչաց և քաղաքաց զօրութիւնը այնքան չափազանց նկարագրեցին որ դիւրահաւան և անփորձ ժողովուրդին սիրտը վախ մտնելով՝ սկըսան լալ , և Մովսէսի ու Ահարոնի դէմ տրտնջել ու ըսել թէ «Աւելի լաւ էր եթէ Եգիպտոսի կամ այս անապատին մէջ մեռած ըլլայինք քան թէ Աստուած մեզ հոն տանի ու պատերազմով ջարդուինք» ։

2. Այնչափ մեծ եղաւ ժողովուրդին յուզմունքը որ սկսան խորհուրդ ընել որպէս զի իրենց առաջնորդ մը ընտրեն ու վերստին Եգիպտոս դառնան ։ Զուր տեղը կը ջանային համոզելու զանոնք Քաղէբ և Յեսու , յայտնելով թէ իրենց ընկերներուն ըսածը չափազանցութիւն է և թէ Աստուծով իրենք կարող են յաղթել անոնց . զայրացած ժողովուրդը անոնց մտիկ չընելէ զատ քիչ մնաց նաեւ որ քարկոծէին զանոնք , եթէ յանկարծ Աստուծոյ փառքը չերեւէր Վկայութեան խորանին վերայ ։

3. Այն ատեն Աստուած յայտնեց Մովսէսի թէ պիտի ջնջեմ այս ժողովուրդը իրենց ապերախտութեան և խստասրտութեանը համար , և զքեզ մեծ ազգ մը պիտի ընեմ ։ Սակայն Մովսէս վերստին աղաչեց Աստուծոյ , որ այս անգամ եւս ներէ անոնց ։ Աստուած ալ թէ և ներեց

Մովսէսի թախանձանաց համեմատ, բայց վճռ-
եց նաեւ թէ Եգիպտոսէ ելլողներուն քսան
տարեկանէն վեր եղողները բնաւ չպիտի մտնեն
խոստացեալ երկիրը բայց ի Քաղէբէն եւ Յե-
սուէն, հապա ամենքն ալ պիտի մեռնին անա-
պատին մէջ. Աստի հրամայեց որ ետ դառնան
դէպ ի Կարմիր ծովուն ճամբան. նաեւ այն
ժողովուրդը վախցընող լրտեսներն ալ պատժեց
Աստուած, եւ մեռան. Այս վճիռը լսելով ժո-
ղովուրդը՝ շատ տրտմեցաւ ու հեծեծելով օրը
յայտնեցին թէ կ՚ուզեն երթալ խոստացեալ եր-
կիրը. Մովսէս թէպէտ եւ յայտնեց թէ Աստ-
ուած իրենց հետ չէ եւ թէ որ երթան՝ պիտի
յաղթուին, բայց անոնք միտք չդրին ու գացին.
Ամաղեկացիք ու Քանանացիք դէմերնին
ելնելով շատ մարդ ջարդեցին իրենցմէ, որով
ստիպուեցան ետ փախչիլ ի բանակը. Այսու-
հետեւ շատ անգամ՝ ասկէ անդ իջեւան ը-
նելով՝ երեսուն ու ութը տարի եւս Փարանայ
անապատին մէջ պտըտեցան մինչեւ որ հին ազգը
սպառեցաւ եւ նոր ազգը հասաւ. Այսպէս
տարիներուն մէջ իրենց բանակը պտուտ առած փո-
խադրութեան մէջ էր եւ կերակուր-
նին էր գլխաւորապէս մանանայն. նաեւ մշա-
կութիւն, հովուութիւն ու ձկնորսութիւն ալ
կ՚ընէին. ջուրը պեղելով կը հանէին, եւ առատ աղ
ալ կար. իսկ մաքրութեան եւ քաղաքավարութեան
մասին՝ օրէնքը ամէն կերպիւ հոգ տարած էր.

4. Այս միջոցներս պատահեցաւ Կորխայ

պատմութիւնը ։ Կորխայ Ահարոնի հօրեղբօր թոռն էր, որ քահանայապետութեան հետամուտ ըլլով՝ Ռուբէնի ցեղէն Դաթան և Աբիրոն անուն երկու իշխաններ և երկու հարիւր յիսուն ուրիշ ալ մարդիկ իւր հետ միաբանած՝ ապստամբեցան Մովսէսի և Ահարոնի դէմ, թէ ինչու միայն իրենք կը սեփականեն բոլոր ժողովրդեան վերայ ։ Մովսէս նախ ուզեց խրատելով համոզել զանոնք, բայց անոնք աւելի յանդըգնելով՝ յայտնի ապստամբեցան, և սկսան ըսել Մովսէսի համար՝ թէ ժողովուրդը ջարդելու համար անապատին մէջ բերաւ. ուստի Մովսէս անոնց ըսաւ որ հետևեալ օրը բուրվառնին առնեն ու Տէրոջը ներկայանան որ ինք կամքը յայտնէ ։ Հետևեալ օրը անոնք եկան, հետևնին շատ ժողովուրդ բերելով. Այն ատեն անմիջապէս երևեցաւ Աստուած իւր փառքը, և ըսաւ Մովսէսի և Ահարոնի որ ժողովրդեան մէջէն ելնեն, որպէս զի անոնք ալ չնչէ ։ Բայց անոնք աղաչեցին Աստուծոյ որ քանի մը մարդու համար զամենքը չպատժէ. ուստի Աստուած հրաման ըրաւ որ անոնք ալ զատուին գլխաւոր ապըստամբներէն ։ Եւ երբ այսպէս ըրին, Մովսէս ըսաւ ժողովրդեան. «Ասով պիտի գիտնաք թէ Տէրն է զիս ղրկողը, թէ որ Տէրը հրաշք մը ընէ և երկիրը բացուի զիրենք կլլէ» ։ Դեռ խօսքը բերանն էր և ահա երկիրը պատառեցաւ և կուլ տուաւ Կորխը, Դաթանն ու Աբիրոնը իրենց ընտանեօքը և ամէն բաներովը, և այն երկու հարիւր յիսուն

հողին վերայ ալ՝ որք խունկ կը մատուցանէին . կրակ ինկաւ ու այրեց զիրենք ։ Եւ Մովսէս Աստուծոյ հրամանաւ անոնց այրած բուրվառները հաւաքեց ու տափակցնելով զանոնք ողջակէզի սեղանին վերայ անցուց որ յիշատակ ըլլայ ապագային . Եւ Ահարոնի ցեղէն զատ մէկը չհամարձակի խունկ ծխելու Աստուծոյ առջեւ ։

Այս դէպքին վերայ թէեւ բոլոր ժողովուրդը տակաւին , սակայն հետեւեալ օրը դիմեցին Մովսէսի եւ Ահարոնի վերայ « դուք սպանող եղաք » ըսելով . անոնք ալ խորանին փախան եւ ամպը զիրենք ծածկեց ։ Իսկ Աստուած զայրացաւ ուզեց ջնջել ժողովուրդը , բայց իրենք Աստուծոյ առջեւ ինկան աղաչելու . եւ Մովսէս ըսաւ Ահարոնի որ բուրվառը առնէ եւ ժողովուրդին մէջ խնկարկելով անոնց մեղքը քաւէ , քանզի սկսած էր ժանտամահը . եւ մինչեւ որ Ահարոն գնաց՝ տասն ու չորս հազար եօթը հարիւր հոգի մեռան ։

5 . Անկէց Աստուած ուզելով որ քահանայութեան համար տրտունջը վերնայ , հրամայեց Մովսէսի որ ամէն ցեղ մէկ մէկ գաւազանի վերայ անուններին գրեն եւ Վկայութեան խորանը տանին , եւ որուն գաւազանը որ ծաղկի՝ այն ցեղին ընտրուած ըլլալը յայտնուի ։ Հետեւեալ օրը տեսան որ Ղեւեայ ցեղէն Ահարոնի գաւազանը ծաղկեր եւ ընկոյզ տուեր էր . Մովսէս ալ [illegible] ժողովրդեան ցուցնելով , տարաւ տապանակին մէջ պահեց Աստուծոյ հրամանաւ , որ ապագային համար փառաւորական յիշատակ մը ըլլայ ։

Բայց ժողովուրդը փոխանակ զղջալու այս պա-
տիժներէն, եկան Մովսէսի քովն որ ասոր ճարը
հոգայ։ Ուստի Մովսէս ալ Աստուծմէ հրաման
առնելով այնպէս կարգադրեց որ խորանին վե-
րաբերեալ գործերը միայն Ահարոն և անոր որ-
դիքը ընեն, և միւս Ղեւտացիք ալ աստուածային
պաշտամանց մէջ իրենց համար որոշուած գոր-
ծերն ընեն. իսկ մնացեալ ժողովուրդը խորանին
և պաշտամանց վերաբերեալ գործերուն բնաւ
միջամուխ չըլլան։

## ԳԼՈՒԽ Թ.

1. Մովսէսի քրոջ Մարիամին մահը. 2. Մովսէս և Ահարոն ալ կը զրկուին խոստացեալ երկիրը մտնելէ. 3. Ահարոնի մահը. 4. Պղնձէ օձը. 5. Իսրայելացւոց յաղթութիւնները. 6. Բաղակ և Բաղաամ. 7. Իսրայելացւոց կռապաշտութիւնն ու պատիժը. (Թուոց. Ի—ԻԵ.)

1. Իսրայելացիք Եգիպտոսէ ելլելնուն երե-սուն ու իններորդ տարւոյն առաջին ամսոյն մէ-ջերը Սին անապատը եկան, և Կադէսի մէջ բա-նակնին դրին, ուր տեղ մեռաւ Մովսէսի քոյրը Մարիամ ու թաղեցաւ։

2. Հոն տեղ ժողովուրդը ջուր չգտնալուն համար դարձեալ սկսան տրտնջել Մովսէսի և Ա-հարոնի դէմ։ Ու երբ անոնք ալ Աստուծոյ դիմե-ցին և սկսան աղաչել, Աստուած Մովսէսի հրամա-յեց որ ժողովուրդը ժողվէ և անոնց ներկայութեամբ ապառաժ քարին հրամայէ որ ջուր ելլէ. Մովսէս ալ այնպէս ըրաւ ու ժողովուրդը ժողվեց։ Բայց հոս տեղ Մովսէս և Ահարոն անհաւատութիւնմի ցուցուցին թէ արդեօք այնպիսի թերահաւատ.

նկատման համար այս հրաշքը սխալ ըլլայ . ուստի Մովսէս ըսաւ , « մի՛ ապստամբներ ձեզի այս ապառաժէ՞ն ջուր հանենք » . և փոխանակ հրամայելու ապառաժին խօսելու Աստուած պատուիրած էր , գաւազանովը զարկաւ երկու անգամ որմէ առատ ջուր բղխեց . Այսպէս այս բանին համար Աստուած բարկանալով Մովսէսի և Ահարոնի վրայ , այս պատիժն տուաւ իրենց որ իրենք ալ Քանանու երկիրը չմտնեն . Անոնց յանցանքը գործելու եղանակին մէջն էր որով ժողովրդեան առջև անհաւատութեան նշանակ մը տուին . Նաև այս ջուրին անունն ալ Մերիբայի ( վիճաբանութեան ) ջուր ըսուեցաւ .

3 . Նաև եղաւ որ Մովսէս հոն անկէ՛ն պատգամաւորութիւն մը ղրկեց Եդոմայեցւոց , որ անոնց միջոց մը կամ ճամբորդութիւն մը տան՝ իրենց երկրին մէջէն անցնելու Իսրայէլացիք . բայց անոնք չթողուցին ու պատերազմ ալ սպառնացին . Ասոր Իսրայէլացիք ալ Կադէսէն չուեցին ու Հոր լեռը եկան Եդոմայեցւոց երկրին քառասուներորդ տարին . Հոն անոր Մովսէս Աստուծմէ խնդրեց Ահարոնի մահուան մասնաւորը , ու ապա Աստուծոյ հրամանաւ Ահարոնը և անոր որդին Եղիազարը լեռան գլուխը հանեց . և հոն անոր Ահարոնի քահանայապետական զգեստները անոր որդւոյն Եղիազարին հագցնելով՝ քահանայապետ ըրաւ . և հոն ալ մեռաւ Ահարոն հարիւր քսան երեք տարեկան , Իսրայէլացիք զաւ Իսրայէլ անոր սուգ մը ալ թողելով . Նա-

Իսրայէլացիք երեսուն օր սուգ պահեցին Ահա-րոնի համար.

4. Իսրայէլացիք Հոր լեռը եկած ատեննին Արադի Քանանացւոց թագաւորը անոնց վրայ պատերազմի ելաւ. բայց Իսրայէլացիք Աստուծոյ օգնութեամբ յաղթեցին անոր եւ շատ քաղաքները աւերելով քանդեցին, եւ այն տեղւոյն անունը Հորմա (Նզովք) կոչեցին.

Այս երբ հոս տեղէն ճամբայ ելան Իսրայէ-լացիք, ճանապարհին նեղութիւններէն ձանձ-րացած՝ գանգատ սկսան ընելու Աստուծոյ եւ Մովսէսի դէմ ըսելով. «Ալ զզուեցանք այս չնչին մանանայէն. հաց չկայ. ջուր չկայ. ինչու հա-նեցիք զմեզ Եգիպտոսի երկրէն»: Աստուած ալ զիրենք պատժելու կիզող օձեր ղրկելով. որոնք շատ մարդ խայթեցին ու մեռցուցին. Ասոր վրայ ժողովուրդը զղջալով՝ դիմեցին Մովսէսի որ ա-ղօթէ իրենց համար. եւ Աստուած հրամայեց անոր որ պղնձէ օձ մը շինէ, եւ ձողի մը վրայ անցընելով կանգնեցնէ ի տես ժողովրդեան: Այս Մովսէս անանկ ըրաւ. եւ օձերէն խայթուածները երբոր անոր կը նայէին՝ կը բժշկուէին.

5. Այս եղաւ որ Իսրայէլացիք երկու տեղ եւս իջեւանել ուզին, Ամորհացւոց սահմաննե-րուն վրայ մեծ ձորի մը քով հասան. եւ ահա այն տեղէն սկսան տիրել Քանանացւոց երկիր-ներուն: Բայց Ամորհացւոց երկրէն խաղա-ղութեամբ անցնիլ ուզելով երբ անոնց Սեհոն թագաւորը պատերազմաւ դէմերնին ելաւ, Իս-

րայէլացիք ալ պատերազմելով յաղթեցին ու ջնջեցին զանոնք իւր բոլոր ժողովուրդովը, և անոր երկիրներուն տիրեցին ։ Այս Բասանու կողմը եկան. հոն ալ անոնց Ովգ թագաւորը դէմերնին ելնելով՝ անոր ալ յաղթեցին ու ջնջեցին անոր ժողովուրդը, և երկիրին տիրեցին ։

6. Իսրայէլացւոց Աստուծոյ զօրութեամբը բրած այս յաղթութիւններ ընելով Մովաբացւոց թագաւորը Բաղակ, վախցաւ թէ գուցէ իւր երկիրներն ալ կ՚առնեն. սակայն պատերազմելու ալ չհամարձակելով՝ Մադիանացւոց իշխաններուն հետ խորհրդակցութեամբ որոշեց որ գիւթութեան զօրութեամբ մը անհետել այս ազգը ։ Ասոր շատ մը ընծաներով ու խոստմունքով՝ մարգիկ ղրկեց այն կողմերը բնակող Բէովրեան Բաղաամ անուն մէկուն որ համբաւաւոր էր այս տեսակ գործերու մէջ, որպէս զի գայ և զԻսրայէլացիները անիծէ ։ Նա մինչդեռ Բաղաամ հագիւ ուրեմն ճամբայ ելեր էր Բաղակ թագաւորին առաջնորդը, և ահա առաւ Աստուծմէ իւր անօրէնութեան յանդիմանութիւնը. անխօս էշը մարդկային ձայնիւ խօսելով՝ արգիլեց անոր յիմարութիւնը ։ Այսպէս ուրեմն յաղթուեցաւ բանաւոր բայց անբարոյականն Բաղաամ, անբան այլ խօսուն կենդանւոյ մը միջոցաւ ։ Այսպէսով Բաղակին քովը գալով երբ սկսաւ զոհեր մատուցանել՝ որպէս զի մեծապէս յայտնութիւն մը առնէ իւր ընելիքին վերայ, և ահա Աստուած ուզելով ցուցնել

թէ ինքն Տէր է նոցա խորհրդոց ու սրտից, ուստի անոր բերանը անէծքի տեղ օրհնութիւն դրաւ. որով սկսաւ օրհնել Իսրայէլացիքը, և անոնց ապագայ վիճակը խօսիլ: Իր մէջէն Իս-րայէլ թագաւորը շատ յառաջուց մը ըսուեց զինքը:

6. Այսու ամենայնիւ Բաղաամ խրատ մը տուաւ Բաղակ թագաւորին որ եթէ կ'ու-զէ սրբութիւնը Իսրայէլացիներուն, աշխատի կռա-պաշտութեան մէջ ձգել զանոնք: Իսկ երբ Իս-րայէլացիք Սատիմայ դաշտերուն մէջ բանակած էին, Բաղաամու խրատը եղաւ. Մադիանացւոց աղջիկներուն հրապուրելովը իրենց շատերը կռապաշտութեան մէջ ընկան և անոնց Բէէլ-փեգորի կուռքը պաշտեցին: Այս պատճառաւ բարկացաւ Աստուած իրենց վրայ. հրամայեց Մովսէսի որ այն մարդիկը ջարդել տայ, որով քսան ու չորս հազար մարդ ընկան: Ահարոնի թոռն Փենեհէս քահանայն այս պատերազմին մէջ աստուածային նախանձով վառուած [illegible] վրէժխնդրութիւն մը ցուցնելուն համար, քա-հանայապետութիւնը մշտնջենաւորապէս իր ցեղին մէջ մնալու խոստում առաւ Աստուծմէ:

ԳԼՈՒԽ Ժ.

1. Զօրաշարժութիւն մը քանի կը հանդիպի. 2. Մադիանացւոց բաժ-նուելը. 3. Իսրայէլի երկիրը ու ցեղին բաժանած երկիր-ները. 4. Յեսուայ ընտրութիւնը և Մովսէսի վերջին պատուէրը. 5. Մովսէսի մահը. (Թուոց. ԻԶ—ԼԶ. Բ. Օրէ. Ա—ԼԴ.)

1. Իսրայէլացիք Մովաբու դաշտերուն մէջ եղած ատեննին՝ Մովսէս և Եղիազար Աստուծոյ

հրամանաւ համրեցին քսան տարեկանէն վեր և զէնք առող մարդիկը. և տասն երկու ցեղը մէկէն վեց հարիւր մէկ հազար եօթն հարիւր եռեսուն հոգի զէ՛նք բռնող մարդ գտնուեցան. որ առաջին Թիւէն երկու հազարի մօտ պակաս էր՝ այնքան պատիժներէն մեռածներուն պատճառաւ. Իսկ Ղևտացւոց մէջ այս անգամ՝ գտնուեցան քսան երեք հազար արու մէկ ամսականէն վեր.

2. Այնուհետև Աստուած հրամայեց որ Մադիանացւոց վերայ պատերազմի ելլեն և զիրենք կռապաշտութեան մէջ ձգելնուն համար վրէժ առնեն. Ուստի ամեն մէկ ցեղերէն հազարական մարդ ընտրելով՝ յարձակեցան անոնց վերայ. և շատ աւար առին. և անոնց չափահասները կոտորեցին ու մանուկները գերի բերին. Սպանուածներուն մէջ էին նաև Մադիանացւոց հինգ իշխանները. Մովաբացւոց Թագաւորը Բաղակ և Բաղաամ.

3. Իսկ մինչև այն ատեն առնուած երկիրները, Ռուբէնի, Գադայ և Մանասէի կէս ցեղերուն բաժնեց Մովսէս իրենց յատուկ խնդրանօքը, բայց այնու պայմանաւ որ իրենց ընտանիքներն ու ստացուածքները հոն թողելով միւս ցեղերուն օգնելու երթան մինչև որ անոնք ալ հանգստանան իրենց տեղերը.

4. Եւ եղաւ որ Իսրայէլի որդւոց Եգիպտոսէն ելնելուն քառասներորդ տարւոյն վերջերը. Մովսէս Աստուծոյ ազդելովը իմացաւ թէ իր վախճանելու օրը մօտեցած է, ուստի Աստուծոյ

հրամանաւ Յեսուն իրեն տեղ առաջնորդ դրաւ
ժողովուրդին վրայ. և երկիրը բաժնելու է Ղեւ-
տացւոց որոշելու բնակութեանց մասին պէտք
եղած հրահանգները Աստուծոյ կողմանէ տալով
անոր և Եղիազար քահանայապետին. Այնու-
հետեւ տասն ցեղերու իշխաններուն ալ պէտք
եղած պատուէրներն ու հրահանգները տուաւ.
Ետքը սկսաւ մի բառ միջէ պատմել Աստուծոյ
իրենց ըրած ամէն երախտիքը և սքանչելիքը. և
ամէն օրէնքները երկրորդելով յիշեցընելէ և ա-
նոնց վրայ յաւելուածներ և բացատրութիւն-
ներ ընելէ զատ, նաև պատուէր տուաւ որ երբ
Յորդանանէն անդին՝ օրինաց բովանդակու-
թիւնը քարերու վրայ արձանագրեն և դնեն
՚ի տես ժողովրդեան. և անտաշ քարերով զոհի
սեղան մի ալ շինեն ՚ի յիշատակ և ՚ի շնորհակա-
լութիւն երախտեաց Աստուծոյ. Ասկէ զատ նա
եւ օրէնքները պահողներուն համար օրհնու-
թիւններ և չպահողներուն համար անէծքներ
սահմանեց, յայտնելով այն օգուտները որ Տէ-
րոջը օրէնքները պահելով պիտի ունենային և այն
վնասը որ չպահելով պիտի կրէին. և Յեսուայ
առաջնորդութիւնը ՚ի ներկայութեան բոլոր ժո-
ղովրդեան հաստատեց և պէտք եղած քաջալե-
րութիւնները տալով, պատուիրեց նաև Ղե-
ւտացւոց, որ եօթն տարին մի անգամ ՚ի լուր ժո-
ղովրդեան կարդան այս օրէնքները. Հուսկ
յետոյ յօրինեց նաև երգ մի որ է Օրհնութիւն
(Երկ. ԼԲ.), որպէս զի բոլոր ժողովուրդը սոր-

րին ու երգեն և անով յիշեն միշտ Աստուծոյ երախտիքը, և զգուշանան ապերախտութենէ.

5. Այս անձնէն յետոյ, Յակոբ նահապետի նման մարգարէական օրհնութեամբ օրհնելով Իսրայէլացւոց ամեն մէկ ցեղերը, Աստուծոյ հրամանաւ Աբարիմի լեռներէն Նաբաւի վերայ փասգայի' գագաթը ելաւ ուրկէ Աստուած իրեն ցուցուց Իսրայէլացւոց տալիք երկիրները. և հոն տեղ Մովաբու երկրին մէջ վախճանեցաւ Մովսէս Աստուծոյ ծառան, հարիւր քսան տարեկան որուն դեռ ոչ աչքերը տկարացած էին և ոչ երեսները խորշոմած. և անկից թաղուեցաւ Բեթփեգորի դիմաց ձորին (Մովաբ) մէջ. (2555). բայց անոր գերեզմանին ուր ըլլալը մարդ չը գիտցաւ. վասն զի Աստուած այնպէս կամեցաւ որ չըլլայ թէ ժողովուրդը պաշտէ զանիկայ. Նոյնպէս Յեփոնեան Քաղէբէն և Նաւեան Յեսուէն զատ Եգիպտոսէ ձանչցող մարդ չմնաց. Իսրայէլացիք եօթանն օր սուգ պահեցին Մովսէսի համար. Այսպէս եղաւ վախճանը մեծին Մովսէսի, որոյ նման երես առ երես Տէրոջը ծանօթ մարգարէ մի ելած չէ բնաւ. Թէ ոչ Այն որ չէ թէ իրեն պէս բարեկամ միայն այլ 'ի սկզբանէ էր առ Աստուած և 'ի ծոցոյ նորա առաքեցաւ. և որոյ մասին Աստուած յայտնեց իրեն (Բ. Օրէ. ԺԸ. 15—19). Մովսէս հինգ գրեց Աստուծոյ ներշնչութեամբ՝ Ծննդոց. Ելից. Ղևտացւոց. Թուոց և Երկրորդ Օրինաց գիրքերը.

---

1 Կամ Փեգորի (բագին. կախածոյ մայր). Ներկայիս գիտնոյ.

## ԳԼՈՒԽ ԺԱ.

1. Աստուծոյ Մովսէսի ձեռօքը տուած անհատական. 2. դատաստանական. 3. պաշտամանց. 4. ընկերական ու քաղաքական օրէնքները. (Ելք. Ղեւտացւոց. Թուոց և Բ. Օրինաց.)

1. Մինչեւ հոս եղած յիշատակութիւններէն ետքը յառաջացեալս նշանակութեան արժանի են նաեւ Խալդէացւոց օրէնքները. զորս Աստուծոյ յատուկ ազդեցութեամբը ընկալաւ ու աւանդեց Մովսէս, որ իւր ազգայնոց իրաւանցը նախանձախնդիր եւ բանիւ ու գործով զօրաւոր եղական մէկն ըլլալով, անցեալ եւս էր Եգիպտացւոց ամէն իմաստութեանցը. որոնք այն ատեն աշխարհիս ամենէն յառաջադէմ ազգն էին.

Արդէն յիշուեցաւ Սինայի վերայ Աստուծոյ տուած օրէնքները. Անոնցմէ յետոյ Մովսէսի ձեռօքը տուած միւս օրինաց եւ պատուիրանաց մէկ համառօտ բովանդակութիւն են հետեւեալքը.

Անհատական պարտքեր. Պաշտել զՏէր Աստուած յամենայն սրտէ. սիրել ընկերը իբր անձին պէս. այրիին, որբին, աղքատին ու պանդխտին զրկանք չընել. այլ և խնամել. օգնել ընկերին և ի պահանջել հարկին նաև թշնամւոյն. վրէժխնդրութիւն և ոխակալութիւն չընել. սուտ երդում չընել. Սուտ համբաւ չտարածել. մշակին վարձքը չուշացընել. Իրենց ազգայնոցը տոկոսով կամ գրաւով չտալ. խարդախ չափ ու կշիռ չգործածել. դրացւոյն կալուածին սահմանը չփոխել. Աստուծոյ եղած ամեն ուխտ անշուշտ կատարել. օրէնքին սահմանած տասանորդը, երախայրիքը և փրկանքները և այլն, ըն-

ռայել Տէրոջը , ապաւ քանզի Պետազայ՝ եւ կարօտելոյ ։ Ըղձին ու արդար ձգտում չընել , այդ կարօտելոյ թողուլ , խնայող աչք չունենալով աստուածապաշտութեան բարեաց բաշխման մէջ ։ Պիղծ կենդանիները եւ մեռելոցի ու արիւն չուտել , մաքրութիւն պահել , ապականիչ ախտերու համար՝ օրինաց պատուիրած զգուշութիւնները 'ի գործ դնել ։ Աւելորդ համար չափազանց սուգ չընել , մարմնոյ վերայ ճեղքուած ու ներկուած նշանները չընել , այր մը կնոջ եւ կին մը էրիկ մարդու զգեստ չհագնին ։ Կենդանեաց նաեւ ծառոց վերայ ալ գթութիւն ու խնամք ունենալ , եւ այլն , եւ այլն ։

2 . Բարոյական եւ Քաղաքական օրէնքներ ։ Դատաստանի մէջ արդար եւ անաչառ ըլլալ , կաշառք չառնուլ , մէկ վկայի խօսքով վճիռ չտալ , պէտք եղած ատեն երդումն ալ 'ի գործ դնել ։ Պատիժները էին մահ ըստ մեղաց . ծեծ՝ բայց ոչ քառասուն հարուածէ աւելի . իսկ մահուան կը պատժուէին կռապաշտութիւն , կախարդութիւն , սուտ մարգարէութիւն , հայհոյութիւն նուիրական բաներու , շաբաթն ուրանալը , օրէնքը գիտութեամբ չարահելը , ծնողք թշնամանելը , շնութիւն , բռնաբարութիւն եւ ամէն խառնակութիւն , մարդասպանութիւն , մարդագողութիւն ու քինու . եւ մահուան պատիժն էր քարկոծումն կամ սուր ։ Իսկ ուրիշ ամէն տեսակ գողութիւն եւ վնաս պատառոյ եւ բռնելոյ եւ ատեանկութիւն սուտ վկայք կը պատժուէին . սուտ վկայ-

ութիւնը՝ ըստ մեծութեան համեմատ կը պատ-
ժուէր . և այն պատժական օրէնքները՝ եկին և
բնակչին համար մի և նոյն էր ։ Պատուհասներ նախ
Մովսէս միայն , յետոյ իւր օգնականներն ալ կը
առնէին . երբեմն դատաւորութիւնը ժողովր-
դեան գլխաւորը եղողը կամ քահանայապետն ալ
կ'ընէր . բայց յետ օրինի ամէն քաղաքի մէջ ալ
դատաւոր կային , որոց շատը հաւանականաբար
Ղևտացի էին կամ անոնց գործակցութեամբ
կը գործէին . ուր որ եղած ամէն քաղաքին ծե-
րերուն ալ կարծիքը կ'առնէին ։ Ապաստանի քա-
ղաքներ ալ սահմանուած էր , որպէս զի ակամայ
մարդասպան մի հոն ապաստանուի , մինչև քա-
հանայապետին մահը , որ անկէ ետքը բոլորովին
ազատ կ'ըլլար . և այլն ։

Իսկ ժառանգութիւնը՝ անդրանիկին երկու
բաժին կ'իյնար . որու ժառանգ եղած ամէն
աղջիկը անշարժ ստացուածք չէր ժառանգէր ,
բայց միայն եթէ իւր օժիտ տրուած ըլլար , իսկ
որդի չեղած ատեն կը ժառանգէր . բայց այն ա-
տեն իւր ցեղէն մէկու մի հետ ամուսնանալու
էր որ իւր ժառանգութիւնը ուրիշ ցեղի չանց-
նի . բնաւ զաւակ չունեցողին ժառանգու-
թիւնը մօտաւոր ազգականին կ'անցնէր ։ Անզա-
ւակ մեռնողի մը եղբայրը կամ մօտ ժառանգը
պէտք էր անոր կինը առնուլ . և եղած զաւակը
մեռնողին ժառանգը կ'ըլլար . և այլն , և այլն ։

4 . Պաշտամունք և ծէսք ։ Աստուածային պաշ-
տամանց յատկացեալ տեղն էր Վկայութեան

խորանը (տես երես 73, 74). որուն առաջին մասը Սրբութիւն կ'ըսուէր, ուր տեղ էին խունկի և առաջաւորութեան սեղանները և աշտանակը. երկրորդ մասը որ Սրբութիւն Սրբութեանց կ'ըսուէր. ուր տեղ էին տապանակն ուխտին Աստուծոյ և անոր մէջ տասնաբանեայ պատգամաց քարեղէն տախտակները. ոսկի սափոր մը մանանայ և Ահարոնի գաւազանը որ ծաղկեցաւ. տապանակին քովն էին և Մովսէսի հինգ գրքերը. իսկ խորանին դուրսի դաւիթին մէջ էր ողջակիզաց սեղանը.

Գլխաւոր տօներն էին, տօն Բաղարջակերաց ՚ի յիշատակ ազատութեան Եգիպտոսէ. Տօն Պենտեկոստէի կամ Եօթներորդաց ՚ի յիշատակ օրէնսդրութեան Սինայի, և ՚ի գոհութիւն հնձոց, որ կը տօնէին զատկէն յիսուն օր ետքը. Տօն Տաղաւարահարաց, ՚ի յիշատակ բնակութեան յանապատին, և ՚ի գոհութիւն աշխատանքին արդեանց երկրի. Մեծ տօն Քաւութեան կամ՝ օր պահոց և ապաշխարութեան, այն օրը միայն կը մտնէր քահանայապետը ՚ի Սրբութիւն Սրբութեանց, իւրն և ժողովուրդին մեղացը համար պատարագելու քաւութիւն ընելու համար. և նոյն օրը քահանայապետը կ'օրհնէր զժողովուրդը Տէր Եհովայի անուանով. Այս տօներէն զատ կային նաև ուրիշ տօներ, ինչպէս Հանգստեան տարի, որ եօթն տարին մի անգամ կու գար. այն տարին վարուցան չէր ըլլար, և ինչ որ երկիրը ինքնին բուս-

ցընէր , անփկայ անանկայ և անասնոյն էր . այն տարին իրե՛նց ազգակից արծաթագին ծառայք կ'ազատուէին . և իրե՛նց տնանկ ազգայնոց պարտուցը թողութիւն և շնորհումն կ'ըլլար . Յոբելեան կամ թողութեան տարի , որ եօթն հանգիստ տարիներէ ետքը , այսինքն քառասուն ու ինը տարիէն ետքը կու գար . այս տարին բաց 'ի հանգիստ տարիներու ազատութիւններէն ուրիշ ազատութիւններ ալ կ'ըլլային . այսինքն բաց 'ի պարսպաւոր քաղաքներու տուներէն ուրիշ ամէն կալուած զոր մէկը տնանկ մնալով վաճառած էր . իրե՛նց առաջին տիրոջը կը դառնային . վասն զի ծախուած երկիրներու գինը՝ մինչև Յոբելեան տարի եղած միջոցին հաշուովը կը կտրուէր . և այսպէս՝ երկիր մը մշտնջենաւորապէս չէր կրնար ծախուիլ . իսկ Յոբելեան տարիէն առաջ ալ կարող էր մէկը իր կալուածը փրկել , առած գինը ետ դարձնելով . նաև այն տարին ամէն պարտք կը ջնջուէր[1] . և օրինաց այս տրամադրութեամբ՝ անհնարին կամ շատ դժուար կ'ըլլար , որ մէկը բոլորովին տնանկանայ .

Թէ այս տօներուն և թէ մեղաց և յանցանաց համար առ Վկայութեան խորանը մատուցուած նուէրներն էին , սուրբ կենդանիներ որ անարատ պէտք էր ըլլային , հաց՝ մասնաւոր պատրաստուած , խունկ , և երկրի բերքեր .

1 Ի հարկէ հատուցանել չկրցողներուն , որ կարելի էր փրկութեամբ ապացուցանել . Նաև օրէնքը մասնաւոր պատուէր տուած էր որ Յոբելեան տարին մօտեցած ըլլալուն պատճառաւ իրենց տնանկ ազգայնոցմէ բան մը չզլանան .

Թղթատութիւնը անհրաժեշտ հարկ էր. կային նաեւ լուացումներ, և այլն, և այլն։

Մեն արու՝ տարին երեք անգամ Տէրոջը խորանը ներկայանալու պարտական էր, բայց ոչ դատարկաձեռն։

Քահանայապետին իշխանութիւնը ցկեանս ժառանգական էր։ Նախկայ մէկ կին միայն կրնար առնել, որ իւր ցեղէն կոյս մը ըլլալու էր։ Նայ 'ի քահանայապետէն՝ նաեւ միւս քահանայից ալ պաշտաման առնէն հագնելու համար ձեւաւոր զգեստ որոշուած էր։ Քահանայից պաշտօնն էր խորանին հանապազորդեան պաշտամունքը և զոհերը կատարել. ասոնք ամէնն ալ ուսեալ պէտք է ըլլային, մանաւանդ Տէրոջը օրէնքներուն մէջ։ Ղեւտացւոց բնակութեան համար ամէն ցեղերու մէջ երկիրներ որոշուած էր և իրենց կալուածները ամէն փրկանքէ ազատ էին. իրենք մանաւանդ կը պարապէին ուսուցչութեան, դատաւորութեան, և այլն։ Նոյնց մէկ գլխաւոր ապրուստն ալ էին զոհերէն իրենց ընծայած մասը, և ուրիշ նուէրներ։

4. Ընկերական և տնտեսական օրէնքներ։ Մէկէն աւելի կին առնելը և կին արձակելը թէեւ բոլորովին վերցած չէր, այլ դժուարացուած էր. իւր կինը արձակող մը վերստին չէր կրնար առնել նոյն կինը. երկու կին ունեցող մը՝ երկուքին ալ հաւասար պէտք է խնամէր. կնոջ վերայ զրպարտութիւն չըլլալու համար յատուկ զգուշութիւններ կար. խնամութիւնը երկրորդ ճիւղէն

անդղին, խակ ու զզուելի պծխ. երրորդ ճիւղէն ան-
դին նուիրուած էր. Տանուտէր մը իւր ընտանեաց
և ծառայից վերայ բացարձակ իշխան էր՝ բայց ոչ
անոնց կեանքին վերայ. Ծառայից վերայ խըս-
տութիւն ընելն արգիլուած էր. անոնք օրեր
հանգիստ ունէին, ամեն կերպիւ կը խնամ-
ուէին. և իրենց եղած զրկանքը կը պատժուէր.

Իսրայելացւոց վերայ տարապայմանի իշխան չէր
կրնար ըլլալ. Թագաւոր մը օրինաց համեմատ
ընթանալու էր, և մեծ հարստութիւն ու փառք
ունենալու չէր, որպէս զի չհպարտանայ իր եղ-
բարցը վերայ. կռապաշտ ազգաց հետ յարաբե-
րութիւն մանաւանդ խնամութիւն ընելն ար-
գիլուած էր. Նոր ամուսնացող, նոր այգի տնկող
և նոր տուն շինող մը պատերազմի չէր երթար
մինչեւ մէկ տարի. և այլն, և այլն.

Այս Աստուած խոստացաւ Իսրայելացւոց որ
եթէ իրենց պատուիրանները ու պատուէրները պահեն,
օրհնէ զիրենք և իրենց երկիրը, որ բազմածին
ու պտղաբեր ըլլան և անդորր ու ապահով կեանք
մը վարեն իրենց հարցը խոստացեալ երկրին մէջ.
Սակայն յայտնեց նաեւ որ եթէ ընդհակառակն
ընեն և պատուիրանները խախտեն, այն ատեն իրենց
վերայ ձախորդութիւններ ու պատուհասներ
պիտի բերէ, և ի վերջոյ թշնամեաց ձեռք մատ-
նելով պիտի հալածէ զիրենք հոն անդէն, ու
ցրուէ երկրի չորս կողմը.

Եւ այս ամենուն նպատակը այն էր, որ Աս-
տուած իրեն սեպհական և ընտրեալ ժողովուրդ

մը ըսել զիրենք, և իրենց մէջ ճշմարիտ աստուածածանօթութիւնը ծագելով, աստուածային յայտնութեանց աւանդապահ, միանգամայն ամէն ազգաց ընդհանուր եղծման մէջ պատրաստ ժողովուրդ մը ըլլան՝ ընդունելու այն բարձրագոյն յայտնութիւնները, որ 'ի լրման սահմանեալ ժամանակին պիտի տար Քրիստոսի, բոլոր մարդկային ազգը իր բարձր կոչմանը վերածելու համար.

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈԲԱՅ

1. Յոբայ փորձը. 2. փորձութիւնները. 3. համբերութիւնը. 4. իր բարեկամները. 5. իր առաքինութեան յաղթանակը.
(Յոբ. Ա—ԽԲ.)

1. Յոբ՝ Մովսէսի ժամանակակից և Եսաւի ցեղէն էր, և կը բնակէր Ուզ[1] գաւառին մէջ. և շատ հարուստ ու առաքինի և աստուածապաշտ մարդ մի էր. Աստուած իրեն եօթն մանչ ու երեք աղջիկ զաւակներ տուած էր. որոնք երբ մէկտեղ գալով ուրախութիւն կ'ընէին, Յոբն անոնց ամէն մէկուն համար զոհ կը մատուցանէր Աստուծոյ, որ եթէ մեղք մը գործեր են, քաւութիւն ըլլայ անոնց. Բայց սատանան հակառա-

1 Ուսեր կամ Հաւս.

կեցաւ Յոբայ կատարելութեանը դէմ, և որպէս զի Յոբայ առաքինութիւնն ու համբերութիւնը յաղթանակէ, Աստուծոյ թոյլտուութեամբը սկսաւ Յոբայ դէմ փորձանքներ յարուցանել՝ այսպէս :

2. Օր մը երբ Յոբայ որդիքը իրենց սովորութեանը պէս մէկտեղ եկած կ'ուրախանային, յանկարծ մէկը եկաւ և Յոբայ գոյժ տուաւ թէ աւազակներ գալով իր բոլոր եզներն ու գրաստները տարին և անոնց պահապանները սպաննեցին : Ասոր խօսելու ատենը ուրիշ մէկն ալ եկաւ և պատմեց թէ երկինքէն կրակ մը իջաւ և իր բոլոր ոչխարներն ու հովիւները այրեց : Այն միջոցին և ահա ուրիշ մը եկաւ և գուժեց թէ որդիքը ուրախութիւն ընելու ատենն՝ յանկարծ փոթորիկ մը ելաւ ու տունը փլցուց և բոլոր զաւկըները մեռան : Այս վերջին գոյժն ալ որ լսեց Յոբ, ոտք ելաւ, իր հագուստը պատռեց, մազերը կտրեց (որոնք այն ատենները սուգի նշաններ էին), ու այնպէս երկրպագութիւն ըրաւ Աստուծոյ՝ ըսելով. «Մերկ ծնայ և մերկ պիտի դառնամ. ասոնք ամէնը Տէրը տուաւ ու Տէրը առաւ. օրհնեալ ըլլայ Տէրոջը անունը» :

3. Բայց որպէս զի Յոբայ համբերութեան յաղթանակն աւելի փառաւոր ըլլայ, Աստուած դարձեալ թոյլտուութիւն ըրաւ սատանային որ Յոբայ անձին վրայ ալ փորձանք յարուցէ, որով հիւանդութիւն մը գալով անոր վրայ, ոտքէն մինչև գլուխը այնպիսի գէշ խոցեր ելան որ ամէնքը

և կ՚ինար խիղ դդուելով ու ձայն մը ալ ընել չկրնա-
լով՝ քաղաքէն դուրս անարգ տեղ մը թողուցին
զինքը ։ Այդ Յոբ այնչափ թշուառութեան մէջ
ալ տրտունջ մը չընելով՝ փառք կու տար Աս-
տուծոյ . անանկ որ օր մը իր կինը յուսահա-
տելով ըսաւ թէ « Այդ տառապանքը քաշե-
լէդ աւելի աղէկ է որ Աստուծոյ դէմ խօսք մը
ընես և դուցէ մեռնիս ու ազատիս » ։ Յոբ երբ
լսեց իր կնոջ այս խօսքը՝ սրդողեցաւ ըսելով թէ
« Անզգամ կնկան մը պէս կը խօսիս . Աստուծոյ
այնքան բարիքները որ վայելեցինք , հիմա այս
նեղութիւնները չհամբերե՞նք » ։

4 . Յոբայ վերայ եկած այս փորձանքները
լսելով իր բարեկամներէն երեք երեւելի ան-
ձինք հեռաւոր տեղերէ եկան զինքը տեսնելու
և մխիթարելու . Անոնք նախ և յառաջ չկրնալով
ճանչել զանիկայ այն թշուառ կացութեան մէջ ,
երբ տեսան ու ճանչցան անոր խեղճ վիճակը ,
սկսան լալ և սուգ ընել , և այնպէս ատեն մը
լուռ մնացին ու չէին գիտեր թէ ինչ խօսին .
մինչեւ որ Յոբ վերջապէս սկսաւ պատմել իր
գլխուն եկածները , խնդրելով թէ ասիկայ պա-
տիժ մը չէ , հապա Աստուծոյ կամքն է ։ Իսկ ա-
նոր բարեկամները կարծելով թէ անիկայ զան-
ցառ կ՚ընէ իր վիճակին վերայ , ուստի սկսան
զանիկայ մխիթարելու և իբր թէ համբերու-
թեան յորդորելու համար ազդու խօսքերով
ըսել թէ՝ Աստուած անմեղ մարդու մը չարչա-
րանք չտար . Հետեւաբար Յոբայ ցաւերն ալ

իրեն մեղացը համար եղած կը կարծէին. իսկ Յոբ կ'ըսէր թէ Աստուած արդարներուն ալ փորձ ու նեղութիւն կու տայ. իրենց համբերութիւնը փորձելու համար.

5. Նայէ՛ս շատ մը մխիթարութիւններ ըրին, մինչեւ որ Աստուած ամպին մէջէն ձայն տալով՝ Յոբայ բանն արդարացոյց եւ զիրենք յանդիմանեց որ սխալ կարծիքով մը Յոբայ սիրտը վշտացուցին. եւ հրամայեց որ եօթն հորթ եւ եօթն ոչխար բերեն Յոբայ. որպէս զի իրենց թողութիւն ըլլալու համար զոհ մատուցանէ եւ աղօթք ընէ.

Յոբ եօթն տարի համբերելէ ետքը, այսպէս իր համբերութեան յաղթանակն տեսաւ. եւ Աստուած դարձեալ տուաւ անոր առողջութիւն, եւ առաջին ունեցածին երկպատիկ հարստութիւն. նաեւ միւսանգամ եօթն մանչ եւ երեք աղջիկ զաւակ եւ հարիւր եօթանասուն տարի եւս կեանք տուաւ անոր. եւ ինք ամենը երկու հարիւր քառասուն տարի ապրելով՝ բարի ծերութեամբ փոխանակեցաւ, համբերութեան օրինակ ըլլալով ամենուն. Ինքը թէեւ գրաւոր օրինաց ներքեւ չէր, այլ բնական օրինաց մէջ սնեալ եւ նահապետական առաքինութեամբ զարդարուած էր. Շատ հաւանական է որ սոյն փոքր Մովսէս գրած կամ թարգմանած է.

# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

## ՅԵՍՈՒ ԵՒ ԴԱՏԱՒՈՐՔ ՄԻՆՉԵՒ Ի ՍԱՄՈՒԷԼ

### ԳԼՈՒԽ Ա.

1. Յեսու լրտեսներ կը ղրկէ Երիքով. 2. Իսրայելացիք Յորդանանը կ'անցնին. 3. Յեսու Իսրայելացիները կը թլփատէ. 4. Երիքովի քաղաքին առնուիլը. 5. Յեսու ուրիշ յաղթութիւններէ ետքը Աստուծոյ սեղան կը շինէ եւ օրինաց կոթողները կանգնել կու տայ. (Յեսուայ Ա—Ը.)

1. Մովսէսի մահուանէն ետքը Յեսու Նաւեայ հրամանաւ պատուէր տուաւ Իսրայէլացւոց որ պատրաստութիւն ընեն Յորդանանն անցնելու։ Բայց նախ երկու լրտես ղրկեց Երիքով՝ որ տեղւոյն վիճակը տեղեկութիւններ բերեն։ Անոնք Երիքով երթալով Ռախաբ անուն կնոջ մը տունը իջան։ Երիքովի թագաւորը երբ իմացաւ անոնց գալը՝ մարդ ղրկեց որ բռնեն զանոնք. բայց Ռախաբ զիրենք գաղտնի տեղ մը պահելով եկողներուն ըսաւ թէ՝ անոնք առաւօտուն կանուխ գնացին։ Յետոյ լրտեսներուն իմացուց թէ՝ տեղացւոց սիրտը ահով լեցուած է լսելով ձեր գործերը, որ ըրիք ձեր Աստուծոյն օգնականութեամբ. հետեւաբար գիտեմ որ այս երկիրն ալ պիտի առնէք. ուստի կը խնդրեմ որ երդմամբ խոստանաք ինծի իմ տանս խնայել, ինչպէս որ ես ձեզի խնայեցի։ Անոնք ալ խոստացան ու երդում ըրին

անոր՝ աղաչելով որ ճանչցուելու համար իր տանը պատուհանին վերայ կարմիր շուան մը կապէ։ Ասկէ յետոյ կինը զիրենք տանը պատուհանէն (որ պարսպին վերայ էր) վար իջեցուց շուանով մը, և ձեռք չանցնելու համար լերանց գագանի ծմակները երթալով՝ երեք օրէն հասան ՚ի բանակը և եղածները պատմեցին։

2. Ասոր վերայ Իսրայէլացիք Սատիմէն ճամբայ ելլելով Յորդանանու եզերքը եկան։ Քահանայքը՝ որ տապանակը ուսերնին բարձած ժողովրդեան առջեւէն կ'երթային, երբ Աստուծոյ հրամանաւ եկան ու ոտքերնին Յորդանանու ջրին դպցուցին, և ահա Յորդանանու ջուրը երկու մասի ճեղքուեցաւ. վերէն եկած ջուրը դիզուեցաւ մէկ մէկու վերայ և վարի եղածները բոլորովին երթալով՝ ցամաք ճանապարհ մը եղաւ. և քահանայք տապանակը ուսերնին գետին մէջտեղը կեցան, մինչեւ որ բոլոր ժողովուրդը անցան։ Այն ատեն Աստուծոյ հրամանին համեմատ Յեսու պատուիրեց որ գետին մէջ քահանայից կեցած տեղը տասն երկու քար դնելով՝ այն տեղէն ալ տասն երկու քար առնեն և իրենց առջին բանակատեղւոյն մէջ կանգնեն զանոնք ՚ի յիշատակ այն մեծ հրաշքին։ Յետոյ երբ տապանակը դուրս բերին՝ ջուրն սկսաւ իր ճամբան շարունակել։

3. Իսրայէլացիք Յորդանանէն անցնելով՝ Գաղգաղայի[1] մէջ բանակերնին դրին, ու տարի մը

1 Գլգալ։

ւան կեցան հոն ։ Հոն տեղ Յեսու Աստուծոյ պատուիրանաց համեմատ գայլախազ քարէ դանակներ շինելով՝ թլփատեց անոնց անոնք որք անապատին մէջ ծնան ու չէին թլփատուած ։ Հոն տեղ և զատիկ տօնը կատարեցին ։ և երբ երկրին պտուղէն կերան՝ այլ դադրեցաւ մանանայ իջնելը։

4 ։ Բայց Քանանացիք երբոր լսեցին Իսրայէլացւոց Յորդանանէն անցնիլը՝ բոլորովին ահ ու դողի մէջ ինկան մանաւանդ Երիքովի մարդիկը ։ որ քաղաքին դռները գոցած ու ներսը ամրացած էին ։ Բայց Աստուած կամք ընելով որ այս քաղաքը առանց կռուի կերպով մը առնուի , հրամայեց Յեսուայ որ շարունակ վեց օր , օրը մի անգամ՝ քահանայք տապանակն առած՝ Իսրայէլի զօրքին հետ պարսպին շուրջը պտըտին առանց ձայն մը հանելու ։ Իսկ եօթներորդ օրը ժողովուրդն ալ մէկտեղ եօթն անգամ այս պըտոյտը ընեն , և վերջի անգամին փողեր չալելով՝ բոլոր ժողովուրդը սկսին աղաղակել ։ Այնպէս որ ըրին Իսրայէլացիք , և եօթներորդ օրը փողերու հնչման հետ երբ ժողովուրդն ալ սկսաւ բարձրաձայն աղաղակել , և ահա Երիքովի պարիսպները ինքնին կործանեցան ։ և Իսրայէլացիք մտնելով հոն՝ առանց խնայելու ջարդեցին մարդ և անասուն ինչպէս որ Յեսու ուխտ ըրած էր , և միայն ոսկին և արծաթը Տէրոջը գանձին նուիրեցին ։ Բայց Ռահաբը իր բոլոր տունը ապրեցուցին , ինչպէս որ խօսք տուած էին ։ և անիկայ Իսրայէլացւոց հետ մնաց ։ և Յեսուայի

ցեղէն Սաղմոնի հետ ամուսնանալով՝ ծնա-
ւ Բոոս, որ Դաւթի հօրը հաւն էր.

5. Այսուհետեւ Գայի քաղաքն փոքր քաղա-
քին վերայ երկու հազար հոգի ղրկեց Յեսու. բայց
ասոնք յաղթուեցան ու ետ դարձան. ասոր վե-
րայ Յեսու եւ Իսրայէլի ծերերը շփոթած ու
տրտմած Աստուծոյ առջեւ ինկան. Այն ատեն
Աստուած յայտնեց որ Երիքովի կործանման ա-
տեն նզովուած բաներէն գողցուած եւ պահուած
բան կայ իրենց մէջ. Ու Յեսու Աստուծոյ հրա-
մանին համեմատ վիճակ ձգելով՝ Յուդայի ցե-
ղէն Աքար անուն մէկուն վերայ ելաւ, որ քանի
մը ծանրագին բաներ գողցած ու իր վրանին
մէջ պահած էր. եւ որ իր բերնովն ալ խոստովա-
նեցաւ. Ուստի Աքարը եւ ընտանիքը (թերեւս
մեղսակից ըլլալնուն համար) եւ անոնց ունեցած-
ները ձորի մը մէջ տանելով քարկոծեցին. եւ այն
տեղւոյն անունն ալ Աքորի (նեղութեան կամ
խռովութեան) ձոր բանեցաւ. Ետքը Աստուծոյ
հրամանովը վերստին Գայի վերայ գնացին ե-
րեսուն հազար մարդով. եւ քաղաքը առնելով կրա-
կի տուին եւ բոլոր մէջի եղածը ջարդեցին եւ ա-
նոնց թագաւորն ալ կախեցին. Այս յաղթու-
թիւններէն յետոյ Յեսու՝ Գեբաղ լերան վերայ
սեղան մը շինեց Աստուծոյ, եւ այն սեղանին քա-
րերուն վերայ գրել տուաւ օրէնքները, եւ Գե-
բաղ ու Գարիզին լերանց վերայ կարդալ տուա-
ւ այն անէծքները ու օրհնութիւնները, ինչպէս
որ այս ամենը պատուիրած էր իրենց Մովսէս.

## ԳԼՈՒԽ Բ.

1. Գաբաւոնացիք խաբէութեամբ ուխտ կը դնեն Իսրայէլի հետ։ 2. Հինգ թագաւորաց պատերազմը։ 3. Յեսուայ ուրիշ յաղթութիւնները։ 4. Երկրին բաժանումը վիճակաւ։ 5. Երկուք ու կէս ցեղին մարդոց իրենց տեղը դառնալը։ 6. Յեսուայ և Եղիազար քահանայի մահը և Յովսէփայ ոսկերաց թաղումը։ (Յեսուայ. Թ—ԻԴ)։

1. Իսկ Քանանացւոց ազգերը լսելով Իսրայէլացւոց ըրած յաղթութիւնները, նիզակակցութիւն մը ըրին իրարու հետ, որ միաբանութեամբ Իսրայէլացւոց դէմ ելլեն։ Անոնցմէ Գաբաւոնացիք որ թէպէտ և զօրաւոր ժողովուրդ մը էին, այլ հասկնալով որ անոնք յաղթութին՝ այս դաշնակցութեան մէջ չմտան և ինքզինքնին ազատելու համար հնարք մը մտածեցին այսպէս։ Պատգամաւորներ ղրկեցին Իսրայէլացւոց, որոց հագուստները պատառուած, կօշիկնին հինցած և ջրերնուն տիկերը կարկտած և չորցած հացեր պարկերնուն մէջ դրած էին, որպէս թէ շատ հեռու երկրէ կու գային։ Անոնք Յեսուայ ներկայանալով համոզեցին թէ՝ իրենք հեռու երկրէ ժողովուրդի մը պատգամաւորներն են, որք լսելով իրենց յաղթութիւնները և մեծ անունը՝ կուզեն դաշնակից ըլլալ իրենց հետ։ Յեսու հաւատաց անոնց բանին. և Աստուծոյ չհարցուցած՝ բարեկամութեան դաշինք դրաւ անոնց հետ. և իշխաններն ալ այս բանին համար երդում ըրին։ Իսկ երեք օրէն յետոյ թէև իմացան իրենց խաբուած ըլլալը, այլ երդումնին ալ չխնայելով աւրել. Յեսու զիրենք դատապարտեց՝ որ Իսրայէլի

բանակին և Տէրոջը խորանին ջրկիր և փայտա-կոտոր ըլլան ։

2. Իսկ Երուսաղէմայ Ադոնիսեդեկ թագա-ւորը երբ լսեց Գաբաւոնացւոց անձնատուր ըլլալը, ուրիշ չորս թագաւորներ ալ հետն առած անոնց վրայ պատերազմի ելաւ և Գաբաւոնա-ցիք Իսրայելացւոց դիմեցին ։ Նոյն ատեն Յեսու Աստուծոյ հրամանաւը գիշերանց ճամբայ ելաւ և առաւօտուն Գաբաւոնի քովերը յանկարծ վրանին յարձակեցաւ, որք շատ մարդ կորսն-ցնելէ ետքը յաղթուելով՝ սկսան փախչիլ ։ Եւ փախչելու ատեններին ալ Աստուած խոշոր քարե-րու պէս կարկուտ մը տեղաց անոնց վրայ, որ ատով մեռնողները՝ սրով ջարդուածներէն աւելի եղան ։ Թէ և Իսրայելացիք այսպիսի յաջողու-թեամբ պատերազմը յառաջ կը մղէին, բայց Յե-սու տեսնելով որ ժամանակը քիչ է, և գիշերը հասնելով յաղթութիւնը անկատար պիտի մնայ, ուստի արեւուն ու լուսնին ըսաւ որ իրենց հա-սած տեղը կեցան Տէրոջը հրամանաւ, մինչև որ բոլորովին յաղթեցան հինգ թագաւորները, և փախչելով այրի մը մէջ պահուըտեցան ։ Եւ Յեսու զանոնք հոն տեղէն բերել տալով սպան-նեց, և անոնց մարմինները մինչև երեկոյ կա-խել տալէն յետոյ, նոյն այրին մէջ ձգել և բե-րանն ալ քարերով գոցել տուաւ ։

3. Իսրայելացւոց այսպէս յաղթութիւնե-րով յառաջանալը տեսնելով Հասորի Յաբին թա-գաւորը, իր հետ միաբանեց Քանանացւոց մնա-

ցեղ ազգերը. և ամէնը մէկէն շատ զօրք և մեծ պատրաստութեամբ եկան Մարօնի ջրին քով բանակեցան. Յեսու Աստուծմէ քաջալերուած՝ յարձակեցաւ անոնց վրայ և յաղթեց և 'ի սպառ ջնջեց զանոնք. և անոնց պատերազմական կառքերը այրեց ու թագաւորներն ալ սպաննեց. Իսրայէլացիք այսպէս շատ յաղթութիւններ ընելով, վեց տարուայ մէջ Քանանացւոց երկրին մեծ մասին տիրեցին և անոնց բնակիչները ջնջեցին.

4. Ասոր հետեւ Յեսու Աստուծոյ հրամանաւ սկսաւ վիճակով բաժնել երկիրը Իսրայէլի ինն ու կէս ցեղերուն. Այս բաժանման մէջ էին նա և դեռ չնուաճուած երկիրները, որոնք ո՛ր ցեղի բաժնին որ իյնային՝ նուաճելը զինքն՝ անոր վրան ըլլային. Յեսու՝ Եղիազար քահանայապետին ու ժողովրդոց ցեղապետներուն հետ ամէն մէկ ցեղին տեղերը որոշեցին. Թէև տեղերու բարութեան մասին բաւական դժկամակութիւններ ալ եղան, այլ կարելի եղածին չափ ամէնքն ալ գոհացուցին. Ղեւտացիք ալ որ մասնաւոր տեղ մը չունէնային, բոլոր ցեղերուն մէջ ցրուեցին՝ քառասուն ու ութը քաղաք տալով իրենց. և ապաստանի համար ալ քաղաքներ որոշեցին, ըստ տրամադրութեան օրինաց. Իսկ Քէբրոնը Քաղէբայ տուին ըստ հրամանի Տեառն. և Յեսուայ ալ ըստ իւր խնդրանաց Եփրեմի լերան վրայ Թամնաթսարան տուին որ քաղաք շինեց ու հոն բնակեցաւ. Վկայութեան խորանն ալ Եփրեմի ցեղին մէջ Սելով քա-

զօրքը տարին, որ թէեւ քանի մը անգամ փոխադրուեցաւ, այլ հաստատ անցքը հոն էր մինչեւ յաւուրս Սամուէլի։

5. Այսպէս երբ երկիրը խաղաղեցաւ, Յուբէնի, Գադայ եւ Մանասէի կէս ցեղին մարդիկը՝ որք իրենց եղբայրը օգնելու եկած էին, Յեսուայ օրհնութիւնը առնելով դարձան իրենց անցքը Յորդանանու միւս կողմը, եւ հոն անոնք մեծ սեղան մը շինեցին։ Միւս ինն ու կէս ցեղերը այս բանը խանտալով, կարծեցին թէ անոնք բաժնուելու միտք ունին, ուստի սկսան խորհուրդ ընել, որ անոնց վերայ պատերազմի երթան։ Սակայն նախ պատգամաւորութիւն մը ղրկեցին այն սեղանին շինութեանը պատճառը հարցնելու. անոնք ալ պատասխանեցին թէ՝ այն սեղանը ոչ թէ պաշտաման կամ զոհի համար, հապա անոր համար շինեցինք որ միշտ ետքը եկողներուն յիշեցնենք, թէ մենք ձեզի հետ եղբայր ու մէկ ազգ ենք։ Այս որ լսեցին պատգամաւորքը՝ ուրախացան հանդարտութեամբ ու տեղերնին դարձան. եւ այն սեղանին անունն ալ Վկայութեան կոչեցին։

6. Այս բաներէն ետքը երբ Յեսու ծերացաւ, Իսրայէլի ծերերը իւր քովը կանչեց, եւ յիշեցնելով Աստուծոյ իրենց ըրած բարերարութիւնները, խրատեց եւ յորդորեց զիրենք որ զգուշայ թէ կռապաշտներուն հետեւելով աստուածապաշտութիւնը թողուն, որով Աստուծոյ երեսէն ալ իյնան եւ թշնամեաց ձեռք մատնուին. եւ իրենցմէ երդմամբ խօսք առաւ որ յաւիտեան

իրենց Տէր Աստուածը պաշտեն ։ Եւ այս ամեն խօսքերը Տէրոջը օրինաց գրքին մէջ գրելէ ետքը, մեծ քար մը առ կանգնեց Վկայութեան խորանին քով բեւեկնիին ներքեւ՝ ի յիշատակ այս երդման ։ Եւ Յեսու հարիւր տասը տարեկան մեռաւ , և Թաղեցաւ իր շինած քաղաքին մէջ ։ Յեսու ինքն գրեց Սուրբ Գրոց մէջ իր անունով եղած գիրքը ։ Այս միջոցներուն՝ Թերեւս և Յեսուէն առաջ մեռաւ և Եղիազար քահանայապետը և Թաղեցաւ Եփրեմի լեռը , իր որդւոյն Փենեհէսին տրուած բլուրին վրայ ։ Յովսէփայ ոսկորներն ալ Թաղեցին Սիւքէմի մէջ Յակոբ նահապետի տուած ագարակին մէջ , որ Յովսէփայ որդւոց ժառանգութիւնն եղաւ ։

## ԳԼՈՒԽ Գ.

1. Իսրայէլացւոց ըրած պատերազմները ։ 2. Իրենց [illegible] ։ 3. Բենիամինի ցեղին ջարդուելը ։ 4. Միքայի շինած դրօշեալը ։ 5. Իսրայէլացւոց կռապաշտութիւնը և Դատաւորք ։ 6. Գոթոնիէլ . Աւովդ . Սամեգար ։ (Դատ. Ա—Գ. և ԺԷ—ԻԱ.)

1. Թէեւ բոլոր երկիրը բաժնուած՝ այլ դեռ ամեն տեղը նուաճուած չըլլալով . Յեսուայ մեռնելէն ետքը Աստուծոյ հրամանաւ նախ Յուդայի ցեղը ելաւ պատերազմելու ։ Ասոր Շմաւոնի ցեղին հետ միանալով՝ Քաղէբի առաջնորդութեամբ Քանանացւոց ու Փերեզացւոց վրայ ելան , և Բեզեկ քաղաքին մէջ տասը հազար մարդ կոտորելով՝ անոնց Թագաւորն Ադոնիբեզեկը ձեռբակալ ըրին , և անոր ոտքին ու ձեռքին մեծ մատները կտրեցին , ինչպէս որ ինքն ալ ըրած էր ուրիշ Թագաւորներու ։ Իսրայէլի միւս ցեղերն

ալ ամեն մէկը շատ յաղթութիւններ ըրին , և շրջակայ միացեալ ազգերուն շատին տիրեցին , բայց անոնց կռապաշտ բնակիչները բարբարոսին ջնջելով՝ իրենց հարկատու ըրին զանոնք : Ուստի և Աստուած հրեշտակ մը ղրկելով յանդիմանեց զիրենք և վճռեց թէ այն միացեալ ազգերը պիտի թողու և չպիտի ջնջէ , որպէս զի անոնցմով պատժէ զիրենք , միանգամայն յետագայ սերունդն ալ պատերազմ սորվի ու չթուլնայ : Իսրայէլացիք Աստուծոյ կամքէն ելած այս ազգաբարութեան վրայ հրեշտակին երեւցած տեղը զոհ մատուցին Աստուծոյ , և զղջալով իրենց ըրածին վրայ սկսան լալ . որով տեղւոյն անունն ալ Բոքիմ (լացողներ) կոչեցաւ :

2. Իսրայէլացւոց այս զղջումը և աստուածապաշտութիւնը այնքան տեւեց , որքան որ կենդանի էին Յեսուայ ժամանակակիցք , և Աստուծոյ սքանչելեաց ականատես մարդիկը . վասն զի անոնց մեռնելէն յետոյ՝ սկսան տեղւոյն կռապաշտ ազգաց հետ խառնակութիւն ընել և կռապաշտութեան մէջ իյնալ : Անկէ ի վեր նաև այս միջոցներուն Իսրայէլացւոց մէջ գերագոյն իշխանութիւն և իշխան մը չկար , ինչպէս էին Մովսէս և Յեսու , ուստի ամեն մարդ իւր սրտին ուզածը կ՚ընէր : Միայն պէտք եղած ատեն ընդհանուր ժողովներ կ՚ընէին Սելովայ , Սիւքէմ և կամ Մասփայի մէջ , քահանայից և ցեղապետաց առաջնորդութեամբ : Այս միջոցներուն պատահած են և յետագայ դէպքերը :

3. Ա. Ղեւտացիին մէկը իւր հարճին հետ Բենիամինի Գաբաա քաղաքը երթալով գիշեր մը հոն կեցաւ իւր մէկ բարեկամին տուն։ Այն տեղւոյն անզգամներէն անօրէն մարդիկ, եկան տունը պաշարեցին եւ անոր հարճը բռնի դուրս հանելով չարաչար լլկեցին զանիկայ եւ մեռաւ։ Հետեւեալ օրը Ղեւտացին տանելով իր հարճը մեռելը՝ եկաւ իւր տեղը գնաց, եւ անդամ կտրտելով բաշխեց ընդհանուր ազգին։ Այս մեծ եղեռնագործութիւնը լսելով Իսրայելացիք, անմիջապէս մեծ ժողով մը գումարեցին Մասփայի մէջ եւ պատգամաւոր ղրկեցին Բենիամինի մարդոց, որ կամ՝ չարագործները յանձնեն եւ կամ պատերազմին։ Բայց Բենիամինի ցեղը պաշտպան կենալով Գաբաացւոց՝ պատերազմի պատրաստուեցին։ Ասոր հետեւութիւնն այն եղաւ որ երկու կողմէն բազմաթիւ մարդիկ մեռնելէ յետոյ Գաբաա քաղաքը աւերուեցաւ եւ այրուեցաւ, եւ բոլոր Բենիամինի ցեղը ջարդուելով՝ վեց հարիւր հոգի հազիւ կրցան Ռեմմոնայ վէմ մը փախչիլ ու ազատիլ։ Իսրայելի միւս ցեղերը գրեթէ սարսափած ըլլալով երդում ըրած էին թէ՝ իրենցմէ մէկը աղջիկ չտայ Բենիամինի ազատուող մարդոց. բայց երբ պատերազմին լման՝ զղջացին իրենց ըրած չափազանցութեանը վրայ։ Ասոր երբոր Յաբէս քաղաքի մարդիկը կոտորեցին իրենց հետ պատերազմի եկած չըլլալնուն համար, այն ատեն ազատեցին որ Յաբիսացւոց աղջիկներն Բենիամինի ցեղէն մնացած մարդոց տան, եւ

յետոյ ուրիշ հնարքով մը Սելով քաղաքէն ու-րիշ աղջիկներ ևս առին, և անով վերստին հաստատուեցաւ Բենիամինի ցեղը։

4. Ե. Եփրեմի ցեղէն Միքա անուն մէկը կար որ արծաթէ դրօշեալ մը ու եփուտ մը շինել տալով իր տանը դրան, ու Ղեւտացի մը ալ գտաւ որ իրեն քահանայութիւն կ'ընէր։ Նոյն օրերն ալ Դանի ցեղին տեղը նեղ գալով, Սարաայէն և Եսթաւողէն լրտեսներ ղրկեցին որ երթան ուրիշ յարմար տեղ մը ալ գտնեն։ Նոյնք երթալու ատեն Միքայի տունը եկան և հոն տեսան Ղեւտացին հարցնելով իրենց յաջողութեանը համար՝ ճամբայ ելան, և Լայիս քաղաքը յարմար գտնելով՝ գացին իրենց ազգականաց իմացուցին։ Նոյն ատեն իրենցմէ վեց հարիւր սպառազինեալ կարիճ մարդիկ միաբանելով՝ նախ Միքայի տունը եկան, և յափշտակեցին անոր թէ դրօշեալն ու եփուտը և թէ Ղեւտացին, և յետոյ գացին Լայիս քաղաքը առին, ու իրենց ցեղին անուանը Դան կոչեցին, և այն Ղեւտացին ալ իրենց քահանայ դրին։ Այս պաշտամունքն ու քահանայութիւնը հոն մնաց, քանի որ Աստուծոյ տունը Սելովի մէջ էր։

5. Իսրայելացիք որչափ ատեն որ Աստուծոյ ծառայեցին, իրենց ազատութեան մէջ մնացին. անկայն երբ շեղեցան ազգաց հետ խնամութիւն ընելով կռապաշտութեան մէջ ինկան իրենց Աստուածն ալ զիրենք թողուց թշնամեաց ձեռք։ Սոյնպէս եղաւ Իսրայելացւոց ընթացքը մինչև

Սամուէլի ատենը . երբ Աստուծմէ կ'ապստամ_բէին , թշնամեաց ձեռք կը մատնուէին . և երբ կը զղջային և Աստուծոյ կը դիմէին , Աստուած ալ կ'ողորմէր՝ մէկը կը յարուցանէր որ մէկ կամ քանի մը ցեղի և կամ բոլոր Իսրայէլի դատաւո_րութիւն ընելով կ'ազատէր զիրենք թշնամեաց ձեռքէն . Ասոնք Դատաւորք կոչուեցան , և ցեղերու դատաւորութիւն կ'ընէին , թէև օրէնսդրական և քաղաքական իշխանութիւն մը և ժողովուրդէն հաս մը կամ իրաւունք մը չունէին .

6 . Եւ ահա այս անգամ Իսրայէլացիք կռա_պաշտութեան հետեւելնուն համար Աստուած զիրենք թողուց որ Միջագետաց Քուսարսա_թեմ թագաւորին ձեռքին ընկան ութ տարի . այլ երբ դարձան ու զղջացին , Քաղէբի եղբօր_որդւոյն Գոթոնիէլի ձեռքով ազատեց զիրենք . Գոթոնիէլ քառասուն տարի դատաւորութիւն ընելով երկիր մնաց . վերստին կռապաշտու_թեան մէջ ընկան Իսրայէլացիք . ու ասոր Աստուած ալ զիրենք մատնեց Մովաբացւոց Եգղոմ թա_գաւորին ձեռքը՝ տասն ու ութ տարի : Ասոր քրած հարստահարութենէն չկրնալով Իսրայէլա_ցիք՝ զղջացին և առ Աստուած դարձան , որ գթացաւ իրենց վրայ , և Բենիամինի ցեղէն Աւոդ անուն մէկուն ձեռքով ազատեց զանոնք :

Աւոդ օր մը Եգղոմ թագաւորին ընծայ տանելու ատեն , մէկ թիզուկ երկայնութեամբ երկսայրի սուր մը վերարկուին ներքև պահեց . Եւ ընծաները տալէն ետքը՝ առանձին խօսք մը

պատրուակելով թագաւորին մօտը գնաց, որ իւր քովի մարդիկները դուրս հանելով երբ մինակ մնացին․ Աւովդ խօսքի բռնեց զԵգղոմ թագաւորը, և յանկարծ սուրը քաշելով՝ կուշտն զարկաւ անիկայ, որ արդէն գէր ու դանդաղ մէկն ըլլալով՝ անմիջապէս գետինը փռուեցաւ։ Իսկ Աւովդ աճապարանօք սուրն ալ հոն թողելով՝ սենեակին դուռը գոցեց, ու պատուհանէն ցատկելով փախաւ։ Թագաւորին ծառաները խել մը ատեն սպասելէ ետքը անհամբերեցան դուռը բանալ, և տեսան որ անիկայ զարնուած ու մեռած էր․ և երբ անոնք այս բանին վրայ շփոթած էին, Աւովդ կրցաւ փախչիլ ու Եփրեմի լեռը անցնիլ։ Հոն անդ անմիջապէս մարդ ժողվեց ու Մովաբացւոց վրայ յարձակեցաւ, և անոնցմէ տասը հազար հոգի կոտորելով՝ յաղթեց և Իսրայէլացիները ազատեց անոնց լուծէն։ Ասով հանդարտացաւ երկիրը ութսուն տարի։

Աւովդի վերջին տարիները Փղշտացիք յարձակեցան Իսրայէլի երկիրը․ բայց Անաթեան Սամեգար՝ եզներու խթանով մը վեց հարիւր հոգի սպաննեց անոնցմէ, և Իսրայէլը ազատեց։

## ԳԼՈՒԽ Դ.

1. Դեբորա և Բարակ։ 2. Գեդէոն։ 3. Իւրին գործերը։ 4. Յաղթութիւնը։ 5. Իրեն թագաւորութիւն կ'առաջարկուի ու չընդունիր։ 6. Հռութ։ (Դատ. Դ.—Ը. Հռութ. Ա.—Դ.)

1. Աւովդէ ետքը Իսրայէլացիք վերստին չարութիւն ըրին, և Աստուած մատնեց զիրենք Քանանացւոց Յաբին թագաւորին ձեռքը որ

կը թագաւորէր Հռոմի մէջ, և շատ զօրաւոր էր ու շատ կը նեղէր զՀրեաները. ուստի սկսան աղաչել զԱստուած որ զիրենք փրկէ.

Այն ատենները Իսրայէլի մէջ Դեբորա անուն մարգարէուհի մը կար որ Եփրեմի լեռը կը նստէր, և վէճ մը կամ խնդիր մը ունեցողները անոր կը դիմէին, որ իրենց դատաստանը կը տեսնէր. Ասիկայ իւր քովը կանչեց Աբինէեմի որդին Բարակը որ Նեփթաղիմի Կադէսին մէջ կը նստէր. և Աստուծոյ կողմանէ յայտնեց անոր որ զօրք ժողվէ, ու Սիսարային դէմ (որ Յաբինի թագաւորին զօրավարն էր) պատերազմի երթայ և անշուշտ պիտի յաղթէ. Բարակ այս բանին առանձին ձեռք զարնելու փոխանակ Դեբօրային աղաչեց որ ինքն ալ հետը գայ. ան ալ խոստացաւ երթալ. Ուստի Բարակ Նեփթաղիմի ու Զաբուղոնի ցեղերէն տասն հազար մարդ ժողվելով Թաբօր լեռը գնաց. Իսկ Սիսարա իւր բոլոր զօրքերովը ու ինն հարիւր պատերազմական երկաթի կառքերովը Կիսոնի հեղեղատը եկաւ։ Բարակ՝ Դեբօրային բանին համեմատ անոր վերայ պատերազմի յարձակելով, Աստուած այնպէս երկիւղ մը ձգեց անոնց սիրտը որ շփոթելով սկսան փախչիլ. Ու Բարակ իւրիններովը ետեւնէն իյնալով զամէնքը կոտրեց. Իսկ Սիսարա իւր գլուխն ազատելու համար փախչելով եկաւ Կինեցւոց[1] կողմը, ուր տեղ Հաբերի կի-

1 Կինեցիք ըսուած ժողովուրդ մը էին և Մովսէսի կնոջը կողմէն Իսրայէլացւոց խնամի ու բարեկամ. և եկեր այն կողմերը կը բնակէին. բայց ազգայնոց հետ ալ թշնամի չէին.

նը Յայէլ՝ զանիկայ պահեց իր վրանին մէջ. Բայց Սիսարայ յոգնած ըլլալով երբ հոն անկ-ղին սկսաւ քնանալ. Յայէլ վրանին ցիցը առաւ և ուռալ մը զարնելով անոր ծնօտը գետնին գա-մեց ու այնպէս մեռցուց զանիկայ. Այսպիսի յաղթութեամբ Աստուած զԻսրայէլացիքը ազա-տեց որ անկէ յետոյ քառասուն տարի հանգիստ մնացին. Դեբորայ ալ Բարակի հետ ՚ի միասին շնորհակալութեան երգ մը երգեցին Աստուծոյ այս յաղթութեան համար. (Դատ. Ե. 1—31).

2. Այսուհետեւ Իսրայէլացիք վերստին կռապաշտութեան հետեւելով՝ Աստուած ալ թողուց զիրենք որ Մադիանացւոց. Ամաղէկաց-ւոց և ուրիշ Արաբացի ազգերու ձեռք մատնը-ւեցան. և այնչափ նեղութիւն կը քաշէին ա-նոնցմէ, որ բնակութիւննին թողլով անտառաց մէջերը քաշուիլ սկսեցան ու երկիրը բոլորո-վին աղքատացաւ. Իսրայէլացիք այս նեղութիւնը եօթն տարի կրելով՝ վերստին Աստուծոյ դիմեցին ու զղջացան իրենց չարութեան վրայ. Աստուած ալ գթալով, նախ մարգարէ մը ղրկեց որ եկաւ յանդիմանեց զիրենք ու խրատեց. Յետոյ հրեշ-տակ մը ղրկեց Մանասէի ցեղէն Գեդէօնին, որ եկաւ յայտնեց անոր թէ Աստուած զքեզ ընտրեց որ զԻսրայէլացիները ազատես իրենց թշնամի-ներէն. Գեդէօն սկսաւ զարմանալ թէ ես ան-նշան և անկարող մէկն ըլլալով ինչպէս պիտի կարենամ՝ այս գործը ՚ի գլուխ հանել. ասոր վե-րայ հրեշտակը սկսաւ քաջալերել զանիկայ. Գե-

դէօն ալ խնդրեց որ իրեն նշան մը տայ այս բանին համար , աղաչելով միանգամայն որ չերթայ անկէ մինչեւ որ իրեն համար կերակուր պատրաստէ ։ Գեդէօն երբ հոն ու կերակուր բերաւ , հրեշտակը ըսաւ որ զանոնք հոն եղող քարին վրայ դնէ . ու ինքը ձեռքի գաւազանը անոնց դպցնելով , քարէն կրակ մը ելաւ ու բոլորը այրեց և ինքը անմիջապէս աներեւոյթ եղաւ . այն ատեն Գեդէօն իմացաւ որ անիկայ Տէրոջը հրեշտակն էր . ուստի հոն սեղան մը շինեց , և անունը դրաւ Եհովաշալօմ (խաղաղութիւն Տեառն) ։

3 · Նոյն գիշերը Աստուած Գեդէօնի հրամայեց որ իր հօրը պաշտած Բահաղ կուռքին սեղանը քակէ , և անոր քովի անտառը որ Բահաղու նուիրուած էր՝ կտրէ , և նոր սեղան մը շինելով անոր վրայ ողջակէզ մատուցանէ իր հօրը պարարտացուցած մէկ եօթնամեայ եզը ։ Գեդէօն ալ իր հօրը ծառաներէն տասն հոգի առնելով գիշեր ատեն գնաց ըրաւ Աստուծոյ ըսածին համեմատ ։ Առաւօտուն տեղացիք տեսնելով եղածը , և իմանալով որ Գեդէօն է ըրած , ուզեցին զինքը մեռցնել . Բայց անոր հայրը Յովաս ապառեց զանոնք ըսելով որ «Եթէ Բահաղ կարող էր , թող ինքն իր վրէժն առնէր , ձեզ ինչ փոյթ . միթէ դո՞ւք պիտի պաշտպանէք զինքը» . և այս պատճառաւ Գեդէօնի անունը կոչեցաւ Յերուբահաղ (Բաալը թող զինքը ջատագովէ) ։

4 · Այն օրերը Գեդէօն տեսնելով որ Թշնամիք վերստին Իսրայէլացւոց վրայ եկեր են ,

ինչն ալ Աստուծմէ զօրանալով իր աղգականնե-
րը և ուրիշ ցեղերէն ալ մարդիկ ժողվեց, որ Իշմայէլեան վրայ երթայ. Բայց իր ձեռքը ազատութիւն ըլլալէն հաստատ դիմանալու հա-
մար Աստուծմէ օգնութիւն խնդրեց որ գզաթ մը գիշերը դուրսը դնէ և միայն անոր վրայ անձրեւ գայ. և այնպէս եղաւ. յետոյ վերստին խնդրեց Աստուծմէ որ միւս գիշեր գզաթը չոր մնայ, և ուրիշ տեղեր անձրեւ գայ. որ ա-
նանկ ալ եղաւ. Ասոր քաջալերութիւն փառաւորու-
թով՝ իր հետ եղող երեսուն երկու հազար մար-
դիկը առաւ և Հարոդի աղբիւրին քով բանակե-
ցաւ Իշմայէլեան հարաւային կողմը. Սակայն չը-
լլայ որ Իսրայէլացիք կարծեն թէ իրենց զօրու-
թեամբը ազատեցան. Աստուած հրամայեց Գե-
դէոնի բարձր կարդալ զօրաց մէջ. որ ամեն երկ-
չոտ եղողները իրենց տեղը երթան. որով տասը հազար հոգի մնացին. Աստուած դարձեալ հրա-
մայեց որ ժողովուրդը ջրին եզր տանի. և ծունկի վրայ գալով ջուր խմողները միայն հետն առնէ ու միւսները ձգէ. որով վերջա-
պէս երեք հարիւր հոգի մնացին. Գեդէոն Աս-
տուծոյ ազդեցութեամբը իր ծառային հետ գիշեր ատեն Իշմայէլեան բանակին ալ գնաց. և հոն տեղ լսեց որ երազներնին իրարու կը պատմէ-
ին և այնպէս կը մեկնէին թէ Գեդէոն իրենց վրան յաղթէ. Ասոր վրայ դարձաւ Գեդէոն. և իր մարդիկը երեք գունդի բաժնելով ամեն մէկուն ձեռքը եղջերեայ փող. և մէջը ճրագներ

զրած մէյմէկ տախտակ տուաւ, և պատուիրեց որ ինքն ինչ որ ընէ իրենն համարին։ Նոյնպէս կէս գիշերուան յանկարծակի գալին թշնամեաց բանակը կոխեցին, ու փախչողներին չափերով տախտակները կարդացին, որով ծրագրները երեւցան և ձեռամբ տարածուեցաւ։ — Տէրն և Գեդէոն։ Նոյնպէս որ բռնին. Նաւուած այնպէս շփոթութիւն մի ձգեց թշնամեաց մէջ որ գիշեր տանն շփոթած իրար ճանչելէ՝ ձեռամն մէկզմէկ կոտորել ու փախչիլ։ Գեդէոն մարդ զրկեց Եփրայիմեանց որ թշնամեաց փախչելու ճամբան ալ կտրեցին ու բոլոր փախչողները մեռցունելով անոնց երկու իշխաններն ալ Օրէբ և Զէբ սպաննեցին։ Գեդէոն ալ Մադիանացիներուն ետեւէն իյնալով յաղթեց և երկու թագաւորներին Զեբէէն ու Սաղմանան ալ ինքը սպաննեց, և այսպէս Տէրը ազատեց Իսրայէլը Գեդէոնի միջոցաւ։

5. Թէպէտ և գտնուեցան անանկ ապաշնորհ քաղաքացիք որ Գեդէոնի զօրաց հաց տալու անգամ՝ զլացան, երբ անոնք քաղցեալ ու յոգնած կը հալածէին թշնամին, այսու ամենայնիւ ընդհանուր ազգը մեծապէս շնորհակալութեամբ ճանչցաւ անոր ձեռօք եղած ազատութիւնը, որ անոր թագաւորութիւն առաջարկեց, յորմէ խոյս հրաժարեցաւ Գեդէոն. միայն թէ խնդրեց որ թշնամեաց աւարէն առնուած ակին օղերը իրենն տան, որոնք յօժարութեամբ տուին նաև ուրիշ բաներ ալ։ Յետոյ Գեդէոն անոնցմով եփուտ մի շինեց իւր Եփրա

քաղաքին մէջ, որ ժամանակէ մը ետքը շատե-րուն մեղաց պատճառ եղաւ. Թէեւ ինքը ճշմա-րիտ աստուածապաշտ էր եւ զաւակաց պարզմտու-թեամբ շինած էր։ Այս յաղթութենէն զկնի Գեդէօն քառասուն տարի եւս ապրեցաւ եւ բա-րի ծերութեամբ մեռաւ. Իր այս քառասուն տա-րուան մէջ Իսրայէլացիք Աստուծոյ ծառայեցին, եւ բնաւ թշնամի մը զիրենք չնեղեց.

6. Այն միջոցներուն եւ բառ ուրիշ աւելի եղերը պատահած է եւ Հռութայ պատմութիւնը.

Իսրայէլի երկիրը սով մը ըլլալով՝ Յուդայի ցեղէն Բեթղեհեմացի Եղիմելէք անուն մէկը՝ իր կինը Նոեմին՝ եւ երկու որդիքը Մաալոն եւ Քելիոնը առնելով՝ Մովաբացւոց երկիրը գնաց որ հոն տեղ ապրի. Շատ ատեն չանցաւ՝ այս մարդը մեռաւ. իր որդիքն ալ որ հոն տեղ Մովաբացի աղջիկներ առած էին, անոնք ալ մեռան տասը տարիէն յետոյ՝ առանց զաւակ թողելու. Նոեմի որդին ցաւէն չուզելով այլ եւս հոն մնալ, եւ լսելով որ Իսրայէլացւոց երկիրն ալ շատցեր է, ուզեց որ հարսներն իրենց հօրը տունը դրկէ ու ինքը դառնայ իր երկիրը. Նոցմէ մէկը Որփա անուն վերջապէս հաւանե-ցաւ դառնալ. բայց միւսը Հռութ չուզելով երբէք զատուիլ իր կեսրոջմէն, անոր հետ մեկնեցաւ Բեթղեհեմ եկաւ գարիի հնձոց ատենը. Այն ատեն Հռութ կեսրոջմէն հրաման ու-զեց որ երթայ արտերուն մէկուն մէջ աշխատի.

1 Հաճելի.

և անունն գիտեցաւ որ եկաւ Յովսէփ այստր. որ Իսրայէլի ազգականներ էր. Գեդէօն խնամելով [illegible]թայ մը բերել՝ յատուկ խնամք ունեցաւ թէ անոր և թէ Մադիամի մերոյ. [illegible] երբ դար-ձաւ և եղբայրները սպաննեց, Մադիամ շատ ու-րախացաւ և խոստացաւ որ Գեդէօնի հետ ամեն-նայնոյ, և բառ օրինաց՝ իրենց ցեղին ժառանգ-ութեանց. Գեդէօն այս բանը խնամելով՝ ընդունեց. այլ պաշտօնը աւելի մեծ ազգականի մը ալ կար որուն կ'իյնար [illegible]ը առնել. Գեդէօն անոր ա-ռաջարկեց. և երբ անիկայ հրաժարեցաւ, այն ա-տեն Գեդէօն առաւ [illegible]ը. ուրիշ որդի մը ծնաւ զոր Աբիմելէք կոչեցին. որուն թոռն էր Դաւիթ.

## ԳԼՈՒԽ Է.

1. Աբիմելէքի չարութիւնն ու թագաւորելը. 2. մահը. 3. Թով-ղա և Յայիր. 4. Յեփթայէ. 5. Յեփթայէի աղջիկը. 6. Եփրե-մեանց ջարդուիլը. 7. Աբեսսան. Եղոն. Աբդոն. (Դատաւ. Թ—ԺԲ.)

1. Գեդէօն իր առած կիներէն եօթանասուն որդի ունեցաւ. նաև Սիւքէմի մէջ ունե-ցած իր մէկ հարճէն ալ Աբիմելէք անուն որդի մը ունէր. Նախկին Սիւքէմացւոց սիրտը գրաւ-եց, որոնք զինքը իրենց իշխան ըրին, որ իր իշխանութիւնը ապահովելու համար Սիւքէմա-ցւոցմէ առած ստակովը (որ Բահաղ Բերիթի կռատունէն առած էին.) շատ մը ապիկար մար-դիկներ վարձեց ու գնաց իր հօրը տունը ու իր եղբայրը սպաննեց. և միայն ամենէն պզտիկը Յովաթամը կրցաւ փախչիլ ու ազատիլ. Ասոր-հետև Սիւքէմացիք և ուրիշներ ալ միաբանե-

ցան և Աբիմելէքը իրենց վրայ թագաւոր դրին ։ Յովաթամ տեսնելով գնաց անոնց դիմացը Գարիզին ըսուած լերան վրայ , և հոն տեղ բարձր ձայնով պատշաճ ու խորհրդաւոր առակ մը խօսելով , իր հօրը դէմ ունեցած ապաշնորհութիւնին և ատոր համար կրելիք պատիժներին յայտնեց ու փախաւ ։

2. Աբիմելէք երեք տարի չափ թագաւորելէ զկնի Սիքեմացիք որոնք իրենց թագաւորին եղեռնագործութեան մասնակից եղած էին , սկսան օր քան օրէ ցրտանալ իրմէ . և վերջապէս Գաաղ անուն իշխանին առաջնորդութեամբ իրեն դէմ ելան ։ Աբիմելէք իր զօրքերովը անոնց վրայ գնաց ու յաղթեց , և քաղաքը կործանեց և անոր մէջ եղած աշտարակն ալ այրեց , ուր ապաստանած էին Սիքեմացւոց շատերը ։ Ասկէ ետքը Թեբէս քաղաքին վրայ գնաց որ անոնք ալ իրեն դէմ ելեր էին . հոն ալ քաղաքին մէջ ամուր աշտարակ մը կար , ուր տեղ ապաստանած էին տեղացիք . Աբիմելէք աշտարակին դրանը մօտեցաւ որ զանիկայ ալ այրէ , սակայն աշտարակին վրայէն կնիկ մը երկանաքարի կտոր մը ձգեց և անոր գագաթը կոտրեց ։ Այն ատեն Աբիմելէք տեսնելով որ պիտի մեռնի , շուտ մը իր կապարճակիրը կանչելով ըսաւ որ զինքը սպաննէ , որպէս զի չըսուի թէ կնիկէ մը սպաննուեցաւ ։ Ասանկով թէ ինքը և թէ Սիքեմացիք իրենց պատիժն առին ։

3. Աբիմելէքի մեռնելէն ետքը , Թովղայի

ցեղէն Փուայեան Թովլան դատաւորութիւն ըրաւ քսան երեք տարի. Անոր հետեւ Գաղաադացի Յայիրը քսան երկու տարի. ասիկայ երեսուն որդի ունէր, որք Գաղաադու մէջ երեսուն աւան ունէին.

4. Իսկ երբ որ Իսրայելացիք դարձեալ Աստուծմէ հեռացան, և սկսան գրեթէ ամէն շրջակայ ազգաց կուռքերուն ծառայել. ուստի Աստուած ալ մատնեց զիրենք Փղշտացւոց և Ամմոնացւոց ձեռքը. Իսրայելացիք տասն ութը տարի անոնց ձեռքէն շատ նեղութիւն կրելով վերջապէս Աստուծոյ դիմեցին. բայց Աստուած չլսեց իրենց. մինչեւ որ բոլորովին սրտով զղջալով՝ կռապաշտական բաները մէկ կողմ չթողուցին.

Այն ատենները Ամմոնացիք Իսրայելացւոց վրայ յարձակեցան դարձեալ. ուստի Գաղաադու իշխաններն ալ խորհրդակցելով՝ Տովբի երկրէն Յեփթայէն բերել տուեցին որ իրենց զօրավարութիւն ընէ. Յեփթայէ, Գաղաադայի հօր մը զաւակ էր. բայց իր հօրը տանը զինքը չընդունելով մերժած էին, և անկից ալ սրիկայ մարդիկ գլուխը ժողվելով աւազակութիւն կ՚ընէր. Յեփթայէ թէեւ ի սկզբան մերժեց Գաղաադացւոց առաջարկութիւնը՝ յիշեցնելով իրեն եղած անիրաւութիւնը. բայց երբոր երդմամբ հաստատեցին որ եթէ պատերազմին յաղթէ զինքը իրենց իշխան ընեն, ընդունեց ու գնաց Մասփա, ուր անդ ժողված էին Իսրայելացիք. Իսկ նախ Ամմոնացւոց թագաւորին պատգամա-

ւորներ ղրկեց որ Իսրայէլի երկրէն հեռանայ. և երբ տեսաւ որ անիկայ չընդունելով՝ կը պատրաստուի եւս յառաջ քալել. ինքն ալ այն ատեն Աստուծմէ շարժեալ՝ իրեն մարդիկներովը Ամմոնացւոց դէմ յարձակեցաւ, ու շարաչար յաղթելով շատ քաղաք ալ առաւ անոնցմէ:

5. Բայց Յեփթայէ պատերազմի երթալու ատեն՝ առանց խորհրդածութեան և եռանդով մը ուխտ մը ըրաւ Աստուծոյ. թէ երբ յաջողութեամբ դառնայ իր տունը, ով որ առաջին անգամ իր դէմն ելլէ՝ զանիկայ ողջակէզ մատուցանէ Աստուծոյ: Եւ եղաւ որ երբ յաղթանակաւ կը դառնար իր տունը՝ ի Մասփայ, և ահա իր միայնակ միակ կոյս աղջիկը նախ դէմը ելաւ, որ ուրիշ աղջկանց հետ պար բռնելով և թմբուկ զարնելով ուրախութեամբ զինքը դիմաւորելու կու գար: Յեփթայէ երբ տեսաւ անիկայ՝ խռովեցաւ և իր լաթերը պատռեց, և «ով աղջիկս, դուն զիս բոլորովին նկուն ըրիր» ըսելով յայտնեց անոր իր ուխտը: Աղջիկն ալ քաջասրտութեամբ յանձն առնելով՝ «ով հայր իմ ըսաւ, թէ որ Տէրոջը երդում ըրեր ես, կատարէ զինծմով. միայն թէ խնդրեմ հրաման տուր և երկու ամիս թող տուր ինձ, որ լեռները երթամ, ու ընկերներուս հետ կուսութեանս վերայ լամ»: Հայրն ալ հրաման տուաւ իրեն. և երբ երկու ամիսէն աղջիկը դարձաւ, Յեփթայէ իր ըրած ուխտը անով կատարեց. և անիկայ երբեք մարդ չճանչցաւ: Այն ատենէն սովորու-

թիւն եղաւ որ Իսրայէլի աղջիկները ամէն տարի չորս օր ալ կ'լային Յեփթայէի աղջկան համար[1] ։

6. Իսկ Եփրեմի ցեղը որ Իսրայէլացւոց մէջ ամէնէն պատերազմասէր ցեղ մի էին, Յեփթայէի դէմ ելան ըսելով թէ ինչու զիրենք ալ պատերազմի չկանչեց ։ Բայց Յեփթայէ կը ջանար զանոնք համոզել. այլ տեսնելով որ անոնք հանդարտ չեն կենար ու սպառնալիք ալ կ'ընեն, վերջնին զօրք հանեց ու շատ մարդիկ ջարդել տուաւ անոնցմէ ։ Ու փախչողները որ Յորդանանու քով եղած կիրճէն մը պիտի անցնէին, բռնել կու տար. և Եփրեմի ցեղէն ըլլալնին փորձելու համար շիբօլէթ (հասկ) ըսել կու տար, և ով որ չէր կրնար ու սիբօլէթ կ'ըսէր, Եփրեմի ցեղէն ըլլալը կ'իմացուէր[2] և զանիկայ կը մեռցնէին. ասանկով քառասուն երկու հազար մարդ ինկաւ Եփրեմի ցեղէն. Յեփթայէ վեց տարի դատաւորութիւն ըրաւ ու մեռաւ ։

7. Անկէ ետեւ Բեթղէհեմացի Աբեսանը դատաւորութիւն ըրաւ եօթն տարի ։ Ասիկայ երեսուն աղջիկ և երեսուն մանչ զաւակ ունէր, որոց ամէնքն ալ կենդանութեանը ամուսնացուց ։

Անկէ յետոյ Զաբուղոնացի Եղոնը դատաւորութիւն ըրաւ տասը տարի ։ Յետոյ Փարաթոնացի Հելլէլեան Աբդոնը ութը տարի. ասիկայ ալ քառասուն որդի ու երեսուն թոռ ունեցաւ ։

---

1 Կը կարծուի թէ աղջիկը չզոհուեցաւ. այլ կուսութեամբ մէջ պահելով զանիկայ. որ շատ մեծ զոհ կը համարուէր այն ժամանակները երբ ամուսնութիւնն սերունդ նախատամբ մի էր ։

2 Քանանացիներն՝ ըսելու համար [illegible] վերայ ըրած [illegible] մի է ։

## ԳԼՈՒԽ Զ.

1. Սամփսոնի ծնունդը. 2. Առիւծ մը պատառելը. 3. Առիւծին բերնին մէջի փեթակը և անոր հանելուկը. 4. Սամփսոնի Փղշտացւոց ըրած վրէժխնդրութիւնը. 5. Իր քաջութիւնները. և դատաւորութիւնը. 6. Սամփսոն կը խաբուի և Փղշտացիք աչքերը կը կուրցնեն ու գերի կը տանին. 7. Իր վերջին քաջութիւնն ու մահը. (Դատ. ԺԳ—ԺԶ.)

1. Աբդոնմէ ետքը Իսրայելացիք դարձեալ չարութիւն ըրին Տէրոջը առջև, որ զիրենք Փղշտացւոց ձեռքը թողուց քառասուն տարի. Այն ատենները Դանայ ցեղէն Մանովէ անուն մէկ կար, որուն կինը ամուլ էր. Օր մը Տէրոջը հրեշտակը այս կնոջը գալով, յայտնեց թէ զաւակ մը պիտի ծնանի, այլ՝ պէտք է բնաւ զգուշ կենաս, գինի և օղի չխմես և անմաքուր բան մը չուտես. քանզի ծնանելիք տղադ յորովայնէ Աստուծոյ ուխտաւոր պիտի ըլլայ. և անոր գլուխը ածելի պիտի չելլէ. և որ պիտի սկսի Իսրայելը ազատել Փղշտացւոց ձեռքէն։ Մանովէ այս բանը իմանալով իր կնոջմէն՝ աղաչեց Աստուծոյ որ այն հրեշտակը կրկին անգամ ղրկէ, որպէս զի տղեկ մը խնամելուն իրենց ընելիքը. Աստուած ալ վերստին երևցուց հրեշտակը, որ պէտք եղածը խրատցուց իրենց. Յետոյ Մանովէ եփած ուլ մը բերաւ անոր. բայց անիկայ չուտելով, ըսաւ որ Աստուծոյ նուիրէ. Մանովէ երբ այն ուլը քարի մը վրայ դնելով Աստուծոյ զոհ կ'ընէր, հրեշտակը յանկարծ դէպ 'ի վեր ելաւ զոհին կրակին բոցովը, և աներևութացաւ. Մանովէ և իր կինը զգացին որ անտանկ շատ վախցան և իմացան թէ Տէրոջը հրեշտակն էր անիկայ. Այնուհետև ա-

տեղն որ եկաւ ։ Մանովէի կինը մինչ զաւակ մը ծնաւ, որուն անունը Սամփսոն կոչեցին ։ Նոյն տղան Աստուծոյ օրհնութեամբը մեծցաւ, ու շատ զօրաւոր եղաւ . և իր ծնողաց հետ Սարաա և Եսթաւոլ քաղաքներուն մէջ կը կենար ։

Սամփսոն օր մը Փղշտացւոց Թամնաթա քաղաքը երթալով՝ աղջիկ մը տեսաւ հոն, և տուն եկած ատեն խնդրեց իր ծնողացը թէ զանիկայ կ'ուզէ առնել ։ Ծնողք որ չէին գիտեր թէ այս բանը Տէրոջմէն է, որ առիթ պիտի բլլայ Փղշտացւոց պատժուելուն՝ շատ դէմ կեցան այս բանին . բայց Սամփսոնին ստիպելովը վերջապէս հաճութիւն տուին և հարսնախօսութեան համար ճամբայ ելան Սամփսոնին հետ Թամնաթա երթալու ։ Երթալու ատեննին Սամփսոն ճամբայէն խոտորելով այգիներուն մէջէն անցնելու ատեն, յանկարծ առիւծի մը ձագ իր դէմը ելաւ . Սամփսոն թէև ձեռքը բան մը չունէր, բայց Աստուծմէ ոյժ առած՝ զանիկայ բռնեց ու բերանը երկուք ճեղքելով մեռցուց և դարձաւ իր ծնողացը քով առանց բան մը ըսելու անոնց . և ճամբանին շարունակեցին ու Թամնաթա եկան ։ Հոն աղջկան ծնողացը հետ խօսք կապեցին և դարձան իրենց տեղը ։

3. Քանի մը ժամանակէ մը յետոյ երբ հարսանեաց համար Թամնաթա կ'երթային, Սամփսոն գնաց այն մեռցուցած առիւծը տեսնելու, և ահա անոր կմախքին մէջ մեղուները փեթակ դրեր էին . և Սամփսոն անոր մեղրէն առնելով սկսա-

ուտել և ծնողացն ալ տուաւ ։ Յետոյ Թամնա-թա հասնելով՝ սկսան հարսանիքը որ եօթն օր կը տեւէր ։ Հարսանեաց ուրախութեան ատեն Սամփսոն հանելուկ մը ըսաւ իւր ընկերներուն, խոստանալով որ եթէ գտնեն նոյն եօթն աւուր մէջ, իրենց ամեն մէկուն մէկ մէկ ձեռք հա-գուստ տայ. և թէ որ չկարենան գտնել՝ իրենք տան այնչափ հագուստ. և հանելուկն էր այս.

Ուտողէն ելաւ կերակուր. Զօրաւորէն ելաւ քաղցր.

Նոքա վերայ շատ աշխատելով երբ չկրցան գըտ-նել, գացին կնոջ Սամփսոնի հարսին և սպառ-նալեօք ստիպեցին զանիկայ որ Սամփսոնը խա-բելով խնդրէ հանելուկը և իրենց յայտնէ ։ Նա-կայ ալ շատ թախանձանօք կրցաւ Սամփսոնի բերնէն առնել և իրենց իմացընել ։ Ասոր ա-նոնք ալ Սամփսոնի ըսին.

Ի՞նչ քաղցր մեղրէն աւելի է.
Ի՞նչ զօրաւոր առիւծէն է.

Զայս որ լսեց Սամփսոն՝ իմացաւ եղած խաբէ-բայութիւնը և շատ բարկացաւ . ուստի շուտ մը գնաց Ասկաղոն քաղաքը , և հոն տեղ երեսուն Փղշտացի սպաննելով՝ անոնց հագուստը բերաւ իրենց և կինն ալ հոն ձգելով դարձաւ իւր հօրը տունը ։

4 . Սակայն երբ Սամփսոնի բարկութիւնն իջաւ , ուլ մը առաւ պարգև և ճամբայ ելաւ իւր կնոջը երթալու . բայց տեսնելով որ զանի-կայ ուրիշ մէկուն տուեր են իւր ուշանալուն համար , չափազանց նեղացաւ սիրտը և որոշեց

վրէժ առնել Փղշտացւոցմէ ։ Ուստի շատ մը աղուէսներ բռնեց եւ անոնց պոչերը զոյգ զոյգ իրար կապելով մէջտեղերնին ալ մէկ մէկ ջահ դրաւ բռնկցուց եւ այնպէս թող տուաւ զանոնք Փղշտացւոց արտերուն մէջ , որով անոնց բոլոր հունձքերը , այգիներն ու ծառերը այրեցան ։ Անոնց տիրապետները երբ իմացան թէ այս բանը Սամփսոնը ըրած է եւ պատճառը իր աներն է եղած , երթան անոր տունը կրակի տուին ։ Բայց Սամփսոն այսչափը բաւական չհամարելով՝ շատ ալ մարդ անոնցմէ սպաննեց ետքը , գնաց Շմաւոնեանց ցեղին մէջ Դանայ ցեղին սահմաններուն մօտ Ետամ կոչուած այրին մէջ կը բնակէր ։

5. Փղշտացիք երբ իմացան Սամփսոնի եղած տեղը՝ եկան Յուդայի ցեղին վրայ եւ Լեհի կոչուած տեղը նստան , եւ կ'ուզէին որ Սամփսոնը կապած իրենց յանձնեն ։ Յուդայի մարդիկն ալ երեք հազար հոգի մէկէն Սամփսոնի վրայ երթալով յայտնեցին իրեն թէ ստիպուած են զինքը կապել ու Փղշտացւոց ձեռքը յանձնել ։ Սամփսոն երդում առնելով անոնցմէ որ չսպաննեն , թող տուաւ որ իրեք նոր ու հաստ չուաններով կապեցին զինքը ։ Իսկ երբ Փղշտացիք ասիկայ տեսնելով սկսան ուրախանալ , այն ատեն Տեառն զօրութիւնը անոր վրայ գալով թօթվեց կոտրեց այն չուանները , եւ հոն տեղ գետինը իշու ծնօտ մը գտնելով առաւ զանիկայ ու Փղշտացւոց վրայ վազելով հազար մարդ սպաննեց անով . ետքը այն ծնօտը ձեռքէն ձգեց

և այն տեղին անունը Ռամաթ լեխի (ծնօտի բլուր) կոչեցին : Բայց յոգնած և խիստ ծարաւած բլուրով ջուր խնդրեց Աստուծմէ . և Աստուած Լեխիին[1] (ծնօտին) մէջ եղած փոսը բացաւ և անկէ ջուր ելաւ որ Սամփսոն խմեց և ոգի առաւ . ասոր համար անոր անունն Ենգօրէ (կանչողին աղբիւրը) դրուեցաւ , որ Լեխիին մէջն է մինչև ցայսօր : Հաւանական է որ անկէ յետոյ դատաւոր ընտրուեցաւ Սամփսոն որ դատեց զԻսրայէլ քսան տարի : Իր զարմանալի քաջութիւնները յայտնապէս Աստուծոյ Հոգւոյն զօրութեամբն էր որով կը զօրանար ի պահանջել հարկին . ապա թէ ոչ ուրիշ առիթներու մէջ ինքն ալ ուրիշ մարդոց նման և թերեւս կերպով մը աւելի տըկար էր որով և ինկաւ ալ :

6 . Սամփսոն օր մը Փղշտացւոց Գազա քաղաքը գնաց ու հոն տեղ կնկան մը տունն մտաւ . Գազացիք լսելով անոր գալը՝ դարանակալ եղան որ առաւօտուն զանիկայ սպաննեն : Իսկ Սամփսոն իմանալով այս բանը , կէս գիշերուն ելաւ քաղաքին դրան երկու փեղկերը շեմերովը և նիգերովը մէկ տեղ փրցուց ու կռնակը առնելով Քեբրոնի դիմացի լերան գլուխը հանեց և հոն տեղ ձգեց ու գնաց :

Անկէ ետքը Սորեկ հեղեղատին եզերքը բնակող Դալիլա անուն կնոջ մը քով սկսաւ յաճախել : Փղշտացւոց նախարարները անիկայ բռնելով եկան այն կնկանը շատ ստակ խոստացան

1 Եբրայեցին Լեխի կոչուած տեղին :

որ Սամփսոնէն խնդրեց թէ ի՞նչէն է անոր մեծ ոյժը · Ասոր կինն ալ սկսաւ թախանձանօք հարցնել որ յայտնէ իր ուժին պատճառը · Սամփսոն երեք անգամ՝ այլ և այլ բաներով խաբեց զանիկայ · բայց կինը տեսաւ որ ասոյգ պատճառը չըսեր, սկսաւ նեղանալ, շողոքորթել ու թախանձել · անանկ որ Սամփսոն ձանձրանալով՝ ասոյգ պատճառը յայտնեց թէ «Ես Աստուծոյ ուխտաւորն եմ՝ յարգանդէ, ու իմ գլխուս ածելի չէ եղած · եթէ մազերս ածիլուի այն ատեն կը տկարանամ» · Կինը խնդալով թէ այս անգամ ասոյգ խօսեցաւ, խնդաց տուաւ Փղշտացւոց նախարարներուն, որոնք խոստացած ստակնին ալ մէկտեղ առնելով կնոջը տունը եկան որ զինքը գաղտնի տեղ մը պահեց · և ինքը Սամփսոնը իր ծունկերուն վերայ քնացուց և քունին մէջ անոր մազերը ածիլել տալէն ետքը արթնցուց զանիկայ ըսելով թէ «Փղշտացիք վրէդ բռնելու եկեր են» · Այն ատեն Սամփսոն արթնցաւ և կ՚ուզէր մէկէն ՚ի մէկ ցատկել ինչպէս ուրիշ անգամներ, բայց տեսաւ որ չկրնար շարժիլ · վասն զի Տէրոջը զօրութիւնը իրմէ հեռացեր էր · Ասոր Փղշտացիք զինքը բռնեցին, աչքերը հանեցին, և շղթաներով կապած Գազա քաղաքը իջեցուցին ու հոն բանտին մէջ աղօրիքի քար դարձնել կու տային ·

7 · Քիչ մը ատենէն անոր մազերը սկսեր էին բուսնիլ վերստին, երբ Փղշտացւոց նախարարները ժողովեցան իրենց Դագոն չաստուածոյն

մեծ զոհ մատուցանելու. և Սամփսոնը ձեռք բերելնուն վերայ ուրախանալու. և այս առթիւ Փղշտացւոց մեծ բազմութիւն լցուած էին մեհեանի մեծ սրահին մէջ. Եւ երբ ամէնքը զուարթացած էին, ուզեցին որ Սամփսոնն ալ հոն բերեն և զանիկայ խաղցնելով զուարճանան. ուստի Սամփսոն այսպէս խաղալէն ետքը գնաց սրահին երկու սիւներուն կռթնեցաւ, որ բոլոր շէնքը անոնց վերայ հաստատուած էր. Սամփսոն հոն անեղ ցաւած սրտով ու բոլորով սրտիւ Վ՛ստահած կանչելով «Տէր զօրութեանց, բա- յիշէ զիս. և այս անգամ միայն զօրութիւն տուր որ այսպէս վրէժը առնեմ անոնցմէ»։ Եւ ձեռքերովը սիւները բռնեց, ու «թող ես ալ անոնց հետ մեռնիմ» ըսելով՝ այնպէս ուժով թօթուեց ու քաշեց զանոնք, որ բոլոր շէնքը կործանեցաւ. ու հոն եղողները երեք հազարի չափ այր և կին՝ ներքևը մնացին ու մեռան իրեն հետ։ Այսպէս Սամփսոն մեռնելու ատեն աւելի մարդ մեռցուց քան ողջութեան ատենը։ Յետոյ իր ազգականները եկան ու մարմինը վերցնելով՝ տարին հօրը գերեզմանը թաղեցին։

## ԳԼՈՒԽ Է.

1. Հեղի քահանայապետը և Սամուէլի մայրը Աննա։ 2. Սամուէլի ծնունդը։ 3. Հեղիի որդւոց անիրաւութիւնները։ 4. Աստուած կը յայտնուի Սամուէլի։ (Ա. Թ—է. Ա—Գ.)

1. Սամփսոնի մեռնելէն յետոյ Ահարոնի որդւոյն Իթամարի ցեղէն Հեղի որ եռասուն ու հինգ տարիէն ի վեր քահանայապետութիւն

կրկնէր ․ դատաւորութիւն ալ ընել սկսաւ ։

Այն եղաւ որ ատոր քահանայապետութեան ատենն երբ դեռ Սամփսոն չէր մեռած ․ Եղկանա անունն Ղևտացի մը կար Սոփիմ[1] քաղաքէն ։ Անիկայ երկու կին ունէր ․ մէկուն անունը Փենենա և միւսինը Աննա ․ Փենենա զաւակներ ունէր , բայց Աննա ամուլ էր և ատոր համար միշտ տրտում էր ․ թէպէտ և Եղկանա կը ջանար մխիթարել զինքը ։ Եղկանա ամէն տարի իր ընտանեօքը Սելով քաղաքը կ'երթար՝ բաց օրինաց զոհ և երկրպագութիւն մատուցանելու ․ Անգամ մը ալ այսպէս ի Սելով գացած ատեն՝ զոհէն յետոյ սեղան նստան իր ընտանեօքը ․ և Աննա տեսնելով որ Փենենա իր զաւակներովը նստէր կ'ուրախանար ․ յիշեց դարձեալ իր ամլութիւնը և վշտացաւ ․ ու տափ սեղանէն ելլելով առանձինն գնաց Տէրոջը տաճարին[2] դրան առջև երեսի վրայ ինկաւ և սկսաւ աղօթել ու ըսել ․ " Ով Տէր զօրութեանց , թէ որ քու աղախնոյդ նեղութեանը նայիս , և զիս յիշես և արու զաւակ մը տաս , զանիկայ քեզ պիտի նուիրեմ իր բոլոր կենացը մէջ ․ և անոր գլխուն վրայ ածելի պիտի չելլէ „ ։ Իսկ Հեղի քահանայապետը որ տաճարին սեմին քով աթոռի մը վրայ նստած էր , տեսնելով Աննային երկար անշարժ մնալը՝ կարծեց թէ գինով է , և սկսաւ խրատել զանիկայ ։ Այն Աննա պատասխա-

1 Ռամաթիմ կամ Արիմաթեմ ․

2 Այս Տաճար բառովը Վկայութեան խորանին յատկացած շէնք մը ըսուած է ։

նեց ու ըսաւ. «Մի՛ տէր իմ, քու աղախինդ գի-նով մի կարծեր. հապա ես վշտացեալ սրտով կին մի եմ, որ Տէրոջը առջեւ բացի իմ սրտիս ցաւերը»։ Եւ Հեղի անոր ըսաւ. «Գնա խաղաղութեամբ, և Իսրայէլի Աստուածը քու խնդրուածքդ տայ քեզի»։ Աննա ալ շնորհակալութեամբ և յուսալից սրտով մեկնեցաւ հոն տե-ղէն, ու հետեւեալ օրը իրենց տունը դարձան։

2. Քիչ ատենէն Աննա յղացաւ և որդի մը ծնաւ, որուն անունը Սամուէլ՝ կոչեց։ Եւ երբ Սամուէլ մեծցաւ, ծնողքը առատական ընծա-ներով զանիկայ Սելով տարին, և Աստուծոյ տու-նը բերցին. և զանիկայ Հեղիի յանձնելու ատեն Աննա՝ «Տէր իմ, ըսաւ, ես այն կինն եմ որ Աս-տուծոյ աղաչեցի, և խնդիրքս ընդունելով՝ այս զաւակս տուաւ ինծի, ուստի ես ալ զանիկայ իրեն կը նուիրեմ»։ Եւ Աննա հոն անոր Տէրոջը երկրպագութիւն ընելով՝ գոհութեան աղօթք մը ըրաւ որ կը սկսի Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր. (Ա. Թագ. Բ. 1—20). Եւ Սամուէլը հոն թողլով՝ երկանը հետ տուն դարձաւ։ Ամէն տարի Սելով կ՚երթար և Սամուէլի հագուստ կը տանէր։ Եւ Հեղի՝ Տէրոջը անունովը օրհնեց զԱննան, որ երեք մանչ և երեք աղջիկ զաւակ-ներ եւս ունեցաւ։ Իսկ Սամուէլ՝ Աստուծոյ տանը մէջ ծառայութիւն կ՚ընէր, և օրէ օր ան-մեղութեամբ մեծնալով՝ Աստուծոյ և մարդկան սիրելի ըլլալ սկսաւ։

1 Աստուծոյ տունը։

3. Հեղի քահանայապետը երկու որդի ունէր Ոփնի և Փենեհէս, որոնք իրենց քահանայական պաշտօնին մէջ շատ անիրաւութիւն ընելով՝ ժողովրդեան գայթակղութիւն կը պատճառէին. Հեղի թէև զիրենք կը խրատէր, այլ իրեն խրատը շատ թոյլ կերպիւ ըլլալով, անոնց վերայ ազդեցութիւն մը չէր ըներ։ Ասոր վերայ Աստուծոյ կողմանէ մարդ մը եկաւ Հեղիին ու սաստիկ կերպով յանդիմանելով զինքը իր որդւոցը անիրաւութեանը համար, յայտնեց որ այս պատճառաւ Աստուած այլ քահանայութիւնը իրեն տնէն պիտի վերցնէ և ուրիշ հաւատարիմ՝ մէկու մը պիտի տայ. և այս բանին նշան պիտի ըլլայ որ իր երկու որդիքը մէկ աւուր մէջ պիտի մեռնին։

4. Աստուած այս բանս Սամուէլի ալ յայտնեց այսպէս. Գիշեր մը երբ Սամուէլ տաճարին մէջ պառկեր էր, յանկարծ ձայն մը լսեց որ զինքը կը կանչէր. և կարծելով թէ Հեղի է կանչողը, ելաւ գնաց անոր քով. բայց Հեղի «Ես չկանչեցի, գնա՛ պառկէ» ըսաւ. այսպէս երեք անգամ կանչուելով, երեք անգամն ալ որ Հեղիի քով եկաւ, այն ատեն Հեղի իմացաւ թէ Տէրն է զանիկայ կանչողը, ուստի ըսաւ անոր. «Երբ մէկ մի ալ կանչէ, ըսէ. Ով Տէր, խօսէ, քանզի քու ծառադ մտիկ կ՚ընէ»։ Եւ Սամուէլ գնաց իր տեղը. Նա երբ չորրորդ անգամ կանչուեցաւ, Հեղիին խրատին համեմատ պատասխանեց. այն ատեն Աստուած յայտնեց

Սամուէլի թէ Հեղիի տունը պիտի պատժէ, անոր որդւոց չարութեանը համար. ինչպէս որ իրեն ալ արդէն խոստացած էր։ Առաւօտուն Սամուէլ վախցաւ այն տեսիլքը Հեղիին պատմելու. բայց Հեղի երդում ընցընելով զանիկայ, պատմել տուաւ։ Ասիկայ Հեղի փոխանակ ազդու միջոցներով իւր որդիքը զսպելու՝ այսչափ միայն ըսաւ թէ «Տէրը իրեն հաճոյ երեւցածը թող ընէ»։ Իսկ Սամուէլ օրէ օր կը զօրանար, և Տէրը անոր հետ էր որ և իրեն կամքը այնուհետեւ անոր կը յայտնէր. և բոլոր Իսրայէլի մէջ խօսուեցաւ որ Սամուէլ Տէրոջը հաւատարիմ մարգարէ մի է։

## ԳԼՈՒԽ Ը.

1. Տապանակին գերութիւնը. 2. Հեղիի և որդւոց մահը. 3. Տապանակին համար Փղշտացւոց պատուհասը. 4. Տապանակին դառնալը. 5. Սամուէլի դատաւորութիւնը. (Ա Թ — Դ. Է—Է)

1. Ու եղաւ որ այն ատենները Իսրայէլացիք շատ նեղութիւն կրելով Փղշտացւոցմէ, անոնց դէմ պատերազմի ելան։ Ալ երբ յաղթուեցան, ժողովրդեան ծերերը խորհուրդ ընելով որոշեցին որ Տէրոջը տապանակը բանակին մէջ բերել տան, որ զիրենք ազատէ թշնամեաց ձեռքէն։ Ասոր համար ղրկեցին ի Սելով. և հոն անդէն՝ քերովբէից մէջ նստող զօրութեանց Տէրոջը ուխտին տապանակը վերցընելով բանակը, և Հեղիի երկու որդիքն ալ միասին՝ բանակը գացին։ Երբ տապանակը բանակին մէջ մտաւ, հոն եղողները ուրախութեան այնպէս մեծաձայն աղաղակ մը հանեցին, որ Փղշտացիք

ըսելով իմացան որ տապանակը բերեր են, և զար-հուրեցան. վասն զի լսած էին տապանակին Տէ-րանց ըրած սքանչելիքները. Եւ սակայն մէկզմէկ քաջա-լերելով` յուսահատութեամբ պատերազմի սկը-սան, ուր տեղ Իսրայէլացիք բոլորովին յաղթ-ուեցան Աստուծոյ թողտուութեամբը, և իրենց-մէ երեսուն հազար հոգի և Հեղիի երկու որ-դիքն ալ մեռան. և Աստուծոյ տապանակը առ-նուեցաւ փղշտացիներէն.

2. Այն ատեն Բենիամինի ցեղէն մարդ մը լաթերը պատռած ու գլուխը հող ցանած փախեր Սելով քաղաքը եկաւ, և երբ եղած դժբաղդու-թեանց զրոյցը տուաւ, քաղաքին մէջ մեծ աղ-մուկ մը ելաւ. Իսկ Հեղի քահանայապետը որուն աչքերն ալ տկարացած ըլլալով չէր տեսներ, ա-թոռով մը ճամբուն վերայ նստեր էր և տապա-նակին վերայ սիրտը կը դողար. երբ լսեց այս ա-ղաղակը` հարցուց պատճառը. և բանակէն եկող մարդը սկսաւ պատմել իրեն թէ Իսրայէլ ժողո-վուրդը յաղթուեցաւ և իր երկու որդիքն ալ մեռան, և թէ Աստուծոյ տապանակը առնուե-ցաւ. Երբ այս ձախորդութիւնները մանաւանդ տապանակին առնուիլը որ լսեց իննսուն և ութ-ամեայ ծերունին Հեղի, սրտին ցաւէն ինքզինքը կորսնցուց և աթոռէն վար ինկաւ, ու կռնակին ոսկորը կոտրելով` հոն տեղ մեռաւ. Հեղի քառա-սուն տարի դատաւորութիւն ըրաւ. որ թէ-պէտ իր որդիքը պէտք եղածին պէս չխրատե-լուն համար պատժուեցաւ, սակայն

ուրիշ յատկութիւններով պատուական է Աս-տուծոյ փառացը նախանձաւոր անձ մի էր, որ իւր մահուամբն ալ ցուցուց։ Իւր հարսը՝ Փենե-հէսի կինը որ յղի ու ծննդեան մօտ էր, այս գժբաղդութիւնները լսելու ատեն երկունքն ալ բռնեց և տղաբերքի ատեն մեռաւ. և ծնած տղուն անունը Իքաբոդ (անփառք) կոչուեցաւ, նոյն օրը Իսրայէլի փառքը վերցուելուն համար։

3. Այս Փղշտացիք տապանակը առին և Ա-զովտոս տանելով՝ Դագոնի կուռքին մեհեանին մէջ դրին։ Իսկ հետեւեալ առաւօտուն տեսան որ Դագոնի արձանը երեսին վրայ գետինը ին-կած էր. ու տափ վերցուցին տեղը դրին։ Միւս առաւօտուն տեսան որ Դագոնը դարձեալ ինկեր է գլուխը, ձեռքերն ու ոտքերը կտրտեր էին։ Նաև շատ ուրիշ պատիժներով ալ պատ-ժուեցան Ազովտացիք. պատերնուն մէջ շատ մկ-ներ երեւելով բոլոր աւրշակեցին. իսկ իրենց մար-միններնուն վրայ ալ թանչքի ուռեցքներով զարնուեցան. և իմանալով որ տապանակին հա-մար կ'ըլլան այս պատուհասները. իշխաններնուն խորհրդովը վերցուցին անկէ տապանակը և Գէթ քաղաքը փոխադրեցին։ Հոն տեղ ալ ա-ւելի պատուհասներ ըլլալով բոլոր քաղաքին մէջ մահաբեր տագնապ մը ինկաւ, որուն հա-մար տապանակը Ակկարոն քաղաքը ղրկեցին, բայց Ակկարոնացիք դէմ կեցան և չուզեցին, վախնալով որ իրենք ալ կը պատժուին։

4. Այսպէս տապանակը եօթն ամիս Փղշ-

տացւոց երկիրը մտաւ եւ ազգը, անոնց իշխանները եւ քուրմերը մէկտեղ գալով խորհուրդ ըրին որ իր տեղը ղրկեն ։ Ասոր իրենց վերայ եղած պատիժներուն փոխարէն ամէն մէկ նահանգի կողմանէ ընծաներ ալ նուիրելով փոքր ոսկեկի մը մէջ դրին, եւ տապանակն ու ոսկեկը նոր սայլի մը վերայ դնելով՝ որոշեցին որ երկու անդրանկածին մատակ եւ անփորձ կովեր լծեն եւ անոնց հորթերն ալ տուն մէջ փակեն. եւ եթէ կովերն իրենց հորթերուն ձայնին ձայնելով շիտակ դէպ 'ի Իսրայէլի երկիրը երթան, այն ատեն իմանան թէ նոյն պատուհասները տապանակին պատճառաւն եղան ։ Նայեւ որ ըրին, կովերը բառաչելով եւ առանց առաջնորդի ու ղեկի Իսրայելացւոց երկրին ճամբան բռնեցին, եւ շիտակ Բեթսամիւս երթալով Յեսու անուն մէկուն արտը մտան ուր տեղ անոնք ալ ցորեն կը հնձէին ։ Բեթսամիւսացիք երբ տապանակին գալը տեսան՝ ուրախացան. եւ Ղեւտացիք գալով տապանակը վերցուցին ու սայլը կոտրտելով կովերն ալ հոն տեղ ողջակէզ մատուցին Տեառն ։ Նայց Բեթսամիւսացիք տապանակին վերայ թափելով՝ (Թերեւս միայն հետաքրքրութեամբ եւ առանց մեծարանաց) անոր մէջը նայած ըլլալնուն համար պատժուեցան Տեառնմէ եւ իրենցմէ շատ մարդիկ մեռան ։ Այս պատճառաւ Բեթսամիւսացիք վախցան, եւ Կարիաթարիմի մարդոց խնդրեցին, որոնք եկան տապանակը հոն տարին եւ Ամինադաբ քահանային տունը դրին ուր շատ տարի կեցաւ ։

5. Հեղիի մահուանէն ետքը Սամուէլ սկսաւ Իսրայէլացիքը դատել քանի տարի. Սամուէլ նախ փոյթ տարաւ ու կռապաշտական բաները ժողովրդին մէջէն վերցուց. Յետոյ բոլոր Իսրայէլացիքը Մասփայի մէջ ժողվեց որ իրենց համար աղօթէ. և անոնք ալ սկսան ծոմապահութեամբ զղջալ և մեղաց գոչել. Իսկ Փղշտացիք խմբովին Իսրայէլացւոց ժողվուիլը՝ անոնց դէմ պատերազմի ելան. և անոնք վախնալով Սամուէլին դիմեցին. Այն ատեն Սամուէլ գառնուկ մը առնելով ողջակէզ մատոյց Աստուծոյ և աղօթեց. և ահա Աստուած երկինքէն այնպիսի մեծ ձայնով որոտաց, որ Փղշտացիքը խռովելով սկսան փախչիլ. և Իսրայէլացիք զանոնք հալածելով շատ մարդ կոտորեցին, և իրենց քաղաքները ետ առին. Սամուէլ տարուէ տարի Իսրայէլի մեծ քաղաքները կ'երթար և ժողովուրդը կը հոգար. և ուրիշ ատենները Ռամայի մէջ իր տունը կը կենար, ուր սեղան մի ալ շինեց Աստուծոյ.

# ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

## ԻՍՐԱՅԷԼԱՑԻՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԷՆ ՄԻՆՉԵՒ Ի ԲԱԲԵԼՈՆ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ

### ԳԼՈՒԽ Ա.

1. Իսրայելացիք թագաւոր կը խնդրեն Սամուէլէն։ 2. Սաւուղի ընտրութիւնը։ 3. Սաւուղի առաջին յաղթութիւնը։ 4. Իր թագաւորութեան վերահաստատութիւնը։ (Ա. Թ. Ը—ԺԲ)

1. Եւ եղաւ որ երբ Սամուէլ ծերացաւ, իր երկու որդիքը դատաւոր դրաւ Իսրայէլի վրայ։ Բայց իրենց հօրը ուղղութենէն խոտորելով՝ սկսան ագահութեան հետեւիլ, եւ ամեն անիրաւութիւն ընել։ Իսրայելացիք անոնց դէշ ընթացքէն զզուելով՝ Սամուէլի քով ժողվուեցան եւ ըսին. «Դուն ծերացար, եւ քու որդիքդ ալ անիրաւութիւն կ՚ընեն. ուստի ուրիշ ազգաց նման մեզի թագաւոր մը դիր որ մեզ կառավարէ»։ Ժողովրդեան այս առաջարկութիւնը աղէկ չթուեցաւ Սամուէլի, ոչ թէ իշխանութիւն սիրելուն համար, հապա անոր համար որ ժողովրդեան այս առաջարկութիւնը դժգոհութիւն մի էր՝ ուղղակի Աստուծոյ պաշտօնէից ձեռօք մինչեւ այն ատեն եղած կառավարութենէն. ինչպէս որ Սամուէլ երբ Աստուծոյ կամքը հարցուց, Աստուած ալ ըսաւ.

« Ժողովրդեան խօսքը մտիկ ըրէ․ քանզի անոնք ոչ թէ զքեզ՝ այլ զիս կը մերժեն որ իրենց վրայ չթագաւորեմ »․ ասկէ զատ՝ Աստուած յայտնեց Սամուէլի նաև որ թագաւորի մը փափաքնին անոնց խնդրելն է․ Սամուէլ ալ սկսաւ մի բան միոջէ բացատրել իրենց թէ ինչպէս թագաւոր մը կրնայ իրենց վրայ ծանրանալ և զիրենք հարըստահարել․ « այն ատեն բողոք, դուք ձեր ընտրած թագաւորին համար Տէրոջը պիտի աղաղակէք․ բայց Տէրը չպիտի պատասխանէ »․ Բայց ժողովուրդը իրենց խօսքէն չդարձան․ ուստի Սամուէլ Աստուծմէ հրաման առնելով՝ խոստացաւ և արձակեց զիրենք ։

2․ Այն ատեններ Բենիամինի ցեղէն Կիս անունով մէկը կար, որ կորիս՞․ գեղեցիկ ու բարձրահասակ որդի մը ունէր Սաւուղ անուն։ Այն օրերը Սաւուղի հօրը էշերը կորսուելով, Սաւուղ ալ ծառայի մը հետ գնաց որ զանոնք փնտռէ, և շատ տեղեր պտտելով մինչև Սումայի մօտերը եկաւ։ Իսկ երբ չգտաւ և յոգնած կ՚ուզէր ետ դառնալ, որ չըլլայ թէ հայրը էշերուն կորուստը թողու և զիրենք հոգայ․ յանկարծ ծառային միտքն եկաւ Սամուէլ մարգարէն, և ըսաւ որ երթան հարցնեն անոր։ Բայց Աստուած մէկ օր յառաջ յայտներ էր Սամուէլի թէ՝ վաղը այս ինչ ատեն Բենիամինի ցեղէն մարդ մը պիտի ղրկեմ, որ զանիկայ իմ ժողովրդիս վրայ թագաւոր օծես։ Ուստի Սամուէլ երբ տեսաւ զանիկայ՝ ճանչցաւ, և կը-

բուռնին վերայէն զանիկայ պառկեցնելէ զկնի սեղանի հրաւիրեց ուրիշ երեսուն մարդոց հետ զորս յառաջագոյն կոչած էր . և Սաւուղը ամէնէն վեր նստեցնելով՝ յատուկ պատիւ ալ բոլոր կերակուրի տուաւ , և երեկոյին ալ չթողուց որ երթայ : Առաւօտուն Սամուէլ շիշով իւղ թափեց Սաւուղի գլխուն վերայ , և զանիկայ համբուրեց ու ըսաւ . «Աստուած դրեց թագաւոր օծել իւր ժողովրդեան վերայ» : Եւ այս բանին ճշմարտութեան ապացոյց՝ քանի մը բան ալ մարգարէացաւ որ ճամբան պիտի կատարուէին Սաւուղի վերայ . այլ և պատուիրեց որ եօթն օրէն Գալգալայի մէջ իրեն սպասէ , ուր ինք պիտի խաղաղական պատարագ ընծայէր . Սաւուղ երբ ճամբայ ելաւ , Աստուծոյ Հոգին իւր վերայ եկաւ , և սկսաւ մարգարէանալ . և Սամուէլին ըսած նշանները կատարուեցան : Յետոյ Սամուէլ բոլոր ժողովուրդը Մասփայի մէջ ժողովեց ու թագաւոր ընտրելու համար անոնց ցեղերուն վերայ վիճակ ձգել տալով՝ Աստուծոյ ընտրութեամբ Բենիամինի ցեղէն Սաւուղին վերայ ելաւ որ պահուըտած էր : Սամուէլ Աստուծոյ յայտնելովը գտաւ զանիկայ ու ժողովրդեան ներկայացուց , որոնք միաձայն աղաղակեցին Կեցցէ՛ Արքայ : Եւ Սամուէլ թագաւորութեան վերաբերեալ բաները անոնց պատմելով գրի առաւ ու ժողովուրդը արձակեց . Սաւուղ ալ իւր տունը գնաց ի Գաբաա : Եւ Աստուծոյ զօրաւորները այն օրէն սկսան Սաւուղի քով ժողովուիլ

զօրաւոր ու բանիբուն մարդիկ (2908)։

3. Անկէ քիչ մը յետոյ Ամմոնացւոց թագաւորը Նաաս յարձակեցաւ Գաղաադու Յաբիս քաղաքին վրայ, և կ'ուզէր որ ծանր ու անտանելի պայմաններով անձնատուր ըլլան. անոնք ալ Սաւուղի պատգամաւորներ ղրկեցին, որոնք Սաւուղի հանդիպեցան երբ արտէն կը դառնար՝ և խնդրեցին իրենց փրկութիւնը. Այն ատեն Սաւուղ Աստուծմէ զօրանալով՝ բոլոր Իսրայէլը պատերազմի կոչեց իր և Սամուէլին անունովը. և երեք հարիւր երեսուն հազար հոգի ժողովուեցան որ վաղուց հետէ այնչափ մեծ բանակ մը կազմուած չէր Իսրայէլի մէջ. Սաւուղ երեք գունդ բաժնելով զանոնք՝ Ամմոնացւոց վրայ գնաց և անոնց յաղթելով շատ մարդ ջարդեցին ու մնացեալները ցրուեցին. Այս յաղթութեան վրայ Սաւուղի թագաւորութիւնը այնչափ հաճելի եղաւ ժողովրդեան, որ ուզեցին սպաննել այն մարդիկը որոնք չէին ուզած անոր թագաւորելը.

4. Այսպէս Սամուէլ զինքն հանդարտեցնելով բոլոր ժողովուրդը Գաղգաղայի մէջ հաւաքեց. և հոն Տէրոջը առջևը Սաւուղի թագաւորութիւնը վերահաստատեցին, և գոհութեան զոհեր մատուցին ու մեծ ուրախութիւն ըրին. Այն ատեն Սամուէլ ժողովրդեան ըսաւ. «Ես ծերացայ և այնչափ ատեն դատաւորութիւն ըրի. ուստի հիմա Տէրոջը և անոր օծելոյն և իմ ներկայութեանս ըսէք. որ եթէ մէկու մը ար-

1 [illegible]

կանք կամ՝ անիրաւութիւն լուած կամ՝ կաշառք առած եմ, ես դարձնեմ»։ Եւ բոլոր ժողովուրդը միաբերան «Ո՛չ» պատասխանեցին։ Ու ապա Սամուէլ ըսաւ. «Ահա Տէրը և անոր օծեալը թող վկայ ըլլան այս բանիս»։ Ժողովուրդն ալ «Այո. թող ըլլան» պատասխանեցին։ Ասոր առնեն Սամուէլ յորդորեց զիրենք և թագաւորը որ Սաւուղն է վախնան և անոր օրէնքները պահեն։ Այսու ամենայնիւ թագաւոր ուզելնին աղէկ բան մը չըլլալուն 'ի նշան՝ Սամուէլ աղօթք մը ըրաւ. և նոյն ատենին որոտմամբ անձրև մը տեղաց որ անսովոր է այն կողմերը հունձքի ժամանակ։ Ժողովուրդը զայս տեսնելով՝ խիստ վախցան. բայց Սամուէլ զիրենք սրտապնդեց և ըսաւ թէ Աստուած զիրենք չթողուր եթէ բոլորով սրտիւ անոր ծառայեն։

## ԳԼՈՒԽ Ը.

1. Սաւուղի մէկ պատերազմական յաղթութիւնը։ 2. Իր որդւոյն Յովնաթանու մահուան վտանգը յաղթութենէն ետքը։ 3. Սաւուղի երդումը և Յովնաթանը։ 4. Ամաղեկացւոց պատերազմը և Սաւուղի անհնազանդութիւնը։ 5. Թագաւորութենէ մերժուելուն վճիռը և Սամուէլի սուգը։ (Ա. Թագ. ԺԴ—ԺԵ.)

1. Սաւուղ իր թագաւորութեան երկրորդ տարին՝ երեք հազար զօրքէ բաղկացեալ խումբ մը կազմեց, միշտ 'ի պատրաստի գտնըւելու համար. որոնց երկու հազարը իրեն հետ և մնացածը իր որդւոյն Յովնաթանու հետ Գաբաայի մէջ կը կենային։ Յովնաթան օր մը այն կողմերը եղող Փղշտացւոց զօրքերը զարկելով՝ Փղշտացիք ալ պատերազմի գրգռուեցան,

և այնչափ մեծ զօրութեամբ Իսրայէլացւոց վերայ եկան, որ անոնք փախչելով՝ իրենց տեղերը թողուցին և անտառին տեղեր ապաստանեցան։ Սաւուղ ալ Իսրայէլի զօրքերը Գաղգաղայի մէջ ժողվեց ու Սամուէլին կը սպասէր որ խօսք տուած էր եօթն օրէն հոն գտնուել ու ողջակէզ մատուցանել։ Բայց Սաւուղ տեսնելով որ անոր ուշանալուն ժողովուրդը կը ցրուի, ինքն սկսաւ ողջակէզը մատուցանել, որ օրէնք չէր. և երբ լմնցուց՝ Սամուէլ ալ եկաւ, ու անոր ըրածին վերայ ցաւեցաւ։ Թէպէտ և անիկայ իր այս ըրածին պատճառը բացատրեց. բայց Սամուէլ չընդունելով՝ ցուցուց անոր, թէ իր թագաւորութիւնը հաստատ պիտի չըլլայ՝ Տէրոջը դէմ ընելուն համար։ Այնուհետև երբ Սամուէլ գնաց, Սաւուղին քով վեց հարիւր հոգի միայն մնացեր էին, որոնց մէջ զէնք ունեցող ալ չկար բայց 'ի Սաւուղէն և Յովնաթանէն. ուստի աղեղով, մշակական գործիքներով և քարով ու փայտով պէտք էր պատերազմէին. ինչու որ Փղշտացիք չէին թողուցած որ Իսրայէլի մէջ դարբին գտնուի, որպէս զի զէնք չշինեն։ Ասանկ և Իսրայէլացիք իրենց մշակական գործիքները ալ Փղշտացւոց երկրին մէջ շինել կու տային, և իրենք միայն խարազան ունէին արօրու համար[1]։

2. Իսրայէլի բանակը այս վիճակին մէջ կեցած ատեն, Յովնաթան մէկու մը բան չըսած

1 Երևի որ Փղշտացիք արգիլած էին դարբնութիւնը. այլ անոնց [illegible] առաջ և ետքն ալ [illegible] բնաջ հան-[illegible] էր Իսրայէլի մէջ. [illegible]

և միայն իւր կապարձակները տանելով թշնամեաց
պահապան զօրքերուն մօտ, բերան մը կերծին
բերանը գոցեց և անոնցմէ քանի չափ մարդ մեռ-
ցուց հետզհետէ ։ Նոյն Նատուած անանկ փոխ
մը և չփոխութիւն մը ձգեց Փղշտացւոց մէջ,
որ կարծելով թէ Իսրայէլացւոց մեծ բանակը
իրենց վերայ պիտի յարձակի, սկսան փախչիլ։
Երբ Սաւուղ տեսաւ այս եղածը և Յովնաթա-
նու մնացած բլուրն ալ խնդալ, ինքն ալ ալ,
մնացածը որ ժողովուրդն ալ այս բանը լսելով՝
վերադարձաւ Հազար մարդ ժողովեցան իրեն
քով, և Փղշտացւոց ետեւէն ինկաւ մեծ յաղ-
թութիւն մը ձեռք բերին ։ Այն յաղթութիւնը
ալելի աւելի Հաւանաւր մեծ էր, որ Իսրայէլացիք
կանխաւ որ բանակ ալ չունէին, քանի որ Փղշ-
տացւոց կարքերը միայն երկու Հազար էին ։
Սաւուղ նոյն օրը անզամ մի ալ չինեց Տէրոջը ։
3. Այս փառաւոր յաղթութեան առեն
պատահի գէպք մը անցի ունեցաւ ։ Քանի երր
թշնամիքը կը Հալածէին, Սաւուղ երդում բրաւ
Տէրոջը անուանը որ մինչեւ երեկոյ իրենցմէ
բնաւ մէկը բան չուտէ, որուն անհնին ալ Հնա-
զանդեցան ։ Յովնաթան որ չէր լսած այս
բանը, փեթակներու քովէն անցնելու առեն
քիչ մը մեղր կերաւ ։ Երբ Նաւածոյ կամենէ
խնդրել Սաւուղ այս երդման դէմ մէկուն մե-
ղանչած ըլլալը, վիճակ ձգել տուաւ, և «Ըսէ
ինծ որը այս ալ եղէ, բաւ, չեմ խնայեր ու պի-
տի մեռցնել տամ» ։ Վիճակը Նաւածոյ յայտ-

ներքին Յովնաթանու վերայ որ եկաւ, «Քիչ մը մեղր ուտելուս համար պիտի մեռնիմ» ըսաւ. «Այո, պատասխանեց Սաւուղ, անշուշտ պիտի մեռնիս»։ Այն ատեն ժողովուրդը չհաճելով այս բանին՝ Աստուծոյ աղաչեցին ու Սաւուղին ոխ-ը հանդարտեցնելով ազատեցին Յովնաթանը։

Անկէ յետոյ Սաւուղ իր տեսած ամէն զօրաւոր մարդիկը քովը կը ժողվէր. և բոլոր շրջակայ թշնամեաց մանաւանդ Փղշտացւոց դէմ պատերազմներ ու յաղթութիւններ ընելով՝ ազատեց Իսրայէլը իր կողոպտիչներուն ձեռքէն.

4. Այն ժամանակները Ամաղէկացւոց պատժուելու ատենը հասած ըլլալով, Սամուէլ Աստուծոյ կողմանէ խօսք տուաւ Սաւուղին որ անոնց վերայ պատերազմի ելլէ. և մարդ ու անասուն ամէնն ալ կոտրէ։ Եւ Սաւուղ երկու հարիւր տասն հազար մարդով գնաց անոնց վերայ՝ յաղթեց ու կոտրեց. բայց թէ՛ ինքը և թէ իր զօրքերը անոնց Ագագ թագաւորին և անասնոց աղէկներուն և ամէն պատուական բաներուն խնայեցին։

5. Այս համար Աստուած Սամուէլի յայտնեց որ Սաւուղ իր կամապաշտութեանը համար թագաւորութեան մէջ չպիտի հաստատուի։ Սամուէլ այս բանիս վերայ շատ տրտմեցաւ ու բոլոր գիշերը աղօթեց. և առաւօտուն ելաւ Սաւուղի քով գնաց երբ անիկայ Ամաղէկացւոյմէ առած կողոպուտներէն զոհ կը մատուցանէր։ Սաւուղ զինքը դիմաւորելով ըսելով թէ՝ ահա Ա-

տուծոյ հրամանը կատարեցի. և երբ Սամուէլ հարցուց այն անասնոց համար, Սաւուղ պատասխանէ՝ անոնց աղէկներէն պահեցինք որ զոհ մատուցանենք։ Այն ատեն Սամուէլ կշտամբելով զինքը՝ «Աւելի աղէկ էր քան հնազանդութիւնը քան զոհ մատուցանելը» և յայտնեց նաև թէ այս պատճառ համար Աստուած զինք մերժեց և թագաւորութիւնը ուրիշի պիտի տայ։ Այնուհետև հոն կենալ չուզելով երբ պիտի երթար, Սաւուղ զինք ցուցնելով բռնեց վերայոյ. թախանձելով աղաչեց թէ գոնէ ժողովրդեան առջեւ զիս պատուելու համար կեցիր. և Սամուէլ մնաց ու անոր հետ աղօթք ըրաւ. և Ամաղէկացւոց թագաւորը Ագագը հոն տեղ մեռցնելէ զկնի՝ դարձաւ իր տունը, և այնուհետև այլ եւս Սաւուղի երեսը չտեսաւ։ Բայց շատ սուգ կ՚ընէր անոր վերայ, որ Աստուած ալ իրեն ըսաւ. «Մինչև երբ սուգ կ՚ընես Սաւուղի համար, ես զանիկայ մերժեցի որ չթագաւորէ»։

## ԳԼՈՒԽ Գ.

1. Դաւթի ընտրութիւնը և Սաւուղի այսահարութիւնը. 2. Գողիաթ. 3. Դաւիթ անոր կը յաղթէ. 4. Սաւուղ կը պատուէ զԴաւիթ. 5. Իր նախանձէն անոր վերայ. 6. Զանիկայ մեռցնելու կ՚աշխատի. 7. Դաւիթ Սամուէլին քով կը փախչի. (Ա. Թագ. ԺԶ — Ժ.)

1. Աստի Սամուէլ Բեթղեհեմ գնաց Աստուծոյ հրամանաւ, որպէս թէ հոն տեղ զոհ ընելու համար, որ հոն Յեսսէի ցեղէն Յեսսէի որդւոցմէ մէկը թագաւոր օծէ. Յեսսէ՝ Սամուէլին խնդրելովը իր ամէն որդիքն ալ ներկայ-

այցելով՝ Աստուած եւ ոչ մէկուն համար յայտ-նեց. այսպէս երբ իւր կրտսեր որդին Դաւիթը ներկայացուց որ հովուութենէն կ՚ելլէր եւ կայտառ ու գեղեցիկ պատանի մը էր. իսկ եւ իսկ Աստ-ուած յայտնեց թէ նա է իւր ընտրածը. Յայն-ժամ Սամուէլ անոր գլխուն վերայ իւղ թափե-լով օծեց զանիկայ. եւ այն օրէն Աստուծոյ հո-գին Դաւթի վերայ եկաւ, ու Սաւուղէն հե-ռացաւ եւ չար ոգի մը սկսաւ զանիկայ նեղել. Ուստի անոր քանի մարդիկը առաջարկեցին որ աղէկ քնարահար մը գտնեն. եւ իրեն չար ոգին նեղած ատենը չալէ, որով նեղութիւնը թե-թեւնայ. այս բանը Սաւուղի հաճոյ թուեցաւ, եւ այս գործին յարմար Դաւիթը գտան. որ ա-ղէկ քնար կը զարնէր. եւ իւր հովուութեան ա-տենները երգեր յօրինելու եւ նուագելու կը զբա-ղէր. Ուստի երբ Սաւուղի խենդութեան ցաւը կը բռնէր, Դաւիթ անոր առջեւ քնար չալելով կը հանդարտեցնէր զանիկայ. ատենով Դաւիթ թա-գաւորին սպասաւորներուն ծանօթեցաւ եւ Սաւուղի ալ այնչափ սիրելի եղաւ, որ իրեն կապարճա-կիր ըրաւ.

2. Այն ատենները Փղշտացիք վերստին Իս-րայէլի վերայ եկան. Սաւուղ ալ իւր զօրքովը անոնց դէմ գնաց. Նոյն այս անգամ Փղշտաց-ւոց բանակին մէջ Գեթացի սկայ մը կար Գո-ղիաթ անուն, արտաքոյ կարգի բարձրահասակ, իւր վերայ խոշոր ու ծանր զէնքեր ունէր եւ գլուխը վահանով ու բոլոր անձը երկաթէ զրահ-

նեղով պաշտպանուած ։ Ափրիկոյ ձեռքն ալ մեծ նիզակ մը տուած՝ բանակէն դուրս եկաւ և Իս-րայէլայւոց դէմ առաջարկեց կարգադրել իրեն հետ մենամարտող մէկը ուղեց. և երբ այսպէս մէկը չգտնուեցաւ, սկսաւ զԻսրայէլացիները նախատել, որոնք այս հսկային առջեւէն անգամ կը դողդա-քէին ։ Գողիաթ շատ օրեր այսպէս ըրաւ, բայց մէկը չգտնուեցաւ իրեն դէմ ելլող ։ Թէ և Սաւ-ւուղ զանիկայ յաղթողին իր աղջիկը տալ և մեծ իշխանութեան հասնելու խոստացեր էր ։ Դաւ-իթ որ այն միջոցներուն իր տունը գացեր և հովուութիւն կ'ընէր ոչխարին, իր հօրը զրկե-լով բանակը գնաց որ եղբայրները տեսնէ և ա-նոնց ողջութիւնը իմանայ, որոնք Սաւուղի հետ պատերազմի գացեր էին ։ Դաւիթ երբ բանակը եկաւ և Գողիաթի խրոխտալը տեսնելով Սաւու-ղի խոստումն ալ իմացաւ, յայտնեց թէ ինքը անոր դէմ կ'ելլայ և կռուոյ յաղթել ։ Թէպէտ և իր մեծ եղբայրը սկսաւ զինքը յանդիմանել յանդգնութիւն համարելով անոր բանը, այ-սու անհնարին Դաւթի խօսքը բերնէ բերան մինչև թագաւորին ականջը հասաւ ։

3. Այն ատեն Սաւուղ իր քովը բերել տուաւ Դաւիթը և հարցուց անոր կարողու-թիւնը ։ Դաւիթ ալ յայտնեց թէ ինչպէս իր հօտերին արածելու ատեն գազաններու պատա-հած և զանոնք միայն իր ձեռքովը սպաննած է ։ Աւելի բան որ Աստուծոյ յաջողութեամբը պիտի կրնամ յաղթել նաև Գողիաթը ։ Ասոր Սաւ

ւուղ հրաման ըրաւ՝ որ իր սպասաւորները Դաւիթի հագցուցին եւ զէնքերը անոր տուին. բայց Դաւիթ փորձած չըլլալով հանեց զանոնք եւ միայն իր ցուպը եւ պարկը առաւ եւ հինգ ող քար դնելով իր մախաղին մէջ Գողիաթու դէմն եղաւ. Գողիաթ երբ տեսաւ որ գեղահաս պատանի մը առանց զէնքի միայն ցուպով մը իր վրայ կու գայ, ծիծաղեցաւ ու ըսաւ. «Միթէ ես շո՞ւն եմ, որ ցուպով իմ վրայ կու գաս»։ Եւ Դաւիթ ըսաւ. «Դուն իմ վրայ սրով ու գեղարդով կու գաս. բայց ես կու գամ քու վրայ զօրութեանց Տէրոջ Իսրայէլի Աստուծոյն անունովը զոր դուն կը նախատես. եւ անոր օգնութեամբը անշուշտ պիտի յաղթեմ քեզի առանց զէնքի»։ Ու երբ Գողիաթ յառաջ գալ սկսաւ, այն ատեն Դաւիթ իր պարսին մէջ քար մը դրաւ ու Գողիաթու ճակտին նշանելով այնպէս ուժով մը նետեց, որ Գողիաթու ճակտին մէջ մտնելով երեսին վրայ գետինը ինկաւ մեռաւ։ Ու Դաւիթ վազեց անոր վրայ, եւ անոր սուրը հանելով գլուխը կտրեց. Իսկ Փղշտացիք տեսնելով իրենց հսկային այսպէս յաղթուիլն ու մեռնիլը, վհատեցան ու սկսան փախչիլ. Իսրայէլացիք ալ անոնց ետեւէն իյնալով շատ մարդ ջարդեցին ու բոլոր բանակը աւար առին։

4. Այնուհետեւ Դաւիթ Գողիաթու սուրը եւ գլուխը ձեռքն առած Սաւուղի դիմացն եղաւ. Սաւուղ որ Թերեւս պատերազմին մէջ ըլլալով եւ Դաւիթ ալ շատոնց իր քովէն հեռացած ե-

հինց ալ հալածական հոգուածներ հասած ըլլալուն համար չէր կրցած զանիկայ ճանչնալ. երբ հարցուց ու իմացաւ որ Դաւիթ ինքն է. չթողուց որ իր քովէն հեռանայ և մեծ պատուոյ հասցուց զանիկայ. իրեն որդին Յովնաթան ալ տեսնելով Դաւթի շնորհալի վարքը և քաջութիւնը. սիրտը անոր հետ այնպէս կապուեցաւ որ իր զէնքերն ու հագուստը անոր տուաւ ու մշտնջենաւոր բարեկամութիւն ուխտեց հետը.

5. Նոյն եղաւ որ երբ Սաւուղ Դաւիթ և զօրքերուն հետ պատերազմէն կը դառնար. և ահա ամէն քաղաքներէ ժողովուրդը զիրենք դիմաւորելու ելան. և կիներն ալ թմբուկներով ու ծնծղաններով կը պարէին ու կ'երգէին. Սաւուղ զարկաւ իր հազարաւորները և Դաւիթ զարկաւ իր բիւրաւորները: Այս բանը Սաւուղին դժարը գալով՝ ըսաւ ինքնիրեն. Ալ ինչ կը պակսի Դաւթի եթէ ոչ թագաւորութիւն մը: Այն օրէն սկսաւ խեթիւ նայիլ անոր վրայ: Այն ատեն մը ալ բռնուած ատեն երբ Դաւիթ քնար կը զարնէր իր առջեւ, յանկարծ ձեռքի գեղարդը անոր վրայ նետեց և քիչ մնաց որ զարնուէր Դաւիթ եթէ մէկ կողմ չքաշուէր: Այսու ամենայնիւ Սաւուղ կ'ակնածէր Դաւիթէն տեսնելով անոր իմաստուն վարմունքը. ուստի զանիկայ հազարապետ ըրաւ:

6. Ինչպէս յայտնի է՝ որ Սաւուղ իր աղջիկը Դաւթի տալ խոստացեր էր Գողիաթը մեռցնելուն համար. բայց ուզելով զանիկայ փորձի մէջ ձգել, ըսաւ որ Փղշտացւոց դէմ որչ-

կործանութիւնները այլ բան. իրենց փառասիրութեան համար. բայց Դաւիթ հրամայեցաւ, ինքզինքն անարժան համարելով թագաւորի փեսայութեան. ուստի Սաւուղ այլ իր մեծ աղջիկը Մերոբը ուրիշի մը տուաւ. Բայց խոստացաւ որ իր միւս աղջիկը կը սիրէ զԴաւիթ, դարձեալ առաջարկեց Դաւթի որ երթայ հարիւր Փղշտացի սպաննէ. որպէս զի իրեն փեսայ ընէ զինքը. Դաւիթ թէև դարձեալ հրամայեցաւ, բայց յետոյ Սաւուղի ցուցած պայմանը քաջութեամբ կատարեց և անվնաս դառնալով՝ առաւ աղջիկը Մեղքողը տուաւ. Այս ամենայնէն Սաւուղ մեծ թշնամութիւն կ'ընէր Դաւթի, զանիկայ մեծ պատերազմներու ղրկելով՝ որպէս զի մեռնի. այլ Դաւիթ մեծ անվնաս ու յաղթական կը դառնար, վասն զի Աստուած անոր հետն էր.

7. Ասանկով Դաւթի անունը այնչափ հռչակուեցաւ որ Սաւուղ չկրնալով ծածկել իր թշնամութիւնը, իր որդւոյն Յովնաթանին և ծառաներուն այլ յայտնեց որ Դաւիթը մեռցնեն. Թէպէտ և Յովնաթանու միջնորդութեամբ քիչ մը զիջում ըրաւ, բայց օր մը սուրը բռնած ատեն երբ Դաւիթ քնար կը զարնէր, դարձեալ իր գեղարդը նետեց որ զանիկայ մեռցնէ. բայց Դաւիթ զգուշացաւ, և այն գիշեր փախաւ իր տունը գնաց. Այն ատեն Սաւուղ գիշերանց մարդ ղրկեց որ զանիկայ սպաննեն. բայց անոր կինը Մեղքող խնամելով՝ Դաւիթը գաղտուկ վար իջեցուց պատուհանէն, որ փա-

խաւ գնաց Սամուէլին քով ու Սաւուղին բռնածնե-րը պատմեց. անկէ ալ երթ ու գնաց ի Նաւաթ Ռամա։ Սաւուղ խնտռելով Դաւթի եղած տեղը մարդ ետևէն ղրկեց. բայց Աստուած պահպա-նեց ազատեց զԴաւիթ։

## ԳԼՈՒԽ Դ.

1. Յովնաթան իւր հօրը Դաւթի հետ հաշտեցնելու փորձ մը կ'ընէ. 2. Դաւիթ Գեթացւոց երկիրը և անկէ ուրիշ տե-ղեր կը թափառի. 3. Սաւուղ քահանաները մեռցնել կու-տայ. 4. Դաւթի անվրէժխնդրութիւնը. 5. Սամուէլի մահը։ (Ա. Թագ. Ի—ԻԵ)։

1. Սաւուղ որչափ որ Դաւթի մահուչափ թշնամի էր, իւր որդին Յովնաթանն ալ այնչափ անոր բարեկամ էր։ Ասոր վրայ Դաւիթ իւր որսին գալը յայտնեց անոր. Յովնաթան ուզեց փորձ մը ընել, որ Դաւթի դէմ իւր հօրը ունե-ցած ատելութիւնը փարատէ. սակայն Յովնա-թանու այս փորձը ապարդիւն եղաւ։ Քանզի Սաւուղ զինքը յանդիմանելով ըսաւ. «Ով ա-պստամբ ու չար զաւակ. ես չե՞մ գիտեր որ դուն Յեսսէի որդին ընտրեցիր դէպ խայտառակութեան-համար. քանզի քանի որ անիկայ ողջ է, ոչ դուն սիրտդ հաստատուն է և ոչ քու թագաւորութիւնդ»։ և հրամայեց ըսաւ որ երթան Դաւիթը բերեն ու մեռցնեն. քանզի «անիկայ մահու արժանի է» ըսաւ. և երբ որ Յովնաթան վերստին Դաւթի յանցանք չունենալը կ'ուզէր հաստատել, Սա-ւուղ այնչափ բարկացաւ որ ձեռքի նիզակովը Յովնաթանը զարնել ուզեց։ Այն ատեն Յով-նաթան իմացաւ որ հօրը չէր այս բանը ի

գլուխ հանել, ուստի գնաց Դաւիթը գտաւ և ըսաւ որ ուրիշ երկիր մը փախչի ու ազատի. և խանդաղատանօք հրաժեշտ տալով բաժնուեցան իրարմէ, նորոգելով իրենց միաբանութեան բարեկամութեան ուխտը։

2. Դաւիթ այսպէս ամէնուց պաշտպանութեան շտապով ճամբայ ելաւ բանի մը հոգւով. և գնաց Նոբ բնակած տեղը Աբիմելէք քահանային և հինգ հաց ուզեց. այնպէս ձեւացնելով որպէս թէ թագաւորին կողմանէ գաղտնի գործով տեղ մը կ'երթայ. և շտապով չէ կրցած հաց առնել։ Քահանայն ալ ուրիշ հաց չունենալով առաջաւորութեան (օրհնած) հացէն տուաւ. Դաւիթ ուզեց ու առաւ նաև Գողիաթու սուրը, որ Տէրոջը նուիրուած ըլլալով հոն կը պահուէր. և ճամբայ ելաւ գնաց 'ի Գեթացւոց երկիրը անոնց Անքուս թագաւորին քով։ Բայց երբ հոն տեղ իրեն ով ըլլալը ճանչելով Անքուս թագաւորին ծանուցին, այն ատեն վախցաւ Դաւիթ թէ գուցէ իրեն վնաս մը գայ անկէց. ուստի սկսաւ խենդ ձեւացնել զինքը, որով թագաւորը զինքը մերժեց։ Եւ Դաւիթ հոնկէ ելլելով Մովաբացւոց երկիրը գնաց, ուր տեղ եկան նաև իր ծնողքը և եղբայրքը, նաև ուրիշ Իսրայէլացի փախստական մարդիկ որոց թիւը հետզհետէ վեց հարիւրի հասաւ։ Դաւիթ անոնց հետ ատեն մը հոն մնալէ ետքը՝ Յուդայի երկիրը Հարեթի անտառին մէջ պատսպարեցաւ։

3. Բայց Սաւուղ երբ լսեց Դաւթի փախ-

չէր և մանաւանդ Աբիմելէք քահանային անոր պաշար և Գողիաթի սուրը տալը՝ շատ բարկացաւ. ու անոնց քահանայները բերել տալով՝ ոխառու խռովութեամբ յանդիմանել զանոնք թէ ինչու համար իրեն թշնամիին՝ Դաւթի կողմնակցութիւն ըրեր և պաշար ու զէնք տուեր են. Թէև և Աբիմելէք յայտնեց թէ իր անունովն են տրուած և այնպէս դաւաճանութիւն չէն երևակայած ամենևին, բայց Սաւուղ մտիկ չընելով զանոնքն ալ մեռցընել տուաւ իր ծառային Եդովմայեցի Դովեկին ձեռքով, որ այս բանը եկեր մատներ էր։ Նաև քահանայից Նոբ քաղաքին մէջ մարդ և անասուն բոլոր կոտորել տըւաւ. նաև Աբիմելէքի մէկ որդին Աբիաթարը ազատելով փախաւ Դաւթի քով ապաստանեցաւ։

4. Այն օրերը Դաւիթ իմանալով թէ Փղշտացիք Կէիլայ քաղաքին վերայ եկեր են, գնաց զանիկայ ազատեց. բայց երբ լսեց որ Սաւուղ իր վերայ կու գայ, ելաւ հոնկէ ու սկսաւ աւեր տեղուանք բնակել՝ Յուդայի երկրին Զիփ և Մաոն անապատներուն մէջ, և Աստուծոյ օգնութեամբը ամէն վտանգէ ազատելով՝ Սաւուղի թշնամութեանց փոխարէն ինքը միշտ անյիշաչարութիւն կ՚ընէր, ինչպէս հետևեալ դէպքէն ալ կ՚իմացուի.

Քանզի երբ Դաւիթ Էնգադդայի անապատին մէջ էր, Սաւուղ երեք հազար մարդով եկաւ զանիկայ բռնելու. և հոն ալ հանգչելու համար քարայրի մը մէջ մտաւ որուն ներսի կողմը

Դաւիթ նստած էր ։ Նոյն ատեն Դաւթի քովի մարդիկը ըսին որ այս առիթը չփախցնեն ու Սաւուղը սպաննեն . բայց Դաւիթ այս վատութիւնը յանձն չառնելով՝ միայն անոր վերարկուին ծայրէն կտոր մը կտրեց առաւ ։ Իսկ երբ Սաւուղ դուրս ելաւ հանելէ առանց բան մը իմանալու , յանկարծ Դաւիթ որ անոր վերարկուին կտորը ձեռքն առած՝ որ պատռած էր . քարայրէն դուրս ելաւ և Սաւուղին ետևէն կանչելով՝ երկրպագեց ու — Տէր իմ Թագաւոր , ըսաւ . ինչու՞ կը հաւատաս այն մարդոց , որոնք կ՚ըսեն թէ Դաւիթ քեզի թշնամի է . քու լեզի որ ես Տէրոջը օծեալին դէմ չարութիւն ընեմ. ահա տես որ այսօր Աստուած քեզ իմ ձեռքս տուաւ , այլ ես խնայեցի քեզ . և ահա ա՛լ հայր իմ, տես քու վերարկուիդ ծայրը որ կտրեցի . և խնդրեմ որ սըրտիս մէջ քեզի դէմ չարութիւն չկայ ։ Զայս որ լսեց Սաւուղ սիրտը գութ ելաւ և լալով ըսաւ . — Արդեօք իմ Դաւիթ այդ քու ձայնդ է , ստուգիւ դու ինձմէ արդար ես եղեր որ իմ չարութեանս փոխարէն բարիք հատուցիր ։ և իր ըրածին վրայ զղջալով՝ անոր ապագայ յաջողութեանը համար ալ իր հաւանութիւնը յայտնեց ու ետ դարձաւ . այսու ամենայնիւ Դաւիթ Սաւուղին չվստահանալով դարձեալ ամուր տեղուանք թափառական կը բնակէր ։

5 . Այս միջոցներուն մեռաւ Սամուէլ իննսուն ութը տարեկան և բոլոր Իսրայէլ ժողովելով սուգ ըրին անոր համար , և թաղեցին Սա-

մայի մէջ իր տա՛նը թաղեցին. Սամուէլ մեծ մարգարէներէն մէկն էր, և բոլոր կեանքը մէջ Իսրայէլի վերայ մեծ երախտիք ունեցաւ. Ինքն հաստատեց մարգարէից դպրոցը. ուր տեղ պէտք եղած ուսմունքը սորվելէ զատ նաև պոէտութիւն ու նուագ կը սորվէին.

## ԳԼՈՒԽ Ե.

1. Նաբաղ և անոր կինը Աբիգեա. 2. Դաւիթի մէկ ուրիշ անյիշաչարութիւնը. 3. Դաւիթ փախչելով Գեթացւոց երկիրը կ'երթայ. 4. Ամաղէկացիք Սիկելակը կ'այրեն և Դաւիթի անոնց դէմ յաղթութիւնը. 5. Փղշտացւոց պատերազմը. և Սաւուղ վհուկ կնոջ կը դիմէ. 6. Իսրայէլացւոց յաղթուիլը և Սաւուղի ու երեք որդւոցը մահը. (Ա. Թագ. ԻԵ—ԼԱ.)

1. Դաւիթ այսպէս անապատներու մէջ պըտըտած ատեն օր մը ալ Կարմեղոս լեռը եկաւ իր մարդոցմովը. Հոն տեղ Նաբաղ անուն Մաոնցի մէկը կար շատ հարուստ բայց չար ու ագահ։ Դաւիթ լսելով որ այս մարդը իր ոչխարները խուզելու եկեր և խնճոյք կ'ընէ, ուստի քանի մը մարդ ղրկեց որ երթան զանիկայ շնորհաւորեն, և խնդրեն որ իրենց ալ բաժին հանէ այն ուրախութենէն՝ այնչափ ատեն անապատին մէջ իր հօտերուն պաշտպանութիւն ըրած ըլլալնուն համար. Բայց Նաբաղ մերժեց Դաւիթի խնդիրքը և «Այն փախստական մարդն ո՞վ է ըսաւ որ անոր բաժին հանեմ». Ասոր վերայ Դաւիթ շատ բարկացաւ և անմիջապէս չորս հարիւր հոգի առնելով ճամբայ ելաւ, որ երթայ Նաբաղի բոլոր ունեցածները քանդէ. Բայց Նաբաղի կինը Աբիգեա որ գեղեցիկ ու խոհեմամիտ

կին մը էր. երբ իմացաւ իր էրկանը ըրած հապտութիւնը՝ չհաւնեցաւ, և կասկածելով որ Դաւիթ վրէժխնդրութիւն մը կ'ընէ, ուստի էրկընէն գաղտուկ շատ մը ուտելիք ու գինի առնելով գնաց Դաւիթը գտնելու և խնամոտ ուրախ խօսքերով անոր սիրտն իջեցուց, որ ընծաները ընդունելով դարձաւ իր տեղը. Աբեգեա տուն դառնալուն տեսնելով որ էրիկը գինովցեր և ուրախութեան մէջ է, բան մը չըսաւ. բայց հետևեալ առաւօտուն պատմեց եղածները մի առ մի. որուն վրայ Նաբաղ ահէն ու սրտանեղէն հիւանդացաւ ու տասն օրէն մեռաւ: Դաւիթ լսելով անիկայ՝ փառք տուաւ Աստուծոյ որ զինքը արիւնհեղութենէ պահելով՝ զանիկայ պատժեց: Ապա Դաւիթ իրեն կին առաւ Աբիգեան:

2. Ասկէ յետոյ Սաւուղ Զիփայեաց մատնութեանը խնդրելով Դաւիթի եղած տեղը՝ դարձեալ զանիկայ բռնելու ելաւ, ու եկաւ անապատին մէջ տեղ մը նստաւ իր զօրքովովը. Իսկ երբ անոնք ամէնքը պառկեր էին, Դաւիթ մէկ ընկերով մը մինչև Սաւուղի վրանը մտնել համարձակեցաւ. և իր ընկերը Աբեսա որ կ'ուզէր Սաւուղը մեռցնել՝ չթողուց, և միայն ջրին կուժը և անոր գեղարդը առնելով բարձրաւանդակ տեղ մը ելաւ և հոն տեղէն Սաւուղի զօրապետին Աբեններին և միւսներուն ձայն տուաւ թէ "ինչո՞ւ ձեր տիրոջը զգուշաւոր պահպանութիւն չէք ըներ, կենդանի է Տէր որ

մահու արժանի էք դուք» . և ցուցուց անոնց կուժը և նիզակը որ առած էր Սաւուղի վրանէն . Այն ատեն Սաւուղ ճանչցաւ Դաւթի ձայնը և վերստին զղջալով բարձրին վերայ . «դարձիր որդեակ իմ Դաւիթ ըսաւ , այլ քեզի դէմ չարութիւն պիտի չընեմ» . բայց Դաւիթ չգնաց և մէկը կանչեց որ կուժն ու նիզակը առնէ . ասանկով Սաւուղ դարձաւ իր տեղը .

3 . Բայց Դաւիթ տեսնելով որ վերջապէս օր մը Սաւուղի ձեռքով պիտի մեռնի , առաւ իր կանայքը և հետի մարդիկը առնելով , վերստին Փղշտացւոց երկիրը գնաց , և այս անգամ Դաւիթ շատ սիրելի եղաւ անոնց Անքուս թագաւորին . որ իրեն խնդիրը ընդունելով Սիկելակ անուն գիւղաքաղաքն անոր տուաւ որ հոն բնակի իր մարդովքը . Հոն ալ Դաւիթ Փղշտացւոց չգիտնալով ու անոնց թշնամի ժողովրդոց մէջ ասպատակութիւն կ'ընէր , ու գացած տեղը զամէնքն ալ մեռցնելով շատ կողոպուտներ ձեռք կը բերէր . իսկ Անքուսին այնպէս կը հաւտացնէր թէ Յուդայի սահմանները կը կողոպտէ . Ասով անիկայ այնպէս վստահ եղաւ Դաւթի վրայ որ այն օրերը Փղշտացւոց Յուդայի հետ ընելիք պատերազմին զանիկայ ալ իր մարդովքը մէկտեղ հետ տարաւ իբր անձնապահ . բայց Փղշտացւոց միւս իշխանները կասկածելով որ գուցէ իրենց դաւաճանութիւն մը ընէն , ետ ճամբեցին զանիկայ .

4 . Դաւիթ և իրենները երեք օրէ յետոյ երբ

դարձան ՚ի Սիկելայն, և ահա ցաւալի տեսարան մի տեսան․ Ամաղեկացի աւազակները յարձակեր էին հոն, և գտնուած ամէն բան նա և կանայքն ու տղայք գերի տարեր և շէնքերն ալ կրակի տուեր էին․ Կարծես թէ Դաւթի այս ցաւը բաւական չէր, սկսան նաև քաղքի մարդիկն ալ տրտունջ ընել թէ իր պատճառովն եղաւ այս չարիքը․ Այն ատեն Դաւիթ Աստուծոյ դիմելով հրաման առաւ, ու երկու հարիւր մարդ հոն թողլով միայնակ չորս հարիւր մարդով գնաց Ամաղեկացիքը գտաւ, և յաղթելով անոնց՝ բոլոր առած բաներնին ետ դարձընելէ ՚ի զատ նաև ուրիշ շատ աւար առաւ անոնցմէ․ Դաւիթ յաղթութենէն դառնալէ ետքը, մէծ մը եղաւ կռուի գացողներուն ու միւսներուն մէջ, աւարէն բաժին ունենալու կամ չունենալու վերայօք․ Բայց Դաւիթ զիրենք հաւանեցուց թէ պատերազմի գացողներն ու քաղաքը պահպանողները պէտք է հաւասար իրաւունք ունենան․ և այն ատենէն ասիկայ օրէնք եղաւ Իսրայէլացւոց․

5․ Դաւիթ այս պատերազմին մէջ եղած ատեն տարին Փղշտացիք Իսրայէլի երկիրը մտեր, և Սունամի մէջ բանակնին դրեր էին․ Սաւուղ ալ իր բանակը Գեղբուէ լերան վերայ դրած էր․ Իսկ Սաւուղ Փղշտացւոց բազմութիւնը տեսնելով՝ շատ վախցաւ, ու Տէրոջը հարցուց․ բայց Տէրը չպատասխանեց իրեն և ոչ մէկ կերպով․ Այն ատեն Սաւուղ իր ծառաները զրկեց որ վհուկ մը գտնեն, Թէպէտև ինքը բոլոր

վհուկները արգիլեր ու վերցուցեր էր ։ Վերջապէս իմանալով թէ հոն մօտ տեղերը վհուկ կին մը կայ , երբ գիշեր ատեն ծպտեալ կերպարանքով անոր քով գնաց ․ և աղաչելով կինը կը վախնար , ու ատի երդմամբ վստահացնելով զանիկայ թէ քեզի վնաս մը չգար , խնդրեց որ Սամուէլը (անոր ոգին) իրեն ցուցնէ ։ Նա երբ կինը տեսաւ զՍամուէլ , մեծ ձայնով մը պոռաց ․ և ճանչցաւ այն ծպտեալ մարդուն Սաւուղ ինքն ըլլալը ։ Սաւուղ հանդարտեցնելով զանիկայ , հարցուց թէ Ի՞նչ տեսար ․ և կինը սկսաւ նկարագրել անոր իր տեսած մարդուն կերպարանքը ։ Նա Սաւուղ հասկնալով որ անիկայ Սամուէլն է , երկրպագութիւն ըրաւ ․ և Սամուէլ ըսաւ իրեն ․ «Ինչու զիս աշխատցուցիր ու ինծի կը հարցնես հիմա , որ Տէրոջը խօսքը չպահելուդ համար ինքն ալ քեզմէ հեռացաւ և թագաւորութիւնդ Դաւթի տուաւ ․ ուստի քեզի հետ Իսրայէլացիներն ալ Փղշտացւոց ձեռքը պիտի մատնէ , և դուն ու որդիքդ ալ պիտի սպանուիք» ։ Զանոնք որ լսեց Սաւուղ՝ սարսափած վար ինկաւ , և հացի ուտելու իր ծառայքը և կինը շատ հանեցին զինքը , որ կնոջը պատրաստած կերակուրը ուտելով քիչ մը ոյժ առաւ ու գիշերանց դարձաւ իր տեղը ։

6 ․ Նա ահա հետեւեալ օրը պատերազմի սաստկացաւ երկու կողմէն , և Իսրայէլացիք յաղթուեցան , ու իրենցմէ շատ մարդ մեռաւ ․ նա և Սաւուղին որդւոցմէն երեքը՝ Յովնաթան , Ա-

բինադաբ ու Մելքիսուէ զարնուեցան ու մեռան . Փղշտացիք եկան Սաւուղն ալ պաշարեցին . որ յուսահատութեամբ կռուելու ատեն՝ ինքն ալ զարնուեցաւ նետով . յայնժամ իւր կոպարձակիրին ըսաւ որ զինքը մեռցնէ , որպէս զի Փղշտացւոց ձեռքէն մեռած չըլլայ . իսկ երբ անիկայ վախցաւ այս բանն ընելու , այն ատեն իւր սուրին վերայ ինկաւ ու մեռաւ . կոպարձակիրը զայս տեսնելով ինքը չդիմացաւ , և այն ալ ինքզինքը մեռցուց . Այսպէս վշտագին մահուամբ մեռաւ Իսրայէլացւոց առաջին Թագաւորը Սաւուղ քառասուն տարի Թագաւորելէ յետոյ . որ Թէ և իւր կամակոր և անձնահաճ կրիցը համար մերժուեցաւ ի Թագաւորութենէ , այլ իւր մեծ պատերազմներով որով Իսրայէլի անկախութիւնը պաշտպանեց , եւս և ընդհանուր ազգին նկատմամբ ըրած բարեկարգ կառավարութեամբը իւր հայրենեաց երախտաւոր եղաւ . Ինչպէս կ՚երեւայ վհուկները վերցուցած ըլլալէն ալ . Այս պարտութեան ու դժբաղդութեան վերայ Իսրայէլացիք փախչելով՝ Փղշտացիք եկան անոնց շատ քաղաքները աւերեցին . Եւ հետեւեալ օրը Փղշտացիք Սաւուղին և անոր որդւոցը մարմինները գտնելով պատերազմի դաշտին վերայ . Սաւուղի գլուխը կտրեցին և անոր զէնքերուն հետ իրենց Աստարովթ չաստուածին մեհեանը տարին , և իրենց երկրին ամէն կողմը այս բաներուն աւետիսը ղրկեցին . իսկ անոնց մարմինները Յաբէթ-

սանի պարսպին վերայ կախեցին ։ Նաև Գաղա-ադու Յաբիս քաղաքի քաջ ու երախտագէտ բնակիչները գիշեր ատեն գացին Բեթսանի պա-րիսպին վերայէն Սաւուղի և անոր որդւոց մար-մինները առին, և թերևս վերստին Փղշտա-ցւոց ձեռքը չանցնելու համար այրեցին, ու ա-նոնց ոսկորները Յաբիսի մէջ թաղելով՝ եօթն օր ալ ծոմ պահեցին անոնց վերայ ։

## ԳԼՈՒԽ Զ.

1. Դաւթի մէկ վեհանձնութիւնը և սուգը ։ 2. Քեբրոն գալը և Յուդայի վերայ թագաւորելը ։ 3. Իշբոսթէի թագաւորելը և մահը ։ 4. Դաւիթ բոլոր Իսրայէլի վերայ կը թագաւորէ ։ 5. Երուսաղէմը մայրաքաղաք կ'ընէ ։ 6. Փղշտացւոց կը յաղթէ ։ 7. Տապանակը Երուսաղէմ կը բերէ ։
(Բ. Թագ. Ա.—Ե. Ա. Մնաց. ԺԱ.—ԺԲ.)

1. Դաւթի Սիկելակ վերադառնալուն եր-րորդ օրն էր երբ Ամաղէկացի մը եկաւ հոն՝ բե-րելով Սաւուղի և որդւոցը մահուան և Իսրայէլի պարտութեան գոյժը, և ըսաւ թէ «Սաւուղ վի-րաւորուած ըլլալով խնդրեց որ զինքը մեռցնեմ. ես ալ այնպէս ըրի և ահա անոր ապարանջանն ու թագը քեզի՝ իմ տիրոջս բերի»։ Ասոր վրայ Դաւիթ և իր հետը եղողները, իրենց հան-դերձը պատռեցին և լալով սուգ ըրին և մինչև երեկոյ ծոմ պահեցին ։ Դաւիթ նոյն Ամաղէկա-ցին ալ անմիջապէս սպաննել տուաւ որ խոստո-վանած էր Սաւուղն ինքը մեռցնելը ։ Դաւիթ այն աստիճան ցաւեցաւ Սաւուղի և որդւոցը մանա-ւանդ Յովնաթանու վերայ որ սրտաշարժ ող-բ մը երգեց որ կը սկսի Արձանացիր Իսրայէլ և այլն, որ-

տուիրելով որ այն երգը Յուդայի որդւոցը սո-ցընեն ։ Այս դէպքէն ալ յայտնի կ'երեւի որ Դաւիթ միշտ անյիշաչար գտնուեցաւ Սաւուղի կատաղածութեանը ըրած թշնամութեանցը դէմ, և ինչպէս կը փափաքէր իրեն պէս քաջ և հայրենասէր մէկու մը, միշտ յարգեց զանիկայ իբր օծեալ, իբր թագաւոր և հայր, և երախտաւոր իւր հայրենեացը ։

2. Անկէ յետոյ Դաւիթ Աստուծմէ հրաման առնելով Յուդայի Քեբրոն քաղաքը եկաւ ։ Յուդայի ժողովուրդը երբ առաւ Դաւիթի գալը, ժողովուեցան անոր քով և զանիկայ իրենց վրայ թագաւոր օծեցին ։ Դաւիթ լսելով Յաբիսի բնակչաց ցուցած այն զգացմունքը որով Սաւուղի և որդւոցը մարմինները թաղեր էին, մարդ ղրկեց ու գովեց զիրենք, և քաջալերելով օրհնեց ու բարիք խոստացաւ իրենց ։

3. Իսկ Սաւուղի զօրավարը Աբեններ՝ Սաւուղին որդին Յեբուսթէն Իսրայէլի տասն ու մէկ ցեղին վրայ թագաւորեցուց Մանայեմի մէջ ։ Անկէ պատերազմ գրգռեցաւ այն երկու կուսակցութեանց մէջ, որ բաւական ատեն տեւեց ։ Բայց Դաւիթի կողմը միշտ կը զօրանար. մանաւանդ երբ Աբեններ Յերուսթէի հետ գժտելով Դաւիթի կողմն անցաւ և սիրով ընդունուեցաւ, որոյ ձեռքով Դաւիթ ետ դարձուց իւր կինը Մեղքողը զոր Սաւուղ ուրիշի մը տուած էր ։ Բայց Աբեններ քիչ մը ետքը դաւաճանութեամբ սպաննուեցաւ. Դաւիթ

զօրավարէն Յովաբէն, պատերազմի մէջ անոր եղբայրն Ասայէլը սպաննած ըլլալուն համար։ Ասոր վերայ բոլոր ժողովուրդք և Դաւիթ շատ ցաւեցան. և Դաւիթ անոր գերեզմանին վերայ բարձր ողբ մի ալ ըրաւ. և այն օրը սուգ պահեց, ու անէծք կարդաց Յովաբին վերայ։ Աբեններին մեռնելէն ետքը Յեբուսթէի երկու գնդապետները օր մը քանացած ատենը զանիկայ սպաննեցին երկու տարի թագաւորելէն ետքը, և գլուխը Դաւթի բերին, որ զայրանալով այս անօրէն դաւաճանութեան վերայ, զերենք երկուքն ալ մեռցնել տուաւ. և Յեբուսթէի գլուխը Քեբրոնի մէջ Աբեններին գերեզմանը թաղել տուաւ։

4. Այսուհետեւ բոլոր Իսրայէլացիք Քեբրոնի մէջ ժողվուեցան Դաւթի քով, և անոր ուխտ ընելով բոլոր Իսրայէլի վերայ թագաւոր օծեցին (2955)։ Դաւիթ եօթն ու կէս տարի Յուդայի վերայ թագաւորեց և երեսուն ու եօթն ու կէս տարեկան էր երբ բոլոր Իսրայէլի վերայ թագաւորեց։

5. Դաւիթ երբ այսպէս զօրացաւ, գնաց ու Երուսաղէմը և Սիոն լերան վերայի ամրոցը պաշարեց, որ դեռ Յեբուսացւոց ձեռքն էր։ Յեբուսացիք զինքը ծաղրելով պատասխան զրկեցին թէ «Հոս չես կրնար մտնել՝ եթէ հոս տեղի կոյրերն ու կաղերը չվերցնես»։ այսպէս թէ ըսել կ'ուզէին՝ քեզի դէմ դնելու համար մեր կոյրերն ու կաղերը բաւական են։ Բայց Դաւիթ զօրաւորութիւն խոստանալով բերդին վերայ յաջ-

ձախողին, և առա Յովսէփ գործակալը յարձակե-
ցաւ անոր վերայ ու նուաճեց, որով իր գոր-
ծակալութիւնը վերահաստատուեցաւ : Վաղարշ
Սիմոնի բերդը ապաստանարան ըրաւ ու Բագա-
րէ կոչեց. և Լիւստրան ալ շինութիւններով
մեծցուց ու մայրաքաղաք ըրաւ : Վաղարշ նաւ-
իրեն համար Թագաւորական տուն շինեց որուն
պէտք եղած նիւթերն ու ձարտարապետները
Տիւրոսի Բէլոսէ Թագաւորը ղրկեց .

6 . Իսկ Փղշտացիք լսելով Վաղարշի յաջողու-
Թիւնները՝ անոր վերայ պատերազմի ելան և ե-
կան Լիւստրայի ու Բեթլեհեմի մէջ Ամբարայ
ձորը բանակեցան : Վաղարշ ալ Բառնաբայ հրա-
մանն առնելով յարձակեցաւ անոնց վերայ և մեծ
յաղթութիւն ձեռք բերաւ : Այս պատերազմին
տանն երբ Վաղարշ տառապել տաղէն ծարաւած
էր, «Աշտարակի Թէ բառ, Բեթղեհեմի դրան քովի
ջրհորէն խմել ջուր բերող մը ըլլար» : Այս լսե-
լով իր քաջ կտրիճներէն երեք հոգի, անմիջա-
պէս Թշնամեաց բանակը ճեղքեցին ու գնացին
հոն առին ջուր բերին իրեն : Զայս որ տեսաւ
Վաղարշ, «Քաւ լիցի, ըսաւ, որ անոնց կենաց
վտանգովը բերուած այս ջուրը խմեմ» . ու զա-
նիկայ Թափելով՝ Տէրոջը նուիրեց .

7 . Վաղարշ Բառնաբայ օգնութեամբը իր
Թշնամեաց յաղթելէ յետոյ ուզեց որ Բառնաբայ
տապանակը Աշտարակէմ բերէ . ուստի շատ
մեծ բազմութեամբ երաւ Կարիաթարիմ գնաց,
և Աբինադաբ քահանային տունէն տապանակը

վերցնելով նոր սայլ մը վերայ դրին. և մեծ հանդէսով. երգելով. նուագելով ու պարելով ճամբայ հանեցին. Դաւիթ ալ հանդէսին առջեւ ընկած էր ու կը պարէր ուրախութեամբ. Իշու եգան որ ճանապարհին տեղ մը եզները սայլը ծռեցին. և Աբինադաբին որդին Ոզա ձեռքը երկնցուց ու տապանակը բռնեց, և իսկոյն պատժուեցաւ ու մեռաւ. որով այն տեղւոյն անունն ալ Փարէս Ոզա (խորտակումն Ոզայի) կոչուեցաւ. Ասոր վերայ Դաւիթ վախնալով տապանակը իր քաղաքը տանելու. Գեթացի Աբդեդոմին տունը տարաւ, ուր տեղ երեք ամիս կենալէ ետքը երբ տեսաւ որ Տէրը անոր տունը օրհնեց. այն ատեն գործեալ նոյն մեծ հանդէսով իր քաղաքը բերաւ տապանակը. և յառաջ կ չինել տուած նոր խորանին մէջ դրաւ. և շատ ողջակէզներ ու զոհեր մատուցանելով՝ բոլոր ժողովրդեան ու տեղիք բաժնեց. Իսկ տապանակին առջեւ Դաւթի պարելը տեսնելով պատուհանէն իր կինը Մելքող՝ տան գործած ատենը իմացուց անոր իր անհաճութիւնը. Դաւիթ ալ Սաւուղ իրեն բրած բարերարութեանցը փոխարէն իր այնպէս ընելու պարտականութիւնը խնդրելով՝ յանդիմանեց զանիկայ. այս բանին համար Մելքող պատժուելով՝ զաւակ չունեցաւ երբէք. Դաւիթ ուզեց նաև տաճար մը շինել Աստուծոյ. բայց Աստուած Նաթան մարգարէի միջոցաւ իմացուց իրեն թէ՝ այն տաճարը քու որդիդ պիտի շինէ.

## ԳԼՈՒԽ Է.

1. Դաւթի կարգադրութիւնները. 2. Ամմոնացւոց թշնամութիւնը. 3. Դաւիթ անոնց կը յաղթէ. 4. Դաւթի մեղանչելը. 5. ապաշխարելը. 6. Սողոմոնի ծնունդը.
(Բ. Թագ. Է—ԺԲ. Ա. Մնաց. ԺԹ.)

1. Ասկէ ետքը Դաւիթ Փղշտացւոց. Մովաբացւոց եւ Ասորւոց հետ պատերազմելով մեծ յաղթութիւններ ըրած ատեն նաեւ ներքին բարեկարգութիւններու ալ ձեռք զարկաւ. Իսրայէլացւոց ցեղերուն գլխաւորները զարձեալ իրենց իշխանութեան մէջ թողուց. իր քով զօրապետներէն զատ երկու հոգի որոշելով ամէն մէկուն հրամանին ներքեւ քսան ու չորսական հազար մարդիկ ենթարկեց, որոնք ամէն ամիս իրենց խումբերովը թագաւորական ծառայութիւնները կ'ընէին փոխանակաւ. Ասկէ զատ փոյթ ունեցաւ խելացի խորհրդականներ եւ ամէն գործի համար արժանաւոր մարդիկ. մանաւանդ ջանաց նաեւ պատերազմող ու քաջ մարդիկ ունենալու, որոց գլխաւորներուն թիւը մինչեւ երեսունի կը հասնէր եւ ամէն մէկը իրապէս քաջ էին. Իսկ քահանաներն ու Ղեւտացիները կարգերու եւ դասերու բաժնեց. Ղեւտացւոց դասերուն ամէն մէկուն առանձին պաշտօններ յանձնեց. ինչպէս, երգեցողութիւն, տաճարին պահպանութիւն, գանձապահութիւն, դատաւորութիւն, եւ այլն. Աշխա-մշտութիւնը եւ ուղէտութիւնը իր իսկ գործակցութեամբը յառաջացուց, յորինելով ու-նաղելով ազգաց մեծ մասը. Իսկ ազգա-

ներէն մէկ քանին՝ որոնք Ասափայ, Կորխայ որդ-ւոց և այլոց գլխաւոր սաղմոսերգուաց անուն-ները ունին, զանոնք կամ իրենք յօրինած են և կամ նուագի տուած։ Դաւիթ այս բաներս ընե-լէ զատ նաև Սաւուղի որդին Յովնաթանն ալ յիշելով՝ անոր որդին Մեմփիբոսթէն Լշրու-դէմ բերել տուաւ ու հետը բնակեցուց, և իրեն հանապազօրեայ սեղանակից ըրաւ։

2. Դաւիթ՝ շատ յաղթութիւններէ զատ Ամմոնացւոց հետ ալ մեծ պատերազմ՝ ու յաղ-թութիւն մը ըրաւ, որուն պատճառն էր այս։

Ամմոնացւոց թագաւորը Նաաս որ Դաւթի բարեկամն էր՝ մեռնելով, անոր որդին Անոն յաջորդեց։ Ուստի Դաւիթ դեսպաններ ղրկեց որ զինքը մխիթարեն և իր դաշնակցութիւնը շնորհաւորեն։ Բայց Անոն իր իշխաններուն խորհրդին հաւատալով՝ զանոնք լրտես համարեց, ու անոնց մօրուքը ածիլել տալով՝ զգեստնին ալ ծնկերնուն 'ի վեր կտրել տուաւ, ու այնպէս խայտառակութեամբ ետ ղրկեց։ Դաւիթ այս բանը իմանալով շատ զայրացաւ, և ըսաւ որ Ե-րիքովի մէջ նստին մինչև որ մօրուքնին բուսնի. և ինքն պատերազմի պատրաստուեցաւ։

3. Իսկ Ամմոնացւոց թագաւորը վախնալով Դաւթի պատրաստութենէն, Ասորւոց իշխան-ները իր հետ միաբանեց ու այնպէս դէմ ելաւ Դաւթի։ Դաւիթ ալ Յովաբ զօրավարը և Ա-բեսսան շատ զօրքով անոնց դէմ ղրկեց, որոնք երկու անգամ յաղթեցին անոնց և եօթն հա-

բիւր պատերազմական կառք ու քառասուն հազար ձիաւոր ջարդեցին ։ Նոյնէն Ամմոնացիք ուրիշ փորձ մը ալ ըրին պատերազմի . բայց Դաւիթ զօրավար Յովաբը ղրկեց զօրքով որ գնաց մինչեւ անոնց թագաւորական քաղաքը Ռաբաթը պաշարեց . եւ առնելու մօտ եղած ատեն Դաւիթը կանչեց որ գայ և իւր ձեռքը առած ըլլայ ։ Այսպէս նոյն մայրաքաղաքը առին և անոր բնակիչները սպաննելով շատ աւար ձեռք ձգեցին որոնց մէջ էր նաեւ անոնց թագաւորին գոհարազարդ թագը որ տաղանդ մը ոսկի ծանրութի ունէր , զոր Դաւիթ իրեն սկսաւ գործածել . Այսպէս Դաւիթ շատ ազգեր նուաճելով՝ սահմանները մինչեւ Եփրատ գետը , Համաթէն Արաբիա , արեւմուտքէն Միջին ծով , և հիւսիսէն մինչեւ Դամասկոս տարածեց իւր իշխանութիւնը . և շատ արծաթ ու ոսկի և պղինձ դիզեց յաղթութիւններէն , որք յետոյ տաճարին շինութեանը գործածուեցան ։

4 . Սակայն Դաւիթի այս յաջողութիւնները կարծես թէ իրեն եղծման առիթ եղան . քանզի Ամմոնացւոց վերջին պատերազմին ատեն երբ Յովաբ անոնց մայրաքաղաքը պաշարելու զբաղած էր , Դաւիթ Երուսաղէմի մէջ իւր տանիքին վերայ իրիկուան մը դէմ՝ շրջելու ատեն՝ խիստ գեղեցիկ կին մը տեսաւ . և փոխանակ այս փորձութենէն խուսելու , սկսաւ անոր ով ըլլալը հարցնել , և զանիկայ բերել տալով մեղանչեց անոր հետ ։ Բայց Դաւիթ իւր այս յանցանքը ծած-

կերաւ. Համար աւելի մեծ յանցանքի մը մէջ ըն-
կաւ. վասն զի այն կնոջ Բերսաբէի էրիկը Ու-
րիա Քետացին որ Յովաբի հետ պատերազմի գա-
ցած էր. Աշխատեցաւ՝ բերել տուաւ որպէս թէ
գործի մը համար, և պատերազմին վերայօք տե-
ղեկութիւններ հարցունելէ ետքը հրաման տուաւ որ
իր տունը երթայ և հանգստանայ. Բայց Ուրիա
որ կարիճ ու առաքինի մարդ մը էր, խիղճ ըրաւ
իր տունը երթալ, քանի որ իր ընկերակիցները
պատերազմի դաշտին մէջ կը տառապէին. ուստի
Դաւթի պալատին մէջ պառկեցաւ. Դաւիթ
տեսնելով որ իր հնարքը ի դերեւ ելաւ, մտմտա-
լով որ իր յանցանքը մահուամբ պատժելու
արժանի էր ըստ օրինաց, ուստի Յովաբին գաղտ-
նի գիր գրեց որ Ուրիան պատերազմին վտան-
գաւոր տեղը թողու որ զարնուի ու մեռնի. և
այս թուղթը Ուրիայի ձեռքով Յովաբին ղրկեց.
Յովաբ ալ այնպէս ըրաւ ու խեղճ Ուրիան սպան-
նուեցաւ. Իսկ Բերսաբէ իր էրիկանը մահը լը-
սելով սուգի մէջ մնաց. բայց երբ սուգը անց-
ցաւ, Դաւիթ իրեն կին առաւ զանիկայ, որ
իրեն որդի մը ալ ծնաւ.

5. Բայց Դաւիթի այս բռնածը Տէրոջը աչքե-
րուն դէշ երեւցաւ. ուստի Նաթան մարգարէն
ղրկեց որ երթայ ու անոր յանցանքը երեսը տը-
ւաւ հետեւեալ յարմար ու սքանչելի առա-
կով. «Երկուք կար, քաղաքի մը մէջ մէկ հա-
րուստ և մէկ աղքատ մարդիկ կային. օր մը հա-
րուստին հիւր գալով՝ անիկայ իր բազմաթիւ

ոչխարներուն խնայեց ու գնաց աղքատին ու-
նեցած միակ ոչխարը յափշտակեց ու զենեց զա-
նիկայ իւր հիւրին համար։ Այն ատեն Դաւ-
թի բարկութիւնը բորբոքելով այն մարդուն
դէմ, ըսաւ. «Կենդանի է Տէր որ այդ մարդը
մահու արժանի է, և պէտք է չորեքպատիկը հա-
տուցանէ գառնուկին»։ Այս խօսքին վրայ Նա-
թան պատասխանեց. «Դուն ես այն անիրաւ մար-
դը. Ահա Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ՚ըսէ.
Քեզ Իսրայէլի վրայ թագաւոր ըրի և այսչափ
բարիքներ պարգեւեցի, ետքը դուն որ իմ օ-
րէնքս անարգեցիր և Ուրիային կինը յափշտա-
կեցիր ու զանիկայ անիրաւութեամբ սպաննել
տուիր, ուստի սուր համար յաւիտեան չպիտի
վերնայ տունէդ քու անէդ, և քու կիներդ ուրիշ-
ները պիտի խայտառակեն. և դուն որ այս բանը
ծածկաբար ըրիր, ես՝ ի տես ամենեցուն պիտի
պատժեմ»։ Այն ատեն Դաւիթ զղջալով և ա-
ռանց ուրիշ խօսք մը ընելու անմիջապէս խո-
նարհելով՝ Մեղայ Տեառն ըսաւ. և Նաթան պա-
տասխանեց. «Տէրն ալ քու մեղքդ ներեց. բայց
որովհետև այս բանը ընելովդ Տէրոջը թշնամի-
ներուն հայհոյելու առիթ տուիր, ուստի Բեր-
սաբէի այն ծնած տղան անշուշտ պիտի մեռնի»։

6. Ու ինչպէս որ Նաթան մարգարէն ըսաւ,
քիչ օրէն այն տղան մեռաւ։ Բերսաբէէ յետոյ
ուրիշ որդի մը ծնաւ Դաւիթի զոր Սողոմոն[1] կո-
չեց։ Իսկ և Դաւիթ իւր ծերանալուն գլխու մը նա

1 Կոչեցաւ նաև. Յեդիդիա (սիրելի Տեառն)։

և յանձնելով ապաշխարութիւն ալ յայտնեց և իւր մեղքը թողուեցաւ. բայց ոչ անոր պատիժները. որոց առաջինը այն տղուն մեռնիլը ըլլալով՝ նաև գժնդակ պատահարներ ալ սկսան գալ իւր վերայ.

## ԳԼՈՒԽ Ը.

1. Դաւիթի որդին Աբիսողոմ. 2. Աբիսողոմ Թագաւոր կը հրատարակուի. և Դաւիթ կը փախչի. 3. Ճանապարհին իրեն պատահածները. 4. Աբիսողոմի ըրածները. 5. Յաղթութիւնը. մահը. և Դաւիթի սուգը. 6. Դաւիթի յերուսաղէմ դառնալը. և Սաբէէի ապստամբութիւնն ու մահը. 7. Գաբաւոնացւոց պատուած հատուցումը. 8. Դաւիթ կը համրէ զժողովուրդը. 9. Աստուած ալ մահ կը ղրկէ. (Բ. Թագ. ԺԳ—ԻԴ. ԵՒ Ա. ՄՆԱՑ. ԻԱ.)

1. Դաւիթ իւր Մաաքա անուն կնոջմէն մէկ մանչ ու մէկ աղջիկ զաւակ ունեցաւ. Աբիսողոմ ու Թամար, որոնք երկուքն ալ շատ գեղեցիկ էին. Եւ եղաւ որ իրեն Աքինոամ կնոջմէն ունեցած որդին Ամնոն, որ իւր որդւոցը անդրանիկն էր, Թամարին սիրահարելով՝ աններելի փաստութեամբ զանիկայ խաբելէ յետոյ չարաչար անարգութեամբ ալ վռնտեց իւր քովէն. Այս չարութիւնը լսելով Դաւիթ խիստ տրտմեցաւ. իսկ Աբիսողոմ առթի մը կը սպասէր Ամնոնէն վրէժ առնելու համար. Ասոր վերայ երկու տարի անցնելէ ետքը Աբիսողոմ իւր գիւղին մէջ խնճոյք մը ընելով Ամնոնն ալ հոն հրաւիրեց, և երբ ամէնքը գինիով զուարթացած էին, իւր ծառայից ձեռօք Ամնոնը մեռցնել տուաւ. Իսկ ինքն հօրմէն փախչելով Գեսուրի երկիրը փախաւ, ուր անդի թագաւորին Թողմիին աղջիկն էր իւր մայրը. Աբիսողոմ երեք տարի կեցաւ հոն տեղ, մինչև որ Յովաբի միջնորդութեամբ

հրաման ըրաւ հայրը որ դառնայ Երուսաղէմ բայց իւր երեսը չտեսնելու պայմանաւ .

2. Աբիսողոմ երկու տարի այսպէս Երուսաղէմի մէջ նստելէ ետքը յաջողեցաւ հաշտուիլ իւր հօրը հետ՝ Յովաբի ձեռօք . ու այնուհետեւ սկսաւ զանազան հնարքներով ժողովրդեան սիրտը իրեն գրաւել : Չորս տարի այսպէս շարունակելով երբ ըստ բաւականին կուսակիցներ գտած էր , հրաման ուզեց հօրմէն որ Քեբրոն երթայ և հոն կատարէ իրեն Աստուծոյ ըրած մէկ ուխտը : Ասոր Երուսաղէմէն ալ երեք հարիւր մարդ հետը առնելով գնաց հոն . և ամեն ցեղերէն ալ մարդիկ ժողված ըլլալով յայտնեց իւր ապստամբութիւնը հօրը դէմ , որուն հաւանեցան ամեն ներկայ եղողները . և Դաւթի մեծ խորհրդականը Աքիտոփէլ ալ Աբիսողոմայ կողմն անցաւ . Այս դաւաճանութիւնը այնքան զօրացաւ , որ Դաւթի համար փախչելէ զատ ուրիշ հնար մը չմնալով , իւր հարճերէն տասը կին իւր տանը պահպանութեան համար , և իւր մտերիմը Արաքացի Քուսին ալ Աքիտոփէլի խորհուրդը ցրելու և Աբիսողոմայ ըրածները իրեն իմացընելու համար հոն թողուց . իսկ բոլոր ընտանիքը , հաւատարիմ բարեկամները , զօրապետները ու անձնապահ զօրքերը , և ժողովուրդէն ալ բաւական կտրիճ մարդիկ իրեն հետ Երուսաղէմէն ելլելով՝ սկսան փախչիլ անապատին կողմը . Սադովկ քահանայն ու Աբիաթար ալ ուզեցին տապանակն առնել ու Դաւթի հետ

երթալ. բայց ինքը չթողուց։

3. Դաւիթ փախչելու ատենն ալ ուրիշ վիշտեր կրեց. Մեմփիբոսթէի ծառան Սիբա՝ ընծաներով զինքը դիմաւորեց և իր տիրոջը համար բաւ թէ անիկայ ալ թագաւորելու աչք ունի, որ Դաւիթի սրտին մեծ ցաւ տըւեց։ Միանգամայն Սաւուղի ազգականներէն Սեմէին բաժը որ լեռան մը վերայէն հող ու քար կը թափէր Դաւիթի վերայ ու կ՚ըսէր. «Ելիր, ելիր, մարդասպան անօրէն մարդ. ահա Աստուած Սաւուղի տան արիւնը քու վերայ դարձուց. դու անոր թագաւորութիւնը յափշտակեցիր, ուստի հիմա ալ բաժդ գտար քու դաւերդ»։ Յովաբի եղբայր Աբեսսա զօրավարը չկրնալով համբերել այս խօսքերուն, ուզեց զանիկայ սպաննել, բայց Դաւիթ չթողուց ու ըսաւ. «Ան իմ որդիս զիս կը հալածէ, ո՛ւր մնաց ասիկայ. թող տուէք որ անիծէ, քանզի Տէրը պատուէս կ՚ուզէ. դուցէ տեսնէ իմ նեղութիւնս ու ողորմի ինծի»։ Իր յոգնած ըլլալով՝ հոն մօտ տեղերը հանգչեցան։

4. Իսկ Աբիսողոմ իր մարդիկներովը եկաւ Երուսաղէմ, և իր հօրը տունը մտնելով անոր ամէն ունեցածին տիրեց և հարճերին ալ պղծեց։ Աքիտոփէլ ուզեց որ անմիջապէս զօրք առնելով Դաւիթի ետևէն երթայ. և «քանի որ անոնք յոգնած են, կը յաղթեմ, և միայն Դաւիթը սպաննելով միւսները քու կողմդ կը դառնան» ըսաւ Աբիսողոմին։ Բայց Քուսի որ Ա-

բիսողոմի ներկայացեր և առ երեսս անոր ծառայել կը ձեւացնէր . Աքիտոփէլի խորհուրդը ջնեց . ըսելով թէ՝ Դաւիթ և հետը եղողները քաջ մարդիկ ըլլալով դուցէ յուսահատաբար կռուին ու յաղթեն , ուստի պէտք է ըսաւ՝ մեծ բանակ մը կազմել ու այնպէս երթալ անոր վերայ . Աբիսողոմ և ուրիշներ ալ Քուսիի տուած խորհուրդին հաւնեցան , ուստի անիկայ ալ Սադովկ քահանայի միջոցաւ իսկոյն լուր ղրկեց Դաւթի որ շուտով Յորդանանէն անցնի ու փախչի . Այսպէս ազատեցաւ Դաւիթ , որուն համար ամէն յոյս հատած էր եթէ Աստուած չհսկէր անոր վրայ . և Աբիսողոմ ընդունեց Աքիտոփէլի խորհուրդը . Իսկ Աքիտոփէլ տեսնելով որ իր խորհուրդը չընդունուեցաւ և յաղթութիւնը երկբայութեան մէջ մնաց , յուսահատեցաւ ու գնաց ինքզինքը կախեց .

5 . Այսպէս կըցաւ փախչիլ Դաւիթ ու Յորդանանը անցնիլ . և հոն տեղ հանգստանալով զօրացաւ , և իր վաղեմի բարեկամները առատ պաշար բերին իրեն . Իսկ Աբիսողոմ՝ Ամասայի քաջ զօրավարին հետ շատ զօրքով Դաւթի վերայ եկաւ . Դաւիթ ալ իր ունեցած զօրքերը կարգի դնելով պատերազմի սկսաւ . ինքն ալ թէ և կուզէր պատերազմի մտնել , բայց չթողուցին , ուստի ամէնուն ալ պատուիրեց որ Աբիսողոմայ կենացը խնայեն . Դաւթի մարդիկը թէև քիչ՝ բայց ընտիր պատերազմողներ ըլլալնին , յաղթութիւնը վաստակեցան . և Աբիսո-

ղոմի կողմէն բազմաթիւ մարդիկ ինկնալով՝ մնացեալները Եփրեմի անտառը փախան։ Աբիսաղոմ ալ անտառին մէջէն փախչելու ատեն, իր երկայն մազերը ծառի մը ճիւղերուն պլլուեցան, ու հեծած ջորին տակէն ելնելով՝ ինքն այնպէս կախուած մնաց։ Դաւթի զօրքերը ատիկայ տեսնելով փախչան անոր պատմելու Դաւթի սպասաւորին համար. բայց Յովաբ երբ իմացաւ, քանի մը մարդով գնաց ու երեք նետ արձակելով անոր սրտին՝ սպաննեց, ու մարմինը խոր փոսի մը մէջ նետել տալով՝ վրան ալ քարակոյտ մը դիզել տուաւ. ու փող հնչեցնել տալով պատերազմը դադրեցուց։ Այն ատեն մէկ երկու հոգի փութացին ու Դաւթի աւետիս բերին թէ պատերազմը յաղթեցինք. բայց երբ Դաւիթ իմացաւ թէ Աբիսաղոմն ալ մեռաւ, սկսաւ ողբալ և առանձին տեղ մը քաշուելով լալ. «Որդեակ իմ Աբիսաղոմ, Աբիսաղոմ որդեակ իմ, երանի թէ քու տեղդ ես մեռած ըլլայի, որդեակ իմ»։ Դաւթի այս ողբը զօրքերն ալ լսելով տրտմեցան, մինչեւ որ Յովաբ հազիւ կրցաւ համոզել զԴաւիթ որ ողբը վերջացնէ, գոնէ զօրաց սիրտը շահելու համար, որք այնչափ աշխատութիւն էին կրեր իրեն համար։

6. Այսուհետեւ Դաւիթ պատգամաւորութիւն զրկեց Յուդայի ժողովրդեան. և Յովաբու անդթութեանց համար ցաւած ըլլալով Ամասայիին զօրապետութիւն խոստացաւ։ Ասորի անոնք ալ զինքը դիմաւորելով Յորդանանէն

անցուցին ։ Սեմէի եկաւ թողութիւն խնդրեց Մեմփիբոսթէ ալ ինքզինքը արդարացնելու փութաց ։ Իսկ Իսրայէլի միւս ցեղերը որ Յուդայի ցեղէն առաջ յամառութիւն ցուցած էին Դաւթի վերադառնալուն, սկսան Յուդայի ցեղին հետ վիճիլ թէ՝ ինչու առանց մեզի Թագաւորը ետ դարձուցիք, քանի որ բոլոր մենք ամէնքնիս աւելի իրաւունք ունինք անոր վրայ ։ Այս վէճին պատճառաւ և ահա Բենիամին ցեղէն Սաբէէ անուն մէկը գլուխ քաշեց և բոլոր Իսրայէլը անոր կողմը յարեցան ։ Դաւիթ երբ Երուսաղէմ եկաւ, հրամայեց Ամեսային որ Յուդայի մարդիկը ժողվէ . բայց երբ անիկայ որոշեալ ատենէն աւելի ուշացաւ, Դաւիթ ալ Յովաբ և Աբեսսա զօրավարները Սաբէէի վրայ ղրկեց, որպէս զի ժամանակ չանցնի ու շատով նուաճի ։ Յովաբ որ Ամեսայի վրայ կը նախանձէր, ճանապարհին անոր պատահելով դաւաճանութեամբ սպաննեց զանիկայ ։ Ապա Յովաբ իւր զօրքովը Սաբէէի ետեւէն իյնալով Աբէլ քաղաքին մէջ պաշարեցին զանիկայ . սակայն իմաստուն կնիկ մը պարսպին վրայէն Յովաբը համոզեց որ թշնամութիւնը դադրեցնէ, և գնաց իւր քաղաքացիքն ալ համոզեց որ Սաբէէի գլուխը կտրելով պարսպէն վար նետեցին, որով պատերազմը վերջացաւ ։

7. Այն օրերէն ետքը երեք տարի սով եղաւ երկրին վրայ . Դաւիթ ալ Տէրոջը հարցնելով իմացաւ որ Գաբաւոնացւոց դէմ Սաւուղի ըրած

անիրաւութեանը համար էր ․ Ուստի անոնց խնդրանօք Սաւուղի ցեղէն եօթն հոգի Գաբաւոնացւոց յանձնեց, որ սպաննեցին. և սովը դադրեցաւ ։ Նաև այս ամենուն մարմինները նաև Սաւուղի և Յովնաթանու ոսկորներն ալ Յաբէսի քաղաքէն հանելով, ամէնը մէկէն Սաւուղի հօրը Կիսի գերեզմանին մէջ թաղեցին ։ Ասկէ յետոյ Դաւիթ ուրիշ պատերազմներ և յաղթութիւններ ալ ըրաւ Փղշտացւոց դէմ. բայց անգամ մը քիչ մնաց որ սպաննուէր, ուստի իր մարդիկը չթողուցին զինքը որ մէկ մ' ալ պատերազմի մէջ մտնէ ։ Այսպէս փրկութիւնրէ յետոյ Դաւիթ հանդստանալով, շնորհակալութեան երգ մը երգեց Աստուծոյ որ ազատեց զինքը յամենայն նեղութեանց. (Սաղ. ԺԸ.) ։

8. Նաև եղաւ որ Տէրոջը բարկութիւնը նորէն Իսրայէլի վրայ բորբոքելով շարժեց զԴաւիթ որ հպարտութեամբ մը ուզեց համրել ժողովուրդը ։ Ուստի Դաւիթ Յովաբը կանչեց և անոր ըսաւ որ այն գործը 'ի գլուխ հանէ ․ Յովաբ թէև գործին դժուարութիւնը ցուցուց, բայց թագաւորին ստիպելովը ընդունեց. և այս գործին համար պէտք եղած մարդիկը հետն առնելով բոլոր Իսրայէլի սահմանները ինն ամիս ուելի պտըտեցաւ ։ Սակայն ակամայ յանձն առած ըլլալուն համար Բենիամինի ու Ղևեայ ցեղերը չհամրելով, և թերևս Յուդայի ցեղէն զատ միւս ցեղերուն համար այնչափ ճշդութիւն ալ չընելով, այն համբը բերաւ Դաւիթի, որ կը

պարունակէր հինգ հարիւր հազար Յուդայի ցեղէն և մէկ միլեօն հարիւր հազար Իսրայէլի միւս ցեղերէն զէնք բռնելու կարող մարդիկ։

9. Դաւիթ այս բանը ընելէ ետքը խիղճը դրդեց զինքը և հասկցաւ որ բռածը հպարտութեան ոգւով էր, և աղաչեց Տէրոջը որ ներէ։ Սակայն հետևեալ առաւօտուն Տէրոջը կողմէն Գադ մարգարէն գալով առաջարկեց Դաւիթի որ այն երեք պատիժներէն մէկն ընտրէ. կամ երեք տարի սով, կամ երեք ամիս պատերազմ և կամ երեք օր մահ։ Դաւիթ մտածելով որ ամենն ալ ծանր են, «լաւ է, ըսաւ, Աստուծոյ ձեռքն իյնալ. որուն գթութիւնը շատ է»։ ուստի մահն ընտրեց։ Եւ ահա իսկոյն մահտարաժամն սկսաւ, ու մինչև կէսօր եօթանասուն հազար մարդ մեռան Իսրայէլէն։ Եւ Դաւիթ տեսաւ որ Աստուծոյ հրեշտակը Յեբուսացի Ոռնայի կալին վրայ երևեցաւ ու ձեռքը երկնցուց որ Երուսաղէմի վրայ ալ պատիժը սկսի, այն ատեն Դաւիթ խոնարհելով ըսաւ. «Ես մեղանչեցի, ժողովուրդը ինչ ըրաւ. կ'աղաչեմ Տէր, միայն զիս ու իմ տունս պատժէ»։ Եւ Աստուած ի գութ շարժելով՝ հրաման ըրաւ հրեշտակին որ պատիժը դադրեցնէ. և Գադ մարգարէն վերստին ղրկեց, որուն ազդարարութեանը համեմատ Ոռնայի կալը և մէջը եղած ամէն բաները ծախու առաւ Դաւիթ, և հոն հրեշտակին երևցած տեղը ողջակէզ մատոյց, որուն հաճեցաւ Աստուած։

## ԳԼՈՒԽ Թ.

1. Դաւիթ Սողոմոնն իրեն յաջորդ կ'ընտրէ. 2. Իր վերջին պատուէրները. և մահը. 3. Սողոմոնն մեռցընել կու տայ Ադոնիան. Յովաբը և Սեմեին. (Գ. Թագ. Ա. Բ. Ա. Մնաց. ԻԲ—ԻԹ.)

1. Երբ Դաւիթ ծերացաւ ու զօրութենէ ընկաւ. ուստի իր Ագգիթ անուն կնոջմէն ունեցած որդին Ադոնիա սկսաւ թագաւորելու պատրաստուիլ. թէպէտ և Դաւիթ Աստուծոյ ազդարարութեամբը առաջուց լսած էր Նաթանէն, թէ Սողոմոնը իրեն յաջորդ պիտի ըլլայ, զոր Նաթան մարգարէի կրթութեանը յանձնած էր. Ադոնիա՝ Յովաբ զօրապետի և Աբիաթար քահանայի հետ միաբանելով, օր մը Երուսաղէմէն դուրս տեղ մը մեծ հացկերոյթ մը պատրաստեց և իր ամէն բարեկամները և խօսքի տէր մարդիկ հոն հրաւիրեց, ուր տեղ կ'ուզէր հրատարակել իր թագաւորութիւնը. Այն ատեն Նաթան մարգարէ գնաց Բերսաբէի իմացուց Ադոնիայի ըրածը, որպէս զի երթայ Դաւթի յայտնէ ու Սողոմոնի համար ըրած խոստմունքը յիշեցընէ. Երբ այն ինչ Բերսաբէ նոր էր գացած Դաւթի քով, երբ Նաթան մարգարէն ալ հոն եկաւ ու հարցուց Դաւթի թէ արդեօք ինքն հաճութիւն տուա՞ծ է Ադոնիայի ըրածին. Դաւիթ միւսանգամ յայտնելով իր որոշումը, հրաման ըրաւ որ Սողոմոնը իր ջորիին վերայ հեծցուցին, ու Սադովկ քահանայն, Բանեա զօրավարը ու թագաւորական անձնապահները մէկ տեղ գացին ՚ի Գեհոն, և հոն Սադովկ քահա-

նան թագաւոր օծեց զՍողոմոն, և ներկայ եղող ժողովուրդը Կեցցէ տէր Սողոմոն գոչելով՝ անոր թագաւորութիւնը հրատարակեցաւ. Զայս որ լսեցին Ադոնիա և հետը եղողները, փախչան ու ցրուեցան, իսկ Ադոնիա փախաւ Տէրոջը սեղանը որ ապաստանարանի մը պէս էր. բայց Սողոմոն խոստացաւ ներել թէ որ հանդարտ կենայ.

2. Այս Դաւիթ մեծ ժողով մը գումարեց Սողոմոնի ներկայութեանը և հոն անոր ընտրութեանը համար Աստուծմէ իրեն եղած յատուկ ազդեցութիւնը յայտնելով, յորդորեց զամէնքը որ Աստուծմէ վախնան և անոր պատուէրները պահեն. Նաև Տէրոջը տաճարին շինութեանը համար պէտք եղած հրահանգները տուաւ Սողոմոնին, որուն շատ կարեւոր նիւթերը, և ոսկի, արծաթ ու պղինձ արդէն պատրաստած էր ինքը. որոնց վերայ կամաւոր ընծաներ եւս աւելցուցին ներկայ գտնուող մեծերը և ժողովուրդը. Ասկէ զատ կային նաև Սամուէլի, Սաւուղի, Աբենների և Յովաբի և այլոց ըրած նուէրները. Ուրախացաւ Դաւիթ, և հոն ժողովականաց առջեւ օրհնութեան ու գոհութեան եռանդուն աղօթք մը խօսեցաւ. Ժողովականք ալ իրենց յարգութիւնը մատուցանելով մեկնեցան, ու հետեւեալ օրն ալ շատ զոհեր ու ողջակէզներ մատուցին Աստուծոյ. Ու Դաւիթ Սողոմոնը թագաւորեցնելէ զկնի երկու տարի եւս ապրելով երբ մեռնելու օրերը մօտեցան, կանչեց Սողոմոնը և յատկապէս պատ-

ուխտեց որ Աստուծոյ օրէնքները պահէ . յիշե-
ցընելով իրեն Աստուծոյ այն խոստումը թէ՝ օ-
րհնայ համեմատ որ ընթանան իւր սերունդը
միշտ ճշմարտութեան ու Իսրայէլի թագաւո-
րութեան մէջ պիտի մնան . Այլ և քանի մը
մասնաւոր պատուէրներ ալ տուաւ . ու բարի
ծերութեամբ մեռաւ եօթանասուն տարեկան . կեան-
քէն . մեծութենէն ու փառքէն իւր բաղձանքը
առած , թագաւորելով ընդ ամենը քառասուն
տարի . և մեծ պատուով թաղուեցաւ իւր քա-
ղաքին մէջ . Դաւիթ մեծ յիշատակ թողուց ժո-
ղովրդեան որուն մէջ Իսրայէլի ամեն թագա-
ւորներէն աւելի . և Իսրայէլը մեծ ազգ մը ե-
ղաւ իւր օրով ու ձեռնտուութեանց մէջ յա-
ռաջանալ սկսաւ . Դաւթի սեփհական մեծու-
թիւնն էր հնազանդութիւն առ Աստուած . թէ
և մեղանչեց այլ իւր դարձէն յետոյ աւելի ջերմ-
եռանդ եղաւ . և անդադրում տարաւ այն ամեն
վիշտերը որ իւր վերայ եկան 'ի պատիժ . Դա-
ւիթ բանաստեղծ ու երաժիշտ ըլլալէ զատ նաև
մարգարէութեան շնորհ ալ առաւ յԱստուծոյ .
ուրիշ խոստում ալ առաւ թէ՝ իւր իշխանու-
թիւնը յաւիտեան պիտի տևէ . որ եղաւ
Քրիստոսի թագաւորութեամբ .

3. Սողոմոն տասն ու ութը տարեկան էր երբ
անկախ իշխանութիւնը ձեռք առաւ , բայց ոչ
առանց արիւնհեղութեան . Քանզի իւր Ադո-
նիա եղբայրը վերստին ուզելով թագաւորու-
թիւնը ձեռք ձգել , նախ Բերսաբէի միջնոր-

դութեամբ ուզեց կնութեան առնուլ Սունամացի Աբիսակ անուն աղջիկը, որ կը ծառայէր Դաւ-թի քով ծերութեանը ատեն. Ասոր համար Սողոմոն մերժելով նաև իր մօրը միջնորդութիւնը՝ չըն-դունեց Ադոնիայի խնդիրքը, և Բանեա զօրա-վարին ձեռքով մեռցընել տուաւ զանիկայ. և Աբիաթար քահանայապետը որ անոր կողմնա-կից էր՝ պաշտօնէ ձգեց ու անոր տեղ Սադովկն ընտրեց. Յովաբ զօրապետն ալ որ Ադոնիայի կողմն էր, փախաւ ու փախչելով Տէրոջը խորա-նին մէջ ապաստանեցաւ. բայց Սողոմոն ղրկեց Բանեա զօրավարը որ զանիկայ խորանէն դուրս հանէ ու սպաննէ. և երբ Յովաբ դուրս չելաւ, Սողոմոն հրամայեց Բանեային որ հոն տեղ սպան-նեց զանիկայ. և անոր տեղը զօրապետ ընտրը-ւեցաւ Բանեա. Այսպէս մեռաւ Շարուհեան Յովաբ զօրապետը, և իր տանը մէջ թաղ-ւեցաւ. Իր մահը փոխադարձ պատիժ մի էր երկու ընտիր զօրավարներ դաւաճանութեամբ սպաննելուն. Յովաբ թէ և անագորոյն այլ միանգամայն քաջ ու հնարագէտ մարդ մի էր. երևելի պատերազմներ մղեց յաջողութեամբ, ու մեծ ազդեցութիւն ու համարձակութիւն ունէր Դաւթի քովը. Ինքն նորոգեց նաև Ե-րուսաղէմի մէկ մասը՝ անոր աւերուած ատենը. Սողոմոն իր հօրը մահուանը յանձնարարու-թեան համեմատ Սեմէին ալ Երուսաղէմ կան-չեց. և իր հօրը դէմ ըրած անարգանաց փոխա-րէն պատիժ դրաւ անոր որ Երուսաղէմէն դուրս

չըլլէ, եթէ ոչ պիտի մեռցուի. Բայց քանի մը տարիէն յետոյ երբ պատճառաւ մը Երուսաղէմէն դուրս ելաւ Սեմէի, Սողոմոն ալ զանիկայ սպաննել տուաւ.

## ԳԼՈՒԽ Ժ.

1. Շնորհուած Սողոմոնի իմաստութիւն կու տայ. 2. Անոր առաջին դատաստանը. 3. Տաճարին շինութիւնը. 4. Նաւակները. 5. Սողոմոնի ուրիշ շինութիւնները. 6. Անոր հարստութիւնը. (Գ. Թագ. Գ—Ժ. Բ. Մնաց. Գ—Է.)

1. Սողոմոն իր իշխանութեանը մէջ հաստատուելէ ետքը բոլոր իշխանները և ժողովուրդը հետ առնելով Գաբաւոն գնաց, ուր տեղ էր Մովսէսի շինել տուած Վկայութեան խորանը. և հոն տեղ եղած սեղանին վերայ հազար ողջակէզ մատոյց Տեառնը. Տէրն ալ այն գիշերը երեւնալով իրեն 'ի տեսլեան, ըսաւ թէ «խնդրէ ինչ որ կ'ուզես». Իսկ Սողոմոն շնորհակալ ըլլալով Տեառնը իր հօրը և իրեն ըրած բարիքներուն համար, «Ուրիշ բան չեմ խնդրեր ըսաւ բայց միայն իմաստութիւն, որով կարող ըլլամ կառավարել ժողովուրդդ». Ասոր Աստուած ալ ըսաւ անոր. «Որովհետև ուրիշ բան չխնդրեցիր, բայց միայն իմաստութիւն, ահա քեզի անհամեմատ իմաստութենէ զատ նաեւ հարստութիւն ու փառք ալ կու տամ ամեն թագաւորներէ աւելի. և եթէ իմ հրամաններս պահես, քեզի երկայն կեանք ալ կու տամ». Անկէ ետքը Սողոմոն դարձաւ յԵրուսաղէմ և հոն ալ ողջակէզներ և խաղաղութեան զոհեր մատոյց

Աստուծոյ. և իւր բոլոր պաշտօնեաներուն հաց-կերոյթ ըրաւ.

2. Սողոմոնի իմաստութիւնը յայտնուեցաւ իւր տուած առաջին դատաստանով, երբ դա-տաստանի ներկայացան երկու կիներ. որք մէկ տան մէջ կը բնակէին։ Նոյն երկուքն ալ իրար-մէ երեք օր ետքը մէկ մէկ զաւակ ծնած էին. իրենցմէ մէկը միւսին համար կ'ըսէր թէ՝ ասի-կայ իւր տղեկին վերայ ննջելով. իւր տղան խեղ-դուեր է, և մեր տունը ուրիշ չգտնուելով որ տեսնէ, իմ քնացած ատենս եկեր և ողջ տղեկիս հետ փոխեր է. միւսն ալ ասոր հակառակ կը պնդէր թէ իրենն է ողջ տղան. Այն ատեն Սողոմոն հրամայեց որ ողջ տղան երկու կտոր ընեն և կէ-սը մէկին կէսը միւսին տան. տղուն բուն մայրը ասոր չհանդուրժելով աղաչեց որ ողջ տղան թող միւս կնոջը տրուի, քանի որ միւսը կը պնդէր որ վճիռը 'ի գործ դրուի։ Յայնժամ Սողոմոն ըսաւ. «Այս տղան այն կնոջն է, որ մայրական գթով չուզեր անոր մեռնիլը. ուստի անոր տը-ւէք»։ Այս դատաստանին վերայ ամէնքը զար-մացան և սկսան պատկառիլ Սողոմոնէն։

3. Սողոմոն[1] ամէն կողմանէ խաղաղութեան մէջ ըլլալով իւր Թագաւորութեան չորրորդ տարին սկսաւ շինել տալ Աստուծոյ տաճարը Մօ-րիա լերան վերայ Որնայի կալին տեղը (3000). Այս շինութեան քար և փայտ կտրելու և զանոնք փոխադրելու համար հարիւր յիսուն հազար

1 Սողոմոն այսինքն խաղաղարար.

մարդ կ'աշխատէին. ասոնց վերայ երեք հազար հինգ հարիւր ալ վերակացու կային բաց 'ի ճարտար վարպետներէն, զորս Եգիպտոսի Փարաւոն Թագաւորը և գլխաւորապէս Տիւրոսի Քիրամ Թագաւորը ղրկած էին. Քիրամ նաև շինութեան փայտերն ալ Լիբանանէն ղրկել հանձնառուն փոխարէն Սողոմոն ալ արմտիք, գինի ու եղ կու տար. նաև եօթէն Գալիլեայի մէջ քսան ալ քաղաք տուաւ անոր։ Այս տաճարին երկայնութիւնը վաթսուն, լայնութիւնը քսան ու բարձրութիւնը երեսուն կանգուն էին. շինութեան քարերը ամէնը սրբատաշ ու այնպէս յարմարցուած էին յառաջուց որ շինութեան ատեն մուրճի ձայն չէր լսուեր։ Իսկ ներքին կողմի եղած շինութիւնները ամէնը եղեւնափայտէ էին ճարտարապետած կերպով, և քերոբէներ, ծաղիկներ, արմաւենիներ ու նուռեր քանդակուած ու ամէնն ալ ոսկեզօծած. դռները բոլոր նոճիէ, և անոնց վերայ ճարտար և ոսկեպատ քանդակներ։ Մէջը երկու մաս բաժնուած էր Սրբութեան խորանին պէս. ներքին կողմը տապանակին դրուելու տեղին վերայ տասնական քառակուսի կանգուն մեծութեամբ երկու ոսկեզօծեալ քերովբէներ շինուեցան նոճիէ. և մէջի աշտանակները և բոլոր սպասները ու անօթները ամէնն ալ զուտ ոսկի էին. միայն ներքի կողմը սրահին համար վեց հարիւր տաղանդ ոսկի գնաց։ Շինուեցան նաև տաճարին առջևի պղնձէ երկու սիւները տասն ու ութը կանգուն

երկայնութեամբ և տասն երկու կանգուն շրջա-
պատով. և անոնց խոյակներն հինգ կանգուն
բարձրութեամբ, որոց վերայ ցանցակերպ ու-
ղղթայագործ և նռնաձեւ ու շուշանաձեւ զար-
դեր կային։ Նաեւ քահանայից ըստ օրինաց սր-
բութեան լուացուելու համար հինգ կանգուն
խորութեամբ և երկու կանգուն շրջապատով և
չորս մատնաչափ թանձրութեամբ պղնձէ ծով.
շրթունքները գաւաթի նման և վերան շուշան-
ներ շինուած և անոնց տակը չորքանակի գըն-
տակներ. և ամէնը հաստատուած էր տասն երկու
ձուլածոյ եզներու վերայ։ Նաեւ պղնձէ տասն
քանդակազարդ անուաւոր մեքենայթներ (խա-
րիսխ) որոց վերայ չորսական կանգուն մեծու-
թեամբ տասն պղնձէ աւազան կար, ողջակէզ-
ները լուալու համար. և բոլոր այս տեսակ բա-
ներուն ամենն ալ պղնձէ էին։ Սոնք ամէնը
Նեփթաղիմայի մօր և Տիւրացի հօր մը որդի Քի-
րամ անուն մէկը շինեց, որոնք ձուլեցան
Յորդանանու դաշտին մէջ թանձր հողի մը վե-
րայ Սոկքոթի և Սարթանի մէջ տեղը։

4. Տաճարին շինութիւնը եօթը տարի տե-
ւելով լմնցաւ ետքը. Սողոմոն բոլոր Իսրայէլը
ժողվեց և շատ հանդիսաւոր կերպիւ տապանա-
կը և անոր վերաբերեալ բաները հոն դրին։
Իսկ երբ քահանաք սրբոյն որհնութիւն նուա-
գել, և ահա Տեառն փառաց ամպովը տաճարը
լեցուեցաւ. և Սողոմոն սկսաւ բազկատարած
ծնրահակալ բերան Տեառն՝ իր ժողովրդեան

բրած բարեացը , և այն տաճարին շինութեանը զինքն արժանի ընելուն համար , և խնդրեց որ հոն տեղ եղած աղօթքները և մաղթանքները ընդունէ ։ Աստուած իր աղօթքը ընդունելով օրհնեց նաև բոլոր ժողովուրդը ։ Աստուած ալ իր հաճութիւնը ցուցուց , որ երկինքէն բոց մը իջնելով ողջակէզները այրեց , որ տեսնեն բոլոր ժողովուրդը ծունկի վրայ գալով երկրպագութիւն և գոհութիւն մատուցին Աստուծոյ ։ Տաճարին նուիրակացը համար քանի երկու հազար եզն ու հարիւր քսան հազար ոչխար զոհ մատուցին , որ տասն ու չորս օր տևեց ։ Սողոմոն տարին երեք անգամ՝ տաճարին մէջ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր կը մատուցանէր Աստուծոյ ։ Իսկ տաճարին հանապազօրեայ պաշտամունքները՝ Ղևտի կարգադրութեանը համեմատ կը կատարուէր ։

5 ։ Սողոմոն շինեց նաև թագաւորական շքեղ պալատ մը սրբատաշ քարերէ , որուն երկայնութիւնը հարիւր , լայնութիւնը յիսուն ու բարձրութիւնը երեսուն կանգուն էր ։ Ասոր մէջ գործածուած փայտերը բոլոր Լիբանանու եղևնին ըլլալով՝ Տուն անտառին Լիբանանու կոչուեցաւ ։ Մէջը մեծ սրահ մը կար , ուր տեղ դատաստան կ՚ընէր ։ Հոն տեղ էր իր ոսկեպատ ու փղոսկրեայ աթոռը վեց աստիճաններով , որուն ամէն մէկուն երկու կողմերը առիւծներ քանդակուած էին ։ Նաև իր կնոջը Փարաւոն թագաւորի աղջկանը համար ալ շքեղ տուն մը

չինեց արտաքուստ քարերով. և այս բոլոր շի-նութիւնները քանի տարուան մէջ լմնցան. Սողոմոն իր շինութիւնները լմնցնելէ ետքը՝ մեծապատիւ երեւեցաւ իրեն Աստուած, և զինքը քաջալերելով ու խրատելով՝ Դաւթի համար ըրած խոստումները նորոգեց. յայտնելով միայն զայն որ եթէ իր պատուէրները չպահեն՝ զիրենք պիտի ջնջէ նոյն երկրէն. և այն տաճարն ալ աչքէ պիտի ձգէ.

6. Նասնցմէ զատ Սողոմոն նաւեր շինեց Ե-դովմի երկրին մէջ՝ Կարմիր ծովուն եզերքը Ե-ղաթին քովը Գասիոնգաբերի մէջ. որոնք Քիրա-մի (փիւնիկեցւոց) նաւերուն հետ կ՚երթային Ոփիր. և հոն տեղէն շատ ոսկի, ազնիւ քարեր և ուրիշ բաներ կը բերէին. ու մէկ տարուան մէջ Սողոմոնի եկած ոսկիին կշիռքը՝ վեց հարիւր վաթ-սուն վեց տաղանդ (415.584.000 դէշ) էր, բայց ի վաճառականներուն և հարկատու ազգերուն ա-ւածէն, այլ և այլ տեղերէ եկած նուէրներէն, ու ժողովրդեան տուրքէն. Նաւերուն բերած սանդալ փայտերէն ալ տաճարին ու պալատին համար յենարաններ և երգեցողաց համար քնար-ներ ու տաւիղներ շինեց. Նա և շինեց երկու հարիւր ոսկի վահան ու երեք հարիւր ոսկի աս-պար. Սողոմոն ասոնցմէ զատ նաև հազա-րաւոր կառքեր ու ձիեր ունեցաւ, զորս Եգիպ-տոսի կողմերէն վաճառականներու բերել կու-տար. Սողոմոն շինեց նաև Երուսաղէմի և ու-րիշ քաղաքներու պարիսպներ ու ամրութիւններ

և սայլի համար շտեմարաններ. այլ և քաղաքներ որոց մէջ էին նաև Բաաղէթ (Հելիուպօլիս, Արեգ քաղաք), և Թադմոր (Պալմիրա) Ասորւոց անապատին մէջ, որոց աւերակներն ալ նշանաւոր են այսօր։ Սողոմոն նաև բանակին զօրք կը պահէր ապահովութեան համար։

## ԳԼՈՒԽ ԺԱ.

1. Սաբայի թագուհին. 2. Սողոմոնի մեղանչելը. 3. Իւր թշնամիները. 4. Մահը. 5. Նորա որդին Ռոբովամ և իւր անխոհեմութիւնը. 6. Իսրայէլի թագաւորութեան բաժանումը. (Գ. Թագ. Ժ—ԺԲ. Բ. Մնաց. Թ.)

1. Ահա այսպէս Սողոմոն իւր ժամանակակից բոլոր մարդոցմէ աւելի հարստութիւն, և անհամեմատ իմաստութիւն ունեցաւ. երեք հազար առակ ու հինգ հազար օրհնութիւն խօսեցաւ. տեղեակ էր պատմութեան ու բնապատմութեան ամեն ճիւղերուն. Նորայականի մերոյ գրածները են Առակաց, Ժողովողի և Իմաստութեան գրքերը. իսկ Երգ Երգոցը իւր քերթողական բարձր հանճարը կը ցուցնէ. Իւր անունը ամեն տեղ հռչակուելով՝ զինքը տեսնելու կու գային շատերը, որոնց մէջ նշանաւոր էր Սաբայի (Հարաւային Արաբիա) դշխոյին գալուստը. Նոյնկոյ շատ զօրքով ու ընծաներով Երուսաղէմ եկաւ Սողոմոնի իմաստութիւնը առակներով փորձելու, և իւր ամեն հարցմունքներուն բացատրութիւնը առնելով անկէ, տեսաւ նաև անոր կարգադրութիւնները, ու զարմանալով ըսաւ թէ « մինչև հիմա լսածս աչքով

տեսածին կէսն է եղեր » ։ Նա հարիւր քսան տա-ղանդ ոսկի, ազնիւ քարեր ու խունկեր ընծայ տուաւ Սողոմոնի, որպէս ալ փոխադարձ ընծա-ներ ընդունելով դարձաւ իր տեղը ։

2. Նա այսպէս Սողոմոն իր թագաւորու-թեան ծայրը հասած էր, և ժողովուրդն ալ ա-պահովութեամբ իր հանդստութիւնը կը վայ-ելէր ։ Բայց Իսրայէլացիք արդէն երկրագործ ժողովուրդ մը ըլլալով՝ այս բարեկեցութեամբ և մանաւանդ կռապաշտ ազգաց հետ յարա-բերութեամբ զեղծութեան ու անկարգութեան մէջ ինկան ։ Նոյն իսկ Սողոմոն իր անհամեմատ իմաստութեամբը հանդերձ չկրցաւ զերծ մնալ զեղխութեան վտանգներէն, որ Աստուծոյ օրի-նաց տրամադրութեան հակառակ իր չափա-զանց հարստութեանն ու բարեկեցութեանը հե-տեւանքն էին ։ Իր կանանցին մէջ խիստ շատ տիկիններ ու հարճեր կային, և շատն ալ այն ազգերէն էին, որոնց հետ խնամութիւն ընել արգիլած էր Աստուած ։ Նա Սողոմոն իր կա-նանց հաճոյանալու համար զիջաւ անոնց կուռ-քերուն ալ տաճարներ շինել, որոնց մէջ խունկ և զոհ կը մատուցէին ։ Թէպէտ և ինքը ճշմարիտ Աստուածը կը պաշտէր, բայց մի և նոյն ատեն ուրիշ շատ կուռքեր ալ կը պաշտուէին Իսրայէլի մէջ, որուն պատճառը ինքն եղաւ չար օրինակ տալով ժողովրդեան ։

3. Ասոր համար Աստուած ալ խիստ բարկա-ցաւ Սողոմոնի, և ըսաւ . « Որովհետեւ դուն

այսպէս ըրիր ու իմ ուխտս չպահեցիր , ուստի քու թագաւորութիւնդ պիտի պատռեմ և քու ծառայիդ պիտի տամ. բայց քու հօրդ Դաւիթին համար ու իմ ընտրած Երուսաղէմ քաղաքիս համար երկու չորք կ՚ընեմ. մէկ մի որ այս բանը քու օրովդ չեմ ըներ , և երկրորդ որ երկու ցեղ քու որդւոյդ կը թողում ։ Այս նշանները Աստուած գրգռեց նաև Սողոմոնի կենդանութեանը . Նաև զի անոր ծառան Յերոբովամ որ Յովսէփի ցեղերուն վերայ վերակացու էր , որ մը ճանապարհին Սիլոնացի Աքիա մարգարէին հանդիպելով՝ մարգարէն անոր վերարկուն առաւ , ու տասն երկու կտոր ընելով տասը կտորը անոր տուաւ ու ըսաւ . „Սողոմոնի մեղացը համար Աստուած անոր ձեռքէն Իսրայէլի տասն ցեղին իշխանութիւնը պիտի առնէ ու քեզի տայ . . . ու թէ որ դուն ալ Աստծոյ օրէնքները պահես Դաւթի նման . քու թագաւորութիւնդ ալ միշտ մնայուն պիտի ըլլայ ։ Այս բանը Սողոմոն իմանալով՝ ուզեց մեռցնել Յերոբովամը . բայց անիկայ Եգիպտոս փախաւ , ու մինչեւ Սողոմոնի մահը հոն մնաց ։ Նաև արտաքին թշնամիներ ալ հանեց Աստուած Սողոմոնի դէմ . մէկը Եդոմի վերջին թագաւորին որդին Ադերը , որ Դաւթի օրը Եգիպտոս էր փախած . մէկ մի ալ Սուբայի Ադրաազար թագաւորին մէկ փախստական ծառան Ռազոնը , որ Դամասկոսի մէջ նոր թագաւորութիւն հաստատեց . ասոնք երկուքն ալ սկսան թշնամու_

թիւն ընել Իսրայէլացւոց դէմ։

4. Իսկ Սողոմոն քառասուն տարի թագաւորութիւն ընելով՝ մեռաւ վաթսուն տարեկան, ու Դաւթի քաղաքին մէջ թաղուեցաւ։ Թէև Սուրբ Գրքերը Սողոմոնի մեղքը կը յիշեն, այլ ոչ անոր ապաշխարութիւնը կամ դատապարտութիւնը։ Բայց եկեղեցւոյ Հարց շատին կարծիքն է և հաւանութեան է՝ թէ Սողոմոն վերջէն զղջաց, և այն ատեն գրեց Ժողովողի գիրքը որ կ'ըսէ. Ունայնութիւն ունայնութեանց ամենայն ինչ ունայնութիւն է. (Տես և Նարեկացի. Բան. ԽԸ.)։

5. Սողոմոնի յաջորդեց իր որդին Ռոբովամ քառասուն ու մէկ տարեկան. և բոլոր Իսրայէլը Սիւքէմի մէջ ժողվուեցան անոր թագաւորութիւնը հաստատելու համար։ Հոն տեղ ժողովուրդը Յերոբովամի առաջնորդութեամբ (որ դարձած էր Եգիպտոսէն) աղաչեցին իրեն որ իր հօրը դրած ծանր տուրքերը թեթեւցնէ, որպէս զի հնազանդին իրեն[1]։ Իսկ Ռոբովամ այս բանին համար խորհուրդ ընելով, փոխանակ փորձուած և խոհեմ մարդկանց խրատուցը անսալու և ժողովրդեան սիրտը շահելու, իր անփորձ ու անխոհեմ բարեկամաց խօսքին հետևելով՝ մերժեց ժողովրդեան խնդիրքը ու խստութեամբ պատասխանեց անոնց։ Նոյն վե-

---

1 Ազգութեան կամ իշխանութեան մը տուրքերին փառաւորութիւնը որչափ աւելնայ, այնչափ ալ ժողովուրդը տուրքերն երերին հոգին կը ծանրանայ. Ինչպէս որ Սողոմոնի օրն ալ կ'երևայ. վասն զի Սաւուղի ու Դաւթի օրերը այնչափ պատերազմներու ատեն ալ տուրքերն մը չունեցաւ ժողովուրդը. Սողոմոնէ՝ հանգիստ բայց ցոփ օրերուն համար կը տուժէ։

բայց տասն ցեղերը մեկնեցան՝ «Մենք քեզի հետ գործ չունինք, գնա քու ցեղիդ թագաւորէ» ըսին, ու Յերոբովամը իրենց թագաւոր ըրին. և այսպէս Իսրայէլեանց պետութիւնը երկու մասի բաժնուեցաւ (3036). և Ռոբովամի ձեռքը մնացին միայն Յուդայի ու Բենիամինի ցեղերը։ Թէպէտ և Ռոբովամ ղրկեց Ադոնիրամ իշխանը որ միւս ցեղերը հաշտեցընէ, բայց անիկայ քարկոծուեցաւ ժողովուրդէն. ուստի ինքն ալ փութացաւ Երուսաղէմ փախչել։ Ու այսպէս թողլով Աստուած զՌոբովամը իրեն անհնազանդութեանը մէջ, կատարեց ըրած սպառնալիքը։ Ռոբովամ թէև կ'ուզէր պատերազմով նուաճել զանոնք, բայց Աստուծոյ հրամէն Սեմայիայի ձեռօք եղած արգելութեանը հնազանդեցաւ։ Այսու ամենայնիւ այս բաժանեալ երկու ազգակից թագաւորութեանց մէջ գժտութիւնները անպակաս եղան։ Այս երկու թագաւորութեանց վերայ առանձին կարգաւ կը խօսինք հոս։

## ԳԼՈՒԽ ԺԲ.

### ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՍՐԱՅԷԼԻ

1. Յերոբովամ և որդին Նադաբ. 2. Բաասա և որդին Էլա. 3. Զամբրի. Ամրի և որդին Աքաաբ. 4. Աքաաբու և Իսրայէլացւոց չարութիւնը և պատուհասը. 5. Եղիա մեռել մը կը յարուցանէ. 6. Քուրմերը կը կոտորէ. 7. Քորեբ լեառ կ'երթայ. 8. Աքաաբու յաղթութիւնը. 9. Աքաաբու և կնոջը անօրէնութիւնը, և իր մահը. (Գ. Թագ. ԺԲ—ԻԲ.)

1. Յերոբովամ Ա. իր աթոռը Սիքէմի մէջ դրաւ. և սակայն կասկածելով որ ժողովուր-

դր ըստ օրինաց Երուսաղէմ տաճարը երթալով և այս առթիւ Յուդայի ցեղին հետ յարաբերութիւն ընելով թերևս հաշտութիւն Դաւթի տանը հետ, ուստի իր թագաւորութեան հարաւային և հիւսիսային սահմանաց այսինքն Դանի և Նեփթէլի մէջ երբեմն Ահարոնի շինածին նման երկու ոսկիէ հորթ կանգնեց, և անոնց համար պաշտօն հաստատելով հրաման բրաժողովրդեան որ զոհ ընելու համար այն անդերուն մէկը երթան. և օրինաց հրամայածին պէս տօներ ալ հաստատեց. Այս պատճառաւ քահանայից ու Ղևտացւոց մեծ մասը Յուդայի կողմը գացին. Յերոբովամ ալ ուրիշ ցեղերու մարդոցմէ քուրմեր ընտրեց այս նոր պաշտաման համար և ինքն ալ անձամբ զոհ մատոյց: Իսկ երբ այն զոհին առենը խունկ կը ծխէր, Աստուծոյ կողմանէ մարգարէ մը եկաւ և յայտնեց թէ Դաւիթի ցեղէն Յովսիայի ձեռքով այդ սեղանը ու պաշտամունքը պիտի ջնջուի. Եւ այս բանին հաստատութեանը նշան՝ յանկարծ սեղանը պատռեցաւ ու վրայի մոխիրը թափեցաւ, ըստ բանի մարգարէին: Ասոր վրայ Յերոբովամ ուզեց բռնել մարգարէն՝ բայց ձեռքը չորցաւ, ու մարգարէին աղօթքովը ողջացաւ: Այն մարգարէն որ հրաման առած էր Աստուծմէ՝ բնաւ մէկու մը տունը չմտնելով իր տեղը դառնալ, բայց ուրիշ մարգարէի մը կոչելովը անոր տունը սեղանին երթալուն համար պատժուեցաւ ու առիւծ մը գալով մեռցուց զինքը ճանապար-

հին մերոյ , առանց մտանելու մարմնոյն ։

Եւ եղաւ որ Յերոբովամի որդին Աբիա հիւանդացաւ , անոր մայրը ծպտելով Աքիա մարգարէին գնաց տղուն համար հարցնելու . իսկ մարգարէն զինքը ճանչելով յանդիմանեց Յերոբովամու ապերախտութիւնը և օրինազանցութիւնը , յայտնելով թէ ինքը քաղաք մտած ատեն տղան պիտի մեռնի , և միայն անիկայ պիտի ըլլայ Յերոբովամի տանէն որ պատուով թաղուի . քանզի միւսները բռնութեամբ պիտի ջնջուին և թաղման չժամանեն ։ Այս խօսքին վրայ կինը ետ դարձաւ և տանէն ներս մտածին պէս տղան ալ մեռաւ ։ Իսկ Յերոբովամ որ միշտ թշնամութեամբ էր Յուդայի թագաւորութեան հետ՝ քսան երկու տարի թագաւորեց ու մեռաւ ։ Յաջորդեց իր որդին Նադաբ , որ իր հօրը մեղաց հետևեցաւ ։

2. Նոր թագաւորութեան երկրորդ տարին Իսաքարի ցեղէն Բաասա անուն մէկը ասոր եղաղանիկայ մեռցուց , ու ինքը թագաւորեց Թերսայի մէջ , և Յերոբովամի ցեղը բոլոր ջնջեց ։ Այս ինքն ալ Յերոբովամի չարութեանը հետևեցաւ . ուստի Աստուած Յէու մարգարէին ձեռօք յայտնեց՝ թէ իրեն տունն ալ Յերոբովամի տանը նման պիտի ջնջուի ։ Սակայն Բաասա փոխանակ զղջանալու՝ մարգարէն սպաննել տըւաւ ։ Անիկայ շատ թշնամութիւն ունեցաւ Յուդայի թագաւորութեան հետ , և քսան երկք տարի թագաւորեց ու մեռաւ . յաջորդեց որդին

Այս, որ իւր հօրը մեղաց հետեւեցաւ։

3. Ասիկայ իւր թագաւորութեան երկրորդ տարին երբ որ մի գինովցած էր՝ Զամրի զօրավարին ձեռքով սպաննուեցաւ, որ ինքը թագաւորեց. ու Բաասայի բոլոր ցեղը ջնջեց. Այս բանը լսեցին զօրքերը որ Փղշտացւոց դէմ պատերազմի գացած էին, Ամրի զօրավարը իրենց թագաւոր դրին. որ եկաւ Թերսա քաղաքը պաշարեց. Զամրի տեսնելով որ չպիտի կրնայ ազատիլ՝ իւր տունը կրակի տուաւ ու ինքն ալ մէջը այրեցաւ եօթն օր թագաւորելէ ետքը։

Այն ատեն ժողովուրդը երկու մաս բաժնուեցաւ. մէկ մասը Ամրիի եւ միւսը Թամնի անուն մէկուն կողմը. բայց Ամրի յաղթեց եւ ինքը թագաւորեց. Ասիկայ Սամարիա քաղաքը շինեց եւ մայրաքաղաք ըրաւ. եւ իւր նախորդներէն աւելի չարութիւն ընելով տասներկու տարի թագաւորեց ու մեռաւ. յաջորդեց իւր որդին Աքաաբ։

4. Աքաաբ իւր նախորդներէն եւս աւելի չարութիւն ըրաւ. եւ Սիդոնացւոց թագաւորին աղջիկը Յեզաբէլը կին առնելով՝ անոր թելադրութեամբը բոլորովին կռապաշտութեան ու անօրէնութեան մէջ ընկղմեցաւ. Այս միջոցներուս Աստուած շատ մարգարէներ յարոյց Իսրայէլի մէջ որք աստուածպաշտութեան լոյս հաստատ կը պահէին. ասոնց մէջ գլխաւորն էր Եղիա Թեզբացին, որ Աստուծոյ կողմանէ Աքաաբու գալով յայտնեց թէ տարիներով անձրեւ չպիտի գայ 'ի պատիժ իրենց չարութեանը։

և բանծին պէս ըլլալով՝ սաստիկ սով մը եղաւ բոլոր երկրին մէջ.

5. Եղիա այս միջոցին Աստուծոյ հրամանաւ Քերիթ հեղեղատին քով բնակեցաւ, և օրան- ջերէօք կը կերակրուէր ագռաւներու միջոցաւ. և երբ այս հեղեղատն ալ ցամքեցաւ, այն ատեն Աստուծոյ հրամանաւ Սիդոնացւոց Սարեփթա քաղաքը գնաց. ուր աղքատ այրի կնոջ մը ձեռօք կը կերակրուէր. Այս կնոջ բրած հիւրըն- կալութեանը համար՝ Աստուծոյ օրհնութեամբը իրեն ունեցած քիչ մը եղը և ալիւրը չհատա- մինչև սովին վերջանալը. Եւ օր մը այս կնոջը տղան որ մեռաւ, Եղիա աղօթքով կենդանացուց զանիկայ. Ասդին Աքաաբ և Յեզաբէլ ամէն նեղութեամբ Եղիան կը փնտռէին որ սպաննեն. և երբ զանիկայ չգտան, սկսան ձեռքերնին ինկած մարգարէները սպաննել.

6. Այսպէս շատ ատեն անցնելէ ետքը՝ Աստուած հրամայեց Եղիայի որ երթայ Աքաաբու երևնայ, և խոստացաւ անձրև ալ տալ: Աքաաբ երբ տեսաւ Եղիան, «դո՞ւն ես, ըսաւ, Իսրայէլը նեղութեան մէջ ձգողը». և Եղիա ցուցնելով թէ նոյն նեղութիւնը իրենց օրինազանցութեան արդար պատիժն է, ըսաւ Աքաաբու որ Իսրայէլի ծերերը ու կռոց քուրմերը Կարմեղոս լեռան վերայ ժողվուին. Եղիա այս բանը ժողովուրդին ալ յայտնելով՝ որոշեալ ատենը Աքաաբ, քուրմերը և ժողովուրդը Կարմեղոս լեռը ժողվուեցան. Հոն տեղ Եղիա ըսաւ

որ թէ ինքը և թէ քուրմերը զատ սեղաններու-վերայ ողջակէզ ընեն առանց կրակ դնելու , և որուն սեղանին վերայ երկինքէն կրակ որ իջնէ , իմանան թէ անոր կողմն է ճշմարիտ Աստուածը ։ Այս խօսքը ամենուն հաճելի թուելով՝ Եղիայի բաղձին պէս ըրին . նախ քուրմերը սկսան Բա-հաղու անունը կարդալ մինչև երեկոյ . բայց բան մը չեղաւ ։ Այն ատեն Եղիա տասն երկու-քարերով սեղան մը շինեց . և չորս փոս բա-նալով՝ փայտերուն ու ողջակէզին վերայ ալ տասն երկու սափոր ջուր լեցնել տուաւ , և սկսաւ զԱս-տուած կանչել որ իր պատուէրները ցուցնէ ժո-ղովրդեան . և ահա անմիջապէս Տէրոջմէն կրակ իջնելով սպառեց ողջակէզը , փայտերը ու ջուրը մէկտեղ ։ Այս որ տեսաւ ժողովուրդը , ա-մէնքն ալ երեսի վերայ ինկալով խոստովանե-ցան թէ Եհովան է ճշմարիտ Աստուած . յայն-ժամ Եղիա ըսաւ ժողովրդեան որ բոլոր քուրմե-րը բռնեցին . և զամէնքն ալ կտորեց Կիսոնի հեղեղատին մէջ ։ Ապա Աքաաբու ըսաւ , որ շուտով տուն դառնայ անձրևէն չբռնուելու համար . և անկից դեռ նոր էր հասեր իր տեղը՝ մեծ անձրև մը սկսաւ ։

7 . Բայց Յեզաբէլ երբ իմացաւ թէ Եղիա քուրմերը կոտորեր է , խիստ բարկացաւ , ու երդում ըրաւ որ Եղիան սպաննել տայ ։ Եղիա ալ Յուդայի երկիրը և անկէ ալ Արաբացւոց անապատը գնաց , և սիրտը ցաւած ըլլալով՝ կ'ուզէր որ մեռնի ու իր ազգայնոց չարէն ա

տեսնէ . ուստի անօթի ծարաւ քնացաւ ծառի մը ներքեւ ։ Բայց Աստուած հրեշտակ մը ղրկեց որ արթնցընելով զինքը՝ կերակուր և ջուր տըւաւ . սով զօրացաւ Եղիա, ու երկայն ճամբորդութենէ մը ետքը հասաւ Քորեբ լեռը, և քարայրի մը մէջ մտաւ ։ Հոն տեղ երբ գանգատ կ'ընէր Աստուծոյ թէ ինձմէ զատ բոլոր Իսրայէլացիք չարութեան ու կռապաշտութեան մէջ են մնացած, և ահա Աստուած յայտնելով անոր մեղմ օդոյ հնչմամբ՝ 'ի գեղեցիկ նմանութիւն իւր ողորմութեանը, յայտնեց թէ՝ այն ընդհանուր կռապաշտութեան ատեն տակաւին կան հազարաւոր մարդիկ որոնք կուռք չեն պաշտած . նաև ըսաւ որ երթայ Ազայէլը Ասորւոց թագաւոր ընէ, և Նամեսսի որդին Յէուն ալ Իսրայէլի թագաւոր օծէ, և Սափատի որդին Եղիսէն իւր տեղը մարգարէ կարգէ, որ անոնց ձեռքով պատժուին Աքաաբ և Յեզաբէլ ։ Ու Եղիա նախ Եղիսէն իրեն աշակերտ առաւ, որ ետքը անոր ձեռքով միւսներն ալ թագաւոր եղան ։

8. Աքաաբու թագաւորութեան տասն ութերորդ տարին Բենադադ Բ. Ասորւոց թագաւորը մեծ զօրութեամբ Իսրայէլացւոց վերայ պատերազմի ելաւ, ու եկաւ մինչեւ Սամարիա մայրաքաղաքը պաշարեց ։ Ու երբ տեսաւ որ Աքաաբ փախնալով ընդունեց իւր առաջարկութիւնները, աւելի ծանր ու անհնարին բաներ առաջարկեց ։ Ասոր վերայ Աքաաբ խորհրդակցելով Իսրայէլի ծերերուն հետ՝ չընդունեց զա-

նոնք և պատերազմ ընել սպառնացան ։ Այն միջոցին մարգարէ մի ալ եկաւ և յայտնեց Աքաաբու որ չվախնայ և նախ ինքը պատերազմի յարձակի, վասն զի Աստուած յաղթութիւնը իրենց պիտի տայ ։ Իսրայէլացիք ալ մարգարէին բանին պէս Ասորւոց դէմ ելան ու մեծ կոտորած մը տալով յաղթեցին անոնց, և Բենադադ հազիւ կրցաւ փախչիլ ու ազատիլ ։ Բայց հետեւեալ տարին վերստին պատերազմի ելան Իսրայէլացւոց դէմ Ափեկայ դաշտին վրայ, վասն զի կը կարծէին թէ Իսրայէլի Աստուածը լեռներու Աստուած է և դաշտերու վրայ կարող չէ օգնել ։ Այլ Աստուած դարձեալ նոյն մարգարէն ղրկեց Աքաաբու և յայտնեց թէ յաղթութիւնը իրենը պիտի ըլլայ, որ Ասորիք իմանան թէ Իսրայէլի Աստուածը ամեն տեղ կրնայ օգնել ։ Ուստի Իսրայէլացիք քիչուոր զօրքով Ասորւոց վրայ ելլելով այնպիսի յաղթութիւն մը ձեռք բերին, որ անոնցմէ հարիւր հազար մարդ ջարդուեցան, և քսան ու եօթն հազար հոգի ալ Ափեկ քաղաքը փախան, ուր տեղ պարիսպը կործանեցաւ ու ասոնք մեռային ։ Իսկ Բենադադ տեսնելով որ ձեռք պիտի իյնայ, խոնարհեցաւ և խնդրեց Աքաաբէն որ իւր կեանքը շնորհէ ։ Աքաաբ ալ ազատեցուց զանիկայ ու մեծարեց, և Իսրայէլացւոցմէ առած տեղերը ետ դարձնելու պայմանաւ արձակեց զանիկայ ։ Բայց նոյն միջոցին մարգարէ մը եկաւ Աքաաբու, և յարմար առակով մը յայտնեց որ այս անխոհեմութեան փոխա-

րէն իրենք պիտի պատժուին ․

9․ Նոյնպէս ետքը Աքաաբ ուզեց Յեզրայէլի մէջ Նաբովթ անուն մէկուն այգին ծախու առնել եւ իրենինին հետ խառնել ․ բայց երբ անիկայ չուզեց ծախել՝ տրտմեցաւ ․ Իր կինը Յեզաբէլ իմանալով այս բանը , Նաբովթի վրայ զրպարտութիւն ընել տուաւ որպէս թէ զԱստուած եւ թագաւորը հայհոյեր է , եւ սուտ վկաներով ալ հաստատելով քարկոծել տուաւ , ու անոր այգին յափշտակեց ․ Այն ատեն Եղիա մարգարէն Աստուծոյ հրամանաւ Աքաաբու երթալով յայտնեց որ այս անօրէնութեանը համար թէ ինքը եւ թէ իր կինը Յեզաբէլ չարաչար մահուամբ պիտի պատժուին , եւ իր տունն ալ նախորդացը տուներուն նման ալ պիտի ջնջուի ․ Աքաաբ որ աւելի իր կնոջը թելադրութեամբը այս անօրէնութեան հաճեր էր , զղջում ցուցուց , որուն Աստուած ալ այնքան շնորհում ըրաւ որ իր տանը կորուստը իր օրովը չըլլայ , թէեւ ինքը պատժեց ․ Վասն զի Բենադադ Բ․ իր խոստումը չկատարելուն համար՝ Աքաաբ ալ անոր վրայ պատերազմի երթալու եւ Ռամովթ Գաղաադը որ երբեմն իրենցն էր՝ ետ առնելու որոշում ըրաւ ․ Ու երբ Յուդայի Յովսափատ թագաւորը եւ Միքիա մարգարէն կը յորդորէին զինքը որ ետ կենայ , ինքը իր սուտ մարգարէներուն խօսքին հաւատալով պատերազմի ելաւ , թէեւ ծպտեալ կերպարանօք որ թշնամիներէն չճանչցուի ․ Սակայն Աստուծոյ

դատաստանէն չկրցաւ ազատիլ ասով. ու պատերազմին մէջ զարնուելով՝ նոյն օրը մեռաւ, քան երկու տարի թագաւորելէ ետքը։ Իրեն յաջորդեց որդին Ոքոզիա։

## ԳԼՈՒԽ ԺԳ.

1. Ոքոզիա և Յովրամ. ու անոնց չարութիւնները. 2. Եղիայի յերկինք վերանալը. 3. Եղիսէի հրաշքները. (Դ. Թագ. Ա—Զ.)

1. Ոքոզիա ալ իր ծնողացը չարութենէն ետ չկեցաւ։ Նոյնպէս իր թագաւորութեան երկրորդ տարին իր տանը վանդակապատէն վար իյնալով հիւանդացաւ, ու մարդ ղրկեց Փղշտացւոց Ակկարոն քաղաքը որ անոնց Բահաղ Ճանճիկ (Բէեղ—Զեբուբ) չաստուածին հարցնեն, թէ արդեօք պիտի առողջանա՞յ։ Եղիա մարգարէն ասիկայ իմանալով, Աստուծոյ ազդեցութեամբը ճանապարհին զանոնք դիմաւորեց և ըսաւ. «Որովհետեւ Ոքոզիա ճշմարիտ Աստուածը թողուցեր ու Բահաղ Ճանճիկին կը դիմէ, ուստի Աստուած ալ որոշեց որ պառկած տեղէն չպիտի ելլէ ու պիտի մեռնի»։ Ոքոզիա երբ լսեց Եղիայի այս խօսքը, երկու անգամ յիսնապետներ ղրկեց իրենց խումբովը որ զանիկայ բռնեն. բայց երկուքն ալ պատժուեցան, երկինքէն կրակ իջնելով իրենց վերայ։ Ուստի երբ երրորդ գունդ մը ղրկեց, ասոր յիսնապետը ոչ թէ միւսներուն նման սպառնալեօք, այլ պատշաճ մեծարանօք ներկայացաւ. այն ատեն Եղիա ալ անոր հետ թագաւորին գնաց ու մի և նոյն խօսքը կրկնեց թէ պիտի մեռնիս. ինչպէս

որ քիչ օրէն մեռաւ երկու տարի թագաւորելէ ետքը ։ Աքաբին՝ Յուդայի Յովսափատ թագաւորին հետ նաւատորմ ալ շինեց Գասիոնգաբերի մէջ, բայց մրրիկէ մը խորտակեցան ։ Ասոր որովհետեւ որդի չունէր՝ իր Յովրամ եղբայրը իրեն յաջորդեց ։ Նոյնպէս ալ թէեւ Յերոբովամայ ընթացքէն չհեռացաւ՝ այլ գոնէ Բահաղու պաշտօնը խափանեց ։

2. Այն ատենները Աստուած կամեցաւ որ Եղիան մարմնով երկինք վերցընէ ։ Եղիա ալ գիտնալով ասիկայ կ՚ուզէր որ առանձին տեղ մը երթայ, իսկ Եղիսէ խնամալով Եղիայի քովէն չէր զատուեր. և երբ երկուքը մէկ տեղ Յորդանանու եզերքը եկան, Եղիա իր կաշէէ վերարկուովը ջուրին զարկաւ, որ բաժնուեցաւ և երկուքն ալ անցան ։ Այն ատեն Եղիա անոր ըսաւ. «Խնդրէ ինծմէ ինչ որ կ՚ուզես, քանի որ վերցուած չեմ քեզմէ»։ Եղիսէ ալ «քու ոգիիդ կրկինը ունենամ» ըսաւ. Եղիա պատասխանեց. «դժուար բան խնդրեցիր, բայց թէ որ զիս տեսնես վերցուելու ատենս, թող ըլլայ»։ Այսպէս խօսելով երթալու ատեննին, և ահա հրեղէն կառք մը և հրեղէն ձիեր երեւցան և զիրենք իրարմէ զատեցին, և Եղիա սկսաւ երկինք վերանալ ։ Եղիսէ զայս տեսնելով սկսաւ աղաղակել. «Հայր, Հայր իմ կ՚երթաս, Իսրայէլի կառքն և անոր կառավարը»։ և ա՛լ չտեսաւ զանիկայ, և տրտմութենէն իր հանդերձը պատռեց ։ Ու Եղիայի վերարկուն առնելով, զոր վերցուած ատեն իրեն վերայ

էր նստեր, եկաւ Յորդանանու քով ու ջրին զօ֊րով բժշկուեց, ու նորէն տունին դարձաւ.

3. Իսկ Եղիսէ Երիքով եկաւ, և այն ատենէն սկսաւ Եղիայի նման հրաշքներ ընել.

Ա. Երիքովի մարդիկը սկսան գանգատ ընել իրենց երկրին անպտուղ ըլլալուն վրայ որ ջրերուն դէշութիւնն էր. Եղիսէ ջրերուն բղխած տե֊ղը երթալով, աղ ձգեց մէջը որով ջուրերը ա֊ղէկցան ու երկիրը պտղաբեր եղաւ.

Բ. Իսկ երբ Երիքովէն Բեթէլ կ՚երթար, ճամ֊բան մանր տղայք անոր հանդիպելով սկսան ծաղ֊րել. և Եղիսէ զանոնք անիծեց և մօտը եղած ան֊տառէն երկու արջ ելան և զանոնք գիշատեցին.

Գ. Աքաաբու մեռնելէն ՚ի վեր Մովաբացիք դադրեցուցած էին Իսրայելացւոց հարկ տալը. ուստի Յովրամ թագաւորը, Յուդայի Յովսա֊փատ թագաւորին հետ անոնց վրայ պատերազ֊մի գնաց. Բայց անոնց սահմաններուն մօտեցած ատեննին, անապատին մէջ ջուրերնին հատնելով Եղիսէի դիմեցին որ հոն տեղ էր, որն որ Աստու֊ծոյ կողմանէ յայտնեց իրենց որ հոն տեղ փոսեր բանան. և ահա առաւօտուն երբ զոհ կը մա֊տուցանէին, անանկ որ հով ու անձրեւ չեղած ատեն՝ Եդովմի ճամբայէն ջուր եկաւ ու երկիրը ջրով լցուեցաւ. Իսկ երբ Մովաբացւոց ալ յաղթեցին, որոնց թագաւորը քաղաքի մը մէջ պաշարուելով՝ յուսահատութենէն իր պայա֊զատ որդին քաղաքին դրանը վրայ ողջակէզ ըրաւ. Այս մոլեգնութիւնը որ տեսան Իսրայելացիք,

քամիներով եւ դարձան ։

Դ. Օր մի ալ աղքատ ու այրի կին մը Եղիսէի դիմելով յայտնեց որ իւր պարտատէրները իւր երկու զաւակները գրաւել կ'ուզեն ։ Եղիսէ հարցուց եւ իմացաւ որ խեղճ կինը քիչ մը եղէն զատ բան չունի , ըսաւ անոր որ երթայ ու դրացիներէն ալ ամաններ փոխ առնէ , եւ ալ իւր հետ տուն մտնելով այն բոլոր ամանները նոյն ունեցած եղովը լեցունէ ։ Կինը գնաց այնպէս ըրաւ , եւ այն քիչ մը եղով շատ ամաններ լցուց . եւ մէկ մասը պահելով մնացեալը ծախեց ու պարտքը վճարեց ։

Ե. Անգամ մի ալ Եղիսէ երբ Թաբոր լեռան ստորոտը Սունամէն (Սոլամ) կ'անցնէր , հարուստ կին մը զինքը հաց ուտելու հրաւիրեց . եւ անկէ յետոյ երբ Եղիսէ այն կողմերը կ'երթար , հոն կ'իջնար հաց ուտելու . ուստի կինն ալ իւր էրկանը հետ խորհրդակցելով , առանձին սենեակ մը շինել տուաւ Եղիսէի համար որ եկած ատեն հոն հանգստանայ ։ Եղիսէ ուզելով այս հիւրընկալութեան հատուցում մը ընել , երբ իմացաւ թէ անոնք զաւակ չունէին , խնդրեց Աստուծմէ որ անոնց զաւակ մը տայ ։ Այս տղան երբ մեծցաւ , օր մը խորշակէն զարնուելով մեռաւ , բայց Եղիսէի աղօթքովը ողջցաւ ։ Եղիսէ յայտնած ըլլալով անոնց թէ եօթը տարի սով պիտի ըլլայ , անոնք ալ ընտանեօք Փղշտացւոց երկիրը գաղթեցին եւ եօթը տարի հոն կեցան ։

Զ. Այս ատեն ժամանակ երբ Եղիսէ Գաղ-

գաղացի մէջ նստած էր, հրամայեց իւր մանչուն որ ապուր եփէ։ Հոն գտնուողներէն մէկը դաշտը երթալ բանջար ժողվելու, ու չճանչնալով՝ վայրի վարունկ ժողվեց եւ բերաւ զանոնք ապուրին մէջ մանրեց. երբ բերին ուտելու՝ ճանչցան կերակրոյն դառնութիւնը, բայց Եղիսէ՝ կաթսային մէջ ալիւր նետեց եւ այն ատեն կերան առանց վնասուելու։

Է. Օր մը ալ մէկը բանի մը հաց ու քիչ մը պտուղ ընծայ բերաւ Եղիսէի. այն ալ զանոնք հարիւր մարդու բաժնել տուաւ, որք կշտացան ու աւելցուցին ալ։

Ը. Անգամ մը ալ մէկը գերան կտրելու ատեն տապարը Յորդանան ջուրին մէջ ինկաւ. Եղիսէ տապարին ինկած տեղը փայտ մը ձգեց, որով երկաթը ջուրին երեսը ելլելով՝ հանեցին։

Թ. Այն ատեններր Ասորւոց զօրագլուխը Նէեման բորոտութեամբ ախտացած ըլլալով, եկաւ Եղիսէի դրանները, եւ իւր թագաւորին հրամանաւ ընծաներով ճամբայ ելաւ ու Սամարիա եկաւ. Եղիսէ ըսելով տար գնայ՝ իրեն կանչեց զանիկայ, եւ առանց երեսը տեսնելու ըսաւ որ Յորդանան մէջ եօթն անգամ լուացուի որ բժշկուի. Նէեման որ կը կարծէր թէ Եղիսէ իրեն համար մատուր աղօթք մը պիտի ընէ, ու ասոր այս խօսքը ոչինչ բան մը համարելով նեղացաւ, եւ «Դամասկոսի ջուրերը աւելի աղէկ չե՞ն լաւ լուացուելու համար», եւ հազիւ թէ իւր ծառայքը համոզեցին զանիկայ, որով Եղիսէի բանին

ընկերով՝ կատարեալ բժշկուեցաւ։ Անոր վերայ ուրախութեամբ Եղիսէի քով գնաց, և գոհանալով խոստովանեցաւ Իսրայէլի պաշտած ճշմարիտ Աստուածը, և ուզեց տալ Եղիսէի իւր բերած ընծաները. բայց անիկայ չընդունեց։ Յետոյ Նէեման երկու ջորիի բեռ հող տուաւ Իսրայէլացւոց երկրէն որ իւր հետ տանի և անոր վերայ միայն զոհ մատուցանէ ճշմարիտ Աստուծոյ, իբր սուրբ երկրի վերայ. այսպէս շնորհակալութեամբ ճամբայ ելաւ Նէեման։ Սակայն Եղիսէի աշակերտը Գէեզի անունով որ մարգարէն բան մը չառաւ, Նէեմանի ետեւէն հասաւ ու Եղիսէի անունով՝ տաղանդ մը արծաթ և երկու ձեռք հանդերձ ուզեց, որպէս թէ աղքատի մը տալու համար, զոր յօժարութեամբ տուաւ Նէեման։ Սակայն այս ագահութեան և ստախօսութեանը համար Նէեմանի ախտը իրեն վերայ եկաւ։

Ժ. Եւ եղաւ որ Ասորւոց թագաւորը Բենադադ վերստին Իսրայէլի վերայ ելաւ. բայց լսելով որ Եղիսէ իւր հնարքները և պատրաստութիւնները իմանալով Յովրամ թագաւորին կը պատմէ, ուզեց զանիկայ ձեռք անցնել, և անոր բնակած Դովթայիմ քաղաքը պաշարել տուաւ։ Եղիսէի աշակերտը առաւօտուն կանուխ ելաւ և տեսնելով Ասորւոց զօրը՝ վախցաւ ու Եղիսէի իմացուց. իսկ Եղիսէ քաջալերելով զանիկայ, աղաչեց Աստուծոյ որ անոր ալ ցուցուց այն հրեղէն կառքերն ու ձիաւորները որք Եղիսէն կը

պաշտպանէին ։ Դարձեալ աղօթեց Աստուծոյ որ եկող Ասորւոց աչքերը շլացութեամբ զարնըւեցան , և այն ատեն Եղիսէ անոնց քով գնաց , և « Եկէք ուզած մարդերնիդ ցուցնեմ » ըսելով Սամարիա տարաւ զանոնք . Հոն ալ վերստին աղօթեց , և աչքերնին բացուելով տեսան որ Սամարիայի մէջ էին ․ Բայց Եղիսէի պատուիրելովը Իսրայէլացիք անոնց վնաս մը չըրին , զատ կերակուր ալ տալով ճամբեցին ։

## ԳԼՈՒԽ ԺԴ .

1 . Ասորւոց պաշարումը և Սամարիայի սովն ու առատութիւնը . 2 . Ազայէլի Ասորւոց թագաւոր ըլլալը և Յովրամին վիրաւորուիլը . 3 . Յէու կը թագաւորէ և Աքաաբու տունը կը ջնջէ . 4 . Յէու . Յովաքազ . Յովաս . և Եղիսէի մահը . 5 . Յերոբովամ Բ . Զաքարիա . Սեղղում . Մանայեմ . 6 . Փակէիա . Փակէէ . Ովսէէ . և Իսրայէլի թագաւորութեան քայքայումը . 7 . Սամարացիք . ( Դ . Թագ . Զ — ԺԷ . ) .

1 . Անկէ քիչ մը ետքը Ասորւոց թագաւորը Բենադադ Բ . վերստին Իսրայէլի վրայ եկաւ ու Սամարիան ալ պաշարելով այնպէս սաստիկ կերպիւ , որ քաղաքին մէջ անտանելի թանկութիւն և սով մը ինկաւ ։ Այս նեղութեան վրայ Յովրամ թագաւորը բարկացաւ Եղիսէի , և երդում ըրաւ որ զանիկայ մեռցնէ թէ որ այս բանին դարման մը չընէ , երբ այնչափ հրաշքներ կ'ընէր . ուստի գնաց որ խօսի անոր հետ ։ Այն ատեն Եղիսէ յայտնեց անոր թէ վաղը սաստիկ կարգի աժանութիւն և առատութիւն պիտի ըլլայ ։ Թագաւորին մէկ իշխանը որ չհաւատաց անոր խօքին , Եղիսէ անոր ըսաւ թէ « աչքովդ պիտի

տեսնես բայց անկէ պիտի չուտես ։ Եւ հե-տեւեալ առաւօտուն քանի մը բորոտ մարդիկ որ քաղաքին դրան քով կը նստէին, ճարերնին հատած՝ որոշեցին որ ճամբայ ելլան դէպ ի Ասորւոց բանակը, որ եթէ հոն տեղ չսպաննուին, թերեւս քիչ մը ուտելիք ճարեն ։ Ասոնք երբ գացին, տեսան որ հոն տեղ բնաւ մարդ չկար. քանզի Տէրը նոյն գիշեր ձիերու և կառքերու ձայն լսել տալով անոնց սաստիկ վախցուցեր էր, ուստի այնպէս սոսկալով փախեր էին որ իրենց ամէն բանը հոն տեղ թողեր էին. բորոտները հոն տեղ կերան խմեցին և շատ մի ալ ոսկի ու արծաթ առնելով եկան Սամարիայի մէջ աւետիս տուին ։ Յովրամ թագաւորը այս բանը Ասորւոց մէկ խորամանկութիւնը կարծեց, բայց ետքէն ստոյ-գը իմանալով բոլոր քաղաքացիք դուրս ելան և Ասորւոց թողածէն այնչափ բան ժողվեցին որ ցորենը սկսաւ ոչինչ գնով ծախուիլ. և Եղիսէի խօսքին չհաւատացող այն իշխանը, ժողովրդեան աղմուկը կարգաւորելու համար վերակացու դրուած ըլլալով նոյն օրը բազմութեան մէջ ոտ-նակոխ եղաւ ու մեռաւ ։

2. Ասկէ ետքը Եղիսէ Դամասկոս գնաց. Հոն տեղ Ասորւոց Բենադադ թագաւորը հի-ւանդացած ըլլալով, իր Ազայէլ իշխանին ձեռօք հարցուց Եղիսէի թէ Արդեօք պիտի առողջա-նա՞մ. Եղիսէ ալ ըսաւ թէ նոյն հիւանդութենէն չէ այլ ուրիշ բանէ մը պիտի մեռնի՝ Նաև Ազա-յէլին ալ յայտնեց Ասորւոց թագաւոր ըլլալը և

Իսրայէլի դէմ ընելիքները ․ Եղիսէի այս խօսքերը անմիջապէս կատարուեցան, վասն զի Ազայէլ հետեւեալ օրը հաստ վերմակով մը Բենադադ թագաւորը խեղդեց և ինքը թագաւորեց ․

Բենադադի մահուընէն ետքը Իսրայէլի Յովրամ թագաւորը Ասորւոց դէմ պատերազմի ելաւ որ Ռամովթ Գաղաադը առնէ, բայց չյաջողեցաւ, և ինքը վիրաւորուելով զօրքը հոն թողուց և Յեզրայէլ դարձաւ դարմանուելու համար ․

3․ Այն ատեն Եղիսէ Աստուծոյ ազդեցութեամբ իր աշակերտներէն մէկը Ռամովթ Գաղաադ ղրկեց և հոնտեղ Յէու անուն զօրավարը թագաւոր օծել տուաւ, որպէս զի անոր ձեռքով կատարուի Աքաաբու տանը պատիժը ․ Հոն եղող զօրքերն ալ այս բանը ընդունեցին, և Յէու անմիջապէս դէպ 'ի Յեզրայէլ ճամբայ ելաւ գունդ մը զօրօք ․ Եւ երբ անոր Յեզրայէլի մօտեցան, Յովրամ իմանալով այն գունդին շտապաւ գալը՝ մարդ ղրկեց որ իմանան, բայց Յէու եկողները վար դնելով իր ճամբան կը շարունակէր ․ ուստի Յովրամ թագաւորը, և իրեն հետ նաեւ իր քրոջ որդին Յուդայի Ոքոզիա թագաւորը, որ արդէն պատերազմին ալ մէկտեղ գացած էր, զանոնք դիմաւորելու համար իրենց կառքերը հեծան և Նաբովթի ագարակին մէջ Յէուի հանդիպեցան ․ Հոն տեղ Յովրամ իմանալով Յէուի միտքը երբ կ'ուզէր փախչիլ, Յէու հանելով սպաննեց զանիկայ

ու գիւղը նոյն ագարակին մէջ նետել տուաւ. և Յովրամ տասն երկու տարի թագաւորեց. Ոքոզիա թագաւորն ալ այս բանը տեսնելով երբ կը փախչէր, Յէու անոր ետեւէն մարդ ղրկեց և զանիկայ վիրաւորեցին որ քիչ մը յետոյ մեռաւ. Ետքը Յէու եկաւ Յեզրայէլ, ուր Յովրամ թագաւորի մայրը Յեզաբէլ աչուըները ծարիր քսած, պատուհանը նստեր էր. և Յէու ըսաւ անոր քովը նստող երկու ներքինեաց որ զանիկայ պատուհանէն վար նետեցին ու ջախջախեցաւ և ձիերուն ոտնակոխ եղաւ. Ասկէ յետոյ Յէու, Աքաաբու բոլոր ցեղը ջնջելէ զատ նաեւ Յուդայի Ոքոզիա թագաւորին եղբայրներն ալ մեռցուց Սամարիայի մէջ, որք Յովրամի տեսութեան եկած էին. Նաեւս Բահաղու քուրմերն ալ ջարդելով անոր պաշտամունքը բոլորովին վերցուց. Թէեւ Յովրամ ալ այս բանը ըրած էր, բայց Յեզաբէլի ազդեցութեամբը դեռ կը գտնուէր.

4. Յէու թէեւ Աքաաբու ցեղը և Բահաղու պաշտամունքը ջնջեց, բայց ինքն ալ Յերոբովամու ճամբուն մէջ քալեց, և անոր դրած հորթերուն պաշտօնը չվերցուց. Աստուած ալ Ասորւոց Ազայէլ թագաւորը Իսրայէլի վրայ հանեց, որ Յորդանանէն անդին եղող Իսրայէլի երկիրներուն տիրեց. Յէու քսան ու ութը տարի թագաւորեց ու մեռաւ, և յաջորդեց իր որդին Յովաքազ. Ասիկայ ալ իր նախորդաց ճամբուն մէջ քալեց. ուստի Աստուած ալ զինքը այնկախ

պարտաւորութեան մը մասնակից Ասորւոց ձեռօք, որ միայն յիսուն հեծեալ, տասն կառք, և տասն հազար հետեւակ զօրք մնացին իւր ձեռքը։ Այն ատեն Յովաքազ Աստուծոյ գթմից որ Իսրայէլը այս անգամ ալ ազատեց 'ի նեղութենէ, անոր որդւոյն օրովը։ Յովաքազ տասն ու եօթը տարի թագաւորեց ու մեռաւ. յաջորդեց իւր որդին Յովաս։ Անիկայ ալ թէեւ իւր նախորդացը չարութենէն չհեռացաւ, բայց Աստուած անոր հօրը Յովաքազի ըրած զղջմանը համար յաջողեց անոր որ Իսրայէլը Ասորւոց ձեռքէն ազատեց։ Այս թագաւորութեան սկիզբները Եղիսէ հիւանդանալով, Յովաս զանիկայ տեսնելու գնաց, և Եղիսէ յայտնեց իրեն թէ քանի մը անգամ՝ պիտի կրնայ Ասորւոց յաղթել։ Իսկ Եղիսէ այն հիւանդութենէն մէջ մեռաւ։ Բայց Աստուած անոր մեռնելէն ետքն ալ զանիկայ փառաւորեց. վասն զի երբ որ մը մեռել մը թաղելու տարեր էին, ու իրենց վերայ աւազակներ գալուն համար փախերնուն մեռելը հոն Եղիսէի գերեզմանին ձգելով փախան, և ահա մեռելը ողջացաւ։ Յովաս թագաւորը Ասորւոց վերայ պատերազմի ելաւ Ազայէլի որդւոյն Բենադադ Գ․ի օրով, և անոնցմէ ետ դարձուց այն երկիրները զորս Իսրայէլացւոց ձեռքէն յափշտակեր էին։ Յովաս՝ Յուդայի Ամասիա թագաւորին հետ ալ պատերազմ ընելու ստիպուելով՝ յաղթեց անոր և զանիկայ բռնեց. Երուսաղէմ ալ երթալով շատ աւար առաւ ու դարձաւ։

Ասիկայ ալ տասն ու վեց տարի թագաւորեց ու մեռաւ. յաջորդեց որդին Յերոբովամ Բ.

5. Ասիկայ ալ թէեւ իր նախորդացը հետեւեցաւ, բայց Աստուած Իսրայէլացիները քիչ մի հանգստութիւն համար օգնեց իրեն, որով ոչ միայն Ասորւոց ձեռքը մնացած Իսրայէլացւոց առաջուան սահմանները ձեռք բերաւ, այլ եւ Եմաթայ եւ Դամասկոսի թագաւորութիւնները ալ առաւ, ինչպէս որ Տէրը խօսէր էր Յովնան մարգարէին ձեռքովը: Յերոբովամ Բ. քառասուն ու մէկ տարի թագաւորեց ու մեռաւ, եւ Իսրայէլի թագաւորութիւնն ալ որ տասը օրով վերջին անգամ բարձրացեր էր, սկսաւ իր կործանմանը մօտենալ: Ասոր գի տար որդին Զաքարիա վեց ամիս թագաւորելէ ետքը Յաբիսեան Սեղղումի զարկելով սպաննեց ու ինքը թագաւորեց. մէկ ամիսէն ետքն ալ Գադդիեան Մանայեմը զարկաց սպաննեց ու ինքը թագաւորեց, ու իր նախորդացը պէս Տէրոջը առջեւը չարութիւն ըրաւ. Ասոր օրովը Նինուէի Ասորեստանեայց թագաւորը Փուղա՝ Իսրայէլացւոց երկրին վրայ յարձակեցաւ. Մանայեմ ալ երկրին հարուստներուն վրայ հարկ ձգելով շատ գանձ հաւաքեց եւ անոր տուաւ որ իրեն բարեկամ ըլլայ. եւ այսպէս Ասորեստանեայք սկսան միջամտել ըն-բաղ Իսրայէլացւոց մէծերուն որ օրէ օր կը շատնար եւ իրենք ալ կը սկսարանային.

6. Մանայեմ տասը տարի թագաւորեց ու մեռաւ եւ յաջորդեց որդին Փակէիա. Ասիկայ ալ

իւր նախորդացը ճամբովը երկու տարի թագաւորելով, իւր զօրավարը Ռոմէլեան Փակէէն դաւիքով մեռցուց ու ինքը թագաւորեց․ Անիկայ Դամասկոսի Ասորւոց Ռասին թագաւորին հետ մէկտեղ Յուդայի Աքազ թագաւորին վերայ պատերազմի ելաւ, որն որ նեղը մնալով Ասորեստանեայց Թագղաթփաղասար թագաւորը իրեն օգնութեան կանչեց․ Անիկայ ալ նախ Դամասկոսը առաւ ու բնակիչքը գերի վարեց ու Ռասինը մեռցուց, և ետքը եկաւ Իսրայէլացւոց շատ տեղերուն տիրեց ու բնակիչները գերի վարեց յԱսորեստան․ Փակէէ իւր նախորդացը ընթացքով քսան տարի թագաւորելէ զկնի, Եղայեան Ովսէէ իրեն դաւաճանութիւն ըրաւ ու մեռցուց, և ինքը թագաւորեց․ Անիկայ ալ Տէրոջը առջեւը չարութիւն ըրաւ թէև ոչ իւր նախորդացը պէս․ Ասոր դէմ ելաւ Ասորեստանեայց թագաւորը Սաղմանասար և իրեն հարկատու ըրաւ․ Սակայն Ովսէէ քիչ մը ետքը Եգիպտացւոց Սովա թագաւորին հետ դաշնակցեցաւ որ Սաղմանասարի հարկ տալէն ազատի․ Ասոր համար Սաղմանասար ալ դարձեալ շատ զօրք Իսրայէլացւոց վերայ յարձակեցաւ, և Սամարիա մայրաքաղաքն ալ երեք տարի պաշարելէ ետքը առաւ, և Ովսէէ թագաւորը ու Իսրայէլացւոց մեծ մասը յԱսորեստան գերի տարաւ․ Այսպէս Իսրայէլացւոց տասը ցեղերուն թագաւորութիւնը երկու հարիւր յիսուն տարի տեւելէ ետքը կործանեցաւ, որոնք իրենց թագաւորներով մէկտեղ

կռապաշտութե՛, Յուդայեանց հետ պատերազմներու և ներքին երկպառակութեանց մէջ խնալով. Աստուծոյ երեսէն ընկան, տկարացան, և բնաւ մտիկ ալ չըրին խրատուց և ազդարարութեանց այնչափ մարգարէից, որ Աստուած յաճախ կը ղրկէր մանաւանդ այն միջոցներուն. Իսկ Յուդայի ցեղը որ աւելի օրինաւոր փարուեցաւ, ուստի և թագաւորութիւնն ալ քիչ մը աւելի դիմացաւ, մինչպէս այնոր պատմելու Աղամենի որդւոյն Աւրումալի օրէն սկսեալ.

7. Իսկ Սաղմանասար, Ասորեստանի նահանգներէն ուրիշ մարդիկ բերել տալով Իսրայելացւոց երկիրը բնակեցուց. Սակայն այս նորեկ գաղթականները ամբարիշտ մարդիկ ըլլալով. Տէրը անոնց վրայ առիւծներ ղրկեց որ զիրենք կը մեռցընէին. Ուստի Ասորեստանեայց թագաւորին իմացուցին թէ երկրին Աստուածը զիրենք կը պատժէ անոր օրէնքը չգիտնալնուն համար. Ուստի թագաւորն ալ գերի տարած քահանաներուն մէկը ղրկեց որ եկաւ Բեթէլի մէջ բնակեցաւ և կը սորվեցընէր իրենց Աստուծոյ օրէնքները. Նոյն թէպէտև սկսան պաշտել ճշմարիտ Աստուածը, սակայն իրենց առաջին կռապաշտութիւնը չթողուցին. և թերի կերպով զԱստուած կը պաշտէին, միանգամայն և կռապաշտութիւն ալ կ'ընէին. Նոյը երբ Սամարիա քաղաքը վերըստին շինուեցաւ, այս բոլոր ժողովուրդը ամէնք մէկէն Սամարացիք կոչուեցան, որոնք Մովսէսի հինգ գիրքը միայն կ'ընդունէին.

## ԳԼՈՒԽ ԺԵ.

### ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՅՈՒԴԱՅԻ

1. Ռոբովամ. Աբիա. 2. Ասա. 3. Յովսափատ. 4. Յովրամ. 5. Ոքոզիա. (Գ. Թգ. ԺԴ—ԻԲ. Դ. Թգ. Գ. Ը—Ժ. Բ. Մնց. ԺԱ—ԻԲ.)

1. Իսրայէլի թագաւորութիւնը երբ բաժնըւեցաւ, Ռոբովամի իշխանութիւնը միայն Յուդայի և Բենիամինի ցեղերուն վերայ մնաց. բայց քահանայից և Ղևտացւոց ինչպէս նաև օրինաց նախանձաւոր մարդոց շատը Ռոբովամի կողմն անցնելով այս թագաւորութիւնը իւր փոքրութեանը համեմատ միւսէն աւելի զօրացաւ. Ռոբովամ իւր թագաւորութեան սկիզբները աստուածպաշտութեան հետևեցաւ. բայց յետոյ թէ ինք և թէ ժողովուրդը կռապաշտութեան և ամէն անօրէն չարութեան մէջ ընկան. Եւ ահա Ռոբովամի թագաւորութեան հինգերորդ տարին Եգիպտոսի Սուսակիմ (Սիսակ) թագաւորը շատ զօրքով Երուսաղէմի վերայ եկաւ, ու տաճարին գանձերը և Սողոմոնի շինել տուած ոսկիէ ասպարները առաւ. Նոր եկած ատենը թէ և զղջացան Յուդայեանք, բայց յետոյ վերստին չարունակեցին իրենց չարութիւնը. Ռոբովամ միշտ Յերոբովամի հետ պատերազմ ունեցաւ, և տասն ու եօթը տարի թագաւորելով մեռաւ. և Դաւթի քաղաքին մէջ թաղուեցաւ. անկից շատ կիներ ու հարճեր և քսանու ութ տղայ ու վաթսուն աղջիկ ունէր. իրեն յաջորդեց որդին Աբիա. Աբիայ ալ իւր հօրը մեղաց հետևե-

ւեցաւ. բայց Աստուած խնայեց անոր Դաւթի սիրոյն համար։ Աբիա՝ Յերոբովամի հետ պատերազմ բացաւ և կ'ուզէր որ ժողովուրդը Դաւթի ցեղին հնազանդին և հօրթերուն պաշտօնը թողուն։ Իսկ երբ Յերոբովամ զիրենք շուրջանակի պաշարելով նեղը ձգեց, այն ատեն Աբիա և իր զօրքը Աստուծոյ ապաւինելով Յերոբովամի յաղթեցին և շատ ալ քաղաքներ առին անկէ. Աբիա ալ շատ կիներ և քսան երկու տղայ ու տասն ու վեց աղջիկ ունեցաւ և երեք տարի թագաւորեց ու մեռաւ. յաջորդեց որդին Ասա։

2. Ասա՝ Աստուծոյ օրինաց համեմատ ընթացաւ, և երկրին մէջէն ամէն անիրաւութիւն վերցուց. իր մայրն ալ տիկնութենէ հանեց կռապաշտութիւն ընելուն համար։ Ուրիշ պարսպաւոր քաղաքներ և ամրութիւններ ալ շինեց երկրին մէջ։ Ասոր թագաւորութեան տասն ումէկերորդ տարին, Եթովպիայի Զարա (Զարեհ) թագաւորը, մէկ միլիոն զօրքով ու երեք հարիւր կառքով Յուդայի երկրին վրայ յարձակեցաւ. իսկ Ասա որ հինգ հարիւր ութսուն հազար զօրք ունէր, անոր դէմ ելաւ և Աստուծոյ ապաւինելով յաղթեց և շատ աւար առաւ։ Այս յաղթութենէն ետքը Ազարիա մարգարէին խրատովը բոլոր ժողովուրդը ժողվեց Երուսաղէմ, ուր անեղ հանդիսաւոր ողջակէզներ և զոհեր մատուցին Աստուծոյ։ Բայց Իսրայէլի Բաասա թագաւորը սկսաւ թշնամութիւն ընել Ասայի և սահմանները անցնելով, որ իր

ժողովուրդին Յուդայի թագաւորութեան հետ ունեցած ամեն յարաբերութիւնները կտրէ , Այս բանին վերայ Ասա` Դամասկոսի Ասորւոց Բենադադ թագաւորին շատ գանձ ղրկելով Իսրայէլացւոց դէմ գրգռեց զանիկայ , որով Բաասա ալ ետ կեցաւ իր ձեռնարկութենէն . Թէև Ասորւոց հետ ըրած դաշնակցութեան համար Աստուծոյ կողմանէ յանդիմանուեցաւ Ասա, Անանիա մարգարէի ձեռօք : Ասա քառասուն ու մէկ տարի թագաւորեց ու մեռաւ , և մեծ պատուով թաղուեցաւ իր շինած գերեզմանին մէջ . իրեն յաջորդեց որդին Յովսափատ .

3 . Յովսափատ ալ բոլորովին Աստուծոյ կամացը համեմատ ընթացաւ . դեռ մնացած կռապաշտական բաները բոլորովին վերցուց . ինքը անձամբ կը պտըտէր ամեն տեղ և ժողովուրդին Աստուծոյ օրէնքը սորվեցնել տալու շատ փոյթ կը տանէր : Նաև դատաստաններու համար ալ կարգադրութիւններ ըրաւ և ամեն քաղաքի մէջ դատաւորներ դնելով, Երուսաղէմի մէջ ալ դատաստանական ատեան մը կազմել տուաւ : Այլ և աղէկ հոգածութեամբ կառավարելով երկիրը , շատ եկամուտ ալ ճարեց , և մինչև մէկ միլիոնէն աւելի զօրք հանելու կարողութիւն ունեցաւ , որով շրջակայ ազգերէն ալ շատեր իրեն հարկատու եղան : Յովսափատ Իսրայէլի Աքաաբ թագաւորին աղջիկը Գոթողիան իր որդւոյն Յովրամին առած ըլլալով . Աքաաբու տեսութեան գնաց , և անոր

յորդորելովը Աքաաբու դէմ անոր բրած պատերազմին մէջ ալ մնաց, բայց հոն տեղ հազիւ թէ մեռնելէն ազատեցաւ և Երուսաղէմ դարձաւ, ուր տեղ Յէու մարգարէն Աստուծոյ կողմանէ զինքը յանդիմանեց Աքաաբու հետ յարաբերութիւն ընելուն համար ։ Ասոր յաջորդին Իսրայէլի Ոքոզիա Թագաւորին հետ ընկերութեամբ Գասիոնգաբերի մէջ նաւեր շինել տուաւ, բայց մրրիկ մը խորտակեցան ։ Իսրայէլի Յովրամ Թագաւորին հետ ալ Մովաբացւոց դէմ պատերազմի գնաց ։ Սակայն ասոր վերայ Մովաբացիք և Ամմոնացիք միաբանելով Յովսափատու վերայ եկան . յայնժամ Յովսափատ ալ ժողովուրդին ծոմապահութիւն պատուիրեց և Ղևտացիք ալ ՃԼ. երորդ սաղմոսը երգելով՝ իւր զօրքերովը յարձակեցաւ անոնց վերայ ու մեծ յաղթութիւն մը ձեռք բերաւ, և երեք օր աւարը բաժնելով . չորրորդ օրն ալ Աստուծոյ գոհութեան տօն կատարեցին ։ Յովսափատ քսան ու հինգ տարի Թագաւորելէ ետքը մեռաւ, և իրեն յաջորդեց որդին Յովրամ ։

4. Ասիկայ նախ և առաջ քանի մը հոգի իշխաններէն մեռցնելէ զկնի իւր վեց եղբայրներն ալ մեռցնել տուաւ, որոնց շատ հարստութիւն պարգևած էր հայրը ։ և իւր հօրը ճամբայէն չելլելով՝ Տէրոջը առջև չարութիւն ըրաւ Իսրայէլի Թագաւորաց նման, քանզի ինքն Աքաաբու փեսայ եղած էր ։ Ասոր օրով Յուդայի հարկատու Եդովմայեցիք գլուխ քաշեցին,

և Փղշտացիք ու Ամորհացիք միացած եկան եր-կիրը կողոպտեցին, և Յովրամ թագաւորին որ-դիքը և կնիկները ալ գերի տարին, և միայն կինը ու մայրը և մէկ որդին Ոքոզիան մնա-ցին. և այս բաները յայտնուած էր իրեն Եղ-իա մարգարէի թղթովը. Յովրամ ութ տարի թագաւորեց ու խել մը տարին ծանր հիւանդու-թենէ յետոյ մեռաւ և թաղեցաւ ոչ թագա-ւորական պատուով և ոչ ալ թագաւորաց գե-րեզմանին մէջ. իրեն յաջորդեց որդին Ոքոզիա. Անիկայ ալ Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ իւր մօրը թելադրութեամբը. և երբ Իսրայէլի Յովրամ թագաւորին տեսութեան գացած էր ինքը և եղբօրորդիքը, այն միջոցին Յէու Աքա-աբին տանը ջնջելու ատեն Ոքոզիան և եղբօր-որդիքն ալ սպաննել տուաւ. Այսպէս մեռաւ Ոքոզիա մէկ տարի թագաւորելով.

## ԳԼՈՒԽ ԺԶ.

1. Ոքոզիայի մայրը Գոթողիա. 2. Յովաս. 3. Ամասիա. 4. Ոզիա. Յովաթամ. 5. Աքազ. (Դ. Թագ. ԺԱ—ԺԶ. Բ. Մնաց. ԻԲ—ԻԸ.)

1. Ոքոզիայի մայրը Գոթողիա լսելով իւր որդւոյն և գահաժառանգներուն մահը, անոնց-մէ մնացածները ալ Երուսաղէմի մէջ սպաննել տուաւ և ինքը թագաւորեց. բայց Յովսաբէթ որ Ոքոզիայի քոյրն և Յովիադայ քահանայապետ-ին կինն էր, Ոքոզիայի մէկ տարեկան որդին Յովասը ազատեց, զոր Յովիադա տաճարին մէջ գաղտնի կը պահէր. Եւ եղաւ որ երբ Յովաս

մեծցաւ ու եօթը տարեկան եղաւ, Յովիադա քահանայապետը երկրին մեծերուն և զօրապետներուն մէկ մաս տաճարը ժողվելով երդում տուաւ անոնցմէ և յայտնեց այն գաղտնիքը։ Ու անոնց խորհուրդ տուաւ որ բոլոր իրենց ծանօթները Երուսաղէմի տաճարը ժողվեցին ժամադրեալ օր մը, և Յովիադա ամէն պէտք եղածը պատրաստելէ կարգադրած ըլլալով, անոնց ամենուն ներկայութեանը Յովասը թագաւոր օծեց, և ամէնքն ալ ծափահարութեամբ Կեցցէ Արքայ գոչեցին և սկսան ուրախութեան երգեր երգել փողերու ձայնով։ Գոթողիա այս ձայները լսելով տաճարը եկաւ, և պատճառը իմանալով սկսաւ «դաւաճանութի՜ւն է» գոռալ, բայց քահանայապետին հրամանաւը զինեալ ամբոխին դուրս հանեցին ու սպաննեցին, վեց տարի իշխանութիւն վարելէ ետքը։

2. Այն ատեն Յովիադա Տէրոջը առջե-ւ ուխտ ընել տուաւ թագաւորին ու ժողովրդեան որ ամէն կռապաշտական բաները վերցնեն, և միայն ճշմարիտ Աստուծոյ ծառայեն։ Ուստի Յովաս՝ Գոթողիայի շինել տուած Բահաղու կուռքին մեհեանը կործանել՝ և անոր քուրմերը սպաննել տուաւ, և Յովիադայի խնամակալութեամբ ձեռք զարկաւ Տէրոջը տաճարը և մէջի սպասները նորոգելու, և ժողովրդեան հանգանակութեամբը 'ի գլուխ հանեց։ Ու Յովիադա քահանայապետը հարիւր երեսուն տարի ապրեցաւ ու մեռաւ և թագաւորաց քով թա-

ղուեցաւ Դաւթի քաղաքին մէջ, հայրենեաց և օրինաց մեծ ծառայութիւն ըրած ըլլալուն համար. Բայց անոր մեռնելէն ետքը Յովաս իր վարքը փոխեց իր իշխանաց շողոքորթութենէն եղծուելով, և կռապաշտութեան ու անօրէնութեան մէջ ինկաւ թէ ինքը և թէ ժողովուրդը. Այն ատեն Յովիադայի որդին Զաքարիա քահանայն Աստուծոյ հոգւովը լցուած յանդիմանեց իրենց ընթացքը, յայտնելով թէ Աստուած զիրենք պիտի պատժէ այս բանիս համար. բայց Յովաս փոխանակ անսալու անոր, քարկոծել տուաւ զանիկայ առանց յիշելու գոնէ անոր հօրը երախտիքը. Իսկ հետեւեալ տարին Ասորւոց թագաւորը Ազայէլ շատ աւերումներ ընելով մինչև Երուսաղէմ եկաւ, և Յովաս հազիւ կրցաւ զանիկայ ետ դարձընել թագաւորական տան և տաճարին գանձերը տալով անոր. Ասոր վերայ ինքն ալ հիւանդացաւ, և օր մը իր ծառաները դաւաճանութիւն ըրին իրեն, և անկողնոյն մէջ սպաննեցին զանիկայ՝ քառասուն տարի թագաւորելէ ետքը, և զինքը թագաւորաց գերեզմանին մէջ չթաղեցին. անոր յաջորդեց որդին Ամասիա.

3. Ամասիա Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ՝ թէև ոչ իր հօրը Դաւթի նման. Նախ և յառաջ իր հօրը դէմ դաւաճանութիւն ընողները մեռցընել տուաւ. ապա Եդովմայեցւոց վերայ պատերազմի ելաւ, որք արդէն Յովրամի օրէն 'ի վեր զլուխ քաշած էին, և յաղ-

թեց անոնց ։ Բայց պատերազմի աւարէն առած կուռքերը Երուսաղէմի մէջ կանգնել տուաւ , թերեւս իբր յաղթութեան նշանակ , այլ քիչ մը յետոյ սկսաւ պատիւ տալ անոնց , որուն համար թէեւ խրատուեցաւ մարգարէի մը միջոցաւ , այլ միտք չըրաւ ։ Այնուհետեւ յաջողութիւնը փոխուեցաւ ի ձախողութիւն ․ քանզի իւր յաղթութեանը ամբարտաւանելով՝ Իսրայէլի Յովաս թագաւորը իւր վերայ պատերազմի գրգռեց , ուրկէ յաղթուելով ձերբակալ՝ եղաւ ․ եւ Յովաս թագաւորը Երուսաղէմ ալ գալով ամրութեանց մէկ մասը քանդել տուաւ եւ շատ գանձ ու պատանդներ առնելով Սամարիա դարձաւ ։ Ասկէ յետոյ իրեն կեանքը դէմ Երուսաղէմի մէջ դաւաճանութիւն մը ըլլալը իմանալով փախաւ ուրիշ տեղ , բայց հոն ալ սպաննուեցաւ քանի մը տարի թագաւորելէ ետքը , եւ մարմինը բերին թագաւորաց գերեզմանը թաղեցին ․ յաջորդեց որդին Ոզիա ( Ազարիա ) ։

4 ․ Ոզիա՝ Տէրոջը օրինաց համեմատ ընթացաւ ․ շրջակայ ազգաց վերայ մեծ յաղթութիւններ ըրաւ , եւ իւր զօրութիւնը շատցուց ․ շատ շինութիւններ ու զինուորական բարեկարգութիւններ ըրաւ ․ երկրագործութիւնն ալ ծաղկեցուց , ինչու որ մշակութեան սէր ունէր անոր ։ Բայց իւր յաջողութիւններէն հպարտանալով ուզեց քահանայութիւն ալ ընել ։ Եւ երբ օր մը տաճարին մէջ կ՚ուզէր խնկարկութիւն ընել , առանց ուշադրութիւն ընելու քահանայից խօս-

քերուն, և ահա յանկարծ բորոտութիւն մը ե-
կաւ վրան, ու տաճարէն ելլելով տան մէջ ա-
ռանձնացաւ ու մինչև մահը բորոտած մնաց,
և նոյն միջոցին իր որդին Յովաթամ տեղապա-
հութիւն կ՚ընէր։ Ոզիա յիսուն երկու տարի
թագաւորեց ու մեռաւ. բայց բորոտութեանը
համար թագաւորաց գերեզմանէն դուրս թա-
ղուեցաւ. յաջորդեց որդին Յովաթամ։ Ասիկա
ալ Տէրոջը առջևը ուղղութիւն բռնեց իր
հօրմէն աւելի. և շատ ամրութիւններ ու քա-
ղաքներ շինեց. Ամմոնացւոց ալ յաղթեց և զա-
նոնք հարկատու ըրաւ։ Ասիկա տասն ու վեց տարի
թագաւորեց ու մեռաւ. յաջորդեց որդին Ա-
քազ։ Յովաթամի վերջին օրերը սկսած էին Իս-
րայէլացիք ու Ասորիք Յուդայի երկիրը ասպա-
տակել։

5. Աքազ իր հօրը ճամբայէն շեղելով
սկսաւ կռապաշտութեան հետևիլ, և այնքան
չարացաւ որ իր որդին ալ կուռքերուն զոհեց։
Ասոր Աստուած ալ մատնեց զանիկայ Դամաս-
կոսի Ասորւոց Ռասին թագաւորին և Իսրայէլի
Փակէէ թագաւորին ձեռքը որք շատ աւերը ըրին
ու շատ մարդ ջարդեցին. Կարմիր ծովուն վրայի
Եղաթու նաւահանգիստը Ասորիք առին. և Իս-
րայէլացիք ալ շատ աւար ու գերի առնելով Սա-
մարիա տարին. բայց հոն ալ Ովդեդ մարգա-
րէին խրատովը և ուրիշ մեծամեծաց ալ միջնոր-
դութեամբը գերիները ետ դարձուցին։ Անոնք
մինչև Երուսաղէմի վրայ գալ և Դաւթի ցե-

զին թագաւորութիւնը ջնջել կ՚ուզէին . բայց Աստուած Եսայի մարգարէին բերնովը ցուցուց որ անոնց այս խորհուրդը չպիտի գլուխ ելլէ[1] . Բայց Աքազ թերահաւատելով ուրիշ տեղէ օգնութիւն խնդրեց . և Ասորեստանեայց Թագղաթփաղասար թագաւորին շատ գանձ ղրկեց որ իրեն օգնէ . բայց խաբուեցաւ . ինչու որ թէև անիկայ Ասորիքը և Իսրայէլացիքը նուաճեց . բայց իրեն ալ սկսաւ սպառնալ . և Աքազ անոր հարկ տալ յանձն առնելէ զատ , զանիկայ յարգելու համար Դամասկոս գնաց . և այս առթիւ հոն տեղ տեսած ամէն կռապաշտական բաներուն նմանը եա գործած առնէն Երուսաղէմի մէջ ալ շինել տուաւ . Այսպէս տասն ու մէկ տարի թագաւորեց ու մեռաւ . բայց թագաւորաց գերեզմանը չթաղուեցաւ . յաջորդեց իւր որդին Եզեկիա .

## ԳԼՈՒԽ ԺԵ .

1 . Եզեկիայի բարեպաշտութիւնը . 2 . Սենեքերիմ թագաւորը Երուսաղէմի կը սպառնայ ու կը պատժուի . 3 . Եզեկիայի հիւանդութիւնը և առողջանալը . 4 . Եզեկիայի վերջին օրերը . 5 . Մանասէի չարութիւնները . 6 . Բաբելոն գերի կ՚երթայ . կը զղջայ ու կը դառնայ . 7 . Ամոն . ( Դ . Թագ . ԺԸ—Ի . Բ . Մնաց . ԻԹ—ԼԲ . Եսայ . ԼԶ—ԼԹ . )

1 . Եզեկիա բոլորովին ուրիշ Աստուծոյ յարեցաւ իւր հօրը Դաւթի նման , և գահակալութեան օրէն սկսեալ ձեռք զարկաւ բոլոր կռապաշտական բաները ջնջելու , և աստուածային պաշտամունքը վերստին հաստատեց . Այս պատ-

1 Եսայի . Է . 4—7 .

գամաւորներ ղրկելով նաեւ Իսրայէլի մէջ ցե-ղերէն ալ շատ մարդ Երուսաղէմ ժողվեց ու հան-գստաւոր կերպով քաղաքին տանը կատարել տը-ւաւ : Եզեկիա ամեն ջանք բրաւ աստուածպաշ-տութիւնը բարեձեւացնելու , եւ Մովսէսի օրէն շինուած պղնձի օձն ալ խորտակել տուաւ՝ որուն պաշտօն կը մատուցանէր ժողովուրդը : Ինքը ա-մեն կերպով յաջողութիւն գտաւ . Փղշտացւոց յաղթեց եւ իր տէրութեան սահմանները ըն-դարձակեց : (Իր թագաւորութեան հինգե-րորդ տարին պատահեցաւ Իսրայէլի թագաւո-րութեան կործանումը) : Եզեկիա նաեւ Ասորե-ստանեայց թագաւորին տուրք տալն ալ դադրե-ցուց . ուստի եւ իր թագաւորութեան տաս-նուչորսերորդ տարին Ասորեստանեայց Սենեքե-րիմ թագաւորը Յուդայի երկրին վրայ եկաւ շատ մեծ զօրութեամբ , ուրկէ Եզեկիա վախնալով շատ գանձ ղրկեց անոր որ ետ դառնայ : Բայց Եզեկիա դարձեալ կասկածելով անկէ , սկսաւ Երուսաղէմը ամրացընել . եւ անոր դուրսը եղած աղբիւրները եւ հեղեղատը գոցել տուաւ որ ե-թէ Ասորեստանեայք գալու ըլլան՝ ջուր չգտնեն :

2 . Իսկ Սենեքերիմ թագաւորը Եգիպտոս-ւոյ վրայ գացած ըլլալով՝ երբ դարձաւ , վերըս-տին Յուդայի երկրին վրայ եկաւ , եւ իր Ռաբսակ անուն զօրավարը շատ զօրքով Երու-սաղէմի վրայ ղրկեց , որ եկաւ քաղաքին պաշա-րեց . եւ Սենեքերիմին կողմանէ սկսաւ ըսել ժողո-վրդեան թէ՝ «Եզեկիային խաբուելով ձեր Ա-

տուծոյն մի յուսար . որ երկրին Աստուածը կըցաւ իր ժողովուրդը ձեռքէս ազատել . . . » : Այսպէս շատ մը անիմաստ խօսքերէ զատ նաև սկսաւ գեղեցիկ խոստումներ ալ ընել որ ժողովուրդը հրապուրէ . այս խոստումներով թուղթ մի ալ տուաւ Եզեկիայի Սենեքերիմի կողմէն : Այս խօսքերը որ լսեց Եզեկիա և նամակը կարդաց , տրտմելով իր հանդերձները պատռեց և քուրձ մը հագնելով Աստուծոյ տաճարը գնաց . և նոյն թուղթը Աստուծոյ առջև տարածելով՝ սկսաւ պաղատել և վրէժխնդրութիւն հայցել . միանգամայն Եսայի մարգարէին ալ մարդ ղրկեց որ աղօթէ . իսկ Եսայի Աստուծոյ կողմէն յայտնեց իրեն որ չվախնայ , վասն զի Սենեքերիմ չպիտի կրնայ Երուսաղէմ մտնել , հապա ամօթալից ետ պիտի դառնայ : Եւ ահա հետևեալ գիշերը Աստուած Ասորեստանեայց բանակէն հարիւր ութսուն հազար հոգի մեռցուց . որուն վրայ Սենեքերիմ Նինուէ դարձաւ , ուրտեղ իր երկու որդիքը զինքը սպաննեցին ու իրենք Հայաստան փախան :

3. Այս միջոցներուն Եզեկիա սաստիկ կերպիւ հիւանդացաւ , և Եսայի մարգարէն ալ Աստուծոյ կողմանէ յայտնեց որ մահուան պատրաստութիւն տեսնէ : Այն ատեն Եզեկիա իր երեսը պատին դարձուց և աղօթեց ըսելով . « Կաղաչեմ , ով Տէր , յիշէ քու առջևդ ճշմարտութեամբ և հաւատարմութեամբ քալելս » . և անիկայ մեծ լալով մը լացաւ : Այն ատեն Աս-

տուած Եսայի մարգարէին հրամայեց որ երթայ Եզեկիայի այսպէս ըսէ . «Տէր աղօթքդ լսեցի, կ՚ըսէ Տէրը . քու աչքիդ արտասուքը տեսայ, ահա զքեզ պիտի բժշկեմ ու երեք օրէն պիտի եկեղեցի։ Եւ այս բանին ճշմարտութեան համար ըստ խնդրանաց Եզեկիայի նշան մ՚ալ տուաւ . Եսայի Աստուծոյ կողմանէ որ Աքազու կոչուած արեւաժամացոյցին ստուերը տասն աստիճան ետ դարձաւ . Եւ Եսայի անոր վէրքին վրայ թզենի մը չոր թուզ դնել տուաւ , և աղէկցաւ . Ասկէ ետքը Եզեկիա ի շնորհակալութիւն Աստուծոյ՝ օրհնութիւն մը երգեց որ կը սկսի . Ես ասացի ի բարձրութեան աւուրց իմոց . (Եսայ . ԼԸ . 10—22)

4 . Եզեկիայի հիւանդութիւնը և առողջութիւնը լսելով Բաբելոնացւոց Մարովդաք թագաւորը որ անոր բարեկամն էր , աչքալուսի համար մարդ ղրկեց Եզեկիայի հանդերձ ընծայիւք . զորս Եզեկիա ալ սիրով ընդունեց . և այդ սնոտի ունայնապարծութեամբ մը ցուցնել անոնց իր հարստութիւնը և գանձերը . այլ Եսայի մարգարէն Աստուծոյ կողմանէ յայտնեց անոր՝ որ օր մը այդ ցուցուցած գանձերդ և որդիքդ ալ Բաբելոն գերի պիտի տարուին . խոնարհութեամբ յանձն առաւ Եզեկիա Աստուծոյ դատաստանը . և իր մնացեալ օրերը խաղաղութեամբ անցուներով՝ ջրմուղներ և ուրիշ շինութիւններ շինեց . մանաւանդ որ սէր ունէր նաև երկրագործութեան և խաշնարածութեան . Այսպէս քսան հինգ տարի թագաւորեց ու մե-

ռաւ և մեծ պատուով թաղեցաւ ․ յաջորդեց իւր որդին Մանասէ ։

5․ Մանասէ իւր հօրը ուղղութեան հակառակ այնչափ չարութիւն բրաւ Տէրոջը առջեւ՝ որ Յուդայի թագաւորներէն և ոչ մէկը բրած էր ։ Բոլոր շրջակայ ազգաց կուռքերը պաշտեց, և մինչեւ անգամ Աստուծոյ Տաճարին մէջ ալ կուռքեր կանգնեց և անոնց համար սեղաններ շինեց, իւր որդիքն ալ կուռքերուն զոհեց ․ նաև հմայութեան և գիւթութեան ալ հետևեցաւ, և բոլոր ժողովուրդն ալ անոր օրինակովը այնպէս մոլորեցան, որ Աստուծոյ իրենց առջեւէն կորնցուցած ազգերէն աւելի չարութիւն բրին ։ Ասոնցմէ զատ Մանասէ շատ ալ անմեղ արիւն թափեց ։

6․ Մանասէ և իւր ժողովուրդը իրենց այն ընթացքով Աստուծոյ բարկութիւնը գրգռեցին իրենց վերայ, որ վճռեց Յուդայի թագաւորութիւնն ալ ջնջելու ․ Բայց ամենայնիւ իւր մեծ ողորմութեամբը ուզելով որ ապաշխարելու ժամանակ տայ, այս անգամ թող տուաւ միայն որ Ասորեստանեայց թագաւորին (Սենեքերիմի որդւոյն Ասորդանին) իշխանները շատ զօրք Յուդայի երկրին վերայ եկան և Մանասէն բռնելով շղթաներու զարկին ու Բաբելոն տարին ։ Բայց հոն տեղ Մանասէ իւր նեղութեան ատեն զղջաց ․ զԱստուած խնդրեց և անոր առջեւը խոնարհելով սկսաւ սրտանց աղօթել ․ ուստի Աստուած ալ անոր աղօթքը ընդունելով դարձեալ

վերջապէս իւր թագաւորութեան դարձաւ. Մանասէ իւր դառնալէն ետքը բոլոր երկրին մէջէն կ'ապաշխարութիւնը ցուցնելով՝ աստուածոյն պաշտամունքը վերահաստատեց, եւ չհարցնելութեան ու խռովութեան դարձեր մնաց Աստուծոյ. Դուռթի քաղաքին ալ ամրացուց եւ շինութիւններ ու կարգադրութիւններ ընելով՝ յիսուն ու հինգ տարի թագաւորեց ու մեռաւ. յաջորդեց որդին Ամոն։

7. Ամոն իւր հօրը չար ճամբուն հետեւեցաւ առանց հետեւելու նաեւ անոր ապաշխարութեանը, եւ վերջապէս կ'ապաշխարութիւն մնացուց երկրին մէջ. Երկու թագաւորութեան երկրորդ տարին իւր ծառայները ապստամբեցին զինքը իւր տանը մէջ. Բայց ժողովուրդն ալ այն դաւաճանութիւնը ընողները մեռցուցին, եւ Ամոնի ութ տարեկան որդին Յովսիան թագաւոր դրին։

## ԳԼՈՒԽ ԺԸ.

1. Յովսիայի բարեպաշտութիւնը. 2. Օրինաց մատեանը. 3. Յովսիա կը վերանորոգէ ու կը մեռնի. 4. Յովաքազ. 5. Յովակիմ. 6. Յեքոնիա. 7. Սեդեկիա. 8. Յուդայի թագաւորութեան եւ Երուսաղէմի ու տաճարին կործանումը. 9. Գոդողիա. Կուռքերու փոխադրութիւն. (Դ. Թագ. ԻԲ—ԻԵ. Բ. Մնաց. ԼԴ—ԼԶ. Երեմ. Ը—ԾԲ.)

1. Ամոնի որդի Յովսիա իւր նախնւոյն Դաւիթին ընթացքին հետեւելով Աստուծոյ տաճարը ամենայն ու զգուշութեամբ ընթացաւ։ Այնչափ նախանձաւորութիւն ունեցաւ Աստուծոյ օրինացը՝ որ կ'ապացուցանէ նշոյն ունեցող ինչ եւ իւր բան Յուդայի եւ Իսրայէլի միւս ցե-

դերուն մէջէն ալ որչափ որ ձեռնհաս էր՝ ջնջեց . և Իսրայէլի առաջին Թագաւորին Յերոբովամին շինած ոսկէ հորթերն ալ ջնջելով , անոր քուրմերուն ոսկորներն ալ անոր սեղանին վրայ այրեց , և ասով Յերոբովամի օրով եղած մարգարէութիւնը կատարեց : Իր Թագաւորութեան տասնութերորդ տարին տաճարին ալ նորոգել տալու ձեռնարկեց , և այս նորոգութեան ատեն Քեղկիա մեծ քահանայն Մովսէսի գրած բնագիր օրինատետրը գտաւ , որ թերևս Աքազու կամ Մանասէի օրերը մէկը գաղտնի պահած էր : Այս գիրքը կարդացնելով Յովսիա , երբ լսեց անոր պատուէրները և զանոնք չպահողներուն պատիժները , արտմութենէն իր հանդերձները պատռեց և անմիջապէս մարդ ղրկեց որ մարգարէի մը միջոցաւ Աստուծոյ հարցունեն , թէ ինչ պիտի ըլլայ իրենց վիճակը քանի որ այնչափ օրինազանցութիւն են ըրած : Այս մարդիկը գացին Ողդա անուն կին մարգարէին հարցուցին , որ յայտնեց թէ բոլոր այն գրուած պատիժները պիտի գան անշուշտ իրենց վրայ , բայց Յովսիայի ուղղութեանը համար Աստուած անոր պիտի ազատէ և այն գալու չարիքները անոր օրովը չպիտի ըլլայ :

2 . Ասոր վրայ Յովսիա բոլոր քահանայները մարգարէները և երկրին ծերերը և ժողովուրդը Աստուծոյ տունը ժողվելով հոն անոնց 'ի լուր ամենեցուն նոյն մատեանը կարդացնել տուաւ . Տէրոջը առջև ուխտ ըրաւ որ նոյն օրինաց հա-

ւատարիմ մնայ ամեն կերպիւ . և բոլոր ժողովուրդն իւր կողմէն հաւանութիւն տուաւ այս ուխտին ։ Այսպէս Յովսիա՝ քահանայքը և Ղեւտացիք իւրաքանչիւրն իրենց պաշտամանն մէջ կարգաւորելով՝ որ շատ տարինէ 'ի վեր խափանած էր այս կարգը . Աստուծոյ տապանակն ալ վերստին տաճարին մէջ բերել տուաւ Ղեւտացւոց քովէն , որք Թերևս տաճարին խանգարեալ ատենները վերցուցած էին անկէ ։ Այս հանդիսաւոր կերպիւ կատարել տուաւ և զատկի տօնը ճիշդ Մովսէսի ձեռօք պատուիրուածին պէս , որոյ նըման շատ տարիներէ 'ի վեր չէր կատարուած ։ Այսպէս Յովսիա բոլոր սրտով առ Աստուած դարձաւ և ժողովուրդը անոր օրովը Աստուծոյ ծառայեց , բայց Անոր բարկութիւնը չդարձաւ Յուդայի երկրին վերայէն անոնց արդէն բրած անչափ անօրէնութեանց համար ։

3 . Այն միջոցներուն Եգիպտոսի Նեքաւով Թագաւորը Ասորեստանեայց վերայ պատերազմի երթալով . Յովսիա անոր դէմ ելնալ ուզեց՝ Թերեւս իրեն դաշնակից Ասորեստանեայց ։ Թէեւ Նեքաւով կ'ուզէր որ Յովսիա ետ կենայ ու միջամուխ չըլլայ այս գործին , բայց Յովսիա մտիկ չըրաւ ու պատերազմի ելաւ անոր դէմ , ուր անդ և վիրաւորեցաւ , ու երբ Երուսաղէմ հասաւ , մեռաւ երեսուն ու ինը տարեկան , երեսուն ու մէկ տարի Թագաւորելով ։ Իր վաղահաս մահը պատճառ մի էր ժողովրդեան , որոյ վերայ մօտեցած էր Աստուծոյ դատաստանը ։ Բոլոր ազգը

սուգ ըրին իրեն վերայ, ու Երեմիա մարգարէն ալ ողբ մը շինեց և ամեն երգեցիկները իրենց ողբերուն մէջ Յովսիան յիշել սովորութիւն ըրին. և այսպէս պատուեցին այն բարեպաշտ թագաւորին քաղցր յիշատակը որ Յուդայի թագաւորութեան վերջին փառքը եղաւ և որ իրեն հետ ալ վերջացաւ. Յաջորդեց կրտսեր որդին Յովաքազ (Սեղղում).

4. Յովաքազ իր հօրը չհետեւեցաւ և Տէրոջը առջեւ շիտակութիւն չըրաւ. իր թագաւորութեան երրորդ ամիսը Եգիպտացւոց Նեքաւով թագաւորը եկաւ զինքը բռնեց Եգիպտոս տարաւ, ուր անդ ալ մեռաւ, և երկրին վերայ տուրք ալ դնելով՝ անոր մեծ եղբայրը Եղիակիմը թագաւոր դրաւ, և անունն ալ փոխելով Յովակիմ կոչեց.

5. Եղիակիմ ալ Տէրոջը առջեւ շիտակութիւն չըրաւ եղբօրմէն աւելի. և ուզեց մեռցընել նաև Երեմիա մարգարէն որ զինքը կը խրատէր. Այն միջոցներուն էր որ Ասորեստանեայց տէրութիւնը և անոնց Նինուէ մայրաքաղաքը կործանեցաւ Մարաց և Քաղդէացւոց ձեռօք. և սկսան զօրանալ Քաղդէացիք որք Բաբելոնի մէջ իշխեցին, ուստի և Բաբելացիք ալ կոչուեցան. Ան եղաւ որ Բաբելացւոց երկրորդ թագաւոր Նաբուգոդոնոսոր Եգիպտացւոց Նեքաւով թագաւորին յաղթելով Երուսաղէմի վերայ ալ եկաւ. Ան Յովակիմ թագաւորը կապելով Բաբելոն գերի տարաւ, և քիչ մը ատենէն թող տը-

եւ զանիկայ վերան ծանր տուրք դնելով։ Բայց Յովակիմ իւր դառնալէն երեք տարի ետքը Բաբելացւոցմէ ապստամբեցաւ . յայնժամ Նաբուգոդոնոսոր շատ զօրք ղրկեց Յուդայի երկրին վերայ որոնք եկան շատ աւերումներ ըրին . և Յովակիմ թագաւորն ալ սպաննեցին տասն ումէկ տարի թագաւորելէ ետքը։ Յաջորդեց որդին Յեքոնիա (Յովաքին)։

6 . Նոյնպէս ալ չարութեան հետեւեցաւ . իւր թագաւորութեան երրորդ ամիսը Նաբուգոդոնոսոր դարձեալ Երուսաղէմի վերայ եկաւ ու պաշարեց ։ Այն ատեն Յեքոնիա իւր ընտանեօքը անոր ներկայացաւ և իւր հնազանդութիւնը ցուցուց ։ Նաբուգոդոնոսոր ալ թէ Յեքոնիա թագաւորը և անոր ընտանիքը և թէ ուրիշ երեւելի և յաջողակ ու ճարտար մարդիկ տասը հազար հոգիի չափ Բաբելոն ղրկեց , և տաճարին ու թագաւորական տանը գանձերն ալ առնելով անոր հօրեղբայրը Մաթանիան թագաւոր դրաւ և անունը Սեդեկիա կոչեց ։

7 . Սեդեկիա ալ իւր իշխաններուն հանդերձ Տէրոջը առջեւ չարութիւն ըրին առանց ունկնդրութիւն ընելու Երեմիայի ազդարարութեանցը և առանց խրատուելու եղած պատիժներէն ։ Սեդեկիա Եգիպտացւոց օգնութեանը ապաւինելով Նաբուգոդոնոսորէն ապստամբեցաւ իւր ըրած երդմանը դէմ ։ Ասոր և Նաբուգոդոնոսոր նախ Եգիպտացւոց յաղթելով յետոյ Յուդայի երկրին վերայ եկաւ Սեդեկիայի

թագաւորութեան ինններորդ տարին, և իր Նաբուզարդան դահճապետին ձեռօք Երուսաղէմի պաշարել տուաւ։ Այն ատեն քաղաքին մէջ սով լինալով, պարիսպին ալ մէկ կողմի կործանեցաւ և տասն ու թն ամիս պաշարմանէ ետքը Բաբելացիք մտան Երուսաղէմ, ու Սեդեկիան ալ փախչելու ատեն բռնեցին ու Նաբուգոդոնոսորի տարին՝ որ Երիքովի մօտերը կը կենար, ուր որ անոր աչքին առջևը անոր որդիքը սըպաննել տալով աչուըներն ալ կուրացուց, ու Բաբելոն ղրկեց որ հոն տեղ մեռաւ։ Նաբուզարդան՝ Սարայիա քահանայապետը նաև ուրիշ դըրապետներ և երևելի մարդիկ ալ Նաբուգոդոնոսորի ղրկեց, որ զանոնք մեռցնել տուաւ։ Ալ ինչ Նաբուզարդան Տէրոջը տաճարին սըպասները և անօթները և բոլոր քաղքին մէջ եղած ծանրագին բաները առնելով՝ ժողովուրդին մեծ մասն ալ գերի ղրկեց ՚ի Բաբելոն, և տաճարը ու բոլոր քաղաքը այրեց ու պարիսպներն ալ քանդեց. և երկրին մէջ միայն աղքատ մարդիկներէն թողուց որ երկրագործութիւն ընեն և անոնց վերայ Երեմիա մարգարէի ազգականներէն Գոթողիա անուն մէկը կուսակալ դրաւ Մասփայի մէջ. Իսկ Նաբուգոդոնոսոր իր գանձատան մէջ պահել տուաւ տաճարին սրբազան անօթները։ Այսպէս կործանեցաւ նաև Յուդայի թագաւորութիւնը (3412). որուն պատճառ եղաւ իրենց ամբարշտութիւնը և կռապաշտութիւնը և ներքին երկպառակութիւնք,

դաւաճանութիւնք և ստութիւնք, որուն զու-
գընթաց եղան շատ անգամ. և ինչպէս որ Աս-
տուած երբեմն հին ատեներուն Քանանացի ազ-
գերը իրենց ձեռքը մատնեց անոնց չարութեան-
ցը համար, հիմա ալ զիրենք մատնեց իրենց թըշ-
նամեաց ձեռքը, իրենց ալ այն Քանանացւոց պէս
չարութիւն ընելուն համար ։

8. Իսկ Երեմիա մարգարէ իր կամքը և Նաբուգոդոնոսորի թոյլտուութեամբը Գոթողիայի քով մնաց, ուր ժողովեցան նաև ոչ սակաւ երևելի մարդիկ փախստականներէն . այս եօթն ամիս խաղաղութեամբ կառավարեց Գոթողիա ։ Այլ Յուդայի թագաւորական ցեղէն Նաթանեան Իսմայէլ անուն մէկը դաւաճանութեամբ սպաննեց զԳոթողիան և Ամմոնացւոց երկիրը փախաւ . իսկ մնացեալ մեծերը վախնալով թէ Նաբուգոդոնոսոր իրենցմէ կը կարծէ այս դաւաճանութիւնը , թէև Երեմիա իրենց միտ կուտայր որ չվախնան , բայց անոնք Գոթողիայի բարեկամ Կարենեան Յովնաթանին գլխաւորութեամբը բռնակալն ալ ժողովուրդ իրենց հետ միաբանելով Եգիպտոս գացին , որոնց հետ երթալ ստիպուեցան նաև Երեմիա և Բարուք ։

# ԳԼՈՒԽ ԺԹ.

## ՅՈՒԴԻԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

1. Հողեփեռնէս Հրէաստանի վերայ կուգայ. 2. Հրէայք դէմ կը կենան անոր. 3. Յուդիթ. 4. Անոր հնարքը. 5. Հողեփեռնէսին սպաննուիլը. 6. Հրէից ըրած յաղթութիւնը.
(Յուդիթ Ա—ԺԶ.)

1. Մանասէի գերի գնացած ատենն երբ հաւանականաբար Իսրայելացիք սկսեր էին զղջալով ուղղուիլ. և կամ Մանասէի դառնալէն ետքը պատահած է Յուդիթի դէպքը.

Ասորեստանեայց Թագաւորը Նաբուգոդոնոսոր (Սարդան) Մարաց Արփաքսադ Թագաւորին յաղթելէ ետքը, իր Հողեփեռնէս զօրապետին շատ զօրք տալով հրաման ըրաւ որ երթայ բոլոր շրջակայ ազգերը հնազանդեցնէ, և դէմ կեցողները ջնջէ. Հողեփեռնէս ալ շատ երկիրներու տիրելով և աւերելով եկաւ մինչև Հրէաստանի սահմանները հասաւ. Հրէայք երբ իմացան անոր գալը, մեծ վախի մէջ ինկան. մանաւանդ երբ լսեցին որ նուաճեալ ազգերուն կրօնական պաշտամունքն խափանել կուտայ Հողեփեռնէս, ուստի որոշեցին որ անձնատուր չըլլան ու Յովակիմ (Եղիակիմ) մեծ քահանայի առաջնորդութեամբ մէկ կողմէն սահմանագլուխներու բերդերը և լեռանց կիրճերը ամրացնելով, միւս կողմէն ալ պահօք և աղօթիւք Աստուծոյ դիմեցին որ իրենց օգնէ.

2. Հողեփեռնէս երբ լսեց Հրէից պատրաստութիւնը, խիստ բարկացաւ, ու Հարիւրքամն

հազար հետեւակ և քսան երկու հազար ձիա-
ւոր զօրք եկաւ ու Բեդիղուա քաղաքին դի-
մացը բանակեցաւ, որ ամուր քաղաք մըն էր Զա-
բուղոնի ցեղին մէջ. Իսկ սկսաւ Հողեփեռնէս
խորհուրդ հարցընել թէ՝ արդեօք Իսրայէլա-
ցիք որու ապաւինելով կը համարձակին դէմ
կենալ իրեն. Ան ատեն Ամմոնացւոց իշխանը
Աքիոր սկսաւ պատմել, թէ ինչպէս զօրաւոր է
անոնց Աստուածը և զանոնք միշտ կը պաշտպա-
նէ քանի որ անոր օրէնքները կը պահեն. հետե-
ւաբար պէտք է ըսաւ սպասել որ իրենց Աս-
տուածոյն դէմ մեղանչեն, և այն ատեն կարելի է
անոնց յաղթել. Զայս որ լսեց Հողեփեռնէս,
բարկացաւ Աքիորի վրայ, թէ ինչպէս թա-
գաւորին զօրութիւնը առ ոչինչ համարեց և Իս-
րայէլացւոց ջատագովութիւն ըրաւ. ուստի հը-
րամայեց որ Աքիորը կապեցին և տարին Բեդի-
ղուայի բերդին ներքեւ ձգեցին, որպէս զի Բե-
դիղուան ալ ատեն պատժուի Հրէից հետ՝
որոց համար կողմնակցութիւն ըրեր էր. Բե-
դիղուայի պահապանները առնելով Աքիորի
հոն անկ ձգուիլը, զանիկայ բերդին մէջ տարին.
և անիկայ պատմեց անոնց Հողեփեռնէսի միտ-
քը և դիտքը հոն ձգելու տալուն պատճառը. ասոր
վրայ Բեդիղուացիք սկսան և առաւել պաղա-
տել Աստուծոյ որ խորտակէ Հողեփեռնէսի ամ-
բարտաւանութիւնը. Իսկ անիկայ եկաւ ու
Բեդիղուայի բերդը բոլորովին պաշարելով՝
ջուրի ճամբաները ալ գոցեց. Իսկ այսպէս են-

տասնուչորս օր որ անցեց՝ Նեգրիդուացիք սկսան յուսահատիլ, և որոշեցին որ եթէ հինգ օր ալ օգնութիւն մը չհասնի իրենց, քաղաքը յանձնեն.

3. Այն ատենները այս Նեգրիդուա քաղաքին մէջ մեծատուն, խիստ գեղեցիկ ու պարկեշտ կին մը կար Յուդիթ անուն, որ էրկանը մեռնելէն վերջը կարգուիլ չուզելով իր տանը մէջ առանձնացած էր ու սրբութեամբ կ'ապրէր: Ասիկա երբոր լսեց քաղաքը յանձնելու համար եղած որոշումը, իր մօտ կանչեց տեղւոյն իշխանները, և կշտամբելով անոնց յուսահատութիւնը, յորդորեց որ Աստուծոյ ողորմութեանը ապաւինին. և իրեն համար ալ աղօթք ընեն որպէս զի իրենց ազատութեանը համար իր ընելիքը Աստուած յաջողէ: Այսպէս զանոնք տեղերնին ղրկելով՝ ինքն Յուդիթ երեսի վերայ ինկած Աստուծոյ առջև, սկսաւ ջերմեռանդ սրտիւ պաղատիլ՝ որ ողորմի իր ժողովրդեանը և զօրութիւն տայ իրեն Հոլոփեռնէսը կործանելու համար: Աղօթքը ընելէն վերջ Յուդիթ իր ծառային զգեստնեքով, զարդերով և անուշահոտ իւղերով պէտք եղածին պէս զարդարեց ինքզինքը և մախաղի մը մէջ կերակուր դնելով իր աղախնոյն տուաւ և անոր հետ մեկնեցաւ Նեգրիդուայէն դուրս ելաւ գնաց 'ի Ասուրոց բանակը, իր հետ ունենալով անզգալի ջերմ բարեպաշտութիւնները:

4. Յուդիթ Ասորւոց բանակին մօտեցած
ատեն պահապան զօրքերը զանիկայ տեսնելով՝
զարմացան այնպիսի կնոջ մը միայնակ հանդէ-
սանքը գտնուելուն վրայ, և զանիկայ Հողե-
փեռնէսի վրանը տարին։ Հողեփեռնէս երբ
տեսաւ Յուդիթի գեղեցկութիւնը՝ յիմարե-
ցաւ, այնպէս սկսաւ հարցունել անոր ով ըլլա-
լը և ուսկից գալը։ Յուդիթ ալ փայլուն խօս-
քերով պատասխանեց թէ. «Տէր իմ, տես որ
Աստուած բարկացեր է մեր ազգին և քու ձեռ-
քովդ պիտի պատժուին, ուստի փախայ ու ե-
կայ որ քեզի առաջնորդ ըլլամ. այսչափ եմ աստ-
ւածապաշտ ըլլալով կը խնդրեմ որ հրաման ընես
գիշերները իմ աղօթքիս համար բանակէն դուրս
ելլեմ աղօթքս ընեմ ու դառնամ. և ասով իմ
Աստուծմէս իմանալով անոնց պատժուելուն ա-
տենը, քեզի կ'իմացընեմ և քու զօրքէդ առանց
մէկը մեռնելու մինչև Երուսաղէմ կը տանիմ
զքեզ»։ Հողեփեռնէս և իր խորհրդական-
ները հաւանեցան Յուդիթի խօսքերուն, մա-
նաւանդ որ անոր գեղեցկութենէն ալ յիմա-
րացեր էին. ուստի Հողեփեռնէս հրամայեց որ
անոր պատուաւոր տեղ մը և աղէկ կերակուր
ու գինի տրուի, բայց Յուդիթ յայտնեց թէ՝
ինք չկրնալով իրենց կերակուրը ուտել, իր հետ
քանի մը աւուր կերակուր բերած է. «Վասն զի
անշուշտ պիտի կատարուի, ըսաւ, իմ բանձներս
այս քանի մը աւուր մէջ»։ Այսպէս երեք օր

մնաց Յուդիթ հոն տեղ. և բանակին պահապաններն ալ իրենց տուած հրամանին համեմատ կը թողէին զինքը որ գիշերները իւր աղախնոյն հետ բանակէն դուրս կ'ելլէր կ'աղօթէր ու կը դառնար :

8. Այսպէս Հողեփեռնէս Յուդիթը տեսած օրէն 'ի վեր կը ցանկար անոր հետ ըլլալ. ուստի անոր գաղտուկան չորրորդ գիշերը մեծ հացկերոյթ մը տուաւ և Յուդիթն ալ հրաւիրեց, որ եկաւ ու անոր սեղանակից եղաւ. բայց ինքը իւր բերածներէն կ'ուտէր. Այս խնճոյքին ներկայ եղող անձինքը մանաւանդ Հողեփեռնէս Յուդիթի գեղովը մոլեալ այնչափ չափազանց գինի խմեց. որ երբ ամէնքը իրենց տեղը երթալով միայն Յուդիթն ու ինք մնացին. թմբրած ինկաւ և խոր քունի մէջ մտաւ. Այն ատեն Յուդիթ տեսնելով որ ժամանակն եկած է, գնաց անոր սուրը հանեց և Աստուած օգնութեան կանչելով կտրեց անոր գլուխը և բերաւ իր աղախնոյն տուաւ որ մախաղին մէջ դնէ, և այնպէս գիշեր ատեն բանակէն դուրս ելան առ իրենց ապահովութեան և ճամբան շարունակելով Բեթուղիայի բերդին ներքև հասան, և պահապաններուն ձայն տալով՝ դուռը բացին և ներս մտան. Հոն տեղ երբ բոլոր քաղաքացիք հետաքրքրութեամբ ժողուած էին իմանալու անոնց ըրածը. Յուդիթ ցուցուց Հողեփեռնէսի գլուխը. ուստի ամէնքը փառք տալով Աստուծոյ՝ սկսան գովել Յուդիթի քաջու-

թիւնը և անձնատուութիւնը. և Ամմոնացի Աքիորին ալ տեսնելով այս բանը զարմացաւ Աստուծոյ ողորմութեանը վերայ, և ինքն ալ աստուածապաշտ եղաւ.

6. Առտուն Բեթուլիացիք Հողոփեռնէսի գլուխը բերդին վերայ կախելով Ասորւոց բանակին վերայ սկսան յարձակիլ, ըստ խրատուն Յուդիթի. Ասորիք զայս տեսնելով շուտ մը գացին Հողոփեռնէսի ձայն տալու. և երբ տեսան որ ձայն չկայ. անոր դուռը բացին և ներս մտան և աչաց առաջ մնացին երբ Հողոփեռնէսի գլուխը կտրած տեսան. և այս խայտառակութենէն այնպէս շփոթեցան և երկիւղ մը ինկաւ իրենց վերայ, որ ամէն ունեցածնին հոն թողլով սկսան փախչիլ Իսրայէլացւոց առջևէն. Իսրայէլացիք ալ, նաև ուրիշ տեղերէ ալ գալով ետևնուն ինկան և շատ մարդ ջարդեցին. և այնչափ աւար առին՝ որուն բաժնելը երեսուն օր տևեց. Հողոփեռնէսի ծառաները վրանը բոլոր զարդերովը մէկտեղ Յուդիթի տուին որ անիկայ ալ Երուսաղէմի տաճարին նուիրեց. Յուդիթ այս յաղթութիւնը Աստուծոյ ողորմութեան բերելը խոստովանելով գեղեցիկ օրհնութիւն մըն ալ երգեց. Ամէն կողմէն շատ ազգ և կին կու գային ի շնորհակալութիւն Յուդիթի. մինչև անգամ Յովակիմ մեծ քահանայն ալ Երուսաղէմէն եկաւ և օրհնեց զինքը. Աս երեք ամիս մը այսպէս անցընելով դարձեալ առանձնացաւ Յուդիթ և բարի վարքով

ապրեցաւ հարիւր հինգ տարի ու մեռաւ, և երկանը Սամուէլի գերեզմանը թաղուեցաւ.

## ԳԼՈՒԽ Ի.

## ՏՈՎԲԻԹԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

1. Տովբիթի ազգասիրութիւնները. 2. Անոր աղքատանալը և կուրանալը. 3. Իր որդւոյն Տուբիայի ճամբորդութիւնը Հրեշտակին առաջնորդութեամբ. 4. Տուբիայի հարսանիքը. 5. Վերադարձը, և իր հօրը աչաց բժշկութիւնը, և այլն.
(Տովբ. Ա—ԺԴ.)

1. Սաղմանասարի Իսրայէլացւոց թագաւորութիւնը կործանելու ատեն տարած գերիներուն մէջ Նեփթաղիմի ցեղէն Տովբիթ անուն բարեպաշտ մէկը կար, և իրեն պէս բարեպաշտ Աննա անուն կին մը և Տուբիա անուն որդի մը ունէր. Անիկայ որ յառաջ նոյնպէս և Նինուէ գերի երթալէն ետքն ալ աստուածպաշտութիւնը ձեռքէ չթողուց և հօն ալ իր թշուառ ազգայնոցը շատ օգնութիւններ կ'ընէր. Աստուած ալ զանիկայ օրհնեց, որ Սաղմանասար թագաւորը զինքը սիրելով իրեն վաճառականն ըրաւ. Բայց Սաղմանասարէն ետքը Սենեքերիմը թագաւորելով երբոր Երուսաղէմի պատերազմէն պարտութեամբ ետ դարձաւ, սկսաւ իր երկիրը եղող Իսրայէլացւոց հետ սաստիկ թշնամանօք վարուիլ, և անոնցմէ շատ մարդիկ զուր տեղը սպաննել տալով՝ զանոնք թաղելու ալ չէր թողուր. բայց Տովբիթ գիշեր ատեն գաղտնի կը թաղէր. Զայս որ լսեց Սենեքերիմ թագաւորը

ուզեց Տոբիթն ալ սպաննել, ասոր վրայ Տոբիթ փախաւ և իրեն բոլոր ունեցածը յարքունիս գրաւուեցաւ. Սակայն երբ Սենեքերիմ թագաւորը սպաննուեցաւ, վերստին դարձաւ ՚ի Նինուէ և իւր մարդասիրութիւնները շարունակել սկսաւ.

2. Եւ եղաւ որ տօնի մը օր երբ իւր տունը բազմախորտիկ սեղան մը պատրաստուած էր, յիշելով Տոբիթ իւր կարօտեալ ազգայինքը, միտքը չդիմացաւ ղրկեց իւր որդին Տուբիան որ Իսրայէլացւոցմէ աղքատ և կարօտեալ մէկը բերէ զանէ հոն սեղանը՝ սեղանի կանչէ. Տղան գնաց ու շուտ մը դարձաւ և պատմեց թէ Իսրայէլացի մը սպաննուած ու փողոցը ձգուած է. Զայս որ լսեց Տոբիթ կերակուրը թողլով գնաց մեռելը տուն բերաւ ու գիշեր ատեն գաղտուկ թաղեց. բայց ըստ օրինաց պիղծ սեպուելով՝ տուն չմտաւ, հապա դուրսը պատին տակ կանդրկի վերայ պառկեցաւ. և երբ բաց աչքը կը նայէր պառկած ատեն. վերէն ծիծեռնակները ծրտեցին անոր աչքերուն մէջ երթալով կուրցաւ. Այս դժբաղդութեան վերայ աղքատութիւնն ալ աւելնալով սաստիկ վիճակի մը հասաւ Տոբիթ որ միայն իւր կնոջը ձեռքը կը նայէր, որ մանած ընելով իրենց պէտքը կը հոգայր աղքատօրէն.

3. Սակայն Տոբիթ եղբայրսիրութեան առթիւ իրեն հանդիպած այն դժբաղդութեանց համբերութեամբ տանելով միշտ փառք կուտար

Աստուծոյ. և իր յոյսը բոլորովին Աստուծոյ վրայ դրած ըլլալով, եթէ անօթի ալ մեռնելու ըլլար՝ չէր ուզեր անիրաւութիւն մը յանձն առնուլ ապրուստի համար. այս պատճառաւ երբ օր մը մնացած գնողները ուլ մը պարգեւտուած էին Աննային. Տովբիթ կասկածելով որ անիրաւութեամբ բերուած ըլլայ այն, սկսաւ վիճել կնոջը հետ որ ետ տայ զանիկայ. անանկ որ կինը ցաւելով սկսաւ ըսել թէ «Ո՞ւր մնաց քու ողորմութիւններդ. քանի որ այս վիճակին ընկանք»: Այն ատեն Տովբիթի սիրտը եկելով ըսկսաւ խնդրել Աստուծմէ որ իր ազգին մեղացը թողութիւն տայ և իր հոգին ալ առնէ. ուստի կանչեց իր որդին Տուբիան. և անոր շատ մը բարի խրատներ աւանդելէ ետքը. յիշեց նաև այն տասն քանքար արծաթը որ Մարատանի Ռագիւս քաղաքը Գաբայել անուն մէկուն փոխ տուած էր ատենօք. և անոր մուրհակին ալ յանձնելով պատուիրեց որդւոյն որ երթայ առնէ. Իսկ Տուբիա որ չէր կրնար առանձին այս ճանապարհորդութիւնն ընել, գնաց ճանապարհի ընկեր մը գտնելու. և անմիջապէս Աստուծոյ հրամանէ դէմը ելաւ Ռափայէլ հրեշտակը երիտասարդի մը կերպարանօք. և Տուբիա անոր առաջարկեց որ իրեն ընկեր ըլլայ. առատուն բերաւ իր հօրը քով. Ռափայէլ հրեշտակը յայտնեց թէ ինքը Տովբիթի բարեկամին մեծին Անանիայի որդին Ազարիան է. Տովբիթ ալ ուրախացաւ և փոքրն ալ օրհնելով յանձնեց ա-

նոր իւր որդին և ձանձրոյ դրան. գտանենք օրհ-նութեանցը .

4. Մինչ ձանձրապատճին Տիգրիս գետոյն քով հասան հոն քիչ մը հանգչեցան. Տուբիա ալ գետ-եզրը գնաց որ լուացուի. և ահա յանկարծ մեծ ձուկ մը իւր վրայ վազեց. և հրեշտակն պա-տուէր որ չվախնայ բռնել զանիկայ դուրս հանել. Այսպէս նոյն ձուկը հանելով եփեցին ու կերան, իսկ սիրտը, լեարդն ու լեղին պահեց Տուբիա ըստ խրատու հրեշտակին. Մեկնելով երբ Եկբատան քաղաքն Մարաց երկիրը հասան. հրե-շտակն ըսաւ Տուբիայի թէ «Հարկ է որ այս գիշեր հոն անեղ մեր ազգականին Ռագուէլի տունը երթանք. և անոր մէկ աղջիկը կնու-թեան առնես»: Տուբիա ալ «Ես կը վախնամ ըսաւ, ինչու որ լսեր եմ թէ եօթն հոգի զանի-կայ առնել ուզեր են և հարսանեաց գիշերը գե-մը զանոնք մեռուցեր է»: Իսկ հրեշտակը սիրտ տուաւ անոր որ չվախնայ և պատուիրեց թէ ինչպէս հարսանեաց առաջին գիշերը հարսին հետ միասին աղօթք ընեն Աստուծոյ. և նոյն ձկան լեարդն ու սիրտը կրակի վրայ ծխեն որով դեւը կը փախչի ըսաւ: Տուբիա հնազանդեցաւ հրեշտակին և գնացին Ռագուէլի տունը որ սիրով ընդունեցին զիրենք. [illegible] հրեշտակը խօսք բացաւ անոնց աղջկանը վրայով, անոնք ալ ուրախութեամբ ընդունեցին. և հարսանեաց առաջին գիշերը Տուբիա հրեշտակին պատուէրը 'ի գործ դնելով միաբան աղօթեցաւ, ուստի ա-

մէկին ալ զԱստուած փառաւորեցին և հարսա-նեաց ուրախութիւնը երկու շաբաթ շարունա-կեցին։ Եւ նոյն օրերը Հրեշտակը գնաց Գաբա-յէլի քով եղած ստակն ալ բերաւ, որուն հա-մար ճամբայ ելած էին. և Տուբիայի ու ա-նոր կնոջը Սառայի հետ ճամբայ ելան Նինուէ գալու, ուր կեցող Տովբիթ և իր կինը ամեն ի ճա-նապարհ իրենց կը սպասէին՝ խռովեալ ըլլալով ի-րենց ուշանալուն վրայ։

5. Եւ երբ Նինուէի մօտեցան, Հրեշտակը Տուբիայի հետ քիչ մը յառաջ անցան քան զկինն՝ և տուն հասնելով Տուբիա այն ձկան լեղին իր հօրը աչքերուն քսեց ինչպէս պատուիրած էր Հրեշ-տակը, և ահա անոր աչքերը բացուեցան և ին-քը ու կինը իրենց որդւոյն փարելով սկսան զԱս-տուած օրհնել, և եօթն օր ալ հարսանեաց ու-րախութիւն կատարեցին։ Յայնժամ Տովբիթ իր որդւոյն հետ խորհրդակցելով այն բերած ստակին կէսը այն առաջնորդին տալ կ'ուզէին որ այնչափ մեծ ծառայութիւններ ըրաւ իրենց։ Իսկ անիկայ յորդորելով զիրենք որ զԱստուած օրհնեն միշտ և բարերարութիւնը ձեռքէ չթո-ղուն, յայտնեց թէ ինքն Ռափայէլ Հրեշտակն է որ իրենց ողորմութեանց փոխարէն օգնելու հա-մար Աստուած զինքը ղրկած է. ու անմիջապէս աներևոյթ եղաւ։ Ասոր վրայ Տովբիթ յա-տուկ օրհնութեամբ մը զԱստուած փառաբանեց որուն մէջ մարգարէական խօսքեր ալ կան։ Տով-բիթ քառասուն երկու տարի ևս խաղաղութեամբ

ապրելով․ մեռաւ հարիւր երկու տարեկան։ Իւր մեռնելէն առաջ որդւոյն բարոյական խրատներ տալու տեղն գուշակած էր նաև Նինուէի կործանումը՝ պատուիրելով որ դուրս ելնէ հոնկէ։ Տուբիա իւր մօրը Աննայի մահուանէն յետոյ բոլոր ունեցածը առնելով իւր աներոջը տունը գնաց, և անոնց ալ ունեցածը ժառանգեց, և հարիւր քսան ու եօթն տարի ապրելով մեռաւ, և դեռ չմեռած լսեց Նինուէի կործանումը։

# ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՀՐԷԻՑ ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԵՆԷՆ ՄԻՆՉԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՒ ՏԱՃԱՐԻ ՎԵՐՍՏԻՆ ՇԻՆՈՒԻԼԸ

### ԳԼՈՒԽ Ա.

1. Գերեդարձին խոստումը. 2. Դանիէլ և երեք ընկերքը. 3. Ընդեղէնի պատուականութիւնը. 4. Նաբուգոդոնոսորի երազը զոր Դանիէլ կը մեկնէ. 5. Նաբուգոդոնոսորի շինած արձանը. 6. Երեք մանկունքը հնոցը կը նետուին, և Աստուած զիրենք կը փրկէ. (Երեմ. Եզեկ. Դան. Ա. Բ. Գ. ԺԳ.).

1. Թէպէտ և Երուսաղէմ ու տաճարը քանդուեցաւ և Հրէայք գերի գնացին, սակայն Աստուած ցուցուց իւր մարգարէից միջոցաւ թէ որոշեալ ժամանակէ մը ետքը երբ իրենց մեղաց պատժոյն չափը լնու, գերիները պիտի դառնային ու Երուսաղէմն ու Տաճարը վերստին շինեն և աստուածային պաշտամունքը նորոգեն. այն գերութեան միջոցին տեւողութիւնն ալ եօթանասուն տարի ըլլալը յայտնեց Երեմիա մարգարէի բերնով. (Ե. 12. ԻԹ. 10). Այն եօթանասուն տարւոյ գերութեան մէջ Հրէից եղած անցքերը Դանիէլ մարգարէի գործերն են.

2. Նաբուգոդոնոսոր Յուդայի Յեքոնիա թագաւորն և անոր հետ ուրիշ գերիներ Բաբելոն տարած ատեն, իւր Ասփանէզ իշխանին

հրամայեց որ անոնց երեւելի ընտանիքներէն սրամիտ եւ յաջողակ տղաքներ զատէ եւ Քաղդէական գիտութեան մէջ վարժեցնէ ։ Այս ընտրուած տղայոց մէջն էին նաեւ Դանիէլ եւ իր երեք ընկերքը Անանիա, Ազարիա եւ Միսայէլ, որոց անունները փոխելով Ասփանէզ իշխանը Դանիէլի անունը Բաղտասար եւ միւս երեքինն անուանն ալ Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագով դրաւ ։ Եւ ըստ հրամանի թագաւորին այս ամէն տղայքը թագաւորական սեղանէն ընտիր կերակուրներով պիտի դարմանուէին ։ Բայց Դանիէլ եւ իր ընկերքը հաստատելով մտօք իրենց օրինաց՝ չուզեցին նոյն կերակուրները ուտելով պղծուիլ, ուստի խնդրեցին որ իրենց ընդեղէն պարզ կերակուրներ տային ։ Ասփանէզ թէեւ վախնար որ տալով անոնց առողջութիւնը վտանգի մէջ նետէր, բայց փորձելով տեսաւ որ անոնք այն պարզ կերակուրներով միւսներէն աւելի կայտառ եւ առողջ էին, եւ ընդունեց անոնց խնդրիքը ։ Աստուած ալ ասոնց ամէն իմաստութիւն եւ հանճար պարգեւեց, որ երբ երեք տարիէն թագաւորին ներկայացուցին ասոնց ամենքը, Դանիէլ եւ երեք ընկերքը ամէնէն աւելի գիտուն գտնուեցան նաեւ գեր քան զիմաստունս Բաբելոնացւոց, որով եւ երեւելի պաշտօններու ընտրուեցան ։

3. Դանիէլի հանճարը արդէն սկսած էր երեւիլ անոր տղայութեան ատենէն հետեւեալ դէպքով ։ Այն ատենները Բաբելոնի մէջ Յով-

վակիմ՝ անուն երեւելի մարդ մը կար Հրէից ազգէն որուն տունը կը ժողվուէին շատ անգամ՝ ժողովրդեան ծերերը և դատաւորները իրենց ազգային գործերը տեսնելու համար. վասն զի Հրէայք թէեւ քաղաքական իրաւունքներէ զրկուած էին, այլ անձնական և իրենց ազգային ատեանին գործոցը մէջ ալ որ եղած ազատութիւնը ունէին ։ Այն միջոցներուն ծերերէն երկու հոգի դատաւոր ընտրուած ըլլալով ամէն կու գային անոր Յովակիմի տունը, և անոնք իրենց կռիւները անօրինաւոր մարդիկ ըլլալով սկսան Յովակիմի կնոջը Շուշանին աչք դրին, որ գեղեցիկ և յոյժ պարկեշտ կին մըն էր, և ասոնց առիթի մը կը սպասէին որ զանիկայ հրապուրեն ։ Այս եղաւ որ օր մը Շուշան իր տանը պարտէզը գնաց տաքութեան մէջ լուացուելու. և երբ հոն մինակ առանձնացած էր և ահա այն երկու ծերերը որ պարտէզին մէջ պահուած էին՝ եկան Շուշանայ քովը, և սկսան ստիպել զանիկայ որ զիջում ընէ իրենց. սպառնալով միանգամայն որ եթէ դէմ կենայ՝ զրպարտութեան ենթարկեն իրեն. Թէպէտ և Շուշան անմեղ որ երկու կողմն ալ գէշ է, այսու ամենայնիւ լաւ համարեց զրպարտուիլ և յանձնիլ ի պատժուիլ քան թէ պարկեշտութիւնը կորսնցնել, և մեղանչել. ուստի սկսաւ աղաղակել և օգնութիւն կանչել. աղաղակելուն և երկու ծերերը, ու երբ մարդիկ եկան հասան՝ սկսան Շուշանի վրայ սուտ զրպարտութիւն ընել. Առտու մէկալ օրը

թէ երազին մէջ ըլլալը և թէ անոր մեկնութիւնը կ'ուզէր որ գիտնան ։ Անոնք շատ աշխատեցան այս բանին անհնարութիւնը իրեն ցուցնել, բայց անիկայ փոխանակ համոզուելու բարկացաւ և հրամայեց որ զանոնք ամէնքն ալ սպաննեն ։ Երբ լսեցին այս բանը Դանիէլ և երեք ընկերքը ․ Դանիէլ մէկ օր ժամանակ ուզեց որ թէ՛ երազը և թէ անոր մեկնութիւնը գտնէ ։ Ասոր այն գիշեր ինքը և ընկերքը Աստուծոյ դիմելով աղաչեցին որ այս բանը յայտնէ , և Աստուած ալ հաճելով անուրջքի մէջ յայտնեց Դանիէլի ․ Ու անիկայ առաւօտուն թագաւորին ներկայանալով ըսաւ որ իրեն խնդրածը մարդկային կարողութենէ վեր ըլլալով միայն Աստուծոյ յատուկ շնորհքովը ինքը պիտի պատմէ ․ և սկսաւ նախ երազը պատմել , որ տեսած էր արձան մը , գլուխը ոսկի , կուրծքը և բազուկները արծաթ , մէջքը և ծունկերը պղինձ , սրունքները երկաթ , և ոտքերը երկաթ ու հող ։ Ետքը լեռնէն քար մը բլղաւ առանց ձեռքի , և երկու արձանը կործանեց , ու ինքը մեծնալով բոլոր երկրի տիրեց ։ Ետքը անոր մեկնութիւնն ալ տուաւ , թէ՝ արձանին մասանց այլ և այլ նիւթերուն ոսկին , արծաթին , պղնձին , երկաթին ու խեցիին օրինակաւ կըսէ ետքը չորս պետութիւններ ( այսինքն Բաբել—Ասոր․ Մար—Պարս․ Յոյն—Մակեդ․ և Հռոմ․) պիտի յաջորդեն իրարու , և ամէնէն ետքը ուրիշ զօրաւոր թագաւորութիւն մը առանց ձեռքին կարա

վէմին օրինակաւ զամէնը անոր կործանէ և անոր գրաւէ բոլոր երկիրը։ Զայս որ լսեց Նաբուգոդոնոսոր երեսի վերայ գալով երկրպագութիւն ըրաւ Դանիէլի և խոստովանեցաւ թէ անոր Աստուածն է Ճշմարիտ՝ որ միայն գիտէ ամէն գաղտնիքը. և շատ ընծաներով պատուեց զԴանիէլ և բոլոր իմաստնոց վերայ իշխան դրաւ, և անոր խնդրանօքը անոր երեք ընկերաց ալ մեծամեծ պաշտօններ տուաւ։

5. Ասկէ ետքը Նաբուգոդոնոսոր թագաւորը շատ աշխարհակալութիւններ ընելով, ամէն գացած տեղերէն շատ ճարտար մարդիկ ալ բերաւ ի Բաբելոն. և հոն տեղ շատ տուներ շինել տալով ծաղկեցուցանել է զան, նաև Բէլայ կուռքին ոսկի արձանը շինել տուաւ վաթսուն կանգուն երկայնութեամբ և վեց կանգուն լայնութեամբ, և կանգնեց զանիկայ Բաբելոնի երկիրը Դէերա (Տուրա) դաշտին մէջ։ Իր բոլոր իր մեծամեծքը ու պաշտօնեայքը և շատ ալ ժողովուրդ կոչեց այն արձանին նաւակատեացը համար։ Ու սաստիկ հրաման հանեց որ ամէնքն անոր երկրպագութիւն ընեն և ով որ չընէ՝ նոյն ժամայն կրակի հնոցին մէջ նետուի, որ յառաջուց անոր համար շինուած էր. և այսպէս սկսաւ նաւակատեաց հանդէսը զանազան նուագարաններու ձայներով, և ըստ հրամանի թագաւորին ամէնքն երկրպագեցին նոյն արձանին։

6. Իսկ Դանիէլի երեք ընկերքը, Սեդրաք, Միսաք և Աբեդնագով այս երկրպագութիւնը

շինելնուն համար ամբաստանուեցան Թագաւո-
րին առջեւ, որ զանոնք կանչել տուաւ եւ հար-
ցուց թէ ինչու իր հրամանը չեն կատարեր։
Յայնժամ անոնք համարձակութեամբ ըսին.
«Ով Թագաւոր, այս բանիս համար պատասխա-
նելու հարկ մը չունինք. ահա մեր պաշտած Աս-
տուածը մեզի թէ կրակի հնոցէն եւ թէ քու
ձեռքէդ ազատելու կարող է. ասոր համար ոչ
քու աստուածներդ կը պաշտենք եւ ոչ ալ քու
կանգնած արձանիդ երկրպագութիւն կ'ընենք»։
Այն ատեն Նաբուգոդոնոսոր բարկութեամբ
լեցուեցաւ անոնց վրայ, եւ հրամայեց որ հնո-
ցը եօթնպատիկ աւելի վառեցին, եւ զանոնք ե-
րեքը մէկտեղ հնոցին մէջ նետեցին. յայնժամ
Աստուած հրեշտակ մը ղրկեց որ եկաւ զիրենք
պահպանեց, անոյշ հով մը տալով անոնց շուրջը,
որք ատորէն անվնաս չէին նեղուեր. Իսկ հոն ալ
սկսան Աստուած օրհնել. Օրհնեալ ես Տէր Աստուած
երգով, եւ հնոցին մէջը կը շրջէին. Այս օրհնու-
թեան ձայները լսելով Թագաւորը եկաւ եւ զար-
մանալով տեսաւ, որ փոխանակ երեք հոգիի չորս
հոգի կային հնոցին մէջ. ուստի կանչեց. «Ով
բարձրեալ Աստուծոյ ծառայքը դուրս եկէք»։
Եւ երբ անոնք դուրս եկան, բոլոր ներկայ եղող-
ները զարմացան տեսնելով որ անոնց մէկ մազը
անգամ չէր խանձած. Այն ատեն Նաբուգոդո-
նոսոր զարմանալով այս մեծ հրաշքին վրայ,
օրհնեց անոնց ճշմարիտ Աստուածը, եւ մահուամբ
պատժել որոշեց անոր դէմ խօսողները. Ան

զի չկայ բնաւ ուրիշ Աստուած մը ալ որ կարող ըլլայ այնպէս փրկել։ Նոյն երեք ընկերը աւելի մեծ պաշտօններու բարձրացնելով՝ Աստուծոյ բարձրելոյն այս սքանչելիքն ալ հռչակելու համար հրովարտակ հանեց։

## ԳԼՈՒԽ Բ.

1. Նաբուգոդոնոսորի տեսիլքը. զոր Դանիէլ կը մեկնէ։ 2. Նաբուգոդոնոսորի պատժուիլը։ 3. Անոր մահը. և Բաղդասարի պաշտամունքը։ 4. Բաղդասար թագաւորին երեւցած գիրերը. և Բաղդասարին մահուանը։ 5. Դանիէլ առիւծներուն գուբին անվնաս կ'ազատի։ 6. Բէլայ արձանը և անոր քուրմերը։ 7. Դանիէլ կործանէ Բաբելոնացւոց պաշտած վիշապը. և վերստին առիւծներուն գուբը կը ձգուի ու անվնաս կ'ազատի։ (Դան. Դ. Ե. Զ. ԺԴ.)։

1. Սակայն այս ամէն սքանչելիքը ազդեցութիւն մը չըրին Նաբուգոդոնոսորի վրայ. վասն զի իր գտած յաջողութիւններովը հպարտացած և հաղթապանծ էր. ասոր համար Աստուծոյ պատիժը իր վրայ եկաւ որ նախ տեսիլքով մին ալ յայտնուեցաւ. Երազին մէջ տեսաւ մեծ ու տերեւախիտ ու պտղալից ծառ մը, որուն վրայ բոլոր թռչունները և շուքին ներքեւ բոլոր կենդանիները կ'ապաստանէին և անոր պտուղէն կը կերակրուէին. Սակայն երկինքէն հրեշտակ մը իջնելով ձայն մը կանչեց. թէ «Այդ ծառը կտրեցէք և ճիւղերը ջարդելով պտուղները ցրուեցէք, և կենդանիները փախչին անկէց. բայց արմատին բունը շղթաներով կապած թող մնայ որ բաց տեղ անասնոց հետ խոտերուն մէջ մնայ. ու երկնից ցօղովը թրջուի. և անկէց մարդկային սիրտը փոխուի և անասնոց սիրտ տրուի մին-

չէ․ եւ սրտին մտածմունքն ։ Թագաւորք այս երկ-
րին մեկնութիւնք 'Իտալիային հարցմանց․ եւ երբ
'Իտալիոյ խաղացաւ․ Թագաւորք առնելոց որ
չկարենալոց ու ձեռքը ինչ որ է բան․ Այն ատեն
'Իտալիոյ բառ․ « Ուստր զառն են․ ով Թագաւ-
որ․ եւ քեզ առաջնութեան են մարդիկ․ բայց
Աստուծոյ խորհուրդը անհնարին է որ զառն
սրտին առաջի մարդոց մէջէն փրկութիւն եւ անառ-
նոց փառաւորի մէջ մտաւ․ մինչեւ որ Նախախնամութեան
հաւատութիւնք եւ իմաստութիւնք ձեռնտուս եւ
յայտնած փառքերին պահել հաստատութիւն բա-
Թագաւորութեան մէջ․ ինչպէս որ պահանջ
բանին Թագուհին կ'ունենար․ առանց նորէ․ ով
Թագաւոր․ որ յառ մեզ մէկ առաջնորդութեան
եւ աղաւնութեան բանէ ։

2․ Այնպէս 'Նորագոյն ճանապարհ
[illegible]

և նորէն իւր թագաւորութիւնը իւրն դարձաւ. և այս ամեն պատահածները հրովարտակով հրատարակեց.

3. Նաբուգոդոնոսոր քառասուն երեք տարի թագաւորելէ զկնի մեռաւ, և յաջորդեց իւր որդին Եւիլմարոդաք. որ գթալով մէկէն ըս-բարով Յուդայի Յեքոնիա թագաւորը բանտէն հանեց, ուր կը կենար երեսուն ու եօթն տարիէ ի վեր. և անոր պատիւ տալով ցկեանս ալ ար-քունական աթոռին առանձնեց. Անոր յաջորդեց իւր փեսայր Ներիգլիսար և յետոյ Նաբոնեդա կամ Բաղդասար Նաբուգոդոնոսորի թոռը. Այս միջոցներուս Մարաց Դարեհ (Կիաքսար Բ.) թագաւորը և իւր քեռորդին Կիւրոս Պարսից թագաւորը Բաբելոնացւոց վրայ պատերազմի ելան և յաղթեցին. և Կիւրոս եկաւ Բաբելոնը պաշարեց.

Բաբելոնի այս պաշարման ատեն անոնք գիշեր մը իրենց ամեն տարի սովորական եղած մէկ տօնը կը կատարէին. Այն գիշեր Բաղդասար թագաւորն ալ իւր նախարարացը մեծ կոչունք մը ընելով երբ գինիէն զուարթացաւ, հրամայեց որ Նաբուգոդոնոսորի Երուսաղէմայ տաճարէն առած անօթները բերեն, և անոնցմով սկսան գինի խմել ամեն բազմականքը որք և կանայք. և իրենց կուռքերը օրհնել. Այս վերջին անարգութիւնը չարեաց չափը լեցնելով անոնց նստած սենեակին պատին վրայ աշտանակին լուսոյն դիմացը մարդու մը ձեռք երեւցաւ

ու բան մի գրեց ։ Թագաւորը գրոց թանթը անձամբ ուսանելով երկիւղէն խուսափեցաւ , ուսանողաց և Նարեկեանի բոլոր իմաստուններն կանչել տալու , բայց ոչ որ կարողացաւ կարդալ այն գրուածքը ։ Նա երբ ամենքը շփոթած էին այս բանին վերայ , այն ատեն մայր թագուհին ըսելով հան եկաւ և ըսաւ թագաւորին՝ որ Դանիէլը կանչէ և անիկա կը կարդայ ։ Դանիէլ կանչուեցաւ , և թագաւորը շատ բան խոստացաւ անոր եթէ կարդայ այն գիրը և մեկնէ ։ Իսկ անիկայ բան մի չընդունելով խոստացաւ մեկնել ։ Նախ Նաբուգոդոնոսորի օրինակաւը յիշեցուց իրեն թէ ամբարտաւանութեան հետեւանքն է այսպէս , յաջորդելով մանաւանդ իր այն վերջին ամբարշտութիւնը որ ըրաւ , Ճշմարիտ Աստուածոյ տաճարին սուրբ անօթները պղծութեան գործիք ընելով ։ «Անոր համար , ըսաւ , այն գիրը գրուեցաւ , որ է այս ։ Մանէ ։ Համարած չափեց քու թագաւորութիւնդ ու վերջացուց ։ Թեկէլ ։ կշռելով կշռուեցար ու պակաս գտնուեցար ։ Փարէս ։ բաժնուեցաւ քու թագաւորութիւնդ և տրուեցաւ Մարաց և Պարսից ։ Այս մեկնութեան վրայ թագաւորը շքեղութեամբ զարդարեց զԴանիէլը , և իր թագաւորութեան մէջ երրորդ իշխան անուանեց ։ Նոյն գրին մեկնութիւնը նոյն գիշերը կատարուեցաւ ։ Մարք և Պարսիկք երկու տարի պաշարմանէ յետոյ , նոյն գիշերը Բաբելոնը առին և Բաղդասար թագաւորը սպաննեցին և անոր թագաւո-

րութիւնը Մարաց Դարեհ թագաւորին անցան ․

5․ Այն Դարեհ թագաւորն ալ այնչափ սիրեց զԴանիէլը որ իւր թագաւորութեան հարիւր քսան նահանգաց կուսակալներուն վերայ երեք երէց հրամանատարներուն մէկն ալ զինքը ընտրեց ․ Նաև Դանիէլին վերայ գերազանց հոգի մը բնակիլը մտածելով թագաւորին մտադիր եղած էր ․ Ասոր իշխանները նախանձեցան անոր վերայ ․ սակայն չարախօսելու պատճառ մը չգտնելով յանդգնեցան համոզել զթագաւորը և հրովարտակ մը հանել որ մինչև երեսուն օր միմիայն թագաւորէն խնդրիք ընեն ամեն մարդ , և ով որ ասոր դէմ ընէ առիւծներու գուբը ձգուի ․ Այս ամենը կը յուսային Դանիէլը յանցաւոր ընել ․ վասն զի գիտէին որ անիկա իւր Աստուծոյն խնդրուածք ընելէն չպիտի դադրէր ․ Հրովարտակը կնքուեցաւ , սակայն Դանիէլ իւր սովորութեան համեմատ դէպ ի Երուսաղէմ եղող իւր պատուհանէն կ'աղօթէր ․ Այն ատեն Դանիէլին թշնամիները ամբաստանեցին զանիկայ թագաւորին իբր օրինազանց ․ Դարեհ թագաւորը թէ և կ'ուզէր զանիկայ ազատել , բայց երբ իշխանները օրինաց անեղծութիւնը պատճառ բերին , ստիպուեցաւ վճռել և Դանիէլը առիւծներուն գուբը ձգուեցաւ ․ բայց իւր մատանեաւն ալ կնքեց գուբին բերանը որ Դանիէլին վերայէն բան մը չի փոխուի ․ Ու այն գիշեր թագաւորին ոչ քունը տարաւ և ոչ ալ բանի մը կերաւ տրտմութենէն , և առաւօտուն

կանուխ գուբին քով երթալով՝ տրտում ձայնիւ մը Դանիէլը կանչեց. և երբ անոր ձայնը առնելով խնդաց, որ Դանիէլ Աստուծոյ օգնութեամբը ողջ մնացեր է, շուտ մը զանիկա հանել տուաւ. և անոր տեղը անոր թշնամիները հոն ձգել տուաւ, որք անմիջապէս գիշատուեցան առիւծներէն. և Դարեհ թագաւորը հրովարտակ հանեց որ ամէնքն ալ վախնան Դանիէլի Աստուծմէն՝ որ կայ և մնայ յաւիտեան.

6. Դանիէլ ուրիշ նշանաւոր գործեր ալ ըրաւ. Բաբելացիք իրենց պաշտած Բէլայ արձանին առջև գիշեր ցերեկ կերակուր և ըմպելի կը դնէին, զոր քուրմերը իրենք ուտելով գաղտնաբար՝ այնպէս հաւատացուցած էին թէ Բէլը ինքը կ'ուտէ զանոնք. Դանիէլ խնդալով այս բանին առթիւնը, և ապացուցանելու համար որ մի ամփոփական կերակուրը հոն տարուելէ յետոյ թագաւորին հետ անոր մեհեանը գացին և Դանիէլ տեղւոյն յատակը մոխիր ցանել տուաւ. Քուրմերը որ այս բանը չէին գիտեր. եկան գողցան այն գիշեր և կերակուրները առին. Առաւօտուն թագաւորը Դանիէլին հետ մեհեանին դուռը գոցած տեսան որ կնիքը անեղծ կեցած է. բայց երբ ներս մտան և մոխիրին վըրայ մարդու ոտից հետքերը տեսան, փնտռեցին ու գտան նաև այն գաղտնի ճամբան ուրկէ քուրմերը կու գային. Շատ բարկացաւ թագաւորը քուրմերուն այս խաբէութեան վրայ և անոնց ամէնքն ալ մեռցնել տալով կուռքին

արձանը և մեհեանն ալ կործանեց Դանիէլի ձեռօք ։

7 · Դարձեալ Բաբելոնցիք հսկայ վիշապ մին ալ կը պաշտէին · Դանիէլ ուզելով ցուցնել անոր ալ ունայնութիւնը · անմարսելի բան մը կերցնելով մեռցուց զանիկայ · Այսկայն Բաբելոնցիք այս բանին վերայ շատ նեղելով թագաւորին դէմ, գացին Դանիէլը բռնի յափշտակեցին և զանիկայ գուբի մը մէջ ձգեցին, ուր եօթն հատ անօթի առիւծներ կային · բայց Աստուած պահեց զԴանիէլ ոչ միայն առիւծներէն՝ այլ և անօթութենէ ալ՝ Ամբակում մարգարէի միջոցաւ պատրաստեր կերակրելով զանիկայ · Դանիէլ եօթն օր հոն անց մնալէ յետոյ թագաւորը գուբը գնաց և տեսնելով որ անիկայ դարձեալ անվնաս մնացեր է · սկսաւ "Մեծ ես Տէր Աստուած Դանիէլի" կանչել · և անմիջապէս զանիկայ հանել տալով · անոր թշնամիները հոն ձգել տուաւ · որք նոյն ժամայն գիշատեցան գազաններէն ։

## ԳԼՈՒԽ Գ ·

1 · Դանիէլի տեսիլքները · 2 · Մեսիայի գալու ատենը կիմանայ հրեշտակէն · 3 · Կիւրոսի թագաւորելը և Դանիէլի մահը · 4 · Կիւրոսի հրովարտակը · 5 · Գերեդարձ և տաճարին հիմնարկութիւնը · ու արգելումը · 6 · Զօրաբաբել Դարեհէն հրաման կ'առնէ շինութեան · 7 · Տաճարին լրանալը · (Դան · Է—ԺԲ · Բ · Եզր · Ա—Զ · Ա · Եզր · Բ—Է ·)

1 · Այսպէս Դանիէլ միշտ սիրելի եղաւ Բաբելոնացւոց և Մարաց ու Պարսից թագաւորներուն. և Աստուած անոր տեսիլքները մեկնե-

րու շնորհք տալէ զատ նաեւ ապագայից մէջ ըլ-
լալիք բաները ցուցուց անոր յառաջուց տեսիլքնե-
րով. ինչպէս անգամ՝ մի չորս գազաններու օ-
րինակաւ տեսաւ Բաբելոնացւոց Ասորեստանեայց
Մարաց, Պարսից, Մակեդոնացւոց, Յունաց, և
Հռովմայեցւոց չորս թագաւորութիւնները և անոնց
յաջորդները. Նմանապէս տեսաւ նաեւ զ-
Հինաւուրցն (զԱստուած ՚ի կերպարանս ծերոյ)
նստեալ ՚ի բոցեղէն կառս, որուն առաջէն հրե-
ղէն գետ մի կ՚ելլէր և որուն կը ծառայէին հա-
զարաւորք և բիւրաւորք (Հրեշտակք). տեսաւ
և Որդւոյ մարդոյ (Մեսիայի) յաւիտենական
թագաւորութիւնն ու փառքը. Երբեմն անգամ՝
մին ալ խոյի և քօշի օրինակաւ տեսաւ Մեծին
Աղեքսանդրու և անոր յաջորդ չորս թագաւո-
րութիւնները. և Գաբրիէլ հրեշտակի միջոցաւ
իմացաւ անոնց պատերազմները և նոյն միջոցնե-
րուն Հրէից կրելիք հալածանքները. և ասոնցմէ
զատ շատ տեսիլքներ ալ տեսաւ.

2. Ասոնցմէ ամէնէն նշանաւոր յայտնութիւ-
նըն որ եղաւ Դանիէլի եօթանասուն շաբաթնե-
րուն յայտնութիւնն է. Ասոր մէջ երբ Դանիէլ
աղօթք և ծոմապահութեամբ կ՚աղաչէր Աս-
տուծոյ Երեմիայի բերնով խոստացած գերե-
դարձը և Երուսաղէմ ու Տաճարը շինէ և ողոր-
մի իւր ժողովրդեան. յանկարծ Գաբրիէլ հրեշ-
տակն երեւելով անոր յայտնեց Աստուծոյ պատ-
գամը թէ ոչ միայն Երեմիայի ըսած գերեդար-
ձը պիտի կատարուի, այլ և Երուսաղէմ և Տա-

Տաճարի վերաշինութենէն եօթանասուն եօթ-նեակ. այսինքն չորս հարիւր իննսուն տարի ետքը ծնանի. բոլոր մարդկային ազգը սիրով փրկող Օծելոյն (Քրիստոսի).

3. Դարեհ թագաւորը Բաբելոնի առնու-մէն երկու տարի ետքը վախճանելով Բաբելո-նի գահն ալ Պարսից Կիւրոս թագաւորին ան-ցաւ որ եղաւ միահեծան թագաւոր Մարաց եւ Պարսից միացեալ թագաւորութեան. Դանիէլ այն Կիւրոս թագաւորին ալ սիրելի եղաւ եւ իւր իշխանական պաշտօնը վարեց. Նոյն տարի թա-գաւորութեան սկիզբները մեռաւ Դանիէլ իւր ութսուն տարեկան. Դանիէլ որ քանի մը մեծ թագաւորաց արքունեաց մէջ այնչափ տարեն մեծ իշխանութիւն վարեց, միշտ անարատ եւ անա-րատ մնաց. Աստուած իսկ Այր ցանկալի կոչեց զա-նիկայ հրեշտակին բերնով (Դան. Ժ. 11. 18.) եւ Եզեկիէլ մարգարէի միջոցաւ Նոյի եւ Յոբայ հա-ւասարեց (Եզեկ. ԺԴ. 14. 18. 30).

4. Աս եղաւ որ երբ Երեմիայի միջոցաւ ա-ռաջեալ ժամանակը եկաւ, Աստուած իւրն գոր-ծիք առնելով Պարսից Կիւրոս թագաւորը, զոր կանխաւ Եսայիի բերնով ալ յայտներ էր (Եսայ. ԽԵ. 1—4.) արթնցուց անոր հոգին. եւ անկից հրովարտակ մը հանեց, որով Աստուծմէ իրեն եղած առաջնորդութեան համեմատ հրաման կ'ընէր ամէն Հրէից՝ որ իրենցմէ որոնք որ ուզեն Երու-սաղէմ դառնան իրենց ամէն ունեցածովք եւ հոն Աստուծոյ Տաճարը նորէն շինեն, եւ միւս մնա-

ցեղներն ալ անոնց օգնեն այն գործը յառաջ տանելու համար ։ Նաև Նաբուգոդոնոսորի Երուսաղէմայ Տաճարէն առած ոսկի ու արծաթ սպասները, որ չորս հազար հինգ հարիւր հատ էին, Միթրադատար (Օգոսդարէլ) իշխանին յանձնեց որ Յուդայի Յեքոնիա թագաւորին թոռն էր, և հրամայեց որ Տաճարին շինութեան ալ ինչ որ եղած նուէրներն ալ յարքունատան տրուին ։

5. Այս հրամանին վրայ քառասուն երկու հազար հոգի և եօթն հազար ալ ծառայից և աղախիններ իրենց անձն ունեցածներովը ձիերով եկան դէպ 'ի Երուսաղէմ առաջնորդութեամբ Զօրաբաբէլի և Յովսեդեկեան Յեսու քահանային. և տաղաւարահարաց տօնին մօտերը Երուսաղէմ հասան, ու նախ և յառաջ ողջակիզաց սեղանը շինեցին ու քաղաքին մէջ տեղ մին ալ նորոգութիւններ ըրին, և ապա Տաճարին հիմնարկութիւն դրին ։ Բայց Սամարացիք ուզելով իրենք ալ մասնակից ըլլալ անոր շինութեանը, երբ մերժուեցան, Կիւրոսի յաջորդ Կամբիւսէս (Արտաշէս) թագաւորին չարախօսութիւն մատուցին Հրէից համար և հրաման հանել տուին որով Տաճարին շինութիւնն արգիլուեցաւ տասն ու հինգ տարի, մինչև անոր յաջորդ Դարեհի օրը, որ անկէ վերստին հրաման առնուեցաւ այսպէս ։

6. Դարեհ թագաւորը օր մը մեծ հացկերոյթ մը ընելով իր իշխաններուն, երբ ուրախութենէ յետոյ իր սենեակը գնաց հանգչելու ,

այն տանն անոր երեք սենեկապանները , (որոց-
մէ մէկն էր և Զօրաբաբէլ . որ թերևս Տա-
ճարին գործին համար Թագաւորին քով էր գա-
ցեր) . որոշեցին որ ամէն մէկերնին մէյ մէկ
նիւթի վրայ բան գրեն ու Թագաւորին տան ,
և ունենեն թէ որու գրածին կը հաւնի . այս-
պէս երեքն ալ գրեցին և զանոնք Թագաւորին
բարձին ներքև դրին . Թագաւորը երբ արթնց-
աւ և այն թուղթերը կարդաց . իւր իշխան-
ները ժողովքի կանչեց և հրամայեց նոյն երե-
քին ալ՝ որ իրենց գրածը նոյն ժողովքին մէջ
պատճառներով հաստատեն . առաջինը մէկը որ
գինւոյ զօրութեան և միւսը որ Թագաւորաց
զօրութեան վրայ գրած էին . իրենց գործը
այլ և այլ ձեռնարկութիւններով հաստատեցին .
իսկ Զօրաբաբէլ որ կանանց ազատութեան և
մանաւանդ ճշմարտութեան ամէն բանի յաղ-
թող և զօրաւոր ըլլալուն վրայ գրած էր . զօ-
րաւոր փաստերով ապացուցանելով իւր բանը՝
ամէնէն աւելի ընդունելի եղաւ ժողովականաց .
Նոյն վրայ Թագաւորը ըսաւ . « Խնդրէ ինչ որ
կ'ուզես և ալ աւելին տամ » . Իսկ Զօրաբաբէլ
ուրիշ բան չուզեց՝ բայց միայն խնդրեց որ
Երուսաղէմի տաճարին շինութեան հրաման
տայ . որ արդէն Կիւրոս Թագաւորը տուած և
իրենց թշնամիքը յաջողած էին խափանել . Ան-
դէն այս խնդրոյն ուրիշ բողոքներ և խնդրը-
ւածներ ալ ներկայացուած ըլլալով Դարեհի ,
սկսաւ այս բանը քննել . և Կիւրոսի տուած

հրամանը տուգելով. նոյն ալ հրամանն բա-հրովարտակով մը որ Եգիպտոսի տաճարը չէ-նուի և մէկը արգելք չըլլայ. նաև շինութեան ալ և զոհերուն մշտնջենաւոր պիտոյքները յառ-քանաւոր տալովն.

7. Արտաշէս շարունակելով տաճարին և Երուսաղէմայ շինութիւնը Զօրաբաբելի և Յեսու քահանայապետին առաջնորդութեամբ, որ ատեն Անգէ և Զաքարիա ալ մարգարէանա-լով ժողովուրդը կը խրախուսէին. և Դարեհի թագաւորութեան վեցերորդ տարին աւարտե-ցաւ շինութիւնը. Աստի Իսրայէլի որդիքը ու-նոյն նաւակատիքը բոլոր մեծ ուրախութեամբ և շատ զոհեր ու ողջակէզներ մատուցին. (3485) Անկէ ետքը Զատկի տօնն ալ կատարեցին և բառ օրինացն Մովսէսի տաճարին հանապազոր-եայ պաշտամունքը վերստին հաստատեցին քա-հանայից և Ղևտացւոց դասերը կարգադրելով.

## ԳԼՈՒԽ Դ.

1. Արտաշէս Թագաւոր. 2. Մորդքէ և Եսթեր. 3. Ա-մանի կոտորածի հրաման և անոր շարունակութիւնը. 4. Եսթերի միջնոր-դութիւնը. 5. Մորդքէի փառքը. 6. Համանի պատժուիլը և հրէից ազատութիւնը. (Եսթեր. Ա—Ժ.).

1. Դարեհի մեռնելէն ետքը յաջորդեցին Քսերքսէս Ա. և Արտաշէս Ա. Ասոր եղաւ այն Արտաշէս Պարսից թագաւորը իր թագաւո-րութեան երրորդ տարին իր բոլոր իշխանաց մեծ ուրախութիւն և հացկերոյթ մը բա-Շուշան[1] մայրաքաղաքին մէջ որ վեց ամիս շարե

1 Սիւսա.

տեսեալ ։ Ուրկէ յետոյ ժողովուրդքն ալ եօթն որ հայկերպէն բերու թագաւորական պալատներին մէջ ։ այս առթիւ ալ Վաշթինէ թագուհին պալատին մէջ կանանց հանդէս կազմեց բոլոր ։ Այս ուրախութեանց մէջքին որը եւս թագաւորը գինիով զուարթացեր էր ․ հրամայեց որ թագուհին հետ անէր գայ ․ որպէս զի ցուցընէ անոր գեղեցկութիւնը նաժիշտներուն ։ Այս բանը որ արքունեաց աշխարհութենէն ալ դուրս էր ․ թագուհին թշնամանք մը համարեց լսելն ․ ու առաջ յանձնառու չեղաւ երթալ ․ Ասոր վերայ թագաւորը շատ բարկացաւ ու Վաշթինէ թագուհւոյն այս բանը անհնազանդութեան օրինակ մը համարելով ․ մեծամեծաց խորհրդովը որոշեցաւ որ անկէ ասխաւութենէ ձգուի ։ Այն որոշումը հաստատութեամբ Արտաշէսի ․ ու բոլոր Վաշթինէ թագուհին ափսոսութենէ մերժուեցաւ ․ ու բոլոր ժողովուրդքն հրատարակուեցաւ ։ Թէպէտ ու թագաւորին պատմութիւնը իշխանէն եղբայր կարող էր ասելի լաւ մը կերպով դատել Վաշթինէի ընթացքը ․ ալ գուցէ այնչափ հրատարակուած մէկու չուզելով կամ չկրնալով ետ առնել ․ իր ծառայից առաջնորդութեամբը որոշեց որ գեղեցիկ աղջիկներէն ժողովի անոնց մէջէն որ ամենագեղ մէկին ընտրուի թագուհի ըլլալու ։

2 ․ Այս առեններս Շուշան մայրաքաղաքին մէջ Բենիամինի ցեղէն Մուրդքէ անուն Հրեայ մը կար ․ որ իր հօրեղբօր որդի աղջիկը Եսթերը իր, քով կը պահէր ։ Նա եղաւ որ Մուրդքէի

տառապանքութեանը Եսթեր ալ նոյն ընտրելի աղջկանց մէջ առնուելով՝ ամենուն մէջէն անիկայ հաճելի երեւցաւ թագաւորին և թագուհի ընտրուեցաւ ։ Նոյն Եսթեր Մուրդքէի խըրատին համեմատ՝ չյայտնեց իւր ազգը, և իւր աստուածպաշտութիւնն ալ չթողուց ։ Եւ այն օրերը պատահեցաւ որ երկու ներքինիք թագաւորին կեանքը դաւաճանութիւն ընել սպառնեցին, սակայն Մուրդքէ որ ինքն ալ թագաւորական պալատին ծառայութեանը մէջ էր, Եսթերի միջոցաւ թագաւորին յայտնեց և յանցաւորները պատժուեցան ։ Մուրդքէի հաւատարմութեան յիշատակն ալ ժամանակագրութեանց գրքին մէջ գրուեցաւ ։

3. Այս բաներէն ետքը Ամաղէկացւոց թագաւորներուն զարմէն Համան անուն մէկը այնչափ սիրելի եղաւ թագաւորին, որ անոր հրամայելովը բոլոր պալատականները երկրպագութեամբ պատիւ կ՚ընէին իրեն՝ բաց ՚ի Մուրդքէէն ։ Աստի Համան խիստ բարկանալով անոր վերայ, խորհեցաւ որ ոչ միայն զանիկայ՝ այլ և բոլոր Հրեայքը կոտորելու տայ. ուստի սկսաւ համոզել զթագաւորը, թէ Հրեայք խռովարար ու խարէբայ ժողովուրդ մը ըլլալով պէտք է ջնջել զանոնք որ անդրութիւնը խաղաղի, և ասոր փոխարէն մեծ շահ ալ ցուցուց արքունի գանձուն ։ Այսպէս համոզելով զթագաւորը յաջողեցաւ հրովարտակ մը հրատարակել տալ, որ կը հրամայէր թէ Ադար ամսոյ տասներեքին բո-

որ Հրեայք ջարդուին և անոնց ինչքը յարքու-նիս առնուին ։

4. Երբ լսեցին Հրեայք այս վճիռը, մեծ սուգի մէջ մտան, և Մուրդքէ Եսթերին հաս-կըցուց. «Դու յիշէ քու ազգդ, և թագաւո-րին միջնորդէ՝ որ ազատուինք. ո՛վ գիտէ, բաւա, գուցէ նախախնամութիւնը այս միջնորդութեան համար դ քեզ թագուհի ըրած է»։ Եսթեր թէև գիտէր որ առանց կանչուելու թագաւորին ներ-կայանալը մեծ պատիժ ունի, սակայն յանձն ա-ռաւ նաև. վտանգաւ անձին ներկայանալ թա-գաւորին և միջնորդել իր ազգին համար, պա-տուիրելով որ իր յաջողութեանը համար երեք օր ծոմապահութեամբ աղօթեն իր ազգայինները Ինքն ալ երեք օր ծոմապահութեամբ աղօթել-էն, իր արքունութեան զարդերին զգեցած, և երկու աղախին հետն առած համարձակեցաւ թագաւորին ներկայանալ. և Աստուծոյ յաջո-ղելովը Եսթեր շնորհք գտաւ առաջի թագա-ւորին և սիրով ընդունուեցաւ. Թագաւորն ի-մանալով որ Եսթեր իր արտաքոյ կարգի ներ-կայութեանը 'ի հարկէ առաջարկելի խնդիր մը ունի, հարցուց թէ ինչ կը խնդրէ. և խոստա-ցաւ մինչև թագաւորութեան կէսը տալ. այն ատեն Եսթեր պատասխանեց. «Իմ բաղձանքս այս է որ եթէ կարելի է, այսօր իմ ընելիք հաց-կերոյթիս ներկայ գտնուիլ յանձն առնէք Համա-նին հետ մէկտեղ»։ Թագաւորը հաճութիւն տուաւ. Համանն ալ առաւ և գնաց ։ Հոն տեղ

թագաւորը զուարթանալով վերստին առաջար-կեց Եսթերի թէ ինչ խնդիր որ ունիս՝ առա-ջարկէ և սիրով ընդունի։ Եսթեր ալ առա-ջարկեց թէ՝ «Վաղը դարձեալ հաճեցէք այն հացկերոյթին ներկայ գտնուիլ Համանի հետ»։

5. Համան ամբարտաւանութեան վերջին ծայրը հասած ըլլալով, մանաւանդ Եսթերի սե-ղանին հրաւիրուելուն վերայ, եւ դառնալու ա-տեն երբ տեսաւ զՄուրդքէն պալատին մէջ, շատ նեղացաւ և գնաց մեծ փայտ մը պատրաստել տուաւ որ հետեւեալ օրը թագաւորէն հրա-ման առնելուն զանիկայ կախել տայ։ Բայց Ա-ստուծոյ տնօրէնութեամբը այնպէս եղաւ որ այն գիշեր թագաւորին քունը փախաւ, ուստի հր-րամայեց որ յիշատակաց ժամանակագրութիւնը բերեն ու կարդան. և կարդացած ատեն կարգը հոն եկաւ, ուր Մուրդքէի ըրած հաւատարմու-թիւնը գրուած էր. այն ատեն հարցուց թա-գաւորը ու տեղեկացաւ որ անոր փոխարէնու-թիւն մը չէր եղած. սկսաւ այս բանին վերայ մտածել։ Իսկ Համան որ առաւօտուն կանուխ եկած էր Մուրդքէի դատապարտելիքը առնելու, թա-գաւորը զինքը կանչեց, և հարցուց թէ ինչ կերպով կարելի է թագաւորին հաւատարիմ մէկը պատուել ու փոխարինել։ Համան իր մտքին մէջ խորհելով թէ թագաւորը զիս պի-տի պատուէ և թէ ոչ զիս, ուստի «Այդ փոքր բան, պատուաւոր մէկուն ձեռօք այն մար-դուն փառաւոր զգեստներ հագցնել, և թա-

գաւազանն ձիու վերայ հեծցընելով բոլոր քաղաքը պտըտցընել ու քարոզել այն մարդուն պատիւը ։ Թագաւորը հաճելով այս խօսքին, «Գնա՛, ըսաւ, այդ ըսածիդ պէս ըրէ Մուրդքէին, որ երբեմն մեզի այնչափ մեծ հաւատարմութիւն է ցուցած ։ Համան իր խօսքին բռնուած ըլլալով ամփոփուեցաւ իր ըսածները իր ձեռօքը Մուրդքէի ընել. և ասոր վերայ սաստիկ տրտմելէ եղած՝ տուն դարձաւ ։

6. Համան որոշեալ ժամուն վերջաւորին Եսթերի սեղանը գնաց թագաւորին հետ. հոն ատեն դարձեալ զուարթանալով թագաւորը հարցուց Եսթերին թէ՝ «Ինչ խնդիրք ունիս խնդրէ և անշուշտ պիտի կատարուի ։ Այն ատեն Եսթեր ըսաւ. «Տէր թագաւոր, իմ խնդիրքս միայն այս է որ իմ ու ազգիս կեանքը շնորհես ինծի, որ այս բանսարկու Համանը չարախօսելով ամեն ազգ ուզեց որ զմեզ բնաջինջ ընէ ։ Թագաւորը որ մինչեւ այն ատեն չէր գիտեր Եսթերի Հրէից ազգէն ըլլալը և անոնց ընդհանուր հրովարտակին հրամանն ալ միայն Համանին հրամայութեամբ տրուած էր, երբ այս խօսքը լսեց գլուխը տաքցաւ Համանին վերայ զայրացած սաստիկ բարկութենէն, ու անմիջապէս սեղանը ձգեց դուրս ելաւ, և նոյն վայրկենին ծառաներուն մէկէն իմանալով նաեւ որ Համան փայտ մ'ալ պատրաստած էր Մուրդքէն կախելու համար, անմիջապէս հրաման ըրաւ որ Համանը տարին այն փայտին վերայ կախեցին, և Համա-

նին բոլոր ունեցածը Եսթերի տուաւ. ու իմա-ցուց որ Մուրդքէ Եսթերին ազգականն է. Հա-մանի իշխանութիւնն ալ անոր տուաւ. Եւ ա-ռաջին հրովարտակը ջնջեցուց ու ուրիշ հրովար-տակ մը, որով նաեւ արտօնութիւն կու տար Հրէից իրենց թշնամիները ջարդելու. Այսպէս ա-զատեցան Հրէայք նոյն օրը, և այս տօնը յի-շատակին համար Ադար ամսոյն չորեքտասանե-րորդ օրը տօն սահմանեցին, որ մինչեւ այսօր կը կատարեն Փուրիմ (վիճակ) անունով, վասն զի Համան վիճակ ձգեր էր որ նոյն օրը զիրենք ջարդել տայ.

## ԳԼՈՒԽ Ե.

1. Եզրաս. 2. Նէեմի. 3. Նէեմի գործերը. 4. Հրէից կա-ցութիւնը (Բ. Եզր. Է—Ժ. Նէեմ. Ա—ԺԳ.).

1. Պարսից Արտաշէս թագաւորը իր թա-գաւորութեան եօթներորդ տարին իր երկրին մէջ եղող բոլոր Հրէից հրաման ըրաւ որ իրենց-մէ ով որ ուզէ Երուսաղէմ դառնայ, և այս բա-նին համար յատուկ հրովարտակ մըն ալ տը-ւաւ Աստուածային բաներու [illegible] Եզրաս քա-հանային, որ օրինաց հմուտ ու գրագէտ անձ մը էր. Թագաւորը այն հրովարտակով բոլոր Հրէաստանի վերայ կատարեալ իշխանութիւն կու-տար անոր որ Հրէաստանի մէջ յարմար տեսած կարգադրութիւնները ընէ. Եւ անոր ոսկի և արծաթ տալով Հրէաստանի մէջ [illegible] [illegible] արտօնութիւն ալ տալէ զատ, պա-

ւփրկեց նաև իւր գործակալաց որ Եգիպտոսայ մէջ էր և գանձները յորդառատ մատակարարեն. Նոյնպէս Եզրաս ուրիշ շատ մը Հրէից հետ Երուսաղէմ եկաւ ողջակիզի տօն մը երբ հոն Հրէից մէջ օրինաց դէմ ապօրինութիւններ նաև օտարաց հետ խառնամուսնութիւններ մուտ գտած էին. Եզրաս զասոնք անսելով շատ ցաւեցաւ և ժողովուրդը հաւաքելով յորդորեց և խոստամունք առաւ ամենեցմէ որ իրենց այլազգի կանայքը զիրենք արձակեն. Ասկէ զատ նաև ուրիշ շատ բարեկարգութեանց ալ ձեռք զարկաւ ու կատարեց. Երբ գրեց իւր անունով եղած գիրքերը Սուրբ Գրոց կարգին մէջ. և կը կարծուի թէ ինքը մէկ ալ ամփոփեց Սուրբ Գրոց այլ և այլ մասերը.

2. Նեեմիա զատ նաև շատ բարեկարգութիւններ. ինչպէս և Երուսաղէմի պարսպին շինութիւնը Նեեմիի ձեռօք եղաւ այսպէս. Նա կայ քահանայից ցեղէն էր և Արտաշէսի արքունեաց մէջ կը ծառայէր. և լսելով թէ ուկաւին Երուսաղէմի պարիսպները չեն շինուած ու Տաճարը և քաղաքը դեռ շրջակայ ազգաց ազդեցութեան ներքև է, սկսաւ շատ տրտմիլ և լալ և Աստուծոյ աղօթել. Օր մը թագաւորը հարցունելով անոր տրտմութեան պատճառը, Նեեմի ալ յայտնեց իւր սրտին ցաւը և հրաման խնդրեց որ երթայ իւր հայրենիքը և Երուսաղէմը շինէ ու զարդարէ. Թագաւորն ալ ընդունելով անոր խնդիրքը, վճռով արտօնա-

թիւն տուաւ և այնպէս զրկեց զանիկայ Աշտա-րակէն։ Իր Ներսէսի Աշտարակեցի գալով սկսա-յորդորել ժողովուրդը և մեծ փութով սկը-սան պարիսպներուն շինութիւնը յառաջ տա-նիլ, և թէպէտ շրջակայ ազգերը մեծ դժուա-րութիւն յարուցին Ներսէսի դէմ և զինքը դա-տապարտել ալ ուզեցին, բայց անիկայ իր մեծ համբերատարութեամբը ամէն դժուարութեանց յաղթեց և գործին ծանրութիւնը ժողովրդեան մէջ բաժնելով քիչ ատենի մէջ լմնցուցին պա-րիսպներուն շինութիւնը (3555)։ Ներսէսի նաև ուրիշ շատ բարեկարգութիւններ բրաւ ժողո-վրդեան մէջ՝ մանաւանդ որպէս ծանր տոկոսք առնելէն արգիլեց։ Նաև յետոյ տպագրատուն-րաց ալ հաստատեցին որ ամէն ժողովուրդը Աշտարակէմ մարտելով։ Աշխատ օրէնքներ կար-դաց ու մեկնեց և բոլոր ժողովուրդը ուխտեցին զանոնք պահելու համար։

3. Ձայնէս Աշխէն Ներսէսեան ձեռքով Հրէից քաղաքական կայութիւնը կարգադրեց և աստուածպաշտութիւնը հաստատեց, և ասոնց ձիգ ապահովութեանը համար ժողովրդեան ծերերէն ատեան մը և օրէնքը սահ-մանեցին համար ատենը հաստատեց, որ շաբաթը երկու օր և ուրիշ տօն օրեր օրինաց և մարգարէից գրքերը կընթեռնուին ի շինու-թիւն ժողովրդեան։ Նաև գերութեան ատեն Տաճարին նուիրական հարստութեանց որ քաղաքայ Ա-րեւմտի հրամանաւ խորին և անձինք հողի մը

մէջ պահեր էին․ Նէեմի քահանայից թոռնե-րէն մարդիկ ղրկեց որ այն տեղը գտնէին․ գա-ցին և թանձրացած ջուր մը գտան․ սակայն աղօթելէն ետեւ Նէեմի հրաման բրաւ որ մա-ցած այն ջուրէն բերելով ողջակիզաց վրայ ցանեցին․ և ուր արեգակին լոյսը անոնց վե-րայ ծագած ատեն մէկէն ՚ի մէկ բռնկեցաւ․ մինչև զարմանալ ամենեքեան․ այսպէս այն նը-ւիրական ջուրը գտնուեցաւ[1]․ Այս բանը լսե-լով և թագաւորը յառաջ սորվելով ղրկեց Ե-րուսաղէմ և հրամայեց որ այն տեղը շրջափա-կեն․ և Նէեմի այն տեղւոյն անունը Նեփթար (մաքրութիւն) կոչեց․ Եւ Հրէաստան խաղա-ղութեամբ տասնեակ տարի մնաց Եղիազարեայք նը-րան չեադչեալ հաւաքեց և երկիրը ծաղկե-ցուց․

4․ Նոյն յետոյ Նէեմի թագաւորին քով գնաց․ ինչպէս որ խոստացած էր, և քիչ ատե-նէն վերստին դարձաւ Երուսաղէմ և շատ բարեկարգութիւններ բրաւ և օտար ազգաց խնամութիւն ընելն ՚ի սպառ արգիլեց․ և յա-ջողեցաւ ամեն անկարգութիւն վերցնել․ Եւ Յովիադայի որդին (Մանասէն) ալ քահանայու-թենէ մերժեց․ Սամարիայի կուսակալ Սանա-բաղատի աղջիկը առած ըլլալուն համար[2]․

1 Տառապանաց ատեն ալ Երեմիա մարգարէն այրի մը մէջ պա-հել տուած էր ու բերանն ալ քարերով գոցած․ որուն տե-ղը չյայտնուեցաւ․ (Բ․ Մակ․ Բ․ 5․ 8․)․
2 Նեեմիայ իր անվերջ մեծարանք հրամանն առաւ Դարեհ Բ․ էն․

# ԳԼՈՒԽ Զ.

1. Մորդուակք. 2. Նողայ. 3. Երեմիա. 4. Եղեգնիկ. Ցամաքն. Ալիւծ. Ցորեն և այլք.

1. Ըսուած չորս մարդազգերներէ յարոց Խուրալեան այգին մէջ . որոց մէջէն ծանօթ մորդկան իր կամքը . և ամբողջին ներկայէն և ուդուրսին մէջ իր բրած և ընկերը բաներ . ասոր հաւատ առանց Տէրութեան , և և կանգուն . Ըսանցմէ անոնք գրաւոր գործեր թողած են . ինչպէս Սոփէս . Սամուէլ (1) . Դաւիթ և այլք . անոնք այլ գրութիւն չթողլով իրենց մէջէն եղած յայտնութիւններ Սուրբ Գրոց պատմական մասին մէջ կը գտնուին . ինչպէս Նաթան . Եղիա . Եղիսէ . և այլք . Թէպէտ և առանցմէ ալ անոնք Թագաւորաց փոքրեր և իրենց որդուն ժամանակագրութիւններ գրած են , այլ միայջէն այն գրութիւններուն անուններ ՚ի մի անփոփոխելով (Հաւանականապէս Եզրասայ ձեռօք) . ւ ասոր և գրողներուն անուններն յիշատակւած չեն բաց ՚ի մէկ քանիներ . Երբէն ալ եղած անգիտութիւններ որոնց այն մարգարէներէն անանց վրայ . որոնց տղաքը ժամանակակից պատմութեան հետ անմիջական կապակցութիւն ունէր . Հիմա հարկ է յիշել նաև

և Գործերէն ըրած վերայ ատեանին ատենը մի չլինել Սամարացւոց հասարակ . որոնք Սամուէլի հինգ գիրք Երկրորդ օրինաց և Սեփոյի գործոց ալ անընդունելութեան ունէին .

1 Սամուէլ գրած է Ըստ ուղին Թագաւորաց ԳԻՐՔ մինչև իր մահը . թէ և բան երկրայական երեւելի Թագաւորաց գիրքերն ալ Սամուէլի անուանով է . Երկրն է գրած Նաթան և Գադ հաւաքած Պատմութեան Դաւիթաց ԳԻՐՔԸ .

դանձք . որոց վերայ թէպէտեւ ասէր Պօղոս պատմագրին մասին մէջ հաստատուի յիշուած է կամ բնաւ յիշուած չէ . բայց գրաւոր մնացացեալ թիւններ թողած են . որոց մէջ Խորենացի և շրջակայ այգեայ վերայ Նշանաւոր քննիչք գատապարաններուն և յառաջադէս Նշանաւոր Նաևին մարդկութեան թիւնք . առաջնորդ թիւնք և առաջ և-կեղեցւոյն վերայ այլ յաջորդ թիւններ կան .

2 . ՏԱՐԵՆՑԻ (ամ. 270) . առաջնոյ Հայաստանի Միջին թագաւորին որդին մինչև մարդապետութեան , մինչև Մանուէլի որդի որդւոյն ձեռքով և նախահայրութեյան . Իւր մարդապետութեան բացառութեանթիւնն է ժողովրդեան խորհուրդը , յանդիմանութիւններ , իրենց շնորհաթեանց կերպեր պատմութներուն նկարագրութիւններ , գերաթիւնք , գերեզմանը ի ձեռն Կիրակոսի (Գ.Լ. Խէշ.) Կամենակոսի և Խորենացի թագաւորութեան կալծանան մի Նշանաւորաց ձեռագր (Է—Թ . Ժ.Է.) Տիրանի կործանման մի որ եղաւ Նորերեաց ձեռագր (ԽԳ.). և այլ աւելի այգեայ վերայ Նշանաւոր գաւառականներուն նկարագրութիւններրը . որք կատարեցան Նորերեաց ձեռագր . Խաչ Վերջինաւոր առաջնոր թեանց վերայ այլ շատ յաջորդութեա կը խաղի . (Է . Խ . Ծ.Գ . ԿԱ . ԿԳ . . .). Նշանաւոր է իւր մէկ տեսիլքը . փառք կը տեղամ մի առանձնացին մէջ տեսաւ զՆշանաւոր բարձր աթոռի մի վերայ նստած' շրջապատեալ վեցթեւեան Սերովբէներէ . որ իրենց երկու թեւերովը երեսնին և երկու ոտքն այլ ոտքերնին կը ծած-

կէին և միւս երկուքն ալ կը թողէին. և ու-ղաղակելով կ'ըսէին. «Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց. լի է ամենայն երկիր փառօք նորա»: և այս ձայնէն տաճարին սեմերը կը դողային: Ուստի որ տեսաւ Եսայի, «Վայ ինձ, ըսաւ, ուրեմն կը կորսուիմ, որ ես պիղծ շրթունքով մարդ մը՝ զօրութեանց Տէրը տեսայ»: Այն ա-տեն Սերովբէներէն մէկը ունելիքով կայծ մը առաւ սեղանէն, և անոր շրթունքներուն դպցու-ցանելով ըսաւ. «Ահա ասիկայ քու շրթունք-ներուդ դպաւ և քու անօրէնութիւններդ ու մեղքերդ պիտի քնջէ»:

3. ԵՐԵՄԻԱ (տես 242). ասիկայ Յովսիա թա-գաւորին ատենէն մինչև Յուդայի գերութիւն և անկէ ալ յետոյ մարգարէացաւ. և իր մար-գարէութեանց համար հալածանք կրե-լով մահապարտութեան ձգուեցաւ. բայց յե-տոյ անկէ ազատուելով ու բանտ մը տարուե-ցաւ, ուր մնաց մինչև Երուսաղէմի կործա-նումը. յետոյ գնաց Եգիպտոս և հոն ալ իր մարգարէութիւնները շարունակելով. Հրէ-այք չարաչար քարկոծեցին և սպաննեցին. Իր մար-գարէութիւնները կը պարունակեն Յուդայ-եայց չարութեանը յանդիմանութիւններ և խրատներ, անոնց գերութիւնը, գերեդարձը որ ճիշդ ժամանակին գուշակեց (ԻԷ. ԻԹ.) և այլ ուրիշ ազգաց վերայ Նաբուծմէ գալիք դա-տաստանները. Եգիպտոսի պատմութիւնը ի Նա-բուգոդոնոսորայ, և Բաբելոնի կործանումը որ

եղաւ ի ձեռն Սարեայ և Բարուքայ (ԻԵ. ԽԵ. ԾԱ.): Նաև ունի արտաքարգ ողբ մի Երուսաղէմի գերութեան և աւերման վերայ: Երեմիայի գործակիցն էր և Բարուք, որ գրի առաւ անոր մարգարէութիւնները և հետն ալ Եգիպտոս գնաց: Բարուք գրած է թուղթ մի Հրէաստանէն Բաբելոն եղող Հրէից, որով կ՚աղաչէ զԱստուած որ ողորմութիւն ընէ իրենց և ժողովուրդին ալ միաբանութիւն և յոյս կուտայ իրենց ապագայ փրկութեան համար: Իսկ գրոց մէջն է նաև Երեմիայի մէկ թուղթը որ Եգիպտոսէն Բաբելոն ղրկուած է ի խրատ ժողովրդեան:

4. ԵԶԵԿԻԷԼ. ազգաւ Ղևտացի էր. և Յեքոնիա թագաւորին հետ Բաբելոն գերի գնացողներէն էր. հոն ունեցաւ իրեն գերութեան հինգերորդ տարին Աստուծոյ մէկ մանաւոր տեսիլքովը մարգարէական շնորհ առաւ: Իր մարգարէութիւնները են՝ յանդիմանութիւններ Իսրայէլացւոց չարութեանցը վերայ սպառնալիքներով, առակներով և օրինակներով. նկարագրեց նաև անոնց պատժուիլը և դարձեալ անոնց ապագայ հանդարտութիւնը և Երուսաղէմի տաճարին շինութիւնը: Նաև Եգիպտացւոց Մովաբացւոց և Իսրայէլի անհնազանդից ազգաց վերայ գալիք դատաստանները, որ եղան ի ձեռն Բաբելացւոց, և Տիւրոսի ու Սիդոնի կործանումը որ եղաւ ի Քաղդէացւոց և հուսկ ուրեմն ի Մակեդոնացւոց (ԻԵ—ԼԲ.):

5. ՅՈՎՆԱՆ մարգարէացաւ Իսրայէլի յաղթութիւնները Յերոբովամ Բ.ի օրով։ Յետոյ փախէ Թագաւորի օրերը Աստուած հրամայեց իրեն որ երթայ ի Նինուէ և քարոզէ որ ապաշխարեն, եթէ ոչ իրենց քաղաքը պիտի կործանի։ Բայց Յովնան գիտնալով որ եթէ Նինուէացիք ապաշխարեն, Աստուած ալ պիտի ողորմի իրենց և ինք ստախօսի մը պէս պիտի ըլլայ, ուստի մտածեց փախչիլ Աստուծոյ երեսէն ու Յոպպէ երթալով նաւ մտաւ որ Թարսիս երթայ. բայց Աստուած սաստիկ ալէկոծութիւն մը հանեց որ նաւը ընկղմելու մօտեցաւ, և նաւաստիները սկսան իրենց աստուածները օգնութեան կանչել ու նաւը թեթեւցնելու համար անոր կարասիքը ծովը ձգել. իսկ Յովնան բնաւ հոգ չընելով նաւուն մէջ անկիւն մը քաշուած խորունկ կը քնանար. ուստի նաւապետը ձայն տուաւ իրեն ալ որ աղօթէ։ Բայց նաւավարները տեսնելով որ ծովը տակաւել ևս կը սաստկանար, որոշեցին որ վիճակ ձգեն թէ արդեօք որուն մեղաց համար է այս ալէկոծութիւնը. և երբ վիճակը Յովնանու ելաւ, սկսան հարցնել թէ ինք ով է և ուրկէ՛ երթայ. և խոստովանեցաւ թէ Աստուծոյ երեսէն կը փախչի. սկսան աղաղակել թէ ինչ ընեն անոր. Յովնան ալ ըսաւ որ զինքը ծովը նետեն. Նաւորդք թէ և կը ջանային նաւը ազատել՝ բայց երբ ծովը չդադրան, առնելով Յովնանը ծովը ձգել, և ծովը հանդարտեցաւ։ Այն ատեն

Աստուծոյ հրամանաւ մեծ ձուկ մը կլլեց զՅով-նան, որ երեք օր և երեք գիշեր անոր փորին մէջ կենդանի մնաց, և աղօթք մ՚ալ ըրաւ Աս-տուծոյն որ կը լսէր. Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ ԻՄՈՒՄ Է — ՏԷՐ ԿՈՉԵՑԻ. (Յովն. Բ).

Աս Յովնան երկրորդ անգամ Աստուծմէ հրամանը ընդունելով Նինուէ գնաց և սկսաւ քարոզել ու ըսել թէ «երեք օրէն այս քաղաքը պիտի կործանի»: Աս Նինուէացիք ու իրենց թա-գաւորը հաւատալով Աստուծոյ, ծոմապահու-թիւն ըրին և սրտի մտօք ապաշխարեցին. և Աստուած տեսնելով անոնց զղջումը ողորմեցաւ և չղրկեց իւր ըսած պատիժը: Աս Յովնան տրտմելով ըսաւ. «Ով Տէր, ո՞չ ասիկա էր գի-տէի որ դուն ողորմած ու գթած ես, և զղջա-ցողներուն թողութիւն կուտաս, ուստի անոր համար փախչել կ՚ուզէի այս պաշտօնէն. ուստի առ իմ հոգիս, զի մեռնիլս աւելի լաւ է»: Աս-տակայն Յովնան քաղաքէն դուրս տեղ մը գնաց որ տեսնէ թէ ինչ պիտի ըլլայ քաղաքին. և Աստուած հոն տեղ դդմենի մը բուսցուց որ հո-վանի ըլլայ անոր գլխուն. բայց հետևեալ առա-ւօտուն որդ մը դդմենին կերեց որ չորցաւ. և Յովնան տաքէն նեղուելով ըսաւ. «Երանի թէ մեռնէի ու ազատէի»: Այն ատեն Աստուած ըսաւ. «Դուն որ աշխատած կը ցաւիս դդմենիին համար որ ինքնիրեն բուսաւ ու չորցաւ, հապա ես ինչպէս չողորմիմ այս մեծ քաղաքին ուր տեղ հարիւր քսան հազար մէկէն աւելի տղայք կան»:

6 · Նաև հետևեալները՝ Ովսէէ · Յերոբովամ երկրորդի օրերը · Յովէլ · Ամովս · Աբդիու · Ոզիայի օրերը · Միքիա · Յովաթամի օրերը · Նաւում Եզեկիայի օրերը · Սոփոնիա · Ամբակում · Յովսիայի օրերը · Անգէ · Զաքարիա · Զօրաբաբելի օրերը · և Մաղաքիա · Նեեմիի օրերը · Ասոնց անունն ալ մարգարէութեանց բովանդակութիւնքն են Իսրայէլի կռապաշտութեան և չարութեանցը յանդիմանութիւններ, անոնց վերայ գալիք պատիժներուն ազդարարութիւններ · յորդորներ, աղօթքներ, Իսրայէլի գերեդարձը, ապագայ փառքը · շրջակայ ազգաց վերայ Աստուծոյ ընելիք դատաստաններուն նկարագրութիւնները և Մեսիայի և անոր եկեղեցւոյն համար գուշակութիւններ, ինչպէս սուրբ Հոգւոյն գալստեանը համար (Յովէլ. Բ. 28. 32) · Քրիստոսի ծննդեան, թագաւորութեան և եկեղեցւոյ վերայ (Միքիա Դ. Ե) · Քրիստոսի գալստեան և անօրէնութեանցը ու եկեղեցւոյ վերայ (Զաքարիա. Գ. Թ. ԺԳ. ԺԴ) · Քրիստոսի և անոր կարապետին և նոր ուխտին վերայ (Մաղաքիա Գ. Դ) ·

# ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՒ ՏԱՃԱՐԻՆ ՎԵՐՍՏԻՆ ՇԻՆՈՒԹԵՆԷՆ ՄԻՆՉԵՒ Ի ՔՐԻՍՏՈՍ

### ԳԼՈՒԽ Ա.

1. Հրէից վիճակը մինչեւ 'ի մահն Աղեքսանդրի. եւ Հրէաստանի Պտղոմեանց ձեռքն անցնիլը. 2. Պտղոմէոս Դ.ի ըրածները. 3. Հրէաստանի Սելեւկեանց ձեռքը անցնիլը. 4. Յասոնի եւ Մենելաոսի մատնութիւնները. 5. Հրէից կրած հարստահարութիւնները. 6. Հալածանքը. 7. Եօթն եղբարց եւ Եղիազարու ծերոյն նահատակութիւնը. (Ա. Մակ. Ա. Բ. Մակ. Ա—Է. Գ. Մակ. Ա—Է.)

1. Նեեմիէն յետոյ Հրէից մէջ մնացածոր կուսակալ կամ մարգարէ մը չելաւ, եւ Հրէաստան Ասորւոց երկրին հետ Պարսից տէրութեան մէկ նահանգն եղած էր, այսու ամենայնիւ Հրեայք որոշեալ տուրք մը տալով իրենց քահանայապետաց իշխանութեամբը կը կառավարուէին, եւ իրենց ամէն իրաւունքները եւ ազատութիւնները կը վայելէին, եւ անդորրութեան մէջ էին. Այսպէս երկու հարիւր եւ աւելի տարի անցնելէ ետքը Մակեդոնացւոց մեծն Աղեքսանդր թագաւորը զօրանալով Պարսից տէրութիւնը կործանեց եւ անոնց երկիրներուն հետ Հրէաստանն ալ առեց. Ասոր մեռնելէն ետքը տէրութիւնը իր չորս իշխաններուն մէջ բաժնուելով Հրէաստանն ալ Պտղոմէոս Սոտերի ձեռքը անցաւ որ Եգիպտոսի մէջ թագաւորեց. ասոր եւ իր

երկու յաջորդներու օրերը Հրեայք հանգիստ անցուցին քահանայապետաց վարչութեամբը . Ասոնց միջոցներուն եղաւ և եօթանասնից թարգմանութիւնը Աղեքսանդրիա .

2. Եւ եղաւ որ Պտղոմէոս Դ. Թագաւորը, Ասորւոց Անտիոքոս Գ. Թագաւորին յաղթելէ զկնի . Երուսաղէմ եկաւ և սիրով ընդունելութիւն գտաւ . Բայց ուր Տաճարին մէջ զոհ մատուցանել տալէ ետքը հետաքրքրութեամբ ուզեց Սրբութիւն սրբոցն ալ տեսնել, ուր քահանայապետէն զատ մէկը մտնել արգիլեալ էր օրէնքով . Ասոր համար շատ դէմ կեցան Հրեայք մանաւանդ քահանայապետը Սիմոն Բ . բայց չեղաւ, բռնի ներս մտաւ . սակայն անմիջապէս պատուհասուեցաւ . վասն զի սաստիկ դող մը գալով վրան, ուշաթափ գետինը ինկաւ և իր ծառայքը զինքը դուրս հանելով հազիւ կրցան խելքը վրան բերել : Ասոր վրայ ոխ պահելով Հրէից՝ դարձաւ Աղեքսանդրիա, և հրաման հանեց որ ամէն Հրեայք իրենց օրէնքը թողուն. և ով որ չհնազանդի՝ կապեն ու Աղեքսանդրիա բերեն : Ասոր առթիւ շատ Հրեայ բռնեցին և Աղեքսանդրիա հրապարակի մը մէջ ժողովեցին որպէս զի կատղած փիղերու ոտնակոխ ընել տան զանոնք : Սակայն ի զուր Պտղոմէոս Դ. կը մտածէր նաև Հրէաստանն ալ բոլորովին կործանել . Հրեայք այսպէս մահուան դուռը հասած ատեն զԱստուած կարդալ եռանդագին. այն ատեն երկու հրեշտակներ իրենց փղե-

րուն և անոնց պաշտպաններուն մէջ շփոթու-թիւն մը ձգեցին և փիղերը սկսան պաշտպա-նաց վերայ յարձակիլ. միանգամայն թագա-ւորին ալ միտքը փոխելով. հրաման ըրաւ պա-տել զանոնք և անոնց եւս աւելի ազատու-թիւններ տալով արձակեց.

3. Պտղոմէոս Դ.ի մեռնելէն յետոյ Ասոր-ւոց Սելևկեանց թագաւորներէն Անտիոքոս Գ. Մեծն, որ իւր շատ երկիրներու հետ Հրէաս-տանն ալ առաւ Պտղոմեանց ձեռքէն և այնչափ բարեկամութեամբ վարուեցաւ Հրէից հետ որ տարեկան նուէր ալ կապեց Տաճարին զոհե-րուն համար. սակայն ասոր յաջորդին Սելևկոս Դ. Փիլոպատորի ատենը սկսաւ Հրէից հան-գստութիւնը աւրուիլ. արտաքին դէպքե-րէն աւելի ներքին մատնիչներու ձեռօք. Վասն զի Տաճարին վերակացու Սիմոն անուն մէկը որ իւր անկարգութեանցը համար Ոնիա քահանայապետէն յանդիմանուած էր, գնաց այն կողմերուն զօրավարին Ապողոնիոսի միջոցաւ թագաւորին իմացուց թէ Երուսաղէմայ Տա-ճարին մէջ շատ գանձ ըլլալով պէտք եղած ա-տեն կրնայ առնուիլ. Սելևկոս թագաւորն ալ որ այն միջոցին դրամի մեծ կարօտութիւն ու-նէր, լսելով այս բանը՝ Հելիոդորոս իշխանը ղրկեց որ նոյն գանձերը բերէ. Ուստի այս իշ-խանը Երուսաղէմ գալով թագաւորին որոշու-մը յայտնեց. քահանայապետը սկսաւ անոր ի-մացընել թէ Տաճարին մէջ եղած դրամը որբե-

մը բան է, որուն մէկ մասը միայն որբոց և այրեաց է որոնք ապահովութեան համար հոն տուած են և անոր շահովը կ'ապրին, և մնացեալն ալ իբր աւանդ յանձնուած են։ Իսկ Հեղիոդորոս այս խօսքերուն ունկնդրութիւն չընելով ուզեց բռնի Տաճարը մտնել և գանձը առնել։

Այն ատեն բոլոր ժողովուրդը սկսան աղաչել Աստուծոյ որ օգնէ խեղճ՝ որբոց և այրեաց. որ լսելով իրենց ձայնը անմիջապէս մեծաշուք անձ մը երևցաւ հետը երկու կտրիճ երիտասարդներով, որոնք Հեղիոդորոսի վերայ գալով այնքան ծեծեցին որ կիսամեռ ընկած մնաց։ Եւ այնպէս վերցուցին զանիկայ ու Տաճարէն դուրս հանեցին ու Օնիայի աղօթիւքը կրցաւ բժշկուիլ։ Ասոր վերայ Հեղիոդորոս զոհ մատուցանելով և քահանայապետին ալ պարգևներ տալով մեկնեցաւ և գնաց թագաւորին պատմեց եղածները, և հասկցուց թէ գերագոյն զօրութիւն մը պաշտպան է նոյն տեղւոյն. ուստի թագաւորն ալ ետ կեցաւ իր խորհրդէն։

4. Սելեւկոս Դ.ի յաջորդեց իր եղբայրը Անտիոքոս Դ. Եպիփան որ շատ թշնամի էր հրէական օրինաց։ Այն ատենները Օնիայի եղբայրը Յասոն աւելի տուրք խոստանալով քահանայապետութիւնը յափշտակեց և խոսք ալ տուաւ թագաւորին որ հեթանոսական կրօնի հրահանգներ մտցունէ Հրէից մէջ։ Այսքա-

հանդիսապետութեան երրորդ տարին, մերձե-
ցեալ ժամանակին Սիմոնի եղբայրը Մենեղաւոս եւ
առաւել տուրք խոստանալով Թագաւորին քա-
հանդիսապետութիւնը ինքն առաւ. բանու-
թեամբ մերժելով զՅասոն. բայց անանկ ալ որ
չկրնար կարենայ հատուցանել խոստացած տուր-
քը. սկսաւ Տաճարը կողոպտել, ուրիշ մա-
սին ալ կաշառ տալու Թագաւորին Անդրոնի-
կոսին, որուն ձեռօք սպաննել տուաւ և Օնիան,
իւր գովութիւնը յայտնած ըլլալուն համար.
Օնիային անմեղ մահուանը վերայ ժողովուրդը
շատ ցաւելով, գանգատ ըրին Թագաւորին, որ
գթալով այն բնաւիր անձին տարապարտ մահ-
ուանը վերայ. իսկոյն հրաման ըրաւ ու գլխատել
տուաւ զԱնդրոնիկոս Օնիային սպաննուած տեղը.
Իսկ Մենեղաւոս որ չէր կրնար հատուցանել
տուրքը, երբ Թագաւորին գնաց և իւր եղբայրը
Լիւսիմաքոսը իրեն փոխանորդ դրաւ ապսպրելով
անոր որ Տաճարէն ոսկի արծաթ վերցընէ ու-
րիշին ղրկէ. զայս լսելով ժողովուրդը ոտք ելան
իրեն դէմ. անիկայ ալ զօրք հանեց իրենց դէմ
և երկու կողմէն բաւական արիւնհեղութիւն
ըլլալէ զկնի ժողովուրդը յաղթող գտնուելով
Լիւսիմաքոսը վանեցին փախստեայ. Այս բա-
ներուն վերայ Մենեղաւոս ամբաստանեցաւ
Թագաւորին առջեւ իբր պատճառ այս խռո-
վութեանց, այլ անիկայ կաշառքի ուժով ար-
դարացաւ և զինքը ամբաստանողները յանցա-
ւոր դատուեցան և սպաննուեցան. Այս օրեր

քաղաքն որ երկինքը ձիաւորներ կ'երեւէին և զէնքերու ձայներ կը լսուէին ․

5 · Այն միջոցներուն Անտիոքոս Եպիփան թագաւորը Եգիպտոսի վրայ պատերազմի գա-ցած ըլլալով համբաւ մը տարածուեցաւ թէ անհետ մեռեր է . ուստի սկսան Հրեայք ու-րախանալ, և Յասոն որ Ամմոնացւոց երկիրը փա-խեր էր՝ եկաւ երկու հազար մարդով ու Մե-նելաոսը մերժելով քահանայութիւնը ձեռք ձգեց , և սկսաւ անխնայ չարչարել ժողովուր-դը · Բայց քիչ օրէն իմացուելով թէ Անտիոքոս ողջ է , վերստին փախաւ Յասոն . և այսպէս տեղէ տեղ թափառական պանդխտութեան մէջ մեռաւ և քահանայապետութիւնը դարձեալ Մենելաոսի ձեռք անցաւ ․

Անտիոքոս լսելով այս եղածները և համա-րելով թէ Հրեայք ապստամբիլ կ'ուզեն , ուստի յաղթական դարձած ատեն Երուսաղէմի վրայ եկաւ և հազարաւոր մարդիկ ջարդել տալով շատ գերի առաւ . նաև Մենելաոսի առաջնոր-դութեամբը Տաճարին մէջ ինչ որ արծաթ ոսկի և ծանրագին բաներ կային առաւ և Երուսաղէմի վրայ Փիլիպպոս անուն Փռիւգացի մը և Սա-մարիայի կողմերէն ալ Անդրոնիկոս անուն մէ-կը կուսակալ դնելով ետ դարձաւ ։ Հրեայք կուսակալներէն և աւելի ևս Մենելաոսի հարստահարութիւններէն բաւական նեղու-թիւն կը կրէին և ահա եկաւ նաև Ապողոնիոս զօրավարը շատ զօրքով հրամանն առած ըլլալով

Անտիոքոսն որ ամէն չափահաս Հրեայ կոտորէ և մնացեալը գերի վարէ ։ Անիկայ գիտնալով որ Հրեայք շաբաթը տօնը կը պահեն և պատերազմ ալ չեն ըներ , ուստի քանի մը օր սպասելով շաբաթ օր անոնց վերայ յարձակեցաւ և շատ մարդ ջարդեց անոնցմէ ։

6 · Եւ եղաւ որ տարէ յետոյ Անտիոքոս Եպիփան թագաւորը Հրաման հանեց որ Հրեայք իրենց կրօնքը թողուն , և Աթենորիս իշխանը Հրէաստան դրկեց , որ այն Հրամանը գործադրել տայ ։ Անիկայ սկսաւ Երուսաղէմի ու նաև Գարիզին լեռան Սամարացւոց տաճարին մէջ Արամազդայ արձանները դնել ու բոլոր Հրէական տօները արգիլելով ստիպել ժողովուրդը ի կռապաշտութիւն . և չընդունողները ինչ հասակէ և սեռէ ըլլային չարաչար մահուամբ սպաննել կու տար . որով շատերը նահատակուեցան փոխան օրինաց . և շատերն սկսան լեռներու մէջ անձաւ ու անմարդ տեղուանք քաշուիլ ։

7 · Այս տարին հալածանաց ատեն Եղիազար անուն իննսուն տարեկան ծերունի քահանայ մըն ալ բռնեցին և բերանը գայլ դրած կը բռնադատէին խոզու միս ուտել ։ Թէև և շատերը կը յորդորէին զինքը որ գոնէ առ երեւս հնազանդի և յարգէ թագաւորին Հրամանը և քեզի ուրիշ միս կու տանք կ՚ըսէին , բայց այս պատուական ծերունին , «Բաւ լիցի , կ՚ըսէր , որ կեղծաւորութեամբ ուրիշները գայթակղեցընեմ , որ ըսեն թէ Եղիազար մահուան գու-

որ հասած մարդ մը չհամբերեց, և այսպէս վաս անուն մը ձգեց․ ուստի բնաւ չկրցուե-ցաւ թագաւորին հրամանը՝ սիրով յանձն առ ու-նահատակուիլ․ Այս միջոցին Շամունէ անուն կին մըն ալ բռնեցին իր եօթն որդւոցը հետ․ ասոնք ալ նոյնպէս հաւատարիմ մնալով իրենց օրինաց․ ուստի սկսան զանոնքն ալ հետ զհետէ նահատակել չարաչար տանջանօք․ մայրերնուն ներկայութեանը․ որ սիրտ կուտար որպէս զի չըլլայ թէ ուրանան և մահն աւելի ընտրեն քան զուրացութիւնը․ հուսկ յետոյ մայրերնին ալ նահատակեցին, և այսպէս ամէնքն ալ մեռան վասն հայրենի օրինաց և 'ի յոյս յարութեան մեռելոց․

## ԳԼՈՒԽ Բ․

1․ Մակաբայեցիք Մատաթի քահանայն և որդիքը․ 2․ Մատաթիի քաջութիւնները և մահը․ 3․ Անոր որդին Յուդա Մակաբէ և իր քաջութիւնները․ 4․ Յուդա Մակաբէի յաղթութիւնները և տաճարը նորոգելը․ 5․ Անտիոքոսի մահը և Յուդայի յաղթութիւնները․ 6․ Նիկանոր կը յաղթուի Յուդայէն․ և հաշտութիւն կ'ըլլայ․ (Ա․ Մակ․ Բ — Զ․ Բ․ Մակ․ Ը — ԺԴ․)․

1․ Այս սաստիկ հալածումը Հրէից վերայ ծանրացած ատեն և ահա Աստուծոյ այցելութիւնը հասաւ, որ զիրենք ազատէ քաջ ցեղէ մը՝ Մակաբայեցւոց ձեռօք․

Այն օրերը Մատաթի անուն անուանի, կրօնաւէր ու քաջասիրտ քահանայ մը որ իրեն պէս արիասիրտ ու կտրիճ հինգ ալ որդի ունէր․ Յովհաննէս, Շմաւոն, Յուդա (Մակաբէ), Ե-

ղիազար և Յովնաթան ։ Մատաթի այս հալա-
ծանաց առեն իւր որդիքը և ընտանիքը առած
Երուսաղէմէն ելելով Մոդիիմ քաղաքը քա-
շուեր էր ու հոն տեղ կ'արտասուէր ու կը ցա-
ւէր իւր հայրենեաց խեղճութեան և կրօնին
հալածմանը վերայ ։ Իսկ եղաւ որ այն օրերը թա-
գաւորին կողմանէ մարդիկ եկան Մոդիիմ քա-
ղաքն ալ և սկսան ժողովուրդը ստիպել ՚ի կռա-
պաշտութիւն . և բագիններ ու սեղաններ ալ
հաստատեցին ։ Մատաթի մերժելով անոնց հը-
րամայածը յայտնեց որ եթէ բոլոր աշխարհ հը-
նազանդի այն հրամանին , ինքը և որդիքը իրենց
հայրենի օրէնքը չպիտի թողուն ։ Իսկ այն միջո-
ցին Մատաթի տեսաւ որ ուրացող Հրէայ մը հոն
տեղ կուռքին առջեւ զոհ մատուցանելու եկաւ ,
այն ատեն Մատաթի չկրնալով համբերել , և
աստուածային նախանձաւորութեամբ լցուած
ապանէս երբեմն Փենեհէս և Եղիա , յանկարծ
յարձակեցաւ և սպաննեց հոն տեղ թէ զայն
ուրացողը և թէ թագաւորին զօրավարը որ
հոն տեղ էր , և կուռքն ու սեղանն ալ կործա-
նելով սկսաւ բարձրաձայն գոչել թէ՝ « Ով որ
հայրենի օրինաց նախանձն ունի և անոր հաս-
տատութիւնը կ'ուզէ , իմ հետս թող գայ » ։
Այսպէս ինքը և որդիքը և ուրիշ օրինապահ
մարդիկ Մոդիիմէն ելնելով գնացին անապատ
տեղ մը ապաստանեցան ։

Զ. Թշնամիք իմանալով այս բանը , շաբաթ
օր մը յարձակեցան անոնց վերայ և շատ մարդ-

մեռցուցին . այն ատեն Մատաթի խորհուրդ ը-
նելով որոշեց որ եթէ շաբաթ օր ալ իրենց վե-
րայ թշնամիք յարձակին , առանց խղճի պատե-
րազմին վասն օրինաց : Նոյնպէս ուրիշ օրի-
նապահ մարդիկ ալ հետզհետէ սկսան անոր քով
ժողվուիլ . և Մատաթի սկսաւ այս խումբովը
թշնամեաց հետ պատերազմիլ . և մեհեանները
կործանելով . ուրացողները կը պատժէր և հայ-
րենի օրէնքը կը հաստատէր : Նոյնպէս հայրենի
օրինաց սիրոյն համար ազգի 'ի բանին մէջն աշխա-
տելով երբ մեռնելու օրերը մօտեցաւ , կանչեց
իւր որդիքը ու բարեկամքը և շատ ազդու խօս-
քերով յորդորեց որ պատերազմը յառաջ տա-
նին և աստուածպաշտութիւնը վերահաստա-
տեն . և իւր երկրորդ որդին Շմաւոնը իրենց
գլխաւոր և երրորդ որդին Յուդա Մակաբէն ալ
զօրավար դնելով՝ օրհնեց զիրենք . և այսպէս
հիմք դրաւ այն կարիճ ատենին որ Յուդա Մա-
կաբէի անունով Մակաբայեցիք ըսուեցան (3834)
և Մատաթի մեռաւ ու թաղուեցաւ 'ի Մոդիին .
որուն համար բոլոր Հրէաստան սուգ ըրին :

3 . Յուդա Մակաբէ սկսաւ իւր գործերը
շարունակել , և վեց հազարի չափ մարդ հաւաքե-
լով սկսաւ իւր նեղեալ ազգայնոցը օգնութեան
հասնիլ . Թէպէտ և Ապողոնիոս զօրավարը մեծ
բանակով Յուդայի վերայ եկաւ , բայց անիկայ
Աստուծոյ ապաւինելով յաղթեց . և Ապողոնիո-
սն ալ մեռցուց : Այնպէս և երբ ասորին Սե-

րուց հրամանատար Սերոն զօրավարը աւելի մեծ զօրութեամբ Յուդայի վերայ եկաւ . Յուդա անոր ալ յաղթեց , և այս երկու յաղթութեամբ շատ կողոպուտ ձեռք ձգեց . և անունն ալ բոլորտը հռչակուեցաւ . Իսկ Անտիոքոս Եպիփան թագաւորը երբ լսեց Յուդայի ըրածները խիստ բարկացաւ , բայց դրամի ալ մեծ կարօտութիւն ունենալով՝ որոշեց որ ինքը Պարսից կողմը երթայ տուրք ժողվելու համար . և իր տեղը Լիսիաս անուն իշխանը փոխանորդ կարգելով , անոր յանձնեց որ Հրեայքը ջնջէ . Ուստի Լիսիաս քառասուն հազար հետեւակ և եօթն հազար զօրք ղրկեց 'ի Հրէաստան Պտղոմէոս , Նիկանոր և Գորգիաս զօրավարաց ձեռօք . Յուդայի զօրքը տեսնելով անոնց բազմութիւնը բըկըտան վհատին . բայց Յուդա յիշեցնելով անոնց իրենց հարցը ժամանակ Աստուծոյ ըրած մեծամեծ սքանչելիքները և իրենց նախնեաց քաջութիւնները՝ քաջալերեց . և այսպէս ամենն ալ Աստուծոյ ապաւինելով յարձակեցան թըշնամեաց վերայ և անոնցմէ հազարաւոր մարդ կոտորելով՝ մնացեալներն այնպէս հալածեցին , որ Նիկանոր ալ ծառայի մը նման փախչելով ազատուեցաւ . Եւ այս յաղթութեանց աւարներէն շատ բան բաժնեցին աղքատաց Յուդայի առաջնորդութեամբ .

4 . Իսկ Լիւսիաս տրտմելով իր զօրաց պարտութեանը համար , հետեւեալ տարին անձամբ Յուդայի վերայ եկաւ վաթսուն հազար հետե-

ւակ և հինգ հազար հեծելովք ։ Յուդա տասն և մէկ հազար մարդով անոր դէմ ելաւ . և քաջ ու յոյսը Աստուծոյ վերայ դրած յարձակեցաւ , և մեծ յաղթութիւն մը ձեռք բերաւ ։ Այս յաղթութենէ ալ յետոյ Յուդա և եղբարքը և զօրքը Երուսաղէմ գնացին և հոն տեղ բոլոր կռապաշտական բաները ջնջելով Տէրոջը Տաճարը նորոգելու ձեռք զարկին , և այսպէս վերստին հաստատեցաւ աստուածային պաշտամունքը [1] . և ՚ի շնորհակալութիւն Աստուծոյ յաղագս այն յաջողութեանց , տարուէ տարի եօթն օր տօն կատարել որոշեցին ։ Նաև շատ յաղթութիւններ ալ ըրաւ Հրէաստանի շրջակայ ազգաց դէմ , որք Հրէից յաջողութեանցը վերայ նախանձելով անոնց թշնամութիւններ կ՚ընէին , և ասոնցմէ շատ քաղաքներ ալ առաւ ։

5 . Այն միջոցներուս Անտիոքոս Եպիփան թագաւորը Պարսկաստանի կողմէն անյաջողութեամբ դառնալու ատեն ճանապարհին երբ լսեց Հրէից ըրած յաղթութիւնները , շատ բարկացաւ և որոշեց որ Երուսաղէմը հիմնայատակ քանդէ և Հրեայքը բնաջինջ ընէ . ինք այս դիտաւորութիւնը ըրած ատեն և ահա Աստուծոյ դատաստանն ալ իւր վերայ հասաւ . տաոփկ խիթ մը մտաւ փորը . և մինչդեռ կըշտապէր ժամ առաջ իւր տեղը հասնիլ . կառքէն ալ վար ինկաւ և ոսկորները կոտրելով չարաչար

1 . Հրէից այս հալածումը և Տաճարին պղծութիւնը և վերստին սրբութիւնը ճշդիւ գուշակած էր Դանիէլ (Ը . 9 . 14) .

ախտացաւ ։ Նոր վերայ իւր ամբարտաւանու-թենէն խոնարհեցաւ և սկսաւ առաջադրու-թիւն ընել որ Հրէից ազատութիւն տայ, և Երուսաղէմայ Տաճարը շինէ ու զարդարէ ։ բայց իւր զղջումը ճշմարիտ չըլլալուն համար Աստուծ-մէ ազատութիւն չգտաւ, ու այնպէս չարաչար մեռաւ 'ի տար աշխարհ ։ յաջորդեց իրեն որ-դին Անտիոքոս Ե ։ Եւպատոր ինն տարեկան, որուն խնամակալն եղաւ Լիւսիաս, թէ և ա-նոնց հայրը խնամակալ թողած էր զՓիլիպպոս իշ-խանը ։ Այս միջոցին ատրին Նորոյ զօրավար Պտղոմէոսը Հրէից հետ բարեկամութեամբ վարուելուն համար ամբաստանուելով, տեղը Գորգի զօրավարը եղաւ որ քանիցս անգամ Ի-դումնայեցւոց հետ մէկտեղ Հրէաստանի վերայ եկաւ ու յաղթուեցաւ ։ Նոյն Տիմոթէոս զօ-րավարը դարձեալ շատ զօրքով Երուսաղէմի վե-րայ եկաւ ։ Յուդա պահօք և աղօթիւք զԱս-տուած օգնութեան կոչելով յարձակեցաւ անոր վերայ ։ այլ պատերազմին ատեն Յուդայի վե-րայ Աստուծոյ յայտնի պաշտպանութիւնը ե-րեւցաւ ։ քանզի երկինքէն հինգ հոգի երեւցան 'ի գէն ունի փառաւոր, որ զՅուդա շրջապա-տեալ կը պաշտպանէին ։ Այսպէս Յուդա դար-ձեալ յաղթեց թշնամեացն, որոցմէ քսան ու մէկ հազար հոգի մեռան, և Տիմոթէոս որ Գազա-րա քաղաքը փախչելով գուբի մը մէջ պահուը-տեր էր, հոն անդ սպաննուեցաւ ։

6 ։ Սակայն քիչ մը ատենէն Լիւսիաս ութ-

սուն հազար հետևակ և բազմաթիւ հեծելովք դարձեալ Հրէաստանի վերայ եկաւ որ վերջնականն հարուած մի տայ անոնց , ու Բեթսուրայ դէմէն վեց ժամ հեռու իր բանակը դրաւ . Այս տեսնելով Հրեայք սկսան բոլոր սրտով զԱստուած օգնութեան կոչել . Յուդա Մակաբէ իր զօրքերը քաջալերելով թշնամւոյն վերայ յարձակելու ատեն , և ահա տեսան որ այրտակ ձիու մի վերայ հեծած ոսկեղէն զէնքերով սպառազինեալ մէկը իջաւ իրենց առջև և իր նիզակը շարժելով զիրենք կը քաջալերէր . յայնժամ այս Աստուածուստ եկած տեսլեան վերայ աւելի քաջալերուելով յարձակեցան Լիսիայի բանակին վերայ և անոնցմէ տասներկու մարդ կոտորելով մնացեալները ՚ի փախուստ դարձուցին . Այն ատեն Լիւսիա հանդարտեցաւ թէ զերագոյն զօրութիւն մը օգնական է անոնց , որոշեց հաշտութիւն ընել , և այս բանիս համար նաև թագաւորն ալ համոզեց . Միանգամայն Հռոմայեցւոց ալ միջնորդութիւնը վերայ հասաւ , որոնք այն միջոցներուն սկսեր էին զօրանալ և արևելքի մէջ ազդեցութիւն ձեռք բերել . ուստի Անտիոքոս Եւպատոր հրովարտակ մի տալով Հրէից, որով անոնց կրօնից և ամէն իրաւանց ազատութիւնը կը հաստատէր . Թէ և այս կերպով թագաւորին ու Հրէաստանի մէջ խաղաղութեան դաշինք հաստատուեցաւ , բայց շրջակայ երկիրներուն հրամանատարքը և բնակիչքը Հրէից հանդստութիւն

չէին տար. ուստի Յուդա նախ Յոպպէացւոց վերայ յարձակեցաւ, որոնք խաբէութեամբ երկու հարիւր անզէն Հրէայ սպաններ էին, և անոնց քաղաքը առնելով նաւահանգստին մէջի ունեցած նաւերնին ալ այրել տուաւ. նոյնպէս ըրաւ և Յամնեացւոց, անոնց ալ նաւահանգստին նաւերը այրել տուաւ, և այսպէս բոլոր շրջակայ թշնամեաց յաղթեց.

## ԳԼՈՒԽ Գ.

1. Յուդա Մակաբէ Հրէաստանի կառավարող կ'ըլլայ. 2. Դեմետրի Ա. թագաւորելը. և Յուդա Մակաբէի թշնամեաց ըրածները. 3. Նիկանորի և անոր յաղթութիւնը. (Ա. Մակ. Է. Ը. Բ. Մակ. ԺԴ. ԺԵ.).

1. Յուդա Մակաբէ թէև արտաքին թշնամիները քիչ մը հանդարտեցուց, այլ ներքին թշնամիներէն սկսաւ նեղուիլ. վասն զի Սիոնի բերդը դեռ Ասորւոց ձեռքն ըլլալով՝ երբ Յուդա զանիկայ պաշարելու ձեռք զարկաւ և ահա ուրացող Հրէից բազմութիւն մը գնացին թագաւորին Յուդայի դէմ և խնդրեցին որ փութանակի օգնական զօրք ղրկէ իրենց. Անտիոքոս և Լիսիաս որք թէև հաշտութիւն ըրած էին, այլ ասանկ առիթ մը կը փնտռէին, ուստի հարիւր քսան հազար զօրաց մեծ բանակով մը Հրէաստանի վերայ գնացին. իրենց հետ էր և Մենելաւոս որ քահանայապետութիւնը ձեռք անցընել կ'երազէր. Իսկ թագաւորը երբ Լիսիասէն իմացաւ թէ անկից է Հրէաստանի շփոթութեանց բոլոր պատճառը՝ անմիջապէս բռ-

պանծնել տուաւ. և այսպէս մեռաւ անօրէնն և փառն Մենեղաւոս. Իսկ Յուդա ժողովուրդք պաղատելով և բոլորով սրտիւ յԱստուած յուսալով քանի մի անգամ յարձակեցաւ Թագաւորական զօրաց վերայ և շատ մարդ կոտորեց անոնցմէ. այս յարձակմանց ատեն Բեթսուր քաղաքն և Յուդայի եղբայրն Եղիազար. Այս Հրեայք տեսնելով Ասորւոց մեծ զօրութիւնը դարձան յԵրուսաղէմ և հոն ալ ապաստանեցան. և Անտիոքոս ամէն տեղերը առնելով եկաւ ու Երուսաղէմը պաշարեց. Եւ եղաւ որ այս պաշարման ատեն Լիւսիաս լսելով որ իւր հակառակորդը Փիլիպպոս Եգիպտոսէն Անտիոք եկեր է. ուստի հաւանեցուց զԹագաւորը և հաշտութիւն ընել տուաւ Մակաբայեցւոց հետ, և Յուդա Թագաւորին բարեկամներուն կարգը դասուելով բոլոր Հրէաստանի կուսակալութիւնը անոր տրուեցաւ. Թագաւորն ալ Երուսաղէմ մտնելով զոհ մատուցանել տուաւ. Տաճարին մէջ Թէև տեղւոյն ամրութիւնները քանդել տուաւ իր երդմանը դէմ.

2. Այսպէս Անտիոքոս Եւպատոր և Լիւսիաս իշխանը դարձան իրենց տեղը. և Լիւսիաս յաղթեց իր նախանձորդին Փիլիպպոսի. բայց քանի մի տարիէն յետոյ Սելևկոս Դ.ի որդին Դեմետր որ Հռոմ փախած էր եկաւ ու Անտիոքոսի յաղթելով թէ զանիկայ և թէ Լիւսիասը սպաննեց և ինքը թագաւորեց Դեմետրիոս Ա. Սոտեր անունով. Նոր թագաւորութեան

սկիզբնելը Նզկինա որ երբեմն միասու ազգին քահանայապետութեան հետամուտ եղած էր և հարուածոց տակն իւր հայրենի օրէնքը թու֊ լած էր . իւր հետ խել մի անփորձ մարզիկ այ տանելով թագաւորին ներկայացաւ , և քա֊ հանայապետութիւնը ձեռք ձգելու միօք քա֊ կլոսու Ջուղայի վերայ չարափառութիւն ըսել րսելով թէ՝ «Քանի որ անփկայ ողջ է ո՛չ տէրու֊ թիւնը և ոչ Հրէաստան չափածի խաղաղին »։ Թագաւորը հաւատալով այս բանին Նախիջե֊ ւանն մէկը Պարսկաստանի կողմերուն կուսակալ նշանակեց և շատ այ զօրք տուաւ իրեն որ եր֊ թայ Հրէաստան և Նզկինայի հետ հանդերձ զօրքերը կործանէ ։ Նախ նախ և յատուկ Ջուղայի բարեկամներէն մէկ բանին խորհրդա֊ ծեանմը բռնելով ապատանեցին և կ՚ուզէին Ջու֊ ղան այ ձեռք բերել ներկայութեամբ . բայց երբ չյաջողեցան եւ անփկայ սկսաւ պատերազմի պատրաստուիլ , այն տաեն Նզկինա միջամտին զ՚նայ թագաւորին և աւելի եւս անբարտաւանու֊ թիւն ըրաւ Ջուղայի վերայօք , անանկ որ դի֊ րաւորութեան թագաւորը Նախիջեւանի բաւած իշ֊ խանին ձեռօք մեծ բանակ մը ղրկեց Հրէաստա֊ նի վերայ , պատուիրելով որ Ջուղայի բոլոր զօ֊ րութիւնը ջնջէ և Նզկինար քահանայապետ դնէ ։

3. Իսկ Նախիջեւանի Ջուղայի երբոր Ճ մուտ֊ նի հետ մէկ անգամ՝ պատերազմելէ յետոյ խա֊ ղաղութիւն հաստատեց հաշտութիւն ըսել ։ Նզ֊ կինա զայս տեսնելով զ՚նայ Նախիջեւանի հանդէպ

ալ ամբաստանութիւն բերաւ իբր մատնիչ և վնասակար ապստամբներուն, որուն վերայ Թագաւորը շատ բարկանալով հրաման ղրկեց Նիկանորի որ անյապաղ Յուդան բռնէ և կապանօք Անտիոք ղրկէ։ Նիկանոր ստիպուելով այս հրամանը գործադրել, երբ չկրցաւ Յուդան նենգութեամբ ձեռք ձգել, ակամայ պատերազմեցաւ, բայց շատ մարդ կորսնցունելով Սիոնի բերդը փախաւ և հոնկէ ալ Երուսաղէմի տաճարը երթալով քահանայից սպառնացաւ որ Յուդան իրեն յանձնեն. «Եթէ ոչ՝ տաճարը հիմնայատակ քանդելով տեղը մեհեան պիտի շինեմ» ըսաւ. և սկսաւ ամենուն նեղութիւն տալ։ Այս միջոցներուս Երուսաղէմի մէջ Ռազիս անուն աստուածապաշտ և անուանի ծեր մը կար. Նիկանոր ուզելով զանիկայ ձերբակալել՝ հինգ հարիւր զինուոր ղրկեր էր վրան. բայց անիկայ երբ նեղը մնաց ու ելքի լաւ համարելով մեռնիլ քան թէ Նիկանորայ ձեռքը իյնալ, ուստի իր սրովը իր փորը ձեղքելով ինքզինքը սպաննել փորձեց. և մինչդեռ հոգին վրան էր «Տէր, դուն ալ իրեն այսպէս հատուցանես» ըսելով մեռաւ։

4. Այսուհետև Նիկանոր իմանալով թէ Յուդա Սամարիոյի կողմերը զօրք կը ժողովէ, պատերազմի ելաւ շաբաթ օր մը, անարգելով շաբաթի սրբութիւնը որ իր զօրացը մէջ թէեւ եւս ալ հարկի պատուող Հրեայք կ'ուզէին պահել։ Իսկ Յուդա ուրախութեամբ ալ Աստուած

աղօթելով՝ սկսաւ յորդորել իւր զօրքը ՚ի յա-
օգնականութեանն Աստուծոյ հայրն իւրեանց, և իւր տեսած մէկ երազն ալ պատմելով՝ անոնց թէ ինչպէս Աշխեմիա մարգարէն և Ոնիա Գ. քահանայապետը իրենց համար կը միջնորդէին Աստուծոյ և Աշխեմիա ոսկեպատ սուր մը կուտար իրեն որ անով յաղթէ թշնամեաց ։ Ասանցմով քաջալերուելով զօրքերը որոշեցին յարձակիլ թշնամեաց վրայ. և թէպէտ թշնամեաց մեծ զօրութիւնը տեսան այլ չվհատելով աղօթիւք զօրացեալ սկսան պատերազմիլ. և առաջին ճակատամարտին Նիկանոր զարնուեցաւ և զօրքը սկսան ցիր ու ցան փախչիլ. Յուդայեանք ալ անոնց ետևէն իյնալով երեսուն ու հինգ հազար մարդ կոտորեցին և Նիկանորայն գլուխը և աջ ձեռքը Երուսաղէմի պարսպին վրայ կախեցին Յուդայի հրամանաւ. և այս յաղթութեան տօնը ամ՚ ըստ ամէ կատարել սահմանեցին ։

## ԳԼՈՒԽ Դ.

1. Յուդա հռովմայեցւոց հետ դաշինք կ՚ընէ ։ 2. Յուդայի մահը ։ 3. Յովնաթանու յաջողութիւնք ։ 4. Յովնաթանու փառքը ։ 5. Յովնաթանու յաղթութիւնք. (Ա. Մ. 4. Թ. ԺԱ.) ։

1. Այս յաղթութեամբ խաղաղեցաւ Հրէաստան քիչ մը ատեն, Յուդա միջոց ունեցաւ ու պատգամաւորութիւն մը ղրկեց Հռովմայեցւոց որոց համբաւը օրէ օր կը տարածուէր. անոնք ՚ներկայանալով անոնց ծերակուտին Յուդայ Մակաբէի եղբարց և անուն

Հրէաստանեայց կողմանէ խնդրեցին իւրեանց բարեկամութիւնը . Հռովմայեցիք հաճելով այն առաջարկութեան , դաշինք դրին որ իւրեանց պաշտպանութիւն ընեն , և Դեմետր թագաւորին ալ գրեցին որ Հրեայքը չնեղէ .

2 . Սակայն Դեմետր լսելով Ալկիմոսայ պաշտօնին և մահը վերստին մեծ բանակ մը ղրկեց Հրէաստանի վրայ Բակքիդի և Ալկիմոսի ձեռօք . իսկ Յուդայի քաջ քիչուոր զօրքը տեսնելով թշնամեաց մեծ բազմութիւնը՝ այս անգամ վհատեցան և շատերը փախչելով միայն ութն հարիւր հոգի մնացին , որոնք ալ կը յորդորէին որ կենալ մինչև որ բաւական զօրք ժողվուին . Բայց անձնուէրն Յուդա համարձակեցաւ այնչափ զօրք թշնամեաց վրայ յարձակել և մինչև երեկոյ պատերազմելով անոնց բանակին աջ թևին յաղթեց . իսկ ձախ թևը եւրին մնալով եկան զինքը պաշարեցին . ուր անեղ տեսակ կռուէ մը յետոյ զարնուեցաւ ու փառաւոր մահուամբ մեռաւ ՚ի վերայ հայրենի օրինաց վեց տարի իշխանութիւն վարելէ ետքը . և մնացեալ անկարաւոր զօրքերը փախան . Իսկ եղբարքը Շմաւոն և Յովնաթան անոր մարմինը վերցուցին և իւրեանց նախնեաց շիրմին մէջ թաղեցին ՚ի Մոդիին , որուն վրայ բոլոր Իսրայէլ մեծ սուգ ըրին .

3 . Նոյնհետև ժողովուրդը Յովնաթանը իւրեանց քահանայապետ և առաջնորդ ընտրեցին, որ Բաքքիդի հալածումներէն ազատուեցաւ իր

զօրացը հետ անապատ տեղ մը քաշուեցաւ. Թէ և Տրիփոն քանիցս անգամ Յովնաթանու և Շմաւոնի վերայ յարձակեցաւ և անգամ մը Շմաւոնի որդին Յովհաննէս որ նենգութեամբ ձեռք ձգելով սպաննեց զանիկայ. բայց չկրցաւ Յովնաթանը նուաճել, որ իւր եղբօրորդւոյն վրէժն առ հանելու Տրիփոնի վերայ յարձակելով ու շատ մարդ մեռցնելով. Իսկ Աղեքսան պատեհ առիթ գտնելով քահանայապետութիւնը ձեռք ձգեց, բայց տարին մը այս պաշտօնը վարելէ ետքը, մեծ տանջանօք և հիւանդութեամբ մեռաւ. Այս մեռնելէն յետոյ Տրիփոն ալ քանի մը անգամ զարնուելով Յովնաթանու հետ, վերջապէս հաշտութիւն բրաւ և դարձաւ յԱնտիոք. Եւ ասով Հրէաստանը խաղաղելով Յովնաթան ալ Սիոնի քաղաքին մէջ սկսաւ բնակիլ. վասն զի Երուսաղէմի բերդը Սիոն դեռ Դեմետրի զօրաց ձեռքն էր.

4. Այս միջոցներուս Անտիոքոս Ե. ի որդին Աղեքսանդրոս Բաղաս Հռովմէացւոց օգնութիւն գտնելով, եկաւ Պտղոմայիս (Ակքա) քաղաքը առաւ և հոն տեղ թագաւորեց. Դեմետր իւր այս նեղութեան միջոցին Յովնաթանու բարեկամութիւնը առնալ ուզելով իւր զօրքերը Հրէաստանի ամրոցներէն հանեց և այլ ուրիշ արտօնութիւններ խոստացաւ անոր. Սակայն Յովնաթան Դեմետրի վերայ շատ չվստահելով երբ Երուսաղէմը ամրացոյց Աղեքսանդրոս կողմը բռնեց որն որ զինքը իրեն թա-

գաւառական ծիրանի. Այնու հետեւ Աղեքսանդր մեծ պատերազմ ընելով Դեմետրի հետ՝ յաղթեց, ուր եւ Դեմետր Ա. սպաննուելով Աղեքսանդր Ա. առաւ թագաւորութիւնը. Անիկայ ուզելով Եգիպտացւոց թագաւոր Պտղոմէոս Զ.ի հետ բարեկամանալ, անոր աղջիկը Կղէոպատրան կինն կին առաւ. եւ այս հարսնեաց Յոնաթան ալ հրաւիրուելով մեծ պատիւ գտաւ նոյն երկու թագաւորներէն.

5. Անկէց տասն մը ետքը Ա. Դեմետրի որդին Դեմետրիոս Բ. Նիկատոր եկաւ որ իւր հօրը թագաւորութիւնը ձեռք ձգէ. եւ եկաւ Անտիոք քաղաքն ալ առաւ. եւ Յոնաթանու դէմ ոխ պահած ըլլալով իւր հօրը մերժած ընկերուն համար, իւր Ապողոնիոս զօրավարը շատ զօրօք Հրէաստանի վրայ ղրկեց. Յոնաթան ալ անոնց դէմ ելլելով շատ մարդ ջարդեց մնացածները որ փախչելով Ազովտոսի մէջ Դագոնայ տաճարին մէջ ապաստանած էին, հոն ալ այրեց եւ յաղթանակաւ Երուսաղէմ դարձաւ: Յոնաթանու այս բանը շատ հաճելի ըլլալով Աղեքսանդրի, թագաւորական նշան եւ պարգեւ ղրկեց անոր եւ իշխանութեան սահմանն ալ ընդարձակեց. Սակայն Դեմետր բաւական կուսակցութիւն գտնելով կը զօրանար, ուստի Աղեքսանդր իւր աները Պտղոմէոսը օգնութեան կանչեց իրեն. Բայց անիկայ եկաւ եւ Աղեքսանդրի դէմ իւր աներութիւնը ցուցնելով Դեմետրի կողմն անցաւ եւ իւր աղջիկը Աղեք-

անդրէն առնելով Պտղոմէոսի տուաւ, և անոր հետ միաբանելով յաղթեցին Աղէքսանդրու որ փախչելու ատեն սպաննուեցաւ. Թէ և Պտղոմէոս ալ նոյն պատերազմին մէջ առած վէրքէն մեռաւ.

## ԳԼՈՒԽ Ե.

1. Յովնաթանու իշխանութեան միջոցները. 2. Անոր մահը և Շմաւոնի յաջորդութիւնը. 3. Ասիոյ բերդին Շմաւոնի յանձնուիլը. և անոր յաջողութիւնները. 4. Շմաւոնի որդւոց յաղթութիւնները. 5. Անոր մահը և որդւոյն Յովհաննու յաջորդութիւնը. (Ա. Մկ. ԺԱ. ԺԶ.).

1. Հրէաստան թէ և Սելեւկացւոց իշխանութեանը հնազանդեցաւ, այլ դեռ շատ բերդերը Ասորւոց զինուորներուն ձեռքն էր. այս անդամ երբ Պտղոմէոսի Բ. ըսեց որ Յովնաթան Ասիոյ բերդը պաշարել սկսեր է, դաշինք դրաւ անոր հետ որ Հրէաստանի բերդերէն իր զօրքերը հանէ, և Յովնաթանու իշխանութեան սահմանը աւելի ևս մեծցուց. որոյ փոխարէն Յովնաթան երեք հարիւր քանքար արծաթ և երեք հազար մարդ տալ խոստացաւ, որոյ միջոցաւ զօրեց Պտղոմէոս Տրիփոն իշխանին ձեռքով Անտիոքի մէջ եղած խռովութիւնը. բայց իր խոստումը որ ձգելով չէր ուզեր կատարել. Այս պատճառաւ երբ ի վերջոյ յաջողեցաւ Տրիփոն Աղէքսանդր Բալի մանուկ որդին Անտիոքոս Զ. Թէոսը թագաւորեցնել, յայտնած և Յովնաթան անոր կողմը անցաւ, որ պէտքը Հրէից իշխան ճանչնալով թագաւորական ընծաներ ղրկեց և անոր Շմաւոն եղբայ-

րին այլ ծովեզերեայ կողմանց կուսակալ գրաւ , որոյ փոխարէն և Յովնաթան ձեռնտու եղաւ իւրն Դեմետրիոսը նուաճելու համար ։ Այն միջոցներուն Յովնաթան իւր եղբօրը Յուդայի տանէն Հռոմայեցւոց հետ և Ոնիա Ա.ի տանէն Սպարտացւոց հետ եղած դաշնադրութիւնները նորոգեց ։

2 . Այսպէս Տրիփոն որ Անտիոքոս Զ. մանուկ թագաւորը մեռցնելով ինքը թագաւորել կ'ուզէր , տակայն Յովնաթանէն ակնածելով չէր համարձակեր , ուստի որոշեց նախ Յովնաթանի կեանքը վերցնել , ուստի զանիկայ խաբէութեամբ Պտղոմայիս քաղաքը բերաւ և հոն ալ զանիկայ ձերբակալ բրաւ ։ Այս դէպքին վրայ Շմաւոն փութացաւ Երուսաղէմ գալ և ժողովրդեան սիրտ տալով մխիթարեց , որոնք զինքը Յովնաթանի յաջորդ ընտրեցին ։ Շմաւոն անմիջապէս պաշտպանողական միջոցներ ձեռք առնելով նաև Յոպպէի նաւահանգիստն ալ գրաւեց . իսկ Տրիփոն որ կ'ուզէր Հրէաստանի վերայ ելնել , երբ լսեց Շմաւոնի պատրաստ ըլլալը և բրած պատրաստութիւնները , պատգամաւոր զրկեց ըսելով թէ « Յովնաթան հարիւր քանքար պարտք ունի , այն դրամը և անոր երկու որդիքը պատանդ զրկեցէք որ զինքը թող տամ » ։ Շմաւոն ուզելով որ թերեւս իւր եղբայրը անվնաս ազատէ , ընդունեց նոյն պայմանները . սակայն Տրիփոն ոչ միայն Յովնաթանը չթողուց , այլ և թէ Յովնաթանը և թէ որդի-

քըն սպաննեց։ Իսկ Շմաւոն իւր եղբօրը մարմինը Մոդիմ բերել տալով իւր հօրը գերեզմանը ամփոփեց և մեծապատւ գեղեցիկ շիրիմ մը կանգնեց. և Յովնաթան իշխեց տասնեւութ տարի։

3. Շմաւոն Տրիփոնի անգթութիւններն զզուելով՝ պատրաստակամութիւն ցուցեց Դեմետրիոս Բ.ին, որուն ձեռքն էր Ասորւոց երկիրը։ Դեմետր Բ. Շմաւոնի հետ դաշնադրութիւն ըրաւ որ Շմաւոն ազգապետ իշխան ըլլայ Հրէաստանի առանց հարկ տալու։ Քիչ մը ատենէն Ասորւոց զօրքերը բերդն ալ յանձնեցին Շմաւոնի. և անկից հետ տեղը ամեն կռապաշտական բաներէն մաքրելով բոլոր ժողովուրդին հետ ուրախութեամբ, տօնակք արփեն եեաց և 'ի ձայն նուագաց ներս մտաւ և հաստատեց որ տարուէ տարի տօն կատարուի այն օրը 'ի յիշատակ կատարեալ ազատութեան Հրէաստանի (3858)։ Անկէ ետքը այն բերդը և աւելի ամրացնելով իրեն իւր ամփոփական գունդովը հետ սկսաւ բնակիլ և իւր որդին Յովհաննն ալ զօրավար դրաւ։ Այսուհետև սկսաւ երկրին բարեկարգութեանը հոգ տանիլ։ Հռովմայեցիք և Սպարտացիք ալ ըսելով Յովնաթանու մահը ցաւեր էին, Շմաւոնի յաջորդութիւնը լսելով ուրախացան. ուստի Շմաւոն փոյթ տարաւ անոնց հետ եղած բարեկամութիւնը նորոգել. և անոնք ալ զինքը Հրէից ժողովրդական իշխան և քահանայապետ ճանչցան, այն որոշումները պղնձի տախտակներու

վերայ գրելով Երուսաղէմ ղրկեցին որ Տաճա-
րին մէջ պահուեցաւ ։ Իսկ Դեմետրիոս Բ.
Պարթեւաց վերայ պատերազմի երթալով անոնց
ձեռքը գերի իյնալուն համար իր կինը Կղէո-
պատրա անոր եղբօր Սիդեայի Անտիոքայ հետ
ամուսնացաւ, որպէս զի Տրիփոնի դէմ իրեն
օգնական ըլլայ ։ Այն Անտիոքոս ուզելով որ Շը-
մաւոն իրեն բարեկամ մնայ, անոր անձին ի-
րաւունքները հաստատեց զատ նաեւ դրամ կըտ-
րելու իշխանութիւն տուաւ անոր ։

4. Իսկ երբ որ Անտիոքոս յաջողութիւն
գտաւ ու Տրիփոնի յաղթեց, զլացաւ Շմաւո-
նի տուած պարգեւութեանցը վերայ, ու անոր ու-
նոր ղրկած օգնական զօրքերը մերժելով իր
բարեկամն Աթենոբիոս Երուսաղէմ ղրկեց
պատուիրելով, որ Հրէաստանէն դուրս Շմա-
ւոնի առած քաղաքներուն տուրքը և նախնի-
թաց տարիներուն համար ալ տուրքը պահանջէ ։
Իսկ Շմաւոն համարձակ ու կտրուկ պատաս-
խան մը տալով ճամբեց զանիկայ, միայն Յոպ-
պէ ու Գազարա քաղաքներուն համար տուրք
տալ յանձնելով ։ Ասոր վրայ Անտիոքոս բար-
կացած Կենդեբեոս զօրավարին ձեռքը շատ
զօրք ղրկեց Հրէաստանի վերայ ․ բայց Շմաւոնի
որդիքը Յուդա և Յովհան քանի հազար մար-
դով անոնց դէմ երթալով յաղթեցին ու փա-
խուցին և անոնցմէ երկու հազար հոգի ալ՝ որ
Ազոտի բերդերուն մէջ ապաստաներ էին՝ հոն
այրեցին ։ Այսուհետեւ երեք տարի ատեն

մը երկիրը խաղաղեցաւ , վասն զի Անտիոքոս Հռովմայեցւոցմէ ալ կը փախնար որ միանգամ յայտնեցին թէ իրենք Հրէից բարեկամն են ու պաշտպանը .

5. Այսու հետեւ Շմաւոն իր ծերութեան ատենը Հրէաստանի այլ և այլ կողմերը կը շրջէր և աչքէ կ'անցրնէր . Անգամ մըն ալ այսպէս իր որդւոցը հետ Երիքով գնաց իր փեսային Արաբեանց Պտղոմէոսի տունը . Աս ալ իր աներոջ իշխանութեանը աչք ունենալով , երբ անոնք կերակուրի ատեն զուարթացած էին , յանկարծ իր պատրաստած մարդիկներովը յարձակեցաւ և Շմաւոնը , անոր որդիքը և ծառայքը սպաննեց . և անմիջապէս Անտիոքոսի լուր ղրկեց որ իրեն օգնութիւն հասցրնէ , որպէս զի Հրէաստանը Ասորւոց ձեռքէն առնէ . նաև Գազարա քաղաքն ալ մարդիկ ղրկեց որ Շմաւոնի կրտսեր որդին Յովհանն ալ հոն սպաննեն. Բայց Յովհան այս եղածները իմացած ըլլալով նոյն եկողները բռնեց սպաննեց և իր հօրը քահանայապետութեան և իշխանութեան ինք յաջորդեց . Այսպէս մեռաւ Շմաւոն որ մեծանձն էր թէ ՚ի խաղաղութեան՝ և թէ ՚ի պատերազմի . իր բոլոր իշխանութեան ատեն հայրենասէր խնամքով զժողովուրդը և պաշտպանեց անոնց ամեն թշնամիներէ . և Ասորւոց ձեռքէն եղած Հրէաստանի ազատութիւնը ամբողջապէս ՚ի գլուխ եկաւ իր օրովը . (Հաւանեալ կը լինի Ասորւոց պատմութիւնը) .

# ԳԼՈՒԽ Դ.

## ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Փարիսեցիք և Սադուկեցիք. 2. Յովհաննէս Հիրկանոս 3. Արիստաբուղոս Ա. Թագաւոր. 4. Աղեքսանդրոս Ա. 5. Սաղոմէ թագուհի. Հիրկանոս և Արիստաբուղոս Բ. 6. Հիրկանոս վերստին, և Աղեքսանդրոս Բ. 7. Անտիգոնոս Բ. 8. Հերովդէս մեծն. 9. Լրումն ժամանակի.

1. Այն միջոցներուն Հրէից մէջ քանի մը աղանդներ սկսեր էին տարածուիլ. Ա. Փարիսեցիք, որոց աղանդը Մակաբայեցւոց առաջին օրերէն գրեթէ սկսած էր։ Ասոնք թէ սուրբ գրքերը և թէ բերնի աւանդութիւնները միանգամայն կ'ընդունէին, թէև ասոնց մէջ շատ մըն ալ մտացածին բաներ խառնելով բուն հաճոյ մեկնութիւններ կու տային. Ասոնք օրինաց արտաքին պահպանութեանց մէջ ալ շատ նախանձաւոր ըլլալով՝ ժողովուրդը միշտ իրենց կողմն ունէին. Բ. Սադուկեցիք բոլորովին հակառակն էին փարիսեցւոց. կ'ընդունէին միայն Մովսէսի հինգ գրքերը. մեռելոց յարութիւնը ու յաւիտենական հատուցումն ալ չէին ընդուներ. Այս աղանդը ժողովրդեան ընդունելի չէր և ունելի ազգուներաց մէջ հետևողներ ունէր. Այս երկու հերձուածներն ալ հետզհետէ իրարու հակառակ քաղաքական կուսակցութեան փոխուեցան և շատ երկպառակութեան ու վնաս պատճառեցին ազգին. Գ. Էսսեայք, որոնք խստակրօն կեանքը նախամեծար կը համա-

րէին և Սալիական օրէնքները աւելի բարձրագոյն մասը կ'ընդունէին, և իրենք հանդարտ ու բարեբարոյ ընթացով ոչ որի հակառակ կուսակցութիւն մը չունէին.

2. Շմաւոնի մեռնելէն յետոյ երբ անոր որդին Յուստինիանոս Ձիւբերիոս յաջորդեց, Նարսէս Ե. եկաւ ու Մրատագէմը պաշտպանեց, բայց վերջէն հաշտութիւն ընելով դարձաւ. Այնուհետեւ Յուստինիանոս Նարսէսի հետ Պարսից դէմ պատերազմի ալ գնաց, բայց հոն ալ Նարսէս մեռնելով իրին ալ դարձաւ. Մրատագէմ և սպառ չորքակոյ ազգերէն շատ քաղաքներ առնել. Ամալասունթա տաձարը և Ամալիա քաղաքն ալ քանդեց, յաղթելով նաեւ Ներսանդր Թ. Ի., որ կուզէր պաշտպանել ըզԱմալիան. Նորաձայնեցւոց ալ յաղթելով առիւեց գանձեր հրէական ազգին խառնուելով. Նորաձայնեցւոց հետ դաշնագրութիւնները նորոգեց. Այսուհետեւ խաղաղութեամբ իր իշխանութիւնը վարեց և մեռաւ քանի մը թուն ատրի իշխելէ ետքը. իրեն յաջորդեց որդին Արիստարքոս Ա.

3. Արիստարքոս Ա. Թագաւորութեան պատուանին ալ առնելով՝ իր եղբայրներէն մէկը Նարիգոնոս Ա. իրեն իշխանակից ըրաւ, իսկ միւսները արգելքի տակ պահեց. Նոյնպէս և իր մօրը բանտը դնել տուաւ, ուր անոր և մեռաւ, քանզի իր հայրը Յուստինիանոս անոր էր յանձնած տէրութեան առաջնորդութիւնը.

Արիստոբուղոս անգամ մը երբ Իտուրացւոց վրայ ըրած պատերազմէն յաղթութեամբ եւ դարձաւ իր Անտիգոնոս եղբայրն ալ մեռցընել տուաւ կասկածի մը համար, և ինքն ալ մէկ տարի թագաւորելով մեռաւ. Եւ քանզի որդի չունէր, իր կինը Սողոմէ իր տագրը զԱղեքսանդրոս Ա. բանտէն հանել տալով թագաւոր գրաւ և անոր հետ ամուսնացաւ.

4. Անիկայ թէեւ յաղթութիւններ՝ ըրաւ արտաքին թշնամեաց դէմ, բայց իր թագաւորութեանը մէջ խռովութիւններ շատ եղան և ինքն ալ շատ արիւնհեղութիւն ընելով ատելի եղաւ ամենուն. ուստի իրեն դէմ ապստամբութիւն մը ծագեցաւ զոր թերեւս և փարիսեցիք ալ գրգռեցին, և այս խռովութիւնը քանի մը տարի տեւեց. Աղեքսանդրոս հակառակորդները թէպէտ և Սելեւկեանցմէ օգնական զօրք բերել տուին իրեն դէմ, բայց վերջապէս անիկայ զօրացաւ և իր հակառակորդներէն շատ մարդ մեռցուց չարչարանօք, և այնպէս ճնշեց զանոնք. Այնուհետեւ ինքզինքը արբեցութեան տուաւ և երեք տարի հիւանդութիւն քաշելով մեռաւ, քսան եօթը տարի թագաւորելով. իր որդիքը փոքր ըլլալուն թագաւորութիւնը իր կնոջը Սողոմէի յանձնեց խրատելով որ փարիսեցւոց կողմն անցնի, որպէս զի իր իշխանութիւնը հաստատ ըլլայ.

5. Սողոմէ թագուհին քահանայապետութիւնը իր որդւոյն Հիւրկանոսին յանձնեց և

ենք տարի իշխանութիւն վարելով մեռաւ, թագաւորութիւնն ալ Հիւրկանոսի թողելով։ Բայց անկից երեք տարի թագաւորելէ ետքը իր եղբայրը Արիստաբուլոս Բ. յաղթեց անոր և ինքն առաւ թագաւորութիւնը.

6. Բայց Արիստաբուլոսի հակառակորդները որք գլխաւորապէս փարիսեցիք էին, գրգռեցին Հիւրկանոսը իր եղբօր դէմ որ Արաբացւոցմէ օգնութիւն առնելով եղբօրը վրայ եկաւ և զանիկայ վանեց. ուստի անիկայ ալ Հռոմայեցւոց դիմեց։ Վերջապէս ատոնց մէջը Հռոմայեցւոց Պոմպէոս զօրավարին իրաւարարութեանը յանձնուեցաւ, որ տեսնելով թէ Արիստաբուլոս իր միտքը չպիտի ընդունի, եկաւ Երուսաղէմ առաւ, և Հիւրկանոսը իր իշխանութեանը մէջ հաստատելով, երկրին վրայ ալ տուրք դրեց. և տուրքերը ժողվելու համար Եդոմայեցի Անտիպատրոս անուն իշխանը վերակացու դրաւ. և Արիստաբուլոս հինգ տարի թագաւորելէ ետքը իր որդւոց Աղեքսանդրոսի և Անտիգոնոսի հետ Հռոմ տարուեցաւ. Այսպէս Հրէաստանի ազատութիւնը որ այս երկրորդ անգամ այնչափ կտրիճ մարդոց արեամբը և մեծ զոհողութիւններաւ ձեռք բերուած էր, վերստին կորսուեցաւ երկու եղբարց գժտութեամբ որ արծարծեցաւ քաղաքական և կրօնական կուսակցութեանց երկպառակութեամբ, և նաև օտար միջամ-

տութեամբ [1]. և Հիւրկանոս այնուհետև ոչ իբր Թագաւոր, այլ իբր հարկատու իշխան մի էր Հռոմէացւոց, և անոնց գործակալներուն ազդեցութեան ներքև ընկճուած. Քանի մը տարիէն ետև Արիստոբուլոս Բ. և որդին Աղեքսանդրոս Բ. Հրէաստան եկան և շատ աշխատեցան վերստին ձեռք բերել թէ իրենց իշխանութիւնը և թէ ազատութիւնը. և Աղեքսանդրոս Բ. կցաւ տարիի մը շատ ալ յաջողիլ, բայց վերջապէս չկրցան ի գլուխ հանել և երկուքն ալ սպաննուեցան Հռոմէացւոց կուսակցութեամբ ձեռօք.

7. Այսուհետև Արիստոբուլոս Բ. ի միւս որդին Անտիգոնոս Բ. Հռոմէն գալով Հայոց Տիգրան Թագաւորին մեծ զօրավար Բարզափրան իշխանին օգնութեամբ գիտեց. անիկայ ալ Կընել աշխարհին զօրք առաւ Երուսաղէմ գընաց որ եկաւ Հիւրկանոսը փախ տուաւ ու Բարզափրան իշխանին գնաց. (ուր ասոր Անտիգոնոս անոր ականջները կտրել տուաւ որ մէկ մըն ալ քահանայապետ չկրնայ ըլլալ.) և Անտիպատրոս իշխանի որդւոյն Հերովդէսի ալ յաղթելով Հիւրկանոսի առնելով հարստութիւնն ալ առաւ, և անոր կողմնակից եղող քաղաքներն ալ

1. Երկիր մը կամ ժողովուրդ երբ իւր ներքին երկպառակութեանց համար օտար միջամտութեան կը դիմէ, առէն կը վնասուի. քանզի միջամտութիւն ընողը առաջ իւր շահը կը նայի քան թէ անոր. Տես Յունաց և Եգիպտոսի վէճերը և Եւրոպացւոց միջամտութիւնը և հետևանքները. որոնց օրինակը շատ ազգաց պատմութեան մէջ ալ կայ.

տապաստակերով եւ դարձաւ. եւ այսպէս Անտիգոնոս Բ. թագաւորեց. Իսկ Հիւրկանոս քսանու հինգ ամի իշխանութիւն վարելէ ետքը Բարզափրան իշխանի ձեռօք գերի գնաց ի Հայաստան, ինչպէս ուրիշ շատ Հրեայք ալ տարուեցան իր հետ, որոց համար մանաւանդ տեղ տրուեցաւ անոնց ի բնակութիւն եւ շատ հանգիստ էին հոն. Իսկ Հերովդէս այն ազատութենէն ետքը ընտանեօք Հռովմ փախաւ. Ինքը արդէն Հրէաստանի մէջ մեծ ազդեցութիւն ձեռք բերած եւ Հռովմայեցւոց զօրավարներուն բարեկամութիւնը գրաւած էր. յաջողեցաւ հաճելու զՀռովմայեցիքը եւ այսպէս բոլոր Հրէաստանի թագաւորութիւնը առաւ, եւ անոնց օգնականութեամբը եկաւ Հրէաստանի վերայ ու երկար պաշարումէ մը ետքը Երուսաղէմն ալ առաւ. եւ Անտիգոնոս Բ. որ Հռովմայեցւոց զօրավարին անձնատուր եղաւ, Հերովդէսի թելադրութեամբ սպաննուեցաւ երեք ամի թագաւորելէ ետքը։

8. Հերովդէս մեծն Օգոստոսի սրտի քաջութեան հաստատամտութեան եւ ուրիշ ձիրքերու տէր էր, այլ զարմանք գրեթէ միշտ իր փառասիրութեան եւ օգտին համար գործածեց. շատ արիւնհեղութիւններ բրաւ. Մակաբայեցւոց ցեղէն բոլոր մնացորդները սպաննեց. իր կինը Մարիամնէն որ Հիւրկանոս Բ.ի աղջիկն էր եւ Արիստոբուլոս Գ. քահանայապետը նաեւ ութսնամեայ ծերունին Հիւրկանոսը զոր

Հայաստանէն բերել տուած էր մէկ մէկ պատ-ճառով ազատել տալու և Նայել անուն մէկը բազմաշխատասիրաւ գրով. Իր ընտանեաց մէջէն ալ խառնակութիւնները պակաս չեղան ա-ռաջ իւր երկու որդիքն ալ մեռցնել տալու. Երբ որ բուն Հրէայ չըլլալուն համար Հրէից ատելի էր այս անգթութիւններովը, եւս առա-ւել գրգռելի եղաւ անոնց. Ասոր Հռովմայե-ցւոց համակրութիւնը աւելի եւս գրաւելու համար սկսաւ Հռովմէական սովորութիւններ մտցնել Հրէաստանի մէջ, որով ժողովուրդը սկսան դառնացութիւններ ընել իրեն դէմ. Իր ըրածներուն աղէկ կողմը միայն սանք են, որ քանի մը քաղաքներ շինեց ու յաղթութիւն-ներ ըրաւ. և ի պարծանս անձին և ի շնորհս Հրէից Երուսաղէմայ տաճարին վերայ շատ մեծ նորոգութիւններ ու շինութիւններ ըրաւ որ քառասուն տարիէ աւելի տեւեց և իր մա-հուընէն ետքը լմնցաւ. Իր մահուընէն յետոյ տէ-րութիւնը որդւոցը մէջ բաժանեցաւ, և վեր-ջապէս բոլորովին Հռովմայեցւոց ձեռքն անցաւ.

9. Արդ՝ մինչդեռ թէ Հրէաստան՝ այն կա-թէն ու մեղր բղխող երկիրը և անոր բնակիչքը Աբրահամու. Իսահակայ և Յակոբի որդիքը և թէ աշխարհի բոլոր ազգերն ու երկիրները բա-րոյական և քաղաքական այնպիսի կացութեան մը հասած էին, որ օրդէն կը գուշակուէր թէ Հրէից և Հեթանոսաց ակնկալութիւնն եղող խոստացեալ Մեսիային գալու օրերը մօտեցած

են ։ Եւ արդարեւ աչաց լուցած էր այն նախասահմանեալ ժամանակը , յորում Յեսսէի բանէն ըղձած Շառաւիղին խաղաղ թագաւորութիւնը գալով՝ գայլը եւ գառնուկը ՚ի միասին պիտի ճարակէին առանց խրտչելու միմեանցմէ , եւ բոլոր երկիր Տէրոջը գիտութեամբը պիտի լեցուէր ։ մօտեցած էր այն օրը զոր Աստուած շատ կերպով եւ օրինակներով կանխաւ խօսած էր մարգարէից միջոցաւ ։ այն փրկութեան օրը զոր նախաստեղծ մարդէն ՚ի վեր այնչափ նահապետք եւ թագաւորք , մարգարէք եւ իմաստունք ցանկացած էին տեսանել ։ այն երջանիկ օրը , յորում Բանն՝ Որդին Աստուծոյ , անոր փառաց Լոյսը եւ Էութեան Պատկերը՝ Որդին Յիսուս մարմնանալով ։ եւ իբրեւ հովիւ քաջ անձը իւր հօտին վերայ դնելով ։ բոլոր մարդկութիւնը Հօր Աստուծոյ որդեգրութեանը պիտի հրաւիրէր ։ Բայց նախ իւր Կարապետը զրկեց որ Եղիայի հոգւոյն եւ զօրութեամբը նախընթաց ըլլայ իրեն , եւ իրեն ճամբաները հարթէ ու պատրաստէ ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ԳԼՈՒԽ Ա.

*1 · Զաքարիա քահանայի տեսիլքը · 2 · Աւետումն առ Կոյսն · 3 · Այցելութիւն Նորա առ Եղիսաբեթ · 4 · Ծնունդ Յովհաննու Մկրտչի · 5 · Հայր Յովսէփ · (Ղուկ · Ա · 1—30 · Մատ · Ա · 1—20)·*

1 · Հրեաստանի Հերովդէս թագաւորին երեսուն ու հինգերորդ տարին, Ահարոնի ցեղէն Զաքարիա անուն քահանայ մը կար որ իր կնոջը Եղիսաբեթի հետ արդարութեամբ ծերացած, և անոր ամլութեանը համար զաւակ ալ չէր ունեցած ։ Անիկայ իր պաշտօնին կարգին համեմատ երբ Տէրոջը տաճարը մտած էր խնկարկելու, և ահա Տէրոջը հրեշտակը երեցաւ իրեն՝ խունկի սեղանին աջ կողմը · զոր երբ տեսաւ Զաքարիա, խիստ վախցաւ · բայց հրեշտակը ըսաւ · "Մի՛ վախնար, քու աղօթքդ լըսուեցաւ, և կինդ որդի մը պիտի ծնանի ու անունը Յովհաննէս՝ դնես, որ քեզի և շատերուն ուրախութեան պատճառ և Տէրոջը առ-

1 Ընթերցք Տեառն ,

ջև մեծ պիտի ըլլայ․ գինի և օղի չխմէ, և յոր-վայնէ մօր սուրբ Հոգւով պիտի լեցուի . . . »։ Եւ երբ Զաքարիա տարակուսեցաւ իր ծեր ըլլալուն համար, հրեշտակն ըսաւ․ « Ես եմ Գաբրիէլ, որ Աստուծմէ ղրկուեցայ այս աւե-տիսը բերել քեզի, բայց դուն չհաւատալուդ համար՝ համր պիտի ըլլաս մինչև որ կատարուի ըսածս »։ Եւ անմիջապէս Զաքարիայի լեզուն կապուեցաւ։ Ժողովուրդը տեսնելով անոր խո-րանին ներսը ուշանալը և համրութիւնը, իմա-ցան որ տեսիլ մը տեսած է։ Եւ երբ անոր պաշտօնին օրերը լմնցան՝ իր տունը գնաց, և անոր կինը Եղիսաբեթ յղացաւ, ու փառք կու-տար Աստուծոյ։

2․ Այս բաներէն վեց ամիս ետքը՝ Գաբրիէլ հրեշտակը Աստուծոյ կողմանէ ղրկուեցաւ Գա-լիլեայի Նազարէթ քաղաքը սուրբ Կոյսին Մարիամու, որ նշանուած էր Դաւթի տունէն Յովսէփ անուն այր մէկուն, ինքն ալ Դաւ-թի տունէն ըլլալով։ Եւ հրեշտակը անոր գա-լով ըսաւ․ « Ուրախ լեր բերկրեալդ․ Տէր ընդ քեզ »։ Մարիամ երբ այս խօսքը լսելով այլայ-լեցաւ, հրեշտակն ըսաւ․ « Մի՛ վախնար, Մա-րիամ, ինչու որ Աստուծմէ շնորհ գտար․ և ա-հա պիտի յղանաս ու որդի մը ծնանիս, և ա-նունը Յիսուս դնես․ որ մեծ և Բարձրելոյն Որդի պիտի կոչուի․ և Տէր Աստուած պիտի տայ անոր իր հօրը Դաւթի աթոռը, ու յա-ւիտեան պիտի թագաւորէ »։ Եւ երբ Մա-

րիամ՝ առաքելոյս ցուցուց թէ ինչպէս կրնայ ըլլալ այս բանը. այն ատեն հրեշտակը պատասխանեց. « Հոգին սուրբ պիտի գայ քեզի. ու Բարձրելոյն զօրութիւնը հովանի պիտի ըլլայ քու վերադ. քանզի այն որ քեզմէ պիտի ծնանի՝ սուրբ է և Աստուծոյ Որդի պիտի կոչուի. և ահաւասիկ ազգականդ Եղիսաբէթ ալ իր ծերութեանը մէջ յղի է. ինչու որ բան մը անհնարին չէ Աստուծոյ համար »։ Այն ատեն Մարիամ խոնարհութեամբ ըսաւ. « Ահա ես Տէրոջը աղախինն եմ. քու բանիդ պէս թող ըլլայ ինծի »։ Եւ հրեշտակը գնաց անոր քովէն.

3. Սուրբ Կոյս Մարիամ այս աստուածային պատգամին և բարձր կոչման վրայ սիրտ անպատմելի խոնարհութեամբ լցուած, ու Եղիսաբէթի յղութիւնն ալ իմացած ըլլալով երանելու, անոր քաղաքը գնաց աճապարով. Ու երբ Եղիսաբէթ սուրբ Կուսին բարևը լսեց, մանուկը իր արգանդին մէջ ցատկեցաւ. ու ինքը Հոգւով սրբով լեցուելով բարձր ձայնիւ ըսաւ Մարիամու. « Օրհնեալ ես դուն կիներուն մէջ, և օրհնեալ է քու որովայնիդ պտուղը. և այս ինչպէս եղաւ որ իմ Տէրոջս մայրը ինծի գայ. քանզի երբ քու բարևիդ ձայնը ականջիս հասաւ, մանուկս որովայնիս մէջ խաղաց ուրախութենէն. և երանի անոր որ հաւատացեր է թէ պիտի կատարուի այն բաները որ Տէրոջմէն ըսուեցաւ իրեն »։ Այն ատեն Մարիամ ըսաւ այն խորհրդաւոր օրհնութիւնը. Մեծացուսցէ անձն իմ

զՏէր, և այլն. ու երեք ամիս հոն կենալով դարձաւ իր տունը ։

4. Ու Եղիսաբէթի ժամանակը լրանալով որդի մը ծնաւ, և անոր ծանօթները ու բարեկամները լսեցին ինչ եղան իրեն ։ Ութերորդ օրը տղան թլփատելու ատենն՝ ուզեցին հօրը անուամբը Զաքարիա կոչել. իսկ մայրը կ՚ըսէր թէ Յովհաննէս պիտի կոչուի. և երբ հօրը ակնարկութիւն ըրին, գրով իմացուց թէ Յովհաննէս է անունը. և իսկոյն լեզուն բացուեցաւ, ու Հոգւով սրբով լցուած՝ մարգարէացաւ, ու սկսաւ ըսել. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի. և այլն ։ Իսկ ամէն անոնք որոնք այս բաները կը լսէին՝ կ՚ըսէին. « Արդեօք ինչ պիտի ըլլայ այս տղան » ։ Ու Տէրոջը ձեռքը այն տղուն վրայ էր, և մեծացաւ ու զօրացաւ հոգւով. և ետքը յանապատ բնակեցաւ մինչև իր քարոզութեան ատենը ։

5. Իսկ Յովսէփ տեսնելով առըր Կոյս Մարիամու յղութիւնը թէ և շփոթեցաւ, բայց արդար մարդ մը ըլլալով ուզեց գաղտուկ արձակել զանիկայ. Բայց երբ այս բանը կը մտածէր, ահա Տէրոջը հրեշտակին երեւելով՝ ի տեսլեան, իմացուց թէ այս բանը առըր Հոգւով եղած է, և պատուիրեց որ այն ծնանելիք մանկան անունը Յիսուս (փրկիչ) դնէ. յիշեցնելով իրեն և Եսայի մարգարէին բերնով բառածը՝ թէ « Ահա կոյս յղանայ», և այլն (Եսայի Է. 14) ։ Նոր վրայ Յովսէփի հրեշտակին բառծին

դէս բրաւ . այնուհետեւ սուրբ Հոգւոյն պաշտամանն եղաւ ։

## ԳԼՈՒԽ Բ.

1 . Ծնունդ Յիսուսի Քրիստոսի ։ 2 . Քառասնօրեայ ընծայումը ։ 3 . Մոգերուն գալուստը ։ 4 . Բեթլեհէմի մանկանց կոտորումը ։ 5 . Յիսուսի մանկութիւնը ։ (Մատ . Բ . 1—23 . Ղուկ . Բ . 1—52 . Յով . Ա . 1—14) ։

1 . Այն օրերը Հռովմայեցւոց Օգոստոս կայսրը հրաման ընելով որ ամէն տեղ աշխարհագիր ըլլայ , ամէն մարդ ալ իրենց քաղաքները կը ժողվուէին գրուելու համար ։ Յովսէփ ալ սուրբ Կոյս Մարիամը հետ առնելով՝ Նազարէթէն ճամբայ ելաւ ՚ի Բեթլեհէմ իրենց հայրենիքը , աշխարհագրին գրուելու համար ։ Բայց երբ հասան հոն տեղ՝ քաղաքին մէջ շատ բազմութիւն ժողված ըլլալուն համար դատարկ տեղ մը իջեւան ըրին . և հոն տեղ նոյն գիշերը ծնաւ Յիսուս ՚ի սուրբ Կուսէն , որ զանիկայ խանձարուրի մէջ փաթթեց ու մսուրի մէջ պառկեցուց , ինչու որ իջեւանին մէջ ուրիշ տեղ չի կար ։ Նոյն այն տեղերը գաւառներու մէջ հովիւներ կային որոնք իրենց ոչխարներուն պահպանութիւն կ՚ընէին , այն միջոցին Տէրոջը հրեշտակը երեւցաւ անոնց ու Աստուծոյ փառքը ծագեցաւ , և երբ անոնք մեծ վախով մը վախցան , հրեշտակը ըսաւ . « Մի՛ վախնաք . ահաւասիկ ձեզի մեծ ուրախութեան աւետիս կուտամ՝ որ բոլոր ժողովուրդին ալ պիտի ըլլայ . վասն զի այսօր Փրկիչ մը ծնաւ Դաւթի քաղա-

քին մէջ. որ ծնած է Օծեալ Տէր. և այս ձեզի նշան ըլլայ որ մանուկ մը պիտի գտնէք խանձարուրի մէջ փաթթուած ու մսուրի մէջ դրըւած »: Եւ յանկարծ այն հրեշտակին հետ երկնաւոր զօրաց բազմութիւն մը երեւցան որոնք կ'օրհնէին զԱստուած ու կ'ըսէին. Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն: Եւ երբ հրեշտակները երկինք վերացան, հովիւները փութալով Բեթղեհէմ եկան և գտան Յիսուսը մսուրին մէջ. և որոնք որ այս բաները կը լսէին հովիւներէն, կը զարմանային: Եւ ութ օրէն յետոյ զանիկայ թլփատելով անունը Յիսուս կոչեցին ըստ հրեշտակին:

Չ. Յիսուս քառասուն աւուր եղած ատեն Տաճարը եկաւ. Սիմէոն ծերունին որ սուրբ Հոգիէն հրաման առած էր չմեռնելու մինչև որ տեսնէ Տէրոջը Օծեալը. և Սիմէոն գիրկն առնելով զՅիսուս. «Արդ Տէր, բաւ. արդ արձակէ քու ծառադ խաղաղութեամբ. քանզի աչքերս տեսան քու փրկութիւնդ . . . լոյս հեթանոսներուն ու փառք քու Իսրայէլ ժողովուրդիդ»: և սուրբ Կոյս մօրը գուշակեց «Անիկայ, ըսաւ, Իսրայէլի մէջ շատերուն իյնալուն ու ելլելուն համար կեցած է. և քու սրտէդ ալ սուր մը պիտի անցնի»: Հոն ալ էր և Աննա մարգարէուհին, որ եօթն տարի էրկանը հետ կեցած և ութսուն ու չորս տարիէ ՚ի վեր որբևարի էր ու Տաճարէն չէր հեռանար. այլ պահօք և աղօթիւք ծառայութիւն կ'ընէր Աստուծոյ. ամե-

կայ ալ գոհութիւն տալով Աստուծոյ. Յիսուսի վերայօք կը խօսէր այն անձանց որոնք փրկութիւն կըսպասէին. Այս բաներէն ետքը Յիսուս ու անոնք դարձան ի Նազարեթ.

3. Իսկ Յիսուսին ծնանելուն ատենը արեւելքի կողմերէն մոգեր եկան Երուսաղէմ եւ «Ո՞ւր է, ըսին. Հրէից Թագաւորին ծնած տղը. քանզի մենք արեւելքի մէջ անոր աստղը տեսանք ու եկանք երկրպագութիւն ընելու անոր»: Մեծն Հերովդէս Թագաւորը լսելով այս բանը խռովեցաւ, ինչպէս եւ բոլոր Երուսաղէմը. եւ Հրէից գիտուններուն կանչելով հարցուց թէ «Ո՞ւր պիտի ծնանի Քրիստոս»: Անոնք ալ ըսին թէ «Բեթղեհէմի մէջ. ըստ մարգարէին» (Մտ. Բ. 1. 15). Այն ատեն Հերովդէս գաղտուկ կանչեց մոգերը, եւ աղէկ մը ստուգեց իրենցմէ աստղին երեւցած ժամանակը. եւ ղրկեց Բեթղեհէմ ըսելով «Գացէք բուն, ստոյգ իմացէք, եւ երբ գտնէք զանիկայ, ինծի ալ իմացուցէք որ ես ալ երկրպագութիւն ընեմ»: Անոնք ալ գացին, եւ ահա այն աստղը վերըւոյն երեւելով առաջնորդեց իրենց եւ Յիսուսի եղած տեղւոյն վրայ կեցաւ: Ու անոնք ուրախութեամբ ներս մտնելով երկրպագութիւն ըրին Յիսուսի եւ ընծաներ տուին, ոսկի, կնդրուկ եւ զմուռս. ու երազի մէջ հրաման առնելով որ նորէն Հերովդէսի քով չդառնան, ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը:

4. Անոնց երթալէն ետքը Յովսէփի երազին

մէջ հրեշտակի մը առաջնորդութեամբ տարաւ Յիսուսը և անոր մայրը ու գիշերով ելաւ Եգիպտոս գնաց, ու հոն կեցաւ մինչև Հերովդէսի մահը, որ ատեն դարձեալ հրեշտակին առաջնորդութեամբը դարձաւ ու Գալիլեայի Նազարէթ քաղաքը եկաւ. Իսկ Հերովդէս տեսնելով որ խաբուեցաւ մոգերէն, խիստ բարկացաւ, և Բեթլեհէմի ու շրջակայից մէջ երկու տարեկանէն վար եղող բոլոր տղաքները ջարդել տուաւ, ինչպէս գուշակած էր Երեմիա մարգարէն (ԼԱ. 15), ապահով ըլլալով թէ Յիսուս ալ անոնց մէջ կ'ըլլայ ի հարկէ.

5. Սուրբ Կոյս Մարիամ և արդար Յովսէփ ամէն տարի Տաճարը կ'երթային Զատկի տօնին. Անգամ մը ալ երբ գացին, դառնալու ատեննին Յիսուս հոն մնաց որ ատեն տասներկու տարեկան էր. Անոնք որ կը կարծէին թէ գուցէ ուրիշ ճամբորդներու հետ է, երբ տեսան թէ ուշացաւ. շատ փնտռելէ զկնի ետ դարձան ու գտան զինքը Տաճարին մէջ որ նստեր ուսուցիչներուն հետ կը խօսէր ու զամէնքը կը զարմացնէր իր իմաստութեամբը. Մայրը երբ հարցուց թէ «Այս ի՞նչ ըրիր. մենք զքեզ կը փնտռէինք»։ Յիսուս պատասխանեց թէ «Չէի՞ք գիտեր որ պէտք է իմ Հօրս տանը մէջ գտնուիմ»։ Ետքը անոնց հետ դարձաւ ի Նազարէթ, և անոնց հնազանդ էր միշտ. Իսկ սուրբ Կոյսը այս ամէն եղած բաները իր սրտին մէջ կը պահէր.

## ԳԼՈՒԽ Գ.

1. Յովհաննու քարոզութիւնը և մկրտութիւնը. 2. Յիսուսի մկրտուիլը. 3. Յիսուսի փորձուիլը. 4. Յովհաննու վկայութիւնը. 5. Յիսուսի առաջին հրաշքը. 6. Յիսուս ծախողները տաճարէն կը վռնտէ. 7. Յիսուս և Յովհաննու մկրտելը. 8. Յովհաննու բանտարկուիլը. 9. Սամարացի կինը. (Մատ. Գ. 1—Դ. 17. Ժ. 3—12. Մարկ. Ա. 1—15. Զ. 17—20. Ղուկ. Գ. 1—Դ. 15. Յովհ. Ա. 15—Դ. 42).

1. Տիբերիոս կայսեր տասնեւհինգերորդ տարին Յովհաննէս Մկրտիչը Յորդանան գետին կողմերը գալով Աստուծոյ հրամանաւ, սկսաւ քարոզել ու ըսել. «Ապաշխարեցէք, քանզի մօտեցած է Աստուծոյ թագաւորութիւնը. և մի ըսէք թէ Աբրահամու որդիքն ենք, ինչու որ կարող է Աստուած այս քարերէն Աբրահամու որդիներ հանելու. ահա հիմա կացինը ծառոց արմատին քովն է. այն ծառը որ բարի պտուղ չըբերեր կը կտրուի ու կրակը կը ձգուի»։ Եւ ամէն գիւղացիները կը մկրտուէր Յորդանանու մէջ. Ժողովուրդը տեսնելով իրեն գործերը՝ խորհեցան թէ Աստուծմէ ղրկուած է, ու կ՚ըսէին իրարու թէ Արդեօք Մեսիան ի՞նքն է. մինչեւ անգամ Փարիսեցիք ալ մարդ ղրկելով հարցուցին իրեն ով ըլլալը. Իսկ Յովհաննէս բաց ամենուն. «Ես Մեսիան չեմ, այլ անոր ճամբան պատրաստողն եմ. ես կը մկրտեմ ձեզ ջրով, բայց ինծմէ զօրաւորը պիտի գայ, նա պիտի մկրտէ ձեզ Հոգւով սրբով և հրով. որ իւր հնձանոցին պիտի մաքրէ իւր կալը, ցորենը շտեմարանին

մէջ պիտի ժողովէ, և յարդը անմարելի կրակով պիտի այրէ. և ես արժանի չեմ անոր կօշիկները քակելու»։ Եւ այլ ուրիշ շատ մխիթարական բաներ կը քարոզէր։

2. Այն օրերը Յիսուս ալ որ երեսուն տարեկան եղած էր, գնաց Յորդանան՝ Յովհաննէսէն մկրտուելու. բայց Յովհաննէս յանձն չառնելով՝ «Պէտք է ըսաւ, ես քեզմէ մկրտուիմ, և դուն ինծի կու գաս»։ Եւ Յիսուս «Թող տուր, ըսաւ, ինչու որ այսպէս կը վայլէ մեզ որ ամէն արդարութիւն կատարենք»։ Ու երբ մկրտուեցաւ Յիսուս ու ջրէն դուրս ելաւ, և ահա երկինքը բացուեցաւ, և Սուրբ Հոգին աղաւնիի կերպարանօք անոր վերայ իջնալով, ձայն մը ալ եկաւ երկինքէն որ կ'ըսէր. «Ասիկայ է իմ սիրելի Որդիս, որուն հաւներ եմ. անոր մտիկ ըրէք»։

3. Յիսուս մկրտուելէն յետոյ անապատ տեղ մը գնաց, և հոն քառասուն օր ծոմ պահելէ զկնի անօթեցաւ. Ու որպէս զի մեզի ուսուցնէ փորձութեան յաղթել, Թոյլտուութիւն ըրաւ սատանային որ եկաւ զինքը փորձելու. և նախ «Թէ որ Աստուծոյ որդին ես ըսաւ, ըսէ այս քարերուն որ հաց ըլլան»։ Ու Յիսուս պատասխանեց. «Գրուած է թէ՝ Ոչ միայն հացով կ'ապրի մարդս, հապա Աստուծոյ ամէն խօսքովը»։ Դարձեալ սատանան տաճարի աշտարակին վերան հանելով զանիկայ. «Թէ որ Աստուծոյ Որդին ես ըսաւ, ինքզինքդ ասկէ վար

ձգէ . քանզի գրուած է թէ՝ Հրեշտակներուն ապսպրուած է որ զքեզ պիտի պահեն ու ձեռքի վերայ բռնեն որ ոտքդ քարի չզարնես ». և Յիսուս ըսաւ . « Գրուած է թէ՝ Քու Տէր Աստուածդ մի փորձեր » . Յետոյ բարձր լեռ մը հանելով զՅիսուս ու բոլոր աշխարհի մեծութիւնն ու փառքը ցուցնելով՝ ըսաւ . « Այս ամենը քեզի կու տամ թէ որ ինծի երկրպագութիւն ընես » . այն ատեն Յիսուս ըսաւ . « Կորիր , սատանայ , գրուած է թէ՝ Միայն Աստուծոյ պէտք է երկրպագութիւն ընել » . Այնուհետև հրեշտակները մօտեցան , և իրեն սպասաւորութիւն կ՚ընէին .

4 . Ու Յիսուս դարձաւ ի Գալիլեա . և երբ այն կողմերը կը պտըտէր , Յովհաննէս մկրտիչ զանիկայ տեսնելով՝ ըսաւ . « Ահա գառն Աստուծոյ որ աշխարհի մեղքը կը վերցընէ » . Զայս ըսելով իրեն երկու աշակերտները որոց մէկը Անդրէաս էր , Յիսուսի ետևէն գացին , և նոյն գիշերը անոր օթևանը կեցան : Անդրէաս իր եղբայրը Սիմոնն ալ Յիսուսի քով բերաւ , որուն անունը Պետրոս (Վէմ) կոչեց Յիսուս : Յիսուս հետևեալ օրը Փիլիպպոսն ալ յաշակերտութիւն կանչեց և անիկայ ալ Նաթանայէլը համոզեց ու Յիսուսի քով բերաւ . և Յիսուս սկսաւ քարոզել ու անոր համբաւը բոլոր գաւառին մէջ կը տարածուէր .

Այն օրերը հարսնիք մը ըլլալով Գալիլեայի Կանա քաղաքին մէջ . ուր կոյս Մարիամ ալ

հան էր, ուր հրաւիրուեցան Յիսուս և իր
աշակերտները։ Եւ երբ գինին պակսեցաւ,
մայրը Մարիամ ըսաւ Յիսուսի թէ գինի չունին.
որուն թէ և յայտնեց Յիսուս թէ ժամանակն
հասած չէ, այսու ամենայնիւ մայրը Մարիամ սպա-
սաւորներուն պատուիրեց թէ ինչ որ Յի-
սուս ըսէ ընեն, ընեն։ Եւ հոն անդ վեց հատ
կճեայ քարէ մեծ թակոյկներ կային. Յիսուս
հրամայեց ջրով լեցընել տալով. անմիջապէս մի ալ քիչ
մը ըսելով անոնք սեղանապետին. որ երբ խմեց
նոյն գինին եղած ջուրը, և ուսկից բերուածն ալ
չգիտնալով կարծեց թէ փեսան յատկապէս
պահեր էր, ուստի ըսաւ անոր. «Ամեն մարդ
առաջ աղէկ գինին կը մատուցանէ, բայց դուն
վերջը պահեցիր»։ Յիսուս ասով ըրաւ իր հր-
աշքներուն սկիզբը և իր փառքը յայտնեց։
Այսու հետեւ գնաց ի Կափառնաում։

6. Եւ այն օրերը Զատկի տօնը մօտենալով
Յիսուս գնաց Երուսաղէմ. և հոն անդ տես-
նելով որ (թերեւս տօնին առթիւ փառաւորու-
թեանը) տաճարին սրահին մէջ արջառ, ոչխար
ու աղաւնի կը ծախեն, և ստակ փոխողներ ալ
նստած էին, ուստի խարազան մը շինեց ու ա-
նոնց անոնց ամենն ալ դուրս վռնտեց, ու ստակ
փոխողներուն պղինձները ցիրուցան ըրաւ և
սեղանները կործանեց, ըսելով. «Ասոնք վերու-
ցէք ասկէ, և իմ Հօրս տունը վաճառատ-
ուն մի ընէք»։ Այս Զատկի տօնին շատերը
տեսնելով անոր գործերը՝ հաւատացին,

որոնց մէջ էր և Նիկոդեմոս իշխանը ․

7․ Երբ սակայն Յիսուս իր աշակերտներովը Հրէաստանի մէջ կը կենար ու մկրտութիւն կ՚ընէր ․ Աւ եղաւ որ Յովհաննու աշակերտաց ու Հրէից մէջ վէճ մը եղաւ Յիսուսի և Յովհաննու մկրտութեանց սրբութեանը մասին , ուստի եկան Յովհաննէսի հարցուցին երբ անիկայ մկրտութիւն կ՚ընէր Ենոնի մէջ ։ Յովհաննէս դարձեալ Յիսուսի մեծութեանը վըրայօք շատ մը ապացոյցներ տուաւ զինի ․ ըսաւ նաև , թէ « Անիկայ պէտք է մեծնայ ու ես պզտիկնամ . . . այն որ երկինքէն կու գայ , ամենէն վեր է . . . և Աստուծոյ խօսքը կը խօսի . . . Հայրը Որդին կը սիրէ և ամէն բան անոր յանձնած է ․ ով որ անոր կը հաւատայ՝ յաւիտենական կեանք ունի ․ իսկ ով որ անոր չհնազանդիր ․ անիկայ կեանք պիտի չտեսնէ , հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ պիտի մնայ ։ »

8․ Այն միջոցներուն Հերովդէս չորրորդապետ [1] իր չարութեանցը և մանաւանդ իր եղբօր կնոջ Հերովդիադան առած ըլլալուն համար յանդիմանուելով Յովհաննէս մկրտիչէն , բռնեց զանիկայ բանտարկեց և կ՚ուզէր մեռցնել , բայց ժողովուրդէն կը վախնար , քանզի մարգարէի մը պէս ընդունած էին զանիկայ ․ Իսկ Յիսուս երբ իմացաւ թէ փարիսեցիք լսեր են իրեն Յովհաննէսէն աւելի աշակերտներ ունենալը և անոնց ձեռօք մկրտութիւն ընելը , թողուց

1 Իր հօրը թագաւորութեան չորրորդ մասին կ՚իշխէր ․

Հրեաստանը, ու դարձեալ գնաց 'ի Գալիլեա։

9. Իսկ ճանապարհին Սամարացւոց երկրէն անցնելու ատեն, անոնց Սիւքար[1] քաղաքին մօտերը Յակոբ նահապետի մէկ հորին քով նըստաւ հանգստութիւն առնելու։ Այն միջոցին քաղաքէն կին մը եկաւ որ ջուր առնէ, և Յիսուս անկէ ջուր ուզեց. խոկ կինը կը զարմանար թէ ինչպէս Յիսուս ջուր կ'ուզէ Սամարացիէ մը առանց խորշութիւն ընելու, (վասն զի Հրեայք կը խորշէին Սամարացւոցմէ և անոնց երկրէն անգամ անցնիլ չէին ուզեր)։ Ասկէ խօսք բացուելով՝ կինը սկսաւ հարցնել թէ ինչու համար Հրեայք կ'ըսեն որ միայն Երուսաղէմն է երկրպագութիւն ընելու տեղը, «Քանի որ ըսաւ, մեր հայրերը այս լեռան վերայ երկրպագութիւն ըրին»։ Իսկ Յիսուս պատասխանեց. «Հաւատա ինծի, ով կին, որ ժամանակ պիտի գայ երբ ոչ այս լեռանը վերայ և ոչ ալ Երուսաղէմի մէջ երկրպագութիւն պիտի ընէք Հօր[2]... բայց ճշմարիտ երկրպագուները երկրպագութիւն պիտի ընեն Հօր՝ հոգւով և ճշմարտութեամբ. (վասն զի) Աստուած Հոգի է, և կ'ուզէ որ իրեն երկրպագողները ալ հոգւով և ճշմարտութբ երկրպագեն»։ Այնուհետեւ Յիսուս յայտնեց թէ ինքն է իրենց սպասած Մեսիան. ուստի կինը վազեց իւր քաղաքակիցները խմբեց, որոնք եկան իրենց քաղաքը տարին զՅիսուս, ուր տեղ

1 Սիւքեմ. այժմ Նապլուս։

2 Այսինքն՝ տեղի խտրութիւնը պիտի վերնայ։

երկու օր կեցաւ, և շատերը հաւատացին անոր խօսքերուն, ու սկսան բսել թէ «Աս է ճշմարտապէս աշխարհի Փրկիչը»:

## ԳԼՈՒԽ Դ.

1. Բժշկութիւն արքունականին որդւոյն: 2. Յիսուս Նազարեթայ գիրքը կը կարդայ: 3. Կոչումն Պետրոսի և Անդրէի, և որդւոցն Զեբեդեայ: 4. Յիսուսի բժշկութիւնները: 5. Հրաշալի որս ձկանց: 6. Անդամալուծին բժշկուիլը: (Մատ. Դ. 18—25. Ը. 1—16. Թ. 1—7. Մարկ. Ա. 14—Բ. 12. Ղուկ. Դ. 14—Ե. 26. Յովհ. Դ. 46—54.):

1. Գալիլեայի Կանա քաղաքին մէջ արքունական մէկը կար որուն որդին հիւանդ էր Կափառնաումի մէջ: Աս մարդը լսելով Յիսուսի գալը, եկաւ ու սկսաւ աղաչել որ Կափառնաում իջնէ և իր որդին բժշկէ, որ մեռնելու մօտ էր: Իսկ Յիսուս բսաւ անոր. «Գնա՛, քու որդիդ ողջ է»: և անիկայ հաւատաց ու գնաց. և մինչդեռ ճամբան էր, ծառաները զինքը դիմաւորելով աւետիս տուին թէ որդիդ ողջացաւ: Ան ատեն հարցուց ու իմացաւ որ Յիսուսի «տղադ ողջ է» բսած վայրկեանին բժշկուեր է. և իր բոլոր ընտանեօքը հաւատաց Յիսուսի:

2. Իսկ Յիսուս ապաշխարութիւն քարոզելով եկաւ ի Նազարէթ իր սնած քաղաքը և իր սովորութեան համաձայն շաբաթ օրը մտաւ ժողովրդանոցը, ու ելաւ որ Եսայեայ մարգարէութիւնը կարդայ. և երբ բացաւ, գտաւ այն տեղը ուր գրուած էր. «Տէրոջը Հոգին իմ վրաս է. վասն որոյ և օծեց զիս ու ղրկեց աղքատ-

ներքուն աւետիս տալու, կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, գերիներուն ազատութիւն ու կոյրերուն տեսութիւն քարոզելու, և հալածուածութեան կապանքներէն ազատելու (Ես. ԿԱ. 1—3)։ Ու գիրքը գոցելով նստաւ ու ըսաւ. «Այսօր այս գրուածքը կատարեցաւ և ձեր ականջները ըսեցին». ու յետոյ ակամայ Հրէից խոստովանութիւնը յիշեցնել. որոնք բարկանալով հանեցին զինքը քաղաքէն դուրս լեռան ցցուած ծայրը. որ հոն տեղէն վար նետեն. բայց Ինքը անոնց մէջէն անցաւ ու գնաց։

3. Անկէ ետք Յիսուս կը շրջէր Գալիլեացւոց ծովուն[1] եզերքը, տեսաւ որ Պետրոս ու անոր եղբայրը Անդրէաս և Զեբեդեայ՝ որդիքը Յակոբոս և Յովհաննէս որս կ՚ընեն, կանչեց զանոնք, որոնք իրենց գործիքները թողելով գնացին։ Ու Յիսուս անոնց հետ մտաւ ի Կափառնաում, ու շաբաթ օր մը ժողովարանին մէջ կ՚ուսուցանէր. հոն տեղ մէկուն վրայ պիղծ ոգի մը կար, որուն սաստելով Յիսուս՝ բժշկեց մարդը։ Ու ամէնքը տեսնելով այս բանը, սկսան զարմանալ թէ ինչպէս Յիսուս կը հրամայէ պիղծ ոգիներուն, ու կը հնազանդին. և շուտով համբաւը տարածուեցաւ բոլոր Գալիլեայի մէջ։

4. Անկէ ետեւ Պետրոսին տունը գնաց, և հոն տեղ ալ բժշկեց անոր զոքանչը որ սաստիկ ջերմէ մը բռնուած էր, և ուրիշ շատ հիւանդներ ալ։ Նոյնպէս մի ալ քաղաքին մէկը տես-

1 Ծովակ Գեննեսարեթայ կամ Տիբերիայ։

նելով զՅիսուս, ինկաւ երեսի վրայ ու կ՚աղաչէր ըսելով. «Տէր, թէ որ կամք ընես, կարող ես զիս սրբել»։ Ու Յիսուս գթալով՝ ձեռքը երկնցուց ու անոր մօտենալով ըսաւ. «Կ՚ուզեմ, մաքրուէ»։ Եւ փայլփայլակի գնաց անոր բորոտութիւնը. Եւ սկսաւ անիկայ ամէն տեղ հռչակել այս բանը. Եւ բոլոր Ասորւոց երկիրը այս լուրերը տարածուելով շատ հիւանդներ կը բերէին որ զանոնք կը բժշկէր. Թէեւ Յիսուս ամէնուն ալ կը պատուիրէր որ մարդու չըսեն, այլ անոնք դարձեալ ամէն տեղ կը հռչակէին այս բաները։

5. Օր մը Յիսուս Գեննեսարեթայ ծովակին քով նստած էր ու շատ ժողովուրդ գալով լեցուեցան անոր բոլորտիքը. ուստի Յիսուս մըտաւ Պետրոսի նաւակին մէջ. եւ հոնկէ սկսաւ քարոզել։ Եւ երբ խօսքը լմնցուց, ըսաւ Պետրոսի թէ ուռկանդ ձգէ. եւ անիկայ պատասխանեց. «Վարդապետ, բոլոր գիշերը թէեւ պարապ տեղը աշխատեցանք, բայց քու ըսելուդ համար դարձեալ կը ձգենք»։ Ու երբ ձգեցին այնչափ շատ ձուկ լեցուեցան անոր մէջ որ քիչ մնաց պատռէր թէ որ Զեբեդեայ որդւոց նաւակը օգնութեան չհասնէր. Եւ այն երկու նաւերը ձուկով լեցուեցան։ Երբ այս բանը տեսան՝ սկսան վախնալ. Եւ Պետրոս Յիսուսի ծունկին իյնալով ըսաւ. «Ի բաց գնա ինծմէ Տէր, քանզի ես մեղաւոր մարդ մի եմ»։ Ու Յիսուս ըսաւ անոնց. «Մի՛ վախնաք, ասկէ հետեւ զմարդիկ

պիտանի որսորդք 'ի կենդանւոյ —. անոնք այլ ամեն բան թողուցին ու նուէրք ցանկալիք բաշխեցին ու գը-նացին Յիսուսի ետեւէն ։

6. Յիսուս գնացեալ մտաւ 'ի Կափառնաու-ում. և երբ սատ մի մէջ կը քարոզէր, չորս մար-դիկ անդամալոյծ մի վերցուցած բերին, ու չկ-րնալով բազմութեան խոնուէն ներս մտցնելու, տանիքին վերայէն ծակ մի բացին և անկէ վար իջեցուցին զանկողին Յիսուսի առջեւ, որ տեսնելով անոնց հաւատքը՝ ըսաւ անդամալուծին. — Որդեակ, թողուած ըլլան քու մեղքերդ —. Իսկ փարիսե-ցիք զայս ըսելով ինքնիրենին կ՚ըսէին, թէ — Ի՞նչ է այս խօսքը. ո՞վ կրնայ մեղքերը թո-ղուլ եթէ ոչ Աստուած —։ Յիսուս իմանալով անոնց միտքը՝ ըսաւ. — Ի՞նչ կը խորհիք. ո՞ր դիւրին է. Մեղքերդ թողուած ըլլան ըսելը, թէ Ոտքի՛ ելիր ու քալէ ըսելը. այլ որպէս զի գիտնաք թէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ երկրի վերայ մեղքերու թողութիւն տալու —։ Ուստի ըսաւ անդամալուծին. — Քեզ, մահճիճդ առ ու տունդ գնա —. և իսկոյն ոտքի ելաւ ու-նեփկոյ, և մահճիճն առնելով գնաց, ու զԱս-տուած կը փառաւորէր. և ամենքը զարմացան, ու վախ առնելով Աստուծոյ՝ կ՚ըսէին թէ — Ա-սանկ բան ամենեւին չէ տեսնուած —։

## ԳԼՈՒԽ Ե.

1. Կոչումն Մատթէոսի. 2. Տեղատու կնոջ բժշկութիւնը. 3. Յայրոսի աղջկան յարութիւն առնելը. 4. Երկու կոյրերուն և համր դիւահարին բժշկութիւնը. 5. Պրոբատիկէի անդամալուծին բժշկութիւնը. 6. Գօսացեալ ձեռքին բժշկութիւնը. (Մատ. Թ. 9—38. ԺԲ. 1—14. Մրկ. Բ. 23—30. Ե. 21—43. Ղուկ. Ե. 27—Զ. 11. Ը. 40—56. Յովհ. Ե. 1—17.)։

1. Օր մը Յիսուս ճանապարհին երթալու ատեն տեսաւ Մատթէոս անուն մէկը որ նստեր՝ մաքսաւորութիւն կ՚ընէր, և ըսաւ անոր. «Իմ ետևէս եկուր»։ և անիկայ անմիջապէս թողուց իր գործը ու գնաց Յիսուսի հետ. և անոր մեծ ընդունելութիւն մը ըրաւ իր տանը մէջ, ուր շատ մաքսաւորներ ալ ներկայ էին։ Երբ զայս տեսան փարիսեցիք, կը տրտնջէին թէ Յիսուս մեղաւոր մարդոց հետ ընտանութիւն կ՚ընէ, (վասն զի մաքսաւորք չարագործ մարդիկ համարուած էին Հրէից մէջ)։ Յիսուս իմանալով անոնց խորհուրդը՝ ըսաւ. «Ողջ մարդոց բժիշկ պէտք չէ, հապա հիւանդաց. գացէք, սորվեցէք, թէ ինչ է Ողորմութիւն կ՚ուզեմ և ոչ զոհ՝ ըսելը (Ովս. Զ. 6.) Ինչու որ ես ոչ թէ արդարները, հապա մեղաւորները յապաշխարութիւն կոչելու եկայ»։

2. Դեռ այս խօսքը կ՚ընէր, Յայրոս անուն իշխան մը եկաւ ու երկրպագելով Յիսուսի կ՚աղաչէր ու կ՚ըսէր. «Տէր, աղջիկս մեռնելու մօտ հիւանդ է, և թերևս վախճանեցաւ ալ. բայց եկու՛, ձեռքդ վրան դիր, որ ապրի»։

և Յիսուս ելաւ ու գնաց հետը ։ Ճամբան ալ շատ ժողովուրդ ետեւէն կ'երթային . և տկա-րոտ կին մը ալ որ բոլոր ունեցածը ծախք բրեր և օգուտ մը չէր տեսեր . Յիսուսի քղանցները բռնելով ըսաւ ինքնիրեն . « Թէ որ միայն անոր հանդերձներուն դպչիմ՝ պիտի բժշկուիմ » . ուստի բազմութեան մէջ մտնելով եկաւ անոր հանդերձներուն դպաւ , և իսկոյն բժշկուեցաւ . Բայց Յիսուս իմանալով իրմէ եղած բժշկու-թիւնը , դարձաւ ու հարցուց թէ « Ո՞վ ինծի դպաւ » . աշակերտներն ալ զարմանալով կ'ըսէ-ին թէ՝ բազմութիւնն է որ զքեզ կը նեղէ . իսկ Յիսուս դարձեալ շուրջ կողմը կը նայէր . կինը տեսնելով որ յայտնուեցաւ բրածը , եկաւ Յի-սուսի ոտքն ինկաւ և ստոյգը պատմեց , որուն ըսաւ Յիսուս . « Քաջալերուէ , աղջիկ , հաւատքդ քեզ բժշկեց . գնա՛ խաղաղութեամբ » .

3 . Դեռ խօսելու ատեն , քանի մը մարդիկ եկան Յայրոսի քովէն . « Վարդապետը մի աշ-խատցըներ , քանզի աղջիկդ մեռաւ » . բայց Յիսուս ըսաւ անոր . « Մի՛ վախնար , միայն հա-ւատա , ու քու աղջիկդ պիտի ապրի » ։ Եւ ա-նոր տունը երթալով երբ տեսաւ որ կուլային . « Ինչո՞ւ կուլաք ըսաւ . աղջիկը ոչ թէ մեռած է՝ հապա կը քնանայ » . իսկ անոնք կը խնդային այս խօսքին վրայ , քանզի գիտէին որ մեռած է ։ Եւ Յիսուս անոր ծնողքը ու երեք հոգի ալ ա-շակերտներէն առնելով , գնաց մեռելին ձեռքէն բռնեց ու կանչեց . « Ո՛վ աղջիկ , քեզի կ'ըսեմ՝

ելիր »: և իսկոյն անոր ոտքին զօրացան ու ողջնցաւ և սկսաւ քալել. ու Յիսուս հրամայեց որ ուտելիք տան անոր: Ասոր վերայ ամէնքը մեծ զարմանքով զարմացան և անոր համբաւը տարածուեցաւ բոլոր երկրին մէջ:

4. Յիսուս հոն տեղէն դուրս ելլելէն ետքը երկու կոյրեր ալ բժշկեց, « Ձեր հաւատքին համեմատ թող ըլլայ ձեզի » ըսելով, որոնց աչքերը իսկոյն բացուեցան: Նոյն միջոցին համր այսահար մը ալ բերին. և պիղծ ոգին ելլելուն պէս համրութիւնն ալ բժշկուեցաւ. և ամէնքը զարմանքով կ'ըսէին թէ « Իսրայէլի մէջ ոչ երբեք տեսնուած է այսպիսի բան »:

5. Տօնի օր մը ալ Յիսուս Երուսաղէմ գընաց, ու հոն տեղ Ոչխարաց դրան (Պրոպատիկէ) քով Բեթհեզդա կոչուած աւազան մը կար. ուր տեղ շատ հիւանդներ անոր ջուրին յուզման կը սպասէին. քանզի Տէրոջը հրեշտակը ատեն ատեն հոն իջնելով ջուրերը կը խառնէր. և ով որ այն ատեն անոր մէջ մտնէր՝ կը բժշկըւէր: Հոն տեղ անդամալոյծ մը ալ կար որ երեսուն ու հինգ տարիէ ՚ի վեր կը սպասէր. շաբաթ օր մը զանիկայ տեսնելով հարցուց թէ « Կուզե՞ս ողջնալ » և անիկայ ըսաւ. « Տէր, մէկը չունիմ որ զիս ալ աւազանը իջեցընէ »: Իսկ Յիսուս ըսաւ. « Ելիր մահիճդ առ ու գընա »: և անմիջապէս բժշկուեցաւ ու մահիճը շալկեց ու գնաց: Հրեայք երբ տեսան զանիկայ, սկսան յանդիմանել թէ ինչու շաբաթ օ-

բով մահիճը շալկեր կը տանի . և անոնցմէ պատասխանելով թէ՝ զիս բժշկողն այսպէս ըսաւ . ուստի սկսան հարցունել թէ ով է քեզ բժշկողը . իսկ անիկայ չէր ճանչնար թէ Յիսուսն է : Անուհետև Յիսուս գտնելով զանիկայ Տաճարին մէջ ըսաւ . «Ահա ողջացար . մի՛ ևս մեղանչեր որ աւելի չար բան մը չպատահի քեզ» . այն ատեն ճանչցաւ զանիկայ , ու գնաց Հրեից ըսաւ թէ՝ Յիսուսն է զիս բժշկողը . ուստի և Հրեայք կը հալածէին զՅիսուս՝ շաբաթ որ մարդ բժշկելուն համար . մանաւանդ երբ կը յայտնէր իւր Որդի Աստուծոյ ըլլալը .

6 . Անկէ քիչ մը յետոյ շաբաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն անցնելու ատեն աշակերտները անօթեցած ըլլալով՝ հասկեր կը փրցնէին ու ձեռքերնուն մէջ շփելով կ'ուտէին . Փարիսեցիք զայս որ տեսան , սկսան իրենց սովորական խղճահարութեամբ դայթակղիլ անոնց ըրածին վրայ . Յիսուս ալ շատ միջոցաւ ցուցնելով իրենց կարծեաց սխալ ըլլալը իմացնելէ զկնի , նաև իրենց ժողովրդեանցը . և հոն տեղ մէկը կար որուն աջ ձեռքը չորցած էր . Փարիսեցիք ալ կ'ուզէին որ շաբաթ օրը բժշկէ զանիկայ որպէս զի չարախօսութիւն ընեն . Յիսուս գիտնալով անոնց միտքը՝ ըսաւ թէ « Ձեզմէ մէկուն ոչխարը շաբաթ օրը խորխորատի մէջ իյնալու որ ըլլայ . արդեօք չ՞ հաներ զանիկայ » . և թէ « շաբաթ օրը պէտք չէ՞ բարերարութիւն ընել » . և անոնք չկրցան պատասխանել .

Այն ատեն Յիսուս զայրագին հայեցուածք մի ձգելով անոնց վերայ, ու տրտմելով անոնց սրտին կուրութեանը վերայ, ըսաւ այն մարդուն. «Ձեռքդ երկնցուր», և այն ալ երկնցուց ու բժշկուեցաւ։ Ասոր վերայ փարիսեցիք դուրս ելլելով սկսան խորհուրդ ընել թէ ինչպէս կորսնցընեն զՅիսուս։

## ԳԼՈՒԽ Զ.

1. Հարիւրապետին ծառային բժշկութիւնը։ 2. Այրի կնոջ որդւոյն յարութիւն առնելը։ 3. Յովհաննէս մկրտչի հարցումը։ 4. Ինչ որ Յիսուսի աշակերտք կ'ընեն։ 5. Կոյր և համր դիւահարին բժշկութիւնը։ 6. Յիսուսի առակները։ (Մատթ. Ը. 5—17. ԺԱ. 15—37. ԺԳ. 1—57. Մարկ. Գ. 20—Դ. 34. Ղուկ. Է. 1—Ը. 18. ԺԱ. 14—23. ԺԲ. 1—12.)

1. Յիսուս երբ Կափառնաում մի մէջ էր, հոն տեղ հարիւրապետի մը ծառան հիւանդացած ու մեռնելու մօտ էր. ուստի Հրէից ծերերուն բերնով խնդրեց Յիսուսէն որ զանիկայ բժշկէ։ Անոնք ալ եկան Յիսուսի աղաչեցին ըսելով թէ այն հարիւրապետը ինչպէս կը սիրէ իրենց ազգը, և շատ բարիք ալ ըրած է. և գնաց անոնց հետ։ Իսկ երբ մօտեցան հարիւրապետին տանը, մարդ ղրկեց անիկայ Յիսուսի. ըսելով թէ «Արժանի չեմ որ իմ յարկիս ներքև մտնես, անոր համար ինքզինքս ալ արժանի սեպեցի քեզի գալու. հապա խօսքով ըսէ. և իմ ծառաս պիտի բժշկուի»։ Յիսուս այս խօսքերը լսելով զարմացաւ ու ըսաւ թէ «Իսրայէլի մէջ այսչափ հաւատք չգտայ»։ և հարիւրապետին

ալ պատասխանեց . «Հաւատացածիդ պէս թող ըլլայ քեզի », և բժշկուեցաւ անոր ծառան .

2 . Հետևեալ օրը Յիսուս Նային քաղաքը կ'երթար . և երբ դրանը մօտեցաւ , տեսաւ որ մեռել մը կը հանէին . որ այրի կնոջ մը մէկ հատիկ որդին էր : Եւ Յիսուս գթալով , ըսաւ անոր մօրը . «Մի լար ». և դագաղին մօտենալով ըսաւ . «Ո՛վ պատանի , քեզի կ'ըսեմ , ելիր » և իսկոյն մեռեալը ելլելով նստաւ ու սկսաւ խօսիլ յուրախութիւն մօրն և ամենեցուն .

3 . Եւ Յիսուսի սքանչելեաց համբաւը բոլոր Հրէաստանի մէջ տարածուելով՝ Յովհաննու աշակերտներն ալ գացին պատմեցին իրեն . և Յովհաննէս (որպէս զի իր աշակերտները համոզէ թէ Յիսուս է Մեսիան), իրենց բերնով հարցուց Յիսուսի թէ արդեօք ինքն է գալու Մեսիան թէ չէ ուրիշ մը պէտք է սպասել . Յիսուս ալ անոնց աչքին առջև շատ մը հիւանդներ բժշկելով . «Գացէք , ըսաւ , պատմեցէք ձեր տեսածին պէս ». և երբ անոնք գացին՝ ըսկսաւ գովել զՅովհաննէս Մկրտիչը .

4 . Անգամ մը Սիմոն անուն Փարիսեցիի մը տուն ճաշի հրաւիրուած էր Յիսուս . այն քաղաքին մէջ ալ մեղաւոր կին մը կար , որ իմանալով Յիսուսի հոն ըլլալը , եկաւ անոր ոտքն ինկաւ , և կուլար ու արցունքովը կը թրջէր անոր ոտքը , ու մազերովը սրբելով ազնիւ իւղով կ'օծէր : Տանտէրը սկսաւ իր մտքին ըսել թէ Յիսուս մարգարէ մը որ ըլլար կը գիտնար այս

կնոջ մ՚ըլլալը ։ Յիսուս իմանալով անոր միտքը , առակ մը ըսաւ թէ՝ « Երկու մարդ մէկ փոխատուի մը պարտք ունէին , մէկը յիսուն դահեկան ու միւսը հինգ հարիւր ․ առնելիքին տէրը տեսնելով որ չեն կրնար վճարել , երկուքին պարտքն ալ շնորհեց ․ հիմա այս երկուքէն ո՞րը աւելի պէտք է սիրէ զանիկայ » ․ Եւ Փարիսեցին ըսաւ ․ « Ան որ աւելի պարտք ունէր » ։ Յիսուս ալ իմացուց թէ՝ դուն այնչափ չսիրեցիր զիս որչափ այս կինը սիրեց , ուստի թողութիւն թող ըլլայ իր մեղքերուն ․ Եւ կնոջը ըսաւ ․ « Հաւատքդ քեզ փրկեց , գնա խաղաղութեամբ » ։

5 ․ Օր մը Յիսուս բժշկեց կոյր և համր այսահար մը , որուն վրայ ժողովուրդը զարմանալով սկսան իրարու ըսել թէ՝ « Արդեօք սա՞ է Քրիստոսը Դաւիթի որդին » ։ Իսկ Փարիսեցիք այն աստիճան կուրցած էին նախանձով որ սատանայի ազդեցութեամբ կ՚ըսային ․ Յիսուս ալ շատ մը ապացոյցներով զիրենք յանդիմանելու ատեն ըսաւ նաև , թէ՝ « Ամէն մեղք ու հայհոյութիւն պիտի ներուի մարդոց , բայց սուրբ Հոգւոյն դէմ եղած հայհոյութիւնը բնաւ չը պիտի ներուի » ։ « Իժերու ծնունդներ , ըսաւ , ի՞նչպէս կրնաք դուք բարի խօսիլ որ չար էք ․ ինչու որ սրտին աւելցուքէն կը խօսի բերանը ․ բարի մարդը իր սրտին բա-

1 Այսինքն՝ Աստուծոյ Ճշմարտութեան դէմ ու նախանձու և չարութեան անձին՝ գիտնալով եղած հակառակութիւնը ։

րի գանձէն բարի բաներ կը հանէ , եւ չար մարդը՝ չար բաներ . . . » .

6 . Եւ Յիսուս ծովեզերը գնաց , ու նաւակի մը մէջ նստելով հոն եկողին սկսաւ առակներով խօսիլ , ու կ'ըսէր . « Սերմնացանին մէկը իր արտը ցանելու ատեն եղաւ որ հատներէն ոմը ճամբու վերայ իյնալով ասից կոխան եղաւ , ոմը ապառաժի վերայ իյնալով արմատ չձգելուն չորցաւ , ոմը փուշերու մէջ իյնալով խեղդուեցաւ . բայց անոնք որ աղէկ տեղ ինկան , առատ պտուղ տուին » . Յետոյ մեկնելով զառակը , բաւ թէ՝ հատերը Աստուծոյ խօսքերն են , ցանուած տեղը մարդոց սիրտերը , եւ ցանողը Քրիստոս է . անոնք որ աղէկ սիրտ ունին՝ կ'ընդունին ու առատ պտուղ կու տան .

Դարձեալ բաւ . « Ագարակատէր մը իւր արտին մէջ աղէկ սերմ ցանել տալէ ետքը թշնամին եկաւ ու որոմ ցանեց անոր մէջ գաղտնի . եւ երբ ծառաները խնդրեցին իրեն որոմ ցանուած ըլլալը եւ կ'ուզէին որ քաղեն , բայց չթողուց . որ չըլլայ թէ ցորեններն ալ մէկտեղ հանուին . հապա , թողէք բաւ , որ մէկտեղ աճին , եւ հունձքի ատեն նախ որոմները քաղել ու կրակը նետել կու տամ » . Եւ Յիսուս ասոր ալ մեկնելով բաւ թէ՝ սերմ ցանողը Քրիստոս է , արտը աշխարհս է , աղէկ սերմը արքայութեան որդիներն են , իսկ որոմը չարութեան որդիները՝ զոր սատանան կը ցանէ . հունձքը աշխարհիս վերջն է , եւ հնձողները հրեշտակներն են . «Ե

բանը պիտի գրկէ, ըսաւ, որ պիտի ժողվեն ա-մէն անօրէնները և կրակի հնոցին մէջ պիտի ձգեն ստամին ալ.

Դարձեալ նմանեցուց երկինքի թագաւորու-թիւնը ագարակի մէջ ծածկուած գանձի ու պատուական մարգարտի, որուն արժէքը գիտ-ցողները ամէն ունեցածնին կու տան որ զանի-կայ ձեռք բերեն. Նմանեցուց և ծովը ձգուած ուռկանի մը, որուն մէջ ամէն տեսակ ձուկեր կը ժողվուին, և յետոյ աղէկները առնելով գէշերը կը նետուին. Նմանեցուց նաև խմորի որ քիչ մը բանը մեծ զանգուած մը կը խմորէ. Նաև մանանեխի հատին որ թէ և փոքր՝ բայց մեծ ծառ կ'ըլլայ երբ բուսնի.

## ԳԼՈՒԽ Է.

1. Յիսուս ծովը կը հանդարտեցընէ. 2. Երկու դիւահարնե-րը կը բժշկէ. 3. Տասն երկու առաքեալները քարոզութեան կը ղրկէ. 4. Անոնց տուած պատուէրները. 5. Յովհաննէս Մկրտչի գլխատուիլը. 6. Յիսուս կ'երթայ 'ի Բեթսայիթա (Մատթ. Ը. 23—34. Ժ. 1—40. ԺԴ. 1—13. Մարկ. Դ. 35—Ե. 20. Զ. 1—34. Ղուկ. Ը. 22—39. Թ. 1—11).

Ա. Նոյն եղաւ որ Յիսուս և աշակերտները օր մը նաւով ճամբայ կ'ընէին. Յիսուս ալ նաւ-ուն մէջ կը քնանար. Նոյն ատեն սաստիկ մրրիկ մը ելաւ որ նաւը ընկղմելու մօտեցաւ. աշա-կերտները վախնալով գացին Յիսուսը արթնց-ուցին ըսելով. «Վարդապետ, բնաւ հոգդ չէ, ահաւասիկ կը կորսուինք. փրկէ զմեզ»։ Յայնժամ Յիսուս անոնց թերահաւատութիւ-նը յանդիմանելով, սաստեց հովին ու ծովին,

և իսկոյն հանդարտութիւն․ իրենք ալ նաւով գացին Գերգեսացւոց երկիրը։

2․ Հոն տեղ երկու հատ կատաղի այսահարներ կային, որոնք Յիսուսի դէմն ելնելով բարձրաձայն կանչեցին․ — Յիսուս Որդի Աստուծոյ բարձրելոյ, մի տանջեր զմեզ․ քանի որ Յիսուս կը սաստէր սատանաներուն որ ելլեն։ Դևերը Յիսուսէն խնդրեցին որ զիրենք ուրիշ տեղ չղրկելով, հրաման տայ որ մտնեն արածւող խոզերուն մէջ, և երբ հրաման առաւ, գացին մտան անոնց մէջ, և ամենքը որ երկու հազարի չափ կային՝ այսահարելով գացին ծովը նետուեցան ու խեղդուեցան։ Խոզարածները փախչելով գացին պատմեցին քաղաքացւոց, որոնք ելան ու գիւղացիները բժշկուած տեսնելով զարմացան, բայց Յիսուսի ալ աղաչեցին որ ելլէ երթայ այն կողմերէն․ (Թերևս խոզերուն եղելութենէն փախնալուն համար)։

3․ Յիսուս տեսնելով ժողովրդեան բազմութիւնը որ հետը ամէն տեղէ կու գային, և ցրուած ոչխարներու պէս թափառական կը շրջէին իր ետևէն, գթաց անոնց վերայ ու ըսաւ իր աշակերտաց․ — Հունձքերը շատ են և մշակները քիչ։ Ապա իր աշակերտներէն տասներկու հոգի ընտրելով Առաքեալ անուանեց և զանոնք երկու երկու ղրկեց քարոզելու։ Ասոնց անուններն են, Սիմոն՝ զոր Պետրոս անուանեց, և անոր եղբայրը Անդրէաս, Յակոբոս և Յովհաննէս Զեբեդեայ որդիքը, Փիլիպպոս,

Բարթուղիմէոս, Մատթէոս մաքսաւորը․ Յակոբոս Աղփէոսեան, և տառ եղբայրը Յուդա կամ Ղեբէոս Թադէոս՝ որ կոչեցաւ Սիմոն կանանացի (նախանձայոյզ), և Յուդա Իսկարիովտացի ։

4․ Յիսուս իշխանութիւն տուաւ իրենց հրաշքներ ալ գործելու, պատուիրելով որ հեթանոսին ոչ դրամ առնենան, ոչ պարկ, և ոչ ալ երկու հանդերձ, այլ ժողովրդեան յօժարակամ տուած կերակուրովը բաւականանան ։ Թէ՛ զիրենք չընդունող քաղաքներուն մէջ երբեք չկենան. Թէ՛ օձի պէս խորագէտ միանգամայն աղաւնիի պէս միամիտ ըլլան. և Թէ՛ յանուն Ճշմարտութեան դատաստանի ալ մատնուելու որ ըլլան, չվախնան Թէ ինչ պիտի խօսին, վասն զի սուրբ Հոգին պիտի ազդէ իրենց խօսելիքը․ Թէ՛ չվախնան անոնցմէ որոնք միայն մարմինը կրնան սպաննել, հապա վախնան անկէց որ հոգին ու մարմինը կրնայ կորնցընել դեհենի հրոյն մէջ ։ Նաև նաև՝ Թէ Ով որ կը խոստովանի զիս մարդոց առջևը, ես ալ զանիկայ պիտի խոստովանիմ (Ճանչնամ) Հօր Աստուծոյ և հրեշտակաց առջև. և ով որ մարդոց առջև զիս կ'ուրանայ, ես ալ զանիկայ պիտի ուրանամ (չճանչնամ) Հօր Աստուծոյ և հրեշտակաց առջև ։ Յայտնեց ևս Թէ այս քարոզութիւնը հաւատացողի ու չհաւատացողի մէջ վէճի ու բաժանման առիթ պիտի ըլլայ Թէպէտ, բայց ով որ, բաւ, ինչ և իցէ բան մը աւելի կը սիրէ, և

իւր խօսքը առնելով իմ՛ եղբօրս չգար, ինձ արժանի չէ ։ Հաւնի յետոյ բառս նաեւ թէ՝ Ձեզ ընդունողը զիս եւ հետեւաբար զիս ղրկող Հայր Աստուածը ընդունած կ'ըլլայ ․ եւ ձեզմէ մէկուն միայն յանուն աշակերտի գաւաթ մը ջուր տըւողը՝ իւր վարձքը չպիտի կորսնցընէ ։ Այսպէս շատ խրատներ տալով՝ ղրկեց զանոնք, եւ ինքը գնաց ի Կափառնաում ։

5․ Իսկ Հերովդէս թէեւ բանտարկեր էր զՅովհաննէս Մկրտիչը, այլ կը փափաքէր զանիկայ մեռցընելու, եւ գիտէր ալ որ սուրբ մարդ է, ուստի եւ անոր խրատներին ալ կը յարգէր․ Բայց եղաւ որ Հերովդէս իրեն ծննդեան օրը մեծ խնճոյք մը ընելով հրաւիրեց իւր բոլոր նախարարները․ ու Հերովդիադայի աղջիկը հոն տեղ կաքաւելով՝ շատ հաճոյ թուեցաւ Հերովդէսի ու անոր բազմականաց, ուստի Հերովդէս երդմամբ խոստացաւ անոր թէ՝ «Խնդրէ ինչ որ կ'ուզես, ու մինչեւ թագաւորութեանս կէսը պիտի տամ՝ քեզի»։ Իսկ անոր մայրը որ ոխ ունէր Յովհաննէս Մկրտչի դէմ, իւր աղջիկը համոզեց որ անկից ալ Յովհաննէսին գլուխը ուզեց ։ Հերովդէս թէպէտ եւ տրտմեցաւ, բայց հրապարակաւ ըրած խոստումը կատարելու համար, Յովհաննէս Մկրտիչը բանտին մէջ գլխատել տալով՝ գլուխը անոր յանձնեց որ տարաւ իւր մօրը ։ Յետոյ Յովհաննէսի աշակերտները եկան ու անոր մարմինը թաղեցին ․ Այսպէս նահատակուեցաւ Քրիստոսի կարապետը Յով-

հանդէս՝ որ խոր սուրբ վարքովը պատկառելի էր ամենուն , որուն համար Քրիստոս ալ վկայեց թէ՝ ՚ի ծնունդս կանանց անկէ մեծ մէկը չկայ ։

6 . Այսուհետեւ երբ Հերովդէս կը լսէր այն համբաւները որ Յիսուսի համար կ'ըսէին թէ Յովհաննէս կամ՝ ուրիշ մեծ մարգարէ մը յարութիւն առած է , կը զարմանար , եւ կ'ուզէր զանիկայ տեսնել ։ Այն միջոցներուն Յիսուսի աշակերտները դարձան ՚ի քարոզութենէ , Յիսուս ալ անոնց հետ ծովուն միւս կողմը անցաւ ։ Բեթսայիդայի կողմերը ու լեռան մը վերայ կը նստէր անոնց հետ ։

## ԳԼՈՒԽ Ը.

1 . Յիսուս հացերը կը շատցնէ ։ 2 . Ծովուն վերայ կը քալէ ։ 3 . Խօսք մարմնոյ եւ արեան խորհուրդը ։ 4 . Առաքելոց մէկ ալ ուրացող խնդիրը ։ 5 . Յիսուսի բժշկութիւնները ։ 6 . Պետրոսի դաւանութիւնը ։ 7 . Յիսուս առաքեալներուն ալ անոր համաձայնութիւնը ըսաւ ։ ( Մատթ . ԺԴ . 14—ԺԶ . 28 . Մարկ . Զ . 30—Ը . 39 . Ղուկ . Թ . 12—27 . Յովհ . Զ . 1—69 . ) ։

1 . Զատկի տօնին մօտերն էր երբ դարձեալ շատ բազմութիւն ժողվուած էին Յիսուսի քով , եւ օրն ալ երեկոյ ըլլալով՝ աշակերտները ըսին Յիսուսի թէ՝ « Այս անապատ տեղը կերակուր չգտնելով՝ ժողովուրդը արձակէ որ երթան ուտելիք ծախեն » . եւ անիկայ պատասխանեց թէ՝ Դուք տուէք անոնց կերակուրը ։ Իսկ երբ անոնք տարակուսելով՝ Յիսուսի իմացուցին թէ իրենք միայն հինգ հաց եւ երկու ձուկ ունին , Յիսուս ըսաւ որ ժողովուրդը խումբ խումբ նստեցնեն . եւ ինքը նոյն հինգ հացը եւ երկու-

ձուկը առնելով երկինքը նայեցաւ և գոհանալով օրհնեց, ու մանրելով ժողովուրդին բաժնել տուաւ, որով բաց 'ի կիններէն ու տղայներէն հինգ հազարի չափ մարդիկ կերան կշտացան, և առան երկու տասն կտորուանք ալ աւելցան. Ինչպէս և առջի քիչ մը ատենն ալ եօթը հացը և քիչ մը ձուկը օրհնելով՝ չորս հազարի չափ մարդիկ կշտացուց բաց 'ի կիններէն ու տղայներէն, և եօթը զամբիւղ ալ կտորուանք աւելցաւ.

2. Ժողովուրդը այս մեծ հրաշքին ալ որ տեսան՝ որոշեցին որ Յիսուսը առնեն իրենց թագաւոր ընեն. ուստի Յիսուս ալ նորա աշակերտները նաւ մը ճամբայ հանեց և ինքը հոն մնաց առանձին աղօթելու. Երբ գիշերին կէսը եղր անոնք ծովուն վրայ կը ծփային հակառակ հովով մը և ահա տեսան որ Յիսուս ծովուն վըրայէն քալելով դէպ 'ի իրենց կու գայ, և ասոր բան մը կարծելով խիստ վախցան ու սկսան աղաղակել. Նոյն ատեն Յիսուս ձայնեց թէ՝ «Մի վախնաք ես եմ»։ Իսկ Պետրոս պատասխանեց. «Տէր, թէ որ դուն ես՝ հրաման ըրէ որ կարող ըլլամ՝ քեզի գալ ջրերուն վրայէն»։ Յիսուս ալ հրամայեց որ գայ. Ուստի Պետրոս նաւէն իջնելով ջրերուն վրայէն քալելով Յիսուսի քով եկաւ. բայց հովին սաստկութիւնը տեսնելով վախցաւ, և երբ սկսաւ ընկղմիլ, աղաղակեց «Տէր, փրկէ զիս»։ և Յիսուս անոր ձեռքէն բռնելով «Թերահաւատ, ըսաւ, ինչու երկմտեցար»։ Նոյնհետայն նաւուն մէջ եկան, ու

ծովին ալ հանդարտելով՝ յաջող հովով մը շուտով հասան իրենց երթալու տեղը։ Նաւուն մէջ եղողները տեսնելով այս եղած բաները երկրպագութիւն ընելով Յիսուսի, ըսին. «Արդարեւ Որդի Աստուծոյ ես դու»։

3. Նոյն ժողովուրդը սկսան Յիսուսը փնտռել, եւ ծովուն միւս կողմը անցնելով գտան զանիկա Կափառնաումի մէջ։ Եւ Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարիտ կ'ըսեմ, որ դուք զիս կը փնտռէք ոչ թէ հրաշքները տեսնելնուդ համար, հապա անոր համար որ այն հացերէն կերաք ու կշտացաք։ Գործեցէք, գործեցէք ոչ թէ կորստեան կերակուրին համար, հապա այն կերակուրին համար որ յաւիտենական կենաց մէջ կը մնայ»։ Յետոյ սկսաւ վարդապետել իր սուրբ մարմնոյ եւ արեան Հաղորդութեան խորհրդոյն վրայ թէ՝ «Ես եմ կենաց հացը՝ որ յերկնից իջայ. Ես եմ հացն կենդանի. թէ՝ Իմ մարմինս ճշմարիտ կերակուր ու իմ արիւնս ճշմարիտ ըմպելի է, ուրեմն ով որ ուտէ եւ ըմպէ, նա յիս պիտի բնակի եւ ես ի նա. եւ յաւիտենական կեանք պիտի ունենայ, եւ անոր յարութիւն տանել պիտի տամ վերջին օրը»։ Եւ այլ շատ կերպով խօսեցաւ այն սուրբ Խորհրդին վրայօք, զոր յետոյ հաստատեց եւ Ընթրեաց գիշերը։

4. Ասկէ յետոյ Գալիլեայի մէջ կը պտտէր Յիսուս, եւ իրեն քով ժողովուեցան Դպիրներ ու Փարիսեցիներ, որոնք կը բամբասէին իրեն աշակերտները թէ անլուայ ձեռօք հաց կ'ուտեն.

վրան ալ իրենք շատ մը խորութիւններէ զատ նաեւ կերակուրէ առաջ ալ խիստ ու շարրութեամբ ձեռքերնին կը լուային. եւ ասիկայ ոչ այնչափ մաքրութեան համար, այլ իբր օրէնք. Ու Յիսուս ըսաւ իրենց. «Ինչո՞ւ Աստուծոյ օրէնքները թողուցեր էք եւ ծերոց աւանդութիւններուն կը հետեւիք, եւ կ'ուսուցանէք թէ Մարդ կրնայ արդարանալ թէ որ ծնողքը չօգնէ, իր անոնց տալիք օգնութիւնը տաճարին նուիրելու համար. եւ այսպէս այն օրէնքին դէմ կը գործէք (որ կը պատուիրէ պատուել ծնողքը): Ասկէ 'ի զատ շատ օրինակներով ու վկայութիւններով աղէկ մը յանդիմանեց զիրենք յայտնելով «Թէ ոչ անլուայ ձեռօք ուտելը, հապա չարութիւնն է որ կը պղծէ զմարդ»:

5. Ու Յիսուս Տիւրոսի ու Սիդոնի կողմերը ելաւ, ու հոն տեղ Փիւնիկեցի կնոջ մը աղաչանքը ու մեծ հաւատքը տեսնելով՝ անոր այսահար աղջիկը բժշկեց. Յետոյ Դեկապոլսի կողմերը հասաւ եւ խուլ մարդ մը բժշկեց. Այնուհետեւ Մագթաղեայ սահմանները գնաց. եւ հոն տեղ փարիսեցւոց անհաւատութիւնը կշտամբեց որոնք նշան կը խնդրէին իրմէ, եւ ըսաւ. «Այս ազգին նշան չպիտի տրուի, եթէ ոչ Յովնանու նշանը»: Անկէ ալ նաւելով անցաւ 'ի Բեթսայիդա, եւ հոն տեղ կոյր մը բժշկեց. եւ հոնկէ ալ ճամբայ ելաւ դէպ 'ի Կեսարիայի[1] կողմերը:

1 Փիլիպպոսի ըսուած Կեսարիայն, Հրէաստանի մէջ.

6. Ճանապարհին կը հարցնէր Յիսուս իր աշակերտացը թէ ժողովուրդը զինքն ով ըլլալուն վրայ ինչ կարծիք ունին. անոնք ալ պատասխանեցին թէ՝ ոմանք Յովհաննէս Մկրտիչը. ոմանք Եղիան կամ Երեմիան և ուրիշներն ալ մարգարէներէն մէկը կարծեն. Յիսուս դարձեալ հարցուց թէ՝ Դուք ինչ կարծիք ունիք. Պետրոս պատասխանեց թէ՝ «Դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ»: Ասոր Յիսուս երանութիւն տալով զինքն և յայտնելով թէ այս բանը ոչ թէ քեզնէ, այլ Հօր Աստուծոյ յայտնութենէն է, ըսաւ. «Դուն ես վէմ (Պետրոս), և այդ վէմին վրայ պիտի շինեմ եկեղեցիս[1]. և դժոխքին դռները զանիկայ չպիտի յաղթեն. ու երկնից արքայութեան բանալիները (կապելոյ և արձակելոյ իշխանութիւնը) քեզի պիտի տամ. և ինչ որ երկրի վրայ կապես կամ արձակես, երկնից մէջ ալ կապուած ու արձակուած պիտի ըլլայ»:

7. Այն դաւանութիւնը ոչ միայն միւս աշակերտները (Մատթ. ԺԴ. 33), և Ղազարու քոյրը Մարթա ալ ըրին (Յովհ. ԺԱ. 27), այլ և երբ անգամ մը ոմանք Յիսուսի խօսքերուն վրայ գայթակղեցան, և Յիսուս իր առաքե-

1 Արդէն Յիսուս յայտնեց թէ վէմի նման հաստատուն հաւատքի ու դաւանութեան վրայ պիտի շինէ իր եկեղեցին. «Առաքելներուն ու մարգարէներուն հիմանը վրայ շինուած որուն անկիւնի գլուխը Յիսուս Քրիստոսն է»: (Եփես. Բ. 20). «Եւ քաղաքին պարիսպը տասներկու հիմեր ունէր ու անոնց վրայ Գառին տասներկու Առաքելոց անունները գրուած էր»: (Յայտ. ԻԱ. 14).

լոյը կարծիքին հարցուց, այն ատեն Պետրոս ըսաւ թէ «Տէր ... մենք հաւատացինք ու գիտցանք թէ Դուն ես Քրիստոս որդին Աստուծոյ կենդանւոյն» (Յովհ. Զ. 70). Եւ ատով յայտնեց Պետրոս թէ անոնք առաքեալք ալ ճիշդ իրեն պէս կը հաւատան։ Ուստի և Յիսուս ալ անոնց մէկէն տուաւ այն իշխանութիւնը ըսելով թէ՝ «Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզ. թէ ինչ որ երկրի վերայ կապէք կամ արձակէք, երկինքի մէջ ալ կապուած ու արձակուած ըլլայ»։ Եւ թէ՝ «Որոնց որ մեղքերը թողուք, թողուած ըլլայ անոնց. և որոնց որ չթողուք՝ թողուած չըլլայ»։ (Մատ. ԺԸ. 18. Յովհ. Ի. 23)։

## ԳԼՈՒԽ ԾԹ.

1. Պայծառակերպութիւն Յիսուսի 2. Լուսնոտին բժշկութիւնը 3. Երկրորդանգամ տարբեր. 4. Ո՞վ է մեծ. 5. Ընկերասիրութեան վերայ. 6. Անողորմ ծառային դատաստանը. 7. Ի ծնէ կուրին բժշկութիւնը. (Մատ. ԺԷ. 1—ԺԸ. 35. ԺԹ. 13—15. Մարկ. Թ. 1—49. Ժ. 13—16. Ղուկ. Թ. 28—56. ԺԸ. 15—17. ԻԲ. 24—27. Յովհ. Ը. 1—11. Թ. 1—41.)։

1. Այս բաներէն քանի մը օր ետքը Յիսուս իր աշակերտներէն երեքը առնելով բարձր լեռ մը (Թաբոր) վերայ ելաւ, և հոն անդ աղօթքի կեցաւ։ Եւ աղօթելու ատեն անոր կերպարանքը բոլորովին փոխուեցաւ. երեսները արեւու պէս լուսաւորեցան ու հագուստները ձիւնի պէս ճերմկցան. նոյն միջոցին Մովսէս ու Եղիան ալ երեւցան փառօք, որոնք Յիսուսի հետ կը խօսէին անոր Երուսաղէմի մէջ կրելիք անցքերուն վերայ։ Իսկ Պետրոս և Յակոբոս և

Յովհաննէս որոնք քնացած էին . երբ արթնցան ու տեսան Յիսուսի փառքը և Մովսէսն ու Եղիան , Պետրոս ըսաւ Յիսուսի . « Վարդապետ , աղէկ է որ հոս մնանք . ու երեք տաղաւար (խրճիթ) շինենք , քեզի . Մովսէսին ու Եղիային » . բայց չէր գիտեր թէ ինչ կը խօսէր , ինչու որ զարհուրած էին . Երբ այս խօսքերը կ'ընէին , ամպ մը եկաւ ու հովանի եղաւ իրենց վրայ , և անոր մէջէն ձայն մը եկաւ որ կ'ըսէր . « Աս է իմ սիրելի որդիս , անոր մտիկ ըրէք » . և աշակերտները վախնալով երեսի վրայ ինկան . և երբ Յիսուս զիրենք ոտք հանեց , տեսան որ մինակ էին Յիսուսի հետ , որ պատուիրեց այս տեսածնին մարդու չըսել , մինչև իր 'ի մեռելոց յառնելը :

2 . Եւ երբ լեռնէն վար կ'իջնէին , շատ ժողովուրդ եկան Յիսուսը գտնալու , և անոնց մէջէն մէկը կ'աղաղակէր ըսելով . « Վարդապետ , կ'աղաչեմ , նայէ իմ միակ որդւոյս որ կ'այսահարի ու կը տանջուի . թէ և աշակերտներուդ աղաչեցի , բայց չկարողացան բժշկել » . Եւ Յիսուս անոր հաւատքը տեսնելով սաստեց պիղծ ոգւոյն ու բժշկեց տղան . և երբ աշակերտները հարցուցին թէ ինչու մենք չկարողացանք բժշկել , յայտնեց թէ՝ միայն իրենց թերահաւատութեանը համար չեն կրցած :

3 . Նոյնհետև Յիսուս Կափառնաում որ եկաւ , երկդրամեան առնուած տուրքը պահանջողները Պետրոսի գալով ըսին թէ՝ « Ձեր վար-

դապետը այս տուրքը չ՞ վճարեր » . Եւ անիկայ ըսաւ . « Այո , կը վճարէ » ։ Յիսուս թէ եւ յայտնեց Պետրոսի որ թագաւորք իրենց որդիներէն տուրք չեն առներ . ուստի եւ անոնք տուրքէ ազատ են . բայց « որպէս զի չգայթակղեցընենք զիրենք , գնա՛ ծովը եւ կարթ ձգէ , ու առաջին ձուկը որ ելնէ , բաց բերանը եւ ստակ մը (չորս դահեկան . 15 ղուրուշ) պիտի գտնես , եւ զանիկայ տուր ինծի եւ քեզի համար » ։ Եւ Պետրոս ալ այնպէս ըրաւ ։

4 . Օր մը Յիսուսի աշակերտաց մէջ վէճ մը ելաւ թէ ո՛վ է մեծ իրենց մէջ , ու եկան Յիսուսի հարցուցին ։ Անիկայ ալ տղայ մը առնելով կայնեցուց իրենց մէջ ու ըսաւ . « Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզ . թէ մինչեւ որ դարձի չգաք , եւ տղոց պէս չըլլաք , չպիտի մտնէք երկնից արքայութեան մէջ ։ Արդ ո՛վ որ իր անձը կը խոնարհեցընէ այս տղուն պէս , նա է մեծ երկնից արքայութեան մէջ . եւ ո՛վ որ ասանկ տղայ մը կ՚ընդունի իմ անուանս , զիս ընդունած կ՚ըլլայ . եւ ո՛վ որ կը գայթակղեցընէ այս պզտիկներէն մէկը որ ինծի կը հաւատան , աւելի աղէկ է որ իր պարանոցէն քար մը կախէ ու ծովը նետուի » ։ Անգամ մը ալ պզտիկ տղաքներ բերին Յիսուսի որ օրհնէ . եւ երբ աշակերտները չէին թողուր որ անհանգիստ չըլլայ . « Թող տուէք , ըսաւ Յիսուս , որ քովս գան , վասն զի այսպիսիներուն է երկնից արքայութիւնը » . Եւ ձեռնքը գլխին առնելով օրհնեց ։

5 · Յիսուս իր աշակերտաց հարցմանը պատասխանելէ զկնի թէ ինչպէս պէտք է ներել և խրատել մեղուցեալ եղբայր մը · այն ատեն ըսաւ · « Թագաւորին մէկը իր ծառաներուն հաշիւը տեսնելով՝ անոնցմէ մէկը տասը հազար քանքար պարտական գտնուեցաւ · և տեսնելով թէ չպիտի կրնայ հատուցանել, սկսաւ աղաչել և ժամանակ ուզել · ուստի Թագաւորն ալ գթալով՝ շնորհեց անոր պարտքը : Իսկ անիկայ երթալով գտաւ մէկը ուրիշ ինքը հարիւր դահեկան առնելիք ունէր · և սկսաւ զանիկայ նեղը ձգել որ վճարէ · և երբ անիկայ ժամանակ կ'ուզէր, մտիկ չըրաւ ու բանտարկել տըուաւ զանիկայ : Թագաւորը իմանալով այս բանը, կանչեց զինքը ու ըսաւ · « Ո՛վ չար և վատ ծառայ, ես որ քու բոլոր պարտքդ թողուցի աղաչելուդ համար, ուրեմն պէտք չէ՞ր որ դուն ալ քու ընկերոջդ ողորմէիր ու շնորհ ընէիր · և հրաման ըրաւ որ բանտարկեն, մինչև որ իր պարտքը հատուցանէ » : Նոյնպէս ալ ըսաւ Յիսուս, ձեր երկնաւոր Հայրը պիտի ընէ, թէ որ ամէն մէկերնիդ ձեր եղբօրը յանցանքը սրտի մտօք չթողուք :

6 · Տաղաւարահարաց տօնին մօտերը Յիսուս ճամբայ ելնելով դէպ ՚ի Երուսաղէմ, երբ ճանապարհին Սամարացւոց գիւղ մը զինքը չընդունեցին, և աշակերտներէն ալ կ'ուզէին որ պատժէ զանոնք, յանդիմանեց Յիսուս զիրենք ըսելով · « Ես չեմ եկած որ զմարդիկ կորսնցը-

նեմ, հայրս տխրեցընեմ»։ Եւ անկէ Երուսաղէմ գալով Տաճարին մէջ կ'ուսուցանէր. Փարիսեցիք որ կը նախանձէին և կուրացած էին անոր սքանչելիքներն ու վարդապետութիւններ-ը լսելու, հետևաբար առիթ մը կը փնտրէին չարախօսելու։ Անառակութեան մէջ բռնուած կին մը ներկայացուցին անոր, ըսելով թէ՝ «Ըստ օրինաց պէտք է որ զանիկայ քարկոծենք. արդ դու ի՞նչ կարծիք ունիս»։ Իսկ Յիսուս առանց իրենց նայելու գետնին վրայ մատովը կը գրէր. և երբ կստիպէին որ պատասխանէ, յանկարծ նայելով ըսաւ. «Ձեր մէջէն անմեղ եղողը թող ձգէ առաջին քարը»։ Այս խօսքին վրայ իրենց խղճէն յանդիմանուելով ամէնքն ալ հեռացան, դուրս ելան և միայն կինը մնաց. Յիսուս ալ ըսաւ անոր. «Ո՞ւր են. ոչ մէկը դքեզ չդատապարտեց»։ և անիկայ պատասխանեց. «Ոչ Տէր»։ և Յիսուս ըսաւ. «Ես ալ չեմ դատապարտեր զքեզ. գնա, բայց այսուհետև մի մեղանչեր»։

7. Յիսուս Երուսաղէմի մէջ շատ քարոզութիւններ ընելով կը հաստատէր իւր որդի Աստուծոյ և Աստուծմէ ղրկուած ըլլալը, և կը յանդիմանէր Հրէից կուրութիւնը։ Շաբաթ օր մը ալ ՚ի ծնէ կոյր մարդ մը տեսաւ, և գետնի վրայ կաւ շինեց, ու անով կոյրին աչքերը ծեփեց պատուիրելով որ երթայ Սիլովամի աւազանին մէջ լուացուի. անիկայ ալ Յիսուսի պատուիրածին պէս ըրաւ ու աչքերը բացուե-

ցան, անանկ որ զինքը ճանչցողները կը տարակուսէին թէ արդեօք նոյն մարդն է որ երբեմն կոյր էր։ Իսկ փարիսեցիք իմանալով շաբաթ օր բժշկելը, կ՚ըսէին այն մարդուն թէ «Յիսուս մեղաւոր մարդ մի է»։ Բժշկուողն ալ կ՚ըսէր. «Թէ որ մեղաւոր ըլլար և Աստուծմէ զրկուած չըլլար, չէր կրնար զիս բժշկել»։ Ասոր վրայ փարիսեցիք բարկացան ու վռնտեցին զանիկայ։ Նաև Յիսուս գտնելով զանիկայ՝ ինքզինքը յայտնեց անոր, որ հաւատալով՝ երկրպագութիւն ըրաւ անոր։

## ԳԼՈՒԽ Ժ.

1. Եօթանասուն երկու աշակերտք։ 2. Սամարացւոյ մը գթութիւնը։ 3. Ընծայ մեծատանը։ 4. Կարկամեալ կնոջ ու ջրգողեալ մարդուն բժշկութիւնը։ 5. Յետին [illegible] խառնակութեան։ 6. Ընթրիքին հրաւիրեալները (Ղուկ. Ժ. 1—37. ԺԳ. 1—17. ԺԴ. 1—24. Մատ. ԻԲ. 1—14.)։

1. Այս բաներէն ետքը Յիսուս եօթանասուն երկու աշակերտներ ալ որոշելով երկու-երկու զրկեց զանոնք քարոզութեան, պատուիրելով նոյն բաները ինչ որ տասներկու առաքեալները զրկելու ատեն պատուիրած էր։ Ասոնք ալ շատ տեղեր քարոզելով, ու Յիսուսի անունովը հրաշքներ ալ գործելով ուրախութեամբ դարձան անոր քով։

2. Օր մը օրինականին մէկը Յիսուսը փորձելու համար ըսաւ. «Վարդապետ, ինչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»։ Յիսուս ալ պատասխանեց թէ «Ինչ որ գրուած է

օրէնքին մէջ, ինչպէս. «Սիրես քու Տէր Աստուածդ յամենայն սրտէ, նոյնպէս և ընկերդ»: Իսկ անիկայ ինքզինքը արդարացընել ուզելով հարցուց թէ «Ո՞վ է իմ ընկերս»: Եւ Յիսուս ըսաւ. «Մարդուն մէկը ճամբուն երթալու ատեն աւազակներու ձեռք ընկաւ, որոնք զինքը մերկացուցին ու վիրաւորեցին և ճամբուն վրայ թողուցին կիսամեռ. Եւ եղաւ որ քահանայ մը և քիչ մը յետոյ Ղեւտացի մը անցան այն տեղէն, և զանիկայ այն խեղճ վիճակին մէջ տեսնելով զանց ըրին ու գացին. Յետոյ Սամարացի մը ալ անցնելով երբ տեսաւ զանիկայ, ու անոր վէրքերը ձէթով ու գինիով պատեց զինքը գրաստին վրայ առաւ, ու պանդոկ մը տանելով դարմանեց զանիկայ. Իսկ երբ ինքը պիտի երթար, հանեց պանդոկապետին դրամ ալ տուաւ, պատուիրելով որ դարմանէ զայն խեղճ մարդը, և ըսաւ թէ «Ասկէ զատ ինչ ծախք ալ որ ընես, դառնալու ատենս կը վճարեմ»: «Արդ, ինչ կը կարծես, այս երեքէն ո՞ր ընկեր եղած եղաւ այն խեղճ մարդուն»: Եւ անիկայ պատասխանեց թէ «Ան որ անոր ողորմութիւն ըրաւ»: Ուստի Յիսուս ըսաւ. «Երթա՛ դուն, դուն ալ անոր պէս ըրէ»:

3. Ժողովուրդին մէկը ըսաւ Յիսուսի. «Հրամայէ եղբօրս որ ժառանգութեանս բաժինը տայ»: Յիսուս ալ յայտնելով թէ ինքը ոչ դատաւոր է և ոչ բաժանարար, ըսաւ ժողովրդեան, թէ ինչպէս պէտք է զգուշ կենան

ամէն ագահութենէ, վասն զի ըսաւ, մարդու մը կեանքը իր ստացուածքներէն չէ. և առակ մի ալ խօսեցաւ թէ՝ « Հարուստ մարդուն մէկը կը մտածէր իր արտերէն եկած բարիքները պահելու համար. ուստի որոշեց որ իր ամբարները քակէ ու մեծցընէ, և այն ատեն ըսէ ինքզինքին. Ով իմ անձս, ահա շատ բարիքներ ունիս՝ շատ տարիներու համար ժողվըւած. հանգչէ, կեր, խմէ և ուրախութիւն ըրէ: Բայց Աստուած ըսաւ անոր. Ով անմիտ, այս գիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջուի, ուստի այդ պատրաստած բարիքներդ որո՞ւն պիտի ըլլայ »: Այսպէս է՝ ըսաւ Յիսուս, այն մարդը որ իր անձին համար գանձ կը ժողվէ, և Տէրոջը համար չհարստանար:

4. Յիսուս ժողովրդանոցի մը մէջ ուսուցանելու ատեն, կին մը եկաւ հոն որ տասնևութը տարիէ ՚ի վեր կարկամեալ էր, ու չէր կրնար շտկուիլ ու վեր նայիլ: Յիսուս զանիկայ կանչելով ու ձեռքը անոր վրայ դնելով ըսաւ. « Ով կին, արձակուած ես քու հիւանդութենէդ »: և իսկոյն բժշկուեցաւ անիկայ, ու զԱստուած կը փառաւորէր: Շաբաթ օր մի ալ երբ Յիսուս Փարիսեցիի մը տունը հաց ուտելու գացած էր, հոն տեղ ալ ջրգողեալ մէկը կար և զանիկայ ալ բժշկեց, թէպէտ և Փարիսեցիք կը դժկամակէին շաբաթ ըլլալուն համար:

5. Ու տեսնելով Յիսուս թէ ինչպէս անոնք բազմականաց մէջ առաջին տեղը նստիլ կ'ուզէ-

ին , ըսաւ թէ՝ մարդ երբ տեղ մը կանչուի , պէտք չէ որ առաջին տեղը նստի , որ աւելի պատուաւոր մէկը գալով՝ ինքը վար իջնելու չամչնայ ։ Հապա պէտք է ըսաւ , յետին տեղը նստի , որպէս զի յետոյ վեր հրաւիրուի ։ Ե-ղինքը հրաւիրողին ալ ըսաւ . « Երբ հացկերոյթ կ'ընես , մի կանչեր քու բարեկամներդ ու ազգականներդ , որ անոնք ալ փոխարէն զքեզ կանչեն և հատուցում ըլլայ քեզի ։ Հապա կանչէ աղքատները , որոնք չեն կրնար քեզի հատուցում ընել , որուն փոխարէնը պիտի հատուցուի քեզի յարութեան օրը ։ »

6 . Յիսուս իմացընելու համար թէ շատերը իրենց ապաշխարհութեամբը պիտի զրկուին Աստուծոյ փառքէն , առակով մը յայտնեց ըսելով . « Թագաւորին մէկը իր որդւոյն հարսանեաց ընթրիքը պատրաստեց և շատ մարդիկ հրաւիրեց ։ Իսկ անոնք ամէնքն ալ մէկ մէկ բան պատճառելով չգացին ։ Ետքը Թագաւորը բարկանալով ըսաւ իր ծառայիցը որ հրապարակը ել-նեն , և աղքատները ու կաղերը հոն բերեն . և տեսնելով որ տակաւին տեղ կայ , կրկին հըրամայեց ըսաւ որ գացին ճամբաները զօրով որ գըտածն կանչեցին ընթրիքի , և այսպէս տունը լեցաւ հրաւիրուածներով ։ Բայց Թագաւորը ըսաւ թէ՝ Այն առաջին հրաւիրեալներէն մէկն ալ իմ ընթրիքիս համը պիտի չառնէ ։

# ԳԼՈՒԽ ԺԱ.

1 Նաւակատեաց տօնը. 2. Մոլորեալ ոչխարին գտնուիլը. 3. Անառակ որդւոյն դարձը. 4. Հնարագէտ տնտեսը. 5. Անզգամ մեծատունը. (Յովհ. Ժ. 22—42. Ղուկ. ԺԵ. 1—ԺԶ. 31.)

1. Այն ատենը երբ Երուսաղէմի մէջ նաւակատեաց տօնը կ'ըլլար, Յիսուս ալ կը պտըտէր տաճարին մէջ Սողոմոնի բաւած սրահը: Հոն տեղ ալ Հրէից հարցումներուն պատասխանելով յայտնեց թէ ինքն է որդի Աստուծոյ, բայց իրենք չեն հաւատար, վասն զի իւր ոչխարներէն չեն: Հրեայք ուզեցին զինքը քարկոծել, ապա Յիսուս անոնց ձեռքէն ելաւ, քանզի դեռ ժամանակը եկած չէր. և դարձաւ գնաց Յորդանանու միւս կողմը, ուր երբեմն Յովհաննէս մկրտութիւն կ'ընէր. և շատերը հոն երթալով հաւատացին իրեն:

2. Եւ փարիսեցւոց այն տրտունջին համար որ կ'ընէին Յիսուսի մեղաւոր մարդոց հետ կենակցելուն ու ընտանութիւն ընելուն համար, ըսաւ Յիսուս. «Ո՞վ է այն մարդը որ իւր հարիւր ոչխարներէն մէկը եթէ կորսնցընէ, չթողու ինըսուն ու ինը, և այն կորսուածը չփնտռէ. զոր երբ գտնէ, ուրախանալով իւր ուսերուն վերայ կը դնէ զանիկայ և կու գայ իւր բարեկամներն ալ իրեն խնդակցութեան կը հրաւիրէ»: Եւ կամ ինչպէս այն կինը որ իւր տասը դրամին մէկը թէ որ կորսնցընէ, ճրագ կը վառէ, և տանը մէջ աւել զարնելով զգուշութեամբ կը

փնտռէ մինչեւ որ գտնէ . զոր երբ գտնէ , իւր բարեկամաց հետ կ'ուրախանայ ։ Նոյնպէս ալ բսաւ Յիսուս . ուրախութիւն կ'ըլլայ երկինքը հրեշտակաց մէջ մէկ մեղաւորի մը համար որ կ'ապաշխարէ , քան թէ շատ մը արդարներու համար ։

3. Յիսուս ուրիշ առակ մը ալ բսաւ այս նիւթին վերայ . « Հարուստ մարդուն մէկը երկու որդի ունէր , որոնց պզտիկը իւր ժառանգութեան բաժինը հօրմէն պահանջելով առաւ , եւ հեռու երկիր մը երթալով ամենը մսխեց անառակութեան մէջ ։ Յետոյ սաստիկ սով մը ըլլալով հոն տեղ , ստիպուեցաւ օրական հաց մը ճարելու համար մէկու մը քով ծառայութեան մտնել , որ այն ալ իւր ագարակը ղրկեց զանիկայ խոզեր արածելու համար ։ Այնչափ խեղճ կացութեան մէջ որ մը ինքզինքին գալով բսաւ . « Քանի՜ վարձաւորներ կան որոնք իմ հօրս տանը մէջ կը կշտանան եւ ես հոս տեղ սովամահ կը կորսուիմ . ելնեմ , երթամ իմ հօրս եւ աղաչեմ որ զիս գոնէ ծառայի մը տեղ ընդունի ։ Ելաւ եկաւ իւր հօրը քով . եւ երբ դեռ հեռուն էր , հայրը տեսաւ զինքը եւ գութը շարժեցաւ , եւ վազելով անոր պարանոցին վերայ ինկաւ ու համբուրեց . այն ատեն որդին բսաւ . Հայր , մեղայ երկնքին եւ առաջի քու , ալ չեմ արժանի քու որդիդ կոչուելու . քու ծառաներուդ մէկուն տեղը ընդունէ զիս ։ Բայց հայրը բսաւ իւր ծառաներուն . Բերէք առաջին պատմուճանը եւ հագ-

ցուցէք անոր․ մատնեմն դրէք մատը․ և կօշիկ-ները տուէք ոտքերուն․ ու պարարտ զուարակը մորթեցէք․ որ ուրախութիւն ընենք․ և սկսան ուրախութիւն ընել․ Իսկ տան մեծ եղբայրը որ ագարակէն կը դառնար․ լսելով այս ուրախու-թեան ձայները, և ծառաներուն մէկէն իմանա-լով պատճառը․ բարկացաւ․ և չէր ուզեր տան մտնել․ Իսկ երբ հայրը դուրս ելնելով զինքը ներս կը կան-չէր․ բսաւ անոր․ Հայր․ այսչափ տարին է որ քե-զի կը ծառայեմ, ու բնաւ խօսքէդ դուրս չելայ․ ինծի ուլ մը չտուիր որ բարեկամներուս հետ ուրախութիւն ընէի․ իսկ երբ եկաւ այդ որդիդ որ քու ստացուածքդ անառակութեան մէջ փը-ճացուց․ անոր համար պարարտ զուարակը մոր-թեցիր․ Իսկ հայրը բսաւ․ Որդեակ, դուն միշտ իմ հետս ես, և իմ բոլոր ունեցածս քուկդ է․ բայց պէտք է ուրախ ըլլալ ու խնդալ․ ինչու որ այս քու եղբայրդ մեռած էր ու ողջցաւ, կոր-սուած էր ու գտնուեցաւ »։

4․ Յիսուս ուրիշ անգամ առակ մը ալ ը-սաւ․ « Հարուստ մարդուն մէկը լսելով թէ իր տնտեսը չաւրութիւն կ՚ընէ, ուզեց անոր հաշիւը տեսնել որ ճամբէ․ Բայց անիկայ մը-տածելով որ գործել չկրնար, մուրալու ամա-չէ․ ուստի հնարք մը մտածեց․ իր տիրոջը պարտք ունեցողները կանչեց ու անոնց պարտ-քերուն մէկ մէկ մասը ուրիշ տուաւ, որպէս-զի թէ որ պաշտօնէն ելնէ, զինքը իրենց տուներ ընդունին․ Նոր տէրն ալ երբ լսեց անոր խե-

րութեամբ գործը տեսնելը՝ գովեց զանիկայ։ Այսպէս ալ՝ ըսաւ Յիսուս, և դուք ձեռքերնիդ եղածովը բարեկամ ստացէք թողութիւն և ողորմութիւն ընելով, աղքատութեան մէջ տեղ ստանալու համար։

5. Փարիսեցիք որ արծաթասէր էին, և այս բաները լսելով կը ծաղրէին զՅիսուս. ուստի անիկայ ալ զիրենք կշտամբելէ զկնի, ըսաւ. « Հարուստ մարդ մը կար ամեն օր բեհեզ ու ծիրանի կը հագնէր ու փառաւորապէս ուրախութիւն ընելով կ'ապրէր, առանց գթութիւն ընելու նաև այն Ղազարոս անուն վիրաւոր աղքատին որ իր դրանը առջև կը կենար ու իրեն սեղանին փշրանքներուն ալ կարօտը կը քաշէր։ Ու եղաւ որ այն աղքատը մեռաւ, ու հրեշտակները Աբրահամու գոգը տարին զանիկայ. այն հարուստն ալ մեռաւ ու թաղուեցաւ։ Ու դժոխքին մէջ երբ կը տանջուէր, աչքերը վերցուց ու հեռուէն տեսնելով Աբրահամը և Ղազարոսը որ անոր գոգը հանգստացեր էր, աղաղակեց ըսելով. Հայր Աբրահամ, ողորմէ ինծի, ու ղրկէ Ղազարոսը որ մատին ծայրը ջուրը թաթխելով գայ լեզուս զովացընէ, քանզի այս կրակին մէջ կը տանջուիմ։ Որդեակ, պատասխանեց Աբրահամ, միտքդ բեր, որ դուն կեանքիդ մէջ քու բարիքներդ առիր, և Ղազարոս ալ չարիքները. հիմա ալ անիկայ հոս կը մխիթարուի, և դուն այդ տեղ կը տանջուիս. նաև ձեր ու մեր մէջ մեծ վիհ մը կայ որ մեզնէ ձեզի, եւ

ձեզնէ մեզի անկարելի է անցնիլ. Ու անիկայ ըսաւ. Ուրեմն կաղաչեմ հայր, որ զանիկայ իմ հօրս տունը ղրկես, որ երթայ իմ հինգ եղբայրներուս վկայութիւն տայ, որ չըլլայ թէ անոնք ալ այս չարչարանաց տեղը գան. Աբրահամ ալ ըսաւ. Անոնք Մովսէսն ու մարգարէները ունին, թող անոնց մտիկ ընեն. — Ոչ, հայր Աբրահամ, պատասխանեց մեծատունը. թէ որ մեռելներէն մէկը երթայ անոնց՝ պիտի ապաշխարեն. Իսկ Աբրահամ ըսաւ. Թէ որ Մովսէսի ու Մարգարէից մտիկ չեն ըներ, և ոչ մեռելներէն մէկը թէ որ երթալու ըլլայ՝ պիտի հաւատան»։

## ԳԼՈՒԽ ԺԸ.

1. Ղազարոսի յարութիւնը. 2. Քահանայապետներուն դաւաճանութիւնը. 3. Տասը բորոտներուն բժշկութիւնը. 4. Աստուծոյ թագաւորութիւնը. 5. Փարիսեցին ու մաքսաւորը. 6. Պարտքը կատարող ծառան. 7. Մեծատունի մը հարցմունքը. 8. Աշակերտներուն վարձքը. (Յովհ. ԺԱ. 1—54. Ղուկ. ԺԷ. 7—ԺԸ. 34. Մտթ. ԺԹ. 16—30. Ի. 1—16. Մրկ. Ժ. 17—31.)

1. Ուր եղաւ որ Յիսուսի բարեկամը Ղազարոս ծանր հիւանդութեան մէջ իյնալով, և անոր քոյրերը Մարթա և Մարիամ իմաց տուին Յիսուսի, որ երբ լսեց՝ երկու օր ևս կեցաւ եղած տեղը. Յետոյ աշակերտացը ըսաւ թէ՝ Երթանք Հրէաստան, ու արթնցնեմ մեր բարեկամը Ղազարոսը որ քնացեր է. և երբ անոնք այս խօսքը չհասկնալով զարմացան, այն ատեն յայտնապէս ըսաւ. «Ղազարոս մեռաւ. բայց ես ուրախ եմ որ ասով՝ ձեր հաւատքը պիտի հաստատուի»։ և Յիսուս Բեթանիա եկաւ ուր էր

Ղազարոսի տունը. Մարթա լսելով անոր գալը՝ դիմաւորեց ու ըսաւ. «Տէր, թէ որ հոս ըլլայիր՝ եղբայրս չէր մեռներ»: Եւ Յիսուս ըսաւ. «Ես եմ յարութիւն և կեանք. այն որ ինծի կը հաւատայ, թէև մեռնի ալ՝ պիտի ապրի. և այն որ կենդանի է ու ինծի կը հաւատայ, յաւիտեան չպիտի մեռնի. դուն կը հաւատա՞ս ասոր»: «Այո, Տէր», պատասխանեց Մարթա, կը հաւատամ թէ Դուն ես Քրիստոսը Աստուծոյ որդին, որ աշխարհ գալու էիր»: Քիչ մը յետոյ Մարիամ ալ եկաւ Յիսուսի քով, որուն հետ եկան նաև իրենց բարեկամներէն ոմանք, որոնք եկած էին մխիթարելու: Եւ Մարիամ ալ լալով ըսաւ. «Տէր, թէ որ հոս ըլլայիր, եղբայրս չէր մեռներ»: Յիսուս տեսնելով որ ամէնքը կու լան, խիստ հոգւոյն մէջ խռովեցաւ և հարցուց թէ՝ «Ո՞ւր էք դրած զանիկայ»: Անոնք ալ դէպ ի գերեզմանը առնելով զինքը, ըսին. «Տէր, եկուր և տես»: Եւ Յիսուս արտասուեց: Ու գերեզմանին վերայի քարը վերցնել տուաւ, և աչքերը վեր վերցնելով՝ Հօր Աստուծոյ գոհութիւն տալէ զկնի, բարձր ձայնով մը կանչեց. «Ղա՛զարոս, եկո՛ւր դուրս եկուր»: Ու անմիջապէս չորս օրուայ թաղուած մեռելը պատանքովը դուրս եկաւ. և Յիսուս հրամայեց որ անոր պատանքը հանեն ու թող տան որ քալէ: Հոն եղող Հրէից շատերը տեսնելով այս մեծ սքանչելիքը, հաւատացին. և ոմանք ալ գացին ու Փարիսեցւոց պատմեցին:

2. Նոյն միջոց քահանայապետներն ու փարիսեցիները ժողով գումարելով ըսին. «Ի՞նչ ընենք, քանզի աս մարդս շատ հրաշքներ կ'ընէ. թէ որ թողումք, ամենքը իրեն հաւատան, ու Հռոմայեցիք գալով մեր տեղը ու մեր ազգը (Տաճարը) պիտի վերցնեն»։ Անոնց մէկն Կայիափա քահանայապետը ըսաւ. «Աղէկ է որ մէկ մարդ մը ժողովուրդին համար մեռնի, ու բոլոր ազգը չկորսուի»։ Այս խօսքը մարգարէաբար խօսեցաւ. վասն զի Յիսուս պէտք է մեռնէր ազգին համար, ու միանգամայն Աստուծոյ որդիքը ի մի ժողվելու։ Ու այն օրէն խորհուրդ ըրին որ սպաննեն զանիկայ. Իսկ Յիսուս իր աշակերտներովը մէկ տեղ գնաց Եփրայիմ ու հոն կը կենար։

3. Յիսուս Երուսաղէմ երթալու ատեն տասը բորոտ մարդիկ պատահեցան, որոնք կ'աղաղակէին ըսելով. «Յիսուս վարդապետ, ողորմէ մեզի»։ Յիսուս ալ ըսաւ որ իրենցինքնին քահանաներուն ցուցնեն (ըստ օրինաց). որոնք երբ գացին՝ բժշկուեցան։ Անոնցմէ մէկը որ Սամարացի մը էր, ետ դարձաւ Յիսուսին քով ու մեծ ձայնով զԱստուած կը փառաւորէր. այն ատեն Յիսուս հարցուց. «Ո՞չ ապաքէն տասնը ամենն ալ բժշկուեցան, ուր՝ միւսները ո՞ւր են որ չդարձան Աստուծոյ փառք տալու, բայց միայն այս Սամարացին»։ Ու անոր ըսաւ. «Ելի՛ր, գնա՛, հաւատքդ քեզ ապրեցուց»։

4. Յիսուս խրատներով թէ պէտք է միշտ

աղօթել ու չձանձրանալ, կ՚ըսէր. «Ո՞վ է այն մարդը որ գիշեր ատեն իրեն հօր գալով իր դրացիին հաց ուզէ և անիկայ ալ պատասխանէ թէ գիշեր ժամանակ՝ ատեն չունիմ ելնելու և քեզի հաց տալու. չէ՞ որ եթէ բարեկամութեան համար ալ չտայ, գոնէ անոր շատ խնդրելուն համար կըստիպուի ելնել և իր դրացիին ուզածը տալ»։ Նոյն մասին դարձեալ ըսաւ. «Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար որ ոչ Աստուծմէ կը վախնար և ոչ ալ մարդոցմէ կ՚ամչնար. Նոյն քաղաքին մէջ այրի կին մը ալ կար, որ քանեալ կու գար խնդրանօք կը պահանջէր անկէ՝ իր ոսոխին դէմ. Դատաւորը որ շատ ատեն չէր ուզեր անոր խնդրանքը կատարել, սակայն կնոջը շատ թախանձելուն համար՝ օր մը ըսաւ ինքնիրեն. Թէ և Աստուծմէ չեմ վախնար ու մարդոցմէ չեմ ամչնար, գոնէ այս կնոջ շատ թախանձելուն համար խնդրանքը կատարեմ որ միշտ գալով զիս անհանգիստ չընէ»։ Ահա՛ կ՚ըսեմ ձեզի, ըսաւ Յիսուս, ինչ որ անիրաւ դատաւորը կ՚ըսէր. հապա Աստուած խնդրանքը ականջ չընէ՞ իր ծառաներուն, որոնք գիշեր ցերեկ իրեն կ՚աղաղակեն»։

5. Ուրիշ առակով արդարացողաց ամենուն ալ առակ մը ըսաւ. «Փարիսեցի մը ու մաքսաւոր մը Տաճարը մտան աղօթելու. ու Փարիսեցին սկսաւ ըսել. Աստուած իմ, կը գոհանամ քեզնէ, որ ուրիշ անիրաւ մարդոց և կամ այս մաքսաւորին պէս մեղաւոր չեմ, հապա իմ անձն

պահեցողութիւններս կը պահեմ ու ինչ որ եղած տասանորդները կու տամ։ Իսկ մաքսաւորը աչքին անգամ վերցընելու չէր համարձակեր, հապա իր կուրծքը ծեծելով կ՚ըսէր. «Աստուած, քաւեա զիս զմեղաւորս»։ «Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, ըսաւ Յիսուս, թէ այն մաքսաւորը արդարացած գնաց իր տունը քան զփարիսեցին. վասն զի ամէն որ իր անձը կը բարձրացընէ՝ պիտի խոնարհի, և ամէն որ կը խոնարհեցընէ՝ պիտի բարձրանայ»։

6. Կ՚ըսէր և իր աշակերտացը թէ՝ «Ո՞վ է այն մարդը, որ գործէն տուն դառնալու ատեն իր ծառային ըսէ թէ՝ անցիր, սեղան նստէ. հապա չ՚ըսեր անոր թէ՝ Պատրաստէ իմ ընթրիքս ու ինծի սպասաւորութիւն ըրէ, մինչև կերակուրս ուտեմ, ու ետքը դուն ալ կեր։ Միթէ շնորհակալ պիտի ըլլայ այն ծառային իրեն հրամայուած բաները կատարելուն համար. չեմ կարծեր»։ «Այնպէս դուք ալ, ըսաւ Յիսուս, երբ ձեզի հրամայուած բաները ընէք, ըսէք թէ՝ «Մենք անպիտան ծառաներ ենք, վասն զի ըրինք՝ ինչ որ պարտական էինք ընելու»։

7. Մեծաւորներէն մէկը գալով հարցուց Յիսուսի թէ՝ Ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ։ Եւ երբ Յիսուս օրէնքները յիշեցուց իրեն, անիկայ պատասխանեց թէ՝ «Ասոնց ամենն ալ պահած եմ մանկութենէ 'ի վեր. արդ՝ ուրիշ ի՞նչ կը պակսի ինծի»։ «Մէկ մը պակաս է քեզի, ըսաւ Յիսուս. գնա՛ վաճառէ

ինչ որ ունիս. և տուր աղքատաց որ երկնից մէջ գանձ ունենաս. և իմ ետևէս եկուր»։ Մեծատունը երբ զայս լսեց՝ խամրելով ու տրտմելով ետ գնաց. Յիսուս ալ ըսաւ իր աշակերտացը թէ՝ «Որչափ դժար է իրենց հարստութեանը յուսացողներուն Աստուծոյ թագաւորութեանը մէջ մտնելը. աւելի դիւրին է ուղտին ասեղի ծակէն անցնելը՝ քան թէ անոնց Աստուծոյ թագաւորութիւնը մտնելը»։ Եւ երբ աշակերտները զարմանալով հարցուցին թէ՝ «Ուրեմն ով կրնայ փրկուիլ»։ Յայնժամ Յիսուս ըսաւ. «Ի մարդկանէ անհնարին է այդ. այլ ոչ առ 'ի յԱստուծոյ»։

6. Աշակերտները հարցուցին թէ իրենք որ ամէն բան թողուցեր և իր ետևէն կ'երթան, ինչ վարձք պիտի առնեն. Այն ատեն Յիսուս վերջին աւուր ու յաւիտենական կենաց մէջ իրենց ունենալիք փառքը յայտնելէ վերջ՝ որպէս զի իմացնէ թէ վարձատրութիւնը միայն աստուածային կամեցողութեան շնորհն է, և ամենուն պարտքն է միայն աշխատիլ անոր այգիին համար, առակ մը ըսաւ. «Տանուտէրին մէկը առաւօտ մը մշակներ վարձեց օրը մէկ դահեկան գին կտրելով իրենց հետ, և զիրենք իւր այգին ղրկեց. նաև ժամը երրորդին, վեցին ու մինչև երեկոյին ալ հրապարակին մէջ գտած պարապ մարդիկը այգին ղրկեց որ երթան աշխատին ու պէտք եղած վարձքը առնեն. Իսկ երեկոյին ետքի եկողներէն սկսեալ զամէնքը

կանչելով երբ սկսաւ ամենուն այլ մէկ մէկ դա-
հեկան տալ, ուստի առաջուաններն գայթակղներ
սկսան յառաջ թէ ուրեմն իրենց ալ ելի պիտի
տայ. և երբ իրենց ալ մէկ մէկ դահեկան առ-
ուսս, զմկածակեցան թէ ինչո՞ւ չիրենք հա-
ւասար ներկեց քիչ աշխատողներուն հետ. Նա
սակն ամենաւորը պատասխանեց իրենցմէ մէ-
կուն. «Իմ բարեկամ զրկողութիւն չէ քեզի. չէ՞
որ ինծի հետ մէկ դահեկանի սակարկութիւն
ըրած ես, առ քու վարձքդ ու գնա. բայց թէ
որ ուրիշներուն ալ ելի կուտամ, մի թէ իշխա-
նութիւն չունի՞մ տալ ուզածս և որուն որ ու-
զեմ. և թէ որ քու աչքդ չար է, ես առատա-
ձեռն եմ»։

## ԳԼՈՒԽ ԻԳ.

1. Զեբեթեայ որդւոց խնդիրքը. 2. Երկու կոյրերու բժշկութիւնը. 3. Զաքէոս. 4. Համբարձութեան ծառան. 5. Մարիամ Օծանելի տուրք կ'ածէ. 6. Հրէից դատաստանութիւնը Նազարեթի դէմ. (Մատթ. Ի. 17—34. ԻԵ. 14—30. ԻԶ. 6—16. Մարկ. Ժ. 32—52. ԺԴ. 3—11. Ղուկ. ԺԸ. 31—ԺԹ. 28. Յովհ. ԺԲ. 1—11.)

1. Նոյն ատեն Յիսուս ծածկարապէս դէպ
ի Երուսաղէմ. ճանապարհին յայտնեց իր
աշակերտացը, ինչպէս և քանիցս անգամ յառա-
ներ էր, թէ ինքը պիտի մատնուի Հրէից ձեռ-
քը, չարչարուի, խաչուի ու մեռնի, և երեք
օրէն յարութիւն առնէ, և այսպէս պիտի կա-
տարուի մարգարէից միջոցաւ խօսուածները.
Նոյն ատեն Զեբեթեայ որդիքը իրենց մօրը

հետ Յիսուսի քով գալով ու երկրպագութիւն ընելով կը խնդրէին, որ իրենք երկու եղբայր Յիսուսի աջ ու ձախ կողմերը նստին անոր թագաւորութեանն ու փառաց մէջ։ Յիսուս ալ ըսաւ իրենց. «Չէք գիտեր թէ ինչ կը խնդրեք. կրնա՞ք խմել այն բաժակը զոր ես պիտի խմեմ, և մկրտուիլ այն մկրտութեամբ որով ես պիտի մկրտուիմ»։ և անոնք ըսին. «Կրնանք»։ Յայնժամ Յիսուս իրենց իմացուց որ թէ և այն բաները պիտի կրնան յանձն առնուլ, բայց իրենց խնդիրքին կատարումը աստուածային կամեցողութեան մէկ շնորհն է։ Ասոր վերայ երբ միւս աշակերտները սկսան նեղանալ. Յիսուս ըսաւ. «Ձեր մէջը առաջնորդութիւն պիտի չըլլայ. հապա ով որ մեծ ըլլալ կ՚ուզէ, անիկայ ձեր սպասաւորը ըլլայ. և ով որ առաջին ըլլալ կ՚ուզէ, անիկայ ձեր սպասաւորը ըլլայ»։ Եւ յայտնեց թէ ինքն ալ ոչ թէ սպասաւորութիւն ընդունելու, հապա սպասաւորելու և իր կեանքը շատերուն համար փրկանք տալու եկած է։ Այսպէս Յիսուս սորվեցուց իրեն աշակերտաց որ իշխանութիւն և առաջնորդականն ալ ի չունենան, այլ սէր և խոնարհութիւն։

2. Յիսուս Երիքով մտնելու ատեն, ինչպէս և անկէ ելնելու ատենը երկու կոյր մարդիկ բըժշկեց։ Ասոնք ճամբուն վերայ նստած ըլլալով, երբ բազմութեան մէջ անցնիլը լսեցին և իմացան որ Յիսուս կ՚անցնի, սկսան աղաղակել. «Յիսուս որդի Դաւթի, ողորմէ մեզի»։ Թէ և շա-

տեղը կը սաստէին անոնց որ լռեն, այլ անոնք ետ առաւել կ'աղաղակէին. Յիսուս կեցաւ հոն տեղ, և զիրենք կանչել տալով "Ձեր հաւատքը ձեզ բժշկեց. Թող բացուին ըսաւ ձեր աչքերը". և իսկոյն անոնց աչքերը բացուեցան.

3. Երիքովի մէջ Զաքէոս անուն հարուստ մաքսաւոր մը կար. անիկայ շատ կը փափաքէր Յիսուսը տեսնել, ուստի գնաց անոր անցնելու ճամբուն վրայ ծառի մը վրայ ելաւ. վասն զի բազմութեան մէջ չպիտի կրնար տեսնել իր հասակին կարճ ըլլալուն համար. Եւ Յիսուս այն ծառին քովն որ եկաւ վեր նայելով ըսաւ. "Մէ Զաքէոս. շուտով վար իջիր, քանզի պէտք է ինծի այսօր քու տանդ կենալ": Անիկայ ալ ուրախութեամբ վար իջնելով ընդունեց զՅիսուս: Շատերը զայս տեսնելով կը տրտնջէին թէ մեղաւոր մարդու մը տունը իջեւան ըրաւ Յիսուս. իսկ Զաքէոս ըսաւ. "Տէր, ահա ունեցածիս կէսը աղքատներուն կու տամ. և թէ որ մէկու մը զրկանք ըրի՝ չորեքպատիկը կը հատուցանեմ". Յիսուս ալ ըսաւ. "Այսօր այս տանը փրկութիւն եղաւ, քանզի անիկայ ալ Աբրահամու (հաւատոյ) որդի է. Ինչու որ Որդին մարդոյ եկաւ կորսուածները փնտռելու":

4. Հոն տեղ առակ մը ալ ըսաւ. "Թագաւոր մը երբ հեռու տեղ մը պիտի երթար, կանչեց իր ծառաները, ու անոնց մէկ մէկ դամար տալով ապսպրեց որ շահեցընեն զանիկայ մինչև որ ինքը դառնայ. Եւ երբ դար-

ձառ. կանչելով զանոնք հարցուց թէ որքան շա-
հեցուցին. անոնցմէ ոմանք որ իրենց ստակը
շահեցուցեր էին, բերին ու յանձնեցին իրենց
տիրոջը որ ըսաւ. «Աղէկ. բարի ու հաւատա-
րիմ ծառաներ. դուք որ քիչ բանի մէջ հաւա-
տարիմ եղաք, շատ մեծ գործեր պիտի յանձնեմ
ձեզ. մտէ՛ք ձեր տիրոջը ուրախութեանը մէջ»։
Իսկ անոնցմէ մէկը իր առած գումարը տիրոջը
բերելով ըսաւ. «Գիտէի որ խիստ (կծծի) մէկն
ես, ու չցանած տեղէդ կը ժողվես, ուստի
վախնալով որ չկորսնցընեմ, պահեցի քու տուած
գումարդ»։ Այն ատեն տէրը պատասխանեց.
«Քու խօսքերովդ պիտի դատեմ զքեզ, անհա-
ւատարիմ ծառայ. եթէ գիտէիր որ խիստ մէկն
եմ, ուստի պէտք էր որ դնէ՛ իմ ստակս շահա-
գնէիր, որ ես ալ հիմա շահովը մէկտեղ առ-
նէի»։ Եւ բարկանալով անոր վրայ, առաւ անոր
ձեռքէն գումարը ու տուաւ անոր որ տասնըն
աւելի էր շահեցուցած. «Քանզի ըսաւ Յիսուս,
ամեն արժանիք ունեցողին պիտի տրուի (վարձք)
ու պիտի աւելնայ. իսկ չունեցողին՝ ունե-
ցածն ալ պիտի առնուի»։ Ու թէ՝ այն ծառան
որ իր տիրոջը կամքը գիտնալով՝ չկատարեր, ա-
ւելի պատիժ կը կրէ։

5. Զատկի տօնէն մեկ օր յառաջ Յիսուս
եկաւ ի Բեթանիա, ու բորոտ Սիմոն կոչուած
մէկուն տունը ընթրիքի գնաց, ուր նաեւ Ղա-
զարոս ալ սեղանակից էր. Իսկ անոր քոյրերը ի-
րենց երախտագիտութիւնը ցուցնելու հա-

մար . Մարթա սեղանին սպասաւորութիւն կ'ը-
նէր . Մարիամ՝ ալ շիշ մը մեծագին իւղ անուշա-
հոտ՝ բերաւ Յիսուսի ոտքը օծեց , եւ մազերովը
կը սրբէր , եւ բոլոր տունը իւր անուշ հոտովը
լեցուեցաւ . Նոյն ատեն աշակերտներէն Յուդա
Իսկարիովտացին ըսաւ . «Ինչու չէր որ այդ իւղը
սուղ գնով ծախուէր ու աղքատաց տրուէր» .
բայց չէ թէ աղքատաց համար իր հոգն էր ,
այլ զի գող էր , եւ գանձանակը ինք կը պահէր ,
եւ անոր դրածները ինք կը հոգար . Իսկ Յէ-
սուս պատասխանեց . «Թող տուր զայդ . ին-
չու որ իմ թաղման օրուան համար պահե-
լու կ'ընէ» . Իսկ Յուդա այն ատենէն քահա-
նայապետներուն գնաց խօսք տալու թէ՝ «Ի՞նչ կու-
տաք ինծի որ մատնեմ ձեզ զՅիսուս» . անոնք
ալ ուրախացան ու խոստացան երեսուն սիկղ
արծաթ (390 դահեկան) տալ իրեն , որ անկէ ետ-
քը պատեհութիւն մը կը փնտռէր մատնելու-
զանիկայ .

6 . Իսկ Հրեաներէն շատերը խմբովին Յէ-
սուսի եկած ատենը , եկան ոչ միայն Յիսուսի հա-
մար , այլ եւ Ղազարոս տեսնելու , զոր Յիսուս
յարուցած էր ի մեռելոց . Նաեւ մեծագոյն քահա-
նայապետները խորհուրդ ըրին որ Ղազարոսն
ալ սպաննեն , վասն զի անոր պատճառաւ շա-
տերը կը հաւատային Յիսուսի .

# ԳԼՈՒԽ ԺԴ.

1. Ծաղկազարդ. 2. Տաճար եկող հեթանոսները. 3. Թզենին չորնալը. 4. Քահանայապետաց հարցում մը։ 5. Չար մշակները. 6. Փարիսեցւոց ու Սադուկեցւոց հարցումները։ 7. Քրիստոս Դաւթի որդին է. 8. Այրի կնոջ լուման. (Մատթ. ԻԱ. 1—46. ԻԲ. 15—46. Մարկ. ԺԱ. 1—ԺԲ. 41. Ղուկ. ԺԹ. 29—Ի. 4. Յովհ. ԺԲ. 12—43).

1. Հետեւեալ օրը Յիսուս ուղեւորեցաւ դէպ 'ի Երուսաղէմ. և երբ մօտեցաւ, աշակերտներէն երկուքը ղրկեց մօտակայ գիւղ մը, որոնք երթալով գտան էշ մը իր աւանակովը մէկտեղ կապուած ու զանոնք բերին. ինչպէս որ Յիսուս ըսեր էր. և իրենց հանդերձները անոր վրայ փռելով Յիսուսը հեծուցին (Զաք. Թ. 9)։ Ժողովուրդէն շատ մարդիկ լսելով Յիսուսի գալը, դիմաւորեցին զանիկայ, և անոնք ծառի ոստեր կտրելով, ոմանք ալ իրենց հանդերձը անոր ճամբուն վրայ կը տարածէին. և աշակերտները և առջեւէն ու ետեւէն գացող ժողովուրդը մեծ ուրախութեամբ զՅիսուս օրհնելով կ'աղաղակէին. «Ովսաննա, օրհնութիւն որդւոյ Դաւթի. օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն Տեառն. խաղաղութիւն յերկինս և փառք 'ի բարձունս»։ Իսկ փարիսեցիներէն ոմանք ըսին. «Վարդապետ, սաստէ ատոնց որ լռեն»։ Եւ Յիսուս պատասխանեց. «Թէ որ ասոնք լռեն, քարերը պիտի աղաղակեն»։ Եւ երբ Յիսուս Երուսաղէմը տեսաւ՝ լացաւ անոր վրայ, և «Երանի թէ ըսաւ, գոնէ այս օրերս գիտնայիր քու խաղաղութիւնդ»։

Իսկ Յիսուսի ներս մտնելու ատենը բոլոր քաղաքը դղրդեցաւ, ու կը հարցնէին թէ «Ո՞վ է այս»։ Եւ Յիսուսի հետը եղող ժողովուրդը պատասխանեցին. «Աս է մարգարէն Յիսուս որ ի Նազարէթէ Գալիլեայու»։ Իսկ Յիսուս տաճարը մտնելով հոն տեղէն դուրս հանեց ամէն առուտուր ընողները, ըսելով. «Գրուած է որ իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի և դուք աւազակներու այր ըրիք»։ (Եսայ. ԾԶ. 7). Շատ ալ ցաւագարներ եկան իրեն որ զանոնք բժշկեց։

2. Իսկ քահանայապետները ու դպիրները տեսնելով այս բաները, նաև այն տղաքները որոնք Օրհնութիւն որդւոյ Դաւթի կ՚աղաղակէին, բարկացան. Յիսուս ալ Սաղմոսին մէկ խօսքը (Ը. 2) յառաջ բերելով՝ զիրենք պապանձեցուց. և դուրս ելաւ հոն տեղէն որուն ետևէն դուրս ելան ժողովուրդն ալ. և Փարիսեցիք սկսան ըսել իրարու. «Այ տեսնէ՞ք որ չէք կրնար օգուտ մը ընել. ահաւասիկ բոլոր աշխարհ անոր ետևէն գնաց»։ Քանի մը հեթանոսներ ալ Երուսաղէմ եկած էին տօնին համար, որոնք Փիլիպպոսի և Անդրէասի միջոցաւ Յիսուսի ներկայացան. և Յիսուս ըսաւ անոնց. «Ժամանակը հասած է որ պիտի փառաւորուի Որդին մարդոյ»։ Իսկ երեկոյին քաղաքէն դուրս ելնելով՝ գնաց ի Բեթանիա։

3. Հետևեալ օրը Յիսուս Երուսաղէմ գալու ատեն անօթեցաւ, ու թզենիի մը մօ-

տերեւալից տեսաւ որ պտուղ չունի, ըսաւ. «Մէկ յաւիտեան մէկը քեզմէ պտուղ չուտէ»։ Եւ խըկոյն չորցաւ անկից. Թէեւ թուզի ատեն չէր, այլ Յիսուս հաւատքի զօրութիւնը աշակերտացը ցուցնելու. նաեւ Հրէից օրինակ մը ըլլալու համար ըսաւ անկից. Իւր ցերեկները տաճարին մէջ կ'անցունէր, ու գիշերները Ձիթենեաց լեռը կ'երթար. Իշխաններն ու փարիսեցիներն այլ շատերը թէեւ հաւատային Յիսուսի քարոզութիւններուն, բայց իրենց իշխանութիւնը չկորսնցնելու համար չէին յայտնէր. քանզի զմարդն աւելի սիրեցին քան զԱստուծոյ փառքը.

4. Յիսուս տաճարին մէջ քարոզելու ատեն Հրէից մեծաւորները կուգան հարցնելու թէ «Ըսէ՛ մեզի, այդ բաները որո՞ն իշխանութեամբ կ'ընես, կամ ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը»։ Յիսուս ալ իրենց հարցուց. «Յովհաննու մկրտութիւնը յերկնից էր՝ թէ ՚ի մարդկանէ»։ Եւ անոնք չկրցան պատասխանել, քանզի ինչ որ ըսէին, իրենց պիտի դպչէր։ Աքանզի փարիսեցիք կը կարծէին թէ իրենք Աստուծոյ հնազանդ որդիքն են. Յիսուս ըսաւ. «Մարդուն մէկը այգի մը տնկեց ու ցանկով պատեց չորսդին. Եւ անոր բանտերով ամրացընելով զանիկայ, մշակներուն յանձնեց, եւ ինքը հեռու երկիր մը գնաց։ Պտուղին ժամանակը իւր մէկ ծառան ղրկեց որ պտուղները առնէ. բայց մշակները զանիկայ անարգեցին ու պարապ ետ

դարձուցին. և այսպէս քանի մը ծառաներ ղըր-կեց որ թերևս անկէ ամչնան ու փախնան. բայց մշակները խորհուրդ ընելով զանիկայ ալ մեռցուցին. որդ երբ այգիին տէրը գայ ի՞նչ պէտք է ընէ»։ և մանկ ընաղները պատասխա-նեցին. «Այն չարերը պէտք է կորսնցնել, և այգին ուրիշ մշակներու յանձնել որ պտուղը ժամանակին տան»։

6. Փարիսեցիք իմանալով որ այս խօսքերը ի-րենց համար կ՚ըսէ, խորհուրդ ըրին թէ ինչպէս զանիկայ իր խօսքերուն որսան. ու ասոր եկան կեղծաւորութեամբ հարցուցին. «Վարդապետ, գիտենք որ ճշմարտութեամբ Աստուծոյ ճանա-պարհը կը սորվեցնես ու մէկու մը երեսպաշտու-թիւն չես ըներ. արդ ըսէ մեզի. կայսեր հարկ տալ արժա՞ն է թէ ոչ»։ Գիտցաւ Յիսուս ա-նոնց խորամանկութիւնը, ու ըսաւ. «Ինչո՞ւ կը փորձէք զիս, կեղծաւորներ. դահեկան մը ցու-ցէք ինծի»։ և երբ ցուցուցին, հարցուց թէ՝ «Այս պատկերին ու գիրը ո՞ւնի»։ պատասխա-նեցին թէ «Կայսեր»։ ու ըսաւ «Տուէք, ուրեմն, կայսերը կայսեր տուէք և Աստուծոյն Աստու-ծոյ»։ Այս պատասխանին վերայ զարմանալով հեռացան։ Օր մը ալ Սադուկեցիք որոնք չէին հաւատար մեռելոց յարութիւնը, եկան ու ա-ռաջարկութիւններ ըրին. Յիսուս ալ զօրաւոր ապացոյցներով զիրենք պապանձեցուց. յայտ-նելով թէ Աստուած ինքը որ կ՚ըսէ թէ ես Աբ-րահամու, Իսահակայ և Յակոբայ Աստուած

եմ, ոչ թէ մեռելոց՝ այլ կենդանեաց Աստուած է. քանզի իրեն համար այն ամենը կենդանի են.

7. Փարիսեցիք տեսնելով թէ Յիսուս Սադուկեցիները պապանձեցուց, եկան ու զանազան հարցումներ կ'ընէին, որոնց ամենուն պատասխանելով կը լռեցնէր զիրենք. Անգամ մը ալ Յիսուս իրենց հարցուց թէ ինչ կը կարծեն, «Քրիստոս որո՞ւ որդին է»։ պատասխանեցին թէ «Դաւթի»։ Եւ Յիսուս ըսաւ. Ինչպէս կ'ըլլայ որ ինքն Դաւիթ զանիկայ Տէր կը կոչէ, «Ըսաւ Տէր ցՏէր իմ ըսելով» (Սաղ. ՃԹ. 1). եւ իրեն որդին եղած կ'ըլլայ»։ Ու այնուհետեւ ոչ ոք կրնար պատասխան մը տալ Յիսուսի կամ բան մը հարցնել.

8. Անգամ մը Յիսուս գանձանակին դիմացը նստեր էր, ու կը նայէր, թէ ինչպէս ժողովուրդը դրամ կը ձգէ. եւ շատ հարուստներ շատ բան ձգեցին. Աղքատ որբեւարի կին մը ալ եկաւ ու երկու լումայ ձգեց. եւ Յիսուս իր աշակերտները կանչելով ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ՝ որ այս աղքատ կինը ամենէն աւելի ձգեց. քանզի ամենը իրենց աւելորդ դրամէ ձգեցին, բայց ասիկայ իր չքաւորութենէն՝ բոլոր ունեցած ապրուստը ձգեց.

## ԳԼՈՒԽ ԺԵ.

1. Երուսաղէմայ կործանման եւ աշխարհիս կատարածին վերայօք Յիսուսի խօսքերը. 2. Տասն կուսանք. 3. Եղբայրութեան օգուտը. (Մատթ. ԻԴ. 1—ԻԵ. 46. Մարկ. ԺԳ. 1-37. Ղուկ. ԺԲ. 32—48. ԻԱ. 5—38.).

1. Ու եղաւ որ երբ Յիսուսի աշակերտները

կը ցուցնէին իրեն տաճարի շէնքերին գեղեցկութիւնը. Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ չպիտի մնայ քար մը քարի վրայ որ չքակուի»: Եւ Ձիթենեաց լեռը նըստած ատեննին աշակերտները հարցուցին Յիսուսի իր երկրորդ գալստեանը և աշխարհիս վերջին օրուան վրայօք. այն ատեն Յիսուս շատ մը տեղեկութիւններ և օրինակներ տալով, այն օրերուն նշանները իմացուց. բայց վերջին ժամանակը չիմացրնելով՝ պատուիրեց միայն որ միշտ զգոյշ կենան, որ չըլլայ թէ Նոյի օրուան մարդոց ու Սոդոմայեցւոց պէս զեղխութեան ու անառակութեան մէջ թմրին ու կորսուին, հապա նմանին այն տանուտէրին որ գողի կասկած ունենալով կը հսկէ իր տանը վրայ. Միանգամայն օրինակ բերաւ այն իմաստուն ծառան որ իր տիրոջը յանձնած գործերը ուշադրութեամբ կը կատարէ, որով և աւելի մեծ պատիւ կը ստանայ. իսկ թէ որ տիրոջը բացակայութիւնը տեսնելով սկսի ուտել և խմել և արբենալ, և իր պաշտօնին հոգ չտանի, և ահա իր չկարծած ատենը յանկարծ իրեն տէրը պիտի պատժէ զինքը ու մերժէ իր պաշտօնէն.

2. Այն ատեն պիտի նմանի ըսաւ երկնից թագաւորութիւնը տասը կուսանաց, որոնք լապտերնին առնելով՝ փեսան ու հարսը դիմաւորելու ելան. Անոնցմէ հինգը իմաստուն էին որոնք լապտերնուն համար ամանով իւղ առին հետերնին. բայց միւս հինգը յիմար ըլլալով եղ

չառին . և երբ փեսան ուշացաւ , ամենեքին թմրե-ցան ու քնացան . Կէս գիշերուն ձայն մը եղաւ թէ . Ահա փեսան կու գայ . ելէք զանիկայ դիմաւորելու ։ Այն ատեն անոնք ալ ելան պատրաստելու ճրագներնին . և երբ յիմարները միւսներէն իւղ ուզեցին , անոնք չտուին , վախնալով որ իրենց ալ չբաւէ . ուստի Գնացէք ըսին , ձեզի համար իւղ ծախու առէք . և երբ անոնք գացին , ուշ փեսան եկաւ , ու խոհեմուհիները անոր հետ հարսնիքը մտան , և դուռը գոցուեցաւ . Ետքը յիմարներն ալ եկան ու ըսին . Տէր Տէր , բաց մեզի ։ Բայց անիկայ զիրենք չճանչնեց ու դուրս մնացին . Ու ըսաւ Յիսուս . Արթուն կեցէք որ գալիք ամեն փորձութիւններէն ազատելով , Մարդու որդւոյ առջևը ելլելու արժանի ըլլաք ։

3. Նոյն Յիսուս ըսաւ թէ՝ այն ատեն Մարդու որդւոյ նշանը երկինքը պիտի երևնայ . և ինքն ալ պիտի գայ իր փառքովը ու հրեշտակներով . ու պիտի նստի իր փառաց աթոռը . և իր հրեշտակները պիտի ղրկէ մեծ ձայնով փողով , որոնք երկրի բոլոր ազգերը պիտի ժողվեն իր առջևը . և զանոնք պիտի զատէ իրարմէ . ինչպէս հովիւ մը իր ոչխարները այծերէն կը զատէ . և ոչխարները ( բարիները ) աջ կողմը պիտի կեցընէ . ու այծերը ( չարերը ) ձախ կողմը ։ Նոյն ատեն Թագաւորը ( Մարդու որդւոյ . Քրիստոս ) իր աջ կողմիններուն պիտի ըսէ . Եկէք իմ Հօրս օրհնածները , աշխարհին սկիզբէն ձեզի

համար պատրաստուած արքայութիւնը ժառանգեցէք · ինչու որ զիս կարօտութեանց · հիւանդութեանց ու փշտաց մէջ եկաք տեսաք · և օգնեցիք · ստուգապէս ինչ ողորմութիւն որ իմ եղբայրներուս խիստ պզտիկներէն մէկուն ըրիք · ինծի ըրած եղաք · Իսկ իր ձախ կողմիններուն պիտի ըսէ · « Անկէ դի գացէք ինծմէ , անիծեալներ · յաւիտենական կրակին մէջը · որ պատրաստուած է սատանայի և իր ապստամբեալներուն համար · ինչու որ զիս կարօտութեանց · հիւանդութեանց ու նեղութեանց մէջ տեսաք ու օգնութիւն չըրիք , ստուգապէս իմ եղբայրներէս խիստ պզտիկներէն մէկուն չըրիք , ինծի ալ չըրիք » ·

## ԳԼՈՒԽ ԺԶ.

### ՅԻՍՈՒՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ.

Զոր Աւետարանչաց պէտ և պէտ սորվիլ ·

Յիսուս ասոնցմէ զատ նաև շատ հրաշքներ ու քարոզութիւններ ալ ըրաւ , թէ Յորդանէն առաջ և թէ ետքը · այլ անոնց ամէնը չգրեցին սուրբ Աւետարանիչք · այնչափ միայն գրեցին , որչափ որ բաւական է հաւատալու թէ Յիսուս Քրիստոս է որդի Աստուծոյ · Յիսուս ո՛ւր որ կ'երթար , ժողովուրդը խուռն բազմութեամբ իրեն կը դիմէին որ գոնէ անոր հանդերձներուն մերձենան որ բժշկուին · Իսկ Յովհաննու Մկրտչի նման առանձնական կեանք չի

փոխեց · Հապա իւր բուռ մարմնոյ ազգականաց ու բարեկամաց մատուցանէր իրեն բարօրութիւնները մինչ բնութեններուն յարաբերութեանը մէջ , որոց շատը արտաշխարհիկ մեղաւորներ էին , զորս բան զամէն ազգականէն ու բարեկամէն նախամեծար կը համարէր · Նոցմէ շատերը որոց մէջ և բարեպաշտ կանայք ալ կային , իւր և աշակերտացը սիրոյքը կը հոգային շատ անգամ , իրենց յոժար կամքը և յերախտագիտութենէ շարժեալ · վասն զի ինքն Յիսուս միշտ բաւականացութիւն բրաւ , և երբէք առիթ չի տուաւ որ մէկը իրեն համար ծառայութիւն մը կամ ծախք մը ընէ · Ասոր և իւր առօրէնութեանց բոլոր միջոցին՝ գլուխը դնելու տեղ մը չունեցաւ · Հապա ուր որ պատահէր , հոն կը մնար · շատ անգամ ալ կ՚առանձնանար աղօթքի , նաև գիշերն ՚ի լոյս ·

Յայտնապէս ասաց թէ՝ Աստուած այնչափ սիրեց աշխարհս , մինչև իւր միածին Որդին ետւաւ , որ ամէն անոր հաւատացողը չկորսուի , Հապա յաւիտենական կեանք ստանայ · Վերստին ծննդեան , սուրբ մկրտութեան խորհուրդը · ըսելով · «Թէ որ մէկը ջուրէն ու Հոգիէն չծնանի · չկրնար երկնից թագաւորութիւնը մտնել» · Սուրբ Հաղորդութեան խորհուրդը նախ Կափառնաում մէջ և յետոյ ՚ի վերնատունն ընթրեաց գիշերը · Վերահաստատեց պսակի անլուծանելիութիւնը , և միակնութիւնը · լուսաւորեաց և մեռելոց յարութեան ճշմարտութիւնը ·

Այս քաղաքութեանց մեծ մասը ապաշխարութեան և արտի փոփոխութեան վերայ էին, այսինքն հին մարդը հանել. և նորը հագնիլ. գինի նոր 'ի տիկ-կրս նորս. Իւր քաղցր լուծին ու թեթև բեռին ներքև կը կանչէր մեղքով բեռնաւորուած մարդիկը ըսելով թէ՝ «Եկէք ինծի ով աշխա-տեալներ ու բեռնաւորածներ և պիտի հանգու-ցանեմ ձեզի. առէք իմ լուծս ձեր վերայ, ու ինծմէ սորվեցէք, զի հեզ եմ ու խոնարհ սըր-տիւ, ու ձեր անձերուն հանգիստ պիտի գըտ-նէք. ինչու որ իմ լուծս քաղցր է ու բեռս թեթև ».

Իւր քաղաքութեանը չարաշխարողներուն կը յայտնէր թէ դատաստանին օրը Հարաւի դշխոյն ու Նինուէացիք պիտի դատապարտեն զձեզ. ինչու որ մեկը հեռու երկրէ Սողոմոնի իմաս-տութիւնը լսելու եկաւ, ու միւսները ալ Յով-նանու քարոզութեանը ապաշխարեցին. բայց հոս Սողոմոնէն ու Յովնանէն աւելին կայ. Վա՛յ կուտար Փարիսեցւոց ու դպրաց կեղծաւորաց և օրինականաց, որոնք արդարութեան ու գթու-թեան բանալիները կը պահէին, ոչ իրենք կը մտնէին և ոչ ուրիշին կը թողէին. որոնք որբե-ւայրիներուն տուները կ'ուտէին. խեղ մարդոց առջին արդար ու բարեպաշտ երևնալու հա-մար երկայն աղօթքներ կ'ընէին 'ի ցոյց մարդ-կան. որոնք պատուաւոր տեղեր բազմիլ կը սի-րէին ու մարդոցմէ փառք ու պատուանուն ըն-դունելու հետամուտ էին. որոնք ծով ու ցա-

մաք կը պտըտէին նորահաւատ մը գտնելու համար ․ բայց երբ գտնէին՝ իրենցմէ աւելի գեհենի որդի կ'ընէին զանիկայ ․ որոնք մանր բաներուն տասանորդները կը վճարէին ․ բայց չէին կատարեր օրինաց ծանր ծանր բաները ․ դատաստանը ․ ողորմութիւնը ու հաւատքը ․ որ զանոնք պէտք էր ընել՝ բայց զասոնք ալ չթողուլ ․ Որոնք ուղտը կը կլլէին ու մժղուկը կը քամէին ․ արտաքուստ մաքուր կ'երեւէին ․ այլ 'ի ներքուստ անիրաւութեամբ լեցուն էին ․ որոնք մարդոց վերայ ծանր բեռներ կը կապէին ․ ու իրենք մատովնին չէին ուզեր շարժել զանոնք ․ Ուստի Յիսուս ըսաւ իրենց ․ «Օձեր, իժերու ծնունդներ, ինչպէս պիտի փախչիք գեհենին դատապարտութենէն ․ ահա ձեզի ընտրեալ մարդիկ պիտի ղրկեմ որ զանոնք չարչարէք ու սպաննէք ․ որպէս զի երկրի վերայ թափած ամէն անմեղ արիւն ձեր վերայ գայ ու ձեզմէ խնդրուի» ․ Յիսուս քանի անգամ ուզեց Երուսաղէմի որդիքը իր թեւերին ներքեւ ժողվել, ինչպէս հաւ մը իր ձագերը կը ժողվէ ․ բայց իրենք չուզեցին ․ ու ասի «Ձեր տունը թող ձեզի աւերակ մնայ» ըսաւ ․

Ու մինչդեռ ինքնահաւանութեամբ մեծցած մարդիկ չհաւատալով ու չարաչարելով, պարզամիտ ու խոնարհ բարեսիրտ մարդիկ կը հաւատային ․ ուստի Յիսուս կը փառաւորէր ըն-ծայող Աստուած ․ որ Ճշմարտութեան լոյսը կը յայտնէ ․ Իր աշակերտացը կ'ըսէր ․ «Դուք էք

երկրիս աղը, աշխարհի լոյսը. Թող ձեր լոյսը լու-
սաւորէ առաջի մարդոց, որպէս զի տեսնեն ձեր
բարի գործերը ու փառաւորեն զԱստուած.
Ու թէ՛ չարութիւն գործողը լոյսէն հեռու կը
փախչի որ իր չարութիւնը չյայտնուի. բայց
ճշմարտութիւն գործողը լոյսին մօտ կուգայ որ
իր գործն Աստուծով ըլլալը յայտնուի. թէ՛
Աստուծոյ արքայութիւնը ձեր մէջն է, այսինքն
մեր արժանի ըլլալու միջոցը ձեր սիրտն է.

Այսպէս յայտնեց նաև թէ ինքը ոչ թէ օ-
րէնքներն ու մարգարէները լուծելու, հապա
զանոնք լրացնելու համար եկած է. ուստի հին
օրինաց պատուէրները լրացուց, խնայելով թէ
ոչ միայն չարութիւն մը գործելը մեղք է, հա-
պա իր սրտին մէջ զանոնք ընելու բաղձանքը
համառօտ է ընդ գործադրութեան, և իր եղ-
բօրը ծանր խօսք ընողն ալ պարտաւոր է դատաս-
տանի ու գեհենի. Ուստի պատուիրեց որ եթէ
գիտնաք թէ մէկուն հետ խէթ մը ունիք, աս-
տուածային պաշտամունք մը ընծայած եթէ ունիք
ի ձեռին՝ թողուցէք և նախ հաշտուեցէք ձեր
եղբօրը հետ. Թէ՛ դուրսը զարնէք առաջ ինք-
զինքնիդ ու զգեցէք, և ձեր եղբօր աչքին շիւղը
հանելէ առաջ՝ ձեր աչքին գերանը հանեցէք.
Պատուիրեց որ եթէ մէկը քանի մը անգամ թէ
առանձին և թէ հրապարակաւ խրատուելէ ետ-
քը չուզուի, այնպիսին մեղաւոր համարուի.
Յայտնեց որ քանի մը հոգի մէկ և երբ ալ մէկ
տեղ ժողովուին իր անունովը՝ ինքն ալ հոն անոնց

մէջ է ։ Հրամայեց թէ՝ սուրբ բաները խոզերու և շուներու՝ այսինքն անհարկի մարդոց չտանք ․ թէ՛ երդում չընենք , այլ մեր խօսքերն ըլլան Այո՛ այո՛ և ոչ՛ ոչ ․ թէ՝ մեր աղօթքը ու պահեցողութիւնն և ամէն բարեգործութիւնները ՚ի ցոյց մարդկան չընենք , և աջ ձեռքին տուած ողորմութիւնը ձախ ձեռքը չիմանայ , և Աստուած որ ՚ի ծածուկ եղածն ալ կը տեսնէ , յայտնապէս հատուցում կ՚ընէ մեզ ։ Պատուիրեց թէ՝ « Խնդրեցէք ու պիտի տրուի ձեզի , բնտռեցէք ու պիտի գտնէք , զարկէք ու պիտի բացուի ձեզի » ․ և բաւ որ միշտ աղօթենք , բայց ունայն բաներ չխնդրենք շատախօսութեամբ , ուստի և Հայր մեր աղօթքը ուսոյց որ անով կամ անոր նման համաձայն աղօթենք ։ Նաև մեր առօրեայ պիտոյքը համար հոգ չընելով[1] նախ՝ Աստուծոյ արքայութիւնը խնդրենք և Աստուած մեր խնդրելէն առաջ գիտէ թէ ինչ պէտք է մեզի , այն ամէն բաներն ալ կու տայ ։ Քանզի հայր մը որչափ որ չար ըլլայ , իր որդւոյն հաց ուզած ատենը քար չտար անոր , հապա որչափ ևս առաւել Աստուած որ իր ամէն արարածները կը խնամէ , զձեզ անխնամ չթողուր , բաւ ։ Ուստի և մեզ տուաւ իրենց հաստատութեան յուսացողներուն , զեղխութեան ու աշխարհիս փայելչութեանցը մէջ ընկղմեալ անձանց , երա-

1 Այսինքն՝ ապառնաշուաք հոգ չընենք մեր կարօտութենէն վեր եղած բաներուն որ հոգալով չենք կրնար ձեռք բերել ։ և Աստուծմէ յուսահատիլ չսկսինք ․ և ոչ թէ ծուլանալով , խնայող ու աշխատող չըլլանք ․ որ պարտական ենք ըլլալ ․

նութիւն տալով հոգւով աղքատ ու սգաւոր եղողներուն, արդարութեան ծարաւ եղողներուն, ողորմածներուն, խաղաղարարներուն, սուրբ սիրտ ունեցողներուն, ճշմարտութեան համար հալածանք կրողներուն. Պատուիրեց թէ չարին հակառակ չկենանք, և վէճի ու կռուի սկզբնական պատճառներէն ալ զգուշանանք զոհողութիւններ անգամ ընելով թէ որ պէտք ըլլայ. և վնաս ընդ վնասու չփոխարինենք. աններող չըլլանք նաև անոնց որ մեզի չեն հաւնիր. թէ և ճշմարտութեան բարեկամ են ու կը ճանչնան, քանզի ըսաւ Յիսուս. «Ով որ մեզի թըշնամի չէ, մեր կողմն է»։ Պատուիրեց թէ՝ ոչ միայն մեր բարեկամները սիրենք, այլ և մեր թշնամիները, որպէս զի կատարեալ որդիներ ըլլանք մեր երկնաւոր Հօրը կատարելութեան նմանող, որ իր արևն ու անձրևը չարերուն ու բարեներուն հաւասար կու տայ. Նա Յիսուս ըսաւ. ԻՆՉ ՈՐ Կ'ՈՒԶԷՔ ՈՐ ՄԱՐԴԻԿ ՁԵԶԻ ԸՆԵՆ, ԴՈՒՔ ԱԼ ՆՈՅՆԸ ԸՐԷՔ ԱՆՈՆՑ. և կամ Ի՛ՆՉ ՈՐ ՉԷՔ ՈՒԶԵՐ ՈՐ ՄԱՐԴԻԿ ՁԵԶԻ ԸՆԵՆ, ԴՈՒՔ ԱԼ ՆՈՅՆԸ ՄԻ՛ ԸՆԷՔ ԱՆՈՆՑ. քանզի այս է ըսաւ օրինաց և մարգարէից բովանդակ խրատը.

Այլ և պատուիրեց որ առաքինութեան պըտուղներ ունենանք հաւատքով, յուսով և սիրով. որ չըլլանք այն անպտուղ թզենիին պէս որ շատ դարմանուելէ յետոյ երբ պտուղ չէր տար, հրամայեց տէրը որ կտրուի. Նաև որ

առաջինութեան գանձէն ու ճանապարհէն եր-թանք որ թէ և նեղ՝ բայց դէպ 'ի կեանք կը տանի, քանի որ լայն դուռն ու ճանապարհը դէպ 'ի կորուստ կը տանի։ Թէ՝ զգուշանանք ոչխարի կերպարանքով գայլերէն, և ճանանք ի-րենց գործքերէն ճանչենք, ինչու որ ծառ մը իր պտուղէն կը ճանչցուի. փուշն ալ բառ՝ — Ոչ թէ ամէն ինծի Տէր Տէր ըսողները պիտի կարենան մտնել երկնից արքայութեան մէջ, հապա միայն իմ երկնաւոր Հօրս կամքը կատարողները։

Ու Յիսուս իր պատուէրները ու հրաման-ները 'ի գործ դնողները նմանեցուց վէմի վերայ հիմ դնող խելացի մարդու, որուն տունը հաստատ կ'ըլլայ. իսկ չգործադրողները նմանե-ցուց աւազի վերայ հիմ դնող անմիտ մարդու, որուն շինած տունը անձրևէն ու հովէն կը փլչի։ Ու Յիսուս երբ կը քարոզէր բոլոր ժո-ղովուրդը կը զարմանային անոր խօսքերուն, ինչու որ իշխանութեամբ կը խօսէր և ոչ թէ դպիրներուն պէս։

## ԳԼՈՒԽ ԺԷ.

1. Յիսուս կը խոնարհի լուալու աշակերտաց ոտքերը. 2. Զատկի ընթրիքը և սուրբ Հաղորդութեան խորհուրդը. 3. Յիսուսի կտակը. 4. Յիսուս 'ի Գեթսեմանի. 5. Յիսուսի մատնութիւնը. (Մատ. ԻԶ. 1—56. Մրկ. ԺԴ. 1—52. Ղուկ. ԻԲ. 1—53. Յովհ. ԺԳ. 1—ԺԸ. 11)։

1. Բաղարջակերաց տօնէն օր մը առաջ Յի-սուս աշակերտներուն երկուքը ղրկելով, «Քա-ղաքը մտածնուդ պէս, բառ., կը տեսնէք սափորով ջուր տանող մարդու մը պիտի հանդիպիք. գա-

ցէք անոր ետեւէն, ու անոր մտած տանը տէրոջը ըսէք թէ՝ «Վարդապետին տանը հասեր է, կ'ուզէ որ զատիկը քու տունդ ընէ»։ Եւ անիկայ զարդարուած վերնատուն մը պիտի ցուցնէ ձեզի. հոն անոր պատրաստեցէք։ Անոնք ալ գացին այնպէս գտին ու պատրաստեցին. եւ իրիկուան դէմ՝ իրենք ալ գնացին։ Եւ երբ սեղանի բազմեցան իր տասնեերկու աշակերտացը հետ, «Շատ կը փափաքէի, ըսաւ, այս զատկը ձեզի հետ ուտելու չարչարուելէս առաջ»։ Այն միջոցին ալ ուզելով իրենց ցուցնել իր անհամեմատ սէրը, միանգամայն խոնարհութեան եւ գերազանց օրինակ մը տալ, ոտքի ելաւ, ու զէնջակ մը փաթթեց մէջքը, եւ կոնքի մէջ ջուր լեցունելով սկսաւ լուալ աշակերտաց ոտքերը, եւ զէնջակովը սրբել։ Եւ երբ եկաւ Պետրոսին, անիկայ չուզեց թողուլ ըսելով. «Տէր, դուն իմ ոտքս պիտի լուաս»։ «Թէ որ չլուամ, պատասխանեց Յիսուս, ինծի հետ բաժին չես ունենար»։ Եւ այսպէս ամէնուն ալ ոտքերը լուալէն ետքը, դարձեալ բազմեցաւ ու ըսաւ. «Գիտէք ինչ ըրի ձեզի. թէ որ ես տէրն եւ վարդապետն ըլլալով այսպէս խոնարհութիւն ցուցուցի, ուրեմն դուք ալ կը պարտաւորիք իմ օրինակիս հետեւիլ»։

2. Ընթրիքին լմննալու ատենը Յիսուս հաց մը առնելով ձեռքը, օրհնեց ու բաժնեց աշակերտացը, ըսելով. «Առէք եւ կերէք, այս է իմ մարմինս, որ ձեզի եւ շատերուն համար կը բաշ֊

խուլի ։ Նոյնպէս և բաժակը առնելով ըսաւ. Սրբէք, ասկից ամէներնիդ. այս է իմ նոր ուխտի արիւնս, որ շատերուն մեղաց թողութեան համար կը թափուի. ասկից ըրէք իմ յիշատակիս համար ։ Սակայն Յիսուս յայտնած ըլլալով թէ ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ, երբ Պետրոսի ակնարկելով Յովհաննէս հարցուց, Յիսուս ըսաւ թէ՝ «Պատառը թրջելով որուն որ տամ, նա է ըսաւ ։, և տուաւ Յուդայ Իսկարիովտացիին. Եւ անկից դուրս ելաւ գնաց գիշեր ատեն՝ սատանայի դրդմամբը.

3. Այնուհետև ըսաւ Յիսուս. — Նոր պատուէր մը կուտամ ձեզի որ մէկզմէկ սիրէք, ինչպէս որ ես զձեզ սիրեցի. ասով գիտնան ամենքը թէ դուք իմ աշակերտներս էք, թէ որ մէկզմէկ սիրէք ։ Եւ որովհետև Յիսուս յայտնեց թէ ինքը քիչ ժամանակէն միջոց մը պիտի բաժնուի իրենցմէ, և իրենք ամէնքն ալ պիտի թողուն զինքն ու փախչին. ուստի Պետրոս յաժարութիւն ցուցուց թէ՝ պատրաստ եմ քեզի հետ ՚ի բանտ և ՚ի մահ երթալու ։ Այն ատեն Յիսուս ըսաւ թէ՝ Այս գիշեր մինչև ՚ի հաւախօսի մէջէնը երեք անգամ պիտի ուրանաս զիս ։ Ասոնցմէ յետոյ սկսաւ մխիթարել իր աշակերտները՝ երկնային երջանկութեան յոյսը տալով անոնց. ծանուցանելով թէ՝ ինքն է ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք. թէ՝ Ինքը իր Հօրը հետ մէկ է, և թէ՝ իր անունով եղած աղօթքը պիտի ընդունուի, պատուիրելով անոր

և հնազանդութիւն առ նմին , խոստանալով մխիթարիչ Սուրբ Հոգւոյն առաջուամբ , և իւր խաղաղութիւնը առաւել կրկնեց ։ Իւր և իրեն հետեւողաց միութիւնը ու փոխադարձ սէրը՝ որթին և ոստին օրինակաւը յայտնելով , նախաձայնելով իւր յարութիւնն ու համբարձումը , և այլն ։ Յետոյ խնդրելով իւր Հօր Աստուծմէն որ հաստատ պահէ զանոնք միութեան ու ճշմարտութեան մէջ . իւր հետ միաւորէ զանոնք և ամէն անոնց քարոզութեամբ հաւատացողները , և այլն . ( Յովհ . ԺԴ . ԺԷ . ) ։

4 . Զասոնք խօսելէ ետքը անոնց հետ գնաց Ձիթենեաց լերան ստորոտը Գեթսեմանիի մէջ պարտէզ մը մտաւ , և զանոնք հոն ձգելով՝ ըսաւ որ նստին մինչև որ ինքն երթայ աղօթէ . ու քիչ մը յառաջ երթալով՝ սկսաւ աղօթել արիւն քրտինք թափելով . ու երկինքէն հրեշտակ մը երեւեցաւ որ կը զօրացընէր զինքը . ուրուն թէև կարօտ չէր , այլ քանզի խոնարհած էր մարդկային մարմին զգենուլ կամաւորապէս , ուստի անոր տկարութիւնն ալ իւր վրայ կը ցուցընէր , ու կ'աղօթէր , որ մեզի օրինակ տայ միշտ Տէրոջը օգնականութեանը յուսալու ։ Այն միջոցին երիցս անգամ աշակերտացը քով գալով՝ տեսաւ որ կը քնանային , ու արթնցուցնելով որ աղօթեն փորձութեան մէջ չիյնալու համար ։ Յետոյ երրորդ անգամ որ դարձաւ անոնց քով՝ ըսաւ . « Ահա մատնուելու ատենս հասաւ » ։

5. Նոյն խօսքը ըսելու ատեն, և ահա Յու-դա Իսկարիովտացին, հետն ալ շատ զինուորներ և զօրականներ, սուսերով, բրերով ու ջահե-րով եկան. Յուդա նշան տուած ըլլալով թէ՝ զով որ համբուրեմ՝ նա է Յիսուսը. (Քանզի ե-կողները որոնք քահանայապետաց սպասաւոր-ները և զօրականներն էին, աղէկ մը չէին ճանչնար Յիսուսը, մանաւանդ գիշեր ատեն.) ուստի գա-լով անոր բարեւ տուաւ ու համբուրեց. և Յի-սուս ըսաւ. «Համբուրելո՞վ կը մատնես զիս»: Նա իր վրայ եկած բազմութեան ըսաւ. «Ո՞վ կը խնդրէք»: պատասխանեցին թէ՝ «Յիսուս Նազովրեցին»: «Ես եմ», ըսաւ Յիսուս. և երբ այս խօսքը ըսաւ, անոնք մէկէն ետ ետ երթալով՝ գետինը զարնուեցան: Յիսուս կրկին անոնց հարցուց, և ըսաւ նոյնը. «Ար-դեօք աւազակի՞ վրայ ելեր էք զէնքերով»: Իսկ Պետրոս ուզելով զանիկա փախցնել, իր սուրը հա-նեց ու քահանայապետին ծառային Մաղքոսին զարնելով անոր աջ ականջը կտրեց. Յիսուս ալ զա-նիկայ արգիլելով «Միթէ չե՞մ կրնար, ըսաւ, բիւրաւոր հրեշտակներ խնդրել ասոնց դէմ. այլ ո՞նց մարգարէին գրուածները այսպէս է կատա-րուելու»: և Մաղքոսին ականջն ալ բժշկեց: Նո-յն եկողները Յիսուսը բռնելով կապեցին, իսկ աշակերտները թողուցին ու փախան. այսպէս մատնուեցաւ Յիսուս ձեռքն մեղաւոր աշխարհի:

# ԳԼՈՒԽ ԺԸ.

1. Յիսուս յատեանի Աննայի և Կայիափայի. 2. Պետրոսի ուրացութիւնը. 3. Յիսուսի չարչարանքները. և Յուդայի անձնասպանութիւնը. 4. Յիսուս յատեանի Պիղատոսի. 5. Խաչելութիւն Յիսուսի. 6. Աւետարանական աւանդը. 7. Յիսուսի հոգին աւանդելը. և նոյն ատեն եղած սքանչելիքները. (Մատ. ԻԶ. 57—ԻԷ. 56. Մար. ԺԴ. 53—ԺԵ. 41. Ղուկ. ԻԲ. 54—ԻԳ. 49. Յովհ. ԺԸ. 12—ԺԹ. 37.)

1. Նախ Յիսուսը առնելով Աննա քահանայապետին[1] առանք տարին. Պետրոս և Յովհաննէս ալ որոնք հեռուէն անոնց ետեւէն կ'երթային, իրենք ալ հոն մտան. Քահանայապետը սկսաւ հարցումներ ընել Յիսուսին, և երբ Յիսուս պատասխանեց թէ «Իմ ըրածներս ամէնքն ալ գիտեն», այն ատեն սպասաւորներէն մէկը ապտակ մը զարկաւ Յիսուսին, ըսելով թէ «Այդպէ՞ս պատասխան կու տաս քահանայապետին». և Յիսուս ըսաւ անոր. «Թէ որ չար բան մը խօսեցայ, ցուցուր. եթէ ոչ՝ ինչու՞ կը զարնես». Յետոյ Կայիափա քահանայապետին տարին զՅիսուս. հոն ալ սկսան սուտ վկայներ բերել անոր համար, բայց չկրցան բան մը ապացուցանել, թէև շատ անգամներ սուտ վկայութիւն ընողներ եղան. քանզի մէկը չէր կրնար յանդիմանել զանիկայ վասն մեղաց: Ուստի քահանայապետը ըսաւ թէ՝ «Պատասխան տուր ըրածիդ դէմ եղած ամբաստանութեանց». Իսկ Յիսուս լուռ կը կենար. Այն ատեն քահանայա-

---

1 Աննա քահանայապետութիւն ըրած ըլլալով նոյն անունը կը կրէր թէև, այլ ժամանակին քահանայապետն էր Կայիափա.

ըսէր երդմնեցուց զանիկայ թէ՝ «Պատասխան տուր ինծի. թէ արդեօք դո՛ւն ես Քրիստոս օրհնեալ Աստուծոյ որդին»։ Յիսուս ալ ըսաւ. «Դուն ըսիր. բայց կ՚ըսեմ ձեզի թէ այսուհետեւ պիտի տեսնէք զՈրդին մարդոյ (զիս), նըստած ինք աջմէ զօրութեանն (Աստուծոյ)...»։ Յայնժամ քահանայապետը իր հանդերձը պատռելով, «Ան ինչ ըսէր է, ըսաւ, մեզի վկայ. ահա ամենքնիդ լսեցիք անոր հայհոյութիւնը արդ՝ ինչ արժան կը տեսնէք»։ «Մահապարտ է» պոռացին ամէնքը։

2. Իսկ Պետրոս երբ սպասաւորներուն հետ գաւիթին մէջ նստած էր կրակին քով, որ տեսնէ թէ գործին վերջը ինչ պիտի ըլլայ. և ահա աղջիկ մը եկաւ ու զինքը տեսնելով՝ «Դուն ալ Յիսուսի հետ էիր» ըսաւ. բայց Պետրոս ուրացաւ թէ՝ «Չեմ ճանչնար զանիկայ»։ Անկէ ետև երկու անգամ ալ ուրիշ մարդիկ ըսին իրեն թէ՝ «Դուն ալ անոր հետ էիր»։ Բայց Պետրոս երդմամբ ուրացաւ թէ՝ չեմ ճանչնար զանիկայ. այսպէս երեք անգամ ուրացաւ զինքը, և ահա հաւն ալ խօսեցաւ։ Այն ատեն Տէրը դարձաւ ու նայեցաւ Պետրոսի, որ յիշեց անոր խօսքը զոր ըսած էր թէ երեք անգամ պիտի ուրանաս զիս. և դուրս ելնելով դառնապէս լացաւ. և Յիսուսը պահողները կը ծաղրէին, կը նախատէին ու կը տանջէին զանիկայ։

3. Առաւօտուն Հրէից մեծամեծները ժողով մը կազմելով՝ հոն ներկայացուցին Յիսուսը

և հոն անդ ալ պոռչելով թէ մահապարտ է անիկայ, կոչեցին՝ Պիղատոսի ատեանն որ Հռովմայեցւոց կողմանէ դատաւոր կամ կուսակալ էր հոն անդ ։ Յուդա տեսնելով որ Յիսուս մահուան դատապարտեցին, զղջացաւ յուսահատաբար, և առած արծաթը քահանայից դարձընելով ըսաւ. «Մեղայ, քանզի արդար արիւն մատնեցի»։ և արծաթը հոն թողլով՝ գնաց ինքզինքը կախեց ։ Իրենք ալ այն արծաթը արեան գին ըլլալուն համար տաճարին գանձանակին մէջ չդնելով, բրուտի մը ագարակը ծախու առին անով, օտարաց գերեզման ըլլալու համար. և այսպէս ճշգրիւ կատարեցաւ մարգարէին խօսքը (Զաք. ԺԱ. 13)։

4. Իսկ Հրեայք ուզեցին շատ չարախօսութիւններ ընել Յիսուսի վերայ. բայց Պիղատոս շատ հարցուփորձ ընելով՝ յանցանք մը չգտաւ անոր վերայ։ Իսկ երբ իմացաւ թէ Յիսուս Գալիլեայի կողմերէն է, ղրկեց զանիկայ Հերովդէս թագաւորին որ այն օրերը եկած էր Երուսաղէմ։ Հերովդէս շատ ուրախացաւ, քանզի շատոնց 'ի վեր կը փափաքէր թէ զանիկայ և թէ անոր մէկ հրաշքը տեսնել. Իսկ Հրեայք հոն ալ ուզեցին չարախօսութիւն ընել անոր վերայ։ Բայց Հերովդէս երբ տեսաւ թէ Յիսուս բնաւ չպատասխաներ, նեղացաւ, ու ծաղրելու համար ճերմակ լաթեր հագցուց անոր և դարձեալ Պիղատոսի ղրկեց։ Պիղատոս թէ գիտէր որ անոնք նախանձու համար մատնե-

ցին Յիսուսը , սակայն անոնց շնորհ մը ընելու համար իւր զինուորաց ձեռքով ապտակել տուաւ Յիսուսը և յետոյ ուզեց արձակել . ինչպէս որ սովորութիւն ալ էր տօնի օրեր մէկը արձակել . բայց Հրեաները քահանայապետաց դրդմամբը բռնեցին աղաղակել . « Ոչ թէ ասիկայ արձակես , կայսեր բարեկամը չես . վասն զի զինքը թագաւոր կ'անուանէ ու կայսեր հարկ տալն կ'արգիլէ , ու ժողովուրդը կը խռովէ . խաչը հանէ ասիկայ ու Բարաբբան արձակէ » . Եւ այս Բարաբբան աւազակութեամբ բանտարկուած մէկն էր . Պիղատոս թէև իշխանութիւն ունէր Յիսուսը արձակել , բայց տեսնելով որ խռովութիւնը կը շատնայ , վախցաւ , ուստի իւր ձեռքը լուալով ըսաւ . « Անպարտ եմ ես այդ արդարին արիւնէն , դուք գիտէք » . անոնք ալ պատասխանեցին . « Անոր արիւնը մեր և մեր որդւոցը վերայ թող ըլլայ » . Պիղատոս ալ վճռեց որ Յիսուս խաչուի , ու Բարաբբան արձակեց .

5 . Եւ Յիսուսի խաչը կռնակը տալով ճամբայ հանեցին դէպ ի Գողգոթա[1] ըսուած տեղը . Բայց ճամբան Կիւրենացի Սիմոն անուն մէկը բռնելով անոր կռնակը տուին խաչը որ տանի : Յիսուսի ետևէն շատ ժողովուրդ ու կնիկներ ալ կ'երթային , որոնք ցաւելով կու լային անոր վերայ . Յիսուս ալ դարձաւ և « Ով Երուսաղէմի աղջիկներ իմ վերայ մի լաք , հապա ձեզ և ձեր որդւոցը վերայ լացէք » ըսելով . յայտնեց

1 Տեղի կառափելոյ .

նաև իրենց վերայ գալիք մեծ նեղութիւնները և Երուսաղէմի մօտակայ կործանումը։ Երբոր երկերին հասան 'ի Գողգոթա, և հոն անոր Յիսուսի զմռսեալ գինի տալէ ետքը[1], զոր չուզեց խմել, խաչ հանեցին զանիկայ. որ ինքն խօսք մը չհանելով բերնէն՝ զինքը խաչողներուն համար կ'աղօթէր թէ՝ «Հայր թողութիւն տուր ասոնց, ինչու որ չեն գիտեր ինչ կ'ընեն»։ Յիսուսի քովն ալ երկու աւազակներ խաչը հանեցին։ Իսկ Պիղատոս տախտակ մը գրել տուաւ խաչին վերայ իբր գամեցին, ուր գրուած էր թէ՝ ԱՅՍ Է ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ. թէ և Հրեայք կ'ուզէին որ գրուի «Ինքնակոչ թագաւորն Հրէից»։

6. Յիսուսը խաչելէն ետքը՝ զինուորները անոր հանդերձները մէջերնին բաժնեցին. անոր միակտուր պատմուճանին վերայ ալ վիճակ ձգեցին թէ ո՛վ պիտի առնէ (Սաղմ. ԻԱ.)։ Իսկ Հրէից շատերը և խաչուած աւազակներէն ալ մէկը կը նախատէին զՅիսուս. բայց միւս աւազակը իւր ընկերին անիրաւութիւնը յանդիմանելով՝ ըսաւ Յիսուսի. «Տէր, յիշէ զիս, երբ քու թագաւորութեանդ գալու ըլլաս»։ Եւ Յիսուս ըսաւ անոր. «Դուն այսօր ինծի հետ դրախտին մէջ պիտի ըլլաս»։ Նոյն միջոցին սուրբ Կոյս Մարիամ մայրը, և ուրիշ հաւատացեալ կանայք և Յովհաննէս խաչին քով կեցած կուլային. և Յիսուս սուրբ Կոյս մօրը Յով-

1 Սովորութիւն էր տալ իբր թմրեցուցիչ դեղ մահապարտներուն։

հաննէսը ցուցնելով թէ՝ Ահա քու որդիդ. Յովհաննէսին ալ ըսաւ՝ Ահա քու մայրդ. և այն ժամանակէն Յովհաննէս իւր քովը տարաւ տունը Կոյսը և անոր որդիութիւն կ՚ընէր։

7. Նոյն օրը ժամը վեցէն մինչև իննը, արեգակը խաւարեցաւ (ի լման լուսնին արտաքոյ սովորական կարգի), ու բոլոր երկրի վրայ խաւար եղաւ. Յիսուս մեծ ձայնով զԱստուած կանչելէ յետոյ ըսաւ. «Ծարաւի եմ»։ զինուորներէն մէկն ալ հոն եղած քացախին մէջ սպունգ մը թաթխելով եղեգի մը ծայրին իրեն երկնցուց որ քիչ մը բերանը առաւ, ու ետքը ըսաւ. «Ահա ամենայն ինչ կատարուած է»։ ու գլուխը ծռելով հոգին աւանդեց. Նոյն ատեն նոյն վայրկեանին տաճարին վարագոյրը մէջէն ՚ի վար պատռեցաւ. երկիրը շարժեցաւ. քարերը ճեղքուեցան. գերեզմանները բացուեցան, ու շատերը մեռելներէն յարութիւն առին ու Յիսուսի յարութենէն ետքը Երուսաղէմ մտնելով շատերուն երեւեցան. Յիսուսը պահող զինուորները և անոնց ուրիշներ ալ այս եղածները տեսնելով վախցան. և հարիւրապետը ըսաւ. «Իրաւ որ ասիկայ արդար էր, և որդի Աստուծոյ»։

# ԳԼՈՒԽ ԺԹ.

1. Յիսուսի թաղուիլը. 2. Գերեզմանին կնքուիլը եւ պահապան դրուիլը. 3. Յարութիւնը. 4. Յիսուս ի գերեզմանէն եւ աշակերտաց կ'երեւնայ. 5. Հրէից սուտ համբաւը. 6. Երեւնալը. 7. Յիսուս աշակերտաց քով կու գայ. 8. Յիսուսի մէկ հրաշքն ալ. 9. Համբառնալը. (Մտթ. ԻԷ. 57—ԻԸ. 20. Մրկ. ԺԵ. 42—ԺԶ. 20. Ղուկ. ԻԳ. 50—ԻԴ. 52. Յովհ. ԺԹ. 38—ԻԱ. 25. Գործ. Ա. 1—12.)

1. Յիսուսի խաչուած օրը ուրբաթ ըլլալով Հրեայք Պիղատոսէն հրաման առին ու եկան խաչուած աւազակներուն ծունկերը (բարձերը) ջարդել տուին որ շուտ մեռնին ու նոյն օր թաղուին. բայց Յիսուս արդէն մեռած ըլլալով բնաւ մի ջարդին անոր. միայն զինուորներէն մէկը գեղարդով անոր կողը խոցեց, անմիջապէս արիւն և ջուր բղխեց. Երեկոյին Յովսէփ Արիմաթացին որ աշակերտ ու մեծատուն մարդ մի էր և միշտ Հրէից չարութեանը մասնակից չէր եղած, անկից գնաց Պիղատոսի ու Յիսուսի մարմինը խնդրեց. Պիղատոս թէեւ զարմացաւ Յիսուսի այդչափ շուտ մեռնելուն վերայ, բայց երբ ստուգեց հարիւրապետէն, տուաւ Յովսէփին ու գնաց. Նա անկից խաչէն վար իջեցուց Յիսուսը, ու Նիկոդիմոսի հետ մաքուր կտաւով ու խունկերով պատեցին անոր մարմինը ըստ օրինաց Հրէից. և այն խաչուած տեղը պարտէզի մը մէջ վիմափոր գերեզման մը ըլլալով՝ ուր բնաւ մարդ չէր թաղուած, հոնտեղ թաղեցին, ու գերեզմանին դուռը մեծ քարով մը գոցեցին.

2. Հրեաներէն որք Քահանայապետներուն հետ Պիղատոսէն հրաման առնելով գնացին գերեզմանը կնքեցին, և զգուշութեան համար պահապաններ դրին, որպէս զի [illegible] չըլլայ թէ անոր աշակերտները մարմինը գողնան ու ըսեն թէ յարեաւ ի մեռելոց.

3. Իսկ Մարիամ Մագդաղենացի. Զեբեդեայ որդւոց մայրն Սողոմէ. Յակոբայ տա[illegible] մայրն Մարիամ. Հերովդէսի հազարապետին Քուզայի կին Յովհաննա. և ուրիշներ որոնք առած էին գերեզմանին անոյշ [illegible] թերեւս Փարիսեցւոց ըրած զգուշութիւնները. շաբաթն որ հանգստացեր էին, միաշաբաթի օրը կանուխ առաւօտուն՝ խնկոց պատրաստած խունկերը և իւղերը առնելով [illegible] ելան գնալ 'ի գերեզմանն, որպէս զի օծեն Յիսուսի մարմինը. ճամբան յառաջ[illegible]. Ու ճանապարհին կը մտածէին թէ ով պիտի վերցընէ գերեզմանին դրան եղած մեծ քարը. Դեռ ասոնք չէին հասած, երբ մեծ շարժմունքով մը փայլակնատեսիլ հրեշտակ մը իջաւ քարը գլորեց, ու անոր վրայ նստաւ. և պահապան զինուորները վախերնուն մեռելի պէս ինկան. Իսկ կիները երբ հասնելով տեսան որ գերեզմանը բացուած է, կարծեցին թէ Յիսուսի մարմինը վերցուցեր են հոնկէ. ու [illegible]. և Մարիամ Մագդաղենացի փութաց միւս աշակերտներուն պատմելու. իսկ միւս կանայքը բոլոր գերեզմանին քով գացին. և առա

տեսանէ երկու հրեշտակներ սպիտակ հագուածո-
ներով, զարհուրեցան ու երեսնին գետինը խո-
նարհեցուցին, և անոնք ըսին. «Ինչու կը փնտռ-
ռէք կենդանին մեռելոց մէջ. հոս չէ, հարու-
յարեաւ. առջի ատենը ինչ խօսած ձեզի.
և յիշեցէք թէ ինչպէս առջին ձեզի ըսած էր
իր չարչարանքը և 'ի մեռելոց յարութիւնը»։
Անոնք ալ յիշելով Յիսուսի խօսքերը դարձան
այն տեղէն։

4. Նոյն միջոցին Պետրոս և Յովհաննէս
Մարիամ Մագդաղենացիին հետ գերեզմանը գա-
լով երբ տեսան որ անկից պարապ է, գացին
միւս աշակերտաց պատմելու. իսկ Մարիամ որ
հոն տեղ նստաւ և կու լար, անոր ալ երեւե-
ցան հրեշտակները, և հարցուցին թէ ինչու
կու լաս. և Մարիամ ըսաւ. «Անոր համար կու
լամ որ իմ Տէրս հոստեղէն վերցուցեր և չեմ
գիտեր թէ ուր են դրեր»։ Զայս ըսելէ ետքը
ետեւը դարձաւ, ու տեսաւ որ Յիսուս կեցեր
էր, որ հարցուց իրեն լալուն պատճառը. իսկ
Մարիամ չճանչնալով զինքը, ու կարծելով
թէ պարտիզպանն է, ըսաւ. «Տէր, թէ որ դուն
վերցուցիր, ըսէ ինծի դրած տեղդ որ առնեմ
զանիկայ»։ Նոյն ատեն Յիսուս ըսաւ. «Մարի-
ամ»։ և Մարիամ իսկոյն ճանչցաւ զանիկայ «Ով
վարդապետ» ըսելով փարեցաւ որ ոտքերուն վ-
րայ Յիսուս չթողուց և ըսաւ որ երթայ պատ-
մէ աշակերտաց իր յարութիւնը։ Պետրոս և Յով-
հաննէս գերեզմանէն ետ դառնալու ատեններնին

Յիսուս երեւեցաւ և անոնց. և ողջոյն տուաւ. անոնք ալ անոր ոտքերուն խոնարհելով երկրպագութիւն ըրին. և Յիսուս ըսաւ. «Մի՛ վախնաք, գացէ՛ք. ըսէ՛ք իմ եղբայրներուս որ Գալիլեա երթան և հոն զիս տեսնեն»։ Անոնք ալ ահիւ և խնդութեամբ գացին անոնց պատմելու։

5. Իսկ զօրականներէն ոմանք քաղաքը երթալով՝ եղածները պատմեցին քահանայապետներուն. Անոնք ալ ժողովքով որոշում ըրին, ու շատ ստակ տալով իրենց պատուիրեցին որ ըսեն թէ. «Մինչդեռ մենք քնացած էինք, աշակերտները եկան գիշերը գողցան Յիսուսի մարմինը. և եթէ Պիղատոս ալ իմանայ, մենք զանիկայ կը համոզենք, դուք անհոգ եղէք»։

6. Նոյն օրը աշակերտներէն երկու հոգի Էմմաուս գիւղը կ'երթային ու իրարու հետ կը վիճէին եղած անցքերուն վրայօք, և ահա Յիսուս մօտեցաւ ու ճամբորդակից եղաւ անոնց. բայց անոնց աչքերը բռնուած էր ու չկրցան ճանչել զանիկայ. Եւ Յիսուս ըսաւ. «Ի՞նչ կը վիճէք»։ անոնցմէ մէկը Կղէոպաս պատասխանեց. «Դո՞ւ միայն կաս Երուսաղէմ որ չես գիտեր այս օրերս եղածները»։ Եւ սկսաւ պատմել ինչ անցքեր որ եղած էին Յիսուսի վրայ. և յաւելուց թէ անոր յարութիւն առնելն ալ լսեցինք. բայց դեռ զինքը չտեսանք. Յիսուս ալ սկսաւ անոնց պատմել մարգարէից մէջ իր վրայօք գրուած բաները. և երբ մօտեցան իրենց երթալու տեղը, աղաչեցին զՅիսուս որ

իրենց քով կենալ այն երեկոյին ։ Յիսուս ալ երբ անոնց հետ սեղան նստաւ , հաց առաւ , օրհնեց ու կտրեց . և ահա նոյն վայրկենին բացուեցան անոնց աչքերը ու ճանչցան զանիկայ . բայց նա աներեւութացաւ անոնցմէ ։ Անոնք ալ Երուսաղէմ դարձան և առաքելոց պատմեցին այս բաները ։

7 . Նոյն օրը երեկոյին երբ առաքեալք դուռները գոցած նստեր էին, և ահա Յիսուս եկաւ հոն ու ըսաւ « Խաղաղութիւն ձեզ . ես եմ, մի վախնաք » . քանզի անոնք վախցան, կարծելով թէ ոգի մը է տեսածնին ։ Եւ Յիսուս ցուցուց անոնց իր ձեռաց ու ոտից վէրքերը . զոր երբ տեսան , հաւատացին , ու շատ ուրախացան . Թովմաս որ հոն չէր նոյն միջոցին , երբ եկաւ ու լսեց այս բանը , չհաւատաց ըսելով թէ՝ « Մինչեւ որ աչքովս չտեսնեմ, և ձեռքովս չշօշափեմ անոր վէրքերը , չեմ հաւատար » ։ Սակայն ութ օրէն ետքը երբ դարձեալ դռները գոցած նստեր էին , Յիսուս եկաւ , ու ողջոյն տալէ ետքը ըսաւ Թովմասին . « Եկուր զիս զննէ , ու հաւատա՛ , և մի ըլլար անհաւատ » . այն ատեն Թովմաս ըսաւ . « Տէր իմ, և Աստուած իմ » . և Յիսուս ըսաւ . « Դուն որ տեսար ու հաւատացիր , երանի անոնց որոնք զիս չտեսած կը հաւատան » ։

8 . Անկէ ետքը Յիսուս դարձեալ յայտնեց ինքզինքը Տիբերեայ ծովուն եզերքը . երբ իր աշակերտները ձուկ որսալու կ'երթային , ու հը

բաշխել շատ ձուկ բռնցընել տուաւ անոնց առա-քեալներուն մէջ։ Յիսուս Պետրոսի երեք անգամ հարցուց թէ «Կը սիրես զիս. երեք անգամ ալ երբ Պետրոս «Այո. կը սիրեմ» պատասխա-նեց. Յիսուս ալ երեք անգամին ըսաւ թէ՝ «Արածէ իմ հօտս»։ Եւ այսպէս անոր երեք ան-գամ ուրացութեան թողութիւնը տուաւ, յայտ-նելով նաեւ թէ՝ դուն ալ պիտի նահատակուիս խաչուելով։

9. Յիսուս ուրիշ շատ հրաշքներ ալ ըրեր է. ետքը խոստմներ ալ տուաւ իր աշակերտացը, տալով անոնց այն պատուիրանները զորս յա-ռաջ խօսացած էր. եւ պատուիրեց որ երթան քարոզեն բոլոր աշխարհի եւ իրեն վկաներին ըլլան ու աշակերտանան եւ մկրտեն Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն անունովը. միանգամայն պատուիրեց որ Երուսաղէմէն չհեռանան, մինչեւ որ Հոգ-ւոյն Սրբոյ զօրութիւնը ստանան ի վերուստ։ Այնուհետեւ զանոնք առնելով Բեթանիայի քով Ձիթենեաց լեռը տարաւ, եւ ձեռքերը օրհ-նելու ատեն յերկինս վերացաւ եւ նստաւ ընդ աջմէ Հօր. ու աշակերտները ակնապիշ կը նա-յէին, մինչեւ որ ամպերուն մէջ աներեւութա-ցաւ անոնց իրենց աչքերէն։ Այն միջոցին եր-կու հրեշտակներ երեւնալով իրենց՝ ըսին. «Ին-չու զարմացած կը նայիք. գիտցէք թէ ինչպէս որ վերացաւ Յիսուս յերկինս, այնպէս ալ օր մը նորէն պիտի գայ»։ Առաքեալներն ալ ու-րախութեամբ դարձան Երուսաղէմ։

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ԳԱԼՍՏԵՆԷՆ ՄԻՆՉԵՒ ՊՕՂՈՍԻ ՀՌՈՎՄ ԵՐԹԱԼԸ

### ԳԼՈՒԽ Ա.

1. Մատաթիայի ընտրութիւնը. 2. Գալուստ Հոգւոյն Սրբոյ. 3. Ի ծնէ կաղին բժշկուիլը. 4. Հրեայք կ'ուզեն արգիլել առաքելոց քարոզութիւնը. 5. Անանիա և կինը Սափիրա կը պատժուին Աստուծմէ. 6. Առաքեալք բան-տէն կ'ազատուին հրաշքով. 7. Եօթն սարկաւագաց ընտրու-թիւնը. 8. Ստեփաննոսի քարկոծուիլը. (Գործ. Ա. 13-Ը. 2)

1. Առաքեալք Յիսուսի համբառնալէն մի-աբանութեամբ աղօթք կ'ընէին ու Հոգւոյն Սրբոյ գալստեանը կը սպասէին սուրբ Աստուա-ծածնի և ուրիշ աշակերտաց ու աշակերտու-հեաց հետ մէկ տեղ. Այն օրերը երբ հարիւր քսան հոգիի չափ ժողոված էին, Պետրոս առաջարկեց որ Յուդայի տեղը ուրիշ մը ընտրուի. ուստի աղօթք ըրին ու վիճակ ձգե-ցին Յովսէփայ (Յուստոս) ու Մատաթիայի վը-րայ. ու վիճակը Մատաթիայի ելնելով երկոտա-սան առաքելոց կարգը մտաւ.

2. Ու եղաւ որ Յիսուսի համբարձմանէն տասն օր ետքը Պենտեկոստէի տօնին օրը երբ ամէնքը միաբան նստած էին, յանկարծակի եր-կինքէն սաստիկ հովի ձայն մը գալով բոլոր տու-նը լեցուց ու ամէն մէկուն կրակէ լեզուներ ե-

լեցուեցան. իրենք ալ սկսան տեսակ տեսակ լեզուներ խօսիլ. Այն ատենի օրերը ուրիշ երկիրներէ եկած աստուածավախ Հրեաներ կային Երուսաղէմի մէջ. որոնք երբ իմացան այս բանը, եկան ու տեսան զարմանալով որ իրենց երկիրներուն լեզուներովը կը խօսէին. բայց Հրեաներէ ոմանք ալ ծաղր կ'ընէին զանոնք "գինով են" ըսելով. Այն ատեն Պետրոս միւս Առաքելոց հետ պատասխանելով իրենց. Յովել մարգարէի խօսքը յառաջ բերաւ եւ իմացուց թէ այս բանը Հոգւոյն Աստուծոյ զօրութիւնն է. եւ Յիսուսի Քրիստոսի վերայ ալ շատ ազդու քարոզութիւն մը ըրաւ, որով նոյն օրը երեք հազար հոգի հաւատացին ու մկրտուեցան.

3. Հաւատացեալք կը շատնային եւ Առաքելոց ձեռօք շատ հրաշքներ կը գործէր Աստուած. Օր մը ալ երբ Պետրոս եւ Յովհաննէս տաճարը կ'երթային, ի ծնէ կաղ մէկը տեսան, որ տաճարին դրան քով կը մուրար. Ասիկա երբ իրենցմէ ալ ողորմութիւն առնել կը յուսար, Պետրոս ըսաւ. "Արծաթ ու ոսկի չունիմ որ տամ քեզ. բայց ունեցածս կու տամ. Յիսուսի Քրիստոսի անուանովը ելիր ու գնա". եւ անոր աջ ձեռքէն բռնելով վերցուց՝ որ իսկոյն ոտքի ելաւ ու սկսաւ քալել, ցատկել, ու զԱստուած օրհնել. Ասոր այս տեսնողները ու իմացողները զարմանալով տաճարը եկան Պետրոսի քարոզութիւնները մտիկ ըրին, ու հինգ հազար մարդու չափ հաւատացին նոյն օրը.

4. Բայց Հրէից մեծերը և Սադուկեցիք[1] գժուարելով այս եղածներուն վրայ, բանեցին Պետրոսն ու Յովհաննէսը բանտը դրին, և հետևեալ օրը կանչելով զանոնք սկսան հարցումներ ընել. անոնք ալ պատասխանեցին իրենց վըկայութիւն տալով Յիսուսի վրայ: Ժողովականք թէև նեղացան, բայց վախնալով անոնց բան մը ընելու, խստիւ սպառնալեցին որ մէկ մի ալ Յիսուսի անունին քարոզութիւն չընեն: Առաքեալք երթալով ընկերներուն պատմեցին, ու ամէնքը մէկէն սկսան աղօթել Աստուծոյ որ զօրացընէ զիրենք. և ահա իրենց կեցած տեղը շարժեցաւ, ու ամէնքը Հոգւով Սրբով լեցուեցան:

5. Ու հաւատացեալ ամէնքը մէկ սիրտ ու մէկ հոգի էին, և իրենցմէ մէկը չէր ըսեր իր ունեցածին համար թէ իրենն է, հապա ամէնը հասարակաց կը սեպէին. շատերն ալ իրենց կալուածները ծախելով գինը առաքելոց կը բերէին, ուրկէ ամէն մէկուն իր կարօտութեան համեմատ կը բաժնուէր: Անանիա անուն մէկն ալ իր մէկ կալուածը ծախելով անոր գինէն մէկ մասը պահեց իր կնոջ Սափիրայի համաձայնութեամբ, ու մնացածները բերելով Առաքելոց՝ ուզեց խաբել թէ այս չափ էր ամէն գինը. սակայն թէ՛ ինքը և թէ՛ կինը պատժուելով

---

1 Սադուկեցւոց յատկապէս Առաքելոց դէմ հակառակելնուն պատճառը. կը կարծուի թէ Յիսուսի յարութիւնը քարոզելնուն համար էր աւելի.

մեռան, իրենց յօժարութեամբ ընելիք բարեգործութեան մէջ խարդախութիւն ընելնուն համար։

6. Եւ Առաքելոց ձեռքով շատ հրաշքներ կ՚ըլլային. անանկ որ հիւանդները հրապարակը կը հանէին պատգարակներով ու մահիճներով որ Պետրոսի անցնելու ատենը գոնէ անոր շուքը անոնց մէկուն վրայ հասնի, ու հաւատացեալներուն թիւն ալ օրէ օր կը շատնար. ուստի քահանայապետները և Սադուկեցիք նախանձելով Առաքեալները բանտարկեցին։ Բայց Տէրոջը հրեշտակը գիշերով բանտին դռները բացաւ և զանոնք դուրս հանեց, պատուիրելով որ երթան քարոզեն։ Հետեւեալ առաւօտուն երբ իմացան Հրեայք որ բանտին դռները թէև գոց՝ այլ Առաքեալք հոն չէն, զարմացան. և իմանալով որ անոնք տաճարին մէջ քարոզութիւն կ՚ընեն, կանչեցին ու սկսան յանդիմանել. սակայն անոնք համարձակութեամբ պատասխանեցին թէ՝ Պէտք է աւելի Աստուծոյ հնազանդիլ քան թէ մարդոց. յետոյ սկսան Յիսուսի վերայօք վկայութիւն տալ թէ՝ նա է միայն Փրկիչ և Առաջնորդ։ Հրեայք այս խօսքերը լսելով կատղեցան, և կը խորհէին զանոնք մեռցնել. բայց իրենցմէ Գամաղիէլ անուն ուսեալ ու խելացի մարդ մը Առաքեալները ժողովքէն դուրս հանել տալով խրատ տուաւ Հրէից որ անոնց չըդպչին. քանզի թէ որ մարդոյմէ է բուն անոնց վարդապետութիւնը, ինքնին կը փճանայ, ինչ-

պէս ուրիշ մէկ քանիներ . բայց թէ որ Աստուծմէ է , չէք կրնար քակել , զիրենք ջնջել , և Աստուծոյ դէմ ալ գործած կ'ըլլաք . Ամենքը թէև հաւանեցան ասոր , բայց Առաքեալները կանչելով ծեծելէ զկնի , դարձեալ պատուիրեցին որ մէկ մ'ալ Յիսուսի անունը չքարոզեն . ու այնպէս թող տուին . Բայց անոնք դուրս ելան անկէ ուրախանալով որ ճշմարտութեան համար անարգուելու արժանի եղան , և բնաւ չէին դադարեր Յիսուս Քրիստոսը քարոզելէ .

7. Այսպէս երբ օր ըստ օրէ հաւատացեալք կը շատնային , մինչև անգամ քահանաներէն ալ շատերը կը հաւատային . Առաքեալները տեսան որ իրենք չեն կրնար հանգիստ քարոզութիւն ընելու , ու միանգամայն հաւատացելոց մատակարար գործերը հոգալու , ուստի առաջարկեցին անոնց որ իրենցմէ Հոգւով Սրբով լեցուած եօթը մարդ ընտրեն որ այն գործերը հոգան . որով իրենք ալ կարող ըլլան միայն քարոզութեան զբաղիլ . Եւ բոլոր հաւատացելոց բազմութիւնն ալ իրենցմէ եօթն հոգի ընտրեցին , որոց մէկն էր և Ստեփաննոս . և զանոնք Առաքելոց ներկայացուցին , որոնք աղօթք ընելով ձեռքերնին անոնց վերայ դրին , ու սարկաւագ ձեռնադրեցին .

8. Իսկ Ստեփաննոս որ շնորհալի մէկն էր , շատ հրաշքներ կ'ընէր , միանգամայն կը լռեցընէր այն ամեն Հրեաները որոնք իրեն հետ վիճաբանութիւն կ'ընէին . Անոնք ալ թշնամացան իրեն և զինքը բռնելով քահանայապետին ա-

տեանը տարին, և սկսան սուտ վկաներով գը-
տանել թէ՝ Ստեփաննոս Մովսէսի և Աստուծոյ դէմ
հայհոյութիւններ կ՚ընէ. Իսկ երբ քահանայա-
պետը հարցուց իրեն թէ՝ իրա՞ւ են այս բաները,
այն ատեն Ստեփաննոս գեղեցիկ և ազդու ա-
ռանձնախօսութեամբ մը Աբրահամու օրէն ՚ի վեր
Աստուծոյ իրենց ազգին ըրած խնամքները յա-
ռաջ բերելով. ցուցուց թէ ինչպէս իրենք ալ ընդ
հակառակն ապերախտ գտնուեր են միշտ Աս-
տուծոյ դէմ. Յետոյ երկինք նայելով «Ահա կը
տեսնեմ, ըսաւ, երկինքը բացուած և Յիսուս
նստած Աստուծոյ աջակողմը»: Ասոր վերայ Հը-
րեայք մեծաձայն աղաղակ մը հանելով փակեցին
անոր վերայ ու քաղաքէն դուրս հանելով քար-
կոծեցին զանիկայ որ կ՚աղօթէր ըսելով. «Տէր
Յիսուս, ընդունէ՛ իմ հոգիս». և ծունկի վե-
րայ գալով «Տէ՛ր, այս յանցանքին մեղք մի՛ սե-
պեր» ըսաւ ու հոգին աւանդեց. և աստուա-
ծավախ մարդիկ անոր մարմինը վերցուցին ու
թաղեցին, մեծ սուգ ընելով. Ստեփաննոս Քրիս-
տոսի վկայութեան համար առաջին նահատա-
կուողն եղաւ՝ Ն.—Ք.—Ձ.— թուականին. (34):

## ԳԼՈՒԽ Բ.

1. Եկեղեցւոյ հալածանքը. 2. Սիմոն մոգը. 3. Եթեովպա-
ցի ներքինին. 4. Պօղոսի դարձը. 5. Պօղոս յերուսաղէմ և
անկէ ՚ի Տարսոն կ՚երթայ. 6. Պետրոսի գործերը. 7. Կոռ-
նելիոս հարիւրապետը. 8. Յակոբոսի գլխատումը և Պետ-
րոսի հրաշքով ազատուիլը. 9. Հաւատացելոց քրիստոնեայ
կը կոչուին. (Գործ. Ը. 1—ԺԲ. 30. Գաղ. Ա. 17—19.):

1. Իսկ այն օրը մեծ հալածումն եղաւ եկե-

ձեցինն վերայ Երուսաղէմի մէջ. ու Առաքելա-
ներէն զատ ամէնն ալ ցիր ու ցան եղան այլ և
այլ տեղեր. և շատերը գացած տեղերնին կը քա-
րոզէին Յիսուս Քրիստոսը.

2. Եւ Փիլիպպոս կը քարոզէր Սամարիոյ
կողմերը ու հրաշքներ կ'ընէր. և շատերը հա-
ւատացին ու մկրտուեցան. Յետոյ Պետրոս և
Յովհաննէս ալ եկան նոյն կողմերը. և կը քա-
րոզէին. ու ձեռքերնին հաւատացելոց վերայ
կը դնէին. ու անոնք Սուրբ Հոգին կ'առնէին.
Զայս տեսնելով Սիմօն անուն մէկը, որ Փիլիպ-
պոսի քարոզութեամբ հաւատացեր էր, առաջ
մատուց անոնց. խնդրելով թէ «Ինծի ալ տուէք
այս իշխանութիւնը». բայց Պետրոս ըսաւ.
«Քու արծաթդ քեզի հետ թող կորսուի. ինչու
որ կարծեցիր թէ Աստուծոյ պարգեւը ստակով
կ'առնուի». և զանիկայ յանդիմանելէ ետքը
յորդորեց որ զղջայ. անիկայ ալ զղջացաւ ու
խնդրեց որ իրեն համար աղօթեն.

3. Նոյն Տէրոջը հրեշտակին ազդարարու-
թեամբ Փիլիպպոս գնաց Երուսաղէմէն Գազա
երթալու ճամբուն վերայ. և հոնտեղ հանդիպե-
ցաւ ներքինիի մը որ Եթովպացի Կանդակա
թագուհիին գանձապետն էր ու Երուսաղէմ գա-
լով երկրպագութիւն ըրեր ու կը դառնար. Փի-
լիպպոս գնաց անոր կառքին մօտեցաւ. և տես-
նելով որ Եսայի մարգարէին գիրքը կը կարդար.
հարցուց թէ «Կը հասկընաս կարդացածդ».
անիկայ ալ յայտնեց թէ չհասկնար. ու խնդրեց

կողմ՝ որ զայն իւր քով նստի. և երբ այն տեղը հասաւ, ուր Քրիստոսի կանխաւ չարչարանաց վերայ էր գրուած, ներքինին հարցուց թէ՝ որու համար ըսուած է այս խօսքերը. Այն ատեն Փիլիպպոս սկսաւ մի ըստ միոջէ բացատրել անոր Քրիստոսի տնօրէնութիւնները, և ներքինին հաւատալով թէ Յիսուս Քրիստոսն է որդի Աստուծոյ, երբ ջրի մը քովէն կ՚անցնէին՝ մկրտուիլ ուզեց. և մկրտուելէն յետոյ Հոգին սուրբ եկաւ անոր վերայ. Բայց հրեշտակը յափշտակեց ըզՓիլիպպոս որ ալ չտեսաւ զանիկայ Ներքինին և իւր ճամբան շարունակեց. Իսկ Փիլիպպոս Ազոտոսի մէջ գտնուեցաւ. և շատ քաղաքներ պտըտելով կը քարոզէր.

4. Սուրբն Պօղոս (Սաւուղ. Սօղոս) ալ ու Գամաղիէլի քով կրթուած և օրինաց ստուգ նախանձախնդիր մէկն էր և Ստեփաննոսի քարկոծմանն ալ կամակից էր. զնոյն քահանայապետէն յանձնարարական թղթեր առաւ որ երթայ Դամասկոս և հոն ալ Յիսուսի հաւատացողները կապել տայ ու Երուսաղէմ բերէ. Բայց երբ մօտեցաւ Դամասկոսի, և ահա յանկարծ իւր բոլորտիքը լոյս մը փայլատակեց երկինքէն ու ինքը ինկալով ձայն մը լսեց որ կ՚ըսէր. «Սաւուղ, Սաւուղ, ինչու զիս կը հալածես». Պօղոս պատասխան տուաւ. «Ո՞վ ես դուն, Տէր. և Տէրը ըսաւ. «Ես եմ Յիսուս զոր դուն կը հալածես. դժուար բան է քեզի խթանի դէմ կից զարնել». Այն ատեն Պօղոս դողալով և ապշութեամբ

պատասխանեց. «Տէ՛ր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ»։ Եւ անիկայ ըսաւ. «Ելի՛ր, ու քաղաքը մտիր եւ հոն քեզի պիտի զուցուի թէ ինչ պարտիս ընել»։ Իսկ որ միայն լսեր կը տեսնէին ու Պօղոսի ձայնը կը լսէին՝ ապշած կեցեր էին։ Յետոյ Պօղոս ոտքի ելաւ, եւ աչքերը թէեւ բաց էր, բայց չէր տեսներ. ուստի ձեռքէն բռնելով քաղաքը մտցուցին. ուր անդ երեք օր առանց ուտելու ու խմելու կեցաւ։ Իսկ Անանիա անուն աշակերտ մը տեսիլքի մէջ հրաման առնելով գնաց ձեռքը Պօղոսի վըրայ դրաւ Տէր Յիսուսի անունովը. եւ իսկոյն անոր աչքերէն թեփերու պէս բաներ ինկան. ու սկսաւ տեսնել ու ելաւ մկրտուեցաւ, ու կերակուր առնելով զօրացաւ. եւ անմիջապէս սկսաւ քարոզել զՅիսուս, թէ նա է Որդին Աստուծոյ (34)։

5. Եւ Դամասկոսի մէջ եղող Հրեայք տեսնելով որ Պօղոս փոխուեր է, ու Յիսուսը կը քարոզէ, խորհուրդ ըրին որ զանիկայ սպաննեն, ու գիշեր ցերեկ անոր ճամբան կը պահէին. զոր երբ իմացան հաւատացեալք, Պօղոսը զամբիւղի մը մէջ դնելով պարսպէն վար իջեցուցին գիշեր ատեն, որ գնաց Ա՛րաբիա կեցաւ ատեն մը. եւ յետոյ վերստին Դամասկոս երթալով, իր դարձէն երեք տարի յետոյ գնաց Երուսաղէմ՝ Հոնտեղ գտնելով Պետրոսը եւ Յակոբոսը տասն ու հինգ օր մը կեցաւ. բայց իր համարձակ քարոզութեանը համար երբ հոն ալ Հրեայք կ'ուզէին զինքը մեռցնել, հաւատացեալք ալ

Տարսոն ղրկեցին զինքը որ իր ծննդեան քաղաքն էր։

6. Այն առենները Պետրոս ալ գնաց Լիւդիա ընակող հաւատացելոց քով։ Հոն տեղ Ենեաս անուն անդամալոյծ մը կար որ ութը տարիէ 'ի վեր պառկած էր, և ըսաւ անոր. «Ենեա, ահա Յիսուս Քրիստոս զքեզ կը բժշկէ, ոտքի ելիր»։ Ու անիկայ իսկոյն բժշկուեցաւ. զայս տեսնելով շատերը դարձան առ Աստուած։ Յոպպէի մէջ ալ հաւատացեալ ու ողորմած կին մը կար Տաբիթա (Այծեամիկ) անուն որ այն օրերը հիւանդացաւ ու մեռաւ։ Անոր ծանօթները լսելով թէ Պետրոս Լիւդիայի մէջ է, կանչեցին զանիկայ, որ եկաւ ու տեսաւ որ ամէնքը, մանաւանդ անկէ ողորմութիւն առնող աղքատները կու լային։ Պետրոս ամէնը դուրս հանելով մեռելին քովէն, ծունկի վրայ եկաւ, ու աղօթք ընելով ըսաւ. «Տաբիթա, ելիր կայնէ»։ Եւ անիկայ անմիջապէս ողջացաւ, որուն վրայ ամէնքը ուրախացան, ու շատ մարդիկ հաւատացին Յիսուսի։

7. Կեսարիոյ մէջ Կոռնելիոս անուն հեթանոս հարիւրապետ մը կար որ բարեպաշտ ու ողորմած մարդ մը էր։ Օր մը տեսիլքի մէջ հրեշտակ մը խօսեցաւ իրեն որ Յոպպէէն Պետրոսը կանչել տայ. ու անկէ սորվի փրկութեան ճամբան. անիկայ ալ իսկոյն մարդ ղրկեց Պետրոսի։ Երբ ասոնք Յոպպէի մօտեցեր էին, Պետրոս աղօթք ընելու առեն Աստուած տեսիլքով

մը խնայուց իրեն , որ այն եկող մարդոց հետ երթայ առանց խղճահարութիւն ընելու անոնց հեթանոս ըլլալուն համար . (վասն զի դեռ Հրէ-այ հաւատացեալք խիղճ կ'ընէին անոնց հետ ընտանութիւն ընելու ) : Ուստի երբ այն մար-դիկը եկան , Պետրոս քանի մը Հրեայ առնելով հետեւորդներէն գնաց , և Կոռնելիոս մեծ պատուով ընդունեց զինքը իր տունը , ուր հրաւիրած էր իր ազգականները ու բարեկամները : Հոն տեղ Պետրոս իր տեսիլքը պատմելէ զկնի՝ սկը-սաւ քարոզել Յիսուս Քրիստոսը , որոնք յօժա-րութեամբ սրտի ընդունեցին ու մկրտուեցան , և Հոգին Սուրբ ալ եկաւ իրենց վրայ :

8 . Նոյնին հալածումէն ետքը երբ եկեղե-ցին խաղաղած էր , Հերովդէս Ագրիպպաս թա-գաւորը դարձեալ հալածանք մը հանեց , ու քա-նիները չարչարելէ զատ , Յովհաննէսի եղբայրը Յակոբոսն ալ սրով սպաննեց : Ու տեսնելով որ այս բանը Հրէից հաճելի է , Պետրոսն ալ բան-տարկեց . բայց հաւատացեալք անդադար աղօթք-ներ կ'ընէին անոր համար : Զատկի տօնէն յե-տոյ երբ Հերովդէս կ'ուզէր Պետրոսը դատա-պարտել , նախընթաց գիշերը անիկայ բանտին մէջ շղթաներով կապուած էր , ու բազմաթիւ պահապաններ բանտը կը պահպանէին : Ու ա-հա Տէրոջը հրեշտակը եկաւ հոն ու Պետրոսը ոտք հանեց , և իսկոյն անոր շղթաները վար ին-կան . և հրեշտակը դուրս հանեց զՊետրոս որ թէեւ անոր ետեւէն կ'երթար , բայց կը կար-

ծէր թէ երազ կը տեսնէ ։ Այսպէս եկան մինչև երկաթի դուռ մը որ ինքնին բացուեցաւ, և երբ անկէ փողոց մը մտան, հրեշտակը աներևւոյթ եղաւ ։ Այն ատեն Պետրոս ինքզինքին գալով իմացաւ թէ ճշմարտապէս Տէրոջը հրեշտակն էր որ ազատեց զինքը . յետոյ Մարկոսի տունը գնաց Պետրոս, որոնք երբ տեսան զինքը շատ զարմացան ։ Հետևեալ օրը Հերովդէս իմանալով այս բանը՝ բարկացաւ, ու բանտին պահապանները սպաննել տուաւ ։ Ատենէ մը յետոյ ինքն ալ պատժուեցաւ ու մեռաւ չարաչար մահուամբ ։

9. Այն միջոցներուն Հրէաստանէն դուրս Հեթանոսաց մէջ ալ Յիսուսի Քրիստոսի հաւատքը տարածուելով օրէ օր, Երուսաղէմ եղող առաքեալք ալ Բառնաբաս[1] զրկեցին որ երթայ զանոնք հաստատէ ու մխիթարէ ։ Աս ալ անիկա շատ տեղեր քարոզելով մինչև Տարսոն եկաւ, ու Պօղոսը գտնելով հոն տեղ, անոր հետ Ասիոյ երկիրը ու Կիլիկիոյ կողմերը քարոզելով եկան Անտիոք . ուր տեղ տարի մը քարոզեցին . ու նախ և յառաջ հոնտեղ քրիստոնեայ անուանեցան հաւատացեալք ։ Հոն տեղէն Հրէաստանի Քրիստոնէից ալ բաւական օգնութիւններ զրկեցին Բառնաբասի ու Պօղոսի ձեռօք ։ Հերովդէսի բռնած հալածումին ժամանակ ։

1 Որդի մխիթարութեան ։

# ԳԼՈՒԽ Գ.

1. Եղիմաս մոգը և բդեշխին փոխանորդը. 2. Ի Լիւստրա կաղին բժշկութիւնը. 3. Առաքելոց ժողովքը. 4. Հրէայք կը հալածեն զՊօղոս. 5. Պօղոս կ'երթայ 'ի Թեսաղոնիկէ. 6. Պօղոս Աթէնքի մէջ կը քարոզէ. 7. Ի Կորնթոս և անկէ այլ Երուսաղէմ կ'երթայ. (Գործ. ԺԲ. 24—ԺԸ. 22.)

1. Պօղոս և Բառնաբաս Անտիոք դառնալէ ետքը Հոգւոյն սրբոյ ազդեցութեամբ ճամբայ ելան 'ի Սելևկիա, և անտի 'ի Կիպրոս և բոլոր կղզին պտըտելէ ետքը Պափոս քաղաքը եկան։ Հոն տեղ Հրեայ մը կար Բարեյեսու (Եղիմաս մոգ), որ կ'ուզէր արգիլել բդեշխին փոխանորդ Սերգիոս Պօղոսը[1] երբ անիկայ կ'ուզէր լսել Պօղոսի քարոզութիւնը. բայց Պօղոս Աստուծոյ անունով զանիկայ յանդիմանեց որ պատժուելով՝ ժամանակ մը կուրցաւ. Իսկ բդեշխին փոխանորդը և ուրիշներ զայս որ տեսան հաւատացին Աստուծոյ։ Պօղոս և իր ընկերները հոնկէ ելնելով գացին Պամփիլիա ու Պիսիդիա ու Հրէից ժողովրդարաններուն մէջ կը քարոզէին, մարգարէից վկայութեամբը հաստատելով Յիսուսի Քրիստոսի Աստուածութիւնը, ու տնօրէնութիւնը, և այսպէս շատ մարդիկ հաւատացին։ Բայց Պիսիդիայի մէջ քարոզելու ատենին Հրէայներէն նախանձոտ մարդիկ հակառակեցան, ու Պօղոսի և Բառնաբասի վրայ հալածանք հանելով՝ դուրս վանեցին հոնկէ. անոնք եկան Իկոնիոն, ու հոն տեղ շատ հր

1 Հաւանական է որ Սօղոս այս մարդուն անուամբը Պօղոս կոչուեցաւ, թերևս 'ի նշանակ բարեկամութեան.

հրաշքներ ու քարոզութիւններ ընելով շատ մարդ աշակերտելէ զկնի, երբ դարձեալ Հրէից դրդռութեամբ հալածուեցան, ելան անկէ ու Լիւստրայի, Դերբէի և շրջակայից մէջ կը քարոզէին. և այս ամէն հալածումներուն վրայ Քրիստոսի եկեղեցին օր ըստ օրէ կ'աճէր ու կը զօրանար:

2. Լիւստրայի մէջ 'ի ծնէ կաղ մէկը կար, որ Պօղոսի քարոզութիւնները մտիկ կ'ընէր. Պօղոս ալ տեսնելով որ անիկայ բժշկուելու հաւատք ունի, բարձրաձայն ըսաւ. «Ել ու ոտքըդ վրայ կայնէ». անիկայ ալ իսկոյն ելաւ ու աղէկցաւ: Տեղացի հեթանոսք երբ զայս տեսան, ըսին թէ աստուածները մարդոց նմանութեամբ մեզի եկեր են. ու անոր Դիոսի մեհենին քուրմը բազմութեան հետ մէկ տեղ ցուլեր ու պսակներ բերելով Պօղոսի ու Բառնաբասի, կ'ուզէր որ զոհ ընէ իրենց. բայց անոնք չթողուցին ըսելով. «Ի՞նչ է այդ, որ կ'ընէք. մենք ալ ձեզի պէս մարդիկ եմք. ու կը քարոզեմք որ այդ փուճ բաները թողուք, ու դառնաք դէպ 'ի ճշմարիտ Աստուած, որ բոլոր տիեզերքը ստեղծեց»: Այնպէս ուրիշ տեղերէ Հրեայք գալով ժողովուրդը գրգռեցին Առաքելոց դէմ և Պօղոսը քարկոծելով կիսամեռ դուրս հանեցին քաղաքէն: Բայց Պօղոս և իր ընկերները շատ տեղեր ալ քարոզելով և առաջին քարոզած տեղերնին ալ պտտելով կը յորդորէին զանոնք որ հաւատքնուն մէջ հաստատ մնան. և երէցներ

ալ ձեռնադրեցին անոնց ։ Ապա Պերգէի ու Ատալիայի մէջ շրջելով եկան Անտիոք և առեն մը կեցան հոն ։

3. Իսկ քանզի հեթանոսներէն քրիստոնեայ եղողները չէին պահեր ճշդիւ Մովսէսի օրինաց խտրութիւնները ու թլփատութիւնը, ինչպէս կը պահէին հրեայներէն եղող քրիստոնեայները, այս պատճառաւ վէճ մը եղաւ. ուստի Պօղոս և Բառնաբաս Երուսաղէմ եկան որ հոն տեղ խօսին այս խնդրոյն վրայ ։ Հոն եղող Առաքեալները ժողով գումարելով Հոգւոյն Սրբոյ ազդեցութեամբ որոշեցին որ հեթանոսներէն եղող քրիստոնեայք ազատ ըլլան Մովսիսական օրինաց խտրութիւններէն, և միայն քանի մը գլխաւոր բաներէ զգուշանան, այսինքն կռապաշտութենէ, խեղդուած կենդանի ու արիւն ուտելէ. և յառաջապէս թուղթեր ալ գրեցին ամէն տեղ այս բանիս համար ։ Պօղոս և Բառնաբաս և իրենց հետ Յուդա և Շիղա այս վճիռը բերին Անտիոք (50—52) ։ Յետոյ Պօղոս բաժնուելով Բառնաբասէն, Շիղայի հետ վերստին ճանբայ ելաւ քարոզութեան. և շատ տեղեր պտըտելէ ետքը հասաւ ՚ի Լիւստրա, և հոն տեղ Տիմոթէոսը իրեն աշակերտելէ զինքը, եկեղեցեաց այցելութիւն ընելով եկաւ ՚ի Փռիւգիա և Գաղատիայի կողմերը ։

4. Հոն տեղ տեսիլքի մէջ հրաման առնելով Պօղոս ճանբայ ելաւ դէպ ՚ի Մակեդոնիա, Միւսիայի և Տրովադայի ճամբով. և հոն տեղ

Ղուկաս բժիշկը իրեն աշակերտելով , զանիկայ ալ հետը առաւ ու եկան Կրոնիոս քաղաքը . Պօղոս երբ հոն տեղ կը քարոզէր , Լիդիա անուն բարի կին մը հաւատաց Յիսուսի ու մկրտուեցաւ , և իւր տունը ընդունեցաւ զՊօղոս և անոր ընկերները ։ Այս քաղաքին մէջ աղախին մի կար , որ գուշակութիւն կ'ընէր ու անով մեծ շահ կը բերէր իւր տէրերուն . իսկ երբ Պօղոս զանիկայ ազատեց Յիսուսի Քրիստոսի անուանովը , այն ատեն անոր տէրերը առին եկան ու Պօղոսը և Շիղան դատաւորին քաշեցին իբր խռովարար , ու զօրագլուխները զանոնք ծեծել տալէ ետքը բանտարկել տուին ։ Բայց կէս գիշերուան յանկարծ շարժ մը եղաւ , ու բանտին դռները բացուեցան , ու անոնց կապերը արձակուեցան . բանտապետը արթննալով կարծեց թէ փախեր են , խռովեցաւ . բայց Պօղոս խօսեցաւ իրեն թէ՝ « Հոգ մի՛ ըներ , մենք հոս ենք » . այն ատեն բանտապետը հաւատաց Յիսուսի , և զանոնք իւր տունը տանելով սեղանի հրաւիրեց , և յետոյ մկրտուեցաւ ինքը և ընտանիքը ։ Առաւօտուն զօրագլուխները իմանալով թէ անոնք Հռոմայեցի են , վախցան ու արձակեցին զանոնք , որոնք ճամբայ ելան դէպ 'ի Թեսաղոնիկէ .

5 . Պօղոս հոնտեղ Հրէից մէջ կը քարոզէր . և մարգարէից գիրքերը մեկնելով կը ցուցնէր թէ պէտք էր Յիսուսի չարչարուիլ ու յարութիւն առնել . և թէ՝ նոյն Յիսուսը ինքն Քրիստոսն է՝ որուն դալուստը կ'սպասէին .

թէեւ շատ մարդիկ հաւատացին, բայց անօրէն մարդիկ ալ հալածանք հանեցին Պօղոսի դէմ. և զանիկայ քաղաքապետին մատնեցին, որ անոնց կեցած տանը տիրոջմէն (Յասոնէն) երաշխաւորութիւն առնելով թող տուաւ։ Ասոնք անկէց Բերիա եկան, և հոն ալ շատ մարդիկ աշակերտեցին. այլ երբ Հրէայք հոն ալ խռովութիւն հանեցին, այն ատեն Պօղոս ճամբայ ելաւ ու գնաց Աթէնք քաղաքը։

6. Բայց Պօղոս շատ կը ցաւէր նոյն քաղաքը կռապաշտութեան մէջ տեսնելով. ուստի թէ հոն տեղի Հրէից ժողովարաններն մէջ և թէ հրապարակներուն մէջ ամէն օր կը քարոզէր։ Զայս տեսնելով Էպիկուրեան ու Ստոյիկեան փիլիսոփաներէն շատերը, սկսան հետաքրքիր ըլլալ անոր խօսքերուն, ու կ'ըսէին թէ ասիկայ օտար Աստուածներու քարոզիչ մը ըլլալու է. և զանիկայ առին Արիսպագոսը տարին և սկսան հարցնել թէ ինչ է այդ նոր վարդապետութիւնը զոր կը քարոզես։ Քանզի Աթէնքի մէջ եղողներուն ամէնն ալ շատ հետաքրքիր էին նոր բաներ լսելու և զրուցելու։ Այն ատեն Պօղոս գեղեցիկ ձեռնարկութիւններով ազդու կերպիւ խօսեցաւ ճշմարիտ Աստուծոյ վրայօք, օրինակ բերելով իրենց այն սեղանն ալ որ նուիրած էին ԱՆԾԱՆՕԹԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ. ահա ես ալ ըսաւ, նոյն անծանօթ Աստուածը կը քարոզեմ ձեզի. հուսկ յետոյ խօսքը մեռելոց յարութեան վրայ բերելով վերջացուց։ Ներկայ եղողները երբ մե-

ռելոց յարութեան խօսքը լսեցին, թէեւ ոմանք սկսան ծաղր ընել. բայց ոմանք ուզեցին ուրիշ անգամ դարձեալ մտիկ ընել. այլ և հաւատացողներ ալ եղան, որոց մէջ էին Դիոնեսիոս Արիսպագացին և Դամարիս անուն կին մը։

7. Անկէ յետոյ Պօղոս գնաց 'ի Կորնթոս և Ակիւղաս անուն վաճառական Հրէայի մը տունը կը կենար, ու ինքն ալ անոր արհեստակից ըլլալով կը բանէր անոր հետ. և շաբաթ օրերը ժողովրդարանցին մէջ կը քարոզէր։ Բայց Հրեաներէն շատերը իրեն դէմ ելնելով սկսան նախատել. ուստի Պօղոս ըսաւ. «Ձեր արիւնը ձեր գլուխը թող ըլլայ. ես անպարտ եմ. այսուհետեւ Հեթանոսներուն պիտի երթամ»։ Եւ հանկէ ելնելով Տիտոս Յուստոս անուն մէկու մը տունը գնաց։ Այս քաղաքին մէջ շատ մարդիկ, ինչպէս և ժողովրդապետը Կրիսպոս իր բալոր տնովը հաւատացին ու մկրտուեցան. և Պօղոս տեսիլքի մէջ Աստուծմէ քաջալերուելով՝ տարի ու կէս կեցաւ հոն տեղ Շիղայի ու Տիմոթէոսի հետ. այնուհետեւ Սիւրիա ու Եփեսոս գնաց. ու հոն տեղերն ալ քարոզելով հասաւ 'ի Կեսարիա և անկէ Երուսաղէմ, ու քիչ մը տանն կենալով հոն, դարձաւ Անտիոք։

## ԳԼՈՒԽ Դ.

1. Պօղոսի ձեռքով եղած հրաշքները ։ 2. Դեմետրիոս ոսկերիչին բողոքը ։ 3. Պօղոս մեռելով մը կը յարուցանէ ։ 4. Եփեսոսի երէցներուն հրաժեշտ կու տայ ։ 5. Երուսաղէմ կ'երթայ ։
(Գործ. ԺԸ. 23—ԻԱ. 26.) ։

1. Պօղոս ատեն մը Անտիոքի մէջ կենալէ ետքը դարձեալ ճամբայ ելաւ ու փոքր Ասիոյ մէջ հաստատեցնող այցելութիւններ ընելով հասաւ Եփեսոս ։ Հոն տեղ աշակերտեցաւ իրեն Ապողոս անուն ճարտասան Հրէայ մը, որ շատ եռանդուն քարոզութիւններ ընել սկսաւ ։ Պօղոս շատ ատեն կեցաւ հոն տեղ ու կը քարոզէր Տիրանոս կոչուած դպրոցին մէջ, և Աստուած շատ հրաշքներ կ'ընէր անոր ձեռօք. անանկ որ իրեն թաշկինակը հիւանդներուն տանելով կը բժշկուէին ։ Հոն տեղ Սկեւա անուն Հրէի մը եօթն որդիք կային որոնք երդմնեցուցիչ էին, և յանդգնեցան Յիսուսի անունով դեւեր հանել. բայց անմիջապէս պատժուեցան, ուրէ ամէնքը վախնալով՝ բոլոր կախարդութեան հնարքները իրենց գրքերը բերելով կ'այրէին ։

2. Եփեսոսի մէջ Դեմետրիոս անուն արծաթագործ մը կար որ Արտեմիս աստուածին փոքրիկ դրօշմները կը շինէր, և ատով թէ ինքը և թէ ուրիշ վարպետներ բաւական շահ կ'ընէին ։ Դեմետրիոս երբ տեսաւ որ Պօղոսի քարոզութիւնը իրենց արհեստին վնաս կու տայ, ամէն վարպետները ալ հանեց անոր դէմ, որոնք գացին անոր աշակերտներէն երկու հոգի բըռ-

նեցին ու դատաստանի քաշեցին. բայց ատենա-դպիրը զիրենք հանդարտեցնելով ցրուեց ամբո-խը. Յետոյ Պօղոս քանի մը աշակերտներով ելաւ 'ի Մակեդոնիա, Աքայիա, և անտի 'ի Տրովադա.

3. Կիրակի օր մը երբ Պօղոս տան մը մէջ կը քարոզէր, պատուհանին մէջ Եւտիքոս անուն երիտասարդ մը որ կը նընջէր, յանկարծ ինկալով մեռաւ. Պօղոս վար իջնալով գրկեց զանիկայ ու ըսաւ. «Մի՛ վախնաք, քանզի մեռած չէ». և հետևեալ առաւօտ ողջացած էր անիկայ. Պօղոս ճամբայ ելնելով Ասոն գնաց և անկէ դէպ 'ի Միլիտոս անցաւ.

4. Եւ Եփեսոսի քրիստոնէութենէն երէցնե-րը և եպիսկոպոսները կանչելով հոն տեղ, սկը-սաւ յիշեցընել իրենց իր քարոզութիւնները ու ասոր համար կրած և կրելիք վիշտերը, ըսե-լով թէ բան մը հոգ չըներ ինծի, պատուիրելով անոնց Սուրբ Հոգին իրենց յանձնուած առաջ-նորդութեան պաշտօնը անթերի կատարելն Աստու-ծոյ եկեղեցւոյն մէջ. Քանզի «Գիտեմ, ըսաւ անոնց, որ իմ գնալէս ետքը յափշտակող գայլեր պիտի գան, ու ձեզմէ ալ անանկ մար-դիկ պիտի ելնեն, որոնք ծուռ բաներ պիտի խօ-սին աշակերտները իրենց քաշելու համար. Այ-սպէս զգուշալի խրատներ տալէ զինի՛ անոնց հետ աղօթեց. և ամէնքն ալ լալով կը համբուրէին զանիկայ. Այսպէս բաժնուեցաւ անոնցմէ ու-նաւ մտնելով եկաւ 'ի Տիւրոս.

5. Հոն տեղ եօթն օր կենալէ յետոյ եկաւ

ի Պտղոմայիս և անկէ ալ ի Կեսարիա Փիլիպպեայ, ու հոն տեղ Փիլիպպոսի տունը կեցան շատ օրեր. Հոն տեղ Ագաբոս անուն մարգարէ մը ըլլալով ըսաւ Պօղոսի թէ՝ Երուսաղէմի մէջ պիտի կապուիս ու դատաստանի մատնուիս. Հոն եղողները այս բանը լսելով երբ կու լային ու կը պաղատէին որ չերթայ, բայց Պօղոս որ շատ առաջ ինքն ալ գիտէր այս բանը Հոգւոյն Սրբոյ ազդեցութեամբը, ըսաւ իրենց թէ՝ «Ես ոչ միայն կապուելու, այլ և մեռնելու ալ պատրաստ եմ Տէր Յիսուսի անուանը համար». Եւ հոն տեղէն քանի մը մարդոց հետ մէկ տեղ Երուսաղէմ գնաց. Հետևեալ օրը հոն եղող Առաքելոց հետ մէկ տեղ տեսնուելով՝ պատմեց իւր ձեռքով եղած քարոզութիւնները.

## ԳԼՈՒԽ Ե.

1. Հրէից դրդռութեամբը Պօղոս կը մատնուի կապանաց. 2. Կուսակալին կը ղրկուի. 3. Հրէից ամբաստանութիւնները և Պօղոսի պատասխանը. 4. Կայսեր կը բողոքէ. 5. Ի Հռոմ կը ղրկուի. 6. Հռոմի մէջ կը քարոզէ. 7. Առաքելոց Թուղթերը. (Գործ. ԻԱ. 26—ԻԸ. 32.)

1. Պօղոս առաքելոց ալ յորդորելովը թէև խոհեմութիւն համարեց Երուսաղէմի մէջ Հըրէական սովորութեանց հպատակիլ, որպէս զի անոնց մէջ գայթակղութիւն չըլլայ, այսու ամենայնիւ Հրեայք կարծելով թէ անիկայ իւր Եփեսացի աշակերտը Տաճարը մտցուց ու պղծեց սուրբ տեղը, մեծ խռովութիւն հանեցին և կ'ուզէին Պօղոսը սպաննել և հազիւ ուրեմն Հռոմայեցի հազարապետը հանելով առաւ Պօ-

զայն անոնց ձեռքէն ու բերդը տարաւ ։ Բայց ժողովուրդը մինչեւ հոն տեղ գային ու կը պօռային , «մեռցուր զանիկայ» ։ Պօղոս հազարապետին հարցմանը պատասխանելով իւր ինչ ազգէ և ուր տեղացի ըլլալը յայտնելէ ետքը հրաման ուզեց հազարապետէն ու բերդին սանդուխին վերայէն սկսաւ խօսիլ Հրէից , ու պատմել իւր վարքը և մինչեւ այն ատեն ըրածները . այլ երբ խօսքին կարգը եկաւ իրեն եղած յայտնութեանը և Յիսուսի առաքելութեան քարոզչութեանը կոչուելուն վերայ , բոլոր բաղմութիւնը սկսան պոռալ թէ՝ «Մեռնելու արժանի է այս մարդը» ։ Ասոր վերայ հազարապետը հրամայեց որ զանիկայ բերդը տանին . և երբ կ՚ուզէր ծեծել տալով զանիկայ՝ իմանալ այս բանին պատճառը , Պօղոս յայտնեց թէ ինքը Հռոմէական քաղաքացի է , որով հազարապետը վախցաւ անոր խստութիւն ընելու .

2 . Հետեւեալ օրը հազարապետը ուզելով աղէկ մը իմանալ Պօղոսի դէմ եղած ամբաստանութիւնը , կանչեց զանոնք ու Պօղոսը անոնց ներկայացուց . Պօղոս դարձեալ շատ մը խօսքեր ընելէ ետքը հազարապետը տեսնելով որ Հրէից մէջ աղմուկը կը շատնայ . վախցաւ ու իր մարդոց հրաման ըրաւ որ զանիկայ բերդը տանին ։ Նոյն գիշեր Աստուած յայտնեց Պօղոսի տեսիլքի մէջ թէ Հռոմի մէջ ալ պէտք է վկայէ իրեն համար ։ Բայց Հրեաներէն քառասուն հոգի իրենց մէջ երդում ըրին որ բան մը չուտեն ու-

խմեն մինչեւ որ Պօղոսը սպաննեն։ Պօղոսի քեռ-որդին ալ այս բանը իմանալով եկաւ հազարա-պետին իմացուց, եւ նա զինուորներու պահ-պանութեամբ գիշեր ատեն Կեսարիա ղրկեց Պօղոսը՝ Փելիքս կուսակալին, յատուկ գրով մը ալ իմացնելով անոր՝ այս գործին ինչ ըլլալը։

3. Հինգ օրէ ետքը Քահանայապետները ու-րիշ ծերերը Տերտուղոս անուն ճարտասան մարդ մը հետերնին առած՝ կուսակալին ներկայ-ացան, ու անդ Տերտուղոս սկսաւ խօսիլ եւ ցուցնել իրենց ամբաստանութիւնը Պօղոսի դէմ։ Պօղոս ալ անոր ամէն խօսքերը հերքեց եւ ցուցուց թէ այն ամբաստանութիւնները սու-տեր են եւ առանց ապացուցի, եւ թէ՝ ինքը մե-կու մը վնաս տուած չէ եւ ոչ ալ տաճարը պղծ-ած ինչպէս որ կը զրպարտէին իր ոսոխնե-րը։ Փելիքս այս խնդիրը ուրիշ անգամի թողլով՝ Պօղոս հոն տեղ պահեց, ամէն ազատութիւն տալով բարեկամացը հետ տեսնուելու։ Փելիքս շատ անգամ հետը կը խօսակցէր, քանզի յոյս ունէր որ դուցէ Պօղոս կաշառք տայ ազատուե-լու համար։

4. Այսպէս երկու տարի անցնելով Փելիքսի տեղ յաջորդեց Փեստոս Պորկիոս, որուն օրով Հրեայք դարձեալ նորոգեցին իրենց ամբաստա-նութիւնը Պօղոսի դէմ։ Պօղոս երբ տեսաւ որ Փեստոս [illegible] Հրէից կ'ուզէ ղրկել զինքը Երուսաղէմ որ հոն տեղ դատէ, այն ատեն բողոք ըրաւ որ կայսեր ղրկէ զինքը։ Փեստոս

Թէ և համոզուած էր որ Պօղոս յանցանք մը չու-նի , մինչեւ որ Գալիլեայի Թագաւորը Ագրիպ-պասն ալ տուգեց որ այն օրերը Փեստոսի ան-ուԹեան եկած էր , բայց անոր բողոքին համար հարկադրեցաւ ղրկել . ուստի Պօղոս և անոր աշակերտները Ղուկաս և Արիստարքոս պահա-պան զինուորի մը յանձնուեցան . ասոնց հետ կային նաև ուրիշ կալանաւորներ , որոնք Յուլիոս անուն հարիւրապետի մը հսկողուԹեան յան-ձնուելով ճամբայ ելան ։

5 . Նաւապետին շատ նեղուԹիւն և ալե-կոծուԹիւն կրելով տասն ու չորս օր՝ երբ նաւը Մելիտինէ կղզին ցամաքը ընկաւ և հա-զիւ մէջինները կրցան ազատիլ . Կղզեցիք շատ մարդասիրուԹիւն ցուցուցին ասոնց և ցուրտին ու անձրևին համար կրակ վառեցին . Երբ Պօղոս կրակին քով կը տաքնար , իժ մը ելաւ ու-նոր ձեռքէն բռնեց . զայն որ տեսան տեղացիք , կ'ըսէին իրարու Թէ՝ « Արդեն մարդասպան մէկն է այս մարդը , որ Թէպէտ ծովէն ազատեցաւ՝ բայց ԱրդարուՆքը չԹողուց որ ապրի » քանզի կը կարծէին Թէ կը մեռնի . Բայց Պօղ իժը կրակին մէջ ԹօԹուեց ու իրեն վնաս մը չե-ղաւ , զոր երբ տեսան կղզեցիք , կարծիքնին փոխելով սկսան ըսել Թէ՝ « Արդեն աստուած մի է ասիկայ » . Կղզիին գլխաւորներէն Պուպղիոս անուն մէկը Պօղոսը և հետը եղողներ երեք օր իր տունը հիւրընկալեց . և անոր հայր որ հի-ւանդ պառկած էր , Պօղոսի աղօԹքովը բժշկուե-

ցաւ . զայս ըսելով շատ հիւանդներ կու գային ու կը բժշկուէին ։ Տեղացիք շատ պատիւ ըրին Պօղոսի, երեք ամիսի չափ հոն մնալով ։

6. Պօղոս երբ Հռոմ հասաւ, հրաման եղաւ որ իր պահապան զինուորներուն հետ զատ տեղ մը կենայ ։ Ու անիկայ տուն մը վարձելով երկու տարի կեցաւ թեթեւ արգելքի տակ . միշտ քարոզելով աշակերտաց գործակցութեամբ . եւ այսպէս շատերը հաւատացին Յիսուսի, մինչեւ անգամ կայսեր տունէն եղող մարդիկ ։

7. Հոս կը լմննայ Գործք Առաքելոցի պատմութիւնը, զոր Պօղոսի աշակերտը Ղուկաս գրեց ու ղրկեց առ Թէոփիլոս . որուն մանաւանդ վերջի մասերը Պօղոսի վերայօք են ։ Բայց ժամանակակից ուրիշ պատմիչներէ կ՚իմանանք ամեն Առաքելոց ալ ըրածները, թէ ինչպէս ամէն մէկը աշխարհիս այլ եւ այլ կողմերը քարոզութիւններ ու հրաշքներ ըրին, ու շատ ժողովուրդներ եւ ազգեր քրիստոնէութեան դարձուցին, եւ ամէն մէկն ալ այլ եւ այլ տեղեր նահատակուեցան Յիսուսի Քրիստոսի անուանը համար ։ Սուրբ Գըրոց Նոր Կտակարանի գրքերը գրողներն են, Մատթէոս[1] առաքեալ, որ գրեց Աւետարանը Երուսաղէմի մէջ եբրայական լեզուաւ Երուսաղէմի եկեղեցւոյն խնդրանօք (8). Մարկոս[2] Պետրոսի աշակերտը, որ գրեց եգիպտական լեզուաւ, Աղէքսանդրիոյ մէջ (15). Ղուկաս (3) Պօղոսի

1 Երգ կենաց ։ 2 Բարձր պատուոյ ։ Կամ ի վերայ տանելոյն ։
3 Յարութիւն ։

աշակերտք, և առ Թէոփիլոս ուղղեց, որոյ հը-
րամանաւ գրեց Անտիոքի մէջ Յունաց լեզուաւ
(17). Յովհաննէս[1] առաքեալ, որ գրեց Եփե-
սոսի մէջ յունական լեզուաւ (53). Ասիայի ե-
կեղեցւոյն խնդրանօք. Յովհաննէս առաքեա-
լը գրեց նաև Յայտնութեան գիրքը Պատմոս
կղզւոյն մէջ յունական լեզուաւ. Պօղոս առա-
քեալ իր թղթերը գրեց. Աթէնքէն առ Թե-
սաղոնիկեցիս՝ երկու թուղթ, առ Տիտոս Մա-
կեդոնիայէն, առ Հռովմայեցիս Կորնթոսէն,
առ Կորնթացիս երկու թուղթ Փիլիպպիայէն,
առաջին թուղթ առ Տիմոթէոս Լաւոդիկիայէն.
և առ Գաղատացիս, Եփեսացիս, Փիլիպպեցիս,
Կողոսացիս, Եբրայեցիս, առ Տիմոթէոս թուղթ
երկրորդ և առ Փիլիմոն գրեց Հռովմէն, որոնց
ոմանք իր ձեռքովը գրուած են, և ոմանք ալ
իր աշակերտաց Տիւքիկոսի և Ոնեսիմոսի գրել
տուած է. Կաթուղիկեայց՝ այսինքն ընդհանրա-
կան թղթերն են՝ մին Յակոբու առաքելոյ, երկու
թուղթ Պետրոսի, երեք թուղթ Յովհաննու, ո-
րոնց վերջին երկուքը մասնաւոր անձանց ուղ-
ղեալ է, և մէկ թուղթ Յուդայի առաքելոյ.
Եւ այսպէս քրիստոնէական փրկարար հաւատքը
տկար և անզօր մարդոց ձեռքով առանց մարդ-
կային պաշտպանութեան, միանգամայն և հա-
լածանաց ներքև՝ միայն Աստուծոյ զօրութեամբ
տարածուեցաւ բոլոր աշխարհի մէջ.

---

1 Հնաւանդութիւն.

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ